2484	04	8	4	Լեռնաարդյունահանման, արդյունաբերության և շինարարության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2490	04	9	0	*Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)*	0.0	0.0	0.0
				որից՝			
2491	04	9	1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2500	05	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող2510+տող2520+տող2530+տող2540+տող2550+տող2560)	226150.0	193750.0	32400.0
				այդ թվում՝			
2510	05	1	0	Աղբահանում	146650.0	146650.0	0.0
				որից՝	0.0	0.0	
2511	05	1	1	Աղբահանում	146650.0	146650.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4213 Կոմունալ ծառայություններ	80000.0	80000.0	

				5134- Նախագծահետազոտական ծախսեր	0.0		
2550	05	5	0	*Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ*	0.0	0.0	0.0
				որից՝			
2551	05	5	1	Շրջակա միջավայրի պաշտպանության գծով հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2560	05	6	0	*Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)*	22700.0	6700.0	16000.0
				որից՝	0.0		
2561	05	6	1	կանաչ տարածքների, սիզամարգերի ստեղծում, ծաղկապատում և պահպանում	22700.0	6700.0	16000.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4241 Մասնագիտական ծառայություն	500.0	500.0	
				4251 շենքերի և շինությունների ընթ.նորոգում և պահպանում	2100.0	2100.0	
				4252 Մեքենաների և սարքավորումների ընթ.նորոգում և պահպանում	700.0	700.0	
				4262 -Գյուղատնտեսական ապրանքներ	1500.0	1500.0	
				4264 Տրանսպորտային նյութերի գնում	300.0	300.0	
				4267 Կենցաղ-հանրային սննդի նյութեր	800.0	800.0	
				4269 Հատուկ նպատակային այլ նյութեր	800.0	800.0	0.0
				5131 Աճեցվող ակտիվներ	16000.0		16000.0
2600	06	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող3610+տող3620+տող3630+տող3640+տող3650+տող3660)	1057485.6	634885.6	422600.0
				այդ թվում՝			
2610	06	1	0	*Բնակարանային շինարարություն*	741780.0	525780.0	216000.0
				որից՝			
2611	06	1	1	Բնակարանային շինարարություն	741780.0	525780.0	216000.0
				4241 Մասնագիտական ծառայություն	1680.0	1680.0	0.0
				4251 շենքերի և շինությունների ընթ.նորոգում և պահպանում	5000.0	5000.0	0.0
				4511 -Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	509100.0	509100.0	0.0
				4657 կապիտալ դրամաշնորհներ	10000.0	10000.0	
				5113- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	94000.0	0.0	94000.0
				5129- Այլ մեքենաներ և սարքավորումներ	116000.0		116000.0
				5134- Նախագծահետազոտական ծախսեր	6000.0	0.0	6000.0
2620	06	2	0	*Համայնքային զարգացում*	0.0	0.0	0.0
				որից՝			
2621	06	2	1	Համայնքային զարգացում	0.0	0.0	

2661	06	6	1	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	0.0		0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
					720.0		
					250.0		
2700	07	0	0	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ (տող2710+տող2720+տող2730+տող2740+տող2750+տող2760)	0.0	0.0	0.0
				այդ թվում՝			
2710	07	1	0	*Բժշկական ապրանքներ, սարքեր և սարքավորումներ*	0.0	0.0	0.0
				որից՝			
2711	07	1	1	Դեղագործական ապրանքներ	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2712	07	1	2	Այլ բժշկական ապրանքներ	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2713	07	1	3	Բժշկական սարքեր և սարքավորումներ	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2720	07	2	0	*Արտահիվանդանոցային ծառայություններ*	0.0	0.0	0.0
				որից՝			
2721	07	2	1	Ընդհանուր բնույթի բժշկական ծառայություններ	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2722	07	2	2	Մասնագիտացված բժշկական ծառայություններ	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2723	07	2	3	Ստոմատոլոգիական ծառայություններ	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2724	07	2	4	Պարաբժշկական ծառայություններ	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2730	07	3	0	*Հիվանդանոցային ծառայություններ*	0.0	0.0	0.0
				որից՝			
2731	07	3	1	Ընդհանուր բնույթի հիվանդանոցային ծառայություններ	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2732	07	3	2	Մասնագիտացված հիվանդանոցային ծառայություններ	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			

2821	08	2	1	Գրադարաններ	30100.0	20500.0	9600.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4511 -Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	20500.0	20500.0	0.0
				5122 Վարչական սարքավորումներ	3600.0		3600.0
				5132-Ոչ նյութական հիմնական միջոցներ	800.0	0.0	800.0
				5134- Նախագծահետազոտական ծախսեր	5200.0	0.0	5200.0
				.....	0.0		
2823	08	2	3	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	365500.0	310700.0	54800.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4212 Էներգետիկ ծառայություններ	2100.0	2100.0	
				4241-Մասնագիտական ծառայություն	13000.0	13000.0	
				4511 -Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին	295600.0	295600.0	
				4639-Այլ ընթացիկ դրամաշնորհներ	0.0	0.0	
				5113 - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	30000.0	0.0	30000.0
				5122 Վարչական սարքավորումներ	18800.0	0.0	18800.0
				5129 - Այլ մեքենաներ և սարքավորումներ	2000.0	0.0	2000.0
				5132-Ոչ նյութական հիմնական միջոցներ	2000.0	0.0	2000.0
				5134- Նախագծահետազոտական ծախսեր	2000.0	0.0	2000.0
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	74400.0	74400.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների	0.0		
				4237 -Ներկայացուցչական ծախսեր	3000.0	3000.0	
				4239-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	2800.0	13200.0	
				4267 Կենցաղային նյութեր	33600.0	33600.0	
				4269-Հատուկ նպատակային այլ նյութեր	23100.0	23100.0	
2825	08	2	5	4727-Մշակույթային նպաստներ	1500.0	1500.0	0.0
			6		0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2827	08	2	7	*Հուշարձանների և մշակութային արժեքների վերականգնում և պահպանում*	4800.0	4800.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4216 Գույքի և սարքավորումների վարձակալություն	400.0	600.0	

				այդ թվում՝			
2910	09	1	0	*Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն*	1207830.0	1006080.0	83900.0
				որից՝			
2911	09	1	1	Նախադպրոցական կրթություն	956880.0	907480.0	49400.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4212 Էներգետիկ ծառայություններ	1660.0	1660.0	
				4216 Գույքի և սարքավորումների վարձակալություն	2000.0	2000.0	
				4267 Կենցաղ-հանրային սննդի նյութեր	167200.0	167200.0	
				4511 -Սուբսիդիաներ	731620.0	731620.0	
				4637- Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին	0.0	0.0	
				4639 Այլ ընթացիկ դրամաշնորհներ	0.0	0.0	
				4657 Այլ կապիտալ դրամաշնորհներ	5000.0	5000.0	
				4823 -Պարտադիր վճարներ	0.0	0.0	
				5112 - Շենքերի և շինությունների կառուցում	6400.0	0.0	6400.0
				5113 - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	3000.0	0.0	3000.0
				5122 Վարչական սարքավորումներ	34000.0	0.0	34000.0
				5129 - Այլ մեքենաներ և սարքավորումներ	4000.0	0.0	4000.0
				5134- Նախագծահետազոտական ծախսեր	2000.0	0.0	2000.0
							0.0
	09	1	2	Տարրական ընդհանուր կրթություն (Մանկական երաժշտական դպրոցներ)	106600.0	98600.0	8000.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4511 -Սուբսիդիաներ	98600.0	98600.0	0.0
				5113 - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	0.0		0.0
				5122 Վարչական սարքավորումներ	8000.0	0.0	8000.0
				5129 - Այլ մեքենաներ և սարքավորումներ	0.0	0.0	0.0
				5134- Նախագծահետազոտական ծախսեր	0.0		0.0
2920	09	2	0	Միջնակարգ ընդհանուր կրթություն	8000.0	8000.0	0.0
				որից՝			
2921	09	2	1	Հիմնական ընդհանուր կրթություն	8000.0	8000.0	
2922	09	2	2	Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթություն	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4657 Այլ կապիտալ դրամաշնորհներ	0.0	0.0	
				4819 Նվիրատվություններ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	8000.0	8000.0	
2930	09	3	0	*Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն*	0.0	0.0	0.0
				որից՝			
2931	09	3	1	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն	0.0	0.0	0.0

				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4511 -Սուբսիդիաներ	31950.0	31950.0	0.0
				4657 Այլ կապիտալ դրամաշնորհներ	8000.0	8000.0	0.0
				5113 - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	0.0		0.0
				5122 Վարչական սարքավորումներ	19000.0		19000.0
				5129 - Այլ մեքենաներ և սարքավորումներ	0.0	0.0	0.0
				5134- Նախագծահետազոտական ծախսեր	0.0		0.0
2952	09	5	2	Լրացուցիչ կրթություն	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2960	09	6	0	*Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ*	0.0	0.0	0.0
				որից՝			
2961	09	6	1	Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2970	09	7	0	*Կրթության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ*	0.0	0.0	0.0
				որից՝			
2971	09	7	1	Կրթության ոլորտում հետազոտական և նախագծային աշխատանքներ	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
2980	09	8	0	*Կրթություն (այլ դասերին չպատկանող)*	0.0	0.0	0.0
				որից՝			
2981	09	8	1	Կրթություն (այլ դասերին չպատկանող)	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող3010+տող3020+տող3030+տող3040+տող3050+տող3060+տող3070+տող3080+տող3090)	50000.0	50000.0	0.0
				այդ թվում՝			
3010	10	1	0	*Վատառողջություն և անաշխատունակություն*	0.0	0.0	0.0
				որից՝			
3011	10	1	1	Վատառողջություն	0.0	0.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
3012	10	1	2	Անաշխատունակություն	0.0		0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
3020	10	2	0	*Ծերություն*	0.0	0.0	0.0
				որից՝			
3021	10	2	1	Ծերություն	0.0	0.0	0.0

3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110)	1676000.0	1676000.0	0.0
				այդ թվում՝			
3110	11	1	0	*ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ*	1676000.0	1676000.0	
				որից՝			
3112	11	1	2	համայնքի պահուստային ֆոնդ	1676000.0	1676000.0	0.0
				այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների			
				4891 -- պահուստային ֆոնդ, որից	1676000.0	1676000.0	
				հատկացում ֆոնդային բյուջե			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունվարի 2026 թվականի №3-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԸ, ԱՍՏՂԱՁՈՐ, ԳԵՂՀՈՎԻՏ (ԼԵՌՆԱԿԵՐՏ, ՆՇԽԱՐՀՔ), ԵՐԱՆՈՍ, ԶՈԼԱՔԱՐ, ԾՈՎԱՍԱՐ, ԼԻՃՔ, ԾԱԿՔԱՐ, ՁՈՐԱԳՅՈՒՂ, ՄԱԴԻՆԱ, ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ, ՎԱՂԱՇԵՆ, ՎԱՐԴԱՁՈՐ, ՎԱՐԴԵՆԻԿ, ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-3 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԵՎ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՄԱՍԵՐՈՎ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.4 հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի №1920-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի №1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 23-ի №2-27 դրական եզրակացությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքը, Աստղաձոր, Գեղհովիտ (Լեռնակերտ, Նշխարհք), Երանոս, Զոլաքար, Ծովասար, Լիճք, Ծակքար, Ձորագյուղ, Մադինա, Ներքին Գետաշեն, Վաղաշեն, Վարդաձոր, Վարդենիկ, Վերին Գետաշեն բնակավայրերը ներառող Գեղարքունիք-3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի

նախագիծը՝ գլխավոր հատակագծի և գոտևորման մասերով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀԱՅԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026 թ. հունվարի 16
ք. Մարտունի

Հավելված
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Մարտունի համայնքի ավագանու
2026 թվականի հունվարի 16-ի №3-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԸ, ԱՍՏՂԱՁՈՐ, ԳԵՂՀՈՎԻՏ (ԼԵՌՆԱԿԵՐՏ, ՆՇԽԱՐՀՔ), ԵՐԱՆՈՍ, ԶՈՒԼԱՔԱՐ, ԾՈՎԱՍԱՐ, ԼԻՃՔ, ԾԱԿՔԱՐ, ՁՈՐԱԳՅՈՒՂ, ՄԱԴԻՆԱ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ, ՎԱՂԱՇԵՆ, ՎԱՐԴԱՁՈՐ, ՎԱՐԴԵՆԻԿ, ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-3 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԵՎ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՄԱՍԵՐՈՎ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ

Հայնախագիծ ԲԲԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ՝ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-3

Մարտունի քաղաք, գ.գ. Աստաղաձոր, Գեղհովիտ /Լեռնակերտ, Նշխարք/, Երանոս, Զոլաքար, Ծովասար, Լիճք, Ծակքար, Զորագյուղ, Մադինա, Ներքին Գետաշեն, Վաղաշեն, Վարդաձոր, Վարդենիկ, Վերին Գետաշեն /15/

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍ

Պատվիրատու՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե

Պատվեր՝ *ՆՀՀՔԿ-ԳՀՄՇՁԲ*-19/37-2

ՏՆՕՐԵՆ՝ Գ.ԱԶԻԶՅԱՆ

Երևան 2020

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍ
Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ՆԱԽԱԲԱՆ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ 5

Հայեցակարգային դրույթներ 6

Գլուխ 1 10

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ 10

1.1. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ 10
1.1.1. Մարզի ընդհանուր նկարագիրը 10
1.2. Ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները 12
1.3. Բնակլիմայական պայմանները 14
1.3.1. Կլիմա 14
1.3.2. Մարզի բնական պայմանները և հարստությունները 14
1.3.3. Մարզի բնության հատուկ պահպանվող տարածքները: 15
1.3.4. Բնության հուշարձաններ 25
1.3.4. Օգտակար հանածոներ 26
1.3.5. Համայնքների դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում 33
Աստղաձոր (Խաչաձոր, Ձոր), ... 54
Գեղհովիտ, /Նշխարք, Լեռնակերտ/ 55
Երանոս, ... 56
Ձոլաքար 57
Ծովասար, ... 57
Լիճք, ... 58
Ծակքար, ... 60
Ձորագյուղ, ... 61
Մադինա, ... 62
Ներքին Գետաշեն 62
Վաղաշեն, ... 63
Վարդաձոր, ... 64
ԳԼՈՒԽ 2 68

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ 68

2.1. Սոցիալական ձեռնարկատիրություն, ... 68
2.2. Ածի բևեռներ 69
2.3. Հողերի ռեկուլտիվացիա 73
2.4. Հողերի պահպանություն 74
2.4. *Բնակավայրերի հեռանկարային զարգացման ցուցանիշներ* 77
2.1. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ 157
2.1.1. Ջրամատակարարում 157
2.1.2. Ջրահեռացում 161
2.1.2.1. Կենցաղային և արտադրական կոյուղի 161
2.1.2.2. Հեղեղատար կոյուղի 163
2.1.2.3. Տեխնիկական այլ առաջարկություններ 174
2.1.3. Էներգամատակարարում 177
2.1.3.1. Էլեկտրամատակարարում 177
2.1.4. Գազամատակարարում 185
2.1.4.1. Ջերմամատակարարում 190
2.1.4.2. Գազի հեռանկարային ծախսը 190
2.1.4.3. Այլընտրանքային էներգետիկայի առաջարկ 192
ԳԼՈՒԽ 3 ..... **194**
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ **194**
Հայաստանի Հանրապետության համայնքներն ու բնակավայրերն ըստ սեյսմիկ գոտիների **197**
3.3.1. Համայնքի բնակչության պատսպարումը 204
3.3.2. Բնակչության իրազեկումը և ազդարարումը 204
3.3.3. Բնակչության տարահանումը 204
3.3.4. Բնակչության տարահանման ձևերն ու միջոցները 205
3.3.5. Բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը 206
3.4.Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ 207
3.5. Հրդեհային անվտանգություն 207
3.6. ՔՊ և ԱԻ բնակչության պաշտպանության տեսանկյունից համայնքի կառուցման և վերակառուցման կազմակերպումը 208
ԳԼՈՒԽ 4 ..... **209**

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ..... 209

4.1. Գոտևորման նախագծի կապը գլխավոր հատակագծի հետ.....209
4.2. Գոտևորման համակարգի կառուցվածքը.....209
4.3. Գոտևորման նախագծի կիրառման բնագավառը.....209
4.4. Սահմաններ.....210
4.5. Գոտևորման նախագծի կազմը.....210
4.6. Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) սահմանափակումների հիմնավորումները.....210
4.7. ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ.....211
4.8. Հատուկ իրավական ռեժիմով գոտիներ (ՍՊԳ).....222
4.1. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ236
4.2. Լրացուցիչ պահանջներ 242
4.3. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ 243
4.4. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ.....246

ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Միկրոռեգիոնի բնակավայրերի համակցված.
1. Հենակետային հատակագիծ,
2. Տարածքի համալիր գնահատում Մ 1:25 000
3. Տարածքային զարգացման հատակագիծ
4. Տրանսպորտային և ինժեներական հաղորդակցության ուղիների ուրվագիծ

Միկրոռեգիոնի առանձին բնակավայրերի.
1. Հենակետային հատակագիծ. Մ 1 : 5 000, 1:10 000
2. Տարածքի համալիր գնահատում Մ 1 : 5 000
3. Տարածքային զարգացման հատակագիծ /հիմնական գծագիր/1:5 000
4. Հողերի նպատակային նշանակության փոփոխությունների գծագիր
5. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների գծագիր Մ1 : 5 000
6. Հողատեսքերի բաշխումն ըստ սեփականության սուբյեկտների Մ 1:5 000
7. Քաղաքաշինական գոտևորման նախագիծ 1:2 000

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա փուլի սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիական իրավիճակն առաջնահերթ պահանջ է դրել մշակելու և իրականացնելու նոր, կայացվող պայմաններին համապատասխանող, մարզի իրական հնարավորությունները հաշվի առնող քաղաքաշինական գործունեություն: Դրա հետ կապված առաջացել է անհրաժեշտություն փաստաթղթերի մշակման նոր տիպի նպատակային ծրագրի, որը կհամապատասխանի մարզի հավասարակշռված և ներդաշնակ զարգացման նպատակներին ու խնդիրներին և կներառի տարածական պլանավորման հիերարխիական երեք մակարդակ՝ մարզի (տարածքային հատակագծման նախագիծ), համայնքի (գլխավոր հատակագիծ) և բնակավայրի (գոտևորման նախագիծ):

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի և համայնքների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանական խնդիրների համալիրի իրականացմամբ:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (Գեղարքունիք-3՝ ք.Մարտունի, Աստաղաձոր, Գեղհովիտ /Նշխարիք, Լեռնակերտ/, Երանոս, Զոլաքար, Ծովասար, Լիճք, Ծակքար, Ձորագյուղ, Մադինա, Ներքին Գետաշեն, Վաղաշեն, Վարդաձոր, Վարդենիկ, Վերին Գետաշեն) նախագիծը մշակվել է ՀՀ Կառավարության որոշմամբ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով (N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/37-2) և վերջինիս կողմից տրամադրված Տեխնիկական բնութագրին համապատասխան:

Մշակվող միկրոռեգինալ մակարդակի փաստաթուղթն իրենից ներկայացնում է բազմանպատակ նախագիծ, որի հիմնական նպատակը համայնքների տարածքում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումն է, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, տարածական-տնտեսական գործունեության համակարգված կազմակերպումն է, տարածաշրջանի և համայնքների գործառնական-հատակագծային տնտեսական և մշակութային կապերի, ճարտարապետա-հատակագծային կառուցվածքի և ֆունկցիոնալ գոտևորման խնդիրների լուծումը՝ քաղաքաշինության, արտադրության զարգացմանը նպաստող արդյունավետ պայմանների և բնական միջավայրի, նյութական մշակութային ժառանգության պահպանման ու կատարելագործման ապահովմանն ուղղված միջոցառումների առաջադրմամբ, բնական, տնտեսական և աշխատանքային ռեսուրսների համալիր և արդյունավետ օգտագործմամբ:

ՆԱԽԱԲԱՆ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հասարակության հետխորհրդային ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական արմատական փոփոխությունները շոշափելի փոփոխություններ մտցրեցին նաև քաղաքաշինական գործունեության մեջ£ Պետությունը դադարեց անշարժ գույքի և ֆինանսական միջոցների միահեծան սեփականատերը լինել, ներկայումս որպես կառուցապատող, ներդրող (այսինքն՝ քաղաքաշինական գործընթացի առավել ակտիվ մասնակիցներ) հանդես են գալիս բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք: Հետևաբար, արդի՝ նոր սերնդի քաղաքաշինական փաստաթղթերում հարկ է կանոնակարգել քաղաքաշինական գործունեության իրականացման մեխանիզմները՝ հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները և ապահովելով

տարածաշրջանի կայուն զարգացում: Տարածաշրջանի կայուն քաղաքաշինական զարգացման նպատակները ներառում են.

- քաղաքային ու գյուղական բնակավայրերի, ուրբանիզացված և միջբնակավայրային տարածքների հավասարակշռված զարգացում և էկոլոգիական վերակառուցում,
- բնակչության բնակության պայմանների մակարդակի բարձրացում,
- սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործում՝ բնակչության ռեկրեացիայի և առողջության կազմակերպման համակարգերի ներառումով,
- էկոլոգիապես անվտանգ արդյունաբերական, տրանսպորտային և ինժեներա-տեխնիկական ենթակառուցվածքների ձևավորում,
- պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանում վերակենդանացում,
- տարածքների քաղաքաշինական կանոնակարգման միասնական համակարգի ձևավորում՝ խթանելու ներդրումային գրավչությունը:

Հայեցակարգային դրույթներ

Միկրոռեգիոնալ տարածական պլանավորման հիմնադրութային փաստաթղթերի մշակման հայեցակարգի հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել բարենպաստ ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում կարտացոլվեն միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար, այն է՝

- համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի համակողմանի վերլուծությունը,
- մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային անհրաժեշտ խնդիրները բացահայտումը,
- համայնքի հեռանկարային զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների իրականացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու հանձնարարականների առաջադրումը:

<u>Նախագծման համար ուղեցույց են ծառայել համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և պետական ինքնակառավարման մարմինների որոշումները, հետևյալ նորմատիվային և նախագծային փաստաթղթերը.</u>

- ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին:
- ՀՀ հողային օրենսգիրքը:
- Հայաստանի Հանրապետության օրենքը Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998 թ. նոյեմբերի 11, ՀՕ-261)

- ՀՀ ջրային օրենսգիրքը,
- ՀՀ օրենքը «Սևանա լճի մասին»,
- ՀՀ օրենքը «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը(2006թ.),
- ՀՀ օրենքը «Բուսական աշխարհի մասին» (1999թ.),
- ՀՀ օրենքը «Կենդանական աշխարհի մասին» (ՀՕ-52, 03.04.2000թ.),
- ՀՀ օրենքը «Մթնոլորտային օդի պահպանության մասին» (1994թ. հոկտեմբերի 11, ՀՕ-121)։
- ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (2014 թ. հունիսի 21, ՀՕ-110-Ն)։
- 2002 թ. մայիսի 30-ի «Սևան» ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան» ազգային պարկի և «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին» N 927-Ն ՀՀ կառավարության որոշում,
- 2007թ. հունվարի 18-ի «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» N 205-Ն ՀՀ կառավարության որոշում,
- ՀՀ կառավարության 2019 թ. հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N 927-Ն և 2007 թ. հունվարի 18-ի N 205-ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 947-Ն ՀՀ կառավարության որոշում,
- 2008թ. 14 օգոստոսի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն ՀՀ կառավարության որոշում,
- ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության որոշումը հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը։
- ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը։
- ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 72-Ն որոշումը։
- Հայաստանի Հանրապետության կառավարություն N 855-ն որոշումը (18 օգոստոսի 2016 թվականի) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 997-ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-ն որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին։
- Կարգ բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման (հաստատված 14.05.01 N 408 որոշմամբ)։
- Կարգ հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման (հաստատված ՀՀ Կառավարության 02.05.03թ. N 625 – Ն որոշմամբ)։

Վերոշյալ նորմատիվ իրավական փաստաթղթերը կանոնակարգում են համայնքների քաղաքաշինական զարգացումը՝ հիմնված հետևյալ հիմանական փուլերի վրա.

- համայնքներում առկա քաղաքաշինական իրավիճակի բացահայտում ու վերլուծությունը,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու սահմանազատումը։

- առաջնային սպասարկման և սոցիալական ենթակառուցվածքի անհրաժեշտ կազմի առաջադրումը և տեղաբաշխումը,
- համայնքի համար հիմնական հեռանկարային ուղղությունների զարգացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,
- միասնական քաղաքաշինական միջավայրի ձևավորմանը միտված՝ համայնքների տարածքում կառուցապատման սահմանափակումների և չափորոշիչների համակարգի մշակումը։
- 2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մաս,
- ՀՀ կառավարության 2012թ. հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման 1-ին կետ,
- ՀՀ կառավարության 2012թ. փետրվարի 9-ի թիվ 138-Ն որոշման N 2 հավելվածի 2.1.4 կետ,
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի (լիազոր մարմին) 2021թ. մարտի 31-ի թիվ 372-Ն հրաման,
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրաման

<u>Նախագծում հաշվի են առնվել նաև.</u>

- Նախագծային տարբեր կազմակերպությունների կողմից մշակված մարզի առանձին բնակավայրերի գլխավոր հատակագծերը: ՀՀ Կառավարության, շահագրգիռ նախարարությունների, ՀՀ ՀՀ կադաստրի կոմիտեի, ՀՀ ՏԿԵՆ Ջրային պետական կոմիտեի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի, Գեղարքունիք 3-ում ներառված համայնքների ելակետային տվյալները, որոշումները, ծրագրային փաստաթղթերը:
- ՀՀ կադաստրի կոմիտեի կադաստրային քարտեզները:
- «Հայնախագիծ» ԲԲԸ-ում մշակված և կառավարության կողմից հաստատված (10.04.03 N 610-Ն) «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» հիմնադրույթները:

Նախագծում հաշվի են առնված ՍԵՄԱԹ-ի «Հիմնադիր սկզբունքները Եվրոպական մայր ցամաքի կայուն զարգացման» և «Հայաստանում Եվրոպական լանդշաֆտային կոնվենցիայի» միջոցառումների և տարածքային պլանավորման փոխկապակցվածության սկզբունքները, որոնք կարելի է խմբավորել հետևյալ բլոկներով.

- Տնտեսության կայուն զարգացում՝
  - Արդյունաբերություն,
  - Գիտատար արդյունաբերական արտադրություն,
  - Ագրոարտադրական համալիր,
  - Ռեկրեացիա, հատկապես տուրիզմ,
  - Փոքր և միջին բիզնես,
  - Բնապահպանական միջոցառումներ:

- Քաղաքաշինության կայուն զարգացում՝
  - Բնակելի շինարարություն,
  - Բնակելի-կոմունալ շինարարություն,
  - Լանդշաֆտի ռացիոնալ օգտագործում,
  - Բնապահպանական միջոցառումներ:

- Ինժեներական, տրանսպորտային և տեխնիկական ենթակառուցվածքների կայուն զարգացում՝

- Տրանսպորտ,
- Ջրամատակարարում, ջրահեռացում,
- Էներգամատակարարում,
- Թափոնների օգտահանում,
- Բնապահպանական միջոցառումներ:

Ակնկալվող արդյունքներ

1) Միկրոռեգիոնի և մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
2) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
3) Արդյունաբերության զարգացում
4) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
5) Տնտեսության դիվերսիֆիկացում և արտադրության գիտատար, ստեղծարար տեխնոլոգիաների ճյուղերի զարգացում
6) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
9) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
10) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդլայնում
11) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում:

Գլուխ 1
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Նախագծի շրջանակում միկրոռեգիոնների տարածքները դիտարկվում են որպես քաղաքաշինական ընդհանուր հիմնախնդիրներով շաղկապված տարածական միավորներ և որպես միասնության անբաժանելի մասեր կազմող վարչատարածքային միավորների՝ համայնքների համախումբ, որոնք ընդհանուր հիմնախնդիրների շարքում, պահանջում են ընդհանրությունից և յուրահատկությունից բխող համապատասխան քաղաքաշինական լուծումների առաջադրում:

Տվյալ բաժնում կատարվել է առկա վիճակի վերլուծություն ըստ հետևյալ ենթաբաժինների.

- Տարածաշրջանի սահմաններում բնական և անտրոպոգեն հողօգտագործումների ամրագրում,
- Սահմանվել են տարբեր նպատակային նշանակության հողօգտաործումների նկատմամբ վերգետնյա կամ ստորգետնյա սահմանափակումների համալիրը,
- Վերլուծվել են ընթացիկ մարզային և համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրարգրերը և դրանց իրականացման գործընթացը:

1.1. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ

1.1.1. Մարզի ընդհանուր նկարագիրը

Գեղարքունիք - մարզի կարգավիճակ ունեցող վարչատարածքային միավոր Հայաստանի արևելքում: Սահմանակից է հյուսիսում՝ Տավուշի, արևմուտքում՝ Կոտայքի և Արարատի, հարավում՝ Վայոց ձորի մարզերին,

արևելքում՝ Ադրբեջանի հանրապետության Գետաբեկի, Դաշքեսանի և Թովուզի շրջաններին, հարավ-արևելքում՝ Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանին:

Գտնվում է ծովի մակերևույթից 2000-3500 մ բարձրության վրա՝ զբաղեցնելով 5348 կմ^2 տարածք: Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ:

Մարզը զբաղեցնում է պատմական Հայաստանի Սյունիք աշխարհի մի հատվածը, հիմնականում Գեղարքունիքի, Սողքի և Արեգունու գավառները:

Գեղարքունիքն ամենախոշոր մարզն է և զբաղեցնում է ՀՀ տարածքի 18%-ը /5349քառ.կմ/:

Մարզն իր մեջ ներառում է 98 բնակավայր /5 քաղաք՝ Գավառ, Ճամբարակ, Մարտունի, Սևան, Վարդենիս, և 93 գյուղական բնակավայրեր: Մարզկենտրոնը Գավառ քաղաքն է: Այն հիմնադրել են 1830թ. Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից վերաբնակեցված հայերը՝ պատմական Գավառականի տեղում: Խորհրդային իշխանությունների տարիներին քաղաքը կոչվել է՝ սկզբում Նոր Բայազետ, ապա՝ Կամո:

Գավառը նախախորհրդային Հայաստանի չորս քաղաքներից մեկն էր: Նրա բնակչությունը գյուղատնտեսությունից բացի զբաղվում էր արհեստագործությամբ ու առևտրով: Արդյունաբերությունը թափ առավ խորհրդային տարիներին: Կառուցվեցին սարքաշինական, էլեկտրատեխնիկական, տեքստիլ ու սննդի արդյունաբերության գործարաններ, որոնց շնորհիվ Գավառը դարձավ Հայաստանի աչքի ընկնող արդյունաբերական կենտրոններից մեկը: Այժմ քաղաքում գործում են նաև կրթական, կուլտուր-լուսավորական ու առողջապահական՝ մարզային նշանակության կենտրոններ:

Մարզի տարածքով անցնում է Երևան - Սևան - Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին: Գեղարքունիքը տարանցիկ գոտի է մերձավորարևելյան և եվրոպական ու ասիական բազմաթիվ երկրների համար: Իրանից դեպի Սնծովյան ավազանի երկրներ տանող ամենակարճ ճանապարհն անցնում է Սևան-Մարտունի-Գետափ, Սևան-Դիլիջան երթուղիով: Գործում է Սելիմի լեռնանցքով անցնող «Հարավ-Հյուսիս» մայրուղին:

Մարզի տարածքի 1/4-ը ծածկված է ջրով: Այստեղ է գտնվում բարձր լեռնային (բարձրությունը ծովի մակերևույթից 1900 մ) եզակի էկոհամակարգով Սևանա լիճը, որի մակերեսը կազմում է 1.26 հազ. քառ. կմ, ծավալը 35.8 մլրդ. խմ: Սևանա լիճը Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է, որը հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա: Կենսաբանական բազմազանության պահպանությունն ուղղված է Սևանա լճի ավազանի բնական պաշարների երկարաժամկետ օգտագործման կարգավորմանը, որը կնպաստի ոչ միայն ավազանի, այլև ողջ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Գեղարքունիքի մարզում կարելի է հանդիպել նախաուրարտական և ուրարտական ժամանակաշրջանների բերդերի, ամրոցների, բնակավայրերի, հնավայրերի հետքեր, սեպագիր արձանագրություններ: Լճից ազատված տարածքներից հայտնաբերվել են մինչև հինգհազարամյա հնության դամբարաններ:

Սևանավանք

Երկար ժամանակ լճի անունը բացատրվում էր հայերեն սև և վանք բառերից, որոնք բնութագրում էին Սևանավանքը: Վերջինս կառուցել էր Սյունիքի իշխանուհի Մարիամ Բագրատունին սև տուֆից (9-րդ դար):

Սևանա լճի ափին կատարված հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել է ուրարտական սեպագիր արձանագրություն, որը թվագրվում է մ.թ.ա. 9-6-րդ դարերին: Այն թույլ է տալիս եզրակացնել, որ անվանումը կարող է ուրարտերեն լինել. սունիա նշանակում է «լիճ»:

Ուշ միջնադարում լիճը կոչվել է նաև «Գյոքչա», որը թարգմանաբար նշանակում է «կապույտ ջուր»: 1901 թ. հրատարակված Յուժակովի հանրագիտարանում նշված է նաև հին պարսկերեն անվանումը՝ Գառսրավագա:

Գոյություն ունի լճի անվանման ծագման երկու ավանդություն.

- Սևանա լճի տեղում առաջ ցամաք է եղել՝ անտառապատ բլուրներով, ծաղկավետ դաշտերով ու բերրի վարելահողերով: Գյուղին մոտիկ բլրի տակ եղել է մի ջրառատ աղբյուր, որից ջուր վերցնելիս գյուղացիները հանում էին ակունքի մեծ փակիչը և ապա զգուշությամբ հարմարեցնում տեղում:

Մի երեկո գյուղի հարսներից մեկը ջրի է գնում աղբյուրը, հանում է փակիչը, կուժը լցնում ու գալիս տուն՝ մոռանալով փակել ակունքը: Ջուրը դուրս է հորդում, ծավալվում չորս կողմ, երբ հասնում է տնակներին, բնակիչները փախչում են, ասելով «Քար դառնա ով բաց է թողել ակունքը»: Եվ մոռացկոտ հարսը քար է դառնում, իսկ ջուրը անընդհատ հոսելով գոյացնում է Սևանա լիճը, որի երեսից հազիվ վեր է բարձրանում քարացած հարսի գլուխը՝ Հարսնաքարը:

- Վանեցիները գաղթում և վերաբնակվում են Սևանի ափերին՝ որոշելով, որ դա էլ մի Վան է: Բայց հետո տեղի ցուրտ ու դաժան կլիման դուր չի գալիս նրանց: Նրանք հիշում են իրենց երկրի մեղմ ու տաք բնությունը, իրենց բարեկեցիկ կյանքը և դառնորեն կանչում՝ «Սև Վան եկավ մեր գլխին, սև Վան»: Ու այդպես էլ լճի անունը մնում է Սևան:

Թերակղզու վերածված Սևանա կղզին

Պատմահայր Մովսես Խորենացին Սևանա լիճն անվանում է «Գեղամա ծով»: Նման անվանում հանդիպում է նաև Խորենացուց մի քանի դար հետո գրված «Հայոց պատմություն» աշխատության մեջ, որի հեղինակը Հովհաննես Դրախստանակերտցին է), ինչպես նաև Կիրակոս Գանձակեցու և այլ պատմիչների աշխատություններում: Լիճը հայտնի է նաև «Գեղարքունյաց ծով», «Գեղարքունի», «Սևանգա» և այլ անուններով:

Այսպիսով, հայ պատմագրության մեջ այն կոչվել է ոչ թե լիճ, այլ ծով: Սևանա լճի այդ անվանումները կապված են Հայկ նահապետի ժառանգներից մեկի՝ Գեղամի անվան հետ:

Նրա անունն են կրում նաև Գեղամա լեռնաշղթան, Գեղամասար լեռը և Գեղամասար գետը, Գեղամավան ու Գեղամաբակ գյուղերը և այլն:

1.2. Ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները

Մարզի ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները բավականաչափ բարդ են: Սևանա լճի հյուսիս-արևելյան և հյուսիսային ափերով անցնում է ակտիվ տեկտոնական ճեղքվածք՝ 0.5-0.6 սմ/տարի շարժումով:

ՀՀ Գեղարքունիքի մարզի վարչական սահմաններում շինարարության համար առավել բարենպաստ տարածք է հանդիսանում ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքի հարավ-արևմտյան մասը, որը համաձայն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի (լիազոր մարմին) 2021թ. մարտի 31-ի թիվ 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ընդգրկվում է 0.3g (≈ 300 սմ/վ^2) առավելագույն հորիզոնական արագացման արժեքով 1-ին սեյսմիկ գոտում:

Համաձայն Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր» N 102-Ն գործող հրամանով հաստատված շինարարական նորմերում ներառված՝ Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի թիվ 372-Ն հրամանի N 2 հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության համայնքներն ու բնակավայրերն ըստ սեյսմիկ գոտիների» ցանկի արժեքների, Գեղարքունիք-3 միկրոռեգիոնալ տարածքը բնութագրվում է ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի տարբեր մակարդակներով՝ $\alpha max = 0.3g$ (≈ 8 բալ ըստ MSK-64 սեյսմիկ ինտենսիվության 12-բալանոց սանդղակի) և $\alpha max = 0.4g$ (≈ 9 բալ ըստ MSK-64 սեյսմիկ ինտենսիվության 12-բալանոց սանդղակի) առավելագույն հորիզոնական արագացումների արժեքներով և գտնվում է համապատասխանաբար 1-ին և 2-րդ սեյսմիկ գոտիներում:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի (լիազոր մարմին) կողմից 2021թ. նոյեմբերի 5-ին հաստատված ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքային համայնքի տարածքի սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզի (տես Հավելվածը) պայմանական նշաններում նշված առավելագույն հորիզոնական արագացումների արժեքների 0.3g - 0.35g և 0.35g - 0.4g տիրույթները՝ ցույց են տալիս տարածքում 0.3g մեծության ելակետային սեյսմիկ վտանգի փոփոխության՝ աճման գոտիները»:

Ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (1325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3598 մ): Բարձր լեռներ են Սպիտակասարը (3555 մ), Վարդենիսը (3522 մ), Գեղասարը (3446 մ): Ամենաերկար գետերն են Արգիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ), առկա են նաև խառնարանային լճեր՝ Աժդահակ և Արմաղան (մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ):

Գոգավորության հյուսիսային մասով ձգվում են Արեգունու, հյուսիս-արևելյան մասով Սևանի լեռնաշղթաները, իսկ արևելյան մասով Արևելյան Սևանի լեռնաշղթան, որը օղակ է Սևանի ու Վարդենիսի լեռնաշղթաների միջև: Եթե Արեգունու և Սևանի լեռնաշղթաների Գեղարքունիքի մարզի սահմաններում գտնվող լանջերը զառիթափ են ու կտրտված, ապա Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների դեպի Սևանա լիճ նայող լանջերը համեմատաբար մեղմաթեք են, որտեղ այդ լեռների բազմաթիվ հրաբխային կոներից դուրս ժայթքած լավան հրաբխային լեռնալանջերից բացի առաջացրել է նաև սարավանդներ, քարակարկառներ: Մարզի հենց այս հատվածներում էլ՝ Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, որոնք շատ հարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200մ բարձրություն: Այն կազմում է շուրջ 10000 հեկտար՝ մարզի վարելահողերի մոտ 12.3%:

Սևանա լճի հարավային և արևմտյան առափնյա հարթ տարածությունները բնութագրվում են լեռնատափաստանային

բերրի սևահողերով, իսկ համեմատաբար բարձրադիր մասերը՝ լեռնամարգագետնային հողերով:

1.3. Բնակլիմայական պայմանները

1.3.1. Կլիմա

Գեղարքունիքի մարզը յուրահատուկ է իր առողջարար կլիմայով:

Կլիման բարեխառն լեռնային է. ձմեռները ցուրտ են, առաջանում է կայուն ձնածածկույթ: Հունվարյան միջին ջերմաստիճանը -5˚-10˚ է: Ամառները տաք են, արևոտ, գերիշխում են քիչ ամպամած եղանակները:

Միջին ջերմաստիճանն հասնում է +18˚+20˚: Տեղումները շատ չեն՝ 400-450 մմ, իսկ բարձրադիր շրջաններում մինչև 1000 մմ: Գրեթե մշտական և ուժեղ քամիների ազդեցության տակ են Սոթքի, Սեմյոնովկայի, Վարդենյաց լեռնանցքները, մարզի լեռնային և հարթավայրային գոտիները:

Գեղարքունիքի մարզը բնութագրվում է շատ առատ արևափայլով, արևային օրերի քանակը կազմում է 300 օր: Տարեկան արևափայլի միջին տևողությունը հասնում է ավելի քան 2700-2800 ժամ/տարի:

Սևանա լիճը նկատելիորեն մեղմացնում է ափամերձ գոտու ձմռան սառնամանիքը և ամռան շոգը:

1.3.2. Մարզի բնական պայմանները և հարստությունները

Գեղարքունիքի մարզը հիմնականում զբաղեցնում է Սևանա լճի ջրհավաք ավազանը: Գեղամա և Վարդենիսի լեռներում բազմած են տասնյակ հրաբխային կոներ: Հատկապես ուշագրավ են Աժդահակ և Արմաղան հրաբուխները, որոնց ձագարձև խառնարաններում գոյացել են գեղեցիկ լճակներ:



Գլխավոր լեռնաշղթաներն են՝ Գեղամա, Արեգունի, Սևանի, Արևելյան Սևանի, Վարդենիսի:

Վարդենիսի, Գեղամա, Փամբակի, Սևանի, Արեգունու և Արևելյան Սևանի բարձրաբերձ լեռնաշղթաների հսկայական թասի մեջ, ծովի մակարդակից 1900,47 մ բարձրության վրա է գտնվում աշխարհի ամենախոշոր քաղցրահամ լճերից մեկը՝ Սևանը, որի ծավալը 33,2 կմ³ է, մակերեսը՝ 1238 կմ²:

Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան (20.4 կմ³), հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան (12.8 կմ³)։ Լճի առավելագույն խորությունը 79.4 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.2 մ, ափի շրջագիծը մոտ 230 կմ: Այն համարվում է հայ ժողովրդի գլխավոր խորհրդանիշերից և ուխտավայրերից մեկը: Հսկայական է նաև Սևանի համաշխարհային ու համամարդկային նշանակությունը, քանի որ այն մի կողմից խմելու ջրի հսկայական պաշարներով հարուստ ջրամբար կարող է ծառայել Կովկասի ու Մերձավոր արևելքի երկրների համար, մյուս կողմից՝ հանդիսանում է բնական ու անկրկնելի առողջարան՝ իր անսպառ հնարավորություններով, զանազան գրավչություններով:

Սևանա լիճը սնում են 28 գետեր ու գետակներ, , որոնցից 4–ը՝ Փոքր Սևան, 24–ը՝ Մեծ Սևան։ Առավել ջրառատ գետեր են համարվում Արգիճին, Գավառագետը, Մասրիկը, Ձկնագետը, Մաքենիսը, Վարդենիսը: Սակայն 1981թ.-ից լիճը սնող հիմնական երակը 48 կմ երկարություն ունեցող Արփա-Սևան թունելային ջրատարն է, որով տարեկան լիճ է տեղափոխվում 250-270 միլիոն մ³ ջուր: Լճից դուրս է գալիս մեկ գետ՝ Հրազդանը:

Գեղարքունիքի մարզը յուրահատուկ է իր լճափնյա հնագույն հուշարձաններով ու մշակույթի օջախներով, բուսական և կենդանական աշխարհի առանձնահատկություններով, բնական միջավայրի գեղեցկությամբ:

Մարզի տարածքում պահպանվել են բազմաթիվ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ, բայց առանձնապես ուշագրավ են բնական հուշարձանները՝ խառնարանային լճերը, խարամային կոները, ընդարձակ քարային ծովերը: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Սևանա լճից ազատված տարածքներում հայտնաբերված մինչև 5000-ամյա հնության դամբարանները:

Սևանի ավազանն արգավանդ հողերով հարուստ է, հատկապես կարևոր է Մասրիկի դաշտը՝ 1900-2200 մ բարձրություններում:

Մարզի 4 քաղաքները՝ Գավառը, Սևանը, Մարտունին, Վարդենիսը տեղակայված են ինտենսիվ յուրացված տարածագոտիներում և շրջապատված են արժեքավոր գյուղատնտեսական հողերով, իսկ Վարդենիս, Գավառ, Մարտունի քաղաքները տեղակայված են արտեզյան, խմելու, հանքային ջրերի ավազանների վրա:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով՝ Սևանա լիճը՝ Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարան է: Որպես ջրհավաք ավազան սահմանված է այն տարածքը, որի մակերևութային և ստորերկրյա ջրերը հոսում են դեպի Սևանա լիճ: Սևանա լճի ջրհավաք ավազանի մասն են կազմում նաև Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարները, Արփա և Որոտան գետերի ջրհավաք ավազանները՝ մինչև Կեչուտի ջրամբար: Օրենքով առանձնացված են կենտրոնական, անմիջական ազդեցության և ոչ անմիջական ազդեցության էկոլոգիական գոտիները: Կենտրոնական գոտին «Սևան» ազգային պարկի տարածքն է, որի տարանջատման նպատակն է վերականգնել և պահպանել Սևանա լճի էկոհամակարգի բնական վիճակը՝ ջրի որակը, լճի և ափամերձ ցամաքային տարածքների բնական և արհեստական լանդշաֆտները և կենսաբազմազանությունը:

1.3.3. Մարզի բնության հատուկ պահպանվող տարածքները: Սևան ազգային պարկ

Մարզի տարածքում է գտնվում «Սևան Ազգային պարկը» /կազմավորվել է 1978թ.-ին/: Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակի ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազար հա, որից 24.9 հազ. հա առափնյա ցամաքային տարածքներ են: Այն շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1600 և կենդանիների 330 տարատեսակներ:

Պարկը գտնվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության իրավասության ներքո: Ստեղծվել է 1978 թ. մարտի 14-ին, ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի թիվ 125 որոշմամբ:

Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը իրականացնում է «Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: Այն շահույթ չհետապնդող, իրավաբական անձի կարգավիճակ ունեցող բնապահպանական, գիտահետազոտական, գիտաճանաչողական կազմակերպություն է, որը գործում է ՀՀ Սահմանադրության, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների, ՊՈԱԿ-ի կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով (15-ը մայիսի 2001 թ.) ազգային պարկի տարածքը ամբողջությամբ մտել է Սևանի էկոհամակարգի Կենտրոնական գոտու մեջ, սահմանվելով որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ:

Սևան ազգային պարկի տարածքը բաժանվում է 4 տարածքագործառնական գոտիների՝ արգելոցներ, արգելավայրեր, ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում կան 4 արգելոցներ՝ «Նորաշենի», «Լիճք-Արգիչի», «Գիլլի» և «Արտանիշի», որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 7464 հա, որից ցամաքային տարածքը՝ 4289 հա, իսկ ջրայինը՝ 3175 հա, 2 արգելավայրեր՝ «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային», որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2652 հա, որից ցամաքային տարածքը՝ 2359 հա, իսկ ջրայինը՝ 293 հա, 4753 հա ընդհանուր մակերեսով ռեկրեացիոն և 11266 հա ընդհանուր մակերեսով տնտեսական գոտի:

Տարածքագործառնական գոտիները

Տարածքագործառնական գոտիների մեջ մտնում են արգելոցները, արգելավայրերը, ռեկրեացիոն գոտիները, տնտեսական գոտիները:

Արգելոցներ

Նորաշենի արգելոց

Գտնվում է ազգային պարկի հյուսիս-արևմտյան հատվածում և զբաղեցնում է 214 հա մակերես, որից՝ ցամաքային տարածքը կազմում է 36 հա, իսկ ջրայինը՝ 178 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 6.4 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 1.7 կմ երկարությամբ և 1.3 կմ լայնությամբ: Արգելոցի նպատակն է ապահովել թռչունների (մասնավորապես, հայկական որորի, քանի որ այստեղ բնադրող միակ էնդեմիկ թռչունն է) բնականոն ապրելակերպն ու վերարտադրությունը:

Սահմանի նկարագրությունը.

Արգելոցի ցամաքային սահմանն սկսվում է 2-րդ ռեկրեացիոն և 6-րդ տնտեսական գոտիների հատման կետից (տես՝ 4.4-րդ և 4.5-րդ կետերը)՝ Սևան-Մարտունի ավտոճանապարհի Նորաշեն գյուղ մտնող խաչմերուկից 600 մետր դեպի Գավառ տանող ճանապարհի և 225 մետր դեպի լիճ՝ լճախորշի Ա1 կետից (X=502765, Y=4485974, H=1900.5 մ): Այստեղից սահմանը 110 մ անցնում է հարավ-արևելյան ուղղությամբ, այնուհետև շարունակվում է լճախորշին մոտ գտնվող լճակի ափագծով մինչև Ա1/1 (X=503426.46, Y=4486039.89, H=1900.5) կետը, որից հետո, սահմանակցելով «Նորաշենի» արգելավայրին, անցնում է գրունտային ճանապարհին զուգահեռ մոտ 680 մետր՝ մինչև Ա1/2 (X=503632.68, Y=4486593.70, H=1900.5) կետը: Ա1/2 կետից ջրային սահմանը 3.6 կմ շրջագծով անցնում է մինչև Ա1 կետը:

Տեղանքի նկարագրությունը.

Արգելոցի տարածքի ռելիեֆը գրեթե հարթ է և ընկած է լճի ափից մինչև 1908 մետր բարձրությունը: Ափերը կտրտված են: Արգելոցի տարածքում առանձնացվում են երկու կղզյակներ՝ 3.2 հա և 1.6 հա տարածքներով: Արգելոցի ցամաքային տարածքն անտառազուրկ է, հանդիպում են չիչխանի թփեր: Կղզիները քարապատ են:

Ենթակառուցվածքները.

Արգելոցի ցամաքային տարածքը սահմանակից է «Նորաշենի» արգելավայրի տարածքի հետ, գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը 2.8 կմ է:»

Լիճք-Արգիչի արգելոց



Գտնվում է ազգային պարկի հարավ-արևմտյան հատվածում՝ Ծակքար, Լիճք և Արգիճի գետերի գետաբերանային հատվածներում, և զբաղեցնում է 1175 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 482 հա, իսկ ջրայինը՝ 693 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 13.3 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 3.8 կմ երկարությամբ և 3.7 կմ լայնությամբ:

Արգելոցի նպատակն է ապահովել Լիճքի հանքային աղբյուրների, Արգիճի և Լիճք գետերի գետաբերանային հատվածում մնացորդային լճակների ջրաճահճային և ջրային բուսականության, թռչունների բնադրավայրի պահպանությունը, ինչպես նաև արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակներիª Սևանի իշխանի, Սևանի կողակ և Սևանի բեղլուի ձվադրումն ու զարգացումը:

Սահմանի նկարագրությունը.

Արգելոցի ցամաքային սահմանը սկսվում է Ծակքար գետի գետաբերանից 430 մ հոսանքն ի վար և 50 մ դեպի հյուսիս Ա1 կետից (X=520489, Y=4450708, H= 1903 մ): Ա1 կետից սահմանը Ծակքար գետին զուգահեռ, 50 մ հեռավորությունից, անցնում է հոսանքն ի վեր ուղղությամբ և 50 մ չհասած գազամուղին թեքվում է հարավ-արևելք: Գազամուղից 50 մ հեռավորությամբ, դրան զուգահեռ, 50 մ կտրում անցնում է Արգիչի գետը և թեքվում է հյուսիս-արևելքª հասնում Բ1 կետին (X=524125, Y=4448936, H= 1901 մ): Ա1-Բ1 հատվածի երկարությունը 5.3 կմ է: Ա1-Բ1 հատվածում սահմանակցում է 11-րդ տնտեսական գոտուն: Բ1 կետից սահմանը 330 մ շարունակվելով հյուսիս-արևելյան ուղղությամբª հասնում է լճափ՝ Գ1 կետին (X=524328, Y=4449157, H= 1898 մ): Բ1-Գ1 հատվածում սահմանակցում է 5-րդ ռեկրեացիոն գոտուն: Գ1 կետից՝ ափից, ցամաքային սահմանը անցնում է լճի ափագծով մինչև Դ1 կետը (X=520869, Y=4450821, H= 1898 մ): Գ1-Դ1 հատվածում սահմանը ջրային տարածքով անցնում է մոտ 2.0 կմ խորությամբ և 6.9 կմ շրջագծով: Դ1 կետից՝ ափից, սահմանը անցնում է 400 մետր հարավ-

արևմտյան ուղղությամբ հասնում Ա1 կետին: Բ1-Ա1 հատվածում սահմանակցում է 4-րդ ռեկրեացիոն գոտուն:

Տեղանքի նկարագրությունը.

Արգելոցի տարածքի ռելիեֆը հարթ է: Ընկած է լճի ափից մինչև 1908 մետր բարձրության սահմաններում: Արգելոցի տարածքն ընդգրկում է Արգիճի, Լիճք, Բախտակ և Ծակքար գետերի գետաբերանային հատվածները, որտեղ լճի ջրի մակարդակի իջեցման և գետերի էրոզիայի բազիսի իջեցման պատճառով գետերը ստեղծել են 10-6 մետր խորությամբ ձորակներ: Լիճք գետի հատվածում դուրս են գալիս Լիճքի հանքային աղբյուրները և կան 3 փոքր լճակներ՝ 9.8, 3.1 և 1.3 հա մակերեսներով:

Տարածքը գրեթե ամբողջությամբ պատված է անտառային տնկարկներով, որոնք հիմնականում կազմված են սոճու, բարդու, թխկու և ուռենու ծառուտներից:

Ենթակառուցվածքները. Արգելոցի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 15.6 կմ:

Գիլլի արգելոց

Գտնվում է ազգային պարկի հարավ-արևելյան հատվածում՝ Գիլլի ջրանցքի, Մասրիկ և Գեղամասար գետերի գետաբերանային հատվածներում և զբաղեցնում է 1810 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 1325 հա, իսկ ջրայինը՝ 485 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 23.3 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 10.4 կմ երկարությամբ և 1.8 կմ լայնությամբ:

Արգելոցի նպատակն է ապահովել Մասրիկ և Գեղամասար գետերի գետաբերանային հատվածների պահպանությունը՝ արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների ձվադրման և զարգացման համար, ինչպես նաև հարակից ճահճուտների պահպանությունը, որպես թռչունների բնադրավայր:

Սահմանի նկարագրությունը.

Արգելոցի ցամաքային սահմանը սկսվում է Ծովակ-Վարդենիս ավտոճանապարհից դեպի Գիլլի ջրանցք 600 մ հեռավորությունից՝ Ա1 կետից (X=555244, Y=4451749, H= 1919 մ): Ա1 կետից անցնում է Ազգային պարկի սահմանով (Ծովակ-Նորակերտ ավտոճանապարհով) հյուսիսային ուղղությամբ, կտրում անցնում է Գեղամասար գետը 550 մ և հասնում է Բ1 կետին (X=524024, Y=4462238, H= 1919 մ): Բ1 կետից սահմանը թեքվում է դեպի հարավ-արևմուտք անցնելով 950 մետր հասնում է լճափ Գ1 կետին (X=553328, Y=4461635, H= 1898 մ): Բ1-Գ1 հատվածում սահմանակցում է 8-րդ ռեկրեացիոն գոտուն: Գ1 կետից արգելոցի ցամաքային սահմանը անցնում է ափագծով մինչև Դ1 կետը (X=553717, Y=4452415, H= 1903 մ), իսկ ջրային տարածքով անցնում է մոտ 9.7 կմ շրջագծով, 500 մետր լայնությամբ և 9.3 կմ երկարությամբ: Դ1 կետից սահմանը 1.7 կմ անցնում է հարավ-արևելյան ուղղությամբ և հասնում Ա1 կետին: Այս հատվածում արգելոցը սահմանակից է 12-րդ տնտեսական գոտուն:

Տեղանքի նկարագրությունը.

Արգելոցի տարածքի ռելիեֆը հարթ է: Ամբողջությամբ ընկած է լճի նախկին ջրի մակարդակի (1916 մետր) սահմաններում: Արգելոցի տարածքն ընդգրկում է Գեղամասար և Մասրիկ գետերի ու վերջինիցս դուրս եկող ջրանցքի գետաբերանային հատվածները:

Արգելոցի ցամաքային տարածքն ամբողջությամբ պատված է անտառային տնկարկներով, որոնք հիմնականում կազմված են սոճու, բարդու և ուռենու ծառուտներից:

Ենթակառուցվածքները. Արգելոցի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 31 կմ, իսկ 1.6 կմ՝ Գիլլի ջրանցքը::

Արտանիշի արգելոց



Գտնվում է ազգային պարկի արևելյան մասում՝ ընդգրկում է Արտանիշ թերակղզին (բացառությամբ ձախակողմյան հատվածի՝ Շորժա համայնքային հողերը) և Արտանիշի լճախորշի թերակղզուն հարող մասը: Տարածքը զբաղեցնում է 3640 հա մակերես, որից 2142 հա ցամաքային տարածք, իսկ 1498 հա՝ ջրային: Սահմանի ընդհանուր երկարությունը 25.9 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 11.7 կմ երկարությամբ և 7.8 կմ լայնությամբ:

Արգելոցի նպատակն է ապահովել Արտանիշ թերակղզու մինչսառցային ժամանակաշրջանի բազմազան ռելիկտային բուսականության, գիհու նոսրանտառների և տափաստանների, ինչպես նաև որպես հազվագյուտ կենդանիների (գորշ արջ, այծյամ, վարազ, բեզոարյան այծ, ազնվացեղ եղջերու և այլն) միգրացիայի միջանցքի պահպանությունը:

Սահմանի նկարագրությունը.

Արտանիշի արգելոցի ցամաքային սահմանը սկսվում է Ա1 կետից (X=528625, Y=4483303), 900 մ անցնում հարավ-արևելյան ուղղությամբ և հասնում է լճախորշի ափին՝ Բ1 կետին (X=529282, Y=4482722, H= 1908 մ): Ա1-Բ1 հատվածում սահմանակցում է 8-րդ ռեկրեացիոն գոտուն: Բ1 կետից ցամաքային սահմանն անցնում է ափագծով մինչև Գ1 կետը (X=526445, Y=4480861, H= 1898 մ), իսկ ջրային սահմանն անցնում է ափագծին զուգահեռ 1.5 կմ հեռավորությունից: Գ1 կետից սահմանն անցնում է հյուսիսային ուղղությամբ 350 մ, որից հետո թեքվում է դեպի արևմուտք[a] անցնելով 950 մ հասնում է Դ1 կետին (X=525492, Y=4481375, H= 1917 մ): Գ1-Դ1 հատվածում սահմանակցում է 1-ին ռեկրեացիոն գոտուն: Դ1 կետից սահմանը անցնում է Շորժա համայնքային հողերի սահմանով, շրջանցելով Արտանիշ թերակղզու լեռների հյուսիսային լանջերը, անցնում մոտ 9.2 կմ, որից 1.3 կմ սահմանակից է Արտանիշի համայնքային հողերին, և հասնում է Ա1 կետին:

Տեղանքի նկարագրությունը.

Արտանիշի արգելոցի տարածքն ընդգրկում է Արտանիշ թերակղզին (բացառությամբ արևմտյան մասի՝ Շորժա համայնքային հողերը) և Արտանիշի լճախորշի մի մասը: Արտանիշի լճախորշից հյուսիս ընկած ցամաքային հատվածը հարթ է, գտնվում է 1906 -1915 մ բարձրությունների միջև, իսկ թերակղզու կենտրոնական և արևելյան հատվածները պատված են լեռնազանգվածով, որի առավելագույն բարձրությունը Ադաթափա լեռն է՝ 2460.8 մ բարձրությամբ (գտնվում է թերակղզու կենտրոնական մասում): Արտանիշի թերակղզու կենտրոնական մասից լեռնաբազուկները ձգվում են ճառագայթաձև: Արգելոցի ցամաքային տարածքում մշտական հոսող գետեր չկան, միայն ժամանակավոր հոսող գետակներ են: Արգելոցի տարածքը գրեթե անտառազուրկ է: Միայն թերակղզու կենտրոնական լեռնազանգվածի հյուսիսային մասում փոքր հատվածներով հանդես են գալիս անտառային տարածքներ՝ գիհու գերակշռությամբ և լճի ափի երկայնքով մոտ 200 մ լայնությամբ ձգվում են թեղու և չիչխանի տնկարկներ:

Ենթակառուցվածքները. Արգելոցի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 51 կմ: Այստեղ կան նաև լքված և ավերված շինություններ:

Արգելավայրեր

Գավառագետի արգելավայր

Գտնվում է ազգային պարկի Նորատուս թերակղզու ափամերձ և Գավառագետի գետաբերանային հատվածում, զբաղեցնում է 845 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 552 հա, իսկ ջրայինը՝ 293 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 26.4 կմ է: Արգելավայրի տարածքը ձգվում է մոտ 7.5 կմ երկարությամբ և 0.5-3.5 կմ լայնությամբ:

Արգելավայրի նպատակն է ապահովել Գավառագետի գետաբերանային հատվածում մնացորդային լճակների պահպանությունը և Նորատուս թերակղզու ափամերձ հատվածի թռչունների բնադրավայրերը, ինչպես նաև արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների ձվադրումն ու զարգացումը:

Սահմանի նկարագրությունը.

Արգելավայրի սահմանը սկսվում է Նորատուս-Մարտունի ավտոճանապարհից[a] լճափից 2.0 կմ դեպի արևելք՝ Ա1 կետից (X=511213, Y=4476644, H= 1898 մ): Ա1 կետից սահմանը անցնում է նախ հարավային, ապա հարավ-արևելյան ուղղությամբ, շրջանցում է Նարատուս թերակղզու Ռադիոլոկացիոն կայանը և հասնում Բ1 կետին (X=518191, Y=4475080, H= 1902 մ): Ա1-Բ1 հատվածում սահմանակից է 11-րդ տնտեսական գոտուն: Բ1 կետից սահմանը անցնում է 300 մ արևելյան ուղղությամբ, հասնում Գ1 կետին (X=518185, Y=4475094, H= 1898 մ): Բ1-Գ1 հատվածում սահմանակից է 4-րդ ռեկրեացիոն գոտուն: Գ1-Ա1 հատվածում ցամաքային սահմանը անցնում է ափագծով, իսկ ջրայինը՝ 300 մետր լայնությամբ:

Տեղանքի նկարագրությունը.

Արգելավայրի տարածքի ռելիեֆը հարթ է: Ամենաբարձր նիշը հասնում է մինչև 1915 մ բարձրությունը, հիմնական տարածքը ընկած է մինչև 1910 մ բարձրությունը: Արգելավայրի ցամաքային տարածքը Գավառագետի գետաբերանային և Նորատուս թերակղզու ափամերձ հատվածներն են: Այստեղ Գավառագետը, մինչև լիճ թափվելը, ունի մեծ գալարայնություն (ռելիեֆի հարթության պատճառով), որի պատճառով էլ այս տարածքում առաջացել են մի քանի հնահունային փոքր լճակներ: Արգելավայրի ցամաքային տարածքը գրեթե ամբողջովին անտառապատ է: Անտառային տնկարկներից հանդես են գալիս հիմնականում բարդու, ուռենու և սոճու ծառուտները:

Ենթակառուցվածքները. Արգելավայրի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 25 կմ: Արգելավայրի տարածքով անցնում են 1.4 կմ երկարությամբ բարձրավոլտ հոսանքի գծեր:

Գիհի-կաղնուտային ռելիկտային արգելավայրը



Գտնվում է ազգային պարկի արևելյան մասում և տարածվում է Դարանակ գյուղից մինչև Ջիլ գյուղ՝ մոտ 18 կմ երկարությամբ և 1.5-3.8 կմ լայնությամբ: Արգելավայրը զբաղեցնում է 1807 հա մակերես: Տարածքը կտրտված է, հանդես են գալիս տարբեր չափերի 5 հատվածներ, որոնց սահմանների ընդհանուր երկարությունը կազմում է 55.0 կմ:

Արգելավայրի նպատակն է ապահովել Սևանա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի վրա տարածվող գիհու և կաղնու ռելիկտային բնական նոսր անտառների պահպանությունը:

Սահմանի նկարագրությունը.

- Առաջին հատվածը ձգվում է Դարանակ գյուղի վերջից՝ գետի աջ և ձախ ափերով դեպի հյուսիս-

արևելք 1.3 կմ լայնությամբ և դեպի հյուսիս-արևմուտք 2.8-4.0 կմ երկարությամբ:

- Երկրորդ հատվածը սկսում է 2.4 կմ չհասած Դարանակ գետ և ձգվում է երկաթգծի երկայնքով մոտ 1.7 կմ երկարությամբ և մոտ 800 մ դեպի հյուսիս՝ լանջն ի վեր:
- Երրորդ հատվածն ընկած է Փամբակ գյուղից 800 մետր դեպի հյուսիս և ձգվում է Փամբակ գետի ձախ ափից 370 մ լայնությամբ և լանջն ի վեր 700 մետր երկարությամբ:
- Չորրորդ հատվածի սահմանը սկսում է 2.0 կմ չհասած Շամպիր գետ, ձգվում է երկաթգծից դեպի լանջն ի վեր մոտ 4.7 կմ երկարությամբ: Շամպիր գետի գետաբերանից մոտ 2.1 կմ հեռավորությունից ձգվում է գետի երկու ափերով մոտ 1.0-1.6 կմ լայնությամբ:
- Հինգերորդ հատվածն ընկած է Ծափաթաղ և Ջիլ գյուղերի մինչև: Սահմանը սկսվում է Ջիլ գետից 1.5 կմ ներքևից, ձգվում հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ 5.2 կմ լայնությամբ մինչև Ծափաթաղ գետ և երկաթգծից դեպի լանջն ի վեր[ա] հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ 3.2 կմ երկարությամբ:

Տեղանքի նկարագրությունը.

Գիհի կաղնուտային ռելիկտային արգելոցը ընկած է Սևանա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերին: Տարածքն իրենից ներկայացնում է ուժեղ կտրտված լեռնային լանդշաֆտ[ա] թեք ժայռոտ լանջերով, տարբեր խորության և լայնության ձորերով ու ձորակներով: Ամենախորը ձորերով հոսում են մշտական գետերը[ա] Դարանակ, Փամբակ, Շամպիր, Ծափաթաղ և Ջիլ: Արգելավայրի տարածքը սկսվում է մոտ 1950 մ բարձրությունից և տեղ-տեղ հասնում մինչև 2500 մ բարձրությունները:

Ենթակառուցվածքները. Արգելավայրի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 25 կմ: Արգելավայրի տարածքով անցնում է 7.2 կմ բարձրավոլտ հոսանքի գծեր:

Գետիկի արգելավայր, բնության հատուկ պահպանվող տարածք, Հայաստանի Հանրապետության 26 արգելավայրերից մեկը: Կազմավորվել է 1971 թ., ունի 5728 հա տարածք: Գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Գետիկ գետի ավազանում, Միափորի լեռների հարավային լանջերին, ծովի մակարդակից 1500-2700 մ բարձրություններում: Ստեղծվել է՝ անտառային կենդանիների պահպանության նպատակով:

«Գիհու նոսրանտառային» արգելավայրը հիմնադրվել է 1958 թ., զբաղեցնում է 3312 հա տարածք, գտնվում է Գեղարքունիքի մարզում, Արեգունի և Սևանի լեռնաշղթաների լանջերին, ծովի մակարդակից 1950-2500 մ բարձրության վրա:

«Նորաշենի» արգելավայր.

Գտնվում է ազգային պարկի հյուսիս-արևմտյան հատվածում և զբաղեցնում է 625 հա մակերես, որից՝ ցամաքային տարածքը կազմում է 146 հա, իսկ ջրայինը՝ 479 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 10.3 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 3.1 կմ երկարությամբ և 2.1 կմ լայնությամբ: Արգելավայրի նպատակն է ապահովել չուի ընթացքում պարբերաբար հանդիպող և չվահյուր թռչունների հանգստի և ապրելակերպի բնական պայմանները և պահպանությունը:

Սահմանների նկարագրությունը.

Արգելավայրի ցամաքային սահմանն սկսվում է Ա1/2 (X=503632.68, Y=4486593.70, H=1900.5) կետից, սահմանակցելով «Նորաշենի» արգելոցին, անցնում է գրունտային ճանապարհին զուգահեռ մոտ 680 մետր՝ մինչև Ա1/1 (X=503426.46, Y=4486039.89, H=1900.5) կետը: Այստեղից սահմանն անցնում է լճախորշին մոտ գտնվող լճակի ափագծով մինչև Ա1/3 (X=503144.67, Y=4485514.78, H=1900.5) կետը, որտեղից ուղիղ գծով անցնում է դեպի հարավ 188 մետր, այնուհետև Սևան-Մարտունի ավտոճանապարհին զուգահեռ հարավ-արևելյան ուղղությամբ հասնում է Ծովազարդ գյուղ մտնող գրունտային ճանապարհի խաչմերուկից 100 մետր դեպի լճափ Բ1 կետին (X=504225, Y=4483907, H=1903 մ): Ա1/3-Բ1 սահմանակցում է 6-րդ տնտեսական գոտուն: Բ1 կետից սահմանը թեքվում է դեպի արևելք, հյուսիս և հյուսիս-արևելք ուղղությամբ, անցնում 500 մ և հասնում է Գ1 կետին (X=504610, Y=4484131, H=1900.5 մ): Բ1-Գ1 սահմանակցում է 3-րդ ռեկրեացիոն գոտուն: Գ1 կետից ջրային սահմանը 6.0 կմ շրջագծով անցնում է մինչև Ա1/1 կետը:

Տեղանքի նկարագրությունը.

Արգելավայրի տարածքի ռելիեֆը գրեթե հարթ է և ընկած է լճի ափից մինչև 1916 մետր բարձրությունը: Ափերը կտրտված են: Անտառային տնկարկներից հիմնականում հանդես են գալիս չիչխանի, թեղու և սոճու ծառուտները:

Ենթակառուցվածքները.

Արգելավայրի ցամաքային տարածքին հարող Սևան-Մարտունի ավտոճանապարհի երկարությունը կազմում է 1.9 կմ, իսկ գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը 5.8 կմ է:»,

«Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունները

Սևան՝ ազգային պարկի առաջակվող ռեկրեացիոն գոտիների ընդհանուր տարածքը կազմում է 4753 հա, որոնք առանձին հատվածներով տարածվում են լճի ափամերձ երկայնքով (Քարտեզ 4):

Առաջին ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 1501 հա, սահմանի ընդհանուր երկարությունը[ª] 119.8 կմ:

Սահմանի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Սևան-Գավառ ավտոճանապահի Լճաշեն գյուղ մտնող ճանապահի խաչմերուկից դեպի արևելք լճի ափից՝ Ա2 կետից (X=495906, Y=4487597, H= 1898 մ): Ա2 կետից սահմանը ձգվում է 600 մետր մինչև Լճաշեն գյուղ մտնող ճանապահի խաչմերուկ՝ Բ2 կետը (X=495511, Y=4487916, H= 1904 մ): Ա2-Բ2 հատվածում սահմանակից է 4-րդ տնտեսական գոտուն: Որից հետո անցնում է հյուսիս-արևելյան ուղղությամբ 1.3 կմ մինչև Սևան-Դիլիջան ավտոմայրուղու հատումը (Սևան քաղաք մտնող խաչմերուկից 1.0 կմ ավտոմայրուղով դեպի Դիլիջանի կողմը)՝ Գ2 կետը (X=495528, Y=4489063, H= 1919 մ): Այստեղից սահմանը անցնում է Սևան-Դիլիջան ավտոմայրուղով 10.9 կմ մինչև (չհասած 1.2 կմ Ծավազյուղ թեքվող ճանապարհի խաչմերուկ) Դ2 կետը (X=496779, Y=4496236, H= 1915 մ): Այս հատվածում ռեկրացիոն գոտին ամբողջությամբ իր մեջ ներառում է Սևան թերակղզին: Դ2 կետից սահմանը թեքվում է դեպի հյուսիս-արևելք անցնում 3.5 կմ դուրս գալիս Ծովազյուղ-Շորժա ավտոճանապարհ՝ Ե2 կետը (X=497549, Y=4498965, H= 1916 մ): Գ2-Ե2 հատվածում սահմանակից է 1-ին և 2-րդ տնտեսական գոտիներին: Մինչև Շորժա գյուղ սահմանը անցնում է Ծովազյուղ-Շորժա ավտոճանապարհով (այս հատվածում սահմանակից է 13-րդ տնտեսական գոտուն): Այստեղից ռեկրացիոն գոտու սահմանը մինչև վերջ անցնում է Շորժա գյուղի համայնքային սահմանով: Շորժա գյուղի ճանապարհի խաչմերուկից սահմանը անցնում է 650 մետր թեքվում դեպի հարավ մտնում է Արտանիշ թերակղզի, անցնում գրունտային ճանապարհով 3.7 կմ: Որից հետո անցնում է 2.1 կմ գրունտային ճանապարհով արևելյան ուղղությամբ և հասնում է Արտանիշի արգելոցի Դ1 սահմանակետին: Այստեղից արգելոցի սահմանով իջնում է լճափ հասնում Արտանիշի արգելոցի Գ 1 սահմանակետին:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու հիմնական տարածքի ռելիեֆը (բացի Սևանա թերակղզուց) հարթ է և ընկած է լճի ափից մինչև 1910 մետր բարձրությունը: Սևանա թերակղզու արևելյան մասը մի ժայռապատ բարձունք է, որի ամենաբարձր կետը հասնում է 1982.3 մետր բարձրության: Ռեկրեացիոն գոտու հյուսիս-արևմտյան ափերը քիչ են կտրտված, մեղմաթեք են, որը հարմար է լողափերի համար, իսկ արևելյան ափերը (Արեգունու լեռնաշղթայի) կտրուկ խորանում են և լողափերի համար այնքան էլ հարմար չեն: Այստեղով անցնում է նաև տեկտոնական խզվածքային գոտին:

Տարածքը հիմնականում պատված է անտառային տնկարկներով, որոնցում գերակշռում են սոճու, բարդու, թեղու և չիչխանի ծառուտները:

Ռեկրեացիոն գոտին ընդգրկում է Ձկնագետ, Դրախտիկ, Գեղամաբակ և Աղբերք գետերի գետաբերանային հատվածները:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում ասֆալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 9.4 կմ, իսկ գրունտայինը՝ 57 կմ: Տարածքով անցնում է 7.7 կմ երկարությամբ բարձրավոլտ հոսանքի գծեր: Արեգունու ափամերձ հատվածում՝ Դրախտիկ-Շորժա, անցնում է գազատարի 12.8 կմ հատվածը:

Սևանա թերակղզու բարձրունքում է գտնվում X-XI դարի Սևանի վանքը, ինչպես նաև ՀՀ Նախագահի, Գրողների միության, Կապույտաչյա Սևան, Արևիկ և այլ հանգստյան տները: Գոտու տարածքում շատ են սպասարկման ոլորտի օբյեկտներ՝ հյուրանոցներ-7, ռեստորաններ և սրճարաններ՝ 200-ից ավելի, առևտրի խանութներ և կրպակներ՝ 250-ից ավելի և այլն: Գոտու Արտանիշ թերակղզու տարածքում է գտնվում Նկարիչների միության հանգստյան տունը:

Երկրորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 144 հա: Սահմանի երկարությունը 18.4 կմ է:

Սահմանի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Սևան-Գավառ ավտոճանապարհի Լճաշեն գյուղ մտնող ճանապարհի խաչմերուկից դեպի Գավառ ավտոճանապարհի 1.9 կմ-ից՝ Լճաշենի Ա2 կետից (X=496359, Y=4486589, H= 1898 մ): Անցնում է 150 մետր հարավային ուղղությամբ դուրս գալիս Սևան-Գավառ ավտոճանապարհ: Այստեղից սկզբում ավտոճանապարհով անցում է 4.5 կմ, հետո ազգային պարկի սահմանով 1.2 կմ մինչև Բ2 կետը (X=501470, Y=4486591, H= 1913 մ): Բ2 կետից սահմանը անցնում է հարավ-արևելյան ուղղությանբ 750 մետր հասնում Գ2 կետին (X=502139, Y=4486282): Գ2 կետից անցնում է ազգային պարկի սահմանով հարավ-արևելյան ուղղությանբ հասնում Դ2 կետին (X=502671, Y=4485889, H= 1912 մ): Այստեղից սահմանը թեքվում է դեպի լճի ափ ձգվում 120 մետր հասնում Նորաշենի արգելոցի Ա1 սահմանակետը: Ռեկրեացիոն գոտին սահմանակից է 4-րդ և 5-րդ տնտեսական գոտիներին:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հիմնականում ալիքավոր է և ընկած է լճի ափից մինչև 1916 մ բարձրությունը: Ռեկրեացիոն գոտու ափերը կտրտված են: Տարածքի զգալի մասը քարաժայռերով են պատված: Անտառային տնկարկներ քիչ կան, հիմնականում հանդես է գալիս չիչխանը:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 5.9 կմ:

Երրորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 147 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 24.3 կմ է:

Սահմանի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Սևան-Գավառ ավտոճանապարհի Ծովազարդ գյուղ մտնող ճանապարհի խաչմերուկից դեպի Գավառ ավտոճանապարհի Ա2 կետից (X=504127, Y=4483868, H= 1906 մ): Այստեղից անցնում է 3.3 կմ ազգային պարկի սահմանով մինչև Բ2 կետը (X=505342, Y=4482203, H= 1915 մ): Բ2 կետից սահմանը անցնում է, լճափին զուգահեռ 200-250 մետր հեռավորությունից, 2.4 կմ հասնում Գ2 կետին (X=506872, Y=4480921, H= 1913 մ): Բ2-Գ2 հատվածում սահմանակցում է 7-րդ տնտեսական գոտուն: Գ2 կետից անցնում է ազգային պարկի սահմանով մինչև Դ2 կետը (X=507303, Y=4480992, H= 1915 մ): Դ2 կետից Ե2 կետ (X=509367, Y=4479167, H= 1916 մ) 3.4 կմ հիմնականում անցնում է Սևան-Գավառ ավտոճանապարհով (սահմանը մոտենալով Ե2 կետին ճանապարհից հեռանում է դեպի լճափ 100 մետր): Դ2 -Ե2 հատվածում սահմանակցում է 8-րդ և 9-րդ տնտեսական գոտիներին: Ե2 կետից անցնում է ազգային պարկի սահմանով մինչև Զ2 կետը (X=509355, Y=4478362, H= 1904 մ):

Զ2 կետից 450 մետր անցնում է հարավ-արևմտյան ուղղությամբ լճափին զուգահեռ և հասնում Է2 կետը (X=509173, Y=4477996, H= 1916 մ): Զ2-Է2 հատվածում սահմանակցում է 10-րդ տնտեսական գոտուն: Է կետից անցնում է ազգային պարկի սահմանով մինչև Ը2 կետը (X=509263, Y=4477608, H= 1906 մ): Ը2 կետից սահմանը անցնում է սկզբում 110 մետր հարավային ուղղությամբ հետո թեքվում դեպի արևելք անցնում 240 մետր և հասնում է լճափ Թ2 կետին (X=509291, Y=4477574, H= 1898 մ): Ը2-Թ2 հատվածում սահմանակցում է 11-րդ տնտեսական գոտուն:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հիմնականում ալիքավոր է և ընկած է 1916 մետր բարձրությունից ցածր: Առկա են ռելիեֆի մեծ թեքություններ և քարաժայռեր: Ռեկրեացիոն գոտու ափերը շատ չեն կտրտված: Անտառային տնկարկները քիչ են, հիմնականում հանդես են գալիս չիչխանի, ուռենու և թեղու ծառուտներ:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհները քիչ են[a] ընդհանուր երկարությունը կազմում է 1.2 կմ:

Չորրորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 624 հա, սահմանի ընդհանուր երկարությունը[a] 52.0 կմ:

Սահմանի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Գավառագետի արգելավայրի Գ1 սահմանակետից և հասնում արգելավայրի Բ1 սահմանակետը: Այստեղից շարունակում է հարավային ուղղությամբ, լճափին զուգահեռ 100-400 մետր հեռավորությամբ, իջնում մինչև գոտու Ա2 կետը (X=518422, Y=4465664, H= 1907 մ): Ա2 կետից սահմանը անցնում է Գավառ - Մարտունի ավտոճանապարհով 3.4 կմ հասնում Բ2 կետին (X=518641, Y=4462469, H= 1906 մ): Բ2 կետից շարունակելով հարավային ուղղությամբ, լճափին զուգահեռ 100-400 մետր հեռավորությամբ, իջնում է մինչև ՙԼիճք-Արգիճի՚ արգելոցի Ա1 սահմանակետը, որից հետո շարունակում է սահմանով հասնում արգելոցի Դ1 սահմանակետին: Ռեկրեացիոն գոտին արևմուտքից սահմանակցում է 11-րդ տնտեսական գոտուն:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հիմնականում հարթ է: Միայն Կարմիր ամառանոցների մոտ բարձր է և ժայռապատ, որտեղ առկա են ռելիեֆի մեծ թեքություն և քարաժայռեր: Ռեկրեացիոն գոտու ափերը քիչ են կտրտված: Տարածքը պատված է անտառային տնկարկներով, հիմնականում հանդես են գալիս չիչխանի, ուռենու և բարդու ծառատեսակները: Ռեկրեացիոն գոտու մեջ է Երանոս, Ձորագյուղ և այլ փոքր գետերի գետաբերանային հատվածները:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 4.2 կմ:

Հինգերորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 680 հա, սահմանի ընդհանուր երկարությունը[a] 44.3 կմ:

Սահմանի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Արգիճի գետի գետաբերանային հատվածից՝ ՙԼիճք-Արգիճի՚ արգելոցի Գ1 սահմանակետից, այստեղից շարունակում է մինչև արգելոցի Բ1 սահմանակետը: Բ1 կետից սահմանը անցնում է լճափին զուգահեռ մոտ 400-300 մետր հեռավորությունից 21 կմ և հասնում մինչև Արփա-Սևան ջրանցքի պահպանական գոտին՝ ռեկրեացիոն գոտու Ա2 կետը (X=542112, Y=4447622, H= 1902 մ): Ա2 կետից շարունակում է հյուսիսային ուղղությամբ 210 մետր մինչև լճափ՝ գոտու Բ2 կետը (X=542123, Y=4447821, H= 1898 մ): Ռեկրեացիոն գոտին սահմանակցում է 11-րդ տնտեսական գոտուն:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հիմնականում հարթ է: Ռեկրեացիոն գոտու ափերը քիչ են կտրտված: Տարածքը պատված է անտառային տնկարկներով[a] հիմնականում գիհու և բարդու ծառուտներով: Ռեկրեացիոն գոտու մեջ են Մարտունի, Աստղաձոր և Վարդենիկ գետերի գետաբերանային հատվածները:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 31.0 կմ:

Վեցերորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 163 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 12.2 կմ է:

Սահմանի նկարագրությունը.

Այս ռեկրեացիոն գոտին ընկած է Արփա-Սևան ջրանցքի և Կարճաղբյուր գյուղի միջև՝ լճահայաց մասում: Սահմանը սկսում է Արփա-Սևան ջրանցքի աջակողմյան մասի լճափի Ա2

կետից (X=542302, Y=4447742, H= 1898 մ): Այստեղից ջրանցքին զուգահեռ հոսանքն ի վեր բարձրանում է 270 մետր, դուրս է գալիս Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհ և հասնում Բ2 կետին (X=542344, Y=4447480, H= 1904 մ): Բ2 կետից անցնում է Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհով 5.7 կմ մինչև Գ2 կետը (X=547592, Y=4449297, H= 1904 մ): Գ2 կետից շարունակում է հյուսիսային ուղղությամբ 100 մետր մինչև լճափ՝ գոտու Դ2 կետը (X=547562, Y=4449403, H= 1898 մ): Ռեկրեացիոն գոտին սահմանակցում է 11-րդ և 12-րդ տնտեսական գոտիներին:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հարթ է: Ափերը ուղիղ են և մեղմաթեք: Տարածքը պատված է անտառային տնկարկներով՝ հիմնականում սոճու և բարդու ծառուտներով:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 2.7 կմ:

Յոթերորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 52.7 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 3.8 կմ է:

Սահմանի նկարագրությունը.

Այս ռեկրեացիոն գոտին ընկած է Ծովակ գյուղի լճահայաց մասում: Սահմանը սկսում է լճափի Ա2 կետից (X=551301, Y=4450227, H= 1898 մ): Ա2 կետից սահմանը անցնում է հարավային ուղղությամբ 260 մետր և դուրս գալիս Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհ՝ Բ2 կետը (X=551433, Y=4450003, H= 1901 մ): Այստեղից սահմանը անցնում է Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհով 1.3 կմ և հասնում Գ2 կետը (X=552799, Y=4450794, H= 1902 մ):

Գ2 կետից՝ Ծովակ գյուղի մոտ, թեքվում դեպի հյուսիս, անցնում 330 մետր և դուրս է գալիս լճափ՝ Դ2 կետ (X=552673, Y=4451097, H= 1898 մ): Ռեկրեացիոն գոտին սահմանակցում է 12-րդ տնտեսական գոտուն:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հարթ է: Ափերը ուղիղ են և մեղմաթեք: Տարածքը պատված է անտառային տնկարկներով՝ հիմնականում սոճու և բարդու ծառուտներով:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 1.7 կմ:

Ութերորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 1442 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 72.8 կմ է:

Սահմանի նկարագրությունը.

Այս ռեկրեացիոն գոտին ընկած է Գեղամասար գետի և Արտանիշ գյուղի միջև: Սահմանը սկսում է Գիլլի արգելոցի Բ1-Գ1 սահմանային հատվածից ձգվում 35 կմ Ծովակ-Արտանիշ ավտոճանապարհով և հասնում է Արտանիշի արգելոցի Ա1-Բ1 սահմանային հատվածը:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը գրեթե հարթ է: Տարածքը հիմնականում ընկած է մինչև 1915 մետր բարձրությունը: Ռեկրեացիոն գոտու ափերը ուղիղ են և մեղմաթեք: Տարածքը պատված է անտառային տնկարկներով՝ հիմնականում սոճու, չիչխանի և թեղու ծառուտներով:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 12.4 կմ*:*

1.3.4. Բնության հուշարձաններ

Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ

Երկրաբանական հուշարձաններ

«Գեղարքունիք-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1.	«Սևկատար» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ
22.	«Աժդահակ» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
23.	«Անանուն» ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
24.	«Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
25.	«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
26.	«Արմաղան» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մաղինա գյուղից 3.5 կմ արմ
27.	«Հայրավանք» բրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ
	Ջրաերկրաբանական հուշարձաններ	
5.	«Սարանց» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա
6.	«Խաչերի» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում
7.	«Արցունք քար» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա
8.	«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա
9.	«Անանուն» աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
10.	«Վանքի աղբյուր» աղբյուրների խումբ	Գեղարքունիքի մարզ, Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա
	Ջրագրական հուշարձաններ	
3.	«Ակնա» լիճ	Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին
	Կենսաբանական հուշարձաններ	
4.	«Ենթալպյան մարգագետին»	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ

1.3.4. Օգտակար հանածոներ

Օգտակար հանածոներից մեծ արժեք են ներկայացնում ոսկու (Սոթք), քրոմիտի (Շորժա), բնական շինանյութերի, հանքային ջրերի (Լիճք) և այլ պաշարները: Գեղարքունիքի մարզում է գտնվում Սոթքի ոսկու խոշոր հանքավայրերը:

Տեղեկատվություն

01.11.2019 թ. դրությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին

«Գեղարքունիք-3» *միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

h/h	Իրավաբանական անձի անվանումը	Գործունեության իրականացման վայրի հասցեն	Թույլտվության համարը, տրման ա.ա.տ.	Գործողության ժամկետի ավարտը	Պայմանագրի համարը, տրման ա.ա.տ.	Լեռնահատկացման ակտի համարը, տրման ա.ա.տ.
1	2	3	4	5	6	7
1	<ՎԱՐԴԵՆԻՍԻ ՔԱՐՀԱՆՔ> ԲԲԸ	Սուբաթանի տուֆ	*ՇԱԹՎ-29/016* 27.07.12թ	08.03.2020թ.	ՊՎ-016 27.07.12թ	ԼՎ-016 27.07.12թ
2	<ԵՐՅՈՒՆԱ> ՍՊԸ	Գավառի գիպսաքարեր	ՇԱԹՎ-29/081 20.10.12թ	23.12.2036թ	ՊՎ-081 20.10.12թ	ԼՎ-081 20.10.12թ
3	«ԳՈԳ-ԱՐՍ» ՍՊԸ	Լճաշենի հրաբխային խարամ /Հյուսիսային տեղ./	ՇԱԹՎ-29/100 20.10.12թ	06.06.2033թ.	ՊՎ-100 20.10.12թ	ԼՎ-100 20.10.12թ
4	<ԲԱՐՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ > ՍՊԸ	Սևոյիձորի բազալտ	ՇԱԹՎ-29/143 20.10.12թ	16.08.2036թ.	ՊՎ-143 20.10.12թ	ԼՎ-143 20.10.12թ
5	<ԳԵԳԱՄԵՏ ՊԼՅՈՒՍ> ՓԲԸ	Շորժայի դունիտների և մագնեզիալ-սիլիկատային ապարներ	ՇԱԹՎ-29/159 20.10.12թ	16.11.2034թ.	ՊՎ-159 20.10.12թ	ԼՎ-159 20.10.12թ
6	<ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ > ՍՊԸ	Սոթքի ոսկի	ՇԱԹՎ-29/189 20.10.12թ	10.09.2028թ.	ՊՎ-189 20.10.12թ	ԼՎ-189 20.10.12թ
7	<ԿԱՊԱՎՈՐ > ՍՊԸ	Ծովակի ավազ և մանրագլաքարակ ոպիճ	ՇԱԹՎ-29/207 31.10.12թ	16.07.2032թ.	ՊՎ-207 31.10.12թ	ԼՎ-207 31.10.12թ
8	<ԿԱՊԱՎՈՐ > ՍՊԸ	Գեղամասարի ԱԳԽ /1 և 2 տեղ/	ՇԱԹՎ-29/208 31.10.12թ	19.08.2020թ.	ՊՎ-208 31.10.12թ	ԼՎ-208 31.10.12թ
9	<ՊԵՐԼԱՐՈ ԼՈԿԱԼ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ> ՍՊԸ	Սիրունձորի գաբբրոներ	ՇԱԹՎ-29/226 18.01.13թ	16.07.2032թ.	ՊՎ-226 18.01.13թ	ԼՎ-226 18.01.13թ
10	<ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ > ՍՊԸ	Գեղհովիտի բազալտ /Քարալանջի տեղ./	ՇԱԹ - 29/236 28.12.12թ	28.12.2062թ	Պ-236 28.12.12թ	Լ-236 28.12.12թ
11	<ԱԳՐՈՍՊԱՍԱՐ	Ծովակի պեմզային ավազներ	ՇԱԹՎ-29/255	30.11.2035թ.	ՊՎ-255 23.11.12թ	ԼՎ-255 23.11.12թ

	ԿՈՒՄ > ԱՄ-Ի ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ> ԲԲԸ	/հյուսիսային տեղ/	23.11.12թ			
12	<ՏՈՒՖ ԳՐԱՆԻՏ> ՍՊԸ	Լճաշենի բազալտ	ՇԱԹՎ-29/283 06.11.12թ	19.10.2026թ.	Պվ-283 06.11.12թ	Լվ-283 06.11.12թ
13	<ԳԱՎԱՌԻ ՃՇՇ> ԲԲԸ	Կարմիր գյուղի բազալտ	ՇԱԹՎ-29/328 22.11.12թ	25.03.2036թ.	Պվ-328 22.11.12թ	Լվ-328 22.11.12թ
14	<ՄԵՐԻ և ՀԱՅԿ> ԱԿ	Նորատուսի ԱԿԽ	ՇԱԹՎ-29/333 05.12.12թ	04.05.2024թ.	Պվ-333 05.12.12թ	Լվ-333 05.12.12թ
15	<ՆՈՐ-ՀԵՆԴ> ՍՊԸ	Ճամբարակի անդեզիտա տրախիտ	ՇԱԹՎ-29/375 08.12.12թ	17.07.2033թ.	Պվ-375 08.12.12թ	Լվ-375 08.12.12թ
16	<ՎԱՐԴԵՆԻ ՍԻ ՏՈՐՖ> ԲԲԸ	Մասրիկի տորֆ /Գիլի-1 տեղ. /	ՇԱԹՎ – 29/404 11.02.13թ	29.08.2021թ.	Պվ-404 11.02.13թ	Լվ-404 11.02.13թ
17	«ՀՐԱԶԴԱՆ ՑԵՄԵՆՏ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ	Արտանիշի մերգելային կրաքար	ՇԱԹ-29/483 16.10.13թ	16.10.2028թ	Պ-483 16.10.13թ	Լ-483 16.10.13թ
18	«ՄԵՐՈՒԺԱՆ-ԳՐԻԳՈՐ» ՍՊԸ	Լճաշենի հրաբխային խարամի հանքավայրի «Հյուսիսային» տեղ.	ՇԱԹ-29/505 23.05.2014թ	23.05.2052թ	Պ-505 07.07.14թ.	Լ- 505 23.05.14թ.
19	«ԼԱ-ՄԱՐ» ՍՊԸ	Ճամբարակի դացիտային տուֆերի հանքավայր	ՇԱԹ-29/517 06.12.2014թ.	06.12.2064թ.	Պ-517 13.12.14թ.	Լ-517 06.12.14թ.
20	«ԳԵԳԱՄԵՏ ՊԼՅՈՒՍ» ՓԲԸ	Շորժայի տրակտոլիտ-պերիդոտիտային ապարների հանքավայր	ՇԱԹ-29/525 13.04.2015թ.	13.04.2052թ.	Պ-525 13.04.15թ.	Լ-525 13.04.15թ.
21	«Մ.Մ.Պ» ՍՊԸ	Լանջաղբյուրի հրաբխային ավազի հանքավայր	ՇԱԹ - 29/537 15.08.2017թ.	15.08.2047թ.	Պ-537 29.09.2017թ.	Լ-537 15.08.2017թ.
22	«ՔԱԼՈՅԱՆ» ՍՊԸ	Ձորագյուղի (Ծակքարի)	ՇԱԹ-29/598	28,28 տարի	Պ-598 25.02.2019թ	Լ-598

		պեռլիտային ավազի հանքավայրի 2-րդ տեղամաս	25.02.2019թ	ժամկետով		25.02.2019թ
23	«ՇՈՂԱԳԱ» ՍՊԸ	Ձորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազի հանքավայրի 2-րդ տեղամաս	ՇԱԹ-29/600 03.05.2019թ.	03.05.2045թ.	Պ-600 03.05.2019թ.	Լ-600 03.05.2019թ.
24	<ՆԱԻՐԻ> ՍՊԸ	Լիճքի ածխաթթվային հանքային ջրի հանքավայր, թիվ 5Ր և 6Ր հորատանցքեր: Ածխաթթու գազի կորզում:	ՇԱԹՎ-29/359 18.12.12թ	15.04.2069թ.	ՊՎ-359 18.12.12թ	
25	<ՎԻԳԵՆ> ՍՊԸ	Լիճքի ածխաթթվային հանքային ջրի հանքավայր, թիվ 8Ր հորատանցք: Ածխաթթու գազի կորզում:	ՇԱԹՎ-29/365 18.12.12թ	25.12.2020թ.	ՊՎ-365 18.12.12թ	
26	«ՎՀՀ» ՍՊԸ	Դարանակի քաղցրահամ ջրի հանքավայրի թիվ 1, 2, 3 աղբյուրներ: Քաղցրահամ ջուր:	ՇԱԹ-29/500 23.08.14թ.	23.08.2064թ.	Պ-500 01.09.14թ	
27	< ՏԵԽՆՈՄԱՆ > ՍՊԸ	Լիճքի ածխաթթվային հանքային ջրի հանքավայր թիվ 8Ր հորատանցք: Ածխաթթու գազի կորզում	ՇԱԹ-29/506 26.06.14թ	26.06.2064թ.	Պ-506 01.07.14թ	
28	«ՍԵՎԱՆ» ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ	Սևան ածխաթթվային հանքային ջրի հանքավայրի թիվ 3Ր հորատանցք: Արդյու նաբերական նպատակով /շշալցում	ՇԱԹ-29/507 25.09.14թ.	25.09.2064թ.	Պ-507 03.10.14թ	/

Բուսական աշխարհ

Դիտարկվող տարածաշրջանի ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1619 տեսակ: Ֆլորան ներկայացված է 28 ծառատեսակներով, 42 թփերի տեսակներով, 866 բազմամյա խոտաբույսերով և 209 միամյա ու երկամյա բուսատեսակներով:

Հանդիպում է Հայաստանի համար 23 էնդեմիկ բուսատեսակ, որոնցից 13-ը Սևանի ֆլորիստիկ շրջանի էնդեմիկներ են: Միայն ազգային պարկի տարածքում աճում են Հայաստանի 3 էնդեմիկ և Սևանա լճի ավազանի 5 էնդեմիկ տեսակներ: 17 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (պահպանական գոտում դրանք 48-ն են): Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի:

Հայտնի են նաև 267 տեսակի, ենթատեսակի և ձևերի մակրոմիցետներ (պարկի տարածքում՝ 121 տեսակ, պահպանական գոտում՝ 228 տեսակ), որոնցից 180-ը պատկանում են ագարիկալ սնկերին, 55-ը՝ աֆիլոֆորայիններին, իսկ 32-ը՝ գաստերոմիցետներին: Ընդ որում սնկերը հիմնականում հանդիպում են քայքայված բնափայտի, կոճղերի, գոմաղբի և ավազուտների վրա, այսինքն՝ պատկանում են քսիլոտրոֆ և պսամոտրոֆ էկոլոգիական խմբերին, իսկ պահպանական գոտու սնկերը ավելի բազմազան սուբստրատների վրա են զարգանում: Նշված մակրոսկոպիկ սնկերից շուրջ 100 տեսակը ուտելի են, որոնցից առավելապես տարածված են և վաճառվում են շուկաներում հետևյալները՝ ականջասունկ սովորական կամ կախասունկ (Pleurotus ostreatus), յուղասունկ հատիկավոր (Suillus granulatus), շեկլիկ (Lactarius deliciosus), աղվեսասունկ (Cantharellus cibarius), կոճղասունկ մարգագետնային (Marasmius oreades), շամպինիոն սովորական (Agaricus campestris), շամպինիոն դաշտային (Agaricus arvensis), գոմաղբասունկ սպիտակ, փրչոտ (Coprinus comatus), շարքասնկերից (Tricholomataceae)՝ կոճղասունկ աշնանային (Armillaria mellea), լեպիստա մանուշակագույն ոտիկով (Lepista personata), շարքասունկ հողամոխրագույն (Tricholoma terreum): Բացի այդ, հանդիպում են նաև 58 տեսակի մակրոսկոպիկ 14 սնկեր, որոնք ունեն բուժիչ հատկություններ: Դրանք են՝ ագարիկոմիցետներից 28 տեսակներ, աֆիլոֆորոմիցետներից 17 տեսակներ և գաստերոմիցետներից 8 տեսակներ: Բնակչությունը չի օգտագործում այդ սնկերը, քանի որ տեղեկացված չեն դրանց օգտագործման ձևերին և բուժիչ հատկություններին: 24 տեսակի սնկեր թունավոր են: Դրանցից են՝ խոզուկասունկ (Paxillus involutus), կեղծ կոճղասունկ (Hypholoma fasciculare), ճանճասպան հովազային (Amanita pantherina), շամպինիոն դեղնամաշկ (Agaricus xanthodermus), գոմաղբասունկ թեփուկավոր (Coprinus picaceus), սարդոստայնասնկեր (Cortinarius), թելիկասնկեր (Inocybe), շարքասնկեր (Tricholoma) ցեղերի որոշ տեսակներ և այլն: Տեղացի բնակիչները այդ տեսակները կոչում են գարշասնկեր (պոգանկա), խուսափում են հավաքել և թունավորման դեպքերը հազվադեպ են: Սևանա լիճը շրջապատող լեռների և դրանց լանջերի տարբեր դիրքադրությունների, հողերի տիպերի, ռելիեֆային առանձնահատկությունների և այլ հանգամանքների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ, լավ է արտահայտված նաև ուղղահայաց գոտիականությունը:

Գեղամա և Վարդենիսի լեռների լանջերին ներկայացված են լեռնային տափաստանային համակեցությունները (ծովի մակարդակից 1900-2200 մ), որոնցում գերիշխում են շյուղախոտ վալեսյան (Festuca valesiaca), բարակոտնուկ սանրաձև (Koeleria cristata), փետրախոտ տխուր (Stipa tirsa) և այլ հացազգիները: Դրանցում զգալի են տրագականտային աստրագալների և ուրցի բազմաթիվ տեսակների մասնակցությունը: Բարձրության հետ տափաստանները փոխարինվում են լեռնային մարգագետնատափաստաններով, որտեղ համակեցություններում գերիշխում են

շյուղախոտ վալեսյան (Festuca valesiaca), շյուղախոտ ոչխարային (Festuca ovina), բոշխ ցածր (Carex humilis), դաշտավլուկ մարգագետնային (Poa pratensis) և այլ տեսակները:

Ծովի մակարդակից 2300 մ-ից բարձր բուսականության բնույթն աստիճանաբար փոխվում է դեպի մերձալպյան մարգագետինները, որոնց առավել տիպիկ ներկայացուցիչներից են բարակոտնուկ սանրաձև (Koeleria cristata), դաշտավլուկ ալպյան (Poa alpina), գարի մանուշակագույն (Hordeum violaceum), բրոմոպսիս խայտաբղետ (Bromopsis variegata), քոսքոսիկ կովկասյան (Scabiosa caucasica), ոզնախոտ կծկավոր (Dactylis glomerata), զանգակ խմբված (Campanula glomerata), թթվիճ խոշորածաղիկ (Betonica macrantha), երեքնուկի (Trifolium) տարբեր տեսակներ և այլն: 2700-3200 մ բարձրությունները զբաղեցնում են ալպյան ցածրախոտ մարգագետինները և ալպյան գորգերը, ուր հաճախ հանդիպում են զանգակ եռատամ (Campanula tridentata), խատուտիկ Ստևենի (Taraxacum stevenii), բերենիկե բոգային (Veronica gentianoides), շյուղախոտ ոչխարային (Festuca ovina), բոշխ տխուր (Carex tristis) և մի շարք այլ տեսակներ:

Լեռնային լանջերի որոշ ձորերում հանդիպում են թփուտներ՝ կազմված հիմնականում մասրենու (Rosa spinosissima, R.canina) և ասպիրակի (Spiraea crenata) տեսակներից: Թփուտները լավ են արտահայտված լճի հյուսիս-արևելյան ափին, Սևանի և Արեգունու լեռնաշղթաների լանջերին և Արտանիշ թերակղզում: Այդպիսիք են՝ արոսենու (արոսենի Կուզնեցովի (Sorbus kuznetsovii), արոսենի, ծտախնձոր (S.aucuparia), արոսենի Հայաստանի (S.hajastana), արոսենի հունական, ասպաբ (S.graeca)), մասրենու (Rosa spinosissima, R.canina), ասպիրակի (Spiraea crenata), 15 ալոճենու (Crataegus orientalis), ուռենու (Salix caprea) և մի շարք այլ թփատեսակների համակեցությունները: Արեգունու լեռնաշղթայի լանջերին, ինչպես նաև լճի հյուսիսային մասում (Սևանի լեռնաշղթա) ստորին գոտին կազմում են տրագականտային աստրագալների թփուտները՝ գազ ոսկեգույն (Astragalus aureus), գազ մանրագլուխ (A.microcephalus), գազ գյունեյի (A.gjunaicus) և այլն:

Ավելի բարձր, 2000-2100 մ-ից վերև, մարգագետնատափաստանային բուսականության հետ մեկտեղ տարածված են արևելյան կաղնու (Quercus macranthera) մնացորդային կաղնուտները և չորասեր թփերի ու տափաստանային խոտաբույսերի մասնակցությամբ գիհու նոսրանտառները: Վերջիններս բավականին ընդարձակ տարածքներ են զբաղեցնում Ջիլ, Դարանակ, Բաբաջան և Արտանիշ գյուղերի մոտ: Գերակայող տեսակներն են գիհի բազմապտուղը (Juniperus polycarpos) և գիհի երկարավունը (J.oblonga), որոնք կազմում են ինչպես մոնոդոմինանտ այնպես էլ խառը ասոցիացիաներ: Առանձին տարածքներում գիհիներին միանում են այլ թփատեսակներ՝ ասպիրակի (Spirea crenata, S.hypericifolia), արոսենի Հայաստանի (Sorbus hajastana), արոսենի հունական, ասպաբ (S.graeca) և այլն: Գիհի սաբինան (J. Sabina) և գիհի փռվողը (J. depressa) որոշ տարածություններ են գրավում նաև մերձալպյան գոտում, երբեմն նույնիսկ տափաստանային գոտում: Սևանա լճի ավազանում բավականին տարածված են նաև բուսականության այնպիսի էքստրազոնալ տիպեր, ինչպիսիք են փլուզուտային, քարացրոնային և ժայռային բուսականությունը: Դրանք առանձին հատվածներով հանդիպում են բոլոր բարձունքային գոտիներում:

Ինչ վերաբերում է ջրային բուսականությանը, ապա անմիջապես Սևանա լճում, ըստ ջրի խորության և պարզության, այն կազմում է երկու արտահայտված գոտի՝ մակրոֆիտների (հիմնականում ծաղկավոր բույսեր) և խարային ջրիմուռների ու ջրային մամուռների: Ծովինար, Նորատուս, Զոլաքար, Մարտունի, Լիճք գյուղերի մերձափնյա

տարածքներում կան ոչ մեծ ճահիճներ, ուր աճում են բոշխ կարճամազ (Carex hirta), դուն երկար (Cyperus longus), դուն թուխ (C.fuscus), ճլախոտ թաբերնեմոնթանի (Schoenoplectus tabernaemontani) և շատ այլ տեսակներ: «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու ֆլորայի Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են 48 տեսակներ, որոնցից հազվագյուտ են և արժանի են ուշադրության միայն 13-ը ընդ որում՝ 6-ը համարվում են անհետացած տեսակներ: «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպող 23 էնդեմիկ տեսակներից առավել ուշադրության են արժանի 18-ը: «Սևան» ազգային պարկի տարածքում հայտնաբերված մակրոմիցետներից 10-ը հազվագյուտ են և ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքի թեկնածու սնկերի ցանկում:

Կենդանական աշխարհը

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվարկվում են Փափկամարմինների (Mollusca) 43 տեսակներ, որոնք պատկանում են խխունջներին և լորձնամոլյուսկներին, և Հոդվածոտանիների 639 տեսակներ, որոնք պատկանում են միջատներին (անողնաշարավոր կենդանիների): Դրանցից 6-ը Հայաստանի էնդեմներ են: Կապտաթիթեռը (Maculinea nausithous Bergs), որը հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում: Երկարաչանչ խեցգետինը (Pontastacus leptodactilus) Սևանա լճում հայտնաբերվել է 70-ական թվականների վերջին՝ պատահական ներմուծման շնորհիվ: Լիճ լցվող գետերում խեցգետին չի հանդիպել, սակայն խեցգետինը բավականին շատ է Սևանից սկիզբ առնող Հրազդան գետում: Երկարաչանչ խեցգետինը, ի տարբերություն այլ տեսակների, չի ձմեռում:

Սևանա լճի ձկները ներկայացված են սաղմոնազգի-Salmonidae, սիգազգի Coregonidae և ծածանազգի-Cyprinidae ընտանիքներով: Սաղմոնազգիներին են պատկանում Սևանի իշխանը (Sevan Trout-Salmo ischchan Kessler 1877) իր 4 էկոլոգիական ենթատեսակներով՝ Ամառային բախտակ (S. ischchan aestivalis), Ձմեռային բախտակ (S. ischchan ischchan), Գեղարքունի (S. ischchan gegarkuni), Բոջակ (S. ischchan danilewskii): Սիգազգիների ընտանիքի ներկայացուցիչը 1920-30-ական թվականներին լճում կլիմայավարժեցված սիգն է (Whitefish-Coregonus lavaretus): Ծածանազգի ձկնատեսակներին են պատկանում լճի երկու էնդեմիկները՝ Սևանի կողակը (Khrami carp-Varicorhinus capoeta sevangi) և Սևանի բեղլուն (Sevan 17 barble-Barbus goktschaicus): 1980-ական թվականների սկզբից լճում սկսել է հանդիպել նաև արծաթափայլ լճածածանը (Crucian carp-Carassius auratus gibelio), որը պատահաբար լիճ է ներթափանցել Արարատյան դաշտի ջրային համակարգերից: 1987 թվականից Սևանա լճի երկու էնդեմիկ տեսակ՝ Սևանի իշխանը և Սևանի բեղլուն, ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Հանդիպում են երկկենցաղների հետևյալ 4 տեսակները, որոնք պատկանում են Ցատկողներ (Salientia) կարգին՝ լճագորտ (Rana ridibunda), փոքրասիական գորտ (Rana macrocnemis), կանաչ դոդոշ (Bufo viridis), Շելկովնիկովի ծառագորտ (H.a.shelkovnikovi):

Հանդիպում են սողունների 16 տեսակներ, որոնցից 11 տեսակներ պատկանում են մողեսներ (Lacertilia) կարգին, իսկ 5 տեսակ՝ օձեր (Serpentes) կարգին: Դրանցից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են խայտաբղետ մողեսիկը (E.a.transcaucasica) և փոքրասիական մողեսը (Lacerta parva):

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են թռչունների 267 տեսակներ, որոնք պատկանում են հետևյալ կարգաբանական խմբերին՝ սուզակներ (Podicipediformes) - 7 տեսակ, ձկնկուլ (Pelecaniformes) - 4 տեսակ, արագիլ, տառեղ, ջրցուլ (Ciconiiformes) -11 տեսակ, ֆլամինգո (Phoenicopteriformes) - 1 տեսակ, գիշատիչներ (Falconiformes) - 30 տեսակ, սագեր, բադեր, կարապներ (Anseriformes) - 28 տեսակ, հավազգիներ (Galliformes) - 3 տեսակ, կռունկ, փարփար (Gruiformes) - 9 տեսակ, որոր, կտցար, քարադր (Charadriiformes) - 49 տեսակ, աղավնազգիներ (Columbiformes) - 4 տեսակ, կկուներ (Cuculiformes) - 1 տեսակ, բու (Strigiformes) - 3 տեսակ, այծկիթ (Caprimulgiformes) - 1 տեսակ, մանգաղաթևեր, ծիծեռնակներ (Apodiformes) - 5 տեսակ, մեղվակեր, հոպոպ, ալկիոն (Coraciiformes) - 5 տեսակ, փայտփոր, վիզգցուկ (Piciformes) - 4 տեսակ և ճնճղուկանմաններ (Passeriformes) - 102 տեսակ: Թռչնատեսակներից 39-ը ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Դրանցից մեկը՝ Հայկական որորը (Laurus armenicus) էնդեմիկ տեսակ է: Ազգային պարկի տարածքում կան 26 տնտեսապես կարևոր նշանակություն ունեցող թռչնատեսակներ: Դրանցից կոնչան բադը, կարմրագլուխ սուզաբադը, քարակաքավը, լորը, սովորական տատրակը, թխակապույտ աղավնին, անտառային աղավնին և այլն հետաքրքրություն են ներկայացնում որսի տեսանկյունից:

Դիտարկվող տարածաշրջանում հանդիպում են կաթնասունների 44 տեսակներ, որոնք պատկանում են հետևյալ կարգերին՝ միջատակերներ (Insectivora) - 7 տեսակ, կրծողներ (Rodentia) - 15 տեսակ, նապաստակներ (Logomorpha) - 1 տեսակ, չղջիկներ (Chiroptera) - 7 տեսակ, գիշատիչներ (Carnivora) - 11 տեսակ և սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (Artiodactyla) - 3 տեսակ:

Վերը նշված կենդանիների կարգաբանական խմբերից շատ տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, այդ թվում, կաթնասուններից՝ ջրասամույրը, գորշ արջը, անտառային կատուն, բեզոարյան այծը, սողուններից՝ խայտաբղետ մողեսիկը (E.a.transcaucasia) և փոքրասիական մողեսը (Lacerta parva), իսկ թռչուններից՝ ձկնկուլը, սովորական ֆլամինգոն, Հայկական որորը (Laurus armenicus), որը համարվում է էնդեմիկ տեսակ: Սևանա լճի երկու էնդեմիկ ձկնատեսակներ՝ Սևանի իշխանը և Սևանի բեղլուն նույնպես ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Դիտարկվողտարածքին բնորոշ են և ամենուրեք հանդիպում են՝ խայտակզաքիսը, ջրասամույրը (գետերի և գետակների հուների երկայնքով): Չնայած դրան, պարկն ունի իրեն բնորոշ կենդանական կազմը, որոնք հաճախ հանդիպում են մեծ պոպուլյացիաներով, ինչպես օրինակ՝ մեծ քնամուկը (Glis glis), պարսկական սկյուռը (Sciurus persicus), անտառային մուկը (Apodemus sylvaticus), այծյամը (Capreolus capreolus), լայնականջ ոզնին (Tadarida teniotis) և այլն:

1.3.5. Համայնքների դիրքը մարզի տարաբնակեցման համակարգում

Մարտունի քաղաքը գտնվում է Գեղարքունիքի մարզի հարավ-արևմտյան մասում, Մարտունի գետի գետահովիտներում, Սևանա լճի վրա անմիջական ազդեցության գոտում:

Մարզի ամբողջ տարածքում ՙՍևանա լճի մասին՚ Հայաստանի Հանրապետության օրենքով (ընդունված 2001թ. մայիսի 18-ին) առանձնացվել են կենտրոնական (Ազգային պարկի տարածքը), անմիջական ազդեցության (Սևանա լճի ջրհավաք ավազանը մինչև Սևանա լիճը) գոտիները, ինչպես նաև մարզի սահմանից դուրս գտնվող ոչ անմիջական ազդեցության գոտին (Արփա և Որոտան գետերի վերին հոսանքների ջրհավաք ավազանը):

Մարտունու տարածաշրջանի քաղաքաշինական, տնտեսական զարգացման ուղղությունները լուծված են ամբողջ մարզի (հատկապես Մարտունու տարածաշրջանի) ՙՀայնախագիծ՚ ՓԲԸ-ում 2003թ. մշակված ՙՍևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման նախագծում մշակված տարածքային կազմակերպման հիմնախնդիրների հետ փոխկապակցված:

Քանի որ էկոլոգիական իրավիճակի սրությունը հիմնականում պայմանավորված է բնության տարրերի և ուրբանիզացված միջավայրի փոխկապակցվածությամբ (որպես տարածքային կազմակերպման սկզբունքային միջոցառում) Սևանա լճի անմիջական ազդեցության գոտու տարաբնակեցման համար պիտանի տարածքում տարանջատված են տարբեր քաղաքաշինական-տնտեսական յուրացվածություն ունեցող գոտիներ[ա] քաղաքաշինական զարգացման ռեժիմների սահմանումով[ա] էկոլոգիական հավասարակշռության պահպանման պայմանով:

Այսպիսով, Գեղարքունիքի մարզի տարածքը բաժանվում է հետևյալ ուրբաէկոլոգիական գոտիների.

• Կենտրոնական գոտի, ընդգրկում է Սևանա լճի ափամերձ շերտը, բարենպաստ է ռեկրեացիոն նպատակներով օգտագործելու: Գոտին բաժանված է 10 տեղամասերի[ա] ըստ ռեկրեացիոն ուղղվածության: Ընդ որում Մարտունու տարածաշրջանում առանձնացված է հարավ-արևելյան, հարավային ափամերձ տարածաշրջանը (Երանոս-Կարճաղբյուր հատվածը):

Տեղամասի ռեկրեացիոն կապիտալ շինարարությունն արգելվում է մինչև լճի հեռանկարային բարձրացման նիշը (1903.5 մ և ալիքի ազդեցության գոտին[ա] 1905 մ):

• Տարաբնակեցման համար պիտանի տարածքն ընդգրկում է կենտրոնական գոտուց մինչև տարաբնակեցման համար անբարենպաստ[ա] սկսած 2100 մետրից մինչև 2350 մ (2100 մետրից բարձր տարածքը բնորոշ է Սևանա լճի ջրհավաք ավազանի Վարդենիսի լեռնաշղթայի լճահայաց լանջերին, որոնք աչքի են ընկնում հարթեցված ռելիեֆով[ա] սարահարթերով և բնակավայրերը գետահովիտներով տեղաբաշխվել են 2100-2350 մ տարածքներում): Տարաբնակեցման համար պիտանի տարածքն ըստ տնտեսական-քաղաքաշինական յուրացվածության աստիճանի բաժանվում է.

• Ինտենսիվ յուրացված գոտին ընդգրկում է Սևանա լիճը երիզող ցածր լեռնալանջերը մինչև 2100 մ նիշը: Գոտու բնակչության խտությունները (500-860 մարդ/կմ^2) գերազանցում են էկոլոգիական շեմային չափանիշները մի քանի անգամ: Այս գոտում է գտնվում նաև Մարտունի քաղաքը և գյուղական խոշոր բնակավայրերը: Ինտենսիվ յուրացված գոտու համար առաջարկվում է սահմանել զարգացման սահմանափակման ռեժիմ, որը հիմնականում բխում է էկոլոգիական հավասարակշռության խախտման վտանգից (համաէկոլոգիական միջոցառում) և նկատառում է.

- Քաղաքների, գյուղական բնակավայրերի տարածքային աճի սահմանափակում, որը պետք է ընթանա քաղաքապատկան տարածքների ինտենսիֆիկացումով (թեք լանջերի, անհարմար հողերի օգտագործում), հատակագծային կառուցվածքի ռացիոնալիզացումով, քաղաքների շուրջը կանաչ համակարգի ձևավորումով, առաջավոր տեխնոլոգիաներով (փակ ցիկլերով) արտադրության, գիտատեխնիկական օբյեկտների տեղադրումով, շրջակա միջավայրն աղտոտող օբյեկտների տեղադրման արգելումով, գյուղական բնակավայրերի կառուցապատման կանոնակարգումով, գյուղատնտեսական հողերի կառուցապատման արգելումով:

- Թույլ յուրացված գոտին ընդգրկում է 2100 մ-ից մինչև 2350 մ և հարում է ինտենսիվ յուրացված գոտուն: Բնակչության խտությունը չի գերազանցում 50 մարդ/կմ² վրա: Թույլ յուրացված գոտին օժտված է էկոլոգիական պոտենցիալով[ա] քաղաքաշինության նպատակների ռեզերվային տարածքների առկայություն, ռեսուրսային չօգտագործված պոտենցիալ (ռեկրեացիոն[ա] հիմնականում ձմեռային հանգիստ և գյուղատնտեսական): Այս գոտում են գտնվում սահմանամերձ բոլոր բնակավայրերը:

Քաղաքաշինորեն-տնտեսապես թույլ յուրացված գոտում նախագծով առաջարկվում է սահմանել առաջնահերթ զարգացման ռեժիմ:

Տարաբնակեցման համար անբարենպաստ գոտին ընդգրկում է 2100-2350 մ բացարձակ բարձրություններից մինչև Սևանա լիճը շրջափակող լեռնաշղթաների ջրբաժանները (ամենաբարձր կետը 3598 մ): Գոտու տարածքն օգտագործվում է որպես ամառային արոտներ:

Այս գոտին ունի բարենպաստ պայմաններ ձմեռային սպորտի տարբեր ձևերի կազմակերպման համար: Ընդ որում մշակված է լեռնադահուկային սպորտուղի (Արագածի լանջեր-Ծաղկաձոր-Հրազդան-Գեղամա լեռնաշղթայի արևելյան Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային լանջեր), որն ընդգրկում է նաև Մարտունու տարածաշրջանը: Ձմեռային ռեկրեացիայի կազմակերպմանը կնպաստի Մարտունի-Սելիմ-Եղեգնաձոր և Գավառ-Սևաբերդ (Կոտայքի մարզ) ճանապարհների բարեկարգումը: Գոտու քաղաքաշինական ռեժիմն ընդգրկում է.

- Արոտների օգտագործման նորմերի մշակում և կիրառում:
- Ձմեռային ռեկրեացիայի կազմակերպման պայմանների ստեղծում[ա] ճանապարհային ցանցի բարելավումով, արշավախմբային, հերթափոխային բնակավայրերի ձևավորումով:
- Միջհամայնքային միավորումների ստեղծում[ա] թույլ յուրացված գոտու բնակավայրերի խմբով[ա] ռեկրեացիոն, գյուղատնտեսական ռեսուրսների համատեղ օգտագործմամբ:

Մարզը հարուստ է ջրային ռեսուրսներով (մակերևութային և խորքային քաղցրահամ ջրերով) և հանքային ջրերով: Ամբողջ մարզում քաղցրահամ ջրերի հանքավայրերի պաշարները (աղբյուրներ և արտեզյան ավազաններ) կազմում են 692.29 հազ.մ³/օր, իսկ Մարտունու տարածաշրջանինը[ա] 170.8 հազ. մ³/օր:

Մարտունու տարածաշրջանի դեմոգրաֆիական տարողունակությունն ըստ ստորերկրյա ջրային պաշարների կազմում է 245.3 հազ. մարդ (մարզինը[ա] 969.13 հազ.մարդ):

Հանքային ջրերի հաշված պաշարները կազմում են 6.747 հազ. մ³/օր, իսկ Մարտունու տարածաշրջանինը[ա] 3.403 հազ. մ³/օր:

Տարածաշրջանն ապահովված է տրանսպորտային ցանցով: Տարածքով անցնում են Սևան-Վարդենիս-Արցախ, Սևան-Մարտունի-Եղեգնաձոր միջպետական ճանապարհները:

Սահմանափակող գործոն է Սևան-Մարտունի-Վարդենիս և Մարտունի-Եղեգնաձոր ավտոմայրուղիների սանիտարական պահպանման գոտու քաղաքի տարածքում գտնվելը: Անհրաժեշտ է մշակել միջոցառումներ ավտոմայրուղիների աղմուկի և աղտոտվածության մակարդակը փոքրացնելու համար:

Մարտունի քաղաքն ընկած է Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ և Մ-11 Մարտունի-Վարդենիս-Ադրբեջանի (Ղարաբաղի) սահման միջպետական նշանակության ճանապարհների խաչմերուկում: Արևելք-արևմուտքի ճանապարհը II կարգի է, իսկ Մարտունի-Սելիմի լեռնանցք-Գետափ ճանապարհը[ա] IV և III: Մարտունի-Գետափ 60 կմ երկարությամբ ճանապարհի Մարտունի-Աղնջաձոր 40 կմ-անոց հատվածը կառուցվեց 2003թ., իսկ մնացած 20 կմ-անոց հատվածը (Աղնջաձոր-Գետափ) վերակառուցվեց III կարգի պարամետրերով:

Խորհրդային իշխանության վերջին տարիներին Մարտունին և շրջակայքի գյուղերը խիստ զարգացան և փաստորեն Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն գյուղերն՝ արևմուտքից, Վաղաշենն՝ արևելքից և Գեղահովիտը՝ հարավից, միաձուլվեցին քաղաքին:

Առողջարանային ռեսուրսներ

Կլիմայաբուժության պայմաններ

- Կլիմայաբուժության պայմանները տրված են Կուրորտաբանության և ֆիզիկական բուժման՝ ԳՀԻ մշակումների համաձայն, ըստ որի կլիմայաբուժության օպտիմալ պայմանները որոշված են քամու, օդի ջերմաստիճանի և խոնավության համատեղ ազդեցությամբ մարդու օրգանիզմի վրա (էկվիվալենտ-էֆեկտիվ ջերմաստիճան՝ ԷԷՋ և ռադիացիոն էկվիվալենտ-էֆեկտիվ ջերմաստիճան՝ ՌԷԷՋ, որտեղ հաշվի է առնված նաև ռադիացիոն ռեժիմը, ԷՋ-էֆեկտիվ ջերմաստիճանն առանց քամու): Կլիմայաբուժության պայմանները ստորաբաժանվում են.

ԷԷՋ 8^0 C– ցուրտ
ԷԷՋ-ն 9-16^0 C- ինդիֆիրենտ (չեզոք)
ԷԷՋ-ն 17-22^0 C-կոմֆորտային
ԷԷՋ-ն >23^0 C գերտաքացում

Մարտունի քաղաքը և Մարտունու տարածաշրջանի ափամերձ շերտն ունի բարենպաստ պայմաններ կլիմայաբուժության համար: Համեմատած Սևանա լճի մյուս ափերի հետ (արևմտյան, արևելյան, հյուսիսային) Մարտունու ափն աչքի է ընկնում արեգակնային էներգիայի մեծ քանակով (նման է ՈՒզբեկստանի Թերմեզ և Եգիպտոսի Ալեքսանդրիա առողջարաններին):

Արեգակնային ճառագայթման տևողությունը (ժամ)

Բնակավայրի անվանումը	Ըստ ամիսների												Տարվա գումարային
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Մարտունի	172	174	189	204	255	314	325	300	274	230	192	15	2779

Մարտունու տարածաշրջանի ափը կլիմայաբուժության բոլոր պարամետրերով գերազանցում է Սևանա լճի մյուս ափերին: Ապրիլին և մայիսի սկզբին կլիմայաբուժություն կազմակերպելը սահմանափակ է, օդային վաննաների ընդունումը դժվար է, քանի որ դեռ գերակշռում են ցուրտ պայմանները (ԷԷՋ փոքր է 8^0 C): Կարելի է զբաղվել սպորտային խաղերով, բուժիչ սպորտով: Եթե այդ ամիսներին ինժեներական, բիոտեխնիկական միջոցառումներով վերացվի քամու ազդեցությունը, ապա արեգակնային էներգիան բավարար կլինի նույնիսկ մայիս ամսին 15 օր զբաղվելու կլիմայաբուժությամբ:

Կլիմայաբուժության կոմֆորտային պայմանները (ԷԷՋ-17-22^0) ստեղծվում են հունիսին, աճելով հուլիս-օգոստոս ամիսներին, ինչպես նաև սեպտեմբերի սկզբին:

Օդային վաննաների ընդունման օդերևութաբանական պայմանները

	ԷԷՋ	ԷՋ

«Գեղարքունիք-3» *միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

Ամիսները	<8⁰	9-16⁰	17-22⁰	>23⁰	<8⁰	9-16⁰	17-22⁰	>23⁰
Մայիս	72	28			33	55	12	
Հունիս	60	30	10			69	28	3
Հուլիս	12	60	28			30	55	15
Օգոստոս	10	65	25			35	55	10
Սեպտեմբեր	56	44				70	28	2
Հոկտեմբեր	53	37				85	15	

ՈՒլտրամանուշակագույն ճառագայթումը շատ ուժեղ է: Առաջարկվում է արևաբուժությունն ընդունել հատուկ կառուցվածքների (պտտվող վաննաների) օգնությամբ, ոչ թե ժ. 13-ին (ինչպես մյուս ափերում), այլ կեսօրից հետո, երբ ծովից փչող բրիզային քամին իջեցնում է ջերմաստիճանը և փոքրացնում ռադիացիոն ռեժիմը: Բրիզային քամիները (ծովից փչող) ափամերձ շերտի մթնոլորտային օդը հարստացնում են միկրոտարրերով՝ աերոզոլեր (45 մգ/մ³), քլոր (41 մգ/մ³), O_2 (566 մգ/մ³), եթերային յուղերով, ածխաթթվով: Եթերային յուղերի ավելացմանը նպաստում են նաև անտառները:

Մայիս ամսից Մարտունիում կարելի է զբաղվել արևաբուժությամբ: Արդեն մայիս ամսին 14 օր դիտվում են արևաբուժության կոմֆորտային պայմաններ (17-22⁰): Թթվածնի կշռային քանակն օդում տատանվում է 222 գ/մ³ (ամառ) մինչև 242 գ/մ³ (ձմեռ): Եղանակի կոնտրաստային փոփոխություններն աննշան են:

Արևային վաննաների ընդունման օդերևութաբանական պայմանները

Ամիսները	ՌԷԷՋ				ՌԷՋ			
	<8⁰	9-16⁰	17-22⁰	>23⁰	<8⁰	9-16⁰	17-22⁰	>23⁰
Մայիս	35	37	28		10	40	50	
Հունիս	22	32	43	3		18	60	22
Հուլիս		12	64	24		8	63	29
Օգոստոս		34	49	17		28	61	11
Սեպտեմբեր	10	48	42		5	44	51	
Հոկտեմբեր	56	32	12		22	45	33	

2 %-1 օր

Այսպիսով, բնական պայմաններում օդաբուժության պայմանները սկսվում են մայիսի վերջից և ավարտվում սեպտեմբերին, իսկ արևաբուժության պայմանները՝ մայիսի կեսերից մինչև հոկտեմբերի սկիզբը: Քամու բացասական ազդեցությունը վերացնելուց հետո (ԷՋ-էկվիվալենտ ջերմաստիճան առանց քամու), կլիմայաբուժության ժամանակահատվածը կերկարի (մայիսից-հոկտեմբեր):

Մարտունիում և ափամերձ տարածքում ձմռանը նույնպես կարելի է զբաղվել կլիմայաբուժությամբ: Ձմեռային կլիմայաբուժության մեջ կարելի է ընդգրկել նաև լճի

տաքացրած ջրով պրոցեդուրաները: Ակտիվ կարելի է կազմակերպել բուժիչ-սպորտային և դահուկասպորտային միջոցառումներ: Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության ինստիտուտում հաշվարկված է դահուկա-սահնակային սպորտով զբաղվելու ժամանակաշրջանը, սկիզբը և ավարտը:

Դահուկա-սահնակային սպորտով զբաղվելու սկիզբը, ավարտը յուրաքանչյուր 100 մ բարձրանալուց ավելանում է 5-6 օրով, ավարտը՝ 6 օրով երկարում է: Միայն ածամերձ շերտում դահուկային սեզոնը տևում է 3-4 ամիս:

Մարտունու տարածաշրջանի բարձրադիր մասերն ավելի բարենպաստ են ձմեռային սպորտով զբաղվելու համար:

Ձյան ծածկույթի առաջացման և վերանալու ժամկետները

Մարտունի	Ձյան ծածկույթով օրերի թիվը			Մարտունի			Ձյան ծածկույթով օրերի թիվը		
	միջինը	առավելա-գույնը	նվազա-գույնը	միջին	վաղ	ուշ	միջին	վաղ	ուշ
	103	163	40	10.XI	2.X	15.XII	22.IV	13.III	5.VI

Կայուն ձյան ծածկույթի առաջացման և վերանալու ժամկետները

Մարտունի	Կայուն ձյան ծածկույթի առաջացումը			Կայուն ձյան շերտի վերանալը		
	միջին	վաղ	ուշ	միջին	վաղ	ուշ
	19.XII	8.XI	22.II	16.III	5.II	24.IV

Մարտունու տարածաշրջանում դահուկային սեզոնի տևողությունը, սկիզբը, վերջը

բացարձակ բարձրությունը	սկիզբը			վերջը			տևողությունը (օր)		
	միջինը	հարավային լանջեր	հյուսիսային լանջեր	միջինը	հարավային լանջեր	հյուսիսային լանջեր	միջինը	հարավային լանջեր	հյուսիսային լանջեր
1900	17.XII	2.I	2.XII	27.III	11.III	13.IV	100	68	132
2000	11.XII	25.XII	27.XII	1.IV	16.III	17.IV	110	81	141
2100	7.XII	20.III	24.XI	7.IV	23.III	22.IV	121	93	149
2200	1.XII	10.XII	20.XI	13.IV	30.IV	26.IV	133	110	157
2300	24.XI	1.XII	17.XI	21.IV	9.IV	2.V	148	129	166
2500	15.XI	20.XI	10.XI	3.V	24.IV	11.V	169	155	182

3000	28.X	1.XI	25.X	5.VI	30.V	10.VI	220	210	228

Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին 2000-3000 մ բարձրության վրա ձորակներում կուտակված ձյունը պահպանվում է մինչև ամռան սկիզբը: Այդ տեղամասերը կարելի է օգտագործել բուժիչ սպորտի միջոցառումներ կազմակերպելու համար:

- *Բալնեոլոգիական բուժման պայմաններ*

Մարտունի քաղաքում և ափամերձ շերտում կարելի է կազմակերպել նաև բալնեոլոգիական բուժում Լիճքի հանքային ջրերի բազայի վրա: Այդ ջրերը 4.3-7.3 գ/լ ածխաթթվային-քլորիդ հիդրոկարբոնատային, կալցիում-նատրիումային ջրեր են, CO_2-1.5-2.5 գ/լ ջերմաստիճանը՝ 25.4 ^{0}C: Ջրի պաշարները կազմում են 3.403 հազ.մ^3/օր: Միայն ջրի պաշարները հնարավորություն են տալիս կազմակերպելու 6800-9000 բուժման տեղ (տեղերի քանակն ըստ ֆունկցիոնալ տարողունակության կճշտվի "ռեկրեացիոն ենթագոտու կազմակերպում" բաժնում):

Հանքային ջրերը նման են Եսենտուկիի, Հանքավանի ջրերին: Երաշխավորված է օգտագործել աղեստամոքսային տրակտի բուժման, ինչպես նաև որպես խմելու-բուժիչ ջրեր:

Այսպիսով, դիտարկվող տարածաշրջանը լանդշաֆտային բարձր լեռնային բարենպաստ բուժական, կլիմայական պայմաններով, օդաբուժության, արևաբուժության օդերևութաբանական օպտիմալ ցուցանիշներով, մթնոլորտային օդի թթվածնային բարձր ռեժիմով (ամբողջ տարին) և միկրոտարրերի հագեցվածությամբ, հանքային բուժիչ ջրերի և տորֆերի առկայությամբ՝ համատեղված հարուստ պատմամշակութային ժառանգության օգտագործման հետ կարող է վերաճել հազվագյուտ բազմաֆունկցիոնալ առողջարանի (շուրջտարյա ամառային, ձմեռային բուժում, հանգիստ, տուրիզմի տարբեր ձևեր, ձմեռային սպորտի ձևեր):

Զբոսաշրջություն

Մարզի զբոսաշրջությունը հիմնականում կենտրոնացած է Սևանա լճի շրջակայքում և, որպես կանոն, կրում է խիստ արտահայտված սեզոնային բնույթ:

Բնակլիմայական պայմանները, կենդանական ու բուսական աշխարհը, Սևանա լճի անկրկնելի ֆլորան և տարածքի կենտրոնական դիրքը այս հատվածը դարձնում են ամառվա ամենաշատ հաճախումներ ունեցող վայրերից մեկը:

Շնորհիվ աշխարհագրական դիրքի՝ տարածաշրջանը մշտական տրանսպորտային կապի մեջ է ՀՀ գրեթե բոլոր մարզերի հետ: Այն գտնում է մի շարք ռազմավարարական նշանակություն ունեցող մայրուղիների վրա, որը հեշտացնում է տեղափոխումը: Հասանելի է ինչպես միջհամայնքային հանրային տրանսպորտը, այնպես էլ տաքսի ծառայությունները: Գործում է Երևան – Սևան մարդատար երկաթուղին:

Զբոսաշրջությունը հանդիսանում է մարզի բնակչության զբաղվածության հիմնական

աղբյուրներից մեկը: Զբոսաշրջությունն ունի մեծ ներուժ և համապատասխան ենթակառուցվածքներ զբոսաշրջության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցման և սպասարկման համար, մասնավորապես՝ առողջական, էկո, էքստրիմ և ջրային զբոսաշրջության ենթաոլորտներում: Տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման նախադրյալներից մեկը առկա բարենպաստ և մեղմ ամառային կլիման է: Մինչ ամառվա ընթացքում Արարատյան դաշտը և Հայաստանի Հանրապետության հարավային շրջանները տառապում են չափազանց բարձր ջերմաստիճանի հետևանքով (մինչև 40° C), Սևանում օդի ջերմաստիճանը տատանվում է 23-ից 28 աստիճանի միջակայքում (երեկոյան ժամերին ջերմաստիճանը 22-25 ^{0} C է):

Սևան ազգային պարկի պաշտպանական գոտում գրանցված է 1489 պատմական և մշակութային հուշարձան: Այսօր այս հնագիտական և պատմական հուշարձանները մեծապես նպաստում են շրջանում մշակութային, կրթական և գիտական (հնագիտական, երկրաբանական), էկոլոգիական, էթնոգրաֆիկ և այլ զբոսաշրջության տեսակների զարգացմանը:

Միևնույն ժամանակ, տարածաշրջանը հետաքրքիր է ոչ միայն իր պատմության և մշակութային վայրերով. այն Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության առավել զարգացած վայրերից մեկն է: Այստեղ են գտնվում բազմաթիվ հյուրանոցներ, տարաբնույթ հանգստի կենտրոններ: Տարածաշրջանը համարվում է ջրային սպորտի և զբոսաշրջության զարգացման լավագույն վայրերից մեկը:

Մարզի տարածքում գործում են 57 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ՝ հյուրանոցային համալիրներ, հյուրանոցային քոթեջներ, քարե և փայտե տնակներ, հյուրընկալության ընտանիքներ և այլն:

Զբոսաշրջությունն ինչպես կառավարության, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ճանաչված է որպես տարածաշրջանի տնտեսական զարգացման հիմնական առանցքային ոլորտ:

Սակայն տարածաշրջանի տնտեսական ներուժը բազմազան է: Արագ զարգացող զբոսաշրջությանը զուգահեռ առկա է զարգացած առևտրի ու ծառայությունների ոլորտ:

Առևտրի ոլորտը տարածաշրջանի տնտեսության երկրորդ խոշորագույն ոլորտն է: Աշխարհագրական կենտրոնական դիրքը և ճանաչված տուրիստական վայր լինելը մեծապես նպաստում են այս ոլորտի զարգացմանը: Առևտրի մեջ ներգրավված փոքր ընկերությունները տեղակայված են տարածաշրջանի բոլոր մասերում, ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում, ճանապարհային և ափամերձ գոտիներում:

Տարածաշրջանի մրցակցային առավելությունները զբոսաշրջության ոլորտում

«Գեղարքունիք-3» *միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

- Սևանա լիճ,
- «Սևան» ազգային պարկը և պարկի պահպանման տարածքում գտնվող 1 489 պատմական, մշակութային և բնական հուշարձանները (12 – 20 –րդ դարեր),
- բարենպաստ կլիմա, միջավայր,
- արևափայլի տևողությունը 23%-ով բարձր է Հայաստանի միջին ցուցանիշից (2700 ժամ/տարի),
- աշխարհագրական կենտրոնական դիրք, տրանսպորտային խաչմերուկ (Երևան – Սևան – Թբիլիսի, Թբիլիսի – Սևան – Իրան, Երևան – Սևան - Արցախի Հանրապետություն),
- զբոսաշրջության ենթակառուցվածքների առկայություն, զբոսաշրջության կազմակերպման մեծ փորձ,
- նորմածության մեծ հակվածություն տեղական ՓՄՁ-ների կողմից:

Զբոսաշրջության արժեշղթայի հիմնական օղակները

Ճանապարհներ, կոմունալ հնարավորություններ և այլն:

Տեղական և արտասահմանյան տուր օպերատորներ, գովազդ և այլն:

Հյուրանոցներ, հյուրատներ, վարձով տրվող բնակարաններ և գիշերակաց վրաններում:

Ռեստորաններ, սրճարաններ, թեյարաններ, սննդի խանութներ և այլն:

Հուշանվերներ, հագուստներ և այլն:

Այցելություններ, միջոցառումներ, սպորտ, խաղեր, ծովափնյա հանգիստ և այլն:

Էքսկուրսավարներ, առողջապահություն և անվտանգություն, բանկեր, տաքսի, մեքենաների վարձույթ և այլն:

Գնումներ և ժամանց

Այս երկու ոլորտները դեռևս թույլ են զարգացած՝ չնայած տուրիզմի զարգացման գործում դրանց հիմնաքարային նշանակությանը: Գնումներից հիմնականում հասանելի են սննդի խանութները, որոնք տեղակայված են ինչպես ափամերձ համայնքներում, այնպես էլ ճանապարհամերձ հատվածներում: Հիմնական տեսարժան վայրերի մոտակայքում գործում են փոքր տաղավարներ, որտեղից հնարավոր է գնել փոքր հուշանվերներ: Գնումների ոլորտը կանոնակարգված չէ: Թե՛ գնային, թե՛ որակական և տեսականու առումով հուշանվերների վաճառքը մրցունակ չէ և հիմնականում իրականացվում է ստվերային տարբերակով: Հուշանվերների և զբոսաշրջիկների պահանջներից բխող այլ ապրանքների վաճառքի ցանցի զարգացումը կարող է բավականին բարձրացնել զբոսաշրջության ոլորտի արդյունավետությունը՝ զուգահեռ ապահովելով նաև ժամանցի մասնակի կազմակերպումը տարածաշրջանում:

Դիտարկվող տարածաշրջանը, հանդիսանալով նախևառաջ ափամերձ տարածք, առաջարկում է ծովափնյա հանգստի բազմաթիվ տարբերակներ: Բոլոր տարբերակները հիմնականում վերաբերում են պասիվ հանգստին՝ ավազապատ ափամերձ գոտիներ, բացօթյա տաղավարներ և այլն: Զարգացման մեծ պոտենցիալ ունի ջրային սպորտը՝ այս պահին տարածաշրջանում հասանելի են սպորտային մոտորանավակների վարձույթը և մոտորանավակներով շրջագայությունը լճի վրա: Ժամանցի հաջորդ հիմնական հնարավորությունը այցելություններ են դեպի տարածաշրջանի տեսարժան վայրեր: Այցելությունները կազմակերպվում են ինչպես զբոսաշրջիկների կողմից՝ ինքնուրույն տարբերակով, այնպես էլ մասնագիտացված տուրեր կազմակերպող կազմակերպությունների կողմից: Տեսարժան վայրերի, հնավայրերի և բնական հուշարձանների հնարավորությունները օգտագործվում են շատ փոքր քանակությամբ՝ միայն Սևանի ազգային պարկում գրանցված 1489 նման վայրերից այցելության համար օգտագործվում են մոտ երկու տասնյակը:

Հիմնական բացահայտումներն ու առաջարկությունները գնումների և ժամանցի ոլորտում

1. մասնագիտացված վաճառքի տաղավարների և խանութների հիմնում,
2. ջրային սպորտաձևերի զարգացում,
3. քայլարշավների, ճանաչողական և արկածային տուրերի ստեղծում և մատուցում,
4. երեկոյան հանգստի պայմանների ստեղծում՝ ներկայացումներ, համերգներ և այլն:

Զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումներն ու դրա նշանակությունը մարզի համար

Մարզում զբոսաշրջությունը բնութագրվում է խիստ արտահայտված սեզոնայնությամբ: Ներգնա զբոսաշրջիկների գերակշռող մեծամասնությունը, մասնավորապես հանգստի նպատակով մարզ այցելողները՝ հատկապես Սևանա լիճ են ժամանում հունիս-սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում, իսկ տարվա մնացած հատվածում զբոսաշրջիկների թիվը խիստ պակասում է:

Որպեսզի մարզում տարվա բոլոր եղանակներին զբոսաշրջությունը զարգանա, անհրաժեշտ է ներդնել այլընտրանքային զբոսաշրջություն՝ ձմեռային սպորտաձևեր, որսորդություն, ձկնորսություն, նավագնացություն, առագաստանավային սպորտ, ալպինիզմ, որոնց համար կան բոլոր նպաստավոր պայմանները: Սևանում հնարավոր է զարգացնել սպորտային և էքստրեմալ զբոսաշրջությունը, ներառյալ ջրային և ոչ ջրային սպորտաձևերը: Ջրային սպորտաձևերից կարելի է առանձնացնել առագաստային սպորտը, թիավարությունը և դայվինգը: Ոչ ջրային սպորտաձևերի ընտրությունն ավելի մեծ է՝ վազքից և հեծանվավազքից մինչև պարագլայդինգ, ալպինիզմ և ձիասպորտ: Հաշվի առնելով Սևանա լճի շրջակայքի ռելիեֆը և եղանակային պայմանները, տարածաշրջանում հնարավոր է զարգացնել դահուկային սպորտը (լեռնային և դահուկավազք): Ձմեռային հանգիստն առավել հրապուրիչ դարձնելու համար կարելի է կազմակերպել սիրողական բիատլոնի մրցումներ, որը կհրապուրի ոչ միայն դահուկավազքի, այլև հրաձգության սիրահարներին: Սպորտային տուրիզմի զարգացման համար անհրաժեշտ կլինի ստեղծել համապատասխան ենթակառուցվածքներ՝ սպորտային բազաներ, դահուկային վազուղիներ, ճոպանուղի և այլն:

Զբոսաշրջությունը տարբեր միջոցներով կարող է նպաստել համայնքների զարգացմանը: Զբոսաշրջության աճը կմեծացնի բնամթերքի նկատմամբ պահանջարկը, ինչն էլ, իր հերթին, կխթանի գյուղատնտեսությունը: Խիստ քաղաքաշինական նորմերի պահպանումն ու ենթակառուցվածքների զարգացումը կբերի զբոսաշրջության աճին: Բնապահպանական միջոցառումները (Սևանա լճի ջրի, օդի և ափամերձ տարածքի պահպանում) կմեծացնեն տարածաշրջանի գրավչությունը զբոսաշրջիկների համար և այլն:

- Զբոսաշրջիկների համար համայնքային բնակիչների կողմից կազմակերպած միջոցառումները կամ տոները, նրանց նկատմամբ ցուցաբերած հյուրասիրությունը նպաստում են համայնքի սոցիալական ակտիվությանը, իսկ զբոսաշրջության որոլտում ստեղծած աշխատատեղերը և դրանց արդյունքում ստացվող եկամուտները խթան կհանդիսանանտեղի բնակչության կողմից գյուղական համայնքները չլքելուն:
- Զբոսաշրջությունը նպաստում է հանրային ծառայությունների զարգացմանը, և կարող է բարձրացնել բնակչության կենսամակարդակը գյուղական բնակավայրերում: Այն ներառում է բարելավված ճանապարհային և հաղորդակման ենթակառուցվածքները, առողջապահության և տրանսպորտի ոլորտների բարելավումը, նոր սպորտային և հանգստի համար նախատեսված զանազան համալիրները, հանգստի, սպասարկման, զվարճանքի և հասարակության համար նախատեսված այլ վայրեր:
- Զբոսաշրջությունը կարող է մեծապես ազդել մշակութային և պատմական ավանդույթների վերականգմանը, պահպանմանն ու փոխանցմանը, ինչը հաճախ իր հերթին նպաստում է բնական ռեսուրսների պահպանմանն ու ռացիոնալ օգտագործմանը, ազգային ժառանգության պահպանմանը, մշակույթի, արվեստի և արհեստագործության զարգացմանը:
- Զբոսաշրջությունը նպաստում է բնակչության մոտ բնական և մշակութային ռեսուրսների թե՛ ֆինանսական նշանակության գիտակցության և թե՛ դրանց նկատմամբ հպարտության զգացման բարձրացմանը՝ մեծացնելով դրանք պահպանելու ձգտումը:
- Զբոսաշրջությունից ստացված եկամուտները կարող են ուղղվել ինչպես ենթակառուցվածքների զարգացմանը, այնպես էլ շրջակա միջավայրի պահպանության բարձրացմանը: Զբոսաշրջությունը նպաստում է բնական ռեսուրսների ռացիոնալ

օգտագործմանը, շրջակա միջավայրի պահպանությանը և կենսաբազմազանության վերականգմանը, շրջակա միջավայրի պահպանության, հասարակության գիտակցության բարձրացմանը:

- Երկրի և մարզի նկարագրի ձևավորումը նպաստում է վերջինիս միջազգային ճանաչմանը, միջազգային հարաբերությունների ձևավորմանն ու ամրապնդմանը, օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանմանը:

Մարզի բնակչությունը

ՀՀ Գեղարքունիքի մարզն իրենից ներկայացնում է Հայաստանի ոչ խիտ բնակեցված մարզերից մեկը, Գյուղական բնակչությունը տեղաբաշխված է անհամամասնորեն: Մարզի գյուղական համայնքներում մեծ տեսակարար կշիռ են կազմում խոշոր գյուղական բնակավայրերը, որտեղ բնակվում են մարզի գյուղական բնակչության՝ 67.7%, խոշոր բնակավայրերի թիվը 21 կամ բնակավայրերի՝ 23.4%, իսկ փոքր գյուղական համայնքներում բնակվում են գյուղական բնակչության մոտ՝ 13%, փոքր բնակավայրերի թիվը՝ 47 կամ գյուղական բնակավայրերի՝ 53.5%:

Բնակչության խտությունը կազմում է 43 մարդ/1կմ^2: Ընդ որում մարզի մշտական բնակչության մեծամասնությունը կուտակված է Սևանի, Մարտունու և Գավառի



տարածաշրջանում /բնակչության խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա 76-101 մարդ/, այստեղ են բնակվում մարզի բնակչության շուրջ 77.8%, իսկ ամենացածր խտությունը՝ Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանում է՝ մեկ քառակուսի կիլոմետրի վրա 19-33 մարդ, որտեղ բնակվում են մարզի 22.2% բնակչությունը:

Միկրոռեգիոնի ներկա և հեռանկարային բնակչության թվաքանակը տրված է ստորև աղյուսակում.

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ			
հ/հ	Բնակավայրը	2019թ.* հունվարի 1-ի դրությամբ	Հեռանկարային
Գեղարքունիք-3			
1	ք. Մարտունի	11553	12708
2	Աստղաձոր	4567	5024
3	Գեղհովիտ, Նշխարք,	6163	6779
	Լեռնակերտ	285	313
4	Երանոս	5594	6153
5	Զոլաքար	6843	7527
6	Ծովասար	2987	3286
7	Լիճք	5277	5805
8	Ծակքար	2868	3155
9	Ձորագյուղ	4743	5217
10	Մադինա	1124	1236
11	Ներքին Գետաշեն	8821	9703
12	Վաղաշեն	4137	4551
13	Վարդաձոր	2817	3099
14	Վարդենիկ	8482	9330
15	Վերին Գետաշեն	4562	5018
Ընդամենը		***76261***	***83886***

* /աղբյուրը՝ https://www.armstat.am/am/

Դարերի ընթացքում մեծ փոփոխություններ է կրել մարզի բնակչության թե՛ թվաքանակը, թե՛ ազգային կազմը: Ուշ միջնադարում մարզի տարածք են թափանցել թուրքալեզու խաշնարած ցեղերը, որոնք այստեղ գերազանց արոտավայրեր են գտել: Տեղաբնիկների՝ հայերի թիվը պակասել է: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո մարզի տարածքում վերաբնակեցվել են զգալի թվով հայեր Արևմտյան Հայաստանից, ինչպես նաև՝ ռուս աղանդավորներ: Ներկայումս Գեղարքունիքի բնակչության ազգային կազմը միատարր է: Վերջին տարիներին ադրբեջանա-հայկական հակամարտության սկզբում ադրբեջանցիները, որ համեմատաբար մեծ թիվ էին կազմում մարզի արևելյան մասում, տեղափոխվեցին Ադրբեջան: Ազատված գյուղերում բնակություն հաստատեցին Ադրբեջանից փախած հայերը:

Ներկայումս Գեղարքունիքի մարզի բնակչությունը հիմնականում հայեր են, որոնք կազմում է ընդհանուր բնակչության 99.7%-ը: Կան նաև ռուսներ, հույներ, եզդիներ և այլ ազգեր: Ազգային փոքրամասնությունները հիմնականում ունեն ամուսնական կապեր հայերի հետ և տեղի է ունեցել ազգային առանձնահատկությունների միաձուլում հայկական ազգային ավանդույթների հետ:

Բնակելի ֆոնդ

Տնային տնտեսությունների ապահովվածությունը բնակմակերեսով գյուղական համայնքներում գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա, իսկ քաղաքային համայնքներում մոտ է հարակից մարզերի ցուցանիշներին և շուրջ 25% գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը:

Բազմաբնակարան շենքերում առկա է 12277 բնակարան, որից՝ 11679-ը՝ քաղաքներում: Բազմաբնակարանային բնակելի ֆոնդը կազմում է 1 մլն 157 605 հազ. քմ.: Մարզում բազմաբնակարան շենքերի թիվը քաղաքային համայնքներում կազմում է 488, որից՝ ք. Գավառ՝ 73, ք. Սևան՝ 224, ք. Մարտունի՝ 35, ք. Ճամբարակ՝ 24, ք. Վարդենիս՝ 43:

218 բազմաբնակարան շենքեր ընդգրկված են 6 համատիրությունների մեջ:

Մարզի մի քանի բնակավայրերում առկա են ևս 54 բազմաբնակարանային շենքեր (2-4 բնակարաններով):

Գյուղատնտեսություն

ՀՀ Գեղարքունիքի մարզն ունի առավելապես գյուղատնտեսական ուղղվածություն:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի 16.9%-ը:

Մարզում գյուղատնտեսությունում աշխատում է շուրջ 66 000 մարդ: Տարածաշրջանում լայն տարածում է գտել անասնաբուծությունը, մեղվաբուծությունը, ձկնարդյունաբերությունը (հիմնական հենքը Սևանա լիճն է), և բուսաբուծությունը՝ հատկապես կարտոֆիլի ու հացահատիկի մշակությունը: Մարզի գյուղատնտեսությունը կարևոր նշանակություն ունի հանրապետության համար: Մարզում արտադրվում է հանրապետությունում արտադրվող հացահատիկի 20.3%-ը և կարտոֆիլի շուրջ 50%: Անասնաբուծության հիմնական ուղղվածությունը կաթի և մսամթերքի արտադրությունն է:

Զարգանում և տարածվում է այգեգործությունը: Մրգատու ծառերի ներկրված ցրտադիմացկուն տեսակներն ապահովում են բավականին բարձր արդյունավետություն:

Մարզի տարածքում գործում են մոտ 40 հազար գյուղացիական փոքր, միջին կամ խոշոր տնտեսություններ:

Արտադրություն

Գեղարքունքի մարզում գործում են 27 արտադրական ձեռնարկություններ: Խոշոր արտադրական ձեռնարկությունների մեջ տեսակարար կշիռ ունեն ԳեոՊրոՄայնինգ, Աքվատիկ, Սևանի հացի գործարան, Հրանդ Կարապետյան, Ակունքի Էկոկաթ, Գավառի Սևան, Լճաշենի Արա-Արեգ և մի շարք այլ արտադրական ձեռնարկություններ:

Մարզում գործում են 529 առևտրային ձեռնարկություններ, այդ թվում՝ 2 սպառողական ապրանքների և 2 գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

Արդյունաբերություն

Արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Օգտակար հանածոներից մեծ արժեք են ներկայացնում ոսկու (Սոթք), քրոմիտի (Շորժա), տորֆի, բազալտի, բնական շինանյութերի, հանքային ջրերի (Գավառ, Լիճք) և այլ պաշարները:

Հանքարդյունաբերության ոլորտում շահագործվում է 28 հանքավայրեր, որից՝ մեկ մետաղական (Սոթքի ոսկի), մեկ հանքային ջուր («ՄԵՎԱՆ» հանքային ջրերի գործարան), երկու ածխաթթվային հանքային ջրի (կորզվում է ածխաթթու գազ, մեկ քաղցրահամ ջուր, մեկ մերգելային կրաքար («Հրազդան ցեմենտ», 12 քարի, 6 ավազ, ավազակոպիչներ, մեկ գիպսաքար, երկու հրաբխային խարամ և մեկ տորֆ՝ Մասրիկի տորֆ),

Մարզում է գործում հանքահումքային արդյունաբերության մեջ մեծ կշիռ ունեցող «ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈՒԴ» ՍՊԸ-ն, որը մասնագիտացված է թանկարժեք մետաղների հանքարդյունահանմամբ, վերամշակմամբ և հանդիսանում է հանրապետության խոշոր կազմակերպություններից մեկը

Արդյունահանվում է նաև որոշակի քանկաությամբ շինանյութ՝ բազալտ, ավազ, կրաքար: Տորֆի առատ պաշարներ կան Վարդենիսի տարածքում: Տարիներ շարունակ հանրապետության տարբեր շրջաններ (հատկապես ջերմոցային տնտեսություններ ունեցողները) օգտագործել և օգտագործում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Տորֆավան համայնքում գտնվող հանքավայրի տորֆը՝ որպես բնական անփոխարինելի պարարտանյութ:

Զկնաբուծություն

Սևանա լիճն իր եզակի ու հարուստ ֆլորայով և ֆաունայով կարևոր տեղ ունի հանրապետության կենսաբազմազանության համակարգում, իսկ կենսապաշարները՝ մասնավորապես ձկնային պաշարները, կարևոր տեղ են գրավում մարզի և հանրապետության բնակչության սննդաբաժնում: Սևանա լճի ավազանում ձկնաբուծության և ձկնարդյունաբերության զարգացումը կարող է ունենալ շատ կարևոր ռազմավարական նշանակություն ավազանի բնակավայրերի համար, որտեղ այն կարող է դառնալ հազվագյուտ եկամտաբեր ճյուղերից մեկը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ապահովել ոլորտի նորարարական զարգացումը՝ հիմնված ջրային, հողային և կենսաբանական ռեսուրսների պահպանության, վերարտադրության և բանական օգտագործման վրա, ինչպես նաև ապահովել հայրենական ձկնարդյունաբերության միջազգային մրցունակությունը:

Սևանա լճում սկզբնավորվել է ցանցավանդակային ձկնաբուծությունը: 2017թ. դրությամբ լճում տեղադրված է 12 օղակաձև ցանցավանդակներ՝ 25 մ տրամագծով, որտեղ բուծվում է շուրջ 50 տոննա Գեղարքունի և Ամառային իշխանի արդյունագործական պաշար, ինչի արդյունքում տարեկան կարտադրվի 50 հազար տոննա ձուկ:

Կարճաղբյուր համայնքում արդեն կառուցվել և գործում է գերժամանակակից սարքավորումներով հագեցած ձկնաբուծարան: Իր արտադրողականությամբ գործարանը մի քանի անգամ գերազանցում է ԽՍՀՄ տարիներին Սևանա լճի ավազանում գործող չորս մանրաձկան գործարանների արտադրողականությունը:

Սևանա լճի ավազանի հարակից տարածքներում գյուղատնտեսության և անասնապահության արդյունքում պարարտանյութերի և գոմաղբի միջոցով ազոտային և ֆոսֆորային արտանետումները զգալիորեն ճնշում են լճի ջրային ռեսուրսները:

Սևանի հարակից բնակավայրերի կենցաղային կեղտաջրերն առանց մաքրվելու լցվում են լիճ՝ վնասելով ջուրը, ավազանի բուսական ու կենդանական աշխարհը: Ջրի մաքրման կայաններ կան Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում. մյուս բնակավայրերը չունեն կոյուղիների հեռացման համակարգ: Բացասական ազդեցություն ունեն նաև Սոթքի հանքի ցրված ջրերը, որոնք պարունակում են մեծ քանակությամբ ծանր մետաղներ՝ հատկապես վնասելով Սոթք ու Մասրիկ գետերի ավազանները: Այս տարածքում լրացուցիչ մաքրման կայանների ստեղծումն ու կիրառումն անհրաժեշտություն է լիճ մուտք գործող ջրերը հնարավորինս ֆիլտրելու համար: Բացի դա,

հարկավոր է աղբահանության այնպիսի համակարգ ստեղծել, որ բնակիչներն իրենց համայնքներով հոսող գետերը չդիտարկեն իբրև աղբը մեկուսացնող միջոց:

Սևանա լճի ջրավազանի ջրօգտագործման ավելի քան 40%-ը կազմում է ձկնաբուծությունը: Այն ևս բացասաբար է անդրադառնում ավազանի վրա, եթե կանոնակարգված ու գրագետ չի իրականացվում

Սևանա լճի պահպանման հարցում լճի մակարդակի բարձրացումը չափազանց կարևոր է, իսկ այդ գործընթացը պետք է մշտապես իրականացնել:

Միաժամանակ կարևոր է կառավարելի դարձնել ջրի մակարդակի բարձրացումը և կատարել համապատասխան նախապատրաստական աշխատանքներ՝ ազատել, ծառահատել և մաքրել ջրի տակ մնացող տարածքները:



Կրթություն, մշակույթ, սպորտ, առողջապահություն

Գեղարքունիքի մարզում գործում է մեկ պետական համալսարան, միձնակարգ մասնագիտական ութ հաստատություն, 125 հանրակրթական դպրոց, 39 առողջապահական ձեռնարկություն՝ 3 բժշկական կենտրոն, 2 պոլիկլինիկա, 1 ստոմատոլոգիական պոլիկլինիկա, 1 հիվանդանոց, 1 ծննդատուն, 1 առողջության կենտրոն, 30 բուժամբուլատորիա և առողջության առաջնային պահպանման կենտրոն, մեկ պետթատրոն, 3 թանգարան, Հայաստանի պետական պատկերասրահի 2 մասնաճյուղ, 1 մարզային, 5 քաղաքային, 63 գյուղական գրադարաններ, 8 երաժշտական, 1 դուդուկի, 6 արվեստի, 3 գեղարվեստի դպրոցներ, 3 մանկական ստեղծագործական կենտրոն, 1 գեղագիտական կենտրոն, 1 երաժշտական քոլեջ, 9 մարզադպրոց, 73 մշակույթի տներ և ակումբներ, չորս տասնյակիվ ավելի մանկապարտեզներ և նախակրթարաններ:

Թատերական հարուստ ավանդներ ունեցող Գավառ քաղաքում գործում է Լ. Քալանթարի անվան պետթատրոնը, որի նորակառույց շենքն ունի գերժամանակակից պայմաններ:

Տրանսպորտ

ՀՀ Գեղարքունիքի մարզով են անցնում Մ4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման, Սևան-Մարտունի-Գետափ, Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման և Մ4-Շորժա-Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհները:

ՀՀ Գեղարքունիքի մարզի տնտեսության զարգացումն ամբողջապես կախված է ճանապարհային և երկաթուղային փոխադրումներից:

Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի երթևեկությունը ինտենսիվ է, ծանրաբեռնված է աշխատում հատկապես հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին, կապված Սևանա լճի հանգստյան գոտիների հետ:

Գեղարքունիկի մարզի միջպետական և հանրապետական ավտոճանապարհների ավտոտրասպորտի միջին օրեկան ինտենսիվությունը

Մարզի տարածքում գործում են 816.4 կմ ավտոճանապարհներ, որից միջպետական նշանակության 283.1 կմ, հանրապետական նշանակության 113.4 կմ և մարզային (տեղական) նշանակության 419.9 կմ: Հիմնանորոգված են միջպետական նշանակության ճանապարհներից 269.6 կմ, հանրապետական նշանակության ճանապարհներից 86.3 կմ և մարզային (տեղական) նշանակության ճանապարհներից 151.6 կմ: Ընդհանուր առմամբ հիմնանորոգված է մարզի պետական նշանակության ճանապարհներից 499.5 կմ, որը կազմում է ճանապարհային ցանցի 61.2%-ը:

Աղյուսակ 6. Մարզում ճանապարհային ցանցի խտությունը

Նշանակություն	Երկարությունը, (կմ)	Խտությունը 1կմ. ք հաշվով (կմ /կմ ք)	Խտությունը 10 000 բնակչի հաշվով , (կմ/10 000 բնակիչ)
Միջպետական	283.1	0.05	12.1
Հանրապետական	113.4	0.02	4.8
Մարզային (տեղական)	419.9	0.078	18.0
Ընդհանուր	816.4	0.15	35.0

Աղբյուրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության Տրանսպորտի և ճանապարհաշինության բաժին

7	Մ-11	Վարդենիս – Արցախի Հանրապետության սահման	36	6280	266	14	6560
8	Մ-14	Մ-4/ - Շորժա - Վարդենիս	35	403	97	4	504
9			75	486	124	4	614
10			96	2783	142	4	2915
11	Հ-29	Սևան - Ծաղկունք – Ջովաբեր	1	1537	38	0	1575
12			8	793	24	0	817
13			17	1024	31	0	1055

ՀՀ Գեղարքունիքի մարզում բեռնափոխադրումներն ու ուղևորափոխադրումները իրականացվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտով: Մարզի տարածքում գործում են 15 միջմարզային երթուղիներ, որոնք մարզի բնակավայրերից ուղևորափոխադրումներ են իրականացնում դեպի Երևան, Վանաձոր, Վեդի քաղաքներ և մարզի այլ բնակավայրեր: Գործում են նաև 25 ներմարզային երթուղիներ, որոնք մարզի համայնքները կապում են նախկին շրջկենտրոնների հետ: Մարզի 73 համայնքներ ապահովված են միջմարզային, ներմարզային կամ ներհամայնքային ընդհանուր

օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով, իսկ 19 համայնքներ, որոնք ընդհանուր ունեն 15336 բնակիչ կամ մարզի բնակչության՝ 6.6%-ը ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտից չի օգտվում:

Միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհների զգալի մասը անցնում է ձմեռային կլիմայական պայմաններ ունեցող լեռնային և բարձր լեռնային գոտիներով, ձմեռը հաճախակի դառնում են դժվարանցանելի, երթևեկության տևողությունը էապես ավելանում է:

ՀՀ Գեղարքունիքի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակի գնահատման				
Ավտոճանապարհի անվանումը և կիլոմետրերը	Ավտոճանապարհի տեխնիկական կարգը	Պահպանվող հատվածների երկարությունը ըստ գնահատման /կմ/		Ճանապարհահատվածների վիճակի ծածկագիրը
1	2	3		4
Մարտունու տարածաշրջան				
Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ կմ 49,0-կմ91.8	Միջպետական II-IV	57.0-64.5	7.5	Երաշխիք ՄԵ(0)
		49,0-5.0 66.0-91.8	26.8	Բավ. ՄԲ(II)
Մ-11 Մարտունի-Վարդենիս-Ադրբ.սահման կմ0-կմ20,7	Միջպետական II-IV	6.0-10.85	4.85	Երաշխիք ՄԵ(0)
		0-6.0 10.85-20,7	15.85	Բավ. ՄԲ(II)
Ընդամենը			55.0	

Երկաթուղի

Մարզի տարածքով է անցնում Սոթք տանող երկաթգիծը, որի Ծաղկունք-Սոթք վազքուղու երկարությունը կազմում է 141 կմ: Մարզում գործում են Սևանի, Շորժայի, Վարդենիսի և Սոթքի երկաթուղային կայարանները, որոնք մարզի տնտեսության ակտիվացման ժամանակ կարող են մեծ խթան հանդիսանալ շահավետ բեռնափոխադրումների իրականացման համար: Երկաթուղային կայարանները ներկայումս օգտագործվում են իրենց հնարավորությունների շուրջ 50%-ը: Սևան-ՇորժաՎարդենիս ուղղությամբ ներկայումս գործում է երկու գնացք՝ որոնցով հիմնականում իրականացվում են բեռնափոխադրումներ, իսկ ամառվա ընթացքում նաև ուղևորափոխադրումներ: Հեռանկարում քննարկման առարկա կարող է դառնալ Հայաստան-Իրան երկաթուղու կառուցումը, որը կարող է անցնել ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքով: Երկաթգծով իրականացված բեռնափոխադրումների ծավալներն հետևյալն են՝ 2013թ. 1.34 մլն.տոննա, 2014թ.՝ 1.31 մլն.տոննա, 2015թ.՝ 1.1 մլն.տոննա, 2016թ.՝ 1.3 մլն.տոննա:

Օդային տրանսպորտ

Մարզում առկա է Գավառի օդանավակայանը, որը սակայն ներկայումս չի գործում: Գավառի օդանավակայանում կան շենքային պայմաններ, սակայն թռիչքուղին գրունտային է:

Քաղաքային զարգացում

Մարզկենտրոն ***Գավառը*** (2019թ. տարեսկզբին՝ 18.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 92 կմ հեռավորության վրա: Քաղաքը նախկինում հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների

աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էապես կրճատվել է: Այժմ տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է:

Սևան քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 19.0 հազ. բնակիչ, Երևանից 66 կմ հեռավորությամբ) գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը զբոսաշրջությունն է:

Մարտունի քաղաքը (2019թ. տարեսկզբին՝11.5 հազ. բնակիչ) գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին (Երևանից 130 կմ հեռավորության վրա): Տնտեսության գլխավոր ճյուղն արդյունաբերությունն է, թեև վերջին տարիներին արձանագրվել է թողարկվող արտադրանքի ծավալների զգալի կրճատում:

Վարդենիս քաղաքի (2019թ. տարեսկզբին՝12.5 հազ. բնակիչ, Երևանից 168 կմ հեռավորության վրա) առաջատար ճյուղն արդյունաբերությունն է: Ընդլայնման մեծ հեռանկարներ կան հատկապես հանքավայրերի շահագործման և գյուղատնտեսական մթերքի վերամշակման ուղղություններում: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

Ճամբարակ քաղաքի (2019թ. տարեսկզբին՝ 5.6 հազ. բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է (Երևանից 119 կմ հեռավորության վրա): Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած: Կրասնոսելսկի տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90%-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

Մարզի միայն ճամբարակ քաղաքն է գտնվում թույլ յուրացված գոտում, ունի տարածքային զարգացման հնարավորություններ իր համայնքի սահմաններում:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ինտենսիվ յուրացված գոտու քաղաքների համար (Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս) առանձնահատուկ նշանակություն ունի քաղաքների տարածքային զարգացման նպատակային սահմանափակումների ամրագրումը, որի կարևորագույն չափանիշը շրջակա միջավայրի պահպանման խնդիրն է:

Քաղաքների հետագա զարգացումը հիմնականում նախատեսվում է ներքին ռեզերվների և տարածքների քաղաքաշինական յուրացման ինտենսիվության մակարդակի բարձրացման հաշվին, քանի որ քաղաքների տարածքների 30-35%-ը դեռևս շատ էքստենսիվ է օգտագործվում:

Քաղաքային բնակավայրերի զարգացումը պայմանավորված է նաև Գավառի օդանավակայանի վերագործարկմամբ, նախատեսված երկաթուղու կառուցման աշխատանքները ավարտին հասցնելը, սննդի ու տեքստիլ արդյունաբերական կազմակերպությունների աշխատանքը:

<u>«Գեղարքունիք-3» միկրոռեգիոնի բնակավայրերի առկա վիճակի վերլուծություն</u>

Միկրոռեգիոնում ներառված են՝ ***ք.Մարտունի, Աստղաձոր, Գեղհովիտ/Նշխարհք, Լեռնակերտ/, Երանոս, Զոլաքար, Ծովասար, Լիճք, Ծակքար, Զորագյուղ, Մադինա, Ներքին Գետաշեն, Վաղաշեն, Վարդաձոր, Վարդենիկ, Վերին Գետաշեն*** բնակավայրերը:

Ք. Մարտունի

Մարտունի քաղաքը գտնվում է Սևանա լճի հարավ-արևմուտքում՝ Երևանից 126կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից 33 կմ է: Զբաղեցնում է 4514.14 հա տարածք, որից բնակավայրը՝ 602.2 հա:

Մարտունի քաղաքը Սյունյաց աշխարհի, Գեղարքունիք գավառի Կզնուտ գյուղն է, որը մոնղոլական տիրապետության ժամանակ ավերվել է և զրկվել բնակչությունից: 1826-28թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո Արևելյան Հայաստանը վերամիավորվեց Ռուսաստանի հետ և սկսած 1827թ Կզնուտ գյուղում սկսեցին վերաբնակվել Ալաշկերտի նահանգից, ազգությամբ հայ, ընտանիքներ: Կզնուտ գյուղը 1832թ-ին վերանվանվեց Ներքին Ղարանլուղ: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո Ներքին Ղարանլուղ գյուղը վերանվանվել է Մարտունի՝ ի պատիվ ականավոր հեղափոխական Ալեքսանդր Մյասնիկյանի: Մարտունին 1962թ-ից դարձել է քաղաքատիպ ավան, շրջկենտրոն, իսկ 1993թ-ից՝ հանրապետական նշանակության քաղաք:

Քաղաքը գտնվում է Գեղարքունիքի մարզի կենտրոնական հատվածում, Սևանա լճի հարավ-արևմուտքում, ծովի մակարդակից շուրջ 2000 մետր բարձրության վրա, Երևանից 126 կմ հեռավորությամբ: Զբաղեցնում է մոտավորապես 10 քառ. կմ. տարածություն և խաչմերուկ է հանդիսանում Վարդենիսից, Սյունիքից, Արցախից եկող ճանապարների վրա:

Քաղաքը հարավային կողմից շրջապատված է Գեղամա լեռներով: Հյուսիսում՝ լճի և քաղաքի միջև տարածվում է սոսիների, ուռենիների և եղևնիների անտառը: Հարավում՝ Վարդենյաց լեռնանցքի ուղղությամբ, գտնվում է Վարդենիսի լեռնաշղթան: Ամառվա երեք ամիսներն արևոտ են, գարունն ու աշունը՝ մեղմ:

Ըստ ավանդության՝ Մարտունու տեղում աղբյուր է եղել, և բնակիչները շատ խնայողաբար են օգտագործել ջուրը: Մի անգամ Ծովինար անունով մի նորահարս պատահաբար բաց է թողնում ջրի ծորակը, և մինչև լույս աղբյուրի ջուրը հոսելով՝ լիճ է դառնում: Առավոտյան աղբյուր այցելող առաջին կինը տեսնում է լիճը, անիծում ջուրը բացողին, և հարսը քարե արձան է դառնում: Այդպես ստեղծվում են լիճը և փոքրիկ գյուղը լճի ափին:

Ազգաբնակչության 40% զբաղվում է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ, 20%-ը առևտրով, մեծ տոկոս է կազմում գործազուրկների թիվը:

Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը նախկինում եղել է մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են ունեցել մեքենաշինության, շինանյութերի, քիմիական և սննդի արդյունաբերության ճյուղերը: Մարտունի քաղաքի բնակչության նվազումը 2011 թվականից մինչև 2015 թվականը կազմել է՝ 5.4%, որը գերազանցում է միջին մարզային ցուցանիշը շուրջ 3.5 անգամ և քաղաքային բնակչության նվազման միջին Հանրապետական ցուցանիշը շուրջ 18 անգամ: Այստեղից են արտագաղթել մարզի քաղաքային բնակչության շուրջ՝ 30%-ը: Քաղաքի բնակչության նվազմանը նաև նպաստում է ցածր ծնելիությունը: Մարտունի քաղաքի հիմնական զարգացման խնդիրներից է հանդիսանում աշխատատեղերի բացակայությունը,

ներդրումների պակաս, ներքին ու արտաքին արտագաղթը: Քաղաքում առկա է պոստ ինդուստրիալ տարածքների բարեկարգման և կրկնակի օգտագործման խնդիր:

Քաղաքում գործում է 3 հանրակրթական դպրոց, մարզադպրոց, երաժշտական դպրոց, արվեստի դպրոց, մանկապատանեկան կենտրոն, գրադարան, մշակույթի տուն, 4 մանկապարտեզ:

Քաղաքում առկա են էլեկտրատեղակայման իրերի, պահածոների, պանրի, 'Սիգմա' և 'Անի' գործարանները, Մահուդի ֆաբրիկան: Նշված գործարանները սեփականաշնորհված են և ներկայումս չեն աշխատում կամ աշխատում են իրենց հնարավորությունների 10%-ի չափով:

Մարտունու պատկերասրահը ՀՀ ազգային պատկերասրահի մասնաճյուղն է, որտեղ ներկայացված են սոցիալական ռեալիզմին վերաբերող կտավներ, ինչպես նաև տեղի նկարիչների աշխատանքներ: Այս պատկերասրահում կարելի է տեսնել մի ծառի կոճղի՝ խաչքարով, որը գտել են ծառի մեջից: Տեղի բնակիչների պնդմամբ՝ այդտեղից դուրս հորդող էներգիայի շնորհիվ խաչքարը կարող է երազանքներ իրականացնել:

Քաղաքում կան նաև 120 մահճակալով կենտրոնական հիվանդանոց, իր բոլոր բաժանմունքներով, պոլիկլինիկա, հակահամաճարակային կենտրոն, ծննդատուն, հակաժանտախտային կայան:

Սևանի ափին կառուցված 4500 տեղանոց հանգստյան տունը, ափամերձ անտառային գոտին, ինչպես նաև քաղաքում եղած պատմամշակույթային հուշարձանների առկայությունը հնարավորություն կարող են ընձեռնել տուրիզմի հետագա զարգացմանհամար: Համապատասխան ներդրումներ կատարելու դեպքում քաղաքը կարող է վերածվել տուրիզմի
կենտրոնի, ինչի համար երաշխիք կարող են հանդիսանալ համայնքի տարածքում գտնվող պատմամշակույթային կառույցները, սրբավայրերը, գեղատեսիլ Սևանն ու լեռնաշխարհը:

Մարտունեցիները մինչև հիմա ապրում են Ալաշկերտցիների նիստ ու կացով և քաղաքը ճանաչված է իր հյուրասիրությամբ: Բնակիչները պահպանել են Ալաշկերտի բարբառային լեզուն, որը յուրօրինակ է:

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 95 հուշարձան (16 միավոր):

Աստղաձոր (Խաչաձոր, Ձոր),

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, Աստղաձոր գետի ներքին հոսանքի շրջանում, մարզկենտրոն Գավառից 37 կմ հարավ–արևելք, մայրաքաղաքից՝ 130 կմ, միջպետական մայրուղուց՝ 1.5 կմ հեռավորությամբ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2030 մ բարձրության վրա: Նախկինում գյուղը Ալակրըղ անվան տակ մտել է Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի կազմում: Վարչական տարածքը՝ 2946.1 հա:

Օդի միջին ջերմաստիճանը հունվարին -20 ⁰C է, հուլիսին՝ +25 ⁰C: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը՝ 250-350 մմ

Գյուղը նակինում գլխավոր հատակագիծ չի ունեցել:

Ներկայիս բնակչության նախնիները 1829-1830 թթ. գաղթել են Ալաշկերտից և Վանից: Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի 2019թ. հունվարի 1-ի դրությամբ տվյալների՝ բնակավայրն ունի 4567 բնակիչ:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ, դաշտավարությամբ և խոզաբուծությամբ: Տնային տնտեսությունների թիվը՝ 1434, գյուղացիական տնտեսությունների թիվը՝ 1416: Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 1494 գլուխ, մանր եղջերավորները՝ 975 գլուխ, խոզերի քանակը՝ 251:

Գյուղն ունի դպրոց, մանկապարտեղ, մշակույթի տուն, բուժ-ամբուլատորիա, գրադարան:

Դպրոցն ունի 613 աշակերտ, մանկապարտեզ է հաճախում 28 երեխա:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 2361 հազ. մ2: Առկա է 1 բազմաբնակարան շենք՝ 1.45 հազ մ² մակերեսով, և 771 անհատական բնակելի տուն՝ 2360 մ² մակերեսով:

Արդյունաբերական ձեռնարկություններ չկան:

Գյուղը գազաֆիկացված է, ունի 1 գործող գերեզմանատուն՝ 6.4 հա մակերեսով, և աղբավայր՝ 1.5 հա տարածքով:

Գյուղամիջում պահպանված է կիսավեր սբ. Պողոս-Պետրոս (15-րդ դ.), գյուղի հարավային եզրին՝ սբ. Հռիփսիմե (13-րդ դ.) եկեղեցին: Աստղաձորից 2 կմ հարավ-արևմուտք գտնվում է սբ. Հռիփսիմե մատուռը: Այստեղ հայտնաբերվել են երկաթե դարի (մ.թ.ա. 9-րդ-8-րդ դդ.) դամբարաններ:

Գեղարքունիքի մարզի Աստղաձոր գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 118 հուշարձան (18 միավոր):

Գեղհովիտ, /Նշխարք, Լեռնակերտ/

բնակավայր Հայաստանի Գեղարքունիքի մարզում, Մարտունի գետի երկու ափին, մարզկենտրոն Գավառից 37 կմ հարավ-արևելք, մայրաքաղաքից՝ 130 կմ, ծովի մակերևույթից 2060 մ բարձրության վրա: Ներառում է Գեղհովիտ և Լեռնակերտ գյուղերը: Վարչական տարածքը՝ 15144.65 հա:

Բնակավայրը կազմավորվել է 1832թ.: Ներկայիս բնակչության մի մասի նախնիները 1828-1830-ական թթ. այստեղ են գաղթել Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի, Մուշի և այլ շրջանների գյուղերից: Գյուղի առաջին բնակիչն է եղել Ալվանդ Էլոեվը իր ընտանիքով: Կան նաև ցեղասպանությունից փրկված մի քանի ընտանիքներ, Էրզրումից (Կարին) և Վանից;

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի 2019թ. հունվարի 1-ի դրությամբ տվյալների՝ բնակավայրն ունի 6163+285 բնակիչ:

Գյուղն ունի 2 դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, պոլիկլինիկա:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, կարտոֆիլի, բանջարեղենի և հացահատիկի մշակությամբ:

Գյուղի շրջակայքում կան բազմաթիվ հնավայրեր՝ արևմտյան մասում “Ալբերդ” ամրոցը (մ.թ.ա. 1-ին հզմ.- մ.թ. IX դ.), հարավ-արևելք կողմում՝ “Ջոջ կող” ամրոցը (մ.թ.ա. 2-րդ-1-ին հզմ.)։ Գյուղի մեջ է սբ. Գևորգ (XV-XVI դդ.), հարավ՝ սբ. Ստեփանոս (XIII դ.) եկեղեցիները, “Թուխ Մանուկ” մատուռը, 3 կմ արևմուտք՝ “Քոա” վայրում՝ հին

գյուղատեղին։

Գեղարքունիքի մարզի Գեղհովիտ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից։ Ցանկում ներառված է ընդամենը 132 հուշարձան (22 միավոր)։

Երանոս,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում։ Գյուղը գտնվում է Գեղարքունյաց լեռնաշղթայի հարավարևելյան ստորոտին, Ջազ գետի ստորին հոսանքում, մարզկենտրոն Գավառից 25 կմ հարավ-արևելք, մայրաքաղաքից՝ 118 կմ հեռավորությամբ, միջպետական մայրուղուց՝ 0.5 կմ։ Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2050 մետր բարձրության վրա։ Վարչական տարածքը՝ 5335.78 հա։

Երանոս՝ անունը հունարենից թարգմանելիս նշանակում է “խաղաղասեր” կամ “խաղաղարար”։

Գյուղի կլիման ցրտաշունչ է, ամռանը՝ զով։ Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -5-ից -12 ºC, հուլիսին՝ +16 ºC : Մթնոլորտային տեղումների քանակը 489-492 մմ։

Գյուղը կազմավորվել է 1828-1830 թվականներին։ Եկել են Ալաշկերտի Խաստուր գյուղից, Մուշից, սակայն գյուղը ունի ավելի հին պատմություն։

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019թ. հունվարի 1-ի տվյալների բնակավայրի բնակչության թվաքանակը 5594 մարդ է։

Գյուղն ունի 2015թ. հաստատված գլխավոր հատակագիծ։

Գյուղում գործում է երկու միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, մսուր մանկապարտեզ, կոմունալ տնտեսություն, ընտանեկան բժշկության ամբուլատորիա, առևտրի և սպասարկման օբյեկտներ։

Դպրոցն ունի 637 աշակերտ, մանկապարտեզ է հաճախում 120 երեխա։

Գյուղի բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն է, հացահատիկի և կարտոֆիլի մշակությունը։ Տղամարդիկ հիմնականում մեկնում են սեզոնային արտագնա աշխատանքի։

Տնային տնտեսությունների թիվը՝ 1624։ Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 1695 գլուխ, մանր եղջերավորները՝ 439 գլուխ, խոզերի քանակը՝ 358։

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 192.736 հազ. մ2՝ բաղկացած թվով 1134 անհատական բնակելի տներից։

Արդյունաբերական ձեռնարկություններ չկան:

Գյուղը գազաֆիկացված է, ունի թվով 4 գերեզմանատուն՝ 4.75 հա մակերեսով, և աղբավայր՝ 1.4 հա տարածքով:

Գյուղի հյուսիսային մասում կա երկու ամրոց՝ Նեղ բողազ (մ.թ.ա 3-րդ հազարամյակ) և Շեն դվոր (մ.թ.ա 2-րդ -1-ին հազարամյակ): Գյուղում կա Սուրբ Հովհաննես անունով եկեղեցի-սրբավայր (1215 թ.), Թուխ Մանուկ, Խոնարհված Սուրբ, Սուրբ Սոֆյա մատուռներ, դամբարաններ և 15-17դդ. խաչքարեր:

Գեղարքունիքի մարզի Երանոս գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 105 հուշարձան (18 միավոր):

Զոլաքար

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, Զոլաքար գետի ստորին հոսանքի շրջանում, մարզկենտրոն Գավառից 45կմ հարավ-արևելք: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1985մ բարձրության վրա: Վարչական տարածքը՝ 6206.69 հա:

Նախկինում ունեցել է Ակնախաչ, Զոլախաչ, Զորավոր խաչ անվանումները: Զոլաքար է վերանվանվել 1925 թվականի հունվարի 3-ին:

Ներկայիս բնակչության նախնիների մի մասը գաղթել է Բայազետի Զիրոյ գյուղից:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019թ. հունվարի 1-ի տվյալների բնակավայրի բնակչության թվաքանակը 6843 մարդ է:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի մշակությամբ և դաշտավարությամբ:

Զոլաքարում է գտնվում սբ. Գևորգ եկեղեցին (վերակառուցվել է 19դ.):

Շրջակայքում են գտնվում «Թուխ Մանուկ» և սբ. Դավիթ (13դ.) սրբավայրերը: Պահպանվում են նաև այլ հնություններ (խաչքարեր, գերեզմաններ), որոնք վերաբերում են 14 և հետագա դարերին: Խաչքարերից աչքի է ընկնում հատկապես մեկը, որը սովորականից շատ խոշոր է՝ “Զոլախաչ” (13դ.):

Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 143 հուշարձան (20 միավոր):

Ծովասար,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզի Մարտունու շրջանում: Մյուս գյուղերի համեմատությամբ Ծովասարն ունի բարձրլեռնային դիրք: Ծովասարի ամեն մի անկյունից երևում է Սևանա լիճը: Նրա հարակից գյուղերն են՝ Ծակքարը, Լիճքը և Զորագյուղը: Ծովասարը շրջապատված է բարձր լեռներով, որոնցից մեկը Ծովասար լեռն է, իսկ մյուսը՝ Արմաղանը, իսկ հեռվում՝ Սևանա լճի ամբողջ երկայնքով՝ նաև Գեղամա լեռները: Ծովասար է վերանվանվել 2006 թվականի հուլիսի 4-ին: Վարչական տարածքը՝ 7464.6 հա:

Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -25 աստիճան, հուլիսին՝ +25: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը՝ 700-800 մմ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Բնակելի ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 82150 մ^2:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019թ. հունվարի 1-ի տվյալների գյուղի բնակչությունը կազմում է 2987 մարդ:

Գյուղն ունի 545 գյուղացիական տնտեսություն:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կարտոֆիլի մշակությամբ և արտագնա աշխատանքով հիմնականում դեպի Ռուսաստանի Դաշնություն:

Գյուղն ունի երկու միջնակարգ դպրոց, մշակույթի տուն /վերանորոգված/՝ 186 տեղանոց դահլիճով: Մշակույթի տանը գործում է պարի խմբարկ, գրադարան և երկրագիտական թանգարան: Գյուղի տարածքում գործում է նորակառույց բուժամբուլատորիա: Ընթացքի մեջ են 100 երեխայի համար նախատեսված մանկապարտեզի կառուցման աշխատանքները:

Բնակավայրը գազաֆիկացված է, ունի գործող գերեզմանոց:

Բնակավայրի տարածքում առկա է 1 բազիլիկ և 9-12 դդ.Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որը գտնվում է վատ վիճակում:

Գեղարքունիքի մարզի Ծովասար /Թազագյուղ/ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 74 հուշարձան (10 միավոր):

Լիճք,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում Լիճք գյուղը գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան մասում՝ լեռներով շրջապատված գոգավորությունում: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 128 կմ, մարզկենտրոնից՝ 36 կմ, միջպետական մայրուղուց՝ 0.1 կմ: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2000 մ: Վարչական տարածքը՝ 9164.71 հա:

Օդի միջին ջերմաստիճանը հունվարին -15 ^{0}C է, հուլիսին՝ +25 ^{0}C: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը՝ 500-600 մմ:

Գյուղի տարածքում կան բազմաթիվ աղբյուրներ, որոնց ջրերից գոյանում է Լիճք գետը:

Տեղանքի բուսական աշխարհի հետ կապված գյուղն սկզբից կոչել են Եղեգնագեղ, Եղեգնագյուղ, 1836 թվականից՝ Գյոլ, Գել, Գյոլ-Քենդ, իսկ 1946 թվականի ապրիլի 26-ի ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի որոշմամբ՝ Լիճք:

Լիճքեցիները մինչև խորհրդային տարիները, համագործակցելով հարևան Վերին Աղյաման և Թազաքենդ գյուղերի բնակիչների հետ, քուրդ ու թուրք հրոսակներից հաջողությամբ պաշտպանել են իրենց ընտանիքներն ու ունեցվածքը, որի համար էլ ստացել են «արյունախում» մականունը:

1918 թվականին տեղահան են արել Ահմադ Աղի գյուղը՝ սեփականացնելով այդ գյուղի տարածքները:

Գյուղի նախնիներն այստեղ են վերաբնակվել 1829-1830 թվականներին՝ գաղթելով Արևմտյան Հայաստանի Բայազետի գավառի տարածքում գտնվող Ալաշկերտ քաղաքի կենտրոնական մասում տեղակայված Բերդ թաղամասից: Ըստ 1831-1842 թվականների արխիվային տվյալների Եղեգնագյուղ (Գյոլ-Քենդ) գյուղում սկզբից բնակություն են հաստատել Ալաշկերտից գաղթած 43 ընտանիքներ, մեկ ընտանիք՝ Ներքին Աղյաման (Ներքին Գետաշեն) գյուղից և երկու հոգի Թուրքիայից: Բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 273 մարդ: Նույն աղբյուրներում նշվում է, որ Գյոլ-Քենդ գյուղի վարելահողերն ու խոտհարքերը բավականին շատ են:

Բնակիչներն անձնական կարիքների համար զբաղվել են նաև ձկնորսությամբ: Պետք է նշել, որ գյուղի տարածքում գտնվող քաղցրահամ աղբյուրների ջրերը իշխան ձկան իսկական «պահեստարաններ» էին: Գյուղն ունեցել է նաև երկու ջրաղաց և նույնքան էլ ձիթհանք: Գործող ջրաղացներն ու ձիթհանքերը հուշում են, որ գյուղի բնակիչները այդ տարիներին էլ են հիմնովին կառչած եղել հողին, որից քամել են իրենց գոյատևման հիմնական միջոցը՝ հացը:

1852 թվականի տեղական մարդահամարի տվյալներով Գյոլ-Քենդ գյուղում եղել է 44 ծուխ, երեք ծուխ մարել է, որոնց փոխարինել են 1847 թվականին Մուշից գաղթած երեք ընտանիքները: Բնակչությունը հետագա քսան տարիների ընթացքում լիովին հարմարվել է տեղանքին ու կլիմային, ընդարձակել է վարելահողերը, զբաղվել է անասնապահությամբ ու ձկնորսությամբ: 1873 թվականին գյուղի ծխերի թիվը համարյա կրկնապատկվել է (84 ծուխ), իսկ բնակչությունը աճել է մոտ երեք անգամ՝ հասնելով 801 մարդու:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019թ. հունվարի 1-ի դրությամբ տվյալներով բնակավայրն ունի 5277 բնակիչ:

Գյուղն ունի գլխավոր հատակագիծ, հաստատված 2014 թ.:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Տնային տնտեսությունների թիվը՝ 1880, գյուղացիական տնտեսությունների թիվը՝ 1880: Խոշոր եղջերավոր անասունների քանակը՝ 1995 գլուխ, մանր եղջերավորները՝ 623 գլուխ, խոզերի քանակը՝ 420:

Գյուղն ունի դպրոց, մանկապարտեզ, մշակույթի տուն, բուժ-ամբուլատորիա, գրադարան:

Դպրոցն ունի 924 աշակերտ, մանկապարտեզ է հաճախում 90 երեխա:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 13 285 մ^2: Առկա է 2 բազմաբնակարան շենք՝ 2600 մ^2 մակերեսով, և 1100 անհատական բնակելի տուն՝ 350 000 մ^2 մակերեսով:

Արդյունաբերական ձեռնարկություններ չկան:

Գյուղը գազաֆիկացված է, ունի 3 գործող գերեզմանատուն և աղբավայր:

Լիճքի մոտ պահպանվել են բրոնզեդարյան դամբարանադաշտ («Չորանոցներ» թաղամաս), կիկլոպյան ամրոցի և միջնադարյան բնակատեղիի ավերակներ (Պողոսի գյուղ), մի մատուռ (Ծաղկավանք), խաչքարեր, որոնցից մեկը կանգնեցրել են Խաթունի և Հայրումի որդիները՝ 1284 թվականին: 1950-1960 թվականներին հայտնաբերվել է նաև արամերեն մեկ արձանագրություն:

Անաշե-Բերդ-Լիճք, Լիճքի խորհրդանիշն իրենից ներկայացնում է ոսկով շրջանակված վահան, որի վրա նկարված է Ալաշկերտի բերդը: Բերդի պարսպի վրա գրված է Անաշե, որը Ալաշկերտի ուրարտական շրջանի անունն է: Բերդի դարպասների վրա, որոնց վրա փականներ չկան ու սպասում են մեր վերադարձին, պատկերված են երկու առյուծներ, իսկ առյուծը Բագրատունիների խորհրդանիշն է: Առյուծներից մեկի մոտ քրիստոնեության խորհրդանիշն է՝ խաչը, իսկ մյուսի մոտ վարդ՝ Բագրևանդի խորհրդանիշը: Բերդից քիչ ներքև Արածանին է, որի մեջ, ըստ ավանդույթի Տրդատ առաջինի հրամանով քրիստոնյա է մկրտվել հայ ժողովուրդը: Արածանիից ներքև արդեն Սևանա լճի մի մասն է երևում, որի ափին՝ եղեգների մեջ խրված *Լիճք* տեղանունը, որը խորհրդանշում է գյուղը:

Գեղարքունիքի մարզի Լիճք գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 104 հուշարձան (12 միավոր):

Ծակքար,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, Սևանա լճից հարավ-արևմուտք., Ծակքար գետի ստորին հոսանքի շրջանում, մարզկենտրոնից 30 կմ հարավ-արևելք: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2000 մ միջին բարձրության վրա, մայրաքաղաքից՝ 120 կմ, միջպետական մայրուղուց՝ 1 կմ հեռավորությամբ: Վարչական տարածքը՝ 3849.2 հա:

Օդի միջին ջերմաստիճանը հունվարին -12 ^{0}C է, հուլիսին՝ +25 ^{0}C:

Հիմնադրվել է 1831 թվականին Ալաշկերտի Քարաձոր, Հասան-փաշա, Մացկերտ և այլ գյուղերից գաղթածների կողմից: Նախկինում ունեցել է Կոռքար անվանումը: 1831 թ. գյուղն ունեցել է 17 գերդաստան (ոչ ընտանիք), 127 բնակիչ: 1878 թ. դարձյալ Արևմտյան Հայաստանի Մուշի գավառից գյուղ են ներգաղթել ևս 4 գերդաստան, և գյուղն ունեցել է 21 գերդաստան:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019թ. հունվարի 1-ի տվյալների բնակավայրի բնակչության թվաքանակը 2868 մարդ է:

Գյուղն ունի գլխավոր հատակագիծ, հաստատված 2013թ.:

Բնակչությունը զբաղվում է թռչնաբուծությամբ, հացահատիկի և բանջարաբոստանային մշակաբույսերի մշակությամբ: Կարևոր տեղ է գրավում նաև արտագնա աշխատանքը:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, մանկապարտեզ, բուժ. ամբուլատորիա, առևտրի և սպասարկման օբյեկտներ:

Դպրոց են հաճախում 408 աշակերտ, մանկապարտեզ է հաճախում 78 երեխա:

Տնային տնտեսությունների թիվը՝ 885, գյուղացիական տնտեսությունների թիվը՝ 885: Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 321 գլուխ, մանր եղջերավորները՝ 33 գլուխ, խոզերի քանակը՝ 37:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 69.450 հազ. մ2՝ բաղկացած 463 անհատական բնակելի տներից:

Արդյունաբերական ձեռնարկություններ չկան:

Գյուղը գազաֆիկացված է, ունի աղբավայր՝ 0.7 հա տարածքով:

1878-1884 թվականներին գյուղում կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցի (ժամ):

Ծակքարի մեջ կա գերեզմանոց և խաչքարեր (9-20 դդ.), Ծակքարի բնական կամուրջ, Ձիթհան (14-15 դդ.), «Թուխ Մանուկ» մատուռ (16-17 դդ.), գետի աջ և ձախ ափերին՝ ջրաղացների համալիր: Ժամանակին գյուղում կար Սբ. Պողոս անունով հին կիսավեր եկեղեցի:

Ծակքարի բնական կամուրջ

Գյուղում թեպետ հնություններ չեն պահպանվել, սակայն հայտնի է, որ բավական հին է եղել և կոչվել է Կռականձն կամ Կռակիձ: Աշոտ Ա-ն նախքան թագավորելը Ծակքար գետում ձուկ բռնելու արտոնությունը շնորհել է Սևանի վանքի միաբանությանը:

Ծակքարից հյուսիս-արևմուտք՝ Բախտակ գետակի ափին, հայտնաբերվել է հելլենիստական ժամանակաշրջանի բնակատեղի, որի մոտակայքում բացվել են կարասային թաղումներով քարարկղային դամբարաններ: Գյուղի հյուսիսային մասի գերեզմանոցում գտնված միջնադարյան նյութերը թույլ են տալիս ենթադրելու, որ VII - VIII դդ այդ տարածքում եղել է խոշոր բնակավայր: 1957 թվականին Ծակքարում գտնվել է Արտաշես Ա-ի սահմանաքարերից մեկը:

Ծակքարի Սբ. Աստվածածին եկեղեցի (ժամ)

Գեղարքունիքի մարզի Ծակքար գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 18 հուշարձան (7 միավոր)

Զորագյուղ,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, ձգվում է Գեղամա լեռների արևելյան փեշերին՝ ծովի մակերևույթից 2000 մետր բարձրության վրա, մայրաքաղաքից՝ 120 կմ, մարզկենտրոնից՝ 30 կմ, միջպետական մայրուղուց՝4 կմ հեռավորությամբ: Սահմանակից է Ծակքար, Ծովասար և Վարդաձոր բնակավայրերին: Վարչական տարածքը՝ 5881.89 հա:

Մինչև 1950-60-ական թվականները գյուղը հիմնականում տարածվում էր Շողվագ և Շոռ /աղի/ գետերի ափերին: Այժմ գյուղը դուրս է եկել ձորից ու տարածվել շրջակա հարթավայրերում:

Գյուղն ունի տնտեսական, քաղաքական ու մշակութային հարուստ պատմություն: Շողագայի մասին առաջին անգամ մատենագրություններում հանդիպում ենք 980-ական թվականներին Հովհաննես 6-րդ կաթողիկոս Դթասխանակերտցու պատմությունում: Շողագան կամ Շողվագը /հայերեն մեկնաբանությամբ ,,Շողեր հագած,,/ պարսիկներից գնում է Սյունյաց Մարիամ իշխանուհին և որպես սեփական կալվածք նվիրում է իր իսկ հովանավորչությամբ կառուցված եկեղեցուն: Այդ եկեղեցու բակում էլ իր պատգամով մահից հետո ամփոփվում է իշխանուհու մարմինը:

Գյուղում գործում է Մասրուց Անապատ եկեղեցին, որը ավելի հին պատմություն ունի: Այն բարեբախտաբար քիչ է վնասվել և այժմ ամբողջովին վերականգնվել է ու ծառայում է հավատացյալ բնակչությանը:

Շողագայի պատմությունը ձգվում է մինչև 1826թ., երբ պարսիկները գյուղը վերաբնակեցնում են մահմեդականներով և այն անվանափոխում ,,Վալի-Աղալու,, /Վայլաղալու/: Իսկ երբ 1831թ. գյուղը վերաբնակեցվում է Ալաշկերտի Չլկանի գյուղից գաղթաց այսօրվա ձորագյուղցիների նախնիներով, մահմեդականները հեռանում են, բայց գյուղի անունը պահպանվում է մինչև 1921թ.:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	450մմ
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C)	-6.0^{0}C
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C)	+25.0^{0}C

Գյուղն ունի գլխավոր հատակագիծ:

Զորագյուղում գործում է մշակույթի տունը, մսուր-մանկապարտեզը, բուժամբուլատորիան, հիմնական և ավագ դպրոցները, կապի հանգույցը, գրադարանը:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019թ. հունվարի 1-ի տվյալների բնակավայրի բնակչության թվաքանակը 4743 մարդ է:

Համայնքի բնակչությունը հիմնականում զբաղված է անասնապահությամբ, հողագործությամբ և արտագնա աշխատանքով:

Գեղարքունիքի մարզի Զորագյուղ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 281 հուշարձան (22 միավոր):

Մադինա,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում: Գտնվում է ծովի մակերևույթից 2200 մետր բարձրության վրա՝ Արմաղան լեռան արևելյան մասում: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 130 կմ, մարզկետրոնից՝ 40 կմ, միջպետական մայրուղուց՝12 կմ: Վարչական տարածքը՝ 7326.81 հա:

Կլիման ձմռանը ցրտաշունչ է, ձյունառատ ու երկարատև, ամեռը կարող է տևել մինչև 5 ամիս, ամառը զով է ու առողջարար: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին -28 ^{0}C է, հուլիսին՝ +34 ^{0}C, մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը՝ 666 մմ:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Գյուղի արևելյան մասով է հոսում Արգիճի գետը: Վերաբնակեցվել է 1925-30 թթ. Ներքին Գետաշենից (Ներքին Աղյամանից) տեղափոխված մի քանի ընտանիքներով (նրանց նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ և Մուշ գավառներից):

Տները քարակերտ են, թեք տանիքներով: 1897 թ ունեցել է 346, 1926 թ՝ 85, 1939 թ՝ 517, 1959 թ՝ 799, 1970 թ՝ 1034, 1979 թ՝ 861 բնակիչ:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019թ. հունվարի 1-ի տվյալների բնակավայրի բնակչության թվաքանակը 1124 մարդ է:

Բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է՝ անասնապահություն և հողագործություն: Հիմնական մշակաբույսը կարտոֆիլն է:

Գյուղն ունի դպրոց, մշակույթի տուն, բուժ.-կետ, փոստ, գրադարան: Գյուղապետարանը տեղակայված է մշակույթի տան շենքում:

Դպրոց են հաճախում 132 աշակերտ:

Տնային տնտեսությունների թիվը՝ 279, գյուղացիական տնտեսությունների թիվը՝ 270: Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 1162 գլուխ, մանր եղջերավորները՝ 1547 գլուխ, խոզերի քանակը՝ 103:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 31 հազ. մ^2՝ բաղկացած 185 անհատական բնակելի տներից:

Արդյունաբերական ձեռնարկություններ չկան:

Գյուղը գազաֆիկացված է, ունի 2 գերեզմանատուն՝ 1.8 հա մակերեսով, և աղբավայր:

Գեղարքունիքի մարզի Մադինա գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 18 հուշարձան (11 միավոր):

Ներքին Գետաշեն

Ն. Գետաշեն բնակավայրը տեղակայված է Գեղարքունիքի մարզի հարավային մասում: Այն Մարտունու տարածաշրջանի գյուղերից է, գտնվում է Մարտունուց 2 կմ հյուսիս-արևմուտք՝ Արգիճի գետի ափին՝ Սևանա լճից ոչ հեռու, հեռավորությունը մարզկենտրոնից 30 կմ է : Վարչական տարածքը՝ 2578.49 հա:

Գյուղը նախկինում Աղիաման անվան տակ ընդգրկված է եղել Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում:

Բնակավայրը հյուսիսից սահմանակից է Սևան ազգային պարկին, արևելքից Մարտունի քաղաքին, հարավից՝ Գեղհովիտ համայնքին, հարավ-արևմուտքից Վ. Գետաշեն համայնքին, հույսիս – արևմուտքից Լիճք գյուղական համայնքին:

Բնակավայրի տարածքով անցնում են Մ-4՝ Մարտունի-Երևան միջպետական ավտոճանապարհի 2,7կմ հատվածը, Մարտունի- Ն. Գետաշեն-Վ. Գետաշեն միջհամայնքային ճանապարհի 3.5կմ հատվածը և Մարտունի-Երևան միջպետական ավտոճանապարհից բնակավայր մտնող 800 մ հատվածը: Բնակավայրի տարածքով հոսում է Արգիճի գետը /51կմ/:

Ժամանակակից գյուղը հիմնադրվել 1828-1829 թվականներին Արևմտյան Հայաստանի Ալաշկերտի Թոփրախկալա գյուղից, ինչպես նաև Մուշից գաղթած հայերի կողմից:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019թ. հունվարի 1-ի տվյալների բնակավայրի բնակչության թվաքանակը 8821 մարդ է:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ:

Գյուղում գործում են 2 միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, կապի բաժանմունք, բուժկետ, գրադարան: Ներքին Գետաշենի տեղում եղել է դեռևս 9-րդ դարից հայտնի Կոթ գյուղաքաղաքը, որը 9-10-րդ դարերում առևտրական կարևոր հանգույց էր Դվին-Պարտավ քարավանային ճանապարհի վրա, ինչպես նաև Բագրատունիների արքունական ձկնորսարանը: Գյուղը և նրա շրջակայքը հարուստ են հնություններով: Գյուղի կենտրոնում գտնվում են Սբ. Գրիգոր Լուսավորիչ (19 դ.) և Սբ. Վարդան (9-10 դդ.) եկեղեցիները, Սբ. Ամենափրկիչ մատուռը (12-13 դդ.): Գյուղի արևմտյան կողմում՝ բլրի վրա, գտնվում են նշանավոր Կոթավանքը կամ Կոթի Սբ. Աստվածածին եկեղեցին (9 դ.), բազմաթիվ խաչքարեր: Գյուղի մոտ կան նաև դամբարանադաշտ, միջնադարյան գյուղատեղի և 11-13-րդ դարերի «Իշխանհատիկ» եկեղեցին:

Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 419 հուշարձան (13 միավոր):

Վաղաշեն,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, Մարտունի քաղաքից դեպի արևելք, Սևանա լճից 2 կմ հարավ, ծովի մակարդակից 1930-2020 մ բարձրության վրա: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 134 կմ, մարզկենտրոնից՝ 35 կմ, միջպետական մայրուղուց՝ 1 կմ: Վարչական տարածքը՝ 6185.53 հա: Սահմանակից է Մարտունի, Գեղհովիտ և Աստղաձոր համայնքներին:

Վաղաշեն համայնքի կլիման բնորոշվում է բարեխառն տաք: Լիճը զգալիորեն մեղմացնում է ձմռան սառնամանիքը և ամռան շոգը: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -32 աստիճան, հուլիսին՝ +34, մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը՝ 500 մմ:

Գյուղի հին անունը Բար է, որը մոռացություն է մատնվել բռնագաղթի և ավերվածությունների հետևանքով: Բարը Սյունիք աշխարհի Գեղարքունիք գավառի գյուղերից մեկն է եղել: Բանավոր զրույցների համաձայն գյուղն Ավդալաղալու է կոչվել խաշնարած քրդի անունով: Վերաբնակիչները, չիմանալով գյուղի հին անունը, այդպես էլ կոչել են իրենց նոր բնակավայրը:

Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միավորելուց հետո, գյուղն Ավդալաղալու անունով մտել է Հայկական մարզի Երևանի գավառի, ապա՝ 1849 թ. նոր ձևավորված Երևանի նահանգի Նոր Բայազետ գավառի մեջ: 1935 թ. Հայաստանի կառավարության հրամանագրով վերանվանվել է Վաղաշեն:

Հայաստանը խորհրդայնացվելուց հետո գյուղը Նոր Բայազետի գավառի Մարտունու գավառամասի կազմում էր: 1930 թվականին հանրապետությունը շրջանների բաժանելուց հետո, Մարտունու շրջանի գյուղերից էր:

Գյուղն ունի գլխավոր հատակագիծ:

Բնակչությունը միատարր է: Համայնքը կազմված է 1587 տնային տնային տնտեսություններից

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019թ. հունվարի 1-ի տվյալների բնակավայրի բնակչության թվաքանակը 4147 մարդ է:

Գյուղն ունի դպրոց, մանկապարտեզ, գրադարան:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 145 հազ. մ^2՝ բաղկացած 705 անհատական բնակելի տներից:

Գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են հողագործությունը և անասնապահությունը: Հիմնականում մշակվում է կարտոֆիլ, կաղամբ և հացահատիկ: Գյուղատնտեսական արտադրանքի հիմնական սպառումն իրականացվում է Երևանում, ԼՂՀ-ում և Հայաստանի այլ մարզերում

Գյուղը գազաֆիկացված է, ունի գերեզմանատուն, աղբավայր չունի:

Գյուղը փռված է հազարամյակների հնություն ունեցող դամբարանադաշտի վրա: տարածքում պահպանվել են «Սլոյի կող» և «Քրդի կող» հնավայրերը, որոնցից առաջինը Վաղաշենից հեռու է 1 կմ, երկրորդը՝ 2 կմ: Բնակատեղիների հետքեր են պահպանվել Աղլներ կոչվող վայրում, որոնք ևս կիկլոպյան կառույցներ են անտաշ քարերից՝ օղակաձև շարված պարսպով:

Գեղարքունիքի մարզի Վաղաշեն գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 72 հուշարձան (11 միավոր):

Վարդաձոր,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, գտնվում է Սևանա լճից 3 կմ հարավ-արևմուտք, ծովի մակերեվույթից 2000-2030 մ բարձրության վրա: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 120 կմ, մարզկենտրոնից՝ 30 կմ: Համայնքի տարածքով անցնում է Մ-10 Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության և Երանոս-Ծակքար միջհամայնքային նշանակության ճանապարհները: Գյուղից վերև Սպիտակասար լեռն

է՝ իր բարձրաբերձ գագաթով, լանջերով ու սառնորակ աղբյուրներով: Սահմանակից է Երանոս և Զորագյուղ համայնքներին: Վարչական տարածքը՝ 3321.42 հա:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է և տևական, ամռանը՝ զով: Միջին ջերմաստիճանը հուլիսին +18 °C, օդի հարաբերական խոնավությունը՝ 45-60 %, քամու միջին արագությունը՝ 3.0-6.0 մ/վ, իսկ ձմեռը շատ ցուրտ է, քամոտ, խոնավ: Հունվարին միջին ջերմաստիճանը՝ -5° C –ից մինչև -12 °C, մթնոլորտային տեղումների քանակը տարեկան՝ 489-492 մմ:

Գյուղը նախկինում անվանվել է Ադամխան (Աթամխան) և ընդգրկվել է Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում: Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները եկել են 1828թ.-ին, այսինքն 190 տարի առաջ: Բնակիչների նախնիները եկել են Ալաշկերտից և Մուշից, 1828-1829 թվականներին: 1831 թ. գյուղում բնակվում էր 161 հոգի՝ բոլորը հայ:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019թ. հունվարի 1-ի տվյալների բնակավայրի բնակչության թվաքանակը 2817 մարդ է:

Ունի միջնակարգ դպրոց, ակումբ, 2 գրադարան, կապի բաժանմունք, մանկապարտեզ, բուժկայան:

Գյուղը գազաֆիկացված է, ունի գերեզմանատուն և աղբավայր:

Բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված է «Սևան» ազգային պարկի 202.77 հա հատվածը, հատվածում ընդգրկված Ազգային պարկի տնտեսական գոտին անտառապատ է, ռեկրեացիոն գոտում ռելիեֆը հարթ է, կլիմայական և բնական պայմանները բարենպաստ են:

Գեղարքունիքի մարզի Վարդաձոր գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 69 հուշարձան (16 միավոր)

Վարդենիկ,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հարավային ափին՝ հարակից հարթավայրում, Վարդենիս գետի ափին: Ռելիեֆը կտրտված է, տեղ-տեղ հարթ թույլ թեքությամբ, բաժանված ձորակով երկու մասի: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1920-2050 մ: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 143 կմ, մարզկենտրոնից՝ 45 կմ: Սահմանակից է Զոլաքար և Ծովինար բնակավայրերին: Վարչական տարածքը՝ 13675.38 հա:

Գյուղի տարածքը բնութագրվում է զով ամառով և ցուրտ ձմեռով: Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է հունվար ամսին՝ -30 աստիճան, իսկ ամենաբարձրը՝ հուլիս, օգոստոս ամիսներին՝ +33 աստիճան:

Նախկինում գյուղի տարածքում հին բնակավայր է եղել: Ըստ Ստեփանոս Օրբելյանի վկայության, գյուղը հիշատակվում է դեռևս 10-րդ դարից: Գյուղը հիմնահատակ ավերվել է Շահ Աբասի կողմից, իսկ 1770 թվականից անմարդաբնակ դարձել:

Ներկայիս գյուղը հիմնադրվել է 1828 թ., Արևմտյան Հայաստանից եկած գաղթականների կողմից: Նրանց գերակշիռ մեծամասնությունը գաղթել է Ալաշկերտից: Սկզբնական շրջանում օտարների կողմից գյուղն անվանվել է Գյոզալդարա (Գեղեցկաձոր):

1863 թ. գյուղում բացվել է պետական ծխական դպրոց: 1946 թ. դեկտեմբերի 7-ին գյուղը վերանվանվել է Վարդենիկ:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019թ. հունվարի 1-ի տվյալների բնակավայրի բնակչության թվաքանակը 8482 մարդ է:

Գյուղն ունի գլխավոր հատակագիծ:

Ներկայումս գյուղում գործում է 3 հանրակրթական դպրոց, 2 մանկապարտեզ, 1 երաժշտական դպրոց:

Գյուղում առկա է 9 բազմաբնակարան շենք և 1800 անհատական բնակելի տուն:

Գյուղացիների հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ: Գյուղն ունի 3002 գյուղացիական տնտեսություն: Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 3318 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 515 գլուխ, խոզերինը՝ 248 գլուխ:

Գյուղը գազաֆիկացված է, ունի 7 գերեզմանատուն, աղբավայր:

Գյուղում պահպանվել են 9-րդ դ. Սուրբ Աստվածածին եկեղեցին, «Իշխանավանք» սրբատեղին (13-րդ դ.) և 13-17-րդ դդ. գերեզմանոցը բազմաթիվ խաչքարերով: 3 կմ դեպի հարավ 800 մ երկարությամբ «Ավերակներ» հսկայակերտ (կիկլոպյան) ամրոցն է, որի պատերի հաստությունը մոտ 3 մ է: Ամրոցից քիչ ներքև, գետի աջ ափին կան ժայռապատկերներ, հայտնաբերված Ս.Գ. Բարխուդարյանի կողմից, 1935 թ.:

Գեղարքունիքի մարզի Վարդենիկ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 394 հուշարձան (49 միավոր):

Վերին Գետաշեն,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում:

Համայնքը գտնվում է Սևանա լճի հարավ-արևելյան հատվածում գտնվող «Արմաղան» լեռան ստորոտում: Գյուղը նախկինում Ադիաման անվանման տակ ընդգրկված է եղել Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 127 կմ, մարզկենտրոնից՝ 35 կմ, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1985 մ: Սահմանակից է Լիճք, Ն.Գետաշեն և Մադինա բնակավայրերին: Վարչական տարածքը՝ 10452.66 հա:

Գյուղի միջով հոսում է Արգիճի գետը, որը հանդիսանում է գյուղի ցանքատարածքների ոռոգման հիմնական աղբյուրը:

Գյուղից արևմուտք ընկած հատվածում Արմաղան լեռն է՝ բարձրությունը 2829 մ, որի խառնարանում կա 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ փոքր լիճ: 2009 թվականին լեռնագագաթին՝ հին մատուռի տեղում, կառուցվել է սրբատաշ, բազալտե, գմբեթավոր եկեղեցի: Արմաղանը համարվում է գյուղացիների սուրբ լեռը, որը տեղացիներն անվանում են Մաղմաղան: Հաճախ անվանում են Դիմավոր Մաղմաղան, որը լեռան սրբացրած անվանումն է, այդպես են դիմում, երբ իրենց աղոթքն են հղում առ Աստված:

Ձմեռը համայնքում տևում է 5-6 ամիս: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -30 աստիճան, հուլիսին՝ +32:

Գյուղը հիմնադրվել է 1828 թվականին Արևմտյան Հայաստանի՝ հիմնականում Ալաշկերտ գավառի Խաստուր (Հացատուր, Խացատուր) գյուղից, Մուշից և այլ բնակավայրերից գաղթած հայ ընտանիքներով:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2019թ. հունվարի 1-ի տվյալների բնակավայրի բնակչության թվաքանակը 4562 մարդ է:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 104 հազ. մ^2՝ բաղկացած 803 անհատական բնակելի տներից:

Այժմ գյուղն ունի երկու հանրակրթական դպրոց, մեկ մսուր մանկապարտեզ, մշակույթի տուն, գրադարան, բուժամբուլատորիա:

Գյուղն ունի 1357 գյուղացիական տնտեսություն: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, այգեգործությամբ և բանջարաբոստանային կուլտուրաների մշակմամբ: Խոշոր եղջերավոր անասունների թիվը կազմում է 2025 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 796 գլուխ, խոզերինը՝ 160 գլուխ:

Գյուղը գազաֆիկացված է, ունի գերեզմանատուն, աղբավայր:

1878 թվին գյուղում կառուցվել է Սուրբ Աստվածածին եկեղեցին, որի բակում թաղված է ֆիդայի՝ Վահան հազարապետի աճյունը: Գյուղից 15 կմ հարավ-արևմուտք կան՝ ՙՍպիտակ բանալի՚ (Մ.թ.ա. 1-ին հզմ), ՙՏաթև՚ (Մ.թ.ա. 2-րդ հզմ) ամրոցներ, քարայր-կացարաններ (Մ.թ.ա. 1-ին հզմ): Գյուղում կան 9-14 դդ խաչքարեր, 15-16 դդ ՙՁորի մատուռ՚ կոչվող մատուռը:

Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 53 հուշարձան (13 միավոր):

ԳԼՈՒԽ 2
ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

2.1. Սոցիալական ձեռնարկատիրություն,

Հիմնական դրույթներ

վենչուրային բիզնեսի մեթոդների օգտագործում սոցիալական, մշակութային կամ էկոլոգիական խնդիրների նորարարական որոշումների ներդրման, ֆինանսավորման, վերամշակման համար: Այս դեպքում սոցիալական ձեռնարկատիրությունը մոտենում է կամավոր (ոչ կոմերցիոն, կամավորական) սեկտորին: Սոցիալական ձեռնարկատիրության հայեցակարգը կարող է գործածական լինել կազմակերպությունների լայն շրջանակի համար, որոնք տարբեր են իրենց չափերով, հետապնդվող նպատակներով:

Եթե սովորական ձեռնարկատերերը, որպես կանոն, գնահատում են իրենց գործունեության հաջողությունը՝ կողմնորոշվելով դեպի շահույթը, եկամուտը (վաճառքների ծավալ) կամ բաժնետոմսերի արժեքը, ապա սոցիալական ձեռնարկատիրոջ համար հաջողության գլխավոր չափանիշը դառնում է «սոցիալական նվիրումը»: Շահույթը կարող է ուշադրության տակ առնվել, սակայն ոչ թե որպես ինքնանպատակ, այլ ավելի շուտ որպես հետագա առաջխաղացման միջոց կազմակերպության մշակութային կամ սոցիալական նպատակներին հասնելու համար:

Ժամանակակից հասարակությունում սոցիալական ձեռնարկատիրությունը ենթադրում է բիզնեսի վարման ալտրուիստական ձև, որը կենտրոնացած է հասարակական շահերի վրա: Ավելի պարզ ասած՝ ձեռնարկատիրությունը դառնում է սոցիալական, երբ այն փոխում է սոցիալական կապիտալն այնպես, որ այն սկսում է դրական ազդեցություն ունենալ հասարակության վրա: Այդ ազդեցությունը սոցիալական ձեռնարկատիրոջ կողմից դիտարկվում է որպես շահի ձեռքբերում, քանի որ սոցիալական ձեռնարկատիրոջ հաջողությունը կախված է մի շարք գործոններից, որոնք կապված են սոցիական փոխազդեցության հետ: Սոցիալական ձեռնարկատերերը ձգտում են վերափոխել հասարակությունն ամբողջապես, այլ ոչ թե քաղել նրանից առավելագույն շահույթ, ինչպես դասական ձեռնարկատերերը:

Հասարակության վերափոխման գործընթացում սոցիալական ձեռնարկատերերը, որպես կանոն, գործ են ունենում անմիջականորեն սուր սոցիալական խնդիրների հետ, բացի այդ՝ ձգտում են դիտարկել դրանք լայն ենթատեքստում, գիտելիքների, տեսությունների, հայեցակարգերի տարբեր ոլորտների զուգակցման կետում: Նման մոտեցումը ավելի լավ հասկացողություն է տալիս հասարակական խնդիրների արմատների մասին, թույլ է տալիս մշակել նորարարական որոշումներ և մոբիլիզացնել գոյություն ունեցող և ձեռքի տակ գտնվող ռեսուրսները հասարակության վրա առավել մեծ ազդեցության համար համաշխարհային մասշտաբով: Ինչպես մասնավոր, այնպես էլ պետական գործակալությունները ողջ աշխարհում աջակցություն են ցուցաբերում կարիքավոր խմբերին և անձանց, ընդհանուր առմամբ՝ տարեկան միլիարդներ դոլարների չափով: Նման աջակցությունը կարող է նպաստել նորարարական գաղափարների ձևավորմանն ու լայն տարածմանը

Հաշվի առնելով միջազգային փորձը սոցիալական ձեռնարկատիրության զարգացման հարցում, ինչպես նաև անցկացնելով մի շարք հանդիպումներ Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ի հայտ է բերվել ոլորտում առկա խնդիրների հաղթահարման հետևյալ փաթեթը.

1. սահմանել ձեռնարկատիրությունը որպես սոցիալական ձեռնարկատիրություն, եթե այն համապատասխանում է ստորև բերված բոլոր կետերին.

1) հիմքում ընկած է որևէ սոցիալական խնդրի լուծում և կիրառվում է «սոցիալական խնդիր – բիզնես մոդել – բիզնես լուծում – սոցիալական դրական տրանսֆորմացիա»

մոտեցումը՝ չխախտելով կանաչ մտածողության սկզբունքը, և/կամ ստեղծվել է բացառապես սոցիալապես խոցելի խավի աշխատանքային ինտեգրումն ապահովելու նպատակով, կամ աշխատողների առնվազն 40%-ը, բայց 4 հոգուց ոչ պակաս, հաշմանդամություն ունեցող մարդիկ են,

2) ստացված նվիրատվությունների և դրամաշնորհների հատկացումները չեն գերազանցում շրջանառության 30%-ը,

3) շահույթի առնվազն 50%-ը ներ է դրվում կազմակերպության զարգացումը խթանելու նպատակով և/կամ ուղղվում է կանոնադրությամբ (բացառությամբ ԱՁ-ի, ով ցանկացած այլ եղանակով նախապես հայտարարում է իր հետաքրքրության դաշտում գտնվող սոցիալական ազդեցության ուղղությունը) սահմանված սոցիալական ազդեցության ապահովմանը.

- սոցիալական ազդեցության գնահատումը ներառում է, բայց և չի սահմանափակվում հետևյալ ոլորտներով.

- մարդկանց կենսակերպը – ինչպես են ապրում, աշխատում, հանգստանում և հաղորդակցվում միմյանց հետ,
- մարդկանց մշակույթը – համոզմունքները, սովորույթները, արժեքները և լեզուն,
- համայնքը – կայունությունը, ծառայությունները և ենթակառուցվածքները,
- որոշումների կայացում – որքանով են մարդիկ իրավունակ մասնակցելու այն որոշումների կայացման հարցում, որոնք ազդում են իրենց կյանքի վրա,
- շրջակա միջավայր – օդի և ջրի որակ, սննդի հասանելիություն և որակ, վտանգների և աղետների ռիսկի մակարդակ, սանիտարական վիճակի համապատասխանություն, ֆիզիկական անվտանգություն, ռեսուրսների հասանելիություն և դրանց նկատմամբ վերահսկողություն,
- առողջություն և բարեկեցություն – առողջությունը ներկայացվում է որպես համալիր ֆիզիկական, մտավոր, սոցիալական և հոգևոր բարեկեցություն և ընկալվում է ոչ միայն, որպես հիվանդությունների բացակայություն,
- սոցիալական ազդեցության վերաբերյալ տեղեկատվությունը և հաշվետվությունը պետք է լինեն հրապարակային,

4) չի գործում սահմանված այն ոլորտներում, որոնց շրջանակներում ՍՁ-ները գործել չեն կարող, օրինակ, ծխախոտի ու ալկոհոլի արտադրություն, որսորդություն, հանքարդյունաբերություն, և այլն,

5) որդեգրել է կառավարման բարեխիղճ հիմունքներ՝ թափանցիկություն, բացություն, մասնակցային կառավարում կամ ներառական որոշումների կայացում:

2.2. Աճի բևեռներ

Ընդհանուր դրույթներ.

Աճի բևեռն ունի երեք հիմնական բաղադրիչ.

1) առաջատար ոլորտ՝ արդյունաբերություն, շարժիչ ոլորտ՝ աճի մեծ ներուժով և նորարարելու բարձր ունակությամբ,

այլ կերպ ասած ՝ մեծ բազմապատկման (մուլտիպլիկացիոն) էֆեկտ ունեցող արդյունաբերություն (այդպիսի արդյունաբերությունները երբեմն անվանում են շարժիչ).

2) տեղական նշանակության ոլորտների (արդյունաբերության) խումբ, որի հետ կապված է «մուտքային-ելքային» տիպի հարաբերությունների համակարգի միջոցով: Այս

հարաբերությունները ծառայում են որպես առաջատար արդյունաբերության ազդեցությունը ողջ տնտեսության վրա տեղափոխելու միջոց;

3) արտադրության տարածական ագլոմերացիա (համախմբում)՝ որը ձեռնարկություններին ապահովում է «արտաքին տնտեսությամբ»: Առաջանում են փոխկապակցված ազդեցությունների շարք, որոնք բարենպաստ պայմաններում կարող են մեծապես փոխել մարզերի տնտեսական միջավայրը: «Աճի բևեռը» նորարարությունների ինքնատիպ գեներացնող է (նոր համադրություններ), բայց միայն դրանց տարաբաշխումն է ապահովում զգալի տնտեսական էֆեկտ: Ուստի համակարգի ներդրման կարևորությունը ոչ միայն նորամուծությունն է, այլև դրա տարածումը ուղեկցող, թեկուզ աննշան բարելավումների, փոքր նորարարությունների մեջ:

«Աճի բևեռներ» և «ուղիներ» ստեղծելու և «ազդեցությունների ընդլայնման» տարածման համար հարցում որոշիչ դերը պատկանում է պետությանը, որը պետք է ներդաշնակեցնի զարգացումը, նվազեցնի կամ հասցնի ընդունելի մասշտաբով տարասեռությունը կամ անհավասարությունը տնտեսության, արդյունաբերության և շրջանների միջև: Աճի բևեռի ներդրումն անհրաժեշտ է վարել ներդաշնակ աճի քաղաքականություն որը, հիմնվելով ինդիկատիվ պլանավորման վրա, ապահովում է մակրո միավորների, տարբեր մարզերի և սոցիալական խմբերի շահերի համադրումը:

«Աճի բեւեռների»՝ տարածաշրջանային տեսության աճի հետագա զարգացումն ու կոնկրետացումը նկատառում է, որ արտադրության աճը միատեսակ չի կատարվում տնտեսության բոլոր ճյուղերում. Միշտ հնարավոր է առանձնացնել դինամիկ, այսպես կոչված, շարժիչ արդյունաբերությունը: Դրանք խթանում են ամբողջ տնտեսության զարգացումը՝ ներկայացնելով «զարգացման բևեռները»: «Մուտքային-ելքային» տիպի հարաբերությունների համակարգի միջոցով նորարարության ազդեցությունը փոխանցվում է ամբողջ տնտեսությանը: Արտադրության կենտրոնացման գործընթացը կենտրոնացնում է արդյունաբերությունը որոշակի կետում (տարածաշրջանում) ՝ «աճի կենտրոնում» (բևեռ):

Առաջարկվում է առանձնանել «աճի բևեռների» հետևյալ տեսակները.

- Փոքր և «դասական» քաղաքներ, որոնք մասնագիտացված են և սպասարկում են հարակից գյուղերը.
- միջին ազդեցության արդյունաբերական քաղաքներ՝ տնտեսության դիվերսիֆիկացված կառուցվածքով, որոնք զարգանում են ի հաշիվ արտաքին ազդեցությունների.
- քաղաքային խոշոր ագրոմերացիաներ, ներառյալ՝ շարժիչ արդյունաբերությունները, որոնք որոշում են աճի ինքնավարությունը, ինտեգրման բևեռները, ընդգրկելով մի քանի քաղաքային համակարգեր և կանխորոշելով տարածական կառուցվածքների ամբողջ էվոլյուցիան: Ինքնավար աճը բնորոշ է միայն կենտրոնական տեղերի վերին հիերարխիկ մակարդակներին, մինչդեռ ստորին տարածքային կառույցների աճը որոշվում է նորարարությունների տարածման մեխանիզմներով:

«Աճի բևեռների» զարգացման հետագա տարածական տեղաբաշխումն իրականացվում է զարգացման առանցքների շուրջ: Աճի բևեռների և տրանսպորտային կապեր ապահովող տարածքները լրացուցիչ աճի ազդակներ ստանան

բեռնափոխադրումների ավելացման, նորարարության տարածման և ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ: Ուստի դրանք վերածվում են զարգացման առանցքների (միջանցքների), որոնք «աճի բևեռների» հետ միասին որոշում են մեծ տարածաշրջանի կամ երկրի տնտեսական աճի տարածական շրջանակը:

Տնտեսական աճի բևեռների զարգացման գործընթացում առկա են հետևյալ առանձնահատկությունները.

1) աճի բևեռ կարող է լինել ձեռնարկությունների տարածաշրջանային համալիրը, որը կապված է տարածաշրջանի արտահանման հետ (ոչ միայն առաջատար արդյունաբերության հետ):

2) բևեռների համակարգը և դրանցից յուրաքանչյուրն անհատապես աճում են՝ տարածաշրջանի արտահանման ոլորտի միջոցով փոխանցվող համապետական պահանջարկի ազդակների հաշվին.

3) աճի ազդակը փոխանցվում է երկրորդական արդյունաբերություն ձեռնարկությունների, ինչպես նաև աշխարհագրական ծայրամասերի միջև շուկայական հարաբերությունների միջոցով:

«Նորարարության տարածում» մոդելը զարգանում է չորս փուլերով.

<u>Առաջին,</u> կամ նախնական փուլը բնութագրվում է դիֆուզիոն (տարածման) գործընթացի սկիզբով և կենտրոնների, նորարարության տարածման աղբյուրների և ծայրամասային տարածքների միջև սուր հակադրությամբ:

<u>Երկրորդում</u> սկսվում է իրական դիֆուզիան, և գործում են հզոր կենտրոնախույս ուժեր: Դա հանգեցնում է հեռավոր շրջաններում արագ զարգացող նոր կենտրոնների ձևավորմանը և առաջին փուլին բնորոշ կտրուկ տարածաշրջանային հակադրությունների կրճատմանը:

<u>Երրորդ</u> - (խտացման փուլում) նույն ընդլայնումը տեղի է ունենում բոլոր երեք մակարդակներում:

<u>Չորրորդում</u> (հագեցվածության փուլում) կա ընդհանուր, բայց դանդաղ վերելք դեպի առավելագույն զարգացում:

«Տարածական տեղաբաշխման» շատ դեպքերում փոփոխությունները չեն լինում միաժամանակ բոլոր կետերում, սովորաբար դրանք սկսվում են փոքր քանակի վայրերից, որտեղից դրանք տարածվում են այլ վայրեր՝ կապի ուղիների երկայնքով, հանգույցների միջոցով, իջնելով հիերարխիկ մակարդակներով:

Աճի բևեռների ձևավորման գործընթացում հնարավոր է նաև «հրաբուխ» մոդելի իրականացումը՝ քաղաքային խոշոր բնակավայրն իր զարգացած արդյունաբերությամբ և հզոր գիտական բազայով ունի մեկ շնչի հաշվով եկամտի ամենաբարձր մակարդակը, որն ապահովվում է նորարարության պարբերական ազդակներով: Նորարարությունների լավայի ժայթքումը նման «աճի բևեռում» աստիճանաբար տարածվում է ծայրամասերում և ուղեկցվում է հետամնաց շրջանների բարեկեցության մակարդակի աստիճանական բարձրացմամբ: Միևնույն ժամանակ, առկա է նորարարությունների ազդակների պարբերականություն, ըստ որի վաղ թե ուշ դրանք մարում են ցանկացած կենտրոնում:

Նորարարական միջավայրի վերացումը տեղի է ունենում քաղաքային ագլոմերացիաներին բնորոշ բացասական գործոնների ազդեցության ներքո և հանգեցնում է «հրաբխի մարմանը» և երբեմնի առաջադեմ կենտրոնի վերածմանը հետընթաց ապրող հին արդյունաբերական տարածքի: Միևնույն ժամանակ, տնտեսական պայմանների մեծ ցիկլերի ավարտից հետո, նորարարության նոր կենտրոններ կարող են առաջանալ:

Աճի բևեռների ներդրման հիմնական գաղափարն այն է, որ տարածական-տնտեսական զարգացումը կամ աճը միասնական չէ ողջ տարածաշրջանի համար, այլ փոխարենը ձևավորվում է հատուկ բևեռի (կամ կլաստերի) շուրջ: Նշված բևեռը բնութագրվում է տնտեսական խթանների՝ հիմնական (առանցքային)՝ արտադրությունների առկայությամբ, որոնց շուրջ զարգանում են հարակից արտադրությունները՝ հիմնական ուղղակի և անուղղակի ազդեցությունների միջոցով: Հիմնական արտադրությունը կարող է ներառել ոլորտների լայն տեսականի՝ ավտոմոբիլային, օդագնացություն, ագրոբիզնես, էլեկտրոնիկա, պողպատի, թեթև, սննդի, վերամշակման և այլն:

Ուղղակի հետևանքները նկատառում են.

- հիմնական արդյունաբերություն՝ իր մատակարարներից (հարակից մտակարար արտադրություններ) ապրանքներ և ծառայություններ գնելու կամ իր հաճախորդներին ապրանքներ և ծառայություններ տրամադրելու գործընթացը:

Անուղղակի հետևանքները կարող են ներառել.

- հիմնական և հարակից արդյունաբերության ոլորտներում աշխատող մարդկանց կողմից ապրանքների և ծառայությունների պահանջարկը (մանրածախ վաճառքը), որոնք խթանում են տնտեսական գործունեության զարգացումը և ընդլայնումը:

Աճի բևեռն ունի աշխարհագրական և տարածաշրջանային նշանակություն, քանի որ բնորոշվում է որպես քաղաքային տարածքում տեղակայված և զարգացող արտադրությունների համախումբ, որը նկատառում է տնտեսական գործունեության հետագա զարգացում իր ազդեցության ողջ գոտում: Տարածքը, որտեղ տեղակայված են «ընդլայնվող» կամ «շարժիչ» կամ «գերակայող» արտադրությունները, դառնում է տարածաշրջանի աճի բևեռը և խթանում ագլոմերացիայի միտումները:

Աճի բևեռների ձևավորման գործընթացում հարկ է առաձնացնել բևեռացման 4 հիմնական տեսակ.

- տեխնոլոգիական և տեխնիկական - հիմնված աճի բևեռում նոր տեխնոլոգիաների կենտրոնացման վրա,
- Եկամուտի վրա հիմնված. Աճի բևեռը նպաստում է կենտրոնացմանը և եկամտի աճին՝ ծառայությունների ընդլայնման և պահանջարկի ու շահույթի փոխկախվածության միջոցով,
- հոգեբանական, որը հիմնված է շարժվող տարածաշրջանում ապագա պահանջարկի լավատեսական ակնկալիքի վրա,
- աշխարհագրական, հիմնված աշխարհագրականորեն ընտրված տարածքում տնտեսական գործունեության կենտրոնացման վրա:

Այնուհանդերձ, միջազգային փորձը ոլորտում ցույց է տալիս, որ ակնկալվող արդյունքի հարցում կանխատեսումներն իրատեսական չեն:

Գյուղն աստիճանաբար կորցնում է իր գրավչությունը՝ որպես ապրելու և աշխատելու տեղ՝ գործազրկության բարձր մակարդակի և ցածր եկամուտների պատճառով: Չնայած պետության աջակցությանը, գյուղի հիմնախնդիրները դեռ լիովին լուծված չեն: գյուղական բնակավայրերում զարգացել են տնտեսական, սոցիալական և, որպես արդյունք, ժողովրդագրական բնույթի խնդիրներ: Բոլոր մակարդակների տարածքների կառավարման արդյունավետության վրա բացասաբար է անդրադառնում ինտեգրված

մոտեցման բացակայությունը, որը օբյեկտիվորեն պետք է բնութագրի գյուղական տարածքների զարգացման առանձնահատկությունները՝ կապելով դրանք գյուղական վայրերում տնտեսական, կազմակերպչական, կարգավորող և իրավական հարաբերությունների ռացիոնալացման հետ: Այս առումով անհրաժեշտ է որոշել մրցունակ տարածքի գերակա հատկանիշները, մշակել և գործնականում ներդնել գյուղական տարածքների համայնքային կառավարում՝ մրցակցային դիրքերը գնահատելու և ղեկավարելու նոր մոտեցումներով, որոնք ապահովում են գյուղական տարածքի ներդրումային և ռեսուրսային ներուժի զարգացման հիմքերը: Հետևաբար, ժամանակակից գյուղական զարգացման ծրագրերը պետք է համալրված լինեն համալիր մոտեցմամբ նախագծերով, որոնք ընդգրկում են ոչ միայն գյուղատնտեսական արտադրական ոլորտը, այլև սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքը, զբոսաշրջությունը և գործողունեության այլ տեսակներ, որոնք նպաստում են գյուղական տնտեսության արդյունավետության բարձրացմանը և գյուղական բնակավայրերում կյանքի որակի բարելավմանը:

2.3. Հողերի ռեկուլտիվացիա

Դեգրադացված են համարվում այն հողերը, որոնք մարդու ուղղակի կամ անուղղակի ազդեցությամբ կորցրել են իրենց սկզբնական տնտեսական արժեքը և բացասական աղբյուր են հանդիսանում շրջակա միջավայրի համար: Անթրոպոգեն լանդշաֆտներում մարդու ագրեսիվ ճնշման հետևանքով ոչնչացվել է բուսականությունը, փոփոխվել են մակերևույթային շերտի հիդրոլոգիական ռեժիմները և տեղանքի ռելիեֆը, ոչնչացվել կամ աղտոտվել է հողային ծածկոցը: Հողերի ռացիոնալ օգտագործումն ու պահպանումը պետք է իրականացնեն բոլոր շահառուները՝հողօգտագործողները, հողատերերը, վարձակալները: Ռեկուլտիվացիայի (վերականգնում) տեսակները՝ Գյուղատնտեսական: Իրականացվում է աշխատանքների այնպիսի համալիր, որպեսզի հողերը հնարավոր լինի օգտագործել գյուղատնտեսական նպատակով: Անտառային: Քայքայված հողերի օգտագործում անտառների տնկման և էրոզիայի դեմ պայքարելու նպատակով: Ջկնատնտեսային: Վերականգնված հողային տարածքներում ջրամբարների կառուցում ձկների բուծման նպատակով

Ջրատեսային: Վերականգնված հողային տարածքների վրա տարբեր նպատակներով ջրամբարների ստեղծում: Ռեկրեացիոն: Ռեկուլտիվացված հողերի վրա հանգստյան և զբոսաշրջային վայրերի ստեղծում: Շինարարական: Խախտված և քայքայված հողերի վերականգնում մինչև այն աստիճան ,որ հնարավոր լինի դրանք օգտագործել շինարարական նպատակներով: Հողերի ռեկուլտիվացիան իրականցվում է հատուկ սահմանված կարգով՝ հողային աշխատանքների հետ միասին կամ ոչ ուշ, քան հողային աշխատանքների ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում:

Հողերի ռեկուլտիվացիան կատարվում է 2 փուլով՝

2. Տեխնիկական — նախատեսվում է պլանավորում, ակոսների ձևավորում, բերրի հողաշերտի հանում և տեղափոխում, հիդրոտեխնիկական և մելիորատիվ կառույցների կառուցում, թունավոր նյութերի խորը թաղում, ինչպես նաև այլ աշխատանքների իրականացում՝ հետագայում ռեկուլտիվացված հողերի նպատակային օգտագործման համար:
3. Կենսաբանական — ներառում է ագրոտեխնիկական և ֆիտոմելիորատիվ միջոցառումների համալիր, որոնք ուղղված են ագրոֆիզիկական, կենսաբանաքիմիական և հողի այլ հատկությունների բարելավմանը:

Հողերի բերրի շերտի հանված մասն օգտագործվում է խախտված հողերի ռեկուլտիվացիայի կամ ցածր բերրիություն ունեցող հանդակների բարելավման համար: Բերրի հողաշերտի այլ նպատակով օգտագործումը, որը կապված չէ գյուղական և անտառային տնտեսության հետ, թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում, երբ

տնտեսապես նպատակահարմար չէ կամ բացակայում է գյուղատնտեսական նշանակության և անտառային ֆոնդի հողերի բարելավման նպատակով օգտագործման հնարավորությունը: Դեգրադացված հողերի ռեկուլտիվացիայի մեթոդները և նպատակները. Հողերի ռեկուլտիվացիայի նպատակն է վերականգնել առաջնային նշանակության հողատարածքները, որոնք դուրս են մնացել գյուղատնտեսության բնագավառում օգտագործումից: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ճիշտ կազմակերպման համար պետք է անցկացնել հողի որակական գնահատում՝ սահմանված բալերով, որոնք արտահայտում են հողի բերրիության մակարդակը տվյալ տնտեսության համար, որը հնարավորություն է տալիս ռացիոնալ օգտագործել երկրի հողային ֆոնդը և պլանավորված կերպով բարձրացնել հողի բերրիությունը: ՀՀ հողային ծածկույթի յուրօրինակությունը, տարբեր հողատիպերի առկայությունը և խոնավացման տարբեր աստիճանները պահանջում են ռեկուլտիվացիոն միջոցառումների տեխնոլոգիաների տարբերակում:

- Բույսերի նորմալ կենսագործունեության համար հողի ներքին հատկությունների փոփոխում՝ստեղծելով
- բարենպաստ ջրաօդային ռեժիմ մելիորատիվ գործունեության միջոցով,
- հողերի թթվայնության օպտիմալ վիճակ՝ կրայնացմամբ,
- հողում հումուսի բավարար պաշարի և սնուցման համար անհրաժեշտ տարրերի օպտիմալ քանակության ապահովություն հանքային և օրգանական պարարտանյութերի ներմուծման ճանապարհով

2. Հողատարածքների վիճակների բարելավում
3. Միջոցառումներ, որոնք կնպաստեն հողի բերրիության բարձրացմանը Հողերի բերրիության բարձրացման մեթոդներն են՝

- կենսաբանական — հողում օրգանական նյութերի առաջացման և քայքայման գործընթացների կարգավորում, մշակաբույսերի ճիշտ ընտրություն, ցանքաշրջանառության ճիշտ կազմակերպում,
- քիմիական — հանքային պարարտանյութերի, կրային և կավային հողերի օգտագործործում, որոնք ապահովում են հողի բերրիություն
- ֆիզիկական — հողի ագրոֆիզիկական հատկությունների կառուցվածք, խտություն, ծակոտկենության և հերկվող շերտի կառուցվածքային վիճակի փոփոխություն: Ռեկուլտիվացիայի ավելի արդյունավետ արդյունքներ են ստացվում նշված երեք մեթոդների զուգակցումից:

2.4. Հողերի պահպանություն

ՀՀ-ում հողի պահպանությունյան գլխավոր ուղղությունը էրոզիայի դեմ պայքարն է, որի նպատակն է պաշտպանել հողի վերին բերրի շերտը դեգրադացումից և հողատարումից: Հողի պահպանության միջոցառումներից ամենակարևորը հողբարելավումն է (մոտ 30 տեսակ՝ հատկապես ագրոանտառամելիորացիան, երբ ստեղծվում են դաշտապաշտպան անտառաշերտեր, կատարվում է զառիթափ լանջերի, ձորակներ և ավազուտների անտառապատում: Ագրոանտառամելիորացիան լավ արդյունք տալիս հատկապես տափաստանային և անտառատափաստանային զոնաներում:), տարածված եղանակներից՝ հողածածկումը, ոռոգումը, աղակալած հողերի քիմական լվացումը և այլն:

Հողի ինտեսնսիվ էրոզիայի պատճառներից է արոտավայրերի գերարածեցումը, երբ խախտվում է հավասարակշռությունը արածեցման արագության և բուսականության

վերաճի միջև: Ի վերջո, ամբողջովին ոչնչանում է բուսածածկը և հսկայական հողատարածքներ վերածվում են անապատների: Հակաէրոզիոն և բարելավման միջոցառումների շարքում առանձնանում են հետևյալ առավել կարևորները.

- Առաջավոր ագրոտեխնիկան
- Հողաբարելավումը
- Հողերի վերականգնումը
- Պայքարը հողերի աղտոտման դեմ

Ագրարային ոլորտում ուղենշային փաստաթղթերից են Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը, որում նախանշվում են ագրարային քաղաքականության հիմնական ուղղությունները և դրանց իրականացումն ապահովող միջոցառումները: Միաժամանակ ռազմավարությամբ սահմանվում են գյուղատնտեսության ոլորտի գերակայությունները:

Գյուղատնտեսական հողերը խնայողական օգտագործելու նպատակով հարկ է կայուն գյուղատնտեսության կիրառում, որը ներառում է շահեկան արտադրական տարածքները, էկոլոգիական միջավայրը, տեղական և ընդհանուր տնտեսական շահերը, նախորոք մտածելով ապագա սերնդի լիակատար անվտանգության մասին: Կայուն գյուղատնտեսության ապահովման համար անհրաժեշտ է վերահսկել հողի որակը նրա ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկությունները մշտադիտարկումների միջոցով:

Գյուղատնտեսական արտադրության բարելավմանն ու խրախուսմանը նպատակաուղղված համակարգ է նաև օրգանական գյուղատնտեսությունը, որը հողի բարելավումը դիտարկում է որպես հիմնական առանցք՝ որակյալ, էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրության գործում: Օրգանական գյուղատնտեսությունը այնպիսի համակարգ է, որտեղ չեն կիրառվում տոքսիկ նյութեր, կայուն պեստիցիդներ, քիմիական պարարտանյութեր, դրա փոխարեն օգտագործվում են օրգանական պարարտանյութեր (հիմնականում՝ գոմաղբ) և վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարն իրականացվում է միայն բուսական պատրաստուկներով, իսկ օրգանական սննդամթերքի արտադրության մեջ չեն կիրառվում արհեստական նյութեր և ճառագայթում: Օրգանական սննդամթերքում սննդարար նյութերի քանակը մինչև 3 անգամ ավելի շատ է, քան ավանդական գյուղատնտեսության՝ թունանյութերի և հանքային պարարտանյութերի կիրառմամբ աճեցված բերքի մեջ: Օրգանական սննդամթերքի ամենամեծ արժեքն այն է, որ այն անվտանգ է առողջության համար, ավելի շատ վիտամիններ, հանքային աղեր և այլ սննդարար տարրեր է պարունակում, զերծ է վնասակար քիմիկատներից, որոնք վերամշակված սննդամթերքում օգտագործվում են որպես սննդային, համային հավելումներ և կոնսերվանտներ, բացի դա այն ապահովում է մարմնի նորմալ քաշ, բարենպաստ ազդեցություն ունի մարդու ընդհանուր առողջության վրա, զերծ լինելով քիմիական նյութերից և հավելումներից օգտակար է հատկապես երեխաների համար: Օրգանական սննդամթերք օգտագործելիս ավելի քիչ է վտանգավոր հիվանդություններով վարակվելու հավանականությունը, քանի որ այս սննդամթերքում ավելի քիչ կարելի է հանդիպել վնասակար միկրոօրգանիզմներ: Օրգանական գյուղատնտեսության զարգացումը մեծ կարևորություն ունի էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրության համար, որին նպաստում է նաև պահանջարկի աճը:

Հողի հարատևությունը պայմանավորված է գյուղատնտեսական արտադրության մեջ նրա անվնաս օգտագործման գործընթացներով՝ դեգրադացիայի բացառում և բերրիության պահպանում և լավացում, ջրերի մաքրության, մարդկանց և կենդանիների առողջության աշտպանություն: Այս կերպ, հողը եկող սերունդներին «կփոխանցվի», որանք էլ այն կօգտագործեն այն նույն պայմաններում, ինչպիսին էր իրենց նախնիների կողմից օգտագործման ժամանակ, և իրենք էլ իրենց հերթին հաջորդ սերունդներին կհանձնեն այն, նույն լավ վիճակով: Կայուն գյուղատնտեսությունը բնութագրվում է բազմաոլորտ արտադրական գործունեությամբ, բուսաբուծությունը ուղղակի կապի մեջ է կենդանաբուծության հետ: Գյուղատնտեսության այս համակարգում ինտենսիվ, արդյունավետ և մրցունակ արտադրական արդյունքներով գործունեություն ծավալելու համար պարտադիր պետք է կատարվեն շատ պայմաններեր, այն է՝

- մշակաբույսերի մեծ բազմազանությունը: Բազմամյա մշակաբույսերը օգտագործվում են անասունների համար, բայց նաև հողի կառուցվածքի բարելավվման և պահպանման համար: Լոբազգի մշակաբույսերը, նպաստում են հողում ազոտի հավասարակշռմանը: Միջանկյալ մշակաբույսեր (տնկվում են հիմնական բերքը հավաքելուց հետո), որոնք հողը պաշտպանում են մակերեսային ֆիզիկական դեգրադացիայից և մարդածին գործոններից,
- կենդանական ծագման օրգանական պարարտանյութերի օգտագործումը, նախընտերի է գոմաղբը, հանքային պարարտանյութերի հետ համատեղ, հողի բերրիությունը պահպահովելու և նրան ու մշակաբույսերին սննդատարրերով հավասարակշռված սնուցելու նպատակով: Կիրառվող պարարտանյութերի չափաբաժինները որոշվում են հողում սննդատարրերի հավասարակշռությունը ապահովվելուն ուղղված հաշվարկների հիման վրա, որոնք կատարվում են հողի ագրոքիմիական վերլուծության միջոցով: Այս գործունեությունը պարտադիր է գերչափաբաժիններից խուսափելու (հատկապես, ազոտի) համար, արտադրական ծախսերը նվազեցնելու և շրջակա միջավայրը աղտոտումից պաշտպանելու համար,
- բույսերի կենսաբանական պաշտպանությունը և պրոֆիլակտիկ միջոցների լայնածավալ օգտագործումը, քիմիական նյութերի օգտագործման հնարավոր սահմանափակումը շատ կարևոր են գյուղատնտեսական մշակաբույսերը մոլախոտից զերծ պահելու և դրանց տարածումը կանխելու համար, ինչպես նաև բարձրացնում են այդ նպատակով արվող մեխանիկական աշխատանքների որակը,
- հողի մշակման բոլոր աշխատանքները օպտիմալ ժամանակահատվածում կատարելու (հողում ջրի պարունակության կախվածությունը իրականացվող աշխատանքների խորությունից), բերքահավաքի և տեղափոխման համար, պետք է հաշվի առնվեն հողի վիճակի այն պայմանները, որոնք հարմար են այդ աշխատանքները կատարելու համար (ծանրաբեռնվածությունը մեխանիզմի առջևի առանցքի վրա, անվադողերում ճնշման մեծությունը, դրանց քանակը), որպեսզի հողը պաշտպանվի ֆիզիկական քայքայումից,
- արոտավայրերի վերահսկվող համակարգի հասնելու միջոցով ռացիոնալ շահագործման և բնական խոտածածկի ու մարգագետինների և տարածքների էրոզիայի ենթակա տեղամասերի պահպանությունը պետք է համահունչ լինի արտադրողականության բարձրացման ձգտման հետ: Անասնապահության թափոնները պետք է այնպես վերամշակվեն, որ աղտոտումը հասցվի նվազագույնի: Կենդանիների թիվն պետք է փոխհամատեղելի լինի հողի այն մակերեսի հետ, որը հնարավոր կլինի մշակել օրգանական պարարտանյութերով, այնպես, որ դրանցում ազոտի չափաբաժինը չգերազանցի 170 կգ N / հա՝ ֆերմաները տեղաբախշելիս հարկավոր է հաշվի առնել

էկոհամակարգերի պաշտպանության և պահպանության, կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև այդ տարածքի սոցիալական և տնտեսական ասպեկտներին առնչվող հարցերը: Կայուն գյուղատնտեսությունը գյուղական շրջանների համար լավագույն տարբերակ է լուծելու համար իրենց տնտեսական, սոցիալական և բնապահպանական խնդիրները:

Գյուղատնտեսության հանդեպ ակտիվ քաղաքականության համատեքստում ակտիվորեն քարոզվում է հատկապես հողերի խոշորացման ու կոոպերացիայի զարգացման գործընթացը, մշակվել են այս գործընթացի իրագործման օրենսդրական ու նորմատիվային հիմքերը: 2011թ. տարբեր մարզերում արդեն ստեղծվել են գյուղատնտեսական կոոպերատիվներ, սակայն դեռևս վաղ է դրանց արդյունավետության մասին խոսելը, քանի որ վերջնական կայացման ու զարգացման համար պահանջվում է տևական ժամանակ: Գործընթացի ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ այն միայն տնտեսական հիմքեր չէ, որ ունի: Գյուղացիությունը բավականին բարդ, շարժունակ, ներքին բազմազանություն ունեցող համակարգ է, հետևաբար արմատական փոփոխությունների հաջողությունը հնարավոր է ապահովել միայն համալիր, այդ թվում՝ սոցիալ-մշակութային գործոնների հաշվառմամբ:

Հողերի խոշորացումն ու կոոպերացիայի զարգացումը կարող են դառնալ կարևոր քայլ ճգնաժամի հաղթահարման ու գյուղատնտեսության զարգացման ճանապարհին:

Իշխանությունները, ըստ էության, հայտարարել են գյուղատնտեսական քաղաքականության նոր գերակայությունների մասին՝ հողերի խոշորացման ու գյուղատնտեսական կոոպերացիայի խթանում, գյուղատնտեսական գործունեության արդյունավետության աճ, մթերումների հիմնախնդիրների լուծում, գյուղացիական տնտեսություններին մատչելի գներով սերմացուի, պարարտանյութերի, վառելիքի մատակարարում և այլն:

2.4. *Բնակավայրերի հեռանկարային զարգացման ցուցանիշներ*[1]

Միկրոռեգիոնի բնակավայրերի տարածքներում բարենպաստ և ենթակառուցվածքներով ու հանրային տարածքներով հագեցած կենսամիջավայրի ձևավորմանն ուղղված կատարվել են հողատեսքերի մի շարք նպատակային և գործառնական փոփոխություններ, որոնք արտացոլված են ստորև ներկայացվող նպատակային նշանակությունների փոփոխությունների աղյուսակներում: Փոփոխությունները ներկայացված են ըստ գերակայությունների՝ առաջնահերթ, միջնաժամկետ և հեռանկարային: Դրանց համապատասխան կատարվել են նաև փոփոխություններ հողատեսքերի հաշվետվություններում, ինչն արտացոլված է տեխնիկատնտեսական ցուցանիշների աղյուսակներում:

Աստղաձոր

[1] ***Ենթակառուցվածքների (կապի հեռարձակման կայանքների) հետագա անխափան շահագործումն ապահովելու նպատակով առաջարկվում է հողերի նպատակային նշանակությունների փոփոխությունների ժամանակ հաշվի առնել վերոնշյալ պահանջը:***

«Գեղարքունիք-3» *միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները				
Հողամասի N գծագրի վրա	**Առկա նպատակային և գործառնական նշանակությունը**	**Մակերեսը (հա)**	**Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը**	**Մակերեսը (հա)**
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				
	Բնակավայրերի հողերից՝			
			Բնակավայրերի	
ԲԲ-1	*Այլ հողեր*	**0.23**	*Բնակելի կառուցապատման*	**0.23**
ԲԲ-2	*Այլ հողեր*	**0.35**	*Բնակելի կառուցապատման*	**0.35**
ԲԲ-3	*Այլ հողեր*	**0.49**	*Բնակելի կառուցապատման*	**0.49**
ԲԲ-4	*Այլ հողեր*	**0.33**	*Բնակելի կառուցապատման*	**0.33**
ԲԲ-5	*Այլ հողեր*	**0.74**	*Բնակելի կառուցապատման*	**0.74**
ԲԲ-6	*Այլ հողեր*	**0.37**	*Բնակելի կառուցապատման*	**0.37**
ԲԲ-7	*Այլ հողեր*	**0.24**	*Բնակելի կառուցապատման*	**0.24**
ԲԲ-8	*Այլ հողեր*	**0.51**	*Բնակելի կառուցապատման*	**0.51**
ԲԲ-9	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	**0.12**
ԲԲ-10	*Այլ հողեր*	**0.4**	*Բնակելի կառուցապատման*	**0.4**
ԲԲ-11	*Այլ հողեր*	**0.39**	*Բնակելի կառուցապատման*	**0.39**
ԲԲ-12	*Այլ հողեր*	**0.14**	*Բնակելի կառուցապատման*	**0.14**
ԲԲ-13	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	**0.12**
ԲԲ-14	*Այլ հողեր*	**0.13**	*Բնակելի կառուցապատման*	**0.13**
ԲԲ-15	*Այլ հողեր*	**0.62**	*Բնակելի կառուցապատման*	**0.62**
ԲԲ-16	*Այլ հողեր*	**0.3**	*Բնակելի կառուցապատման*	**0.3**
ԲԲ-17	*Այլ հողեր*	**0.28**	*Բնակելի կառուցապատման*	**0.28**
ԲԲ-18	*Այլ հողեր*	**0.25**	*Բնակելի կառուցապատման*	**0.25**
ԲԲ-19	*Այլ հողեր*	**0.64**	*Բնակելի կառուցապատման*	**0.64**
ԲԲ-20	*Այլ հողեր*	**0.53**	*Բնակելի կառուցապատման*	**0.53**
ԲԲ-21	*Այլ հողեր*	**0.08**	*Բնակելի կառուցապատման*	**0.08**
ԲԲ-22	*Այլ հողեր*	**0.23**	*Բնակելի կառուցապատման*	**0.23**
ԲԲ-23	*Այլ հողեր*	**0.37**	*Բնակելի կառուցապատման*	**0.37**
ԲԲ-24	*Այլ հողեր*	**0.48**	*Բնակելի կառուցապատման*	**0.48**
ԲԲ-25	*Այլ հողեր*	**0.78**	*Բնակելի կառուցապատման*	**0.78**
ԲԲ-26	*Այլ հողեր*	**0.25**	*Բնակելի կառուցապատման*	**0.25**
ԲԲ-27	*Այլ հողեր*	**0.25**	*Բնակելի կառուցապատման*	**0.25**
ԲԲ-28	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	**0.12**
ԲԲ-29	*Այլ հողեր*	**0.13**	*Բնակելի կառուցապատման*	**0.13**
ԲԲ-30	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	**0.12**
ԲԲ-31	*Այլ հողեր*	**0.36**	*Բնակելի կառուցապատման*	**0.36**
ԲԲ-32	*Այլ հողեր*	**0.48**	*Բնակելի կառուցապատման*	**0.48**
ԲԲ-33	*Այլ հողեր*	**0.13**	*Բնակելի կառուցապատման*	**0.13**
ԲԲ-34	*Բնակելի կառուցապատման*	**0.037**	*Հասարակական կառուցապատման*	**0.037**
ԲԲ-35	*Բնակելի կառուցապատման*	**0.044**	*Հասարակական կառուցապատման*	**0.044**
ԲԲ-36	*Այլ հողեր*	**0.03**	*Բնակելի կառուցապատման*	**0.03**
ԲԲ-37	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	**0.12**

ԲԲ-38	*Այլ հողեր*	**0.05**	*Հասարակական կառուցապատման*	**0.05**
ԲԲ-39	*Բնակելի կառուցապատման*	**0.018**	*Հասարակական կառուցապատման*	**0.018**
ԲԲ-40	*Բնակելի կառուցապատման*	**0.04**	*Հասարակական կառուցապատման*	**0.04**
ԲԲ-41	*Բնակելի կառուցապատման*	**0.025**	*Հասարակական կառուցապատման*	**0.025**
ԲԲ-42	*Այլ հողեր*	**0.13**	*Հասարակական կառուցապատման*	**0.13**
ԲԲ-43	*Բնակելի կառուցապատման*	**0.028**	*Հասարակական կառուցապատման*	**0.028**
ԲԲ-44	*Այլ հողեր*	**0.28**	*Բնակելի կառուցապատման*	**0.28**
ԲԲ-45	*Այլ հողեր*	**0.24**	*Բնակելի կառուցապատման*	**0.24**
ԲԲ-46	*Այլ հողեր*	**0.16**	*Բնակելի կառուցապատման*	**0.16**
ԲԲ-47	*Այլ հողեր*	**0.14**	*Բնակելի կառուցապատման*	**0.14**
ԲԲ-48	*Այլ հողեր*	**0.06**	*Բնակելի կառուցապատման*	**0.06**
ԲԲ-49	*Այլ հողեր*	**0.1**	*Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ*	**0.1**
ԲԲ-50	*Բնակելի կառուցապատման*	**0.015**	*Հասարակական կառուցապատման*	**0.015**
Ընդհանուր		**12.477**		
	Բնակավայրերի հողերից՝			
			Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	
ԲԱ-1	*Բնակելի կառուցապատման*	**0.63**	*Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների*	**0.63**
Ընդհանուր		**0.63**		
	Բնակավայրերի հողերից՝			
			էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ԲԷ-1	*Այլ հողեր*	**0.048**	*Կոմունալ ենթակառուցվածքների*	**0.048**
ԲԷ-2	*Բնակելի կառուցապատման*	**0.058**	*Կոմունալ ենթակառուցվածքների*	**0.058**
ԲԷ-3	*Բնակելի կառուցապատման*	**0.01**	*Կոմունալ ենթակառուցվածքների*	**0.01**
Ընդհանուր		**0.116**		
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ԳԷ-1	*Արոտ*	**0.1**	*Կապի*	**0.1**
ԳԷ-2	*Այլ հողեր*	**1.15**	*Կոմունալ ենթակառուցվածքների*	**1.15**
ԳԷ-3	*Խոտհարք*	**1.4**	*էներգետիկայի*	**1.4**
Ընդհանուր		**2.65**		

			Բնակավայրերի	
ԳԲ-1	*Վարելահող*	**0.21**	*Հասարակական կառուցապատման*	**0.21**
ԳԲ-2	*Վարելահող*	**0.3**	*Հասարակական կառուցապատման*	**0.3**
Ընդհանուր		**0.51**		
	Հատուկ պահպանվող տարածքներից			
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ՀԷ-1	*Պատմական և մշակութային (գերեզմանոց)*	**6.6**	*Կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոցներ)*	**6.6**
Ընդհանուր		**6.6**		
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից			
			Բնակավայրերի հողեր	
ԱԲ-1	*Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների*	**0.03**	*Հասարակական կառուցապատման*	**0.03**
ԱԲ-2	*Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների*	**0.09**	*Հասարակական կառուցապատման*	**0.09**
ԱԲ-3	*Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների*	**0.02**	*Հասարակական կառուցապատման*	**0.02**
Ընդհանուր		**0.14**		
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Բնակավայրերի հողերից՝			
			Բնակավայրերի	
ԲԲ-51	*Այլ հողեր*	**0.11**	*Բնակելի կառուցապատման*	0.11
ԲԲ-52	*Այլ հողեր*	**0.11**	*Բնակելի կառուցապատման*	0.11
ԲԲ-53	*Այլ հողեր*	**0.33**	*Բնակելի կառուցապատման*	0.33
ԲԲ-54	*Այլ հողեր*	**0.36**	*Բնակելի կառուցապատման*	0.36
ԲԲ-55	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	0.12
ԲԲ-56	*Այլ հողեր*	**0.13**	*Բնակելի կառուցապատման*	0.13
ԲԲ-57	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	0.12
ԲԲ-58	*Այլ հողեր*	**0.23**	*Բնակելի կառուցապատման*	0.23
ԲԲ-59	*Այլ հողեր*	**0.13**	*Բնակելի կառուցապատման*	0.13
ԲԲ-60	*Այլ հողեր*	**0.36**	*Բնակելի կառուցապատման*	0.36
ԲԲ-61	*Այլ հողեր*	**0.22**	*Խառը կառուցապատման*	0.22
ԲԲ-62	*Այլ հողեր*	**0.36**	*Բնակելի կառուցապատման*	0.36
ԲԲ-63	*Այլ հողեր*	**0.13**	*Բնակելի կառուցապատման*	0.13
ԲԲ-64	*Այլ հողեր*	**0.24**	*Բնակելի կառուցապատման*	0.24
ԲԲ-65	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	0.12
ԲԲ-66	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	0.12
ԲԲ-67	*Այլ հողեր*	**0.34**	*Բնակելի կառուցապատման*	0.34
ԲԲ-68	*Այլ հողեր*	**0.09**	*Ընդհանուր օգտագործման*	0.09
ԲԲ-69	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	0.12

ԲԲ-70	*Այլ հողեր*	**0.14**	*Բնակելի կառուցապատման*	0.14
ԲԲ-71	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	0.12
ԲԲ-72	*Այլ հողեր*	**1.8**	*Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ*	1.8
ԲԲ-73	*Այլ հողեր*	**0.17**	*Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ*	0.17
Ընդհանուր		***5.97***		
Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)				
	Բնակավայրերի հողերից՝			
			Բնակավայրերի	
ԲԲ-74	*Այլ հողեր*	**0.4**	*Խառը կառուցապատման*	0.4
ԲԲ-75	*Այլ հողեր*	**0.25**	*Բնակելի կառուցապատման*	0.25
ԲԲ-76	*Այլ հողեր*	**0.2**	*Խառը կառուցապատման*	0.2
ԲԲ-77	*Այլ հողեր*	**0.18**	*Խառը կառուցապատման*	0.18
ԲԲ-78	*Այլ հողեր*	**0.62**	*Խառը կառուցապատման*	0.62
ԲԲ-79	*Այլ հողեր*	**0.36**	*Բնակելի կառուցապատման*	0.36
ԲԲ-80	*Այլ հողեր*	**0.71**	*Բնակելի կառուցապատման*	0.71
ԲԲ-81	*Այլ հողեր*	**0.38**	*Բնակելի կառուցապատման*	0.38
ԲԲ-82	*Այլ հողեր*	**0.13**	*Բնակելի կառուցապատման*	0.13
ԲԲ-83	*Այլ հողեր*	**0.27**	*Բնակելի կառուցապատման*	0.27
ԲԲ-84	*Այլ հողեր*	**0.65**	*Բնակելի կառուցապատման*	0.65
ԲԲ-85	*Այլ հողեր*	**0.11**	*Բնակելի կառուցապատման*	0.11
ԲԲ-86	*Այլ հողեր*	**0.21**	*Բնակելի կառուցապատման*	0.21
ԲԲ-87	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	0.12
ԲԲ-88	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	0.12
ԲԲ-89	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	0.12
ԲԲ-90	*Այլ հողեր*	**0.11**	*Բնակելի կառուցապատման*	0.11
ԲԲ-91	*Այլ հողեր*	**0.15**	*Բնակելի կառուցապատման*	0.15
ԲԲ-92	*Այլ հողեր*	**0.12**	*Բնակելի կառուցապատման*	0.12
Ընդհանուր		***5.21***		

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ				
Ցուցանիշը	**Չափման միավորը**	**Փաստացի**	**Առաջնահերթ**	**Հեռանկարային**
1	2	3	4	5
Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	**հա**	**2946.1**	**2946.1**	**2946.1**
Բնակավայրերի հողեր, որից՝	**հա**	**362.45**	**362.354**	**362.354**
բնակելի կառուցապատման	հա	254.36	265.445	272.945
հասարակական կառուցապատման	հա	2.64	3.677	3.677
խառը կառուցապատման	հա		0	1.62
ընդհանուր օգտագործման,	հա	*29.27*	29.37	29.46
Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	հա		*0*	*1.97*

այլ տարածքներ	հա		*0*	*0*
այլ հողեր	հա	76.18	63.862	52.682
Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝	**հա**	**20.29**	**20.78**	**20.78**
արդյունաբերական օբյեկտների	հա	12.55	12.55	12.55
գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	7.74	8.23	8.23
պահեստարանների	հա		0	0
ընդերքի օգտագործման	հա		0	0
Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	**հա**	**28.08**	**37.446**	**37.446**
էներգետիկայի	հա	24.03	25.43	25.43
կապի	հա	0	0.1	0.1
տրանսպորտի	հա	4.05	4.05	4.05
կոմունալ ենթակառուցվածքների	հա	0	7.866	7.866
Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	**հա**	**124.62**	**118.02**	**118.02**
բնապահպանական	հա	106.71	106.71	106.71
հանգստի համար նախատեսված	հա		0	0
պատմական և մշակութային	հա	17.91	11.31	11.31
Հատուկ նշանակության հողեր	**հա**	**0**	**0**	**0**
Գյուղատնտեսական նշանակության հողեր,	հա	**2402.84**	**2399.68**	**2399.68**
վարելահող	հա	739.84	739.33	739.33
բազմամյա տնկարկներ	հա	*0*	*0*	*0*
խոտհարքներ	հա	180.76	179.36	179.36
արոտավայր	հա	1289.56	1289.46	1289.46
այլ հողատեսքեր	հա	192.68	191.53	191.53
Անտառային հողեր	հա	**0**	**0**	**0**
Ջրային հողեր	հա	**7.82**	**7.82**	**7.82**
գետեր	հա		0	0
ջրամբարներ	հա		0	0
լճեր	հա		0	0
ջրանցքներ	հա	7.82	7.82	7.82
հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա	0	0	0

Ծակքար

«Գեղարքունիք-3» *միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները				
ԲԲ-5	*Այլ հողեր*	**0.095**	*Բնակելի կառուցապատման*	**0.095**
ԲԲ-6	*Բնակելի կառուցապատման*	**0.31**	*Հասարակական կառուցապատման*	**0.31**
Ընդհանուր		**1.355**		
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Հատուկ պահպանվող տարածքների	
ԳՀ-1	*Արոտ*	**2.5**	*Պատմական և մշակութային*	**2.5**
ԳՀ-2	*Այլ հողատեսքեր*	**4.85**	*Պատմական և մշակութային*	**4.85**

ԳՀ-3	*Արոտ*	**54.2**	*Պատմական և մշակութային*	**54.2**
ԳՀ-4	*Այլ հողատեսքեր*	**10.4**	*Պատմական և մշակութային*	**10.4**
ԳՀ-5	*Այլ հողատեսքեր*	**0.35**	*Պատմական և մշակութային*	**0.35**
Ընդհանուր		**72.3**		
	Հատուկ պահպանվող տարածքների			
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	
ՀԷ-1	*Պատմական և մշակութային (գերեզմանոց)*	**2.2**	*Կոմունալ ենթակառուցվածքների (գերեզմանոցներ)*	**2.2**
Ընդհանուր		**2.2**		
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Բնակավայրերի հողերից՝			
			Բնակավայրերի	
ԲԲ-7	*Այլ հողեր*	**0.18**	*Բնակելի կառուցապատման*	0.18
ԲԲ-8	*Այլ հողեր*	**0.17**	*Բնակելի կառուցապատման*	0.17
ԲԲ-9	*Այլ հողեր*	**0.47**	*Բնակելի կառուցապատման*	0.47
Ընդհանուր		**0.82**		
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Ջրային	
ԳՋ-1	*Խոտհարք*	**3**	*Հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.*	3
Ընդհանուր		**3**		

	Տեխնիկատնտեսական ցուցանիշներ				
	Ցուցանիշը	**Չափման միավորը**	**Փաստացի**	**Առաջնահերթ**	**Հեռանկարային**
	1	2	3	4	5
	Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	**հա**	**6206.69**	**6206.69**	**6206.69**
	Բնակավայրերի հողեր, որից՝	**հա**	**527.46**	**527.46**	**527.46**
	բնակելի կառուցապատման	հա	447.72	447.365	448.185
	հասարակական կառուցապատման	հա	7.74	8.1	8.1
	խառը կառուցապատման	հա		0.52	0.52
	ընդհանուր օգտագործման,	հա	*47.81*	47.81	47.81
	ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	հա		*0*	*0*
	այլ տարածքներ	հա		*0*	*0*
	այլ հողեր	հա	24.19	23.665	22.845
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝	**հա**	**19.37**	**19.37**	**19.37**

	արդյունաբերական օբյեկտների	հա	0.36	0.36	0.36
	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	11.04	11.04	11.04
	պահեստարանների	հա	0.6	0.6	0.6
	ընդերքի օգտագործման	հա	7.37	7.37	7.37
	էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	**հա**	**11.88**	**14.08**	**14.08**
	էներգետիկայի	հա	4.75	4.75	4.75
	կապի	հա	0	0	0
	տրանսպորտի	հա	4.04	4.04	4.04
	կոմունալ ենթակառուցվածքների	հա	3.09	5.29	5.29
	Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	**հա**	**244.75**	**314.85**	**314.85**
	բնապահպանական	հա	202.87	202.87	202.87
	հանգստի համար նախատեսված	հա		0	0
	պատմական և մշակութային	հա	41.88	111.98	111.98
	Հատուկ նշանակության հողեր	**հա**	**0**	**0**	**0**
	Գյուղատնտեսական նշանակության հողեր,	հա	**5379.62**	**5307.32**	**5304.32**
	վարելահող	հա	1318.88	1318.88	1318.88
	բազմամյա տնկարկներ	հա		*0*	*0*
	խոտհարքներ	հա	549.49	549.49	546.49
	արոտավայր	հա	2001.2	1944.5	1944.5
	այլ հողատեսքեր	հա	1510.05	1494.45	1494.45
	Անտառային հողեր	հա	**8.14**	**8.14**	**8.14**
	Ջրային հողեր	հա	**15.47**	**15.47**	**18.47**
	գետեր	հա	6.75	6.75	6.75
	ջրամբարներ	հա	0.03	0.03	0.03
	լճեր	հա		0	0
	ջրանցքներ	հա	6.09	6.09	6.09
	հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա	2.6	2.6	5.6

Վարդաձոր

Հողամասի N գծագրի վրա	**Առկա նպատակային և գործառնական նշանակությունը**	**Մակերեսը (հա)**	**Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը**	**Մակերեսը (հա)**
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				
	Բնակավայրերի հողեր, որից՝			
			Բնակավայրերի	
ԲԲ-1	*այլ հողեր*	**0.043**	հասարակական կառուցապատման	**0.043**
ԲԲ-2	*այլ հողեր*	**0.312**	բնակելի կառուցապատման	**0.312**
ԲԲ-3	*այլ հողեր*	**0.28**	բնակելի կառուցապատման	**0.28**
Ընդհանուր		**0.635**		

	Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝			
			էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	
ՀԷ-1	պատմական և մշակութային	**1.883**	կոմունալ ենթակառուցվածքների/ գերեզմանոց/	**1.883**
ՀԷ-2	պատմական և մշակութային	**0.503**	կոմունալ ենթակառուցվածքների/ գերեզմանոց/	**0.503**
ՀԷ-3	պատմական և մշակութային	**6.304**	կոմունալ ենթակառուցվածքների/ գերեզմանոց/	**6.304**
ՀԷ-4	պատմական և մշակութային	**8.966**	կոմունալ ենթակառուցվածքների/ գերեզմանոց/	**8.966**
Ընդհանուր		**17.656**		
	Գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝			
			Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	
ԳՀ-1	վարելահող	**10.391**	պատմական և մշակութային	**10.391**
ԳՀ-2	վարելահող	**1.532**	պատմական և մշակութային	**1.532**
Ընդհանուր		**11.923**		
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝			
			Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	
ԱՀ-1	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	**3.586**	պատմական և մշակութային	**3.586**
Ընդհանուր		**3.586**		
Միջնաժամկեր միջոցառումներ (5-10 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողեր, որից՝			
			էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	
ԳԷ-1	արոտավայր	**1.768**	կոմունալ ենթակառուցվածքների/ գերեզմանոց/	**1.768**
Ընդհանուր		***1.768***		

	Տեխնիկատնտեսական ցուցանիշներ				
	Ցուցանիշը	**Չափման միավորը**	**Փաստացի**	**Առաջնահերթ**	**Հեռանկարային**
	1	2	3	4	5
	Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում	**հա**	**3321.42**	**3321.42**	**3321.42**

	ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը				
	Բնակավայրերի հողեր, որից՝	**հա**	**235.2**	**235.2**	**235.2**
	բնակելի կառուցապատման	հա	185.58	186.172	186.172
	հասարակական կառուցապատման	հա	2.45	2.493	2.493
	խառը կառուցապատման	հա		0	0
	ընդհանուր օգտագործման,	հա	*21.98*	21.98	21.98
	Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	հա		*0*	*0*
	այլ տարածքներ	հա		*0*	*0*
	այլ հողեր	հա	25.19	24.555	24.555
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝	**հա**	**19.94**	**16.354**	**16.354**
	արդյունաբերական օբյեկտների	հա	7.99	7.99	7.99
	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	10.4	6.814	6.814
	պահեստարանների	հա		0	0
	ընդերքի օգտագործման	հա	1.55	1.55	1.55
	էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	**հա**	**4.76**	**22.416**	**24.184**
	էներգետիկայի	հա	0.06	0.06	0.06
	կապի	հա		0	0
	տրանսպորտի	հա	3.6	3.6	3.6
	կոմունալ ենթակառուցվածքների	հա	1.1	18.756	20.524
	Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	**հա**	**258.07**	**255.923**	**255.923**
	բնապահպանական	հա	202.77	202.77	202.77
	հանգստի համար նախատեսված	հա		0	0
	պատմական և մշակութային	հա	55.3	53.153	53.153
	Հատուկ նշանակության հողեր	**հա**	**0**	**0**	**0**
	Գյուղատնտեսական նշանակության հողեր,	հա	**2793.94**	**2782.017**	**2780.249**
	վարելահող	հա	560.79	548.867	548.867
	բազմամյա տնկարկներ	հա		*0*	*0*
	խոտհարքներ	հա	76.77	76.77	76.77
	արոտավայր	հա	1635.74	1635.74	1633.972
	այլ հողատեսքեր	հա	520.64	520.64	520.64
	Անտառային հողեր	հա	**0**	**0**	**0**
	Ջրային հողեր	հա	**9.51**	**9.51**	**9.51**
	գետեր	հա	0.55	0.55	0.55
	ջրամբարներ	հա		0	0

	լճեր	hա	1.48	1.48	1.48
	ջրանցքներ	hա	4.55	4.55	4.55
	հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	hա	2.93	2.93	2.93

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ		Գեղարքունիք-3. Ընդհամենը		ք.Մարտունի		Զորագյուղ		Երանոս		Մադինա		Աստղաձոր		Վաղաշեն		Զոլաքար		Ծակքար	
Ցուցանիշը	Չափման միավորը	**Փաստացի**	**Հեռանկարային**	Փաստացի	Հեռանկարային	Փաստացի	Հեռանկարային	Փաստացի	Հեռանկարային	Փաստացի	Հեռանկարային	Փաստացի	Հեռանկարային	Փաստացի	Հեռանկարային	Փաստացի	Հեռանկարային	Փաստացի	Հեռանկարային
Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	հա	**104305.65**	**104305.65**	**4514.14**	**4514.14**	**5881.89**	**5881.89**	**5335.78**	**5335.78**	**7326.81**	**7326.81**	**2946.1**	**2946.1**	**6185.53**	**6185.53**	**6206.69**	**6206.69**	**3849.2**	**3849.2**
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	հա	**6657,97**	**6877,464**	**602.71**	**674.6353**	**476.38**	**488.644**	**431.06**	**431.272**	**139.58**	**144.83**	**362.45**	**362.214**	**288.42**	**294.93**	**527.46**	**527.46**	**288.59**	**316.93**
բնակելի կառուցապատման	հա	4818,64	5085,9121	409.29	423.5741	312.67	325.611	323.03	323.761	95.87	101.99	254.36	272.825	229.69	239.798	447.72	448.185	187.33	222.78
հասարակական կառուցապատման	հա	138,25	164,04	43.98	48.9475	4.38	4.38	6.79	6.79	2.46	2.586	2.64	3.563	3.98	4.72	7.74	8.1	9.38	13.45
խառը կառուցապատման	հա	0,89	70,8993	0.85	68.7193	0.04	0.04		0		0		1.62		0		0.52		0
ընդհանուր օգտագործման,	հա	677,37	682,0637	93.98	93.6627	52.67	52.67	38.37	38.37	12.94	13.066	29.27	29.36	33.45	33.493	*47.81*	47.81	26.54	27.2
Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	հա	0	15,9233		2.4133		0		0		*0*		0		0		*0.61*		12.72
այլ տարածքներ	հա	0	0		0		0		0		*0*		0		0		*0*		0
այլ հողեր	հա	1022,82	857,1664	54.61	37.3184	106.62	105.943	62.87	62.351	28.31	27.188	76.18	52.776	21.3	16.919	24.19	22.845	65.34	40.78
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ	**հա**	**632,57**	**565,3741**	**84.79**	**74.9251**	**58.47**	**56.458**	**35.52**	**35.52**	**44.51**	**39.26**	**20.29**	**20.92**	**17.22**	**17.98**	**19.37**	**19.37**	**16.56**	**14.98**

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝																		
արդյունաբերական օբյեկտների	հա	141,87	125,699	65.68	50.575		0	3.09	3.09		0	12.55	12.55	1.4	1.4	0.36	0.36	1.07	0.68
գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	392,30	351,0869	15.92	22.2439	7.88	6.826	32.43	32.43	44.51	39.26	7.74	8.37	15.82	16.58	11.04	11.04	7.75	6.56
պահեստարանների	հա	12,95	4,6137	3.19	2.6237		0		0		0		0		0	0.6	0.6		0
ընդերքի օգտագործման	հա	85,45	84,492		0	50.59	49.632		0		0		0		0	7.37	7.37	7.74	7.74
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	**հա**	**203,7**	**328,8444**	**19.93**	**37.4384**	**5.18**	**19.003**	**12.06**	**20.842**	**15.72**	**17.6**	**28.08**	**37.446**	**7.87**	**9.45**	**11.88**	**11.88**	**11.81**	**14.28**
Էներգետիկայի	հա	80,03	84,175	1.45	1.45	0.61	0.61	2.03	2.03	5.87	5.87	24.03	25.43	0.03	0.03	4.75	4.75	0.4	0.4
կապի	հա	0,51	0,491	0.29	0.29		0	0.12	0.001		0	0	0.1	0	0	0	0		0
տրանսպորտի	հա	95,08	95,08	8.04	8.04	1.51	1.51	8.33	8.33	9.85	9.85	4.05	4.05	4.84	4.84	4.04	4.04	10.44	10.44
կոմունալ ենթակառուցվածքների	հա	28,08	149,0984	10.15	27.6584	3.06	16.883	1.58	10.481		1.88	0	7.866	3	4.58	3.09	3.09	0.97	3.44
ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	**հա**	**4155,06**	**4249,8767**	**310.09**	**307.1259**	**269.76**	**293.951**	**531.49**	**560.042**	**22.23**	**20.35**	**124.62**	**118.02**	**194**	**192.42**	**244.75**	**317.05**	**99.01**	**98.13**
բնապահպանական	հա	3373,61	3356,21	246.5	246.5	214.4	214.4	502.52	502.52		0	106.71	106.71	174.94	174.94	202.87	202.87	92.85	92.85
հանգստի համար նախատեսված	հա	19,4	42,5983	13.17	18.1983		0		0		0		0	0	0		0	4.21	4.98
պատմական և մշակութային	հա	762,05	851,0684	50.42	42.4276	55.36	79.551	28.97	57.522	22.23	20.35	17.91	11.31	19.06	17.48	41.88	114.18	1.95	0.3
ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	**հա**	**1,47**	**1,5215**	**1.47**	**1.5215**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**		**0**
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	**հա**	**91933,62**	**91527,731**	**3425.73**	**3318.2767**	**5059.63**	**5011.36**	**4309.85**	**4272.397**	**7035.05**	**7035.05**	**2402.84**	**2399.68**	**5560.75**	**5553.6**	**5379.62**	**5304.32**	**3413.51**	**3385.16**

վարելահող	հա	13907,438	13761,9937	746.35	702.9867	948.86	919.014	1068.64	1068.64	1151.62	1151.62	739.84	739.33	465.3	458.7	1318.88	1318.88	400.73	386.62
բազմամյա տնկարկներ	հա	15,16	18,86		0		0		0		*0*	0	0	15.16	15.16		*0*		0
խոտհարքներ	հա	11175,07	11177,52	205.24	205.24	466.62	466.62	252.5	252.5	1789.07	1789.07	180.76	179.36	185.6	185.05	549.49	546.49	404.88	404.88
արոտավայր	հա	54618,816	54509,8677	1569.96	1569.96	2904.16	2894.848	1620.72	1609.6	2630.96	2630.96	1289.56	1289.46	3881.89	3881.89	2001.2	1944.5	2129.94	2129.92
այլ հողատեսքեր	հա	12217,136	12059,5015	904.18	840.09	739.99	730.882	1367.99	1341.657	1463.4	1463.4	192.68	191.53	1012.8	1012.8	1510.05	1494.45	477.96	463.74
ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐ	**հա**	**288,21**	**319,4888**	**44.47**	**75.7488**	**0**	**0**	**0**	**0**		**0**	**0**	**0**	**97.42**	**97.42**	**8.14**	**8.14**		**0**
ՋՐԱՅԻՆ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	**հա**	**433,06**	**435,3453**	**24.95**	**24.4683**	**12.47**	**12.47**	**15.8**	**15.707**	**69.72**	**69.72**	**7.82**	**7.82**	**19.85**	**19.73**	**15.47**	**18.47**	**19.72**	**19.72**
գետեր	հա	306,38	306,38	18.67	18.67	10.75	10.75		0	67.41	67.41		0	6.12	6.12	6.75	6.75	8.11	8.11
ջրամբարներ	հա	0,15	0,15		0		0		0		0		0		0	0.03	0.03		0
լճեր	հա	13,9	13,9		0		0		0	1.16	1.16		0	4.3	4.3		0	6.96	6.96
ջրանցքներ	հա	91,02	90,9	4.94	4.94	1.71	1.71	14.76	14.76	1.12	1.12	7.82	7.82	9.24	9.12	6.09	6.09	2.59	2.59
հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա	21,61	24,0153	1.34	0.8583	0.01	0.01	1.04	0.947	0.03	0.03	0	0	0.19	0.19	2.6	5.6	2.06	2.06

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ		**Գեղհովիտ**		**Լիճք**		**Ն.Գետաշեն**		**Վարդենիկ**		**Ծովասար**		**Վարդաձոր**		**Վ. Գետաշեն**	
Ցուցանիշը	Չափման միավորը	Փաստացի	Հեռանկարային	Փաստացի	Հեռանկարային	Փաստացի	Հեռանկարային	Փաստացի	Հեռանկարային	Փաստացի	Հեռանկարային	Փաստացի	Հեռանկարային	Փաստացի	Հեռանկարային
Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	հա	**15402.25**	**15402.25**	**9164.71**	**9164.71**	**2578.49**	**2578.49**	**13675.38**	**13675.38**	**7464.6**	**7464.6**	**3321.42**	**3321.42**	**10452.66**	**10452.66**
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	հա	**593**	**593.614**	**544.92**	**581.47**	**778.95**	**783.755**	**672.68**	**714.11**	**276.61**	**283.24**	**235.20**	**235.20**	**439.96**	**445.16**
բնակելի կառուցապատման	հա	486.8	488.704	461.23	516.02	482.10	490.052	475.43	544.42	154.39	182.47	185.58	186.172	313.15	319.55
հասարակական կառուցապատման	հա	4.7	4.7	8.79	9.11	20.06	26.60	14.55	21.59	2.65	3.67	2.45	2.49	3.70	3.34
խառը կառուցապատման	հա		0		0		0		0		0		0		0
ընդհանուր օգտագործման,	հա	62.74	62.74	55.94	55.94	69.63	70.522	71.31	74.15	28.68	28.68	21.98	21.98	32.06	32.42
Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	հա		0		0		0.18		0		0		0		0
այլ տարածքներ	հա		0		0		0		0		0		0		0
այլ հողեր	հա	38.76	37.47	18.96	0.4	207.16	196.401	111.39	73.95	90.89	68.42	25.19	24.555	91.05	89.85
ԱՐՏՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐ	**հա**	**83.05**	**75.05**	**21.83**	**22.46**	**48.01**	**40.627**	**132.83**	**110.15**	**9.6**	**5.94**	**19.94**	**16.354**	**20.58**	**15.38**

ՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝															
արդյունաբերական օբյեկտների	հա	0.65	0.65	4.14	4.14	37.24	36.394	5.3	5.47	2.27	2.27	7.99	7.99	0.13	0.13
գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	69.89	61.89	17.32	17.95	1.98	3.21	121.84	98.99	7.33	3.67	10.40	6.81	20.45	15.25
պահեստարանների	հա		0	0.37	0.37	8.79	1.02		0.00		0.00		0.00		0.00
ընդերքի օգտագործման	հա	12.51	12.51		0		0	5.69	5.69		0.00	1.55	1.55		0
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	**հա**	**47.96**	**67.206**	**10.09**	**19.78**	**8.04**	**7.985**	**15.87**	**19.01**	**0.31**	**1.91**	**4.76**	**24.184**	**4.14**	**20.83**
էներգետիկայի	հա	29.89	29.89	3.83	4.98	0.29	0.295	6.54	8.13	0.16	0.16	0.06	0.06	0.09	0.09
կապի	հա	0.04	0.04	0.06	0.06		0		0		0.00		0		0
տրանսպորտի	հա	18	18	5.19	5.19	7.65	7.65	7.36	7.36		0.00	3.60	3.60	2.18	2.18
կոմունալ ենթակառուցվածքների	հա	0.03	19.276	1.01	9.55	0.10	0.04	1.97	3.52	0.15	1.75	1.10	20.52	1.87	18.56
ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	**հա**	**170.68**	**152.41**	**757.93**	**753.29**	**641.74**	**650.49**	**455.2**	**473.4748**	**30.7**	**29.10**	**258.07**	**255.923**	**44.79**	**28.1**
բնապահպանական	հա		0	709.19	691.79	592.18	592.18	328.68	328.68		0.00	202.77	202.77		0.00
հանգստի համար նախատեսված	հա		0	0	17.4		0	2.02	2.02		0.00		0		0
պատմական և մշակութային	հա	170.68	152.41	48.74	44.1	49.56	58.31	124.50	142.7748	30.70	29.10	55.30	53.15	44.79	28.10
ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	**հա**		**0**		**0**		**0**		**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	**հա**	**14455.74**	**14462.15**	**7796.61**	**7754.38**	**1079.84**	**1073.733**	**12193.79**	**12153.6252**	**7125.07**	**7122.10**	**2793.94**	**2780.249**	**9901.65**	**9901.65**
վարելահող	հա	1096.2	1096.2	1096.08	1076.598	539.05	533.34	1877.61	1863.71	1025.73	1025.73	560.79	548.87	871.76	871.76
բազմամյա տնկարկներ	հա		0		0		0		3.7		0.00		0		0
խոտհարքներ	հա	1428.51	1435.91	1158.95	1158.95	13.97	13.97	1047.74	1047.74	1228.26	1228.26	76.77	76.77	2186.71	2186.71
արոտավայր	հա	10893.71	10892.72	4937.22	4930.0	470.00	469.61	8213.52	8192.1877	4091.74	4091.74	1635.74	1633.972	6348.50	6348.50
այլ հողատեսքեր	հա	1037.32	1037.32	604.37	588.84	56.82	56.82	1054.92	1046.2875	779.34	776.37	520.64	520.64	494.68	494.68
ԱՆՏԱՌԱՅԻՆ ՀՈՂԵՐ	**հա**		**0**	**0.03**	**0.03**		**0**	**138.15**	**138.15**		**0**	**0**	**0**		**0**
ՋՐԱՅԻՆ ՀՈՂԵՐ, ՈՐԻՑ՝	**հա**	**51.82**	**51.82**	**33.3**	**33.3**	**21.92**	**21.90**	**66.86**	**66.86**	**22.31**	**22.31**	**9.51**	**9.51**	**41.54**	**41.54**
գետեր	հա	49.63	49.63	30.24	30.24	19.1	19.1	35.65	35.65	18.26	18.26	0.55	0.55	35.14	35.14
ջրամբարներ	հա		0		0	0.12	0.12		0		0.00		0		0
լճեր	հա		0		0		0		0		0.00	1.48	1.48		0
ջրանցքներ	հա	2.03	2.03	1	1	2.68	2.68	26.18	26.18	4.05	4.05	4.55	4.55	2.26	2.26
հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա	0.16	0.16	2.06	2.06	0.02	0	5.03	5.03		0.00	2.93	2.93	4.14	4.14

2.1.ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

2.1.1. Ջրամատակարարում

Մինչև 2011 թվականը մարզի քաղաքային համայնքներում ջրամատակարարումն իրականացվում էր օրական 2-4 ժամ: 2011-2015 թվականներին «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն միջազգային ներդրումների հաշվին կառուցվեց շուրջ 805 կմ երկարության խմելու ջրի ջրագծեր, որի արդյունքում մարզի բնակչության 57%-ը (հիմնականում քաղաքային համայնքներում բնակվող) ապահովված է 24 ժամյա ջրամատակարարումով, իսկ 43%-ը ըստ ջրամատակարարման Ժամանակացույցի:

Մարտունի քաղաքի ջրամատակարարման համակարգը սնվում է «Ծակքարի» և «Հոպոյի վար» աղբյուրակապերից՝ ինքնահոս եղանակով:

Մարտունի քաղաքում ՀՀ կառավարության կողմից տրամադրված միջոցների հաշվին 2019թ. իրականացվել է յոթ կիլոմետր ընդհանուր երկարությամբ ջրամատակարարման եւ ջրահեռացման ցանցերի կառուցում: Քաղաքի յոթ թաղամասերում բացակայում էին թե ջրահեռացման, թե խմելու ջրի մատակարարման ներքին ցանցերը: Ջրահեռացման ցանցերը միացվել են կոյուղու ընդհանուր ցանցին, որն իր հերթին միանում է մաքրման կայանին: Այսուհանդերձ, քաղաքի առանձին թաղամասերի ջրահեռացման ու ջրամատակարարման ոլորտներում դեռ մնում են որոշակի խնդիրներ, որոնք կարգավորման կարիք ունեն :

Ըստ “Վեոլիա ջուր” ընկերության 21.11.19 թ. N ՄԾ/31078 գրությամբ տրամադրված տեղեկատվության վերոնշյալ ընկերության կողմից սպասարկվում են Մարտունի քաղաքը և Լիճք, Ներքին Գետաշեն գյուղական բնակավայրերը, մնացած բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի շահագործումն իրականացվում է համայնքների կողմից՝ լոկալ աղբյուրներից:

Մարտունի քաղաքի Շահումյան, Երևանյան, Գետափնյա, Մոմչյան և Գետափնյա 7-րդ և 8-րդ նրբանցքների ջրամատակարարման ցանցերը կառուցված են 50-60-ական թվականներին, որոնք քայքայված են, փտած, կոռոզիայի ենթարկված: Առաջացած վթարները անհնարին է վերացնել: Առկա են զգալի կորուստներ, գործող ցանցն անվերահսկելի է: Նմանատիպ իրավիճակում են գտնվում նաև Լիճք /d=160-63, l=4 կմ/ և Ներքին Գետաշեն /d=160-63, l=18 կմ/բնակավայրերի ջրամատակարարման բաշխիչ ցանցերը:

Լոկալ աղբյուրներից սնվող, համայնքների կողմից շահագործվող ջրամատակարարման ցանցերի զգալի մասը ևս գտնվում են ոչ բարվոք վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում:

Թեև աղբյուրների հզորություններըն ըստ համայնքապետարանների ներկայացրած տեղեկատվության, ունեն բավարար հզորություններ, սակայն կան բնակավայրեր, որոնք ջուր են ստանում ժամային գրաֆիկով /Աստղաձոր, Մադինա, Վարդենիկ և այլ/:

Համայնքների կողմից շահագործվող ջրամատակարարման համակարգերով բնակիչներին մատակարարվող ջրի հաշվառում չի իրականացվում, սպառողների մոտ ջրաչափեր տեղադրված չեն:

Գոյություն ունեցող վիճակի վերլուծության ամփոփում

Առկա վիճակի վերլուծության արդյունքում արձանագրվել են խմելու ջրամատակարարման ոլորտին առնչվող հետևյալ խնդիրները.

- ջրատարների և ջրամատակարարման բաշխիչ ցանցերի մաշվածություն (կորուստների բարձր տոկոս) կամ բացակայություն,
- խմելու ջրի հաշվառման բացակայություն, ոչ արդյունավետ օգտագործում,
- անհրաժեշտ քանակով ջրապաշար ամբարելու համար համապատասխան ծավալով, պահանջվող նիշերի վրա տեղակայված ջրամբարների բացակայություն,
- ջրամատակարարման կառավարման ոչ բավարար իմացություն:

Ջրամատակարարման նորմերը և հաշվարկային ջրապահանջը

Բնակավայրերի համար խմելու ջրամատակարարման համակարգը նախատեսվում է՝

- բնակչության խմելու-տնտեսական նպատակով,
- արտադրական այն օբյեկտների համար, որոնց արտադրական կարիքների համար անհրաժեշտ է խմելու որակի ջուր,
- բնակավայրի հակահրդեհային կարիքների բավարարման համար:

Բնակչության խմելու-տնտեսական կարիքների նպատակով պահանջվող ջրաքանակը որոշելու համար որպես ելակետային տվյալ ընդունվել է 200 լ/օր/մարդ (ըստ ՇՆևԿ 2.04.02.84) : Սույն նորմն ընդգրկում է բնակչության խմելու-կենցաղային ջրապահանջը, ինչպես նաև ընտանի կենդանիների ջրման պահանջարկը՝ բերված մեկ բնակչի հաշվարկով :

Արտադրական կարիքների համար պահանջվող խմելու որակի ջրաքանակն ընդունվում է բնակչության ջրապահանջի 15%-ի չափով:

Հակահրդեհային կարիքների (արտաքին և ներքին հրդեհներ) համար պահանջվող ջրաքանակը հաշվարկվում է համաձայն գործող նորմերի պահանջների (ՇՆևԿ 2.04.02.84):

Ստորև աղյուսակում տրված է Գեղարքունիք-3-ում ներառված բնակավայրերի խմելու-տնտեսական, արտադրական և հակահրդեհային կարիքների համար պահանջվող հաշվարկային ջրապահանջը (ներառյալ նաև հոսակորուստները).

Հաշվարկային ջրապահանջն՝ ըստ բնակավայրերի

N	Բնակավայրի անվանումը	Հեռանկարային բնակչության քանակը	Ջրասպառման նորմը	Ջրապահանջը				
				Խմելու-տնտեսական	Արտադրական (15 %)	Հակահրդեհային կարիքներ	Հոսակորուստներ (30 %)	Ընդամենը
		մարդ	լ/օր	մ³/օր				
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
1	ք. Մարտունի	12708	200	2541.7	2923.0	324	5845.8	11634.4
2	Աստղաձոր	5024	-//-	1004.7	1155.4	216	2310.9	4687.1
3	Գեղհովիտ, Նշխարք,	6779	-//-	1355.9	1559.2	216	3118.5	6249.6
4	Երանոս	6153	-//-	1230.7	1415.3	216	2830.6	5692.5
5	Զոլաքար	7527	-//-	1505.5	1731.3	216	3462.5	6915.3

6	Ծովասար	3286	-//-	657.1	755.7	162	1511.4	3086.3
7	Լիճք	5805	-//-	1160.9	1335.1	216	2670.2	5382.2
8	Ծակքար	3155	-//-	631.0	725.6	162	1451.2	2969.8
9	Ձորագյուղ	5217	-//-	1043.5	1200.0	216	2399.9	4859.4
10	Մադինա	1236	-//-	247.3	284.4	162	568.7	1262.4
	Լեռնակերտ	313	-//-	62.7	72.1	27	144.2	306.0
11	Ներքին Գետաշեն	9703	-//-	1940.6	2231.7	216	4463.4	8851.7
12	Վաղաշեն	4551	-//-	910.1	1046.7	162	2093.3	4212.1
13	Վարդաձոր	3099	-//-	619.7	712.7	162	1425.4	2919.8
14	Վարդենիկ	9330	-//-	1866.0	2145.9	216	4291.9	8519.9
15	Վերին Գետաշեն	5018	-//-	1003.6	1154.2	216	2308.4	4682.2

Ջրամատակարարման նախատեսվող համակարգերը և գոտիները

Ջրամատակարարման համակարգերը նախատեսվում են կենտրոնացված. բնակչության խմելու-կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջներն իրականացվում են մեկ ջրատարով:

Ջրմուղի ցանցում անհրաժեշտ թույլատրելի ճնշում և պահանջվող ջրաքանակ ապահովելու համար բնակավայրերի ջրամատակարարումը նպատակահարմար է իրականացնել գոտիներով՝ անհրաժեշտության դեպքում առանձին թաղամասերի համար նախատեսելով ճնշման կարգավորիչներ կամ նոր ՕԿՋ-ներ, որտեղից խմելու ջուրը բնակչությանը կտրվի ինքնահոս եղանակով :

Շուրջօրյա ջրամատակարարում, ինչպես նաև անհրաժեշտ հակահրդեհային ելք ապահովելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր բնակավայրում ունենալ որոշակի ջրապաշար, որն իր մեջ ներառում է ծավալային երեք բաղադրիչ՝ $W_կ$ (կարգավորման), $W_{հհ}$ (հակահրդեհային), $W_{վթ}$ (վթարային): Պահանջվող ընդհանուր ծավալը ($W_{ընդ}$), որն անհրաժեշտ է նախատեսել յուրաքանչյուր բնակավայրում, ձևավորվում է այս երեք բաղադրիչների հաշվարկային արժեքների գումարից՝ $W_{ընդ}=W_կ+W_{հհ}+W_{վթ}$: Ստորև աղյուսակում տրված է միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի խմելու ջրի պահանջվող ծավալների հաշվարկային արժեքները.

Խմելու ջրի պահանջվող ծավալների հաշվարկային արժեքները

N	Բնակավայրը	Կարգավոր-ման ծավալ $W_կ$	Հակահրդեհա-յին կարիքներ $W_{հհ}$	Վթարային ծավալ $W_{վթ}$	Ընդհանուր պահանջվող ծավալ $W_{ընդ}$
		$մ^3$			
1	ք. Մարտունի	3490	324	5817	9631
2	Աստղաձոր	1406	216	2343	3965
3	Գեղհովիտ, Նշխարք,	1875	216	3125	5216
4	Երանոս	1708	216	2846	4770
5	Զոլաքար	2075	216	3458	5749

6	Ծովասար	926	162	1543	2631
7	Լիճք	1615	216	2691	4522
8	Ծակքար	891	162	1485	2538
9	Ձորագյուղ	1458	216	2430	4104
10	Մադինա	379	162	631	1172
	Լեռնակերտ	92	27	153	272
11	Ներքին Գետաշեն	2655	216	4426	7297
12	Վաղաշեն	1264	162	2106	3532
13	Վարդաձոր	876	162	1460	2498
14	Վարդենիկ	2556	216	4260	7032
15	Վերին Գետաշեն	1405	216	2341	3962

Ջրամատակարարման գլխավոր փողոցային ցանցերն անհրաժեշտ է նախատեսել օղակային՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով: Փակուղային կարող են լինել 200 մ-ից պակաս երկարություն և 100 մմ-ից պակաս տրամագիծ ունեցող ջրագծերը:

Խողովակաշարերի թեքություններն ընդունել ոչ պակաս 0.001, հարթ ռելիեֆի պայմաններում՝ 0.0005:

Խմելու որակի ջուր տեղափոխող խողովակների տեղադրման խորությունը պետք է նախատեսել.

- 0.5 մ-ով ավելի, քան գրունտ ներթափանցող զրոյական ջերմաստիճանի հաշվարկային խորությունն է,
- կոյուղու խողովակաշարերից ուղղաձիգ ուղղությամբ 0.4 մ-ով բարձր:

Հաշվի առնելով, որ ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է, օղակային խողովակաշարերի տրամագծերը պետք է նախատեսել 100 մմ-ից ոչ պակաս:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ջրամատակարարման համակարգերի համայնքային կառավարումն արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել այդ համակարգերի պատշաճ շահագործման և պահպանման կազմակերպություն (ՇևՊ), որը կունենա համապատասխան վերապատրաստում անցած աշխատակիցներ:
- Ջրամատակարարման համակարգերի կայուն աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերջիններիս արդիականացում և վերակառուցում:
- Բնակչությանն անհրաժեշտ քանակի խմելու ջրով բավարարելու նպատակով առաջարկվում է բնակավայրերի տարածքում պահանջվող ծավալով օրվա կարգավորիչ ջրամբարների նախատեսում (Տես՝ « Խմելու ջրի պահանջվող ծավալների հաշվարկային արժեքներ»-ի աղյուսակը և « Տրանսպորտային և ինժեներական հաղորդակցության ուղիների ուրվագիծ » գծագիրը) :
- Վերին Գետաշեն համայնքի գերեզմանների տարածքում գործող խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարի փոխարեն նախատեսել երկու նոր ՕԿՋ-ներ /գերեզմանների

սանիտարական գոտուց դուրս տեղակայված/, որոնք կսնուցեն ինչպես նշված ՕԿՋ-ի սպասարկման տարածքը, այնպես էլ նոր, կառուցապատման ենթակա բնակելի հատվածներին:

- Բոլոր բնակավայրերում խմելու ջրամատակարարման օղակային բաշխիչ ցանցի նախատեսում՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով:
- Ջրամատակարարաման բոլոր համակարգերում (գլխամասային կառույցներ, ՕԿՋ-ներ) հերմետիկության ապահովում և սանիտարական 1-ին (30-50 մ շառավղով) գոտու սահմանում:
- Խմելու ջրի վարակազերծման նպատակով ջրամատակարարման գլխամասային կառույցներում քլորակայանների նախատեսում:
- Խմելու ջրի պարբերաբար լաբորատոր հսկողություն:
- Ջրի սպառման նկատմամբ վերահսկողության սահմանում, ջրաչափերի տեղադրում բոլոր սպառողների մոտ:
- Հոսակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված անընդհատ աշխատանքների իրականացում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ✓ Ջրային ռեսուրսների պահպանություն, տնտեսում և կայուն օգտագործում:
- ✓ Ջրամատակարարման համակարգի հուսալիություն:
- ✓ Հոսակորուստների կրճատում:
- ✓ Ջրի սպառման արդյունավետության բարձրացում:
- ✓ Բնակչության ջրամատակարարման տևողության ավելացում:
- ✓ Խմելու ջրի հաշվառում, ինչը կբերի ջրօգտագործման կուլտուրայի բարելավման, ինչպես նաև կխթանի բնակիչների ջրօգտագործման ռեժիմի փոփոխությանը:
- ✓ Խմելու ջրի բարձր որակի ապահովում և աղտոտման վտանգի նվազում:

2.1.2. Ջրահեռացում

2.1.2.1. Կենցաղային և արտադրական կոյուղի

Ինժեներական ենթակառուցվածքներով (հիմնականում կոյուղացման) ցածր մակարդակները ստեղծում են ստորերկրյա և Սևանա լճի ջրերի ռազմավարական նշանակության պաշարների աղտոտման վտանգ:

Մինչև 2011 թվականը մարզի քաղաքային համայնքների կեղտաջրերն անարգել լցվում էին Սևանա լիճ: Այդ խնդիրը կարգավորելու նպատակով 2011 թվականից մարզի Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում կառուցվեցին կեղտաջրերի մաքրման կայաններ, որի շնորհիվ մասամբ /իրականացվում է միայն մեխանիկական մաքրում/ լուծվեց կեղտաջրերի մաքրման խնդիրը՝ Գավառ քաղաքում 36%-ով, Մարտունի քաղաքում 47%-ով, Վարդենիս քաղաքում 41%-ով: Եվրոպական ներդրումային բանկի միջոցներով Սևան քաղաքում ևս նախատեսվում է կառուցել կեղտաջրերի մաքրման նոր կայան:

Մարզի քաղաքների և առանձին գյուղական բնակավայրերի համար հիմնախնդիր է դարձել կոյուղու ցանցի քայքայված վիճակը, որը հղի է մեծ վտանգներով՝ շրջակա միջավայրի աղտոտվածության և մարդկանց առողջության համար:

Մարզի բնակչության շուրջ 40%-ը չի օգտվում կեղտաջրերի մաքրման կայաններից և կեղտաջրերը լցվում են հատուկ այդ նպատակով փորված կեղտաջրերի հորատանցքեր՝ առանց մաքրման և վարակազերծման՝ մեծ վտանգ ներկայացնելով վարակիչ հիվանդությունների տարածման տեսանկյունից:

Գեղհովիտ համայնքի կոյուղու համակարգի բացակայության հետևանքով, նշված համայնքի /վերջինս ավելի բարձրադիր է/ հեռացման ենթակա կեղտաջրերը լցվում է Մարտունի քաղաքի փողոցները:

Դիտարկվող տարածաշրջանի գյուղական բնակավայրերը չունեն կոյուղու հոսքաջրերի հեռացման համակարգ: Կրթական, վարչական, առողջապահական հիմնարկների կոյուղու հոսքաջրերի հեռացման համար հիմնականում նախատեսած են լոկալ սեպտիկ հորեր : Բնակչությունն օգտվում է բակային հորատիպ զուգարաններից :

Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով սույն նախագծի շրջանակներում նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր բնակավայրերը՝ նախատեսելով կենսաբանական մաքրման կայաններ: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով:

Ինքնահոս ջրահեռացման խողովակների տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս.

- փողոցային ցանցի համար՝ 200 մմ, թեքությունը՝ 0.007,
- ներթաղամասային կենցաղային և արտադրական կոյուղու ցանցի համար՝ 150 մմ, թեքությունը՝ 0.008:

Կոյուղու հեռացման ենթակա հոսքաջրերը նախատեսվում է մաքրման ենթարկելուց հետո միայն ուղղել բաց ջրահոսքեր:

Այն արտադրական օբյեկտներում, որոնց հեռացման ենթակա հոսքաջրերը կարող են պարունակել կոյուղու համակարգը վնասող կամ դրա աշխատանքը խոչընդոտող նյութեր, նախատեսվում է (նախքան կոյուղու միասնական համակարգին միանալը) իրականացնել կեղտաջրերի նախնական մաքրում:

Ստորև աղյուսակում տրված է Գեղարքունիք-3 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի կոյուղու (կոմունալ-կենցաղային և արտադրական) հեռացման ենթակա հոսքաջրերի հաշվարկային ելքերը:

Կոյուղու հաշվարկային ելքերն ու մաքրման կայանների հզորություններն՝ըստ բնակավայրերի

N	Բնակավայրի անվանումը	Հեռանակա-րային բնակչության քանակը (մարդ)	Հեռացման ենթակա հոսքաջրերի քանակը մ³/օր		
			Կոմունալ-կենցաղային	Արտադրա-կան	Ընդամենը
1	*2*	*3*	*5*	*7*	*9*
1	ք. Մարտունի	12708	2542	2288	4829
2	Աստղաձոր	5024	1005	904	1909
3	Գեղհովիտ, Նշխարք,	6779	1356	1220	2576
	Լեռնակերտ	313	63	56	119
4	Երանոս	6153	1231	1108	2338
5	Ջոլաքար	7527	1506	1355	2860
6	Ծովասար	3286	657	591	1249

7	Լիճք	5805	1161	1045	2206
8	Ծակքար	3155	631	568	1199
9	Ջորագյուղ	5217	1044	939	1983
10	Մադինա	1236	247	223	470
11	Ներքին Գետաշեն	9703	1941	1747	3687
12	Վաղաշեն	4551	910	819	1729
13	Վարդաձոր	3099	620	558	1178
14	Վարդենիկ	9330	1866	1679	3546
15	Վերին Գետաշեն	5018	1004	903	1907

2.1.2.2. Հեղեղատար կոյուղի

Հեղեղատար կոյուղու նպատակը համայնքի տարածքից անձրևաջրերի և հալոցքից առաջացած ջրերի կազմակերպված հեռացումն է, ինչը հնարավորություն կստեղծի համայնքում բարեկարգ վիճակ և սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակ ապահովելու համար:

Սույն նախագծով կենցաղային կոյուղուն զուգահեռ նախատեսվում է նաև հեղեղատար կոյուղի, ինչը հնարավորություն կտա անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս հավաքել և, նախքան բաց ջրահոսքեր ուղղելը, ենթարկել մաքրման:

Հեղեղատար ցանցերը՝ կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից, կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով: Հեղեղատար կոյուղու համար կարող են օգտագործվել կերամիկական, ե/բետոնե, թուջե խողովակներ և ե/բ կիսախողովակներ:

Անձրևաջրերի հեռացման փակ համակարգի դեպքում խողովակաշարերի տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս՝ 250 մմ փողոցային ցանցի համար, 200 մմ՝ ներթաղամասային ցանցի համար:

Անձրևաջրերի հեռացման բաց համակարգի դեպքում երթևեկելի ասֆալտապատ ճանապարհերի ճամփեզրերի, առանձին խրամառուների (կյուվետ) և ջրահեռացման առվակների թեքությունները համապատասխանաբար ընդունել ոչ պակաս 0.003, 0.005 և 0.003:

Սեղանաձև հատվածքով կյուվետների և ջրահեռացման առվակների նվազագույն չափերն անհրաժեշտ է ընդունել՝



- հատակի լայնությունը՝ 0.3 մ,
- խորությունը՝ 0.4 մ:

Այն համայնքներում, որտեղ սույն նախագծի շրջանակներում նախատեսված են կոյուղու մաքրման սարքավորումներ, անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս կարող է ենթարկվել մաքրման: Անձրևաջրերի մաքրումը կարող է իրականացվել ինչպես առանձին մաքրման սարքավորումներով, այնպես էլ կենցաղային և արտադրական կոյուղու հոսքաջրերի հետ համատեղ՝ նախատեսելով կարգավորող ջրավազաններ՝ որոնք հնարավորություն կստեղծեն մակերեսային հոսքաջրերը կուտակել և միայն կենցաղային կոյուղու ամենաքիչ հոսքի ժամերին մղել կոյուղու համակարգ՝ դրանք մաքրման կայանում լրիվ մաքրման ենթարկելու համար:

Նախագծային առաջարկություններ

- Բնակավայրերի լրիվ կոյուղացում, կոյուղու ինքնահոս համակարգերի նախատեսում, կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի կառուցում:
- Կենցաղային կոյուղուն զուգահեռ հեղեղատար կոյուղու նախատեսում:
- Կոյուղու կեղտաջրերի լրիվ մաքրում և վարակազերծում՝ հաշվի առնելով մակերևութային ջրերն աղտոտումից պաշտպանելու պահանջները: Ըստ ՇՆևԿ 2.04.02-85-ի 6.1 կետի պահանջների՝ կեղտաջրերը պետք է անցնեն լրիվ կենսաբանական մաքրում և ունենան հետևյալ ցուցանիշը՝ ԹԿՊլրիվ=6 մգ/լ:
- Մարտունի քաղաքի մաքրման կայանի տարածքում նոր, ժամանակակից տեխնոլոգիաներով կենսաբանական մաքրման կայանի նախատեսում, որը կսպասարկի նաև հարակից գյուղական բնակավայրերին:
- Երանոս, Վարդաձոր, Լիճք, Ծակքար, Ձորագյուղ, Ծովասար, Ներքին Գետաշեն,Վերին Գետաշեն, Գեղհովիտ /Նշխարք, Լեռնակերտ/, Մաղինա, Վաղաշեն, Աստղաձոր, Զոլաքար բնակավայրերի հեռացման ենթակա հոսքաջրերը ևս նախատեսվում է ուղղել Մարտունի քաղաքի մաքրման կայան: Այս բնակավայրերը չունեն սանիտարական խզմամբ համապատասխան /ազգային պարկից դուրս/ տարածքներ՝ լոկալ կենսաբանական մաքրման սարքավորումներ տեղադրելու համար: Հաշվի առնելով, որ ռելիեֆային պայմանները նպաստավոր են վերոնշյալ բնակավայրերի հոսքաջրերը ինքնահոս եղանակով Մարտունի քաղաքի մաքրման կայան ուղղելու համար, նպատակահարմար է դրանք մաքրման ենթարկել նշված կայանում: /Տես “Տրանսպորտային և ինժեներական հաղորդակցության ուղիների ուրվագիծ” գծագիրը/:
- Ելնելով ռելիեֆային առանձնահատկություններից՝ Վարդենիկ գյուղական բնակավայրի հոսքաջրերը մաքրման ենթարկելու նպատակով առաջարկվում է բնակավայրի հյուսիսային, Վարդենիկ գետին հարող հատվածում տեղադրել լոկալ, ժամանակակից տեխնոլոգիաներով, գործարանային արտադրության կոյուղու կենսաբանական մաքրման սարքավորում՝ մոտ 5000 մ^3/օր հզորությամբ:
- Հաշվի առնելով, որ ազգային պարկի տարածքում գործող օբյեկտները տեղակայված են ավելի ցածր նիշերի վրա, /դրանց հեռացման ենթակա հոսքաջրերը չեն կարող ինքնահոս եղանակով հասցվել Մարտունու մաքրման կայան/, առաջարկվում է դրանց հոսքաջրերը մաքրելու նպատակով տեղադրել լոկալ, փոքր հզորության մաքրման սարքավորումներ՝ նախատեսված մեկ կամ մի քանի օբյեկտների համար:

Վերոնշյալ սարքավորումները բաղկացած են շղթայաբար իրար միացված տեխնոլոգիական տարրաների ցանցից, որոնցում իրականացվում են կոյուղու հոսքաջրերի փուլային մաքրման գործընթացներ: Կոյուղու հոսքաջրերը հաջորդաբար մուտք գործելով բազմաշերտ պոլիմերային ծածկույթով մետաղից, պոլիէթիլենից կամ պոլիպրոպիլենից պատրաստված տարրաների մեջ, ենթարկվում են կենսաբանական մաքրման (98 %), որից հետո կարող են բաց թողնվել բաց ջրահոսքեր կամ ուղղվել ոռոգման համակարգեր՝ խթանելով կրկնակի ջրօգտագործումը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածաշրջանի ոռոգման, բնապահպանական խնդիրները և նախատեսվող միջոցառումները

Բաժինը մշակելիս որպես ելակետային նյութ ընդունվել է.

1. ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին ՀՕ-232 օրենքի հիման վրա կազմված «ՀՀ ջրամբարաշինարարության հեռանկարային ծրագրի հայացակարգը»;
2. «Սևանի մասին ՀՀ օրենքը» - 2001թ. 15 մայիսի;
3. «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին» 2001թ. դեկտեմբերի 14 –ի ՀՀ օրենքը;
4. Տարածաշրջանում մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմաներն ու ռեժիմները;
5. Գեղարքունիքի մարզի տարածաշրջանի համար ոռոգման աղբյուր հանդիսացող գետերի և սելավատարների հիդրոլոգիական դիտարկումների տվյալները;
6. Ծրագրի մշակման գործընթացում Գեղարքունիքի մարզում կատարված ուսումնասիրությունների ընթացքում հավաքագրված տվյալները:

Մարզի բնակլիմայական պայմանները

Գեղարքունիքի մարզի ընդհանուր տարածքը կազմում է 5348 կմ^2, այդ թվում Սևանա լճի մակերեսը 1260 կմ^2 :

Տարածաշրջանի ջրային ռեսուրսներ են հանդիսանում Սևանա լիճը 33.2 կմ^2 և նրա մեջ թափվող 28 գետերը 26.8 մ^3/վրկ միջին տարեկան հոսքով :

Սևանա լճից ազատված հողերը ավազային են հումուսի աննշան պարունակությամբ: Գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը, իսկ Արտանիշ թերակղզու Բլրապատ և Լեռնոտ հատվածներում տարածված են լեռնատափաստանային հողեր:

Մարզի վարելահողերը կազմում են շուրջ 85.7 հազ.հա, այդ թվում ոռոգելի հողատարածքները կազմում է շուրջ փաստացի 12 հազ.հա:

Ոռոգման նպատակով մարզում կառուցված է 7 ջրամբար գումարային 4.28 մլն.խմ ծավալով:

Ոռոգման և ջրամատակարարման նպատակով մարզում գործում է ոչ մեծ հզորության 23 պոմպակայան, խորքային հորերից ջուրը արտամղելու նպատակով:

Մարզում բացի վարելահողերից առկա են նաև խոտհարքներ շուրջ 35 հազ.հա և արոտավայրեր շուրջ 181 հազ.հա:

Մարզի առավել խոշոր ջրանցքներն են Մասրիկի, Ծովակի և Վարդենիսի ՀԷԿ-ի ջրանցքները:

Սևանա լիճ

Սևանա լիճը իր կեսաբանական ցուցանիշներով դասվում է խմելու ջրաղբյուրների դասին և նրա ջրի պաշարները հանրապետության համար ունեն ռազմավարական խոշոր նշանակություն:

Սևանա լճի ռելիեֆային բարձր դիրքից ելնելով նրա ջրային 58.4 կմ³ նախնական ռեսուրսները 1930 թվականից հանրապետությունում օգտագործվել են գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգման, էլեկտրաէներգիայի արտադրման և ջրամատակարարման նպատակով:

Լճի ջրային ռեսուրսների գումարային շուրջ 25.2 կմ³ ծավալի օգտագործումը բերեց՝

Լճի ծավալի փոքրացմանը -43%

Լճի մակարդակի իջեցմանը -20 մետրով

Լճի մակերեսի պակասեցմանը – 900 կմ²

Լճի թափանցելիության նվազեցմանը 2.5-3 անգամ

Նվազեց լճի ձկնատվությունը շուրջ 15 անգամ

Ելնելով ստեղծված իրավիճակից 1982 թվականից որոշվեց լճի ջրային ռեսուրսներն օգտագործել միայն ոռոգման նպատակով, տարեկան ոչ ավել 170 մլն.խմ և դոտացիայի նպատակով կառուցվեց Կեչուտի ջրամբարը իրեն մոտեցնող Արփա-Սևան թունելով, հաշվարկային 22 խմ/վրկ ելքով:

Լճի ջրային ռեսուրսները տարեկան կազմավորվում են ի հաշիվ լճի ջրավազանի 28 գետերի միջին տարեկան 770 մլն.մ³ հոսքի, մթնոլորտային տեղումների տարեկան շուրջ 545 մլն.մ³, Արփա-Սևան թունելով տարեկան շուրջ 250 մլն.մ³ /ներկայումս տեղափոխվում է 120-150 մլն.մ³/: Երկրաբանական լճա նստվածքային կառուցվածքից առաջացած հոսքերը տարեկան շուրջ 94 մլն.մ³:

<u>Սևանա լճի և ջրաղբյուրների ներկա վիճակը</u> – լճի առափնյա տարածքում գործող շուրջ 2400 հանգստի և սննդի օբյեկտներից /որոնցից 300 մշտական գործող/ առաջացած կենցաղային և կոյուղու ջրերն առանց կենսաբանական մաքրման թափվելու, լճի իրացված տարածքներում անտառահատումներից մնացած կոճղ-արմատների, իրացված շենք շինությունների մնացորդների ազդեցության հետևանքով լճի ջրավազանում անբարենպաստ կլիմայական պայմանների դեպքում առաջանում է լճի ջրի կանաչապատում /ծաղկում/՝ լճի որակի վրա բացասական ազդեցություններով:

Լճի ջրի որակի վրա բացասական ազդեցություն է թողնում Գավառում, Մարտունիում և Վարդենիսում կառուցված կոյուղու մաքրման կայանների անարդյունավետ գործունեությունը, որոնցից կոյուղու ցանցի բացակայության և վթարի պատճառով կեղտաջրերը լիճ են թափվում առանց կենսաբանական մաքրման /աղ. N1/:

Աղ. N1

հ/հ	Բնակավայրի անվանումը	Չափման միավորը	Կոյուղու ցանցի երկարությունը	Որից շահագործվում է
1	Սևան քաղաքի	կմ	100	67
2	Գավառ --"--	-"-	34	14
3	Մարտունի -- " --	-"-	19	8
4	Վարդենիս -- " --	-"-	35	26
5	87գյուղական համայնք	-"-	-	-

Ջրավազանում կենցաղային կոյուղու ջրերի քանակությունը կախված բնակչության թվից/միջին հաշվով 250 հազ. մարդ/ գնահատվում է շուրջ 12մլն.մ³ տարեկան:

Լճի ջրավազանում գործում է 173 խորքային հոր 5-30 լ/վրկ արտադրողականությամբ, բացի այդ կան խորքային հորեր 1-5 լ/վրկ արտադրողականությամբ, որոնք հաշվառման մեջ չեն ընդգրկված:

Սևանա լճում ձկնարդյունաբերության ընդլայման նպատակով տեղադրված են ցանցավանդակներ, որոնք ըստ նախնական տվյալների նույնպես ջրի որակի վրա թողնում են բացասական ազդեցություն:

Ջրավազանի տարածքում առկա են 20-ից ավելի շինանյութի /ավազի, խճակոպճի, քարի/ հանքավայրեր, որոնց թափոնների անկազմակերպ տեղակայման և չօգտագործվող հանքերի չկոնսերվացման հետևանքով, շրջակա միջավայրի և լճի ջրի վրա թողնում են բացասական ազդեցություն:

Ջրավազանի գետերը և նրանց ջրաֆիզիկական և ջրաքիմիական Բնութագիրը

Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակներ, որոնցից 4-ը փոքր Սևան, իսկ 24-ը մեծ Սևան: Գետերի միջին տարեկան հոսքը կազմում է 26.8 խմ/վրկ, իսկ միջին ծավալը 770 մլն.մ^3:

Լճից դուրս է գալիս միայն Հրազդան գետը բնականը՝ 110 մլն.մ^3, ջրթողումներով մինչև 170 մլն.մ^3 հոսքով:

Ջրավազանի առավել ջրատար, ձվադրման վայր հանդիսացող գետերի միջին և առավելագույն ելքերը տված է N2 աղյուսակում:

աղ. N2

հ/հ	Գետի անվանումը	Ավազանի մակերեսը, կմ^2	Միջին տարեկան ելքը,մ^3/վրկ	Առավելագույն ելքը,մ^3/վրկ	Նվազագույն ելքը, մ^3/վրկ
1	Գավառագետ	467	3.5	72.5	2.17
2	Վարդենիս	110	1.67	30.6	0.12
3	Արգիչի	366	5.50	265.0	1.35
4	Արծվանիստ	80	0.33	15.3	-
5	Մարտունի	85	1.74	26.7	0.17
6	Բախտակ	144	0.65	31.5	0.05
7	Շողվակ	59	0.44	18.2	-

Սևանա լճի մակարդակի իջեցմանը զուգահեռ ջրահավաք ավազանի տնտեսության տարբեր ճյուղերից գետերի հոսքերով լիճ են թափվում և թունաքիմիկատներով հարուստ ջրեր:

Ջրավազանի ջրառատ գետերում, կառուցված են ՓՀԷԿ-ր որոնց ուսումնասիրության ընթացքում գրանցվել է, որ գլխամասային ջրառ կառուցվածքներում նախատեսված բնապահպանական թողքերի հանգուցները գտնվում են տեխնիկապես անբավարար վիճակում, կամ գետի նվազագույն հոսքերը լրիվ ուղորդվում են ՓՀԷԿ-ի ագրեգատները:

Գիլի լճի վերականգնման էկոլոգիական անհրաժեշտությունը

Գիլի լիճը մինչև 1950 թվականը ունեցել է 3.5-4.0 կմ. տրամագիծ, առավելագույն խորությունը 2մ և իր հիդրոքիմիական ռեժիմով տարբերվել է Սևանա լճից:

Լիճը կարևոր նշանակություն ուներ ջրաճահճային թռչունների բնադրման, ինչպես նաև Սևանի ձկների՝ Կողակի, Բեղլուի ձվադրման համար:

Լիճը սնվել է Մասրիկ գետի և մասամբ Սևանա լճի ջրերով: Հաշվի առնելով Գիլի լճի հատակի և Սևանա լճի փաստացի մակարդակի տարբերությունը /շուրջ 10 մետր/, լիճը

"կծաղկի" ջրիմուռներով, որոնք հոսքային ջրերով կտեղափոխվեն Սևանա լիճ և կավելացնեն լճի օրգանական աղտոտվածությունը:

Ելնելով վերոհիշյալից մասնագիտացված Գ.Հ. ինստիտուտի կողմից առաջարկվել է լրացուցիչ ուսումնասիրություններ կատարել Գիլի լճի վերականգնման խնդրի շուրջ:

Սևանա լճի էկոհամակարգի բարելավմանն ուղղված բնապահպանական միջոցառումները

Սևանա լճի, նրա ջրավազանի և նրան սնող ջրաղբյուրների էկոհամակարգի փաստացի վիճակը բարելավելու բնապահպանական նորմերով պահանջվող իրավիճակը վերականգնելու նպատակով նախատեսված է՝

Ապահովել Սևանա լճի հորիզոնի բարձրացումը մինչև 1903.5մ նիշը համաձայն N3 աղյուսակում բերված ժամանակացույցի և N1 գրաֆիկի:

աղ. N3

Տարեթիվը	Լճի մակար-դակը, մ	Լճի մակարդակի բարձրացման ջրի քանակը, մլն.մ³	Լճի ակտիվ ջրատվու-թյունը, մլն.մ³	Արփա – Սևանով ջրի ծավալը, մլն.մ³	Ընդամենը մուտք գործող ջրի քանակը, մլն.մ³	Ոռոգման ջրի պահան-ջարկը, մլն.մ³
2020	1900.40	300	220	250	470	170
2021	1900.50	-"-	-"-	-"-	-"-	-"-
2022	1900.75	-"-	-"-	-"-	-"-	-"-
2023	1901.00	-"-	-"-	-"-	-"-	-"-
2024	1901.25	-"-	-"-	-"-	-"-	-"-
2025	1901.50	-"-	-"-	-"-	-"-	-"-
2026	1901.75	-"-	-"-	-"-	-"-	-"-
2027	1902.00	-"-	-"-	-"-	-"-	-"-
2028	1902.25	-"-	-"-	-"-	-"-	-"-
2029	1902.50	-"-	-"-	-"-	-"-	-"-
2030	1902.75	-"-	-"-	-"-	-"-	-"-
2031	1903.00	-"-	-"-	-"-	-"-	-"-
2032	1903.25	-"-	-"-	-"-	-"-	-"-
2033	1903.50	-"-	-"-	-"-	-"-	-"-
Ընդամենը		***4200***	***3080****	***3500***	***6580***	***2380***

**լճի ակտիվ ջրատվությունը ենթակա է փոփոխման կախված նրա ջրատվությունից*

Գրաֆիկ N1



- Ավարտել Արփա-Սևան թունելի վերականգնման աշխատանքները և ապահովել միջին տարեկան 250 մլն.մ³ հոսքը Սևանա լիճ;
- Իրականացնել ինչպես Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների /նաև հարակից համայնքների/ մաքրման կայաններին միացող կոյուղու ցանցերը, այնպես էլ համայնքների տարածքում կոյուղու ցանցերը՝ ապահովելու հոսքաջրերի լրիվ կենսաբանական մաքրում, անհրաժեշտության դեպքում տեղադրելով բիոմաքրման մոդուլներ;
- Իրականացնել Սևանա լճի ջրավազանում գործող հանգստի և սննդի օբյեկտներում լոկալ կենսաբանական մաքրման կայանների տեղադրումը;
- Ապահովել շուրջ 500 հա տարածքում մնացորդային կոճղարմատների և իրացված շենք շինությունների թափոնների մաքրումը;
- Իրականացնել գործող ոռոգման պոմպակայանների փոխարեն 4 ջրամբարների շինարարությունը շուրջ 150 մլն.մ³ ծավալով;
- Ապահովել բնակավայրերին հարակից տարածքներում գետերի հուների մաքրում կենցաղային աղբից և բարեկարգել լճի հետ լծորդվող հատվածները;
- Ապահովել ՓՀԷԿ-ի գլխամասային կառուցվածքներում բնապահպանական թողքերը;
- Բարեկարգել ջրավազանի տարածքում գոյություն ունեցող շուրջ 20 շինյութերի հանքավայրերի և նրանց թափոնների տարածքները;
- Բնապահպանական միջոցառումների պահանջներին համապատասխան բարեկարգել չգործող աղբավայրերը:

Արփա-Սևան թունելը

Սևանա լճի ջրային ռեսուրսները վերականգնելու և Արփա գետի ջրային ռեսուրսները արդյունավետ օգտագործելու նպատակով, Արփա գետի վրա Կեչուտի ջրամբարում ջրերը կարգավորելուց հետո 1982 թվականին շահագործման հանձնվեց Արփա-Սևան թունելը հետևյալ ցուցանիշներով՝

աղ. N4

h/h	Թունելի չափանիշները	Չափման միավորը	Չափանիշների արժեքները
1	Թունելի կտրվածքի մակերեսը	մ²	7.6 - 9.6
2	Ջրթողունակությունը նորոգման ընթացքում	մ³/վրկ	14.0
3	Ջրթողունակությունը նորոգումից հետո	մ³/վրկ	20.0
4	Թունելի երկարությունը	կմ	42.0
5	Թունելի ելքի հատակի նիշը	մ	1902.6
6	Տեղափոխվող ջրի միջին ծավալը	մլն.մ³	200 – 250

Հաշվի առնելով, որ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման համար /լճի մակերեսի հաշվարկային նիշը պետք է լինի 1903.5 մ, իսկ Արփա-Սևան թունելի ելքի նիշը փաստացի 1902.6մ Է/ առաջարկվում է առաջացող շուրջ 0.9 դիմհարի ժամանակ թունելի շահագործման համար նորմատիվ պայմաններ ստեղծելու նպատակով, թունելի վերջնամասում կառուցել երկկողմանի վաքեր բետոնյա բլոկներից 0.9 – 0.2 մետր բարձրությամբ, 1.1 մետր լայնությամբ, որը կծառայի որպես մայթ շահագործվող անձնակազմի և ուղղորդող գիծ տրանսպորտային միջոցների համար:

/Գրաֆիկ N2/



Q, մ³/վրկ	b մ	h մ	P մ	β	ω մ³	R	c	i	V մ/վրկ
(Q 14.0 մ3/վրկ)									
Դիմհարի բացակայության դեպքում									
14.3	3.7	2.05	7.80	1.80	7.59	0.97	67	0.00081	1.88
Դիմհարի առկայության դեպքում									
14.3	3.7	2.74	9.18	1.35	10.1	1.10	69	0.00038	1.41
(Q 20.0 մ3/վրկ)									
Դիմհարի բացակայության դեպքում									
20.2	3.7	2.6	8.9	1.42	9.62	1.08	69	0.00081	2.04
Դիմհարի առկայության դեպքում									
20.2	3.7	3.30	10.3	1.12	12.2	1.18	70	0.00048	1.67

Ջրամբարաշինարարության խնդիրները

Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգման նպատակով կառուցված են 7 ջրամբար՝ գումարային 4.28 մլն.մ³ ծավալով, 5.38 մլն.մ³ ջրատվությամբ, այդ թվում՝

աղ.N5

h/h	Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ծավալը, մլն.մ³	Ջրատվությունը, մլն.մ³
1	Լանջաղբյուր -1	0.21	0.26
2	Լանջաղբյուր -2	0.35	0.42
3	Գեղարքունիքի -1	0.07	0.09
4	Հովտի	0.29	0.36
5	Ջիլլի լճի	0.65	0.81
6	Խազիգյոլի	0.21	0.26
7	Արծվաշենի	2.5	3.10
Ընդամենը		***4.28***	***5.38***

Գեղարքունիքի մարզում տարածքի ջրային ռեսուրսները կարգավորելու և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող գյուղատնտեսական հողատեսքերը ոռոգելու նպատակով մարզում ուսումնասիրվել է ևս 16 ջրամբարների շինարարության հնարավորությունները /աղյուսակ N6/՝ գումարային 39.41 մլն.մ³ ծավալով։

աղ. N6

/h	Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ծավալը, մլն.մ³
1	Ախպրաձորի	1.50
2	Նորաբակի	1.55
3	Մասրիկի	5.33
4	Սոթքի	1.68
5	Կարճաղբյուրի	3.50
6	Գեղհովտի	4.00
7	Վարդենիկի	4.60
8	Արծվանիստի	1.00
9	Ծակքարի	1.35
10	Ծաղկաշենի	2.83
11	Գրիձորի	2.40
12	Գեղարքունիքի	2.82
13	Լանջաղբյուրի	1.75
14	Ծաղկունքի	1.80
15	Ցայջիի	1.50
16	Գեյսուի	1.50
Ընդամենը		***39.41***

Առաջին հերթում նախատեսվում է կառուցել.

<u>Արգիճիի ջրամբար</u> – նախատեսվում է Գեղարքունիքի մարզում, Արգիճի գետի 2260 մ նիշ ունեցող գետահատվածում: Ջրամբարը նախատեսվում է 6.5 մլն.մ³ ծավալով տարածքի 10 համայնքների 3390 հա գյուղատնտեսական հողատեսքերը, այդ թվում 824 հա մեխանիկական եղանակով ոռոգվող հողատեսքերն ինքնահոս եղանակով ոռոգելու համար:

Ջրամբարի տեխնիկատնտեսական ցուցանիշները բերված են N7 աղյուսակում:

աղ. N7

ՀՀ ը/կ	Տեղնիկատնտեսական ցուցանիշները	Չափման միավորը	Արժեքները
1	Ոռոգելի տարածքը	հա	3390
2	Ջրամբարի ծավալը	մլն.մ³	6.5
3	Պատվարի բարձրությունը/բետոնյա/	մ	16.5
4	Տնտեսված էլեկտրաէներգիան	մլն.դրամ	132.0

5	Ջրամբարի շինարարության նախնական արժեքը	մլն. ԱՄՆ $	4.21
6	1մ^3 ջրի արժեքը	ԱՄՆ $	0.77
7	1հա ինքնահոս ոռոգման արժեքը	ԱՄՆ $	1240
8	Ընդհանուր զուտ եկամուտը	մլրդ. դրամ	2225

Արգիճիի ջրամբարի շինարարությունը կնպաստի նաև՝

- Սևանա լճի կենդանական աշխարհին սպառնացող վտանգի վերացմանը /պոմպակայանների չաշխատեցման արդյունքում/;
- կապահովվի "Լիճք-Արգիճի" արգելոցի ֆունկցիոնալ գործընթացները /ջրային բուսականության, թռչունների, հազվագյուտ ձկնատեսակների, հանքային աղբյուրների պաշտպանությունը/;
- բույսերի մեխանիկական եղանակով ոռոգումը կփոխարինվի ինքնահոս եղանակով;
- Արգիճի գետի ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և ջրավազանում ճահճակալման երևույթների վերացմանը;
- կնվազի 1 հա ոռոգման համար պահանջվող ջրի արժեքը:

Ջրամբարի համար մշակված է տեխնիկատնտեսական հիմնավորումներ:

Աստղաձորի ջրամբար – նախատեսվում է Գեղարքունիքի մարզում, Աստղաձոր գետի 2120 մ նիշ ունեցող գետահատվածում:

Ջրամբարը նախատեսված է 1.25մլն.մ^3 ծավալով տարածքի 4 համայնքների 1440 հա գյուղատնտեսական հողատեսքերը, այդ թվում 320 հա մեխանիկական եղանակով ոռոգվող հողատեսքերը ինքնահոս եղանակով ոռոգելու համար:

Ջրամբարի պատվարը քարահողային է 32մ բարձրությամբ:

Ջրամբարի տեխնիկատնտեսական ցուցանիշները բերված են N 8 աղյուսակում:

աղ. N 8

ՀՀ ը/կ	Տեխնիկատնտեսական ցուցանիշները	Չափման միավորը	Արժեքները
1	Ոռոգելի տարածքը	հա	1440
2	Ջրամբարի ծավալը	մլն.մ^3	1.25
3	Պատվարի բարձրությունը /քարահողային/	մ	32
4	Տնտեսված էլեկտրաէներգիան	մլն.դրամ	91.3
5	Ջրամբարի շինարարության նախնական արժեքը	մլն ԱՄՆ $	2.0
6	1 մ^3 ջրի արժեքը	ԱՄՆ $	1.6
7	1 հա ինքնահոս ոռոգման արժեքը	ԱՄՆ $	1390
8	Ընդհանուր զուտ եկամուտը	մլրդ. դրամ	1420

Աստղաձորի ջրամբարի շինարարությունը կնպաստի նաև՝

- պոմպակայանների չաշխատեցման արդյունքում կվերանա Սևանա լճի կենդանական աշխարհին սպառնացող վտանգը;
- կնվազի 1 հա ոռոգման համար պահանջվող ջրի արժեքը;
- առավել արդյունավետ կօգտագործվի Աստղաձոր գետի ջրային ռեսուրսները;
- կվերանա Աստղաձոր գետի ջրավազանի կենցաղային աղբով աղտոտման հնարավորությունները;
- գյուղատնտեսական մշակաբույսերի մեխանիկական եղանակով ոռոգումը կփոխարինվի ինքնահոս եղանակով և կապահովվի կայուն բերքատվությունը;

Ջրամբարի համար մշակված է տեխնիկատնտեսական հիմնավորումներ:

Կառուցման ենթակա ջրամբարների ոռոգելի տարածքները.

h/h	Ջրամբարի անվանումը	Ոռոգելի տարածքը հա
1	Լանջաղբյուր -1	3.3
2	Լանջաղբյուր -2	5.3
3	Գեղարքունիքի -1	1.1
4	Հովտի	4.6
5	Ջիլլի լճի	10.0
6	Խազիգյուղի	3.3
7	Արծվաշենի	39.0
Ընդամենը		66.6

Բնապահպանական միջոցառումներ

Համաձայն ՀՀ օրենքով և իրավական այլ փաստաթղթերով Սևանա լճի առափնյա տարածքի կառուցվածքը, ըստ կենտրոնական գոտու հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայի դասակարգվում է՝

Ա. Հատուկ պահպանվող տարածքներ հանգստի համար – 30.4 հա, այդ թվում՝

- կանաչապատված և սպասարկման համար – 9.8 հա
- լողափնյա տարածք – 14.1 հա
- ներքին ճանապարհներ, ավտոկանգառներ – 6.5 հա

Բ. Պատմության ու մշակույթի և բնական լանդշաֆտի պահպանման տարածքներ- 39.2հա

Կենտրոնական էկոլոգիական գոտին ընդգրկում է Շորժա – Սևան թերակղզի – Հայրիվանք տիրույթի տարածքները և հանդիսանալով որպես հատուկ պահպանվող տարածք նախատեսված է օգտագործել միայն բնապահպանական, առողջարարական, պատմամշակույթային, բնակչության հանգստի համար:

Հաշվի առնելով, որ լճի մակարդակի բարձրացումը մինչև հաշվային 1903.5 մ նիշը կնպաստի նրա էկոլոգիական հավասարակշռության վերականգնմանը նախատեսված է՝

- ապամոնտաժել 1908մ նիշից ցածր գտնվող կառույցները և տարածքը մաքրել շինարարական և այլ աղբից;
- հանգստի համար ակտիվ օգտագործման նպատակով նախատեսված է կառուցապատման ենթակա տարածքների միջև ստեղծել "բուֆերային" շերտեր, բնական լանդշաֆտը պահպանելու համար;
- կենտրոնական գոտու ամբողջ երկարությամբ 1903.5մ նիշից բարձր 100մ լայնությամբ տարածքը ամրագրված է որպես լանդշաֆտի պահպանման շերտ և ենթակա չէ կառուցապատման;
- առաջնահերթ կառուցապատման ենթակա տարածքներում գոտիների միջև նախատեսվում է.
- 5-10մ լայնությամբ կանաչապատման շերտեր;
- ինժեներական և կոմունալ կահավորման հարթակներ, մեկ հանգստացողին 6մ² հաշվարկով;
- աղբակուտակման տարողություններ կոշտ թափոնների և կեղտաջրերի կուտակիչ ջրաթափանց հորեր, կենտրոնական գոտու սահմաններից դուրս;
- ավտոկայանները տեղադրել ավտոմայրուղու ճանապարհամերձ գոտիներում և կահավորել պարբերաբար դատարկվող յուղակուտակիչ սարքերով:

2.1.2.3. Տեխնիկական այլ առաջարկություններ

Ոլորտում առկա խնդիրների լուծման համար հատկապես կարևոր է ոռոգման արդյունավետ եղանակների ներդրումը, ինչը կնպաստի ոռոգման ջրի նպատակային օգտագործմանը:

Ոռոգման համակարգերը պետք է բաղկացած լինեն ջրամբարներից (գլխամասային հանգույց), ջրանցքների համակարգից (մայրուղային ջրանցք, առանձին ճյուղավորումներով բաշխիչ ցանց), որոնց միջոցով հնարավոր կլինի կանոնավոր ոռոգում իրականացնել տարբեր եղանակներով (մակերեսային՝ ակոսներով, շերտերով, խողովակաշարերի միջոցով, անձրևացման, կաթիլային):

ԱՌԱՋԱՐԿ – 1

Ոռոգման փակ համակարգ

Նախկինում և այժմ նույնությամբ գործող ոռոգման ջրի բաց տիպի համակարգերի (մետաղական կամ ասբեստե կիսախողովակներ, բետոնե կամ հողային հունով առուներ) գործարկումը դարձել է անարդյունավետ, քանի որ դրանցով տեղափոխվող ջրի 25-30 տոկոսը կորուստներն են կազմում:

Իրավիճակի լիցքաթափման, այն է՝ կանոնավոր ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև համակարգի վերահսկման և ոռոգման ջրի կորուստների դեմն առնելու նպատակով նախատեսվում է ոռոգման «ԲԱՑ» համակարգից անցում կատարել ոռոգման «ՓԱԿ», ջրաչափերով կահավորված ջրամատակարարման համակարգին, ինչը հնարավորություն կտա ապահովել ջրի արդյունավետ օգտագործումն ու հավասարաչափ բաշխումը:

Հաշվի առնելով ոռոգման կանոնավոր բաշխիչ ցանցերի բացակայությունը գրեթե բոլոր համայնքներում, ոռոգման ջրի անհարկի կորուստներից խուսափելու, ինչպես նաև տնամերձ հողատարածքների արդյունավետ ոռոգում ապահովելու նպատակով նպատակահարմար է բնակավայրերի տարածքում նախատեսել փակ խողովակաշարերով ոռոգման ներտնտեսային բաշխիչ ցանց, որոնք կանցնեն փողոցներին զուգահեռ՝ յուրաքանչյուր հողակտորի համար ունենալով մեկ ջրթող կառուցվածք:

ԱՌԱՋԱՐԿ – 2

Կաթիլային ոռոգման համակարգ

Մի շարք երկրներում ոռոգելի երկրագործության մեջ լայնորեն կիրառվող կաթիլային ոռոգումը հիմնված է բույսի արմատային համակարգին ջրի անմիջական մատուցման սկզբունքի վրա, ինչը բացառում է ջրի անհարկի վատնումը:

Կաթիլային ոռոգումը հորինվել է որպես բերքի ավելացման հիմնական միջոց՝ ջրի ոչ մեծ ծախսերի դեպքում: Ոռոգման այս տիպն իդեալական է ցանկացած տիպի բույսերի համար և կիրառվում է ինչպես մասնավոր ֆերմերային տնտեսություններում, այնպես էլ արդյունաբերական մասշտաբներում:

Կաթիլային ոռոգման համակարգի հիմնական տարրը հանդիսանում է կաթիլային խողովակը, որն իրենից ներկայացնում է բացվածքներով խողովակ:



Կաթիլային ոռոգման խողովակներն, ի տարբերություն սովորական խողովակների, տնտեսող են, ջուրն անմիջապես հասնում է արմատներին, ինչն ապահովում է որակյալ ոռոգում: Ջրի ծախսերը 3-4 անգամ քիչ են, կորուստները՝ երեք անգամ քիչ, իսկ դրա յուրացման արդյունավետությունը՝ կրկնակի անգամ ավելի:

Խողովակները կարող են լինել տարբեր, բայց էությունը մեկն է. Կայունացված պոլիէթիլենից խողովակն ընկած է հողի վրա ակոսների երկայնությամբ, և մատակարարում է ջուր կաթոցիկի միջոցով: Փոքր ճնշման դեպքում՝ կաթիլային, մեծի դեպքում՝ միկրոշիթերով:

Կաթիլային ոռոգումը զգալիորեն խթանում է գյուղատնտեսական արտադրության ծավալների մեծացումը: Կաթիլային ոռոգման համակարգը կարող է օգտագործվել.

- Բոլոր տեսակի մրգատու այգիների համար (խաղող, սեխ, ձմերուկ և այլն):
- Բոլոր տեսակի բույսերի (բամբակ, արևածաղիկ, և այլն) և ծաղիկների աճեցման համար:
- Բոլոր տեսակի բանջարեղենների աճեցման համար (վարունգ, սմբուկ, լոբի, կարտոֆիլ, պղպեղ, և այլն):
- Հատկապես ջերմոցներում, որտեղ կաթիլային համակարգը թույլ կտա իրագործել կայուն, տարիների ընթացքում խնդիր չհարուցող ոռոգում:

<u>Կաթիլային ոռոգման առավելությունները</u>.

- ***Հողի օդափոխություն (քամահարում)***

  Կաթիլային համակարգի միջոցով հնարավոր է հողի խոնավությունը պահել օպտիմալ սահմաններում, ինչը արմատների աճի ողջ շրջանում դրանց համար կապահովի ինտենսիվ շնչելու հնարավորություն՝ անգամ անմիջապես ոռոգումից հետո: Հողում եղած թթվածինը հնարավորություն է տալիս արմատային համակարգին ակտիվորեն գործելու:

- ***Արմատային համակարգ***

  Արմատային համակարգը զարգանում է զգալիորեն ավելի լավ, քան ցանկացած այլ ոռոգման դեպքում՝ կենտրոնանալով կաթոցիկների շրջանում և վերածվելով ակտիվ արմատային թելիկներց բաղկացած առատ զանգվածի:

- ***Մնուցում***

  Լուծված պարարտանյութերը ոռոգման հետ տրվում են անմիջապես արմատային համակարգին, ինչի արդյունքում տեղի է ունենում սնուցող նյութերի ինտենսիվ յուրացում: Սա շոգ տարածաշրջաններում պարարտացման ամենաարդյունավետ եղանակն է:

- ***Բույսերի պահպանություն***

  Բույսերի տերևները չեն խոնավանում ինչպես անձևացման ժամանակ: Փոքրանում է հիվանդությունների տարածման հնարավորությունը, քանի որ մանրեասպան միջատները չեն լվացվում տերևներից:

- ***Ագրոտեխնոլոգիա***

Կաթիլային ոռոգումը թույլ է տալիս հողի մշակում, սրսկում և բերքահավաք իրականացնել ցանկացած ժամանակ՝ անկախ ոռոգումից, քանի որ շարքերի միջև ընկած հողատարածքները սեզոնի ողջ ընթացքում չոր են մնում:

Որոշ երկրներ հաջողությամբ անցում են կատարել կաթիլային ոռոգման համակարգին, որը թեև զգալիորեն տնտեսում է ջրային ռեսուրսները, սակայն դեռևս բավականին ծախսատար միջոց է:

Հաշվի առնելով, որ երկրի պարենային անվտանգության երաշխավորը՝ գյուղատնտեսությունն է, ուստի ոռոգման համակարգը կարգավորելը պետության կայացման լուրջ նախադրյալ է, հետևաբար և կաթիլային ոռոգման համակարգի նախատեսումը ևս արդարացված է:

2.1.3. Էներգամատակարարում

2.1.3.1. Էլեկտրամատակարարում

Մարզի տարածքի էլեկտրամատակարարման համակարգի շահագործումն իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Գեղամա» մասնաճյուղի կողմից, որը հիմնականում ապահովում է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում:

Ըստ վերոնշյալ կազմակերպության կողմից տրամադրված տեղեկատվության՝ դիտարկվող տարածաշրջանի տարածքով անցնում են «ՀԷՑ» ՓԲԸ հաշվեկշռում գտնվող բարձր լարման հետևյալ էլեկտրահաղորդման գծերը.

Սնող ԵԿ (լարումը)	Գծի անվանումը	Լարումը	Բնականայրերը, որտեղով անցնում է գծի ուղեգիծը
Լիճք 220 կՎ	Փարվանա	110	Լիճք,Վ. Գետաշեն,Ն. Գետաշեն, ք. Մարտունի, Վաղաշեն, Աստղաձոր, Ծովինար
Լիճք 220 կՎ	Ոսկեհատ	110	Լիճք,Վ. Գետաշեն,Ն. Գետաշեն, ք. Մարտունի, Վաղաշեն, Աստղաձոր, Վարդենիկ, Ծովինար
Լիճք 220 կՎ	Մարտունի	35	Լիճք, Ն. Գետաշեն, ք. Մարտունի
Լիճք 220 կՎ	Երանոս	35	Լիճք, «Սևան» ազգային պարկ
Լիճք 220 կՎ	Գեղհովիտ	35	Լիճք, Վ. Գետաշեն
Լիճք 220 կՎ	Գետաշեն	35	Լիճք, Ն. Գետաշեն, Մարտունի, Աստղաձոր, Զոլաքար
Ծովինար 110 կՎ	Վարդենիկ	35	Ծովինար, Վարդենիկ

Ստորև աղյուսակում տրված է տեղեկատվություն ՀՀ Գեղարքունիքի մարզով անցնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ տնօրինության բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի վերաբերյալ:

Հ/Հ	Գծի կարգավարական անվանումը	Լարումը /կվ/	Ընդհանուր երկարությունը /կմ/	որից Գեղարքունիքի մարզում /կմ/
1	«Նորատուս»	220	42.42	32.5
2	«Լիճք»	220	29.34	Գեղարքունիք
3	«Վարդենիս»	220	25.01	Գեղարքունիք
4	«Սևան»	110	20.9	9.4
5	«Գագարին»	110	12.4	0.35
6	«Իրան-Հայաստան» կառուցվող ՕԳ –ի «Նորավան» հատված	400	-	82.5

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին:

Բնակավայրերի էլեկտրամատակարարումն իրականացվում է 10/0.4 կՎ լարման տրանսֆորմատորային էլեկտրական ենթակայանների միջոցով:

Էլեկտրահաղորդման օդային գծերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար:

Որոշ բնակավայրերում իրականացվել են էլեկտրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ: Էլեկտրական հաղորդալարերի հին, փայտե հենասյուները փոխարինվել են նոր, բետոնե սյուներով, գլխավոր փողոցներում անցկացվել է արտաքին լուսավորություն:

Ստորև աղյուսակում տրված են ներկայումս համայնքներում առկա էլեկտրամատակարարման համակարգերի տեխնիկական բնութագրերն ու էլեկտրաէներգիայի օգտագործման վերաբերյալ քանակական ցուցանիշներն ըստ բնակավայրերի.

Էլեկտրամատակարարման առկա համակարգերի տեխնիկական բնութագրերն ու էլեկտրաէներգիայի օգտագործման վերաբերյալ քանակական ցուցանիշներ

Բնակավայր	Գլխավոր սնուցման ենթակայանները				10/0.4 Ենթակայաններ			Էլ.էներգիայի տարեկան գումարային ծախսը	
	Անվանումը	Լարումը ԿՎ	Հզորությունը ԿՎԱ	Տեղակ.վայրը	Առկա տրանսֆ-ի քանակ	Հզորություն-ները /ԿՎԱ/	Տեղակ.վայրը	Կոմունակ-կենցաղային	արտադրական
Շրջկենտրոն 10 ԿՎ									
					5	400			
					5	160			
					3	100			
ք.Մարտունի	Մարտունի	35	2x10000	ք.Մարտունի	2	250	ք.Մարտունի	2263340	1544737
					1	25			
					1	40			
ՓՈՍՏ 10ԿՎ									
					4	400			
ք.Մարտունի	Մարտունի	35	2x10000	ք.Մարտունի	1	63	ք.Մարտունի	1129944	1340908
					2	160			
ՏՊԱՐԱՆ 10ԿՎ									
					1	250			
ք.Մարտունի	Մարտունի	35	2x10000	ք.Մարտունի	1	160	ք.Մարտունի	587933	564722
					2	400			
ՇԽԱԽՈՏ 10ԿՎ									
					7	400			
					3	250			
ք.Մարտունի	Մարտունի	35	2x10000	ք.Մարտունի	3	160	ք.Մարտունի	1653344	1880850
					2	63			
					1	100			
ՏՐԵՍՏ 10ԿՎ									
					3	400			
ք.Մարտունի	Մարտունի	35	2x10000	ք.Մարտունի	1	630	ք.Մարտունի	904800	679323
					1	100			
ՋԻՆ ՄԱՍ 10ԿՎ									
					3	250			
					2	10			
ք.Մարտունի	Մարտունի	35	2x10000	ք.Մարտունի	2	160	ք.Մարտունի	12151	659506
					1	63			
					1	100			
					1	1000			
ՀԱՅԻ ԳՈՐՇԱՐԱՆ 10ԿՎ									
ք.Մարտունի	Մարտունի	35	2x10000	ք.Մարտունի	1	250	ք.Մարտունի	0	148560
					1	160			
ՕԳ Աստղաձոր 10 ԿՎ									
					6	250			
					2	400			
					3	63			
գ.Աստղաձոր	Զոլաքար	35	2x2500	գ.Զոլաքար	1	40	գ.Աստղաձոր	1422120	421588
					4	100			
					2	25			
					1	10			
					1	30			
ՕԳ Գեղհովիտ 10ԿՎ									
					3	400			
					1	180			
					7	160			
գ.Գեղհովիտ	Մարտունի	35	2x10000	գ.Գեղհովիտ	4	250	գ.Գեղհովիտ	2387364	602457
					2	63			
					1	100			
					1	16			
ՕԳ Երանոս 10 ԿՎ									
գ.Երանոս	Երանոս	35	2x6300	գ.Լիճք	4	400	գ.Երանոս	2050704	597322
					5	250			

					5	160			
					2	100			
					2	25			
					1	63			
ՕԳ Զոլաքար 10 ԿՎ									
գ.Զոլաքար	Զոլաքար	35	2x2500	գ.Զոլաքար	1	180	գ.Զոլաքար	2112547	585168
					10	100			
					1	630			
					2	400			
					6	250			
					1	63			
					4	160			
					1	10			
գ.Ծովասար	Երանոս	35	2x6300	գ.Լիճք	1	40	գ.Ծովասար	976862	185297
					2	400			
					2	100			
					3	250			
					1	25			
					ՕԳ Լիճք 10 ԿՎ				
գ.Լիճք	Երանոս	35	2x6300	գ.Լիճք	9	400	գ.Լիճք	2092612	2358913
					4	100			
					1	630			
					3	250			
					5	160			
					2	1000			
					1	10			
ՕԳ Ծակքար 10 ԿՎ									
գ.Ծակքար	Երանոս	35	2x6300	գ.Լիճք	4	250	գ.Ծակքար	1124495	109208
					1	160			
					1	100			
					1	10			
ՕԳ Զորագյուղ 10 ԿՎ									
գ..Զորագյուղ	Երանոս	35	2x6300	գ.Լիճք	6	250	գ..Զորագյուղ	1772406	586077
					4	100			
					1	40			
					5	160			
					1	400			
					2	63			
					1	1000			
ՕԳ ՌՊՊ ԳԵՍ 10 ԿՎ									
գ.Մադինա	Մարտունի	35	2x10000	ք.Մարտունի	2	250	գ.Մադինա	305956	99725
					1	25			
					1	10			
					1	100			
գ.Լեռնակերտ	Մարտունի	35	2x10000	ք.Մարտունի	1	100	գ.Լեռնակերտ	87631	37553
					3	16			
գ. Ն.Գետաշեն					2	250	գ. Ն.Գետաշեն	33617	3801
գ.Ծաղկաշեն					1	63	գ.Ծաղկաշեն	0	6815
Յանղ					1	100	Յանղ	0	6180
Քարվասարա					1	25	Քարվասարա	0	3675
ՕԳ Ն.Գետաշեն 10 ԿՎ									
գ.Ն.Գետաշեն	Մարտունի	35	2x10000	ք.Մարտունի	4	400	գ.Ն.Գետաշեն	2534303	729693
					6	160			
					6	250			
					6	100			
					1	63			
					1	40			
ՕԳ Վաղաշեն 10 ԿՎ									

գ.Վաղաշեն	Մարտունի	35	2x10000	ք.Մարտունի	3	400	գ.Վաղաշեն	1340343	-
					3	100			
					1	250			
					1	10			
					1	63			
					1	630			
					1	160			
					1	40			
					ՕԳ Վարդաձոր 10 ԿՎ				
գ.Վարդաձոր	Երանոս	35	2x6300	գ.Լիճք	3	400	գ.Վարդաձոր	1137517	211889
					2	250			
					3	160			
					1	100			
					1	63			
					1	16			
					1	25			
					1	40			
ՕԳ Վարդենիկ 10 ԿՎ									
գ.Վարդենիկ	Վարդենիկ	35	4000	գ.Վարդենիկ	2	250	գ.Վարդենիկ	1664183	569293
					3	160			
					3	100			
					1	630			
					2	400			
ՕԳ Հանգստյան տուն 10 ԿՎ									
գ.Վարդենիկ	Վարդենիկ	35	4000	գ.Վարդենիկ	5	400	գ.Վարդենիկ	1082571	567621
					5	100			
					4	250			
					1	100			
					1	63			
					3	160			
					1	630			
					1	40			
					1	16			
					1	25			
					1	10			
ՕԳ Վ.Գետաշեն 10 ԿՎ									
Վ.Գետաշեն	Մարտունի	35	2x10000	ք.Մարտունի	6	250	Վ.Գետաշեն	1500352	845829
					1	100			
					2	160			
					1	630			
					1	400			
					1	16			
					1	1000			

Էլեկտրական բեռնվածքների հաշվարկը

Հաշվարկային առավելագույն հզորությունը հաշված է որպես հզորությունների գումար՝

- կոմունալ-կենցաղային պահանջներ, հասարակական, կուլտուր-կենցաղային շինություններ, հանգստի օբյեկտներ, արտաքին լուսավորություն,
- արտադրական օբյեկտների բեռնվածություններ:

Առավելագույն հզորությունների քանակի որոշման համար հաշվարկները կատարվել են ըստ հեռանկարային բնակչության քանակի:

Համաձայն ՇՆևԿ 2.07.01-89-ի՝ գյուղական բնակչության համար մեկ մարդու էլեկտրաէներգիայի սպառման տարեկան խոշորացված ցուցանիշը 950 կվտ.ժամ է, տարվա օգտագործվող ժամերի քանակը՝ 4100 ժամ, քաղաքային բնակչության համար համապատասխանաբար՝ 1700 կվտ/ժամ և 5200 ժամ:

Ստորև աղյուսակում տրված է բնակավայրերի էլեկտրամատակարարման հեռանկարային կարիքները բավարարելու համար պահանջվող առավելագույն հզորությունների, ինչպես նաև այդ համայնքներում ներկայումս առկա տրանսֆորմատորային հզորությունների ցուցանիշները.

Բնակավայրերի հեռանկարային պահանջվող առավելագույն հզորություններն ու առկա տրանսֆորմատորային հզորությունների ցուցանիշները.

N	Բնակավայրերի անվանումները	Հեռանկարային Բնակչության քանակը (մարդ)	Մեկ մարդու համար պահանջվող էլ. Էներգիայի քանակը (կվտ.ժամ/տարի)	Էլ. Էներգիայի գումարային ծախսը (հազ. Կվտ.ժամ/տարի)			Տարվա օգտագործվող ժամերի քանակը (ժամ)	Պահանջվող առավելագույն հզորությունը (կՎԱ)	Առկա Տրանսֆորմատորային ընդհանուր հզորությունը (կՎԱ)
				Բնակչ	Արտադր 15 %	Կորուստ 30 %			
1	ք. Մարտունի	12708	1700	21604.1	3240.6	6481.2	5200	6024.2	17107
2	Աստղաձոր	5024	950	4772.5	715.9	1431.7	4100	1687.8	3286
3	Գեղհովիտ, Նշխարք,	6779	-//-	6440.3	966.0	1932.1	-//-	2277.7	4354
	Լեռնակերտ	313	-//-	297.8	44.7	89.3	-//-	105.3	361
4	Երանոս	6153	-//-	5845.7	876.8	1753.7	-//-	2067.4	4123
5	Զոլաքար	7527	-//-	7150.9	1072.6	2145.3	-//-	2529.0	5076
6	Ծովասար	3286	-//-	3121.4	468.2	936.4	-//-	1103.9	1695
7	Լիճք	5805	-//-	5514.5	827.2	1654.3	-//-	1950.2	8836
8	Ծակքար	3155	-//-	2997.1	449.5	899.1	-//-	1059.9	1310

9	Ջորագյուղ	5217	-//-	4956.4	743.5	1486.9	-//-	1752.9	4470
10	Մադինա	1236	-//-	1174.6	176.2	352.4	-//-	415.4	635
11	Ներքին Գետաշեն	9703	-//-	9217.9	1382.7	2765.4	-//-	3260.0	4940
12	Վաղաշեն	4551	-//-	4323.2	648.5	1296.9	-//-	1528.9	2653
13	Վարդաձոր	3099	-//-	2943.8	441.6	883.1	-//-	1041.1	2144
14	Վարդենիկ	9330	-//-	8863.7	1329.5	2659.1	-//-	3134.7	8904
15	Վերին Գետաշեն	5018	-//-	4767.3	715.1	1430.2	-//-	1686.0	3956

Առկա և հաշվարկային ժամանակաշրջանի համար պահանջվող տրանֆորմատորային հզորությունների համեմատությունից երևում է, որ միկրոռեգիոնի բոլոր բնակավայրերն ունեն բավարար պահուստային հզորություն՝ հեռանկարային պահանջարկը բավարարելու համար:

Շահագործվող ՀԷԿ-երը

Հիդրոէներգետիկան համարվում է վերականգնվող էներգետիկայի կարևորագույն ճյուղ, և այն ողջ աշխարհում համարվում է այլընտրանքային, էկոլոգիապես մաքուր ու բնապահպանական առումով քիչ ռիսկային:

ՀՀ կառավարության 2014 թ. հուլիսի 31-ի 836-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության էներգետիկական անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թթ. միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը»: Վերոգրյալ հայեցակարգով Հայաստանի համար հրամայական է համարվել էներգիայի վերականգնվող աղբյուրների լայնածավալ օգտագործումն ու լիակատար ներառումը երկրի վառելիքաէներգետիկ հաշվեկշռի մեջ, որի ապահովման համար վերոգրյալ ծրագիր-ժամանակացույցով նախատեսվել են նաև հիդրոէլեկտրակայանների (ՀԷԿ) կառուցման միջոցառումներ: ՀՀ տարածքում արդեն գործում է 169 փոքր ՀԷԿ (ՓՀԷԿ), իսկ շուրջ 60-ը գտնվում են կառուցման փուլում: Ներկայում ՓՀԷԿ-երն արտադրում են ՀՀ-ում արտադրվող էլեկտրաէներգիայի պահանջարկի շուրջ 10 %-ը, ինչը գալիք տասնամյակի ընթացքում աճելու միտում է ունենալու:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների համաձայն ներկայումս մարզում էլեկտրաէներգիա են արտադրում 14 փոքր ՀԷԿ-եր: Ստորև աղյուսակում տրված են դրանց տվյալները.

Գեղարքունիքի մարզում գործող ՀԷԿ-երը

N	Անվանումը	Դրվածքային հզորությունը	Հաշ. ճնշումը
1	«Անի» փոքր ՀԷԿ	1x60=60	22.0
2	«Զորագյուղ-1» փոքր ՀԷԿ	2x200=400	545.4
3	«Զորագյուղ-3» փոքր ՀԷԿ	2x315=630	300.7
4	«Էրիկ» փոքր ՀԷԿ	2x1000+1x500=2500	96.0
5	«Այրք ՀԷԿ-1» փոքր ՀԷԿ	1x300=300	110.0
6	«Այրք ՓՀԷԿ-1» փոքր ՀԷԿ	1x630=630	126.9
7	«Մարտունի» փոքր ՀԷԿ	3x800=2400	174.4
8	«Այրք ՓՀԷԿ-2» փոքր ՀԷԿ	2x315=630	95.0
9	«Գետիկ-1» փոքր ՀԷԿ	2x2000+1x1600=5600	152.0
10	«Արգիչի» փոքր ՀԷԿ	3x1600+1x2000+1x3150=9950	274.8
11	«Ծովակ» փոքր ՀԷԿ	2x120=240	72.0
12	«Վահան» փոքր ՀԷԿ	1x800+1x500=1300	450.0
13	«Վարդենիկ» փոքր ՀԷԿ	2x3240=6480	163.3
14	«Դարանակ» փոքր ՀԷԿ	1x300+1x200=500	148.7/163.4
Ընդամենը		31.620 Մվտ	

Սակայն ՀՀ ՓՀԷԿ-երի գործունեության արդյունքում արդեն իսկ ի հայտ են եկել մի շարք խնդիրներ և խոչընդոտներ, որոնք մեծացնում են ՓՀԷԿ-երի ռիսկայնությունը բնապահպանական տեսանկյունից: ՓՀԷԿ-եր կառուցելիս գետերի էկոլոգիային հսկայական վնաս է հասցվում, քանի որ դրանք խախտում են գետերի ջրային և ջերմային ռեժիմները, խոչընդոտում են ձկների բազմացմանը, նպաստում են գետերի ծանծաղացմանը:

- Գործադիրը նոր կանոններ է սահմանում ՓՀԷԿ-երի կառուցման համար: Նոր ՓՀԷԿ-ի կառուցման համար ՋԹ չի տրամադրվի, եթե այն նախատեսվում է կառուցել այն գետերի վրա՝ որոնցում առկա են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր,
- որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է,
- որոնց վրա կան ջրաչափական դիտակետեր և նախատեսվող ջրառի և ջրահեռացման նիշերը շրջանցում են ջրաչափական դիտակետերը:

Կարգելվի ՓՀԷԿ-երի կառուցումը Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում,բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներում, բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում, ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներում, գետերի հոսքի ձևավորման տարածքներում, գետահատվածներում, որտեղ առկա են սողանքային տարածքներ, անտառային տարածքներում, որոնք հատվելու են շինարարական տարածքին մոտեցող

ճանապարհներ կառուցելիս, բացառությամբ պետական անտառային հողերում աշխատանքների իրականացման համաձայնության առկայության դեպքերի:

«Մշակվել է նաև «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար արգելված՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր հանդիսացող կամ դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի ծանրաբեռնված գետերի ցանկը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծ, որով կսահմանվի փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար արգելված գետերի ցանկը»:

Որպես օրինագծի հիմնավորում նշված է. «Վերջին տարիներին փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացմանը զուգընթաց փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման ընթացքում առաջացել են էկոլոգիական ու սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում: Փոքր հիդրոէլեկտրակայանների շինարարությունը էական վնաս է հասցնում բնությանը, իսկ փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացմանը զուգընթաց նկատվում է կենսաբազմազանության կորուստ, վտանգվում են Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակները, գետերը ծանրաբեռնվում են դերիվացիոն խողովակներով և հայտնվում ճգնաժամային վիճակում»:

2.1.4. Գազամատակարարում

ՀՀ Գեղարքունիքի մարզը համարվում է հանրապետությունում ամենագազաֆիկացված մարզերից մեկը: Մարզի 92 համայնքներից գազաֆիկացված են 61-ը կամ մարզի համայնքների՝ 66.3%-ը: Մարզի բնակչության շուրջ 77.6%-ը բնակվում են գազաֆիկացված բնակավայրերում:

Ըստ “Գազպրոմարմենիա” ՓԲԸ-ի 26.11.2019թ. N03-29/5308 գրությամբ տրամադրված տեղեկատվության՝ մարզի տարածքով անցնում են Ղազախ-Երևան Dպ=700 մմ, Մարտունի-Վարդենիս Dպ=500 մմ, Սևան-Գավառ Dպ=500 մմ,Ղազախ-Երևան Dպ=500 մմ, Վարդենիս-Ջերմուկ Dպ=300 մմ և Գավառ-Մարտունի Dպ=500 մմ մայրուղային գազատարներն իրենց միջակապերով, կողմնատար-գազատարներով և նրանց վրա տեղադրված կառույցներով:

Ըստ “Գազպրոմարմենիա” ՓԲԸ-ի 28.10.2021թ. N02/18.1/2838-2021 և 08.12.2021թ. N02/18.1/3242-2021 գրություններով տրամադրված տեղեկատվության՝ Գեղարքունիք-3 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի համար սնուցման աղբյուր են հանդիսանում հետևյալ գազատարները.

«Գեղարքունիք-3» *միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք-3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման մեջ ընդգրկված տարածքների վերաբերյալ տեղեկատվություն				
Համայնք	Բնակավայրը	Սնուցման աղբյուր հանդիսացող գազատարի տվյալները		
		Անվանումը	Տրամագիծը $D_{պ}$ (մմ)	ԳԲԿ-ի տեղակայման վայրը
1	2	3	4	5
Գեղարքունիք-3	Աստղաձոր	Մարտունի-Վարդենիս	500	նշված չէ
	Ծակքար	Գավառ-Մարտունի	500	նշված չէ
		Միջակապ Գավառ-Մարտունի $D_{պ}$-500 և Սևան-Վարդենիս $D_{պ}$-300	200	նշված չէ
	Ձորագյուղ	-	-	-
	Երանոս	Գավառ-Մարտունի	500	նշված չէ
		Կողնատար-գազատար ԳԲԿ Երանոս	100	նշված չէ
		ԳԲԿ Երանոս	-	նշված չէ
	Գեղհովիտ	Գավառ-Մարտունի	500	նշված չէ
	Լիճք	Գավառ-Մարտունի	500	նշված չէ
		Կողնատար-գազատար ԳԲԿ Մարտունի	300	նշված չէ
	Մադինա	Գավառ-Մարտունի	500	նշված չէ
	Մարտունի	Կողնատար-գազատար ԳԲԿ Մարտունի	300	նշված չէ
		ԳԲԿ Մարտունի	-	նշված չէ
	Ներքին Գետաշեն	Կողնատար-գազատար ԳԲԿ Մարտունի	300	նշված չէ
	Ծովասար	-	-	-
	Վաղաշեն	Մարտունի-Վարդենիս	500	նշված չէ
	Վարդենիկ	Մարտունի-Վարդենիս	500	նշված չէ
	Վարդաձոր	Գավառ-Մարտունի	500	նշված չէ
	Վերին Գետաշեն	Գավառ-Մարտունի	500	նշված չէ
	Ձոլաքար	Մարտունի-Վարդենիս	500	նշված չէ

Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք-3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման մեջ ընդգրկված տարածքների վերաբերյալ տեղեկատվություն				
Համայնք	Բնակավայրը	Գազատարի տվյալները		
		Անվանումը	Տրամագիծը Dպ (մմ)	Երկարությունը Lպ (մ)
1	2	3	4	5
Գեղարքունիք-3	Աստղաձոր	Աստղաձոր համայնք	20-159	41187
	Ձորագյուղ	Ձորագյուղ համայնք	20-219	50948
	Երանոս	Երանոս համայնք	20-219	58949
	Մադինա	Մադինա համայնք	20-159	18062
	Ծովասար	Ծովասար համայնք	20-219	43130
	Վարդաձոր	Վարդաձոր համայնք	20-159	28953
	Վ. Գետաշեն	Վ. Գետաշեն համայնք	20-219	33533

Օպերատիվ տեղեկություններ գազաբաշխիչ ցանցի վերաբերյալ
/ըստ "Գազպրոմարմենիա"ՓԲԸ-ի տրամադրած 26.11.2019թ. N *03-29/5308 գրության/*

ՀՀ	ԳԳ մասնաճյուղի տեղամասի (տարածք) ԳԲԿ-ի բնակավայրի անվանումը	Գազատարներ /կմ/						
		Այդ թվում "Գազպրոմարմենիա" հաշվեկշռում և անհատույց						
		Ընդամենը	Վերգետնյա		Ստորգետնյա			
			բ/ճ	մ/ճ	բ/ճ		մ/ճ	
					ՊԷ	Մետաղ	ՊԷ	Մետաղ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*
1	ք. Մարտունի	8.117	0.000	5.703	0.000	0.000	1.740	0.674
2	Աստղաձոր	3.0	0.000	1.520	0.000	0.000	0.230	1.250
3	Գեղհովիտ, /Նշխարք, Լեռնակերտ/	5.830	0.000	4.630	0.000	0.000	0.000	1.200
4	Երանոս	2.220	0.000	1.160	0.000	0.000	0.000	1.060
5	Զոլաքար	3.140	0.000	1.620	0.000	0.000	0.358	1.162
6	Ծովասար	3.392	0.000	1.034	0.000	0.000	1.100	1.258
7	Լիճք	5.050	0.000	1.450	0.000	0.000	0.730	2.870
8	Ծակքար	6.023	0.000	1.417	0.000	0.000	1.660	2.946
9	Ձորագյուղ	1.700	0.000	0.000	0.000	0.000	0.000	1.700
10	Մաղինա	7.250	0.000	0.100	0.000	0.000	0.000	7.150
11	Ներքին Գետաշեն	4.700	0.000	0.600	0.000	0.000	0.080	4.020
12	Վաղաշեն	2.670	0.000	0.880	0.000	0.000	1.580	0.210
13	Վարդաձոր	1.810	0.000	1.520	0.000	0.000	0.290	0.000
14	Վարդենիկ	5.260	0.000	0.270	0.000	0.000	1.570	3.420
15	Վերին Գետաշեն	2.940	0.000	0.740	0.000	0.000	0.000	2.200

Բնակավայրերի տարածքում գազամատակարարումն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ միջին և ցածր:

Բնակավայրերի գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի վերաբերյալ տեխնիկական տվյալներ և գազասպառման վերաբերյալ քանակական ցուցանիշներ

N	Բնակավայրի անվանումը	Սնուցման աղբյուր հանդիսացող գազատարի				ԳԲԿ-ի տեղակայման վայրը	Գազաֆիկացման աստիճանը %	Բաժա-նորդ-ների քանակը	Գկկ, ՊԳԿԿ-ների քանակը	Գազասպառման տարեկան քանակը 2019թ. դրությամբ Կոմունալ կենցաղային և արտադրական մ³
		Ճնշումը	Վերգետ-նյա կմ	Ստոր-գետնյա կմ	Տրամա-գիծը					
1	ք. Մարտունի	բ/ճ		Կողմնատար գազատար ԳԲԿ Մարտունի	200	Մարտունու ԳԲԿ	78	3054	15	7124491
		մ/ճ	6.123	5.816	57-219					
2	Աստղաձոր	բ/ճ		Մարտունի-Վարդենիս			78	770	4	1142232
		մ/ճ	1.520	1.480	57-159					
3	Գեղհովիտ, Նշխարք	բ/ճ		Գավառ-Մարտունի	500		77	1060	5	985228
		մ/ճ	4.630	1.200	57-219					
	Լեռնակերտ	մ/ճ	0.100	0.750	89-108		82	51	1	47186
4	Երանոս	բ/ճ		Գավառ-Մարտունի	500	Երանոսի ԳԲԿ	79	1018	5	2281937
		բ/ճ		Կողմնատար-գազատար ԳԲԿ Երանոս	500					
		մ/ճ	1.16	1.060	76-219					

5	Ջոլաքար	բ/ճ		Մարտունի-վարդենիս	500	Մարտունու ԳԲԿ	82	1185	10	990281
		մ/ճ	1.620	1.520	76-159					
6	Ծովասար	մ/ճ	1.034	2.358	89-159	Երանոսի ԳԲԿ	79	504	2	600673
7	Լիճք	բ/ճ		Գավառ-Մարտունի	500		78	967	5	2837949
		մ/ճ	1.450	3.600	57-219					
8	Ծակքար	բ/ճ		Գավառ-Մարտունի	500		79	494	3	717937
		մ/ճ	1.417	4.606	32-219					
9	Ձորագյուղ	մ/ճ		1.700	108		78	790	4	1127424
10	Մադինա	բ/ճ		Գավառ-Մարտունի	500	Մարտունու ԳԲԿ	92	178	2	170964
		մ/ճ	0.100	7.150	76-159					
11	Ներքին Գետաշեն	բ/ճ		Գավառ-Մարտունի	500		73	1653	8	1675546
		մ/ճ	0.600	4.100	25-159					
12	Վաղաշեն	մ/ճ	0.830	1.790	76-219		80	709	5	682857
13	Վարդաձոր	բ/ճ		Գավառ-Մարտունի	500	Երանոսի ԳԲԿ	81	451	3	724138
		մ/ճ	1.520	0.290	57-160					
14	Վարդենիկ	բ/ճ		Մարտունի-Վարդենիս	500	Մարտունու ԳԲԿ	76	1553	9	2199391
		մ/ճ	0.270	4.990	57-273					
15	Վերին Գետաշեն	մ/ճ	0.740	2.200	76-159		82	799	3	847883

2.1.4.1. Ջերմամատակարարում

Հայաստանում կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերը տարբեր պատճառներով դադարել են գոյություն ունենալ դեռևս վաղ 2000-ականներին: Վերջին ժամանակահատվածում ավելի փոքր համակարգեր են սկսել կառուցվել առանձին կամ խումբ նորակառույց բազմաբնակարան շենքերի ջեռուցման և տաք ջրի պահանջարկն ապահովելու համար, սակայն դրանք որևէ էական կշիռ ընդհանուր պահանջարկի կառուցվածքի մեջ չունեն:

Դիտարկվող տարածաշրջանի որոշ դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում գործում են կենտրոնացված ջեռուցման համակարգեր, բացառությամբ՝ Վերին Գետաշեն և Երանոս բնակավայրերի, որոնց նախադպրոցական ուսումնական հաստատություններն ունեն վառարանային ջեռուցում:

Բնակչության ջեռուցման և տաք ջրի ստացումն իրականացվում է հիմնականում անհատական ջեռուցման կաթսաների կամ վառարանների միջոցով՝ բնական գազով, որը միկրոռեգիոնի գազիֆիկացման բարձր աստիճանի արդյունք է:

2.1.4.2. Գազի հեռանկարային ծախսը

Գազի ընդհանուր պահանջարկի նախնական հաշվարկները կատարելիս հաշվի է առնված բնական գազով ապահովել.

- Բոլոր բնակելի և հասարակական նշանակության շենքերի (կրթական, առողջապահական, մշակութային, վարչական) ջեռուցման համար անհրաժեշտ կարիքների բավարարումը:
- Բնակչության տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման համար անհրաժեշտ պահանջարկը:
- Արտադրական ձեռնարկությունների ջեռուցման, օդափոխության և տեխնոլոգիական կարիքների համար պահանջարկը:

Ստորև աղյուսակում տրված է բնակավայրերի գազի հեռանկարային տարեկան պահանջարկի խոշորացված հաշվարկների (ըստ ՇՆՁ IV-12.101-04) ցուցանիշները.

Գազի հեռանկարային տարեկան պահանջարկի խոշորացված ցուցանիշներն ըստ բնակավայրերի[3]

N	Բնակավայրերը	Հեռանկարային բնակչությունը	Գազի հեռանկարային տարեկան պահանջարկը հազ. մ^3
1	ք. Մարտունի	12708	3813
2	Աստղաձոր	5024	1105
3	Գեղհովիտ, Նշխարք,	6779	1491
	Լեռնակերտ	313	69
4	Երանոս	6153	1354

[3] *Միջինացված ցուցանիշներում ներառված են կոմունալ-կենցաղային, հասարակական և այլ կազմակերպությունների, արտադրական ձեռնարկությունների գազասպառման պահանջը*

5	Զոլաքար	7527	1656
6	Ծովասար	3286	723
7	Լիճք	5805	1277
8	Ծակքար	3155	694
9	Զորագյուղ	5217	1148
10	Մադինա	1236	272
11	Ներքին Գետաշեն	9703	2135
12	Վաղաշեն	4551	1001
13	Վարդաձոր	3099	682
14	Վարդենիկ	9330	2053
15	Վերին Գետաշեն	5018	1104
Ընդամենը			20576

Ըստ կատարված մոտավոր հաշվարկների, Գեղարքունիք-3 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի գազի հեռանկարային տարեկան ընդհանուր պահանջարկը կկազմի մոտ 20 մլն մ^3:

Նախագծային առաջարկություններ

- Էլեկտրական համակարգի արդիականացում, վերազինում ժամանակակից պահանջներին համապատասխան:
- Էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում ապահովելու համար անցում երկտրանսֆորմատորային ենթակայանների:
- Համակարգերի համապատասխանեցում անվտանգության տեխնիկայի պահանջներին:
- Հին փայտյա հենասյուների փոխարինում նոր, բետոնե սյուներով:
- Արտաքին լուսավորության նախատեսում բոլոր փողոցներում:
- Բնակավայրերի տարածքով անցնող բարձր լարման հոսանքալարերի անվտանգության գոտիների առանձնացում, դրանց օգտագործման սահմանափակումների, ռեժիմների սահմանում:
- Մարտունի քաղաքի վարչական, հասարակական, կրթական, առողջապահական հաստատությունների, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի ջեռուցումը նպատակարմար է իրականացնել լոկալ կաթսայատների միջոցով: Արտադրական օբյեկտների, ինչպես նաև անհատական տների ջեռուցումը կիրականացվի ապակենտրոնացված ջերմամատակարարման համակարգերով՝ հիմնականում փոքր հզորության անհատական գազի կաթսաներով կամ վառարաններով: Տաք ջրի ստացումը՝ գազային ջրատաքացուցիչների, սննդի պատրաստումը՝ գազօջախների միջոցով:
- Գազի արդյունավետ և անվտանգ շահագործման նպատակով անհրաժեշտ է գազամատակարարման ներտնային ցանցի տեխնիկական վիճակի ապահովում:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակարաններում բնական գազ ունենալը մշտապես մարտահրավեր է հանդիսանալու մարդկանց կյանքի և գույքի անվտանգության ապահովման տեսանկյունից, ջերմամատակարարման և տաք ջրի արտադրության առումով անհատական ջեռուցման կաթսաներին այլընտրանք կարող են հանդիսանալ արևային ջրատաքացուցիչները և էներգիայի սեփական կարիքների արտադրության

համար վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատական այլ համակարգերը:

2.1.4.3. Այլընտրանքային էներգետիկայի առաջարկ

➢ 21-րդ դարի սկզբին ողջ աշխարհը գնում է հանքային ռեսուրսների խիստ տնտեսման և միաժամանակ այլընտրանքային էներգիայի աղբյուրների հայտնաբերման ուղղությամբ: Ընդ որում որոշ զարգացած երկրներ վաղուց են անցել այլընտրանքային էներգետիկ աղբյուրների օգտագործման պրակտիկային ոչ միայն տնտեսական, այլև՝ բնապահպանական դրդապատճառներով:

Հայաստանի Հանրապետությում արտադրվող էլեկտրաէներգիայի հիմնական աղբյուրներ համարվում են ատոմակայանը և ջերմային էլեկտրակայանները: Եթե հաշվի առնենք, որ ջերմակայանները աշխատում են գազով, ինչը ներկրվող էներգետիկ ռեսուրս է և կախվածություն է առաջացնում արտաքին աշխարհից, ապա էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական աղբյուրի՝ ատոմակայանի, աշխատանքի դադարեցման արդյունքում ողջ հանրապետությունը կարող է կանգնել էներգետիկ սովի առջև:

Հաշվի առնելով տարածաշրջանի մարզի կլիմայական պայմանները /արևափայլի տևողությունը՝ 2700-2800 ժամ/ որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր կարելի է դիտարկել արևային էներգիան:

Արևային ճառագայթմամբ աշխատող համակարգերի անվնաս ու անաղմուկ տեխնոլոգիայի հուսալիությունը, բաղադրամասերի երկարակեցությունը հաստատվել են տարիների ընթացքում և սկզբնական մեծ ներդրումները, որոնք պահանջվում են արևային համակարգերի գործարկման համար, արդարացնում են իրենց, ինչով էլ հենց հիմնավորվում է դրանց կիրառման նպատակահարմարությունը:

Որպես առավելություն հարկ է նշել նաև, որ արևային կոլեկտորների կիրառման համար առանձին տարածքներ հարկավոր չէ զբաղեցնել, քանի որ դրանք կարելի է տեղադրել անմիջապես շենքերի տանիքներին:

Հաշվի առնելով, որ ածխաջրածնային վառելիքը տարեցտարի թանկանում է, ուստի այլընտրանքային էներգետիկայի զարգացումն ավելի ձեռնտու է:

Արեգակնային էներգիան անսպառ և հուսալի աղբյուր է, որը տալիս է էներգետիկ անկախություն և չի աղտոտում շրջակա միջավայրը:

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատական այլ համակարգերի տեղակայման նպատակով արդեն իսկ իրականացվում են որոշ ծրագրեր, մասնավորապես՝ «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» մասնակցությամբ Հայաստանի չգազաֆիկացված համայնքներում իրականացվում է «Էներգաարդյունավետ» վարկային ծրագիրը: Ծրագրի շրջանակներում 2019 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ տարբեր համայնքներում արդեն իսկ տեղադրվել են թվով 2896 ջրատաքացուցիչներ:

Հայաստանի կառավարությունը նախատեսում է աստիճանականորեն ընդլայնել այսպիսի ծրագրերի իրականացումը, խրախուսելով որ յուրաքանչյուր շինություն ունենա ջեռուցման և տաք ջրի արտադրության իր անհատական համակարգը՝ հիմնված վերականգնող էներգետիկ ռեսուրսների վրա:

Արևային օրերի երկար տևողությունը և մշտական քամիների առկայությունը նպաստավոր են մարզում այլընտրանքային էներգետիկայի արտադրության կազմակերպման համար:

Ըստ ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040թ.) նախատեսվում է վերականգնվող էներգետիկայի ներուժի առավելագույն օգտագործում, որը, հաշվի առնելով դրանց՝ նվազագույն ծախսումներով էլեկտրաէներգիայի արտադրական հզորությունների զարգացման պլանի մաս կազմելու հանգամանքը, հանդիսանում է էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթություններից մեկը: Արևային կայանների կառուցումը, հանդիսանալով տնտեսապես ամենաշահավետը Հայաստանի պարագայում, հաշվի առնելով առկա ռեսուրսները և այս տեխնոլոգիայի զարգացման միտումները ողջ աշխարհում, կլինի գերակա մնացած տեսակների նկատմամբ՝ հաշվի առնելով համակարգի հուսալիության ու անվտանգության ցուցանիշներով պայմանավորված սահմանափակումները:

Սույն թվականի նոյեմբերի մեկի դրությամբ ցանցին է միացված մինչև 500 կՎտ հզորության 1640 արևային ինքնավար կայաններ՝ ընդհանուր 25.9 ՄՎտ դրվածքային հզորությամբ: Ներկա զարգացման տեմպերը թույլ են տալիս կանխատեսելու, որ մինչև 2023 թվականը օրենքով սահմանված սահմանափակումների ուժի մեջ մտնելը դրանց ընդհանուր դրվածքային հզորությունը կհասնի 100 ՄՎտ-ի:

ՀՀ կառավարությունը նպատակ ունի մինչև 2026 թվականները արևային էներգիայի արտադրության մասնաբաժինը ընդհանուրի մեջ հասցնել 10%-ի, ինչը նշանակում է, որ կունենանք 1.2 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրանք արևային կայաններց, ինչի համար անհրաժեշտ է ունենալ ընդհանուր 700 ՄՎտ արևային կայանների դրվածքային հզորություններ՝ ներառյալ ինքնավար կայանները:

Հեռահաղորդակցություն

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապն ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ Տելեկոմ Արմենիա (Beeline ապրանքանիշ), Վիվա սելլ /ՄՏՍ ապրանքանիշ/ և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ): Տելեկոմ Արմենիա (Beeline ապրանքանիշ) ՀՀ Գեղարքունիքի մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Նշված օպերատորների բջջային կայանների վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է Հավելվածներ փաթեթի Հավելված 1-ում:

ՀՀ Գեղարքունիքի եթերային հեռուստահաղորդումները հեռարձակվում են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ Գեղարքունիքի տարածքային բաժնի կողմից սպասարկվող թվային կայանների միջոցով: Մարզի տարածքում հեռարձակվում են «Հ1», «Հ2», «RTR-PLANETA», «Արմենիա», «Կենտրոն», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Շողակաթ» և մարզի տարածքում տեղակայված՝ «ՔյավառTV», «ՋանգակTV» և «STV1» հեռուստաընկերությունների ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկված է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Մարզի բնակավայրերը գրեթե ամբողջությամբ ապահովված են ինտերնետ ծածկույթով և կաբելային հեռուստատեսությամբ:

Հայաստանի Հանրապետության փոստային կապի «Հայփոստթրաստ» ԲԲԸ ՀՀ Գեղարքունիքի մարզի հինգ փոստային մասնաճյուղերը սպասարկում են մարզի 92 համայնքներին:

Կոշտ թափոններ

Մարզի 34 համայնքներում, որոնցում բնակվում են մարզի բնակչության 60%-ը, աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Բոլոր 5 քաղաքներն ունեն աղբահանության համար նախատեսված մասնագիտացված մեքենաներ, որոնցով սպասարկում են մարզի բնակչության՝ 29.8%-ը: Աղբահանություն կազմակերպող համայնքներում հավաքված աղբը տեղափոխվում է բաց աղբավայրեր: ՀՀ Գեղարքունիքի մարզի 5 քաղաքները՝ Գավառ, Մարտունի, Սևան, Վարդենիս, Ճամբարակ, ընդգրկվել են «ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ թափոնների կառավարման ծրագրում», որը ֆինանսավորվում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի (ՎԶԵԲ), Եվրոպական Միության հարևանության ներդրումային գործիք (EUNIF) կազմակերպության և Արևելյան Եվրոպայի էներգիայի արդյունավետության և բնապահպանության գործընկերության կողմից (E5P):

ԳԼՈՒԽ 3
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ներածություն

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագծի մշակման հիմնական նպատակը, տարածքային պլանավորման միջոցով, համայնքների համար բարենպաստ կենսամիջավայրի ձևավորման ու կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումն է:

Քաղաքացիական պաշտպանության (ՔՊ) ինժեներատեխնիկական և արտակարգ իրավիճակների (ԱԻ) կանխարգելիչ միջոցառումներն ուղղված են մարտական գործողությունների, ինչպես նաև տարերային և տեխնածին բնույթի ռիսկերի կանխատեսմանը, կանխարգելմանը, իսկ դրանց առաջացման դեպքում բնակչության և տարածքների պաշտպանությանը: Այս միջոցառումներն ապահովում են բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում և մանրամասն հատակագծման նախագծերում հատուկ կարևորագույն նշանակության օբյեկտների գործունեության կայունությունը, շենքերի, շինությունների, ինժեներական ցանցերի, հիդրոտեխնիկական կառույցների, տրանսպորտային հաղորդակցության ուղիների անվտանգությունը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ Գեղարքունիք-3 համակցված տարածքի ինժեներա-երկրաբանական նախապատրաստումը, տարերային և տեխանծին վտանգավոր երևույթներից պաշտպանությունը (այդ թվում՝ երկրաշարժից), ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ինժեներա-տեխնիկական միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, սեյսմիկ ռիսկի նվազեցման անհրաժեշտ միջոցառումների իրականացում կարգավորվում են համապատասխան իրավական ակտերով, համայնքային և մարզային մակարդակներում մշակված արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններով և այլ նորմատիվա-իրավական ակտերով, որոնք նպատակաուղղված են բնակավայրի տարածքում անվտանգ, բարենպաստ, կայուն կենսամիջավայրի ձևավորմանը:

Արտակարգ իրավիճակներում համայնքի տարածքի ռացիոնալ օգտագործման և կենսագործունեության կայունության բարձրացման համար նախագծում նախատեսված է

տարբեր ֆունկցիոնալ գոտիների և միջհամայնքային տրանսպորտային ցանցի մանրամասն լուծումներ:

Փողոցների նախագծային լայնությունը, կարմիր գծերում, նախատեսվում է նվազագույնը 3.0 մ, որպեսզի շենքերի և շինությունների փլուզման գոտիներում հնարավոր լինի փրկարարական ստորաբաժանումների առաջխաղացումը:

Ինժեներական հաղորդակցության ուղիների նախագծման հիմքում դրվում է բնակավայրերի կենսագործունեության հուսալի ապահովումը, ինչպես խաղաղ, այնպես էլ արտակարգ իրավիճակներում և ռազմական գործողությունների ժամանակ:

Անհրաժեշտ է նախատեսել բնակավայրերի կենտրոնացված ազդարարման համակարգի վերականգնում:

3.1. Վտանգավոր բնական երևույթներ

1) Գեղարքունիք-3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված և հարակից տարածքներում /պալեոերկրաշարժերի, արխեոերկրաշարժերի, պատմական և գործիքային/ ուժեղ երկրաշարժերի հիմնական պարամետրերի՝ ուժի (մագնիտուդ), ժամանակի և տեղի (էպիկենտրոնի կոորդինատների) մասին.

Պարամետրերը տրված են ըստ Համաշխարհային բանկի Կոնսորցիումի կողմից ստեղծված՝ Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) և հարակից տարածքների սեյսմիկ վտանգի գնահատման տվյալների բազայի, 2018թ.:

- **Արխեոյունիքի Ք.ա. 5400թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.08°N, λ=45.69°E, մագնիտուդը՝ M=7.4

- **Արխեոյունիքի Ք.ա. 1800թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.11°N, λ=45.67°E, մագնիտուդը՝ M=7.3

- **Արխեոյունիքի Ք.ա. 900թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.09°N, λ=45.68°E, մագնիտուդը՝ M=7.5

- **Նորադուսի 1226թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.33°N, λ=45.14°E, մագնիտուդը՝ Ms=6.0

- **Վարդենիկի 1322թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.27°N, λ=45.15°E, մագնիտուդը՝ Ms=6.5

Գեղարքունիք-3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքներում ներկայումս էլ հնարավոր առավելագույն սեյսմիկ վտանգը կապված է վերոնշյալ արխեոերկրաշարժերի օջախների հետ:

2) Գեղարքունիք-3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված և հարակից տարածքներում ակտիվ խզվածքների սեյսմիկ պոտենցիալի (առավելագույն ներուժի) մասին.

Պարամետրերը տրված են ըստ Համաշխարհային բանկի Կոնսորցիումի կողմից ստեղծված՝ ՀՀ և հարակից տարածքների սեյսմիկ վտանգի գնահատման տվյալների բազայի, 2018թ.:

· **Փամբակ-Սևան-Սյունիքի ակտիվ խզվածքի (PSSF) PSSF8 սեգմենտ՝** սեյսմիկ պոտենցիալը՝ M_{max}=7.5 */ըստ հնաեյսմաբանական (տեղաշարժ, հայտնաբերած պեղումներով)/*: Սույն տեղեկատվության 1-ին կետի 1-ին ենթակետում բերված արխեոերկրաշարժերը տեղի են ունեցել նշված սեգմենտի գոտում:

· **Գավառագետի ակտիվ խզվածք (GgF)՝** սեյսմիկ պոտենցիալը՝ Ms_{max}=6.5 */պատմական տվյալների/*: Նորադուսի 1226թ. և Վարդենիկի 1322թ. պատմական երկրաշարժերը տեղի են ունեցել նշված խզվածքային գոտում:

Նշենք, որ Մարտունի քաղաքի համար վերոհիշյալ խզվածքներից առավել վտանգավոր է Փամբակ-Սևան-Սյունիքի ակտիվ խզվածքի PSSF8 ($Mw_{միջ}$=7.3) սեգմենտը, որի հեռավորությունը Մարտունի քաղաքից մոտավորապես 21 կմ է:

Ստորև, նկար վրա ցույց է տրված Գեղարքունիք-3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված և հարակից տարածքներում տեղի ունեցած ուժեղ երկրաշարժերի էպիկենտրոնների և վերոնշյալ հայտնի տեկտոնական խզվածքների սեգմենտների տարածական տեղադրվածությունը: Այդ նկարում տրված են նաև Գեղարքունիքի մարզի և հարակից տարածքներում սեյսմիկ վտանգի մեծությունները՝ 2018թ. ՀՀ տարածքի 1:500000 մասշտաբի սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) քարտեզի հենքի վրա, ըստ որի Գեղարքունիք-3 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքները գտնվում են α_{max} = 0.3g (0.3g-ն մոտավորապես համապատասխանում է 8 բալի՝ ըստ MSK–64 սեյսմիկ ինտենսիվության 12-բալանոց սանդղակի) առավելագույն հորիզոնական արագացման արժեքով սեյսմիկ գոտում *(պարամետրերը տրված են ըստ Համաշխարհային բանկի Կոնսորցիումի կողմից ստեղծված՝ ՀՀ և հարակից տարածքների սեյսմիկ վտանգի գնահատման տվյալների բազայի, 2018թ.)*.



ՀՀՇՆ 20.04._ 85

Հավելված 2

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության համայնքներն ու բնակավայրերն ըստ սեյսմիկ գոտիների

Գեղարքունիքի մարզ

№

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1 Գավառ (Կամո)	Գավառ (Կամո) քաղաք 1
2 Ճամբարակ	Ճամբարակ քաղաք 2
3 Այգուտ գյուղ 2	
4 Անտառամեջ գյուղ 2	
5 Արծվաշեն գյուղ (ժամանակավորապես գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ) 1	
6 Բարեպատ գյուղ 2	
7 Գետիկ գյուղ 2	

8 Դպրաբակ գյուղ 2
9 Թթուջուր գյուղ 2
10 Կալավան գյուղ 2
11 Ձորավանք գյուղ 1
12 Ճապկուտ գյուղ 2
13 Մարտունի գյուղ 2
14 Վահան գյուղ 2
15 Մարտունի Մարտունի քաղաք 1
16 Սևան Սևան քաղաք 2
17 Գագարին գյուղ 2
18 Վարդենիս Վարդենիս քաղաք 2
19 Այրք գյուղ 2
20 Ներքին Շորժա գյուղ 2
21 Վերին Շորժա գյուղ 2
22 Ախպրաձոր Ախպրաձոր գյուղ 2
23 Ակունք Ակունք գյուղ 2
24 Աստղաձոր Աստղաձոր գյուղ 1
25 Արծվանիստ Արծվանիստ գյուղ 2
26 Բերդկունք Բերդկունք գյուղ 2
27 Գանձակ Գանձակ գյուղ 2
28 Գեղամասար Սոթք գյուղ 2
29 Ազատ գյուղ 2
30 Ավազան գյուղ 1
31 Արեգունի գյուղ 2
32 Արփունք գյուղ 2
33 Գեղամաբակ գյուղ 2
34 Գեղամասար գյուղ 2
35 Դարանակ գյուղ 2
36 Զառիվեր գյուղ 2
37 Կախակն գյուղ 2
38 Կութ գյուղ 2
39 Կուտական գյուղ 2
40 Նորաբակ գյուղ 2
41 Շատջրեք գյուղ 2
42 Շատվան գյուղ 2
43 Ջաղացաձոր գյուղ 2
44 Տրետուք գյուղ 2
45 Փամբակ գյուղ 2
46 Փոքր Մասրիկ գյուղ 2
47 Գեղամավան Գեղամավան գյուղ 2
48 Գեղարքունիք Գեղարքունիք գյուղ 2
49 Գեղաքար Գեղաքար գյուղ 1
50 Գեղհովիտ Գեղհովիտ գյուղ 1
51 Լեռնակերտ գյուղ 1

52 Նշխարք գյուղ 1
53 Դդմաշեն Դդմաշեն գյուղ 2
54 Երանոս Երանոս գյուղ 1
55 Զոլաքար Զոլաքար գյուղ 1
56 Զովաբեր Զովաբեր գյուղ 2
57 Ծովասար Ծովասար գյուղ 1
58 Լանջաղբյուր Լանջաղբյուր գյուղ 1
59 Լիճք Լիճք գյուղ 1
60 Լճաշեն Լճաշեն գյուղ 2
61 Լճավան Լճավան գյուղ 2
62 Լճափ Լճափ գյուղ 2
66 Լուսակունք Լուսակունք գյուղ 2
67 Խաչաղբյուր Խաչաղբյուր գյուղ 2
68 Ծակքար Ծակքար գյուղ 1
69 Ծաղկաշեն Ծաղկաշեն գյուղ 1
70 Ծաղկունք Ծաղկունք գյուղ 2
71 Ծովագյուղ Ծովագյուղ 2
72 Ծովազարդ Ծովազարդ գյուղ 2
73 Ծովակ Ծովակ գյուղ 2
74 Ծովինար Ծովինար գյուղ 1
75 Կարճաղբյուր Կարճաղբյուր գյուղ 2
76 Կարմիրգյուղ Կարմիրգյուղ գյուղ 1
77 Հայրավանք Հայրավանք գյուղ 2
78 Զորագյուղ Զորագյուղ գյուղ 2
79 Մադինա Մադինա գյուղ 1
80 Մաքենիս Մաքենիս գյուղ 2
81 Մեծ Մասրիկ Մեծ Մասրիկ գյուղ 2
82 Ներքին Գետաշեն Ներքին Գետաշեն գյուղ 1
83 Նորակերտ Նորակերտ գյուղ 2
84 Նորաշեն Նորաշեն գյուղ 2
85 Նորատուս Նորատուս գյուղ 2
86 Շողակաթ Շողակաթ գյուղ 2
87 Արտանիշ գյուղ 2
88 Աղբերք գյուղ 2
89 Դրախտիկ գյուղ 2
90 Ծափաթաղ գյուղ 2
91 Ջիլ գյուղ 2
92 Չկալովկա Չկալովկա գյուղ 2
93 Սարուխան Սարուխան գյուղ 1
94 Սեմյոնովկա Սեմյոնովկա գյուղ 2
95 Վաղաշեն Վաղաշեն գյուղ 1
96 Վանևան Վանևան գյուղ 2
97 Վարդաձոր Վարդաձոր գյուղ 1
98 Վարդենիկ Վարդենիկ գյուղ 1

99 Վարսեր Վարսեր գյուղ 2
100 Վերին Գետաշեն Վերին Գետաշեն գյուղ 1
101 Տորֆավան Տորֆավան գյուղ 2



Նկար 1. Գեղարքունիքի մարզի և հարակից տարածքների սեյսմատեկտոնական սխեմատիկ քարտեզը:

Հարկ է նշել, որ սեյսմամիկրոշրջանացման աշխատանքներն իրականացվում են սեյսմաշրջանացման տվյալները հստակեցնելու նպատակով՝ կախված տեղային գրունտային, տեկտոնական, գեոմորֆոլոգիական պայմաններից:

3. Գեղարքունիքի (Գեղարքունիք-3) մարզերի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքներին սպառնացող բնածին վտանգների վերաբերյալ

N	Բնակավայրեր	Ուժեղ քամի	Հեղեղ	Սելավ	Ցրտահարություն	Քարաթափում	Սողանք	Երաշտ	Կարկուտ
Գեղարքունիքի-3									
1	ք.Մարտունի	V	V			V	V		V
2	Աստղաձոր	V		V			V		V

3	Գեղհովիտ	V	V			V	V		V
4	Երանոս	V		V			V		V
5	Զոլաքար	V							V
6	Ծովասար	V		V					V
7	Լիճք	V	V				V		V
8	Ծակքար	V							V
9	Զորագյուղ	V	V	V		V			V
10	Մադինա	V					V		V
11	Ն.Գետաշեն	V					V		V
12	Վաղաշեն	V							V
13	Վարդաձոր	V	V				V		V
14	Վարդենիկ	V				V			V
15	Վ.Գետաշեն	V					V		V

Կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ

«Գեղարքունիք-3» միկրոռեգիոնալ մակարդակի համայնքներում բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությունը իրականացնելու նպատակով առկա հեղեղավտանգ և սելավավտանգ տարածքներում անհրաժեշտ է՝ մաքրել Մարտունի քաղաքային, Գեղհովիտ, Ն. Գետաշեն, Վարդենիկ, Լիճք և Զորագյուղ գյուղական բնակավայրերով հոսող գետերի հուները և ամրացնել ափերը, Վարդաձոր բնակավայրում մաքրել սելավատարը:

Երանոս բնակավայրում առկա 7 հա սողանքավտանգ տարածքում իրականացնել ուսումնասիրություն:

Գեղհովիտ բնակավայրի «Չիմանքենդ» և «Կոշի դոշ», Մարտունի համայնքի «Լուսաձոր», Զորագյուղ համայնքի «Բրոժ թաղ», Վարդենիկ համայնքի «Զորի թաղ 1» և «Զորի թաղ 2» հնարավոր քարաթափումների տեղամասերում իրականացնել մասնագիտական ուսումնասիրություն:

Համայնքներում կարկուտներից և կայծակներից պաշտպանվելու նպատակով անհրաժեշտ է տեղադրել հակակարկտային կայաններ և շանթարգելներ:

3.2. Տեխնածին վտանգներ

Գեղարքունիքի մարզի (Գեղարքունիքի-3) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքների բնակավայրերին սպառնացող տեխնածին վտանգների և պայթունավտանգ, հրդեհապայթունավտանգ օբյեկտների վերաբերյալ

Մարտունի, Աստղաձոր, Լիճք, Երանոս, Ներքին Գետաշեն, Գեղհովիտ, Վաղաշեն համայնքներում առկա են թվով 19 պայթունավտանգ օբյեկտներ՝ 11 գազալցակայան, 8 բենզալցակայան:

Տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակներ կարող են առաջանալ նաև կոմունալ-էներգետիկ ցանցերում և հրդեհապայթունավտանգ օբյեկտներում:

3.3. Պաշտպանական կառույցներ

Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝

ա) պաշտպանական կառույցների վաղօրոք շինարարությունը.

բ) պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստ վիճակում.

գ) պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը.

դ) արագ կառուցվող թաքստոցների շինարարության կազմակերպումն (անհրաժեշտ շինանյութերի պահեստավորում և պահանջվող տեխնիկա) ու ապահովումը պատերազմի սպառնալիքի ժամանակ:

Խաղաղ ժամանակ, պաշտպանական կառույցները, համաձայն քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերի պահանջների, կարող են օգտագործվել տնտեսական նպատակներով կառույցի ծավալի 40%-ի չափով, ազատման ժամանակը պետք է լինի ոչ ավելի 6 ժամից, օգտագործման ժամանակ պետք է ապահովվի շինությունների և կառուցվածքների պահպանությունն ավերածությունից ու խոնավությունից:

Պաշտպանական կառույցները տարբերվում են կառուցման ժամկետներով՝

ա) խաղաղ ժամանակ կառուցվող թաքստոցներ.

բ) պատերազմի սպառնալիքի ժամանակ կառուցվող պաշտպանական կառույցներ՝

- արագ կառուցվող թաքստոցներ,

- պարզագույն թաքստոցներ:

Արագ կառուցվող թաքստոցները կառուցվում են ամենասեղմ ժամկետներում՝ առավելագույնս օգտագործելով առկա հավաքովի կառուցվածքներն ու նյութերը, պարզեցված սարքավորումները:

Արագ կառուցվող պաշտպանական կառույցների տեղակայման վայրը և թիվը որոշվում են քաղաքացիական պաշտպանության մարմինների կողմից՝ ելնելով խաղաղ ժամանակ դրանցով բնակչության փաստացի ապահովվածությունից:

Պարզագույն թաքստոցները կառուցվում են արտակարգ իրավիճակների ու պատերազմի սպառնալիքի ժամանակահատվածում բնակչության այն մասի համար, որն ապահովված չէ պաշտպանական կառույցներով, որոնց շինարարության պլաններն ու ժամանակացույցերը վաղօրոք մշակվում են արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարմինների կողմից:

Պարզագույն թաքստոցների կառուցման բոլոր աշխատանքները համապատասխանեցվում են արագ կառուցվող շինությունների շինարարության, ինչպես նաև բնակչության տարահանման պլաններին:

Քաղաքացիական պաշտպանության գոյություն ունեցող և նախատեսվող կառույցների և միջոցառումների վերաբերյալ տվյալներ

Գեղարքունիքի մարզի «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-3» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքային պլանավորման փաստաթղթերի նախագծերի մշակման համար ներառված թվով 15 բնակավայրերում արագ կառուցվող թաքստոցների կառուցում չի պահանջվում:

Գեղարքունիքի մարզի տարածքում հաշվառած են հետևյալ բնակավայրերում տեղակայված հակաճառագայթային թաքստոցներ՝

քաղաք Մարտունի՝ թվով 4 ՀՃԹ հետևյալ հասցեներով և տարողունակությամբ.

- թիվ 1 հիմնական դպրոց, Կոմիտասի փող.11, 1600 մարդ տարողունակությամբ,

- թիվ 2 միջնակարգ դպրոց, Հերացու փող. 10, 800 մարդ տարողունակությամբ,

- Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի Մարտունու մասնաճյուղ, Երևանյան փող. 35, 243 մարդ տարողունակությամբ.

- «Բիլայն» ՓԲԸ-ի արևելյան տարածքային կենտրոն, Մյասնիկյան փող. 50, 110 մարդ տարողունակությամբ:

Քաղաքացիական պաշտպանության գոյություն ունեցող կառույցներից են՝ ընդունման հավաքակայանները՝ Մարտունի քաղաքում՝ թիվ 1 հ/դ, Աստղաձոր համայնքում՝ մ/դ, Զոլաքարում՝ թիվ 1 մ/դ, Վաղաշենում՝ մ/դ, Վարդենիկում՝ թիվ 1 մ/դ, ժամանակավոր տեղակայման կետերը՝ Մարտունի քաղաքում՝ թիվ 1 հ/դ, մշակույթի պալատ, թիվ 3 մանկապարտեզ, Աստղաձորում՝ համայնքապետարան, Զոլաքարում՝ թիվ 1 մ/դ, թիվ 2 մ/դ, մանկապարտեզ, Վաղաշենում ՝մշակույթի պալատ, բուժամբուլատորիա, Վարդենիկում ՝թիվ 1 հ/դ, թիվ 2 մ/դ, համայնքապետարան, երկարատև բնակության կետերը ՝Մարտունի քաղաքում՝ թիվ 3 մանկապարտեզ, «Ալաշկերտ» հյուրանոց, Զոլաքարում՝ մանկապարտեզ, Վաղաշենում՝ մանկապարտեզ, Վարդենիկում ՝թիվ 1 հ/դ, թիվ 2 մ/դ:

Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝

ա) պաշտպանական կառույցների վաղօրոք շինարարությունը.

բ) պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստ վիճակում.

գ) պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը.

դ) արագ կառուցվող թաքստոցների շինարարության կազմակերպումն (անհրաժեշտ շինանյութերի պահեստավորում և պահանջվող տեխնիկա) ու ապահովումը պատերազմի սպառնալիքի ժամանակ:

Խաղաղ ժամանակ, պաշտպանական կառույցները, համաձայն քաղաքացիական պաշտպանության ինժեներատեխնիկական միջոցառումների նորմերի պահանջների, կարող են օգտագործվել տնտեսական նպատակներով կառույցի ծավալի 40%-ի չափով, ազատման ժամանակը պետք է լինի ոչ ավելի 6 ժամից, օգտագործման ժամանակ պետք է ապահովվի շինությունների և կառուցվածքների պահպանությունն ավերածությունից ու խոնավությունից:

Պաշտպանական կառույցները տարբերվում են կառուցման ժամկետներով՝

ա) խաղաղ ժամանակ կառուցվող թաքստոցներ.

բ) պատերազմի սպառնալիքի ժամանակ կառուցվող պաշտպանական կառույցներ՝

- արագ կառուցվող թաքստոցներ,

- պարզագույն թաքստոցներ:

Արագ կառուցվող թաքստոցները կառուցվում են ամենասեղմ ժամկետներում՝ առավելագույնս օգտագործելով առկա հավաքովի կառուցվածքներն ու նյութերը, պարզեցված սարքավորումները:

Արագ կառուցվող պաշտպանական կառույցների տեղակայման վայրը և թիվը որոշվում են քաղաքացիական պաշտպանության մարմինների կողմից՝ ելնելով խաղաղ ժամանակ դրանցով բնակչության փաստացի ապահովվածությունից:

Պարզագույն թաքստոցները կառուցվում են արտակարգ իրավիճակների ու պատերազմի սպառնալիքի ժամանակահատվածում բնակչության այն մասի համար, որն ապահովված չէ պաշտպանական կառույցներով, որոնց շինարարության պլաններն ու ժամանակացույցերը վաղօրոք մշակվում են արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարմինների կողմից:

Պարզագույն թաքստոցների կառուցման բոլոր աշխատանքները համապատասխանեցվում են արագ կառուցվող շինությունների շինարարության, ինչպես նաև բնակչության տարահանման պլաններին:

3.3.1. Համայնքի բնակչության պատսպարումը

Համայնքի բնակչության պատսպարումը պետք է իրականացվի պարզագույն պաշտպանական կառույցներում՝

- Ստորգետնյա հատուկ նախապատրաստված շինություններում՝ նկուղներում, կիսանկուղներում, խորացված այլ տարածքներում.
- Բնակելի ֆոնդի տարածքներում՝ առաջին հարկի տարածքներ, հարմարեցված որպես պատսպարաններ:

Բնակչության պատսպարման համալիր միջոցառումներն ընդգրկում են՝

- պարզագույն պաշտպանական կառույցների վաղօրոք կառուցումը.
- պարզագույն պաշտպանական կառույցների պահպանումը պատրաստի վիճակում.
- պարզագույն պաշտպանական կառույցների նպատակային օգտագործման կազմակերպումը (սննդամթերքի և այլ նպատակային պահեստարաններ).
- արագ կառուցվող պատսպարանի (կառավարման կետի) շինարարության կազմակերպումն ու ապահովումը պատերազմի սպառնալիքի ժամանակ:

Գյուղագարակ համայնքի հեռանկարային բնակչության թիվը կազմում է մոտ 9 000 մարդ: Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարումն իրականացվում է նախապես մշակված և հաստատված պլանների համաձայն՝ համայնքի սեփական ուժերով:

3.3.2. Բնակչության իրազեկումը և ազդարարումը

Պաշտպանական կառույցներում բնակչության պատսպարումը տեղի է ունենում քաղաքացիական պաշտպանության ազդանշաններով՝

Շչակի անընդհատ հնչեցման դեպքում (Ուշադրություն բոլորին՝ ազդանշան) բնակչությունը պարտավոր է միացնել հեռուստացույցները և ռադիոընդունիչները, որոնցով տրվում են հաղորդագրություններ ԱԻ սպառնալիքի կամ դրանց առաջացման և բնակչության գործողությունների մասին.

- շչակի ընդհատվող հնչեցման դեպքում (Օդային տագնապ՝ ազդանշան) բնակչությունն անմիջապես պատսպարվում է պաշտպանական կառույցներում:

Պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարմինների հետ համատեղ կազմակերպում են բնակչության ազդարարման համալիր միջոցառումներ:

Համայնքի բնակչության յուրաժամանակ ազդարարման, ԱԻ մասին տեղեկատվության ապահովման համար անհրաժեշտ է վերականգնել համայնքի կենտրոնացված ազդարարման համակարգը: Ապահովել էլեկտրաշչակների հուսալի էլեկտրամատակարարում և հուսալի կապ:

3.3.3. Բնակչության տարահանումը

Տարահանումն իրականացվում է վտանգավոր տարածքներից անվտանգ տարածքներ մարդկանց ժամանակավոր տեղավոխման և տեղաբաշխման միջոցով:

Համայնքի տարածքից բնակչության տարահանումը նախատեսվում է՝

Ա. երկրաշարժի հետևանքով տուժած (ավերված և բնակվելու համար վտանգավոր բնակտարածքներից) ու անօթևան մնացած բնակչության համար,

Բ. ատոմային էլեկտրակայանի ԱԷԿ ընդհանուր վթարի դեպքում՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը,

Գ. ռադիոակտիվ կամ թունավոր նյութերի տրանսպորտային փոխադրումների ժամանակ տեղի ունեցած վթարի հետևանքով առաջացած վտանգավոր տարածքից,

Դ. զենքի տեսակների կիրառման դեպքում մասնակի տարահանում վտանգավոր տարածքներից:

Տարահանումն իրականացվում է ավտոտրանսպորտով պետական և սեփական կամ հետիոտն:

Համայնքի բնակչության տարահանման կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ է.

ա) բնակչությանը գրանցել ստեղծված համապատասխան տարահանման կետերում,

բ) ուժեղ երկրաշարժի դեպքում որոշել ապահով, ոչ փլուզված տեղամասեր, որոնց վրա կարելի է տեղակայել տուժած բնակչության համար հավաքակայաններ: Այդ տեղերում նախատեսել բուժկետեր, տրանսպորտային միջոցների կայանատեղեր և տարահանվող բնակչության նստեցման հրապարակներ: Այդ տեղամասերի քանակը պետք է ապահովվի տուժած բնակչության քայլքով մոտեցումը համայնքի ամբողջ տարածքից (առնվազն 1 տեղամաս՝ դպրոցի բազայի վրա),

Քիմիական վթարի կամ դրա անմիջական սպառնալիքների դեպքում բնակչությունը պետք է տարահանվի բնակելի զանգվածների վրա քամու ընթացքին ուղղահայաց ուղղությամբ:

3.3.4. Բնակչության տարահանման ձևերն ու միջոցները

Բնակչությունը կարող է տարահանվել հետիոտն շարասյուներով կամ տրանսպորտային միջոցներով՝ ավտոշարասյուներով:

Առանձին դեպքերում տարահանման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են տրամադրվել նաև օդային տրանսպորտային միջոցներ:

Տարահանման համար տրամադրվող տրանսպորտային միջոցների հատկացումն ու վառելիքաքսուքային նյութերով ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Առաջին հերթին տրանսպորտով դուրս են բերվում հղի կանայք, հիվանդները, փոքրահասակ երեխաներ (մինչև 14 տարեկան) ունեցող կանայք, երեխաները և տարեցները, բժշկական հաստատությունները, բնակչության այն մասը, որը չի կարող տեղաշարժվել հետիոտն կարգով: Պլանավորվում է տրանսպորտային միջոցների անբավարարության դեպքում՝ մնացած բնակչությանը դուրս բերել հետիոտն կարգով:

Տարերային, տեխնածին կամ էկոլոգիական աղետների և այլ բնույթի վթարների դեպքում ընդհանուր կամ մասնակի տարահանման մասին որոշում ընդունում են, Հայաստանի Հանրապետության մարզպետները՝ մարզի բնակչության համար, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները՝ համայնքի բնակչության համար և կազմակերպությունների ղեկավարները՝ իրենց աշխատողների համար: Նրանց բացակայության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրանց փոխարինող անձինք: Պատերազմական գործողությունների ժամանակ օգտագործվող զենքի տեսակների կիրառման կամ դրա սպառնալիքի դեպքում տարահանման մասին որոշում ընդունում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ հակառակորդի հանկարծակի հարձակման դեպքում՝ պետական կառավարման տարածքային, տեղական ինքնակառավարման մարմինները և տվյալ տարածքի կայազորի պետը՝ իր իրավասության սահմաններում:

Բնակչության տարահանման պլանավորումը և կազմակերպումը, տարահանված բնակչության տեղաբաշխումը ու բազմակողմանի կենսապահովումը և արտակարգ իրավիճակների վերացումից հետո նրա վերադարձը մշտական բնակության վայրերն իրականացնում են պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները՝ տարահանման հանձնաժողովների միջոցով:

Տարահանման հանձնաժողովները նախապես որոշում և տարահանման միջոցառումներին մասնակցող կազմակերպություններին տեղեկացնում են տարահանումն իրականացնող մարմինների, տարահանման և ընդունման հավաքակայանների, կարճաժամկետ տեղակայման կետերի, երկարատև բնակության կետերի գտնվելու վայրի մասին:

Տարահանման հավաքակետերը ծավալվում են դպրոցների տարածքներում:

Տարահանման միջոցառումները կանոնակարգվում են նախապես մշակված տարահանման պլաններով, որոնք ներառում են՝

1) բնակչության տարահանման անցկացման կարգն ու ժամկետները, տարահանման համար տրամադրվող ուժերն ու միջոցները, տարահանման երթուղին.

2) տարահանման և ընդունման հավաքակայաններում աշխատանքների կազմակերպումը.

3) տարահանման հաշվարկը՝ ըստ տրանսպորտային տեսակների ու տարահանման երթուղիների.

4) ընդունող բնակավայրերում տարահանվողների տեղաբաշխման կազմակերպման և սնունդով ապահովման կանոնակարգը.

5) նյութական և մշակութային արժեքների դուրսբերման կարգը:

Բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանները մշակում են տարահանման համապատասխան հանձնաժողովները՝ լիազոր մարմնի տարածքային ստորաբաժանման հետ համատեղ:

Տարահանման հավաքակայաններն ստեղծվում են հանրակրթական և հասարակական կազմակերպությունների տարածքներում, ապահովվում կապի միջոցներով, բուժսպասարկման կետով, մոր ու մանկան և հանգստի սենյակներով: Տարահանման երթուղիները ճշգրտվում են տարահանման հավաքակայաններում:

Բնակչության տարահանումն իրականացվում է տարահանման հավաքակայաններից, որտեղ տարահանման ազդանշան (հրահանգ) ստանալու դեպքում ժամանում են տարահանվողները:

3.3.5. Բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովումը

Համայնքների բնակչութան անհատական պաշտպանության միջոցներով ապահովման գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 25-ի 679 որոշման համաձայն: Սահմանամերձ՝ մինչև 10 կմ շառավղով գոտու համայնքների բնակչությունը առաջին հերթին՝ զտող հակագազերով և համազորային պաշտպանական լրակազմերով միջոցներով:

Բնակչության պաշտպանության համար նախատեսված անհատական պաշտպանության միջոցները կուտակվում են նախապես զորահավաքային պահուստում դրանց պահեստավորմամբ և կազմակերպություններում համապատասխան պաշարների ստեղծմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և համայնքների բյուջեների միջոցների հաշվին:

Պատերազմի ժամանակ և արտակարգ իրավիճակներում անհատական պաշտպանության միջոցների բաշխման կարգը սահմանվում է պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների արտակարգ իրավիճակների ու քաղաքացիական պաշտպանության պլաններով:

. Նշված պլաններով որոշվում են անհատական պաշտպանության միջոցների բաշխման կետերը, ժամանակը, քանակը և հերթականությունն ըստ համայնքների ու կազմակերպությունների:

Անհատական պաշտպանության միջոցների հաշվարկը կատարվում է ըստ տարիքային խմբերի՝ բնակչության քանակ գումարած 10%:

3.4.Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումներ

Միջոցառումներն իրականացվում են նախապես և ուղղված են արտակարգ իրավիճակների առաջարման ռիսկը նվազագույնի հասցնելուն, իսկ դրա առաջարման պարագայում՝ մարդկանց առողջության պահպանմանը, շրջական բնական միջավայրին պատճառվող վնասի և նյութական կորուստների չափերի նվազեցմանը։

Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումները անհրաժեշտ է ընդգրկել մարզի և համայնքների զարգացման ծրագրերում, ինչպես նաև համայնքների աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակներում գործելու պլաններում։

Արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների հիմնական պահանջներն են՝

ա) բնակավայրերի, գործառնական այլ տարածքների գլխավոր հատակագծերում, մանրամասն հատակագծման նախագծերում և գոտևորման նախագծերում վտանգավոր ձեռնարկությունների ու արտադրությունների նպատակահարմար տեղաբաշխումը՝ բնակչության պաշտպանության տեսանկյունից և դրանց շուրջ սանիտարական գոտիների նախատեսում.

ա) կենսապահովման օբյեկտների անխափան աշխատանքի ապահովումը,

բ) արտակարգ իրավիճակների կանխումն ու հնարավոր հետևանքների նվազեցումը,

գ) հրդեհային անվտանգության միջոցառումների իրականացումը։

3.5. Հրդեհային անվտանգություն

Բնակավայրերում պետք է կազմակերպվեն հրդեհային պահպանությունը՝ շինարարական և հրդեհային անվտանգության նորմերով նախատեսված ջրավազանների և հիդրանտների առկայությունը, շենքերին շինություններին հարող ավտոճանապարհների անցանելիությունը, կապի և ազդարարման միջոցների առկայությունը։

Հրդեհային անվտանգության բնագավառում համայնքի՝ պետության պատվիրակած լիազորություններն են՝

1. հրդեհների կանխման և հնարավոր հետևանքների նվազեցման ուղղությամբ միջոցների ձեռնարկումը,

2. հրդեհային անվտանգության միջոցառումների կատարման, կազմակերպման և իրականացման աշխատանքներին աջակցումը։

Հրդեհային անվտանգության բնագավառում համայնքի կամավոր լիազորություններն են՝

1. հրդեհային անվտանգության ապահովման միջոցների ու կանոնների ուսուցումը բնակիչներին և նրանց ընդգրկումը հրդեհների կանխման ու հրդեհաշիջման աշխատանքներում՝ կամավորական խմբերի ստեղծում, ուսուցում և գույքով ու հանդերձանքով ապահովում,

2. հրդեհային անվտանգության ապահովման նկատմամբ հասարակական վերահսկողության կազմակերպումը,

3. հրդեհային իրավիճակի վատթարացման դեպքում անհրաժեշտ ռեժիմի ապահովումը։

Քաղաքաշինության բնագավառում հրդեհային անվտանգության կանոնները սահմանվում են համապատասխան իրավական ակտերով և շինարարական նորմերով և կանոններով, որոնց կիրառումը նախատեսված է դեռ բնակավայրի նախագծման փուլում։

3.6. ՔՊ և ԱԻ բնակչության պաշտպանության տեսանկյունից համայնքի կառուցման և վերակառուցման կազմակերպումը

Աղետի սպառնալիքի կամ առաջացման վտանգի դեպքում կառավարումն իրականացվելու է համայնքի հիմնական կառավարման կետից (համայնքապետի աշխատասենյակ), իսկ պատերազմական ժամանակահատվածի համար անհրաժեշտ է նախատեսել նաև պահեստային կառավարման կետ՝ ապահովված ինֆորմացիայի մշակման և փոխանակման ժամանակակից միջոցներով:

- Նոր շինարարության կամ հին օբյեկտների վերակառուցման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել՝
- շենքերի վերակառուցման աշխատանքներում դեղին գծերի պլանները՝ շենքերի հնարավոր փլուզման դեպքում անարգել երթևեկության ապահովման ու փրկարարական ուժերի անարգել մուտքը ապահովելու նպատակով,
- նախատեսել համայնքի օրեկան ջրի կարգավորման լրացուցիչ ջրավազան՝ համայնքի անխափան ջրամատակարարման ապահովման համար,
- հասարակական ու կենսապահովման օբյեկտների համար նախատեսել լրացուցիչ էլետրամատակարարման աղբյուրներ, ինչպես նաև վթարային ելքեր,
- սահմանել մարդկային անվերադարձ կորուստների հուղարկավորման տեղերը,
- սահմանել շինարարական աղբի թափման տեղերը,
- սահմանել և նախապատրաստել անկած գյուղատնտեսական կենդանիների սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխանող գերեզմանոցներ:

ԳԼՈՒԽ 4

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

4.1. Գոտևորման նախագծի կապը գլխավոր հատակագծի հետ

Գոտևորման նախագիծը բնակավայրի գլխավոր հատակագծի իրագործման հիմնական ծրագրային քաղաքաշինական փաստաթուղթն է: Այն անմիջականորեն կապված և համաձայնեցված է բնակավայրի գլխավոր հատակագծում նախանշված գաղափարների, զարգացման ուղղությունների, կառուցապատման ինտեսիվության և բնակչության տեղաբաշխման իրականացման գործընթացի հետ:

4.2. Գոտևորման համակարգի կառուցվածքը

Գոտևորման նախագիծը հիմնվում է՝ընդունված գոտի-թույլատրելի օգտագործման ձև՝ սկզբունքի վրա: Նախագծում, ըստ առանձին գոտիների, սահմանվում են հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման տեսակները, որոնց համապատասխանող քաղաքաշինական գործունեության իրականացման համար լրացուցիչ պահանջներ, քննարկումներ, համաձայնեցումներ չեն նախատեսվում: Սահմանվել են թույլատվության հետևյալ ձևերը՝

- թույլատրվում է
- չի թույլատրվում

Պահանջները տարբերակվում են մեկից մյուս գոտի անցնելիս, բայց հաստատուն են յուրաքանչյուր գոտու ներսում:

4.3. Գոտևորման նախագծի կիրառման բնագավառը

Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են՝

• Բնակավայրի տարածքում կատարվող վերակառուցողական, շինարարական, վերականգնողական, վերանորոգման, բարեկարգման, կանաչապատման աշխատանքների, ինչպես նաև հողերի և առանձին օբյեկտների նպատակային օգտագործմանը և շահագործմանը վերագրվող պահանջները գործնականում իրականցնելու և պահպանելու համար:

• Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը կարգավորում են նաև շենքերի և շինությունների ներսում կատարվող գործունեության այն հետևանքները, որոնք ազդում են շրջակա միջավայրի բնականոն վիճակի վրա, այն է՝ աղմուկին, վնասակար արտանետումներին, տրանսպորտային և հետիոտն հոսքերի մեծ զանգվածներ առաջացնող գործունեության տարբեր տեսակներին վերաբերող հատուկ պահանջների սահմանումը և այլն:

• Գոտևորման նախագծի դրույթները, պահանջները և նորմերը պարտադիր են նաև կառուցապատման և հողամասերի օգտագործման ինտենսիվության, շենքերի և շինությունների հարկայնության, դրանց արտաքին ճակատների ձևավորման, հարդարանքի, գովազդների, ցուցանակների, փոքր ճարտարապետական ձևերի տեղադրման համար:

Տարածքների փաստացի օգտագործման և նախագծային հիմնական բնութագրեր

4.4. Սահմաններ

Նախագծվող տարածքի սահմանները համապատասխանում են գլխավոր հատակագծում առանձնացված գոտիավորման տարածքի սահմաններին:

Գոտևորման շրջանների (գոտիների) սահմանները

Նախագծվող գոտևորման շրջանների (գոտիների) սահմանները որոշվում են հետևյալ կերպ՝

Եթե գոտևորման շրջանի սահմանը համընկնում է հողամասի սահմանի հետ, ապա այդ հողամասի սահմանը համարվում է գոտիավորման շրջանի սահմանը,

Եթե գոտևորման շրջանի սահմանը անցնում է փողոցով, ճեմուղով, երկաթգծի ուղիներով, գետով կամ այլ գծային ծրագիծ ունեցող տարածքային միավորներով, ապա գոտիավորման շրջանի սահման է համարվում դրանց առանցքային գիծը,

Եթե գոտևորման շրջանի սահմանը անցնում և կիսում է ինչ որ մի առանձին տիրույթ, ապա գոտևորման շրջանի սահմանը որոշվում է գծագրում բերված համապատասխան եզրագծով, կամ հեռավորության նշումով:

4.5. Գոտևորման նախագծի կազմը

Գոտևորման նախագծի կառուցվածքային հիմնական բաղկացուցիչներն են գոտիավորման գծագրական ու տեքստային մասերը:

Նախագիծը ներառում է

Գործառական գոտևորումը՝ հողատարածքների առանձնացումն ըստ գործառական օգտագործման՝ սահմանելով թույլատրելի օգտագործման տեսակները, ամրագրելով ընդհանուր տարածքի մակերեսի նկատմամբ վերջիններիս սահմանային չափաբաժինները:

Ծավալատարածական գոտևորումը՝ ամրագրելով կառուցապատման բնույթն արտահայտող ցուցանիշները (կառուցապատման խտություն, շենքերի, շինությունների բարձրություն, կառուցապատված և կանաչապատ մակերեսների հարաբերակցություն և այլն), տվյալ տարածքում թույլատրելի չափաբաժինների հաշվառմամբ:

4.6. Գոտիներում թույլատրելի օգտագործումների (կառուցապատումների) սահմանափակումների հիմնավորումները

Հողերը գոտևորված են ըստ հիմնական և օժանդակ գոտիների:

Հիմնական գոտիներ*

Հիմնական է համարվում հողերի գոտևորումը ըստ նպատակային նշանակության և ըստ քաղաքաշինական, բնապիսանական, պատմամշակութային, գյուղատնտեսական, ինժեներաերկրաբանական և այլ բնույթի սահմանափակումների:

Միևնույն տարածքային միավորին համապատասխանում է միայն մեկ հիմնական գոտի:

Տարածաշրջանի գոտևորման տարածքում ըստ նպատակային նշանակության առանձնացված են հետևյալ հիմնական գոտիները.

- Բնակավայրերի հողեր,
- Գյուղատնտեսական հողեր,
- Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր,
- Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր,
- Հատուկ պահպանվող տարածքների հողեր,
- Հատուկ նշանակության հողեր:

Օժանդակ գոտիներ[4]

Օժանդակ է համարվում հողամասերի գոտիավորումը՝ ըստ գործառական նշանակության, հողատեսքերի և թույլատրված օգտագործումների, ինչպես նաև հողամասերի ծավալատարածական գոտիավորումը՝ ըստ կառուցապատման չափորոշիչների:

4.7. ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

Ստորև տրված են հողերի օժանդակ գոտիավորումը և թույլատրելի օգտագործման ձևերը[5]

4 *Քաղաքաշինության մասին ՀՀ օրենք՝ ընդունված ՀՀ ԱԺ կողմից 05.05.98 թ., վավերացված ՀՀ նախագահի կողմից 26.05.98 թ., Գլուխ VI, հոդված 14 :*

5 Ծանոթություն. Յուրաքանչյուր գոտու վրա տարածվում են նաև լրացուցիչ սահմանափակումներ, կապված քաղաքի հատակագծային կառուցվածքում առանձնակի կարևորություն ունեցող գոտիների (համապատասխանաբար պատմաճարտարապետական հուշարձանների պահպանման և առավելագույն ընկալման հնարավորությունների բացահայտման, հասարակական կենտրոնի, քաղաքային մուտքի ազդեցության տարածման) առաջադրած պահանջների, սանիտարահիգիենիկ կամ բնապահպանական պահանջների բավարարման (բնական լանդշաֆտի արժեքավոր ձևերի վերականգնման, էկոհամակարգերի տարբեր խախտումների փոխհատուցման գործընթացների կանոնակարգման, ինժեներական նախապատրաստման համալիր միջոցառումների պարտադիր իրականացման ապահովման հետ պայմանավորված կառուցապատման սահմանափակումների և այլն), տարբեր տիպի կառուցապատումների, հաղորդակցության ուղիների, դրանց կառուցվածքների և ինժեներական ենթակառուցվածքների ազդեցության, սանպահպանման կամ օտարման գոտիների ապահովման պահանջների հետ (ծածկող գոտիներ):

«Գեղարքունիք-3» *միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

Գործառնական գոտու անվանումը	Թույլատրելի օգտագործման ձևերը
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՂԵՐ	
Գյուղատնտեսական գոտի	
Վարելահողեր Բազմամյա տնկարկներ (Խաղողի այգի, Պտղատու այգի) Խոտհարքներ Արոտավայրեր	Հիմնական օգտագործման ձևեր՝ Գյուղատնտեսական գործունեություն Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ՀՀ բոլոր համայնքներում՝ կենցաղային, տնտեսական նշանակության շենքեր և շինություններ՝ մինչև 30 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով: ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 11-ի N498 որոշման 2-րդ կետի ա ենթակետում նշված համայնքներում՝ մինչև 150 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով բնակելի և մինչև 300 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր ու շինություններ, ընդ որում, միայն այն հողամասերի վրա, որոնց մակերեսը առնվազն մեկ հեկտար է:
Այլ հողատեսքեր	Չի սահմանվում
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ	
Բնակելի կառուցապատման գոտի	
	Հիմնական օգտագործման ձևեր ՝

Ցածրահարկ բնակելի կառուցապատման գոտի (տնամերձերով) ԲՆԿԳ-1/1 Ցածրահարկ բնակելի կառուցապատման գոտի (առանց տնամերձերի) ԲՆԿԳ-1/2	առանձնատներ, բլոկացված բնակելի տներ, քոթեջներ. Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ մինչև 150 մ2 ընդհանուր մակերեսով մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների, մինչև 50 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ, բուժական կաբինետներ, բուժական կենտրոններ, մինչև 200 մ2 ընդհանուր մակերեսով մարզական պարապմունքների տարածքներ, գրադարաններ, տուն-թանգարաններ, ցուցասրահներ, մինչև 30 տեղ ունեցող հյուրանոցներ և հյուրատներ, վարչական, ֆինանսական հիմնարկությունների և սպասարկման ծառայությունների գրասենյակներ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, փոքր հզորության անհատական կաթսայատներ մինչև 5ՀԿ(ժամ), մսուր- մանկապարտեզներ, փոքրածավալ արտադրական ձեռնարկություններ, որոնց գործունեությունը կապված չէ աղմուկի, փոշու, վնասարար արտանետումների հետ (մինչև 200 քառ.մ ընդհանուր մակերեսով): սեփական օգտագործման և անհատական ձեռնարկատիրության տեսակներ՝ սանիտարական և հակահրդեհային նորմերի պահպանմամբ, տնամերձ հողամասի սահմաններում՝ այգիներ, բանջարանոցներ, ընտանի կենդանիների բուծման համար շինություններ, անհատական բաղնիքներ, սառնաններ, ջերմոցներ, տնկարաններ, տնտեսական շինություններ, ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելին քան 2 մեքենայի, բլոկացված տների դեպքում՝ ոչ ավելին քան 1 մեքենայի համար),

Ամառանոցային (այգեգործական) կառուցապատման գոտի ԲՆԿԳ-2	Հիմնական օգտագործման ձևեր՝ առանձնատներ, ամառանոցներ, քոթեջներ, Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ մինչև 150 մ2 ընդհանուր մակերեսով մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների, մինչև 30 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ, սպասարկման ծառայությունների գրասենյակներ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, անհատական կաթսայատներ: Սեփական հողամասի սահմաններում՝ այգիներ, բանջարանոցներ, անհատական բաղնիքներ, սաունաներ, ջերմոցներ, տնկարաններ, տնտեսական շինություններ, ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելին քան 2 մեքենայի,
Միջին հարկայնության բնակելի կառուցապատման գոտի ԲՆԿԳ-3 Բարձրահարկ բնակելի կառուցապատման գոտի ԲՆԿԳ-4	Հիմնական օգտագործման ձևեր՝ Բազմաբնակարան բնակելի շենքեր Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ Նախադպրոցական հաստատություններ, Մանրածախ առևտրի կետեր, խանութներ, Սրճարաններ, ռեստորաններ, Գրասենյակային տարածքներ, Ատամնաբուժական կենտրոններ, Ավտոտնակներ, ավտոկայանատեղեր, Կանաչ տարածքներ, պուրակներ, Մանկական խաղահրապարակներ, Սպորտային հարթակներ
Հասարակական կառուցապատման գոտի	
Համայնքային նշանակության հասարակական կառուցապատման գոտի Վարչական օբյեկտների գոտի ՀԿԳ-1/1	Հիմնական օգտագործման ձևեր՝ վարչական, ֆինանսական, փոստի, կապի, կրթական, գիտահետազոտական. նախադպրոցական,

«Գեղարքունիք-3» *միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

Մշակութային և ժամանցային օբյեկտների գոտի ՀԿԳ-1/2 Կրթական գոտի ՀԿԳ-1/3 Բուժական հաստատությունների գոտի ՀԿԳ-1/4 Սպորտային օբյեկտների գոտի ՀԿԳ-1/5	բուժական, սպորտային, մշակութային և կրոնական հաստատություններ, ոստիկանության տեղամասեր, հրշեջ ծառայություններ, գրասենյակային տարածքներ Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի ժամանակավոր և մշտական պահպանման համար նախատեսված շինություններ, քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ, մինչև 50 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ՝ ռեստորաններ, սրճարաններ, բառեր, պանդոկներ, խորտկարաններ: մանրածախ առևտրի կետեր, խանութներ, կրպակներ:
Բնակչության սոցիալական սպասարկման և առևտրի գոտի ՀԿԳ-2	Հիմնական օգտագործման ձևեր՝ հյուրանոցներ, հյուրատներ, հյուրանոցատիպ քոթեջային համալիրներ, գյուղական տներ հասարակական սննդի օբյեկտներ, առևտրի կենտրոններ, խանութներ, մթերային և արտադրական ապրանքների շուկաներ, տոնավաճառներ, կենցաղ-սպասարկման առաջնային ծառայություններ, հանրային բաղնիքներ, սաունաներ, զուգարաններ, աղբարկղների տեղադրման հարթակներ Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի ժամանակավոր և մշտական պահպանման համար նախատեսված շինություններ
Վառելիքի և տրանսպորտային միջոցների սպասարկման օբյեկտների գոտի ՀԿԳ-3	Հիմնական օգտագործման ձևեր՝ բենզալցակայաններ, գազալիցքավորման կետեր, ավտոտեխսպասարկման կետեր, Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ գրասենյակներ, սպասասրահներ, մանրածախ առևտրի կետեր, զուգարաններ
Խառը կառուցապատման գոտի	
	Հիմնական օգտագործման ձևեր՝

Խառը կառուցապատման գոտի (բնակելի, հասարակական, արտադրական) ԽԿԳ-1 Խառը կառուցապատման գոտի (բնակելի, հասարակական, ընդհանուր օգտ.) ԽԿԳ-2	Բնակելի, գրասենյակային, առևտրի և սպասարկման, մասնավոր ուսումնական և նախադպրոցական մակերեսներով բազմաֆունկցիոնալ շենքեր, կիրակնօրյա դպրոցներ, բուժական կաբինետներ, վարչական, ֆինանսական և այլ քաղաքային նշանակության ծառայությունների շենքեր և գրասենյակներ, կենցաղ-սպասարկման, spa- ծառայությունների օբյեկտներ, ակումբներ և հասարակական հավաքատեղիներ, գիշերային ակումբներ, մշակութային օբյեկտներ (թատրոններ, կինոթատրոններ, գրադարաններ, ցուցասրահներ և այլ), առևտրի մեծ և փոքր օբյեկտներ, հանրային սննդի օբյեկտներ: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ներկառուցված կամ առանձին կանգնած ավտոտնակներ, ավտոկանգառներ, տրանսպորտի հավաքակայաններ և կառույցներ, փոքր ճարտարապետական ձևեր, փակ լողավազաններ, տաղավարներ, կրպակներ:
Ընդհանուր օգտագործման գոտի	
Փողոցներ, հրապարակներ, հանրային նշանակության այլ բաց տարածքներ ԸՕԳ-1	Հիմնական օգտագործման ձևեր՝ Ճանապարհային եզրային կանաչապատում, արտաքին լուսավորություն, գովազդ, փոքր ճարտարապետական ձևեր, հրապարակներում՝ շատրվաններ, ջրավազաններ, ծաղկանոցներ և բարեկարգման այլ տարրեր: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ Ինժեներական և կոմունալ ենթակառուցվածքի ստորգետնյա գծեր, Ստորգետնյա ավտոկայանատեղեր

«Գեղարքունիք-3» *միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

Ջրոսայգիներ, պուրակներ, այլ կանաչ տարածքներ ԸՕԳ-2	Հիմնական օգտագործման ձևեր՝ այգեպուրակային կանաչ տարածքներ, վերջիններիս բնորոշ խաղաձևերի սրահներ, ջրավազաններ, խաղահրապարակներ, բացօթյա սպորտի- և բեմա- հարթակներ, բացօթյա սրճարաններ, հրաձգարաններ, տաղավարներ, զրուցարաններ, ճարտարապետական փոքր ձևեր: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի միջոցների կայանատեղեր, կրպակներ, զուգարաններ.
Այլ հողեր	
Բնակավայրի ռեզերվային և անօգտագործելի հողեր	Չի սահմանվում
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ	
Արդյունաբերական օբյեկտների գոտի	
Ծանր արդյունաբերության օբյեկտների գոտի Թեթև արդյունաբերության օբյեկտների գոտի ԱԳ-1/2	Հիմնական օգտագործման ձևեր՝ արդյունաբերական համալիրներ, գործարաններ, արտադրական ձեռնարկություններ, արհեստագործական արտադրամասեր Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ հանրակացարանային տիպի բնակելի շենքեր, մինչև 150 քմ ընդհանուր մակերեսով քոթեջային տիպի բնակելի տներ, մանրածախ առևտրի կետեր, տրանսպորտի միջոցների կայանատեղեր, կրպակներ, հանրային սննդի կետեր
Գյուղատնտեսական արտադրության օբյեկտների գոտի	
Անասնապահական օբյեկտներ Ա-2/1	Հիմնական օգտագործման ձևեր՝ անասնապահական ֆերմաներ և համալիրներ, թռչնաբուծարաններ, ձկնաբուծական ֆերմաներ անասնագոմեր, սպանդանոցներ ջերմոցներ
Սպանդանոցներ Ա-2/2	
Գյուղատնտեսական մթերքի վերամշակման գործարաններ, արտադրամասեր Ա-2/3	

«Գեղարքունիք-3» *միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

Ջերմոցներ Ա-2/4	Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ վարչական մասնաշենքեր, անձնակազմի համար կենցաղային սենքեր, անասնաբուժական լաբորատորիաներ, պահեստներ, ցանկապատնեշներ, փարախներ, անձրևապաշտպանիչ ծածկեր, տնտեսական այլ շինություններ:
Ձկնաբուծարաններ Ա-2/5	
Պահեստարանների գոտի Ա-3	
Ընդերք օգտագործման գոտի Ա-4	Հիմնական օգտագործման ձևեր՝ ընդերք օգտագործման տարածքներ, հումքի վերամշակման արտադրամասեր, արտադրական այլ շենքեր և շինություններ պահեստային տարածքներ Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ վարչական մասնաշենքեր, անձնակազմի համար կենցաղային սենքեր, ավտոտրանսպորտի, շինարարական և արդյունահանման տեխնիկայի և մեխանիզմների համար նախատեսված հարթակներ, ծածկեր, ավտոտնակներ, տնտեսական այլ շինություններ հանրակացարանային տիպի բնակելի շենքեր, մինչև 150 քմ ընդհանուր մակերեսով քոթեջային տիպի բնակելի տներ, պահակակետեր, անցակետեր:
ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀՈՂԵՐ	

«Գեղարքունիք-3» *միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

Էներգետիկայի օբյեկտների գոտի Էլեկտրաէներգիայի մատակարարման օբյեկտների գոտի ԷՆՐԳ-1/1	Հիմնական օգտագործման ձևեր՝ Էլեկտրակայաններ՝ ատոմային, ջերմային, հիդրոէլեկտրակայաններ, փոքր ՀԷԿ-եր տրանսֆորմատորային ենթակայաններ օդային և մալուխային գծեր Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ վարչական շենքեր, ավտոկայանատեղեր, պահեստային տարածքներ, պահակակետեր և անցակետեր, մանրածախ առևտրի կետեր, խանութներ, հասարակական սննդի օբյեկտներ, (*) Բարձրավոլտ էլեկտրահաղորդման օդային և մալուխային գծերի համար էլեկտրաէներգիայի մատակարարման օբյեկտների գոտի չի առանձնացվում, դրանք կարող են անցկացվել մի շարք գործառնական գոտիներով (գյուղատնտեսական, արդյունաբերական, ընդհանուր օգտագործման, ռեզերվային, պահուստային և այլ՝ պահպանելով նորմատիվային հեռավորությունները բնակելի թաղամասերից, կրթական օբյեկտներից, պատմության և մշակույթի հուշարձաններից և այլն)
Գազամատակարարման օբյեկտների գոտի ԷՆՐԳ-1/2	Հիմնական օգտագործման ձևեր՝ ավտոմատ գազաբաշխիչ կայաններ (ԱԳԿ), գազակարգավորիչ պահարանային կետեր (ԳՊԿ), բարձր ճնշման գազատար խողովակաշար գազի ստորգետնյա պահեստարաններ
Կապի օբյեկտների գոտի ԷՆԹԳ-2	Հիմնական օգտագործման ձևեր՝ հեռախոսային կապի բախշիչ կետեր (պահարանային), կապի ավտոմատ հեռախոսային կայաններ, բջիջային կապի աշտարակներ
Տրանսպորտի օբյեկտների գոտի ԷՆԹԳ-3	Հիմնական օգտագործման ձևեր՝ պետական ավտոմայրուղիներ ճանապարհը սպասարկող օբյեկտներ, ավտոկայանատեղեր, կամուրջներ, թունելներ, երկաթգիծ և երկաթգծի կայարաններ քաղաքացիական ավիացիայի օբյեկտներ՝ օդանավակայաններ, անգարներ, այլ ենթակառուցվածք, Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ազատ տնտեսական գոտիներ, օդանավակայաններին, կայարաններին կից հյուրանոցներ, Գրասենյակային և պահեստային տարածքներ
Կոմունալ տնտեսության օբյեկտների գոտի	

«Գեղարքունիք-3» *միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

Ջրամատակարարման, ջրահեռացման ենթակառուցվածքների օբյեկտներ ԷՆԹԳ-4/1	Հիմնական օգտագործման ձևեր՝ օրվա կարգավորիչ ջրամբարներ, ջրամատակարարման բաշխիչ հորեր, ջրամատակարարման համակարգի հանգույցներ, կոյուղու ցանցային հորեր, մաքրման կայաններ, ջերմամատակարարման համակարգեր, կաթսայատներ
Աղբավայրերի գոտի ԷՆԹԳ-4/2	Հիմնական օգտագործման ձևեր՝ աղբավայրեր, աղբի վերամշակման գործարաններ, աղբի տեսակավորման հարթակներ, Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ ավտոկայանատեղեր պահեստային տարածքներ
Համայնքային և մասնավոր գերեզմանատների գոտի ԷՆԹԳ-4/3	Հիմնական օգտագործման ձևեր՝ գերեզմանոցներ, դիակիզարաններ, Փոքր ճարտարապետական ձևեր, կոթողներ. Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ պահակատներ, գրասենյակներ քարի և մետաղի մշակման արվեստանոցներ,
ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐ	
Բնապահպանական գոտի ՀՊՏ-1/բնպ	Գոտին ներառում է բնության հուշարձաններ, արգելանոցների, ազգային և ծառաբանական զբոսայգիների ու պարկերի, բուսաբանական այգիների, արգելավայրերի (բացառությամբ՝ որսորդական) հողերը: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ պահակատներ, տարածքը սպասարկող անձնակազմի գրասենյակային տարածքներ, անձրևից պաշտպանող թեթև կոնստրուկցիաներով իրականացված տաղավարներ, զուգարաններ, մուտքի տոմսերի և արագ սննդի կրպակներ
Առողջարարական նպատակներով նախատեսված գոտի ՀՊՏ-2/առջ	Հիմնական օգտագործման ձևեր՝ հյուրանոցներ, պանսիոնատային, առողջարանային,

«Գեղարքունիք-3» *միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

Հանգստի համար նախատեսված գոտի ՀՊՏ-3/հնգ	քոթեջային, քեմպինգային, այգեպուրակային, սահմանափակ օգտագործման՝ սննդի ծառայություններ, սպորտա- և խաղահրապարակներ, ժամանցային և ռեկրեացիոն բնույթի խաղատեսակների ակումբներ: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ տրանսպորտի միջոցների կայանատեղեր, վարսավիրանոցներ, գեղեցկության սրահներ, հասարակական բաղնիքներ, սաունաներ, լվացքատներ, մանրածախ առևտրի կետեր, խանութներ
Պատմամշակութային հուշարձանների գոտի ՀՊՏ-4/պմգ	Գոտին ներառում է հուշարձանների պահպանության պետական ցուցակում ընդգրկված օբյեկտները, բացառությամբ բնակելի, հասարակական, արտադրական նշանակությամբ օգտագործվող շենքերի և շինությունների: Վերջիններիս համար սահմանվում է պահպանության գոտի և կանոնակարգ: Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ հուշարձանները սպասարկող աշխատակազմի կացարաններ, թանգարաններ, ճարտարապետական փոքր ձևեր, ավտոտրանսպորտի կայանատեղեր, զբոսաշրջիկներին սպասարկող առաջին անհրաժեշտության օբյեկտներ, հուշանվերների և արագ սննդի կրպակներ
Պետական գերեզմանատների գոտի	Հիմնական օգտագործման ձևեր՝ գերեզմանոցներ, Փոքր ճարտարապետական ձևեր, կոթողներ. Ոչ հիմնական, ուղեկցող օգտագործման ձևեր՝ աշխատակազմի համար նախատեսված շենք/շինություններ արհեստանոցներ, ոչ հիմնական շինություններ, ծածկեր
ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐ	
Հատուկ նշանակության գոտի ՀՆԳ	պաշտպանական, սահմանային, ռազմական նշանակության հողերը և օրենքով պաշտպանվող շենքերի ու շինությունների օգտագործման ու սպասարկման համար տրամադրված հողամասերը:
ՋՐԱՅԻՆ	
Ջրանցքներ ՋԳ-1	ջրային օբյեկտներով՝ գետերով, բնական և արհեստական ջրամբարներով, լճերով զբաղեցված, ինչպես նաև ջրային օբյեկտների օգտագործման և պահպանության համար անհրաժեշտ հիդրոտեխնիկական, ջրատնտեսային և այլ օբյեկտների համար առանձնացված տարածքները:
Գետեր, գետակներ ՋԳ-2	
Լճեր ՋԳ-3	
Հիդրոտեխնիկական կառույցներ ՋԳ-4	

Ջրամբարներ ՋԳ-5	Ջրային հողերը կարող են օգտագործվել բնակչության խմելու ջրի, կենցաղային, առողջարարական և այլ պահանջների, ինչպես նաև ջրատնտեսային, գյուղատնտեսական, բնապահպան, արդյունաբերական, ձկնատնտեսային, էներգետիկ և այլ պետական ու համայնքային կարիքների բավարարումն ապահովող օբյեկտների շինարարության և շահագործման համար:
ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ	
Պահուստային գոտի	համայնքներին, քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության, օգտագործման իրավունքով չտրամադրված պետական հողերը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով կոնսերվացիայի արդյունքում տնտեսական շրջանառությունից հանված հողամասերը: 2. Պահուստային հողերի կազմում կարող են ներառվել քաղաքաշինական ու հողաշինարարական փաստաթղթերով առանձնացված չօգտագործվող հողերը, ինչպես նաև ավազուտները, ճահիճները և այլ անօգտագործելի հողերը:

_____

Բացի հիմնական գոտիներից սահմանվում են նաև հատուկ սահմանափակումներով գոտիներ՝

4.8. Հատուկ իրավական ռեժիմով գոտիներ (ՍՊԳ)

/ծանոթություն.- հատուկ իրավական ռեժիմով գոտիները սահմանվում են որպես տարածքների օգտագործման սահմանափակումներ պարունակող գոտիներ և դրանց սահմանները կարող են համընկնել կամ չհամընկնել այլ գոտիների սահմանների հետ/:

Դրանք հանդես են գալիս որպես գոտու հիմնական գործառույթը ծածկող գոտիներ, ուստի կարող են համադրվել հիմնական գոտուն: Որպես այդպիսիք հանդես են գալիս ստորև ներկայացված գոտիները.

Պատմամշակութային ժառանգության օբյեկտների տարածքներ և պահպանական գոտիներ

Սահմանափակումներ.- հողային աշխատանքների, ճարտարապետա-հատակագծային առաջադրանքների և նախագծերի համաձայնեցում հուշարձանների պահպանության լիազոր մարմնի հետ, ըստ անհրաժեշտության՝ պահպանության պարտավորագրի առկայություն, հուշարձանների տեսանելիությունն ապահովող շենքերի և շինությունների տեղադրման և բարձրությունների սահմանափակումներ:

Ջրապահպան գոտիներ

Սահմանափակումներ.- կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հեռացման պոլիգոնների, նավթամթերքների, հանքային պարարտանյութերի, թունաքիմիկատների պահեստների տեղադրում, տրանսպորտային միջոցների կայանում, դրանց տեխնիկական սպասարկման կայանների և վառելիքի լցակայանների տեղադրում:

Ափամերձ պաշտպանական գոտիներ

Սահմանափակումներ.- երկրորդ կետի սահմանափակումները, ինչպես նաև բնակելի նշանակության շինարարություն, անվավոր և թրթուրավոր փոխադրամիջոցներով երթևեկություն:

Հեղեղումների, սողանքների և վտանգավոր այլ երևույթների գոտիներ

Սահմանափակումեր.- նախագծային և շինարարական աշխատանքեր իրականացնելիս՝ ինժեներական պաշտպանության միջոցառումների նախատեսում:

Արտադրական օբյեկտների սանիտարապաշտպանիչ գոտիներ

Սահմանափակումներ.- բնակելի կառուցապատում, մանկական, նախադպրոցական և հարակրթական, ինչպես նաև ուսումնական այլ հաստատություններ, առողջապահության և հանգստի օբյեկտներ, սպորտային կառույցներ, այգիներ, զբոսայգիներ, բանջարանոցներ:

Բնության հատուկ պահպանվող տարածքների գոտիներ

Սահմանափակումներ.-համաձայն բնապահպանական օրենսդրության և համապատասխան պահպանվող տարածքի կանոնադրության:

Հանրային կարիքների համար օրենքով սահմանված սերվիտուտների գոտիներ

Սահմանափակումներ.- գծային ենթակառուցվածքների անվտանգության նորմեր:

Տնամերձ հողամասերի և գյուղատնտեսական հողերի օգտագործման հանձնարարելի ձևեր





ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԱՄՓՈՓ ԱՂՅՈՒՍԱԿ

Պայմանական նշաններ	
Թույլատրվում է	Թ
Չի թույլատրվում	

Անվանում	Գործառնական գոտիներ	ԳՕԳ-1	ԳՕԳ-2	ԲՆԿԳ-1/1	ԲՆԿԳ-1/2	ԲՆԿԳ-2	ԲՆԿԳ-3	ԲՆԿԳ-4	ՀԿԳ-1	ՀԿԳ-2	ՀԿԳ-3	ԽԿԳ-1	ԽԿԳ-2	ԸՕԳ-1	ԸՕԳ-2	ԲՆՈՒԳ	ԱԳ-1	ԱԳ-2	ԱԳ-3	ԱԳ-3	ԵՆԹԳ-1	ԵՆԹԳ-2	ԵՆԹԳ-3	ԵՆԹԳ-4	ՀՊՏ-1/թխպ	ՀՊՏ-2/առջ	ՀՊՏ-3/ինգ	ՀՊՏ-4/պսի	ՀՊՏ-5/գնմ	ՀՆԳ	ԱՆՏԳ	ՋԳ	ՊՀՄՏԳ
Բնակելի																																
առանձնատներ				Թ	Թ	Թ	Թ																									
բլոկացված տներ					Թ		Թ																									
քոթեջներ				Թ	Թ																											
մինչև 150 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով բնակելի				Թ	Թ	Թ																										
բազմաբնակարան բնակելի շենքեր								Թ																								
Հյուրանոցային																																
հյուրանոցներ, հյուրատներ, (մինչև 30 տեղ)				Թ	Թ				Թ																							
հյուրանոցներ, հյուրատներ, (առանց սահմանափ)									Թ																		Թ					

վարձ. տրվող գյուղ.տներ, քոթեջներ			Թ					Թ																						
պանսիոնատներ, հանգստի տներ								Թ																	Թ	Թ				
առողջարանային հաստատություններ																									Թ					
Կրթական և գիտական																														
Նախադպրոցական հաստատություններմանկապարտեզներ, մանկամսուրներ								Թ																						
միջնակարգ դպրոցներ								Թ																						
գեղարվեստական և երաժշտական դպրոցներ								Թ																						
քոլեջներ								Թ																						
Համալսարաններ, ԲՈՒՀ-եր								Թ																						
Ակադեմիայի մասնաշենքեր, գիտահետազոտական ինստիտուտներ								Թ																						
Հետազոտական և այլ լաբորատորիաներ								Թ																						
Բուժական և սոցիալական հաստատություններ																														
հիվանդանոցներ								Թ																						
հոսպիսներ					Թ			Թ																						
վերականգնողական կենտրոններ								Թ																	Թ					
ամբուլատորիաներ								Թ																						
պոլիկլինիկաներ								Թ																						

բուժական կաբինետներ, կենտրոններ								Թ																						
ծերանոցներ					Թ			Թ																						
մանկատներ					Թ			Թ																						
Վարչական																														
վարչական շենքեր								Թ								Թ	Թ	Թ	Թ					Թ	Թ	Թ	Թ	Թ				
վարչական, ֆինանսական հիմնարկությունների և սպասարկման ծառայությունների գրասենյակներ								Թ																						
փոստատներ								Թ																						
կապի բաժանմունքներ								Թ																						
հրշեջ ծառայություններ								Թ																						
ոստիկանական տեղամասեր								Թ																						
քաղաքացիական պաշտպանության ապաստարաններ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ
գրասենյակային տարածքներ								Թ																						
ֆինանսական																														
բանկի բաժանմունքներ								Թ																						
այլ ֆինանսական հաստատություններ								Թ																						
Մշակութային, մարզական, այլ հասարակական նշանակության հիմնարկություններ																														
գրադարաններ								Թ																						
տուն-թանգարաններ, ցուցասրահներ								Թ																						

թանգարաններ, պատկերասրահներ, ցուցահանդեսներ								Թ																							
կինոթատրոններ և թատրոններ								Թ																							
ակումբներ, մշակութայն կենտրոններ								Թ																							
մարզադաշտեր, մարզահամալիրներ								Թ																							
մարզադահլիճներ, սպորտ-ակումբներ և սպորտդպրոցներ								Թ																							
ձիարշավարաններ								Թ																							
բաց և փակ լողավազաններ								Թ																							
հանգստի և մանկական տարբեր տիպի այգիներ													՝												Թ						
ռեկրեացիոն բնույթի խաղաձևերի սրահներ								Թ																							
մինչև 200 մ2 ընդհանուր մակերեսով մարզական պարապմունքների տարածքներ								Թ																							
խաղադաշտեր, բացօթյա ռեկրեացիոն կառույցներ, անիվավոր չմուշկների, սքեյթի և այլնի համար հարթակներ,								Թ																							
հրաձգարաններ (պնևմոտիրեր)								Թ																							

Կրոնական																														
Եկեղեցիներ								Թ																						
մատուռներ								Թ																						
այլ եկեղեցական հաստատություններ								Թ																						
Հասարակական սպասարկման և առևտրի																														
մինչև 20 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ՝ ռեստորաններ, սրճարաններ , պանդոկներ և այլն								Թ																						
մինչև 50 նստատեղով հասարակական սննդի օբյեկտներ՝								Թ																						
ռեստորաններ, սրճարաններ , պանդոկներ և այլն								Թ																						
ռեստորաններ, սրճարաններ (առանց տեղերի սահմանափ.)								Թ																						
բացօթյա սրճարաններ								Թ																						
արագ սննդի կետեր								Թ																						
կենցաղ-սպասարկման առաջնային ծառայություններ՝ վարսավիրանոցներ, քիմմաքրման կետեր, լվացքատներ, Կոշիկի, հագուստի և կենցաղային								Թ																						

տեխնիկայի վերանորոգման արհեստանոցներ																															
առևտրի կենտրոններ								Թ																							
մանրածախ առևտրի կետեր, խանութներ, կրպակներ, դեղատներ								Թ																							
մթերային և արտադրական ապրանքների շուկաներ,								Թ																							
տոնավաճառներ								Թ																							
մինչև 150 մ2 ընդհանուր մակերեսով մանրածախ առևտրի խանութներ և դեղատներ, բացառությամբ շինարարական, թունավոր և պայթուցիկ նյութերի խանութների,								Թ																							
հասարական բաղնիքներ, սառնաններ,								Թ																							
հասարական զուգարաններ								Թ																							
աղբարկղների տեղադրման հարթակներ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ
Վառելիքի վաճառակետեր, մասնագիտացված առևտրի օբյեկտներ՝ ավտոպահեստամասեր, շինանյութ, գործիքներ և այլն																															
բենզալցակայաններ										Թ																					
գազալիցքավորման կետեր										Թ																					
ավտոտեխսպասարկման կետեր, արհեստանոցներ										Թ																					
շինարարական նյութերի, գործիքների և ավտոպահեստա-մասերի, քիմիական նյութերի,										Թ																					

գյուղատնտեսական և այգեգործական գործիքների,սերմերի, տնկիների խանութներ																														
Արտադրական																														
ծանր արդյունաբերության, հանքաարդյունաբերության համալիրներ, գործարաններ															Թ															
փայտի, մետաղի, քարի մշակման արտադրամասեր															Թ															
փայտի, մետաղի, քարի մշակման անհատական արհեստանոցներ															Թ															
թեթև արդյունաբերության գործարաններ, արտադրական ձեռնարկություններ, արհեստագործական արտադրամասեր															Թ															
սննդամթերքի արտադրություն																Թ														
անհատական արհեստանոցներ և փոքրածավալ արտադրական ձեռնարկություններ, որոնց գործունեությունը կապված չէ աղմուկի, փոշու, վնասարար արտանետումների հետ																Թ														

(մինչև 200 քառ.մ ընդհանուր մակերեսով):																															
ընդերքօգտագործման տարածքներ																Թ															
Գյուղատնտեսական արտադրության																															
ձկնաբուծական ֆերմաներ																	Թ														
անասնապահական ֆերմաներ և համալիրներ, անասնագոմեր																	Թ														
թռչնաբուծական գործարաններ																	Թ														
գյուղմթերքի վերամշակման գործարաններ՝ կաթնամթերքի, պահածոների և այլ նմանատիպ արտադրություն,																	Թ														
Ջերմոցներ, չորանոցներ, ծխարաններ	Թ																Թ														
մինչև 300 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով գյուղատնտեսական արտադրական նշանակության շենքեր ու շինություններ	Թ																Թ														
Սառնարաններ, պահեստարաններ																	Թ														
սպանդանոցներ																	Թ														
Տրանսպորտային																															

պետական ավտոմայրուղիներ և ճանապարհը սպասարկող օբյեկտներ,																						Թ									
Ավտոկայաններ, ավտոկայանատեղեր								Թ		Թ												Թ									
կամուրջներ, թունելներ																							Թ								
Երկաթգիծ, երկաթգծի կայարաններ և այլ փոխկապակցված ենթակառուցվածք																							Թ								
քաղաքացիական ավիացիայի օբյեկտներ՝ օդանավակայաններ, անգարներ և այլ փոխկապակցված ենթակառուցվածք,																							Թ								
Օժանդակ շինություններ																															
Տնտեսական շինություններ, խորդանոցներ	Թ		Թ	Թ	Թ																										
կենցաղային, տնտեսական նշանակության շենքեր և շինություններ՝ մինչև 30 քառ. մետր կառուցապատման ընդհանուր մակերեսով	Թ																														
շվաքարաններ, ծածկեր													Թ																		
ներկառուցված կամ առանձին կանգնած			Թ	Թ	Թ	Թ	Թ																								

ավտոտնակներ, բաց ավտոկանգառներ (յուրաքանչյուր հողամասին՝ ոչ ավելին քան 2 մեքենայի,																															
Ավտոտնակներ, վերգետնյա և ստորգետնյա ավտոկայանատեղեր			Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ	Թ																			
անհատական օգտագործման՝ ամառային խոհանոցներ, զուգարաններ, բաղնիքներ և սառնաններ, տնտեսական շինություններ, արվեստանոցներ և արհեստանոցներ			Թ	Թ	Թ	Թ	Թ																								
Ինժեներական և կոմունալ ենթակառուցվածք																															
Էլեկտրակայաններ՝ ատոմային, ջերմային,																			Թ												
հիդրոէլեկտրակայաններ, փոքր ՀԷԿ-եր																			Թ												
տրանսֆորմատորային ենթակայաններ																			Թ												
Էլեկտրականության բարձրավոլտ օդային գծեր																			Թ												
Էլեկտրականության բարձրավոլտ մալուխային գծեր																			Թ												
ավտոմատ գազաբաշխիչ կայան (ԱԳԲԿ)																				Թ											

գազակարգավորիչ պահարանային կետեր (ԳԿԿ)																						Թ												
բարձր ճնշման գազատար խողովակաշար																						Թ												
գազի ստորգետնյա պահեստարաններ																						Թ												
հեռախոսային կապի բախշիչ կետեր (պահարանային)																							Թ												
հեռահաղորդակցության ցանցերի աշտարակներ																							Թ												
կապի ավտոմատ հեռախոսային կայաններ																							Թ												
օրվա կարգավորիչ ջրամբարներ																								Թ											
ջրամատակարարման բաշխիչ հորեր, հանգույցներ																								Թ											
կոյուղու ցանցային հորեր																								Թ											
Կոյուղու մաքրման կայաններ																								Թ											
Ջրամատակարարման և ջրահեռացման (կոյուղու) ստորգետնյա խողովակաշարեր																								Թ											
փոքր հզորության լոկալ կաթսայատներ մինչև 5ՀԿ(ժամ)																								Թ											

Ջերմամատակարարման համակարգեր, կաթսայատներ																								Թ							
աղբավայրեր																								Թ							
աղբի վերամշակման գործարաններ																								Թ							
աղբի տեսակավորման հարթակներ																								Թ							
գերեզմանոցներ																								Թ							
դիակիզարաններ,																								Թ							
Ճարտարապետական փոքր ձևեր																															
տաղավարներ, կրպակներ, զրուցարաններ,																											Թ				
նստարաններ,																											Թ				
Հուշարձաններ, կոթողներ																											Թ				
քանդակներ, ցայտաղբյուրներ																											Թ				
																											Թ				
																											Թ				

4.1. ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

հապավումը և պայմանական նշանը գծագրում	Կառուցապատման տոկոսը, առավելագույնը՝	Անջրանցիկ (սպասարկման) տարածքի մակերեսի տոկոս, այդ թվում կառուցապատման տոկոսը, առավելագույնը՝	Կանաչապատման տոկոս, ջրային մակերեսներ, նվազագույնը	Հարկայնությունը առավելագույնը	Կառուցապատման խտությունը, առավելագույնը՝	հիմնական/ոչ հիմնական
ԳՀ						
ԳՕԳ						
ԳՕԳ-1	-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-2	-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-2/1	-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-2/2	-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-3	-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-4	-	-	փաստացի	-	-	
ԳՕԳ-0	-	-	փաստացի	-	-	
ԲՆՀ						
ԲՆԿԳ						
ԲՆԿԳ-1/1	20% (+20% տնտեսական շինություններ)	40%+10%	50%	1-2 վերգետնյա հարկ (նկուղային հարկի և ձեղնահարկի հնարավորություն)	0.4	50/50
ԲՆԿԳ-1/2	30%	30%+10%	60%	1-3 վերգետնյա հարկ (նկուղային հարկի հնարավորություն)	0.6	80/20

ԲՆԿԳ-3	40% (վերակառուցման պայմաններում մինչև 60%)	40%+10% (վերակառուցման պայմաններում 60%+10%)	50% (վերակառուցման պայմաններում 30%)	4-5 վերգետնյա հարկ, (նկուղային հարկի հնարավորություն)	0.8/1.2 (վերակառուցման պայմաններում 1.6)	75/25
ՀԿԳ						
ՀԿԳ-1						
ՀԿԳ-1/1	80%	80%+20%	10% /կառուցապատման կամ սպասարկման մակերեսների հաշվին		2.4	80/20
ՀԿԳ-1/2	80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-1/3	80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-1/4	80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-1/5	80%	80%+20%	10%		2.4	80/20
ՀԿԳ-2	100%	30%	-	-		80/20
ՀԿԳ-3	100%	30%	-	-		80/20
ԽԿԳ						
ԽԿԳ-1	35%	35%+25%	40%	4-5 վերգետնյա հարկ, (նկուղային հարկի հնարավորություն)		80/20
ԽԿԳ-2	40% (վերակառուցման պայմաններում մինչև 60%)	40%+20% (վերակառուցման պայմաններում 60%+20%)	40% (վերակառուցման պայմաններում 20%)		1.2 1.6	80/20
ԸՕԳ						
ԸՕԳ-1	-	-	Չի սահմանվում			
ԸՕԳ-2	7%	7%+23%	70%	1 հարկ	0.07	-
ԲՆՌԳ						
ԲՆՌԳ	-	-	-	-	-	-

ԱՀ						
ԱԳ-1						
ԱԳ-1/1	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-1/2	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2			-			
ԱԳ-2/1	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/2	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/3	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/4	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-2/5	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-3	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԱԳ-4	60%-ից 80%	60%-ից 80% +20%	20% -0%	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹՀ						

ԵՆԹԳ -1						
ԷՆՐԳ -1/1	80% (կետային օբյեկտների համար)	80%+20%	Կանաչապատումը կառուցապատման տոկոսի նվազեցման հաշվին	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԷՆՐԳ -1/2	80% (կետային օբյեկտների համար)	80%+20%	Կանաչապատումը կառուցապատման տոկոսի նվազեցման հաշվին	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ -2	80% (կետային օբյեկտների համար)	80%+20%	Կանաչապատումը կառուցապատման տոկոսի նվազեցման հաշվին	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ -3	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ-4						
ԵՆԹԳ -4/1	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	ըստ տեխնոլոգիական պահանջների		
ԵՆԹԳ -4/2	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	ըստ տեխնոլոգիական պահանջների		80/20
ԵՆԹԳ -4/3	70%	70%+20%	10%			80/20
ՀՊՏՀ						
ՀՊՏ-1/բնպ	-	-	փաստացի			
ՀՊՏ-2/առջ	40%	40%+10%	50%	մինչև 4 հարկ		80/20
ՀՊՏ-3/հնգ	40%	40%+10%	50%	մինչև 4 հարկ		80/20
ՀՊՏ-4/պմհ	փաստացի	-	Չի սահմանվում	1 հարկ	0.05	95/5
ՀՊՏ-5/պմգ	փաստացի	-	Չի սահմանվում	1 հարկ	0.05	95/5
ՀՆՀ						

ՀՆԳ	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			համաձայն առաջա-դրանքի
ԱՆՏՀ						
ԱՆՏԳ-1	-	-	փաստացի			
ԱՆՏԳ-2	-	-	փաստացի			
ԱՆՏԳ-3	-	-	փաստացի			
ԱՆՏԳ-4	-	-	փաստացի			
ԱՆՏԳ-5	-	-	փաստացի			
ԱՆՏԳ-6	-	-	-			
ՋՀ						
ՋԳ-1	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			
ՋԳ-2	-	-	փաստացի			
ՋԳ-3	-	-	փաստացի			
ՋԳ-4	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			
ՋԳ-5	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի	համաձայն առաջադրանքի			
ՊՀՍՏՀ						
ՊՀՍՏԳ	-	-	-			

<u>Բացի հիմնական գոտիներից սահմանվում են նաև հատուկ սահմանափակումներով գոտիներ</u>՝

է. Հատուկ իրավական ռեժիմով գոտիներ (ՍՊԳ)

/ծանոթություն.- հատուկ իրավական ռեժիմով գոտիները սահմանվում են որպես տարածքների օգտագործման սահմանափակումներ պարունակող գոտիներ և դրանց սահմանները կարող են համընկնել կամ չհամընկնել այլ գոտիների սահմանների հետ/:

Դրանք հանդես են գալիս որպես գոտու հիմնական գործառույթը ծածկող գոտիներ, ուստի կարող են համադրվել հիմնական գոտուն: Որպես այդպիսիք հանդես են գալիս ստորև ներկայացված գոտիները.

Պատմամշակութային ժառանգության օբյեկտների տարածքներ և պահպանական գոտիներ

Սահմանափակումներ.- հողային աշխատանքների, ճարտարապետա-հատակագծային առաջադրանքների և նախագծերի համաձայնեցում հուշարձանների պահպանության լիազոր մարմնի հետ, ըստ անհրաժեշտության՝ պահպանության պարտավորագրի առկայություն, հուշարձանների տեսանելիությունն ապահովող շենքերի և շինությունների տեղադրման և բարձրությունների սահմանափակումներ:

Ջրապահպան գոտիներ

Սահմանափակումներ.- կոշտ կենցաղային և արտադրական թափոնների հեռացման պոլիգոնների, նավթամթերքների, հանքային պարարտանյութերի, թունաքիմիկատների պահեստների տեղադրում, տրանսպորտային միջոցների կայանում, դրանց տեխնիկական սպասարկման կայանների և վառելիքի լցակայանների տեղադրում:

Ափամերձ պաշտպանական գոտիներ

Սահմանափակումներ.- երկրորդ կետի սահմանափակումները, ինչպես նաև բնակելի նշանակության շինարարություն, անվավոր և թրթուրավոր փոխադրամիջոցներով երթևեկություն:

Հեղեղումների, սողանքների և վտանգավոր այլ երևույթների գոտիներ

Սահմանափակումեր.- նախագծային և շինարարական աշխատանքեր իրականացնելիս՝ ինժեներական պաշտպանության միջոցառումների նախատեսում:

Արտադրական օբյեկտների սանիտարապաշտպանիչ գոտիներ

Սահմանափակումներ.- բնակելի կառուցապատում, մանկական, նախադպրոցական և հարակրթական, ինչպես նաև ուսումնական այլ հաստատություններ, առողջապահության և հանգստի օբյեկտներ, սպորտային կառույցներ, այգիներ, զբոսայգիներ, բանջարանոցներ:

Բնության հատուկ պահպանվող տարածքների գոտիներ

Սահմանափակումներ.-համաձայն բնապահպանական օրենսդրության և համապատասխան պահպանվող տարածքի կանոնադրության:

Հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության գոտիներ. – հուշարձանների պահպանության ապահովման, պատմագեղարվեստական արժեքների բացահայտման, նպատակային օգտագործման և բարենպաստ տեսողական ընկալման նպատակով սահմանվում է հուշարձանի պահպանական գոտիների համակարգ և

օգտագործման ռեժիմսահմանող տարածքներ: Հուշարձանների պահպանական գոտիների համակարգը կարող է ներառել՝

ա) հուշարձանի պահպանության գոտին.

բ) կառուցապատման կարգավորման գոտին.

գ) լանդշաֆտի պահպանման գոտին:

Հուշարձանների պահպանական գոտիները, բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերը ելակետային հիմք են տարածաշրջանների, քաղաքների և մյուս բնակավայրերի մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծերի համար: Նշված գոտիների տարածքներում հողային, շինարարական և այլ տեսակի աշխատանքների, ինչպես նաև տնտեսական գործունեության իրականացումը կատարվում է լիազորված մարմնի թույլտվությամբ:

Հանրային կարիքների համար օրենքով սահմանված սերվիտուտների գոտիներ

Սահմանափակումներ.- գծային ենթակառուցվածքների անվտանգության նորմեր:

4.2. Լրացուցիչ պահանջներ

Բոլոր շենքերը պետք է դրվեն փողոցի կողմից հողամասի սահմանից 3 մ հետ, բացառելով աղմուկի, տհաճ հոտերի կամ վնասակար արտանետումների տարածումը, պահպանելով հրդեհային անվտանգության և վթարաանվտանգության պահանջները:

Առաջին հարկերը թույլատրվում է օգտագործել հասարակական գործառույթների նպատակով: Այս դեպքում շենքերը կարող են դրվել կարմիր գծով, եթե հասարակական գործառույթի մատուցումը չի ստեղծում վթարավտանգ իրավիճակ կից փողոցով երթևեկողների համար, հակառակ դեպքում, շենքերին կից, տնամերձ հողամասի սահմաններում, փողոցի կողմից պետք է նախատեսվի ավտոկայանատեղ 1-2 մեքենայի համար:

Տնամերձ հողամասերի չափերը՝ ձևավորված տնամերձ կառուցապատման շրջանակում տատանվում են 800-1200 մ^2 սահմաններում, թեև առկա են նաև ավելի մեծ չափի հողամասեր (2000 մ^2):

Հեռանկարային կառուցապատման ընթացքում ևս նախատեսվում է պահպանել հողամասերի չափերը՝ նախագծով նախատեսված հեռանկարային զարգացման տարածքների համար կատարելով նշահարում ըստ կոնկրետ դեմոգրաֆիական կազմի կողմից ներկայացված կարիքների գնահատման և բնակավայրի հողային ռեսուրսների հաշվառմամբ:

Արդեն իսկ առկա առավել մեծաչափ հողամասերը ընտանիքի անդամների ձևավորվող նոր ընտանիքների բնակավանային պայմանների բարելավմանը միտված առավել փոքրաչափ գույքային միավորների տրոհելու, ինչպես նաև միավոր հողամաս ձեռք բերելուց հետո անձնական իրավիճակների կամ ընտանեկան նոր իրավիճակների արդյունքում առավել փոքրաչափ հողամասի շրջանակում բնակարանային խնդրի լուծմանը միտված սահմանվում է նաև մեծաչափ հողամասն առանձին գույքային միավորների տրոհելու միջոցով վերոնշյալ խնդիրների լուծման համար հողամասն նվազագույն անբաժանելի մակերես՝ հաշվի նստելով նաև ձևավորվող քաղաքաշինական միջավայրի հարմարավետության և միասական հորինվածքային լուծումների ապահովումը և բնակելի միավորների՝ տների համամասնական չափերով կառուցապատում իրականացնելու հնարավորությունը: Յուրաքանչյուր դեպքում այն սահմանվում է բնակավայրերում հողամասերի համար սահմանված նվազագույն

մակերեսի կեսի չափով՝ (800-ի կեսը՝ 400 քմ), որի համար սահմանվում է նաև ճակատային նվազագույն 18 մետր լայնությամբ հատվածը բաժանելով համարժեք երկու միավորի (տնամերձ հողամասի ճակատային 9 մ կամ ավելի լայնությամբ հատվածների ապահովմամբ, ինչը կնպաստի համաչափ կառուցապատման իրականացմանը: 2000 քմ տնամերձ հողամասը՝ հաշվի առնելով հողամասերի նվազագույն 400 քմ մակերեսը, կարող է բաժանվել 2-ից ավելի գույքային միավորների՝ ապահովելով նաև ճակատային նվազագույն լայնության (9 մ) ապահովման պահանջը: 9 մ-ից փոքր ճակատի լայնության դեպքում նպատակահարմար է իրականացնել տների բլոկացված կամ կցաշար տեղադրում՝ քաղաքաշինական և հակահրդեհային նորմերի ապահովման և հարակից հողամասերի սեփականատերերի փոխադարձ համաձայնության պարագայում: Հողամասերի արդյունավետ օգտագործման և քաղաքաշինական միջավայրի նպատակային կազմակերպման նկատառումներից ելնելով բլոկացված կամ կցաշար կառուցապատման դեպքում տնամերձ հողամասի նվազագույն լայնության սահմանը կարող է իջեցվել, բայց ոչ պակաս քան 7 մետր:

Առանձնատների հարկայնությունները սահմանված են 4.11՝ Գործառնական գոտիներում կառուցապատման չափորոշիչները աղյուսակի ԲՆԿԳ-1/1, ԲՆԿԳ-1/2, ԲՆԿԳ-2 ենթաբաժիններում՝ սամանելով տարբեր հատվածներում 1-3 վերգետնյա հարկ՝ նկուղային հարկի և ձեղնահարկի հնարավորությամբ: Հարկերի բարձրությունները՝ գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

4.3. ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Սահմանված են տեղական պայմաններից բխող կանոններ, որոնք պարտադիր են նախագծվող ողջ տարածքում կիրառելու և բոլոր գոտիների համար: Դրանք հիմնականում կարգավորում են կառուցապատման և շահագործման ընթացքում առաջացող միջավայրի համալիր կանոնակարգման խնդիրները, այն է.

Ընդունված սկզբունքներին չհամապատասխանող կառույցների աստիճանական վերափոխման մեխանիզմները,

Բնապահպանական միջոցառումների իրականացումը,

Գոտիավորման նախագծով ներկայացված պահանջների իրականացումը:

1. Շինարարական և վերանորոգման աշխատանքներ

• Բոլոր շինարարական, վերակառուցման, վերականգնման և վերանորոգման աշխատանքները պետք է կատարվեն միայն գործող ընթացակարգերով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերով:

2. Շենքերի ճակատների արտաքին հարդարանք

• Շենքերի ճակատների (փողոցային և բակային) արտաքին հարդարանքի հետ կապված բոլոր շինարարական և վերանորոգման աշխատանքները պետք է կատարվեն միայն գործող ընթացակարգերով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերով:

3. Շինանյութ

• Պատմաճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի/շինությունների բնական քարերից կառուցված ճակատային պատերը ներկել կամ երեսապատել արգելվում է:

• Այլ շենքերի համար, նախընտրելի է օգտագործել սև, վարդագույն, մոխրագույն, օխրա (դեղին, կարմիր), սպիտակ երանգների շինանյութեր, որոնք կներդաշնակեն քաղաքի հիմնական կառուցապատմանը:

4. Նկուղներ և կիսանկուղներ

• Բնակելի շենքերի նկուղային և կիսանկուղային հարկերը փողոցի կողմից մեկուսացված մուտքեր չպետք է ունենան:

• Բոլոր շենքերի կիսանկուղների պատուհանների գոգերը մայթից պետք է առնվազն 30 սմ բարձր լինեն:

5. Շենքերի շքամուտքեր

• Շենքերի շքամուտքերի աստիճանները փողոցի կարմիր գծից դուրս չպետք է դրվեն:

6. Տանիքներ

• Լանջավոր տանիքների կիրառման դեպքում դրանց առավելագույն թեքությունը (i) պետք է ընդունել - 0.5:

• Լանջավոր տանիքների գագաթի բարձրությունը պետք է սահմանափակվի կառույցի խորության կեսի չափով:

7. Գովազդ

• Հուշարձաններ չհանդիսացող շենքերին կցված գովազդային վահանակների մակերեսը չպետք է գերազանցի շենքի ճակատային պատի 10 տոկոսը:

• Փողոցներում տեղադրվող առանձին կանգնած գովազդային վահանակները պետք է տեղադրվեն մոտակա կարգավորվող խաչմերուկից առնվազն 50 մ հեռավորության վրա:

8. Ցուցանակներ և անվանատախտակներ

• Փողոցների անվանատախտակները պետք է տեղադրվեն ստանդարտ չափերով՝ միասնական հատուկ նախագծի համաձայն:

• Շենքերի համարների չափերը պետք է ընդունվեն՝

ա) լուսավորությամբ, կլոր՝ տրամագիծը-30սմ

բ) առանց լուսավորության՝ քառակուսի -15 x 15սմ:

Հիմնարկությունների անվանատախտակները և բնակիչների անվանատախտակները կցվում են միայն շքամուտքների դռներին:

9. Փողոցային ցանց

• Խաչմերուկներում պահպանել տեսանելիության եռանկյունները՝ համաձայն ՀՀՇՆ 30-01-2014 նորմերի պահանջների,

• Ավտոտնակների համար հատակացվող հողամասի նվազագույն մակերեսը 20 ք.մ., բաց ավտոկանգառատեղերի համար՝ 25 ք.մ.:

• Կանգառատեղերի համար խորացումները մայթի հաշվին իրականացնել միայն սիզամարգերի և առանձին ծառախմբերի հաշվին՝ տեղական ինքնակառավարման մարմինների հատուկ թույլտվությամբ, այլ հնարավորությունների բացակայության դեպքում մայթի մեջ գրպանաձև խորացմամբ ավտոկայանատեղերի կազմակերպման դեպքում ապահովել՝

Փողոցային լուսավորություն

• «Փողոցների լուսավորության չափորոշիչները՝ համաձայն ՀՀ գործող շինարարական նորմերիե:

Տրանսպորտի միջոցների կանգառներ

• Տրանսպորտի միջոցների կանգառները պետք է տեղավորվեն, որպես կանոն, միասնական նախագծով թեթև կոնստրուկցիաներից կառուցված, թափանցիկ պատերով կամ սյուներով շինությունների մեջ: Առավելագույն չափերը՝

- երկարությունը ՝ 3.6 մ
- լայնությունը ՝ 2.0 մ

10. Աղբահեռացման կոնտեյներներ

Աղբարկղները տեղադրելիս պետք է հաշվի առնվեն հետևյալ պահանջները.

• Համաքաղաքային նշանակության փողոցների, ինչպես նաև հասարակական առավելագույն ձգողության և կուտակման վայրերին հարակից տարածքներում տեղադրել

ոչ ավելի, քան 100 մ հեռավորության վրա, հատուկ փակվող տիպի, բանուկ մասերին չխանգարող տարածքներում,

- Շրջանային նշանակության փողոցների վրա՝ 100 –200 մետրը մեկ,
- Տեղական նշանակության փողոցների վրա հիմնական խաչմերուկների վրա, դրանց հեռավորությունը 200 մետրից պակաս լինելու դեպքում՝ 200 մետրը մեկ:

11.Հեռավորությունը շենքերի միջև

Բնակելի և հասարակական, ինչպես նաև արտադրական շենքերի միջև եղած հեռավորությունը պետք է ընդունել հիմնվելով արևի ճառագայթման քանակի (ինսոլյացիայի) և լուսավորվածության հաշվարկների վրա, ինչպես նաև հակահրդեհային պահանջներին համապատասխան:

2-3 հարկանի բնակելի շենքերի երկար կողմերի միջև հեռավորությունը (կենցաղային խզումներ) պետք է ընդունել 15 մ-ից ոչ պակաս, իսկ 4 հարկանի շենքերի միջև՝ 20 մ-ից ոչ պակաս: Այս շենքերի երկար կողմերի և բնակելի սենյակներից պատուհաններ ունեցող կողաճակատների միջև՝ 15 մ-ից ոչ պակաս: Նշված հեռավորությունները կարող են կրճատվել ինսոլյացիայի և լուսավորության նորմերը պահպանելու դեպքում, եթե ապահովված է պատուհանից պատուհան բնակելի սենյակների անտեսանելիությունը:

12. Շենքերի տեղադրությունները

Շենքերը տեղադրել քամիների գերակշիռ ուղղությունների հաշվառումով՝ կողաճակատներով դեպի վերջիններս:

13. Աղմուկի թույլատրելի մակարդակ

Բոլոր գոտիներում որտեղ թույլատրված է բնակելի կառուցապատում աղմուկի թույլատրելի մակարդակը չպետք է գերազանցի 55 դԲԱ (ցերեկը) և 45 դԲԱ (գիշերը):

Աղմուկից և արտանետումներից բնակելի կառուցապատման պահպանման համար նախատեսել վերոնշյալ բացասական պարամետրերի գերազանցմամբ փողոցների ծառապատում:

14.Սանիտարական պահպանման գոտիների չափորոշում

Ճանապարհների, փողոցների, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների (օդանավակայաններ, բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծեր, բարձր և միջին ճնշման գազատար և այլն) արդյունաբերական և կոմունալ օբյեկտների սանպահպանման գոտիները՝ համաձայն գործող նորմերի և ստանդարտների:

15.Գոտիավորմանը չհամապատասխանող կառուցապատման կարգավորում

Գոտիավորմանը չհամապատասխանող բոլոր տեսակի օրինական համարվող օգտագործման ձևերը, որոնք գոյությունը պահպանել են մինչև սույն նախագծի հաստատման տարեթիվը, այսուհետև պետք է կարգավորվեն միայն սույն կանոնների պահանջներին համապատասխան:

Գոտիավորմանը չհամապատասխանող բոլոր տեսակի օրինական համարվող շենքերի և կառույցների ընդարձակում չի թույլատրվում:

Գոտիավորմանը չհամապատասխանող 6 ամսից ավելի լքված և չօգտագործվող օրինական համարվող կառույցների հետագա օգտագործման ձևը պետք է որոշվի համաձայն այն հիմնական գոտու թույլատրելի օգտագործումների կանոնների, որտեղ այն գտնվում է:

Գոտիավորմանը չհամապատասխանող օրինական համարվող կառուցապատման ձևերը կարող են վերանորոգվել, եթե բոլոր կառուցվածքային փոփոխումները կատարվում են միայն գործող քաղաքաշինական օրենսդրությանը համաձայն:

Եթե գոտիավորմանը չհամապատասխանող օրինական համարվող կառույցի վերանորոգման արժեքը գերազանցում է նրա տեղափոխման արժեքի 50%-ը, ապա այդ կառույցը պետք է արգելվի:

16. Բնակչության սակավաշարժուն խմբերի պահանջների ապահովում

Նոր կառուցապատման իրականացման կամ վերակառուցվման պայմաններում անհրաժեշտ է ընդունել որոշումներ՝ հաշմանդամների շահերի առավելագույն պահպանումով, ապահովելով վերջիններիս կենսագործունեության անարգել միջավայր:

Ինչպես բնակելի թաղամասերը, այնպես էլ ճանապարհափողոցային ցանցը պետք է նախատեսվեն բնակչության վերոնշյալ խմբերի համար երթուղիների ապահովմամբ՝ հասարակական տրանսպորտից օգտվելու հարթակների, մոտեցումների ձևավորմամբ:

Հաշմանդամների համար հողատարածքների չափերը հաշվարկել համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-06 նորմերի պահանջների:

Հետիոտն ուղիների նախատեսման ժամանակ հաշվի առնել հնարավորության դեպքում երկայնական ուղղությամբ 6 %ից ոչ ավելի թեքությունների ապահովումը, խիստ ռելյեֆային պայմանների կամ սահմանափակ տարածքային հնարավորությունների դեպքում թույլատրվում է մինչև 10 % թեքությամբ հատվածներ՝ 10 մ-ից ոչ ավելի հեռավորությամբ ապահովելով հորիզոնական տեղամասերով:

Ավտոկանգառների, հասարակական տրանսպորտի կանգառների, աստիճանների և պանդուսների, շենքերի շքամուտքերի, վերելակների, մարզական կառույցների կազմակերպման ժամանակ առաջնորդվել ՀՀՇՆ IV-11.07.01-06 պահանջներով:

17. Կառուցապատման թույլտվություններ

Օգտագործման ձևերի համար թույլտվությունների կառուցվածքը հիմնվում է ընդունված գոտի-թույլատրելի հողօգտագործման ձև սկզբունքի վրա:

4.4. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Առանձնատներ՝ իր սեփական տնամերձ հողամասում տեղակայված բնակելի միավոր մեկ ընտանիքի համար:

Բազմաբնակարան տներ՝ 2 և ավելի բնակարաններ, միավորված մեկ շենքում:

Ինսոլյացիա՝ տարածքներում և սենյակներում արևի ուղիղ անընդհատ ճառագայթման տևողության նորմատիվային պահանջ:

Լրացուցիչ պահանջներ՝ նախատեսվում են տարբեր գոտիներում տեղադրվող այն օգտագործման ձևերի համար, որոնց բնույթը մասամբ չի համապատասխանում տվյալ գոտուն ներկայցվող պահանջներին և դրանց գործառությունը հիմնականում կապվում է հատուկ պայմանների կիրառման հետ:

Կանաչ ծածկույթ՝ բուսական ծածկույթ. ծառեր, թփեր, խոտաբույսեր և այլն:

Հետիոտն մատչելիության շառավղեր՝ այն հեռավորությունը, որը կարող է անցնել մարդը՝ առանց ֆիզիկական լարվածության (0-30 րոպե ժամանակահատված):

Կառուցապատման /հողօգտագործման/ չափորոշիչներ և կարգավորիչներ՝ սահմանում են տվյալ գոտու հողօգտագործման և կառուցապատման պահանջներին համապատասխանող բնութագրերի համակարգը, որոնցով կանոնակարգվում է տարածքի իրացման ինտենսիվությունը, կառուցապատման խտությունը, կառույցների հարկայնությունը, գեղագիտական պահանջները: Կարգավորիչների հարաչափերը հիմնվում են օրենսդրական և պետական նորմատիվ փաստաթղթերի վրա, տեղայնացվում են՝ ելնելով յուրաքանչյուր գոտուն յուրահատուկ պահանջներից և փոփոխվում են գոտուց գոտի:

Հակահրդեհային պահանջներ՝ շենքերը, կառույցները հրդեհներից պաշտպանելու համար կառուցման և այլ միջոցառումների նորմերով հաստատված պարտադիր կարգ:

Համայնքային նշանակության փողոցներ՝ տրանսպորտային և հետիոտն կապ բնակելի թաղամասերի, գյուղարտադրական ձեռնարկությունների, ինչպես նաև

հասարակական կենտրոնների միջև, ելքեր դեպի արտաքին ավտոմայրուղիներ կամ դաշտամիջյան ճանապարհներ:

Տեղական նշանակության փողոցներ՝ տրանսպորտային և հետիոտն կապ բնակելի տարածքներում, ելքեր դեպի համայնքային նշանակության փողոցներ կամ դաշտամիջյան ճանապարհներ:

Երթևեկության անցուդարձ՝ միավոր ժամանակահատվածում ճանապարհի որևէ կտրվածքով հանդիպակաց ուղղություններով անցնող ավտոմոբիլների քանակը:

Ճանապարհի բեռնվածության մակարդակ՝ երթևեկության անցուդարձի հարաբերությունը ճանապարհի թողունակությանը:

Երթևեկային մաս՝ ճանապարհի մակերևույթի շերտ, որի սահմաններում կատարվում է ավտոմոբիլների երթևեկությունը:

Կարմիր գիծ՝ շենքերն ու շինությունները փողոցներից անջատող սահմանը, որով սահմանվում է նաև գլխավոր և երկրորդական փողոցների, ներառյալ մայթերի լայնությունը:

Մայթի բանուկ մաս ՝ փողոցի մայթերի՝ հետիոտնի շարժման համար հատկացված շերտ:

Հողամաս՝ հողի վերգետնյա և ստորգետնյա տարածքի մասն է, որն ունի ամրագրված սահմաններ, տարածք (մակերես, ծածկագիր), գտնվելու վայր, իրավական կարգավիճակ՝ օրենքներով նախատեսված սահմանափակումներով հանդերձ, որոնք գրանցված և արտացոլված են անշարժ գույքի պետական միասնական կադաստրում:

Հողամասի անջրանցիկ տարածք՝ հողամասի այն հատվածը, որի բուսական բնաշերտը ծածկված է արհեստական կառույցներով (շենք, մայթ, սալարկ):

Հողամասի ճակատը՝ հողամասի կարմիր գծին հարող կողմը:

Զեղնահարկ՝ լանջավոր տանիքի ներքին տարածությունը:

Նորմ՝ նախագծման ՝ շինարարության համար սահմանված պարտադիր կարգ:

Շենքի բարձրություն՝ մայթի մակերևույթից մինչև քիվի վերին եզրն ընկած ուղղաձիգ հեռավորությունը:

Ոչ հիմնական շինություն՝ կրպակներ, տաղավարներ ճարտարապետական փոքր ձևեր:

Սանիտարահիգիենիկ պահանջներ՝ բնակվելու տարածությունների՝ շրջակա միջավայրի սահմանային թույլատրելի վիճակներին համապատասխանության պահանջներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2026 թվականի №4-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԻՆԱՐ ԵՎ ԱՐԾՎԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԵՎ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՄԱՍԵՐՈՎ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.4 հոդվածի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի №1920-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի №1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 30-ի №2-32 դրական եզրակացությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար և Արծվանիստ բնակավայրերը ներառող Գեղարքունիք-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագիծը՝ գլխավոր հատակագծի և գոտևորման մասերով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀԱՅԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱԶԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026 թ. հունվարի 16
ք. Մարտունի

Հավելված
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Մարտունի համայնքի ավագանու
2026 թվականի հունվարի 16-ի №4-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԻՆԱՐ ԵՎ ԱՐԾՎԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-4 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԵՎ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՄԱՍԵՐՈՎ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎԵՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ՝ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ-4

Ծովինար, Արծվանիստ, Ախպրաձոր, Ակունք, Գեղաքար, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ, Վանևան, Տորֆավան/15/

ՏԵՔՍՏԱՅԻՆ ԵՎ ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍԵՐ

Պատվիրատու՝ ՀՀ Քաղաքաշինության կոմիտե

Պատվեր՝ *N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-*19/37-1

ՏՆՕՐԵՆ՝ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Երևան 2020

ԳԻՐՔ 1

ՏԵՔՍՏԱՅԻՆ ՄԱՍ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....

ՆԱԽԱԲԱՆ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ.....

Հայեցակարգային դրույթներ.....

Գլուխ 1.....

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ.....

1.1. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ.....

1.1.1. Մարզի ընդհանուր նկարագիրը.....10

1.2. Ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները.....

1.3. Բնակլիմայական պայմանները.....

1.3.1. Կլիմա.....

1.3.2. Մարզի բնական պայմանները և հարստությունները.....14

1.3.3. Մարզի բնության հատուկ պահպանվող տարածքները:.....15

1.3.4. Բնության հուշարձաններ.....25

1.3.4. Օգտակար հանածոներ.....26

1.3.5. Բուսական աշխարհ.....29

1.3.6. Կենդանական աշխարհը.....32

1.3.7. Ջրոսաշրջություն.....34

1.3.8. Մարզի բնակչությունը.....39

1.3.9. Բնակելի ֆոնդ.....40

1.3.10. Տնտեսություն
40

1.3.10.1. Գյուղատնտեսություն
40

1.3.10.2. Արդյունաբերություն
41

1.3.11. Կրթություն, մշակույթ, սպորտ, առողջապահություն
43

1.3.12. **Տրանսպորտ** 43

1.3.13. **Քաղաքային զարգացում** 45

«Գեղարքունիք-4» միկրոռեգիոնի բնակավայրերի առկա վիճակի վերլուծություն

1.3.14. **Ծովինար,** 47

1.3.15. **Արծվանիստ,** 48

1.3.16. **Ախպրաձոր,** 50

1.3.17. **Ակունք** 50

1.3.18. **Գեղաքար** 51

1.3.19. **Լճավան,** 52

1.3.20. **Լուսակունք** , 52

1.3.21. **Խաչաղբյուր,** 53

1.3.22. **Ծովակ,** 54

1.3.23. **Կարճաղբյուր,** 55

1.3.24. **Մաքենիս,** 56

1.3.25. **Մեծ Մասրիկ** 57

1.3.26. **Նորակերտ** 58

1.3.27. **Վաննևան** 58

1.3.28. **Տորֆավան,** 59

ԳԼՈՒԽ 2.....

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ.....

2.1. Հեռանկարային բնակչություն.....

2.2. Հասարակական սպասարկման ոլորտ.....

2.1. Բնակավայրերի տարածքի ճարտարապետահատակագծային կազմակերպում և գործառական կառուցվածք.....

2.1.1. Բնակավայրերի տարածքային զարգացման հիմնական սկզբունքները.....

2.2. Միկրոռեգիոնի գյուղական բնակավայրերի հեռանկարային զարգացման հայեցակարգ.....

2.2.1. Արդյունաբերության զարգացման հեռանկարները.....71

2.2.2. Ագրոարդյունաբերական համալիրի զարգացման հեռանկարները.....72

2.2.3. Ռեկրեացիայի քաղաքաշինական հեռանկարային կազմակերպումը.....72

2.3. Հատակագծային հեռանկարային կառուցվածք.....

2.4. Բնակավայրերի տարածքի գործառական գոտիավորում և կառուցապատման ռեժիմներ.....

2.1. Գյուղական բնակավայրի բնակավայրերի տարածքի ֆունկցիոնալ գոտիավորման և պլանավորման կառուցվածքը.....76

2.2. Համայնքային զարգացում.....77

2.2.1. Ներդրումային գրավչություն.....77

2.2.2. Զբոսաշրջության.....78

2.5. Գյուղական տարաբնակեցում.....

2.6. Ժամանակակից գյուղական բնակավայրի զարգացման օրինաչափություններն ու սկզբունքները.....

2.6.1. Նորարարություն համագործակցության միջոցով.....85

2.6.2. Կլաստերի զարգացման սկզբունքները.....85

2.6.3. Կլաստերում մասնակցության առավելությունները.....86

2.6.4. Կլաստերի բոլոր անդամների համար ընդհանուր ծառայությունների մատուցման իրավասությունների ստեղծում և զարգացում.....86

2.1. Սոցիալական ձեռնարկատիրություն,.....

2.2. Ածի բևեռներ.....

2.3. Սահմանամերձ գոտի.....

2.4. Հողերի ռեկուլտիվացիա.....100

2.5. *Բնակավայրերի հեռանկարային զարգացման ցուցանիշներ*

.....103

2.6. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ.....149

2.6.1. Ջրամատակարարում.....149

2.6.2. Ջրահեռացում.....151

2.6.2.1. Կենցաղային և արտադրական կոյուղի.....151

2.6.2.2. Հեղեղատար կոյուղի.....153

2.6.2.3. Տեխնիկական այլ առաջարկություններ.....164

2.6.3. Էներգամատակարարում.....166

2.6.3.1. Էլեկտրամատակարարում.....166

2.6.4. Գազամատակարարում.....173

2.6.4.1. Ջերմամատակարարում.....176

2.6.4.2. Գազի հեռանկարային ծախսը.....176

2.6.4.3. Այլընտրանքային էներգետիկայի առաջարկ.....177

2.6.4.4. Կոշտ թափոններ.....179

ԳԼՈՒԽ 3.....185

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ.....185

3.1. Հայաստանի Հանրապետության համայնքներն ու բնակավայրերն ըստ սեյսմիկ գոտիների.....188

Հավելված 1 Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակ.....250

Օգտագործված գրականության ցանկ.....251

ԳԻՐՔ 2

ԳԾԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Միկրոռեգիոնի բնակավայրերի համակցված

1. Հենակետային հատակագիծ Մ 1:25 000

2. Տարածքի համալիր գնահատում Մ 1:25 000
3. Տարածքային զարգացման հատակագիծ/հիմնական գծագիր/ Մ 1:25 000
4. Տրանսպորտային և ինժեներական հաղորդակցության ուղիների ուրվագիծ Մ 1:25 000

Միկրոռեգիոնի առանձին բնակավայրերի.

1. Հենակետային հատակագիծ Մ1 : 5 000
2. Տարածքի համալիր գնահատում Մ 1 : 5 000, 1:10 000
3. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների գծագիր Մ1 : 5 000
4. Հողատեսքերի բաշխումն ըստ սեփականության սուբյեկտների Մ 1:5 000
5. Հողերի նպատակային նշանակության փոփոխությունների գծագիր Մ1 : 5 000
6. Տարածքի զարգացման հատակագիծ/հիմնական գծագիր/ Մ1 : 5 000
7. Քաղաքաշինական գոտիավորման նախագիծ Մ1 : 5 000

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկա փուլի սոցիալ-տնտեսական և դեմոգրաֆիական իրավիճակն առաջնահերթ պահանջ է դրել մշակելու և իրականացնելու նոր, կայացվող պայմաններին համապատասխանող, մարզի իրական հնարավորությունները հաշվի առնող քաղաքաշինական գործունեություն: Դրա հետ կապված առաջացել է անհրաժեշտություն փաստաթղթերի մշակման նոր տիպի նպատակային ծրագրի, որը կհամապատասխանի մարզի հավասարակշռված և ներդաշնակ զարգացման նպատակներին ու խնդիրներին և կներառի տարածական պլանավորման հիերարխիական երեք մակարդակ՝ մարզի (տարածքային հատակագծման նախագիծ), համայնքի (գլխավոր հատակագիծ) և բնակավայրի (գոտևորման նախագիծ):

Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային, սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի և համայնքների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը՝ բնապահպանական խնդիրների համալիրի իրականացմամբ:

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի (Գեղարքունիք-4՝ Ծովինար, Արծվանիստ, Ախպրաձոր, Ակունք, Գեղաքար, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ, Վանևան, Տորֆավան) նախագիծը մշակվել է ՀՀ Կառավարության որոշմամբ, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով և վերջինիս կողմից տրամադրված Տեխնիկական բնութագրին համապատասխան:

Մշակվող միկրոռեգինալ մակարդակի փաստաթուղթն իրենից ներկայացնում է բազմանպատակ նախագիծ, որի հիմնական նպատակը համայնքների տարածքում տարածական պլանավորման միջոցով բարենպաստ կենսամիջավայրի ձևավորումն է, կայուն զարգացման համար անհրաժեշտ նախադրյալների ստեղծումը, տարածական-տնտեսական գործունեության համակարգված կազմակերպումն է, տարածաշրջանի և համայնքների գործառնական-հատակագծային տնտեսական և մշակութային կապերի, ճարտարապետա-հատակագծային կառուցվածքի և ֆունկցիոնալ գոտևորման խնդիրների լուծումը՝ քաղաքաշինության, արտադրության զարգացմանը նպաստող արդյունավետ պայմանների և բնական միջավայրի, նյութական մշակութային ժառանգության պահպանման ու կատարելագործման ապահովմանն ուղղված միջոցառումների առաջադրմամբ, բնական, տնտեսական և աշխատանքային ռեսուրսների համալիր և արդյունավետ օգտագործմամբ:

ՆԱԽԱԲԱՆ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հասարակության հետխորհրդային ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական արմատական փոփոխությունները շոշափելի փոփոխություններ մտցրեցին նաև քաղաքաշինական գործունեության մեջ: Պետությունը դադարեց անշարժ գույքի և ֆինանսական միջոցների միահեծան սեփականատերը լինել, ներկայումս որպես կառուցապատող, ներդրող (այսինքն՝ քաղաքաշինական գործընթացի առավել ակտիվ մասնակիցներ) հանդես են գալիս բազմաթիվ տնտեսավարող սուբյեկտներ՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք: Հետևաբար, արդի՝ նոր սերնդի քաղաքաշինական փաստաթղթերում հարկ է կանոնակարգել քաղաքաշինական գործունեության իրականացման մեխանիզմները՝ հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները և ապահովելով տարածաշրջանի կայուն

զարգացում: Տարածաշրջանի կայուն քաղաքաշինական զարգացման նպատակները ներառում են.

- քաղաքային ու գյուղական բնակավայրերի, ուրբանիզացված և միջբնակավայրային տարածքների հավասարակշռված զարգացում և էկոլոգիական վերակառուցում,
- բնակչության բնակության պայմանների մակարդակի բարձրացում,
- սոցիալական ենթակառուցվածքի կատարելագործում՝ բնակչության ռեկրեացիայի և առողջության կազմակերպման համակարգերի ներառումով,
- էկոլոգիապես անվտանգ արդյունաբերական, տրանսպորտային և ինժեներա-տեխնիկական ենթակառուցվածքների ձևավորում,
- պատմամշակութային ժառանգության օբյեկտների պահպանում վերակենդանացում,
- տարածքների քաղաքաշինական կանոնակարգման միասնական համակարգի ձևավորում՝ խթանելու ներդրումային գրավչությունը:

Հայեցակարգային դրույթներ

Միկրոռեգիոնալ տարածական պլանավորման հիմնադրութային փաստաթղթերի մշակման հայեցակարգի հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել բարենպաստ ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում կարտացոլվեն միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մեղմելու համար, այն է՝

- համայնքում առկա քաղաքաշինական իրավիճակի համակողմանի վերլուծությունը,
- մարդու կենսագործունեության արդյունավետությունն ապահովող առաջնային անհրաժեշտ խնդիրները բացահայտումը,
- համայնքի հեռանկարային զարգացման հիմնական ռազմավարական ուղղությունների իրականացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու հանձնարարականների առաջադրումը:

<u>Նախագծման համար ուղեցույց են ծառայել համայնքի զարգացմանն առնչվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումները, հետևյալ նորմատիվային և նախագծային փաստաթղթերը.</u>

- ՀՀ օրենքը քաղաքաշինության մասին:
- ՀՀ հողային օրենսգիրքը:
- Հայաստանի Հանրապետության օրենքը Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998 թ. նոյեմբերի 11, ՀՕ-261)

- ՀՀ ջրային օրենսգիրքը,
- ՀՀ օրենքը «Սևանա լճի մասին»,
- ՀՀ օրենքը «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը(2006թ.),
- ՀՀ օրենքը «Բուսական աշխարհի մասին» (1999թ.),
- ՀՀ օրենքը «Կենդանական աշխարհի մասին» (ՀՕ-52, 03.04.2000թ.),
- ՀՀ օրենքը «Մթնոլորտային օդի պահպանության մասին» (1994թ. հոկտեմբերի 11, ՀՕ-121)։
- ՀՀ օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (2014 թ. հունիսի 21, ՀՕ-110-Ն)։
- 2002 թ. մայիսի 30-ի «Սևան» ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան» ազգային պարկի և «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին» N 927-Ն ՀՀ կառավարության որոշում,
- 2007թ. հունվարի 18-ի «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» N 205-Ն ՀՀ կառավարության որոշում,
- ՀՀ կառավարության 2019 թ. հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N 927-Ն և 2007 թ. հունվարի 18-ի N 205-ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 947-Ն ՀՀ կառավարության որոշում,
- 2008թ. 14 օգոստոսի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն ՀՀ կառավարության որոշում,
- ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության որոշումը հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի N 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը։
- ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը։
- ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 72-Ն որոշումը։
- Հայաստանի Հանրապետության կառավարություն N 855-ն որոշումը (18 օգոստոսի 2016 թվականի) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N 997-ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-ն որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին։
- Կարգ բնակավայրերի տարածքների գոտիավորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման (հաստատված 14.05.01 N 408 որոշմամբ):
- Կարգ հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների մշակման ու հաստատման (հաստատված ՀՀ Կառավարության 02.05.03թ. N 625 – Ն որոշմամբ):

Վերոշյալ նորմատիվ իրավական փաստաթղթերը կանոնակարգում են համայնքների քաղաքաշինական զարգացումը՝ հիմնված հետևյալ հիմանական փուլերի վրա.

- համայնքներում առկա քաղաքաշինական իրավիճակի բացահայտում ու վերլուծությունը,
- քաղաքաշինական, բնապահպանական, պատմամշակութային և այլ սահմանափակումներին վերաբերող հիմնական պահանջների բացահայտումն ու սահմանազատումը:
- առաջնային սպասարկման և սոցիալական ենթակառուցվածքի անհրաժեշտ կազմի առաջադրումը և տեղաբաշխումը,

• համայնքի համար հիմնական հեռանկարային ուղղությունների զարգացման քաղաքաշինական միջոցառումների ցանկի մշակումը,

• միասնական քաղաքաշինական միջավայրի ձևավորմանը միտված՝ համայնքների տարածքում կառուցապատման սահմանափակումների և չափորոշիչների համակարգի մշակումը:

<u>Նախագծում հաշվի են առնվել նաև.</u>

• Նախագծային տարբեր կազմակերպությունների կողմից մշակված մարզի առանձին բնակավայրերի գլխավոր հատակագծերը: ՀՀ Կառավարության, շահագրգիռ նախարարությունների, ՀՀ կադաստրի կոմիտեի, ՀՀ ՏԿԵՆ Ջրային պետական կոմիտեի, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի, Գեղարքունիք 4-ում ներառված համայնքների ելակետային տվյալները, որոշումները, ծրագրային փաստաթղթերը:

• ՀՀ կադաստրի կոմիտեի կադաստրային քարտեզները:

• «Հայնախագիծ» ԲԲԸ-ում մշակված և կառավարության կողմից հաստատված (10.04.03 N 610-Ն) «ՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի» հիմնադրույթները:

Նախագծում հաշվի են առնված ՍԵՄԱԹ-ի «Հիմնադիր սկզբունքները Եվրոպական մայր ցամաքի կայուն զարգացման» և «Հայաստանում Եվրոպական լանդշաֆտային կոնվենցիայի» միջոցառումների և տարածքային պլանավորման փոխկապակցվածության սկզբունքները, որոնք կարելի է խմբավորել հետևյալ բլոկներով.

- Տնտեսության կայուն զարգացում՝
  - Արդյունաբերություն,
  - Գիտատար արդյունաբերական արտադրություն,
  - Ագրոարտադրական համալիր,
  - Ռեկրեացիա, հատկապես տուրիզմ,
  - Փոքր և միջին բիզնես,
  - Բնապահպանական միջոցառումներ:

- Քաղաքաշինության կայուն զարգացում՝
  - Բնակելի շինարարություն,
  - Բնակելի-կոմունալ շինարարություն,
  - Լանդշաֆտի ռացիոնալ օգտագործում,
  - Բնապահպանական միջոցառումներ:

- Ինժեներական, տրանսպորտային և տեխնիկական ենթակառուցվածքների կայուն զարգացում՝
  - Տրանսպորտ,
  - Ջրամատակարարում, ջրահեռացում,
  - Էներգամատակարարում,
  - Թափոնների օգտահանում,
  - Բնապահպանական միջոցառումներ:

Ակնկալվող արդյունքներ

1) Միկրոռեգիոնի և մարզի տնտեսության աճի տեմպերի արագացում և դրա հիման վրա շոշափելի արդյունքների արձանագրում
2) Բնակչության զբաղվածության աճ և գործազրկության մակարդակի նվազում
3) Արդյունաբերության զարգացում
4) Գյուղատնտեսական արտադրանքի իրացման ծավալների և ապրանքայնության մակարդակի բարձրացում
5) Տնտեսության դիվերսիֆիկացում և արտադրության գիտատար, ստեղծարար տեխնոլոգիաների ճյուղերի զարգացում

6) Մարզի բնապահպանական իրավիճակի բարելավում
7) Բնակչությանը տրամադրվող սոցիալական ծառայությունների որակի և մատչելիության աստիճանի էական բարձրացում
8) Մարզային և համայնքային ենթակառուցվածքների զարգացում
9) Կառավարման արդյունավետության բարձրացում՝ օպտիմալ ապակենտրոնացում
10) Տեղական ինքնակառավարման մարմինների հնարավորությունների և լիազորությունների հիմնավորված ընդլայնում
11) Քաղաքացիական հասարակության մասնակցային գործընթացի ակտիվացում, մարզային և համայնքային գործընթացներին բնակչության իրազեկվածության աստիճանի բարձրացում:

Գլուխ 1
ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ

Նախագծի շրջանակում միկրոռեգիոնների տարածքները դիտարկվում են որպես քաղաքաշինական ընդհանուր հիմնախնդիրներով շաղկապված տարածական միավորներ և որպես միասնության անբաժանելի մասեր կազմող վարչատարածքային միավորների՝ համայնքների համախումբ, որոնք ընդհանուր հիմնախնդիրների շարքում, պահանջում են ընդհանրությունից և յուրահատկությունից բխող համապատասխան քաղաքաշինական լուծումների առաջադրում:

Տվյալ բաժնում կատարվել է առկա վիճակի վերլուծություն ըստ հետևյալ ենթաբաժինների.

- Տարածաշրջանի սահմաններում բնական և անտրոպոգեն հողօգտագործումների ամրագրում,
- Սահմանվել են տարբեր նպատակային նշանակության հողօգտաործումների նկատմամբ վերգետնյա կամ ստորգետնյա սահմանափակումների համալիրը,
- Վերլուծվել են ընթացիկ մարզային և համայնքային սոցիալ-տնտեսական զարգացման ծրարգրերը և դրանց իրականացման գործընթացը:

1.1. Պատմական ակնարկ, ընդհանուր տվյալներ

1.1.1. Մարզի ընդհանուր նկարագիրը

Գեղարքունիք - մարզի կարգավիճակ ունեցող վարչատարածքային միավոր Հայաստանի արևելքում: Սահմանակից է հյուսիսում՝ Տավուշի, արևմուտքում՝ Կոտայքի և Արարատի, հարավում՝ Վայոց ձորի մարզերին, արևելքում՝ Ադրբեջանի հանրապետության Գետաբեկի, Դաշքեսանի և Թովուզի շրջան-ներին, հարավ-արևելքում՝ Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանին:

Գտնվում է ծովի մակերևույթից 2000-3500 մ բարձրության վրա՝ զբաղեցնելով 5348 կմ^2 տարածք: Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ:

Մարզը զբաղեցնում է պատմական Հայաստանի Սյունիք աշխարհի մի հատվածը, հիմնականում Գեղարքունիքի, Սոդքի և Արեգունու գավառները: Գեղարքունիքն ամենախոշոր մարզն է և զբաղեցնում է ՀՀ տարածքի 18%-ը /5,351.3178 քառ.կմ/:

Մարզն իր մեջ ներառում է 5 քաղաք՝ Գավառ, Ճամբարակ, Մարտունի, Սևան, Վարդենիս և 87 գյուղական բնակավայրեր: Մարզկենտրոնը Գավառ քաղաքն է: Այն հիմնադրել են 1830թ. Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից վերաբնակեցված հայերը՝ պատմական Գավառականի տեղում: Խորհրդային իշխանությունների տարիներին քաղաքը կոչվել է՝ սկզբում Նոր Բայազետ, ապա՝ Կամո:

Գավառը նախախորհրդային Հայաստանի չորս քաղաքներից մեկն էր: Նրա բնակչությունը գյուղատնտեսությունից բացի զբաղվում էր արհեստագործությամբ ու առևտրով: Արդյունաբերությունը թափ առավ խորհրդային տարիներին: Կառուցվեցին սարքաշինական, էլեկտրատեխնիկական, տեքստիլ ու սննդի արդյունաբերության գործարաններ, որոնց շնորհիվ Գավառը դարձավ Հայաստանի աչքի ընկնող արդյունաբերական կենտրոններից մեկը: Այժմ քաղաքում գործում են նաև կրթական, կուլտուր-լուսավորական ու առողջապահական՝ մարզային նշանակության կենտրոններ:

Մարզի տարածքով անցնում է Երևան - Սևան - Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին: Գեղարքունիքը տարանցիկ գոտի է մերձավորարևելյան և եվրոպական ու ասիական բազմաթիվ երկրների համար: Իրանից դեպի Սևծովյան ավազանի երկրներ տանող ամենակարճ ճանապարհն անցնում է Սևան-Մարտունի-Գետափ, Սևան-Դիլիջան երթուղիով: Գործում է Սելիմի լեռնանցքով անցնող «Հարավ-Հյուսիս» մայրուղին:

Մարզի տարածքի 1/4-ը ծածկված է ջրով: Այստեղ է գտնվում բարձր լեռնային (բարձրությունը ծովի մակերևույթից 1900 մ) եզակի էկոհամակարգով Սևանա լիճը, որի մակերեսը կազմում է 1.26 հազ. քառ. կմ, ծավալը 35.8 մլրդ. խմ: Սևանա լիճը Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի

Սևանավանք

ամենամեծ ավազանն է, որը հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա: Կենսաբանական բազմազանության պահպանությունն ուղղված է Սևանա լճի ավազանի բնական պաշարների երկարաժամկետ օգտագործման կարգավորմանը, որը կնպաստի ոչ միայն ավազանի, այլև ողջ հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Գեղարքունիքի մարզում կարելի է հանդիպել նախաուրարտական և ուրարտական ժամանակաշրջանների բերդերի, ամրոցների, բնակավայրերի, հնավայրերի հետքեր, սեպագիր արձանագրություններ: Լճից ազատված տարածքներից հայտնաբերվել են մինչև հինգհազարամյա հնության դամբարաններ:

Երկար ժամանակ լճի անունը բացատրվում էր հայերեն սև և վանք բառերից, որոնք բնութագրում էին Սևանավանքը: Վերջինս կառուցել էր Սյունիքի իշխանուհի Մարիամ Բագրատունին սև տուֆից (9-րդ դար):

Սևանա լճի ափին կատարված հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել է ուրարտական սեպագիր արձանագրություն, որը թվագրվում է մ.թ.ա. 9-6-րդ դարերին: Այն թույլ է տալիս եզրակացնել, որ անվանումը կարող է ուրարտերեն լինել. սունիա նշանակում է «լիճ»:

Ուշ միջնադարում լիճը կոչվել է նաև «Գյոքչա», որը թարգմանաբար նշանակում է «կապույտ ջուր»: 1901 թ. հրատարակված Յուժակովի հանրագիտարանում նշված է նաև հին պարսկերեն անվանումը՝ Գաոսրավագա:

Գոյություն ունի լճի անվանման ծագման երկու ավանդություն.

- Սևանա լճի տեղում առաջ ցամաք է եղել՝ անտառապատ բլուրներով, ծաղկավետ դաշտերով ու բերրի վարելահողերով: Գյուղին մոտիկ բլրի տակ եղել է մի ջրառատ աղբյուր, որից ջուր վերցնելիս գյուղացիները հանում էին ակունքի մեծ փակիչը և ապա զգուշությամբ հարմարեցնում տեղում:

Մի երեկո գյուղի հարսներից մեկը ջրի է գնում աղբյուրը, հանում է փակիչը, կուժը լցնում ու գալիս տուն՝ մոռանալով փակել ակունքը: Ջուրը դուրս է հորդում, ծավալվում չորս կողմ, երբ հասնում է տնակներին, բնակիչները փախչում են, ասելով «Քար դառնա ով բաց է թողել ակունքը»: Եվ մոռացկոտ հարսը քար է դառնում, իսկ ջուրը անընդհատ հոսելով գոյացնում է Սևանա լիճը, որի երեսից հազիվ վեր է բարձրանում քարացած հարսի գլուխը՝ Հարսնաքարը:

- Վանեցիները գաղթում և վերաբնակվում են Սևանի ափերին՝ որոշելով, որ դա էլ մի Վան է: Բայց հետո տեղի ցուրտ ու դաժան կլիման դուր չի գալիս նրանց: Նրանք հիշում են իրենց երկրի մեղմ ու տաք բնությունը, իրենց բարեկեցիկ կյանքը և դառնորեն կանչում՝ «Սև Վան եկավ մեր գլխին, սև Վան»: Ու այդպես էլ լճի անունը մնում է Սևան:

Թերակղզու վերածված Սևանա կղզին

Պատմահայր Մովսես Խորենացին Սևանա լիճն անվանում է «Գեղամա ծով»: Նման անվանում հանդիպում է նաև Խորենացուց մի քանի դար հետո գրված «Հայոց պատմություն» աշխատության մեջ, որի հեղինակը Հովհաննես Դրախստանակերտցին է), ինչպես նաև Կիրակոս Գանձակեցու և այլ պատմիչների աշխատություններում: Լիճը հայտնի է նաև «Գեղարքունյաց ծով», «Գեղարքունի», «Սևանգա» և այլ անուններով:

Այսպիսով, հայ պատմագրության մեջ այն կոչվել է ոչ թե լիճ, այլ ծով: Սևանա լճի այդ անվանումները կապված են Հայկ նահապետի ժառանգներից մեկի՝ Գեղամի անվան հետ:

Նրա անունն են կրում նաև Գեղամա լեռնաշղթան, Գեղամասար լեռը և Գեղամասար գետը, Գեղամավան ու Գեղամաբակ գյուղերը և այլն:

1.2. Ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները

Մարզի ինժեներաերկրաբանական և սեյսմատեկտոնական պայմանները բավականաչափ բարդ են: Սևանա լճի հյուսիս-արևելյան և հյուսիսային ափերով անցնում է ակտիվ տեկտոնական ճեղքվածք՝ 0.5-0.6 սմ/տարի շարժումով: Գրունտների առավելագույն արագացումները գրանցված են Սևանա լճի հյուսիս-արևելյան և արևելյան ափերում: Կապիտալ շինարարության համար առավել բարենպաստ են մարզի հարավային և արևմտյան հատվածները, որտեղ գրունտների առավելագույն արագացումները տատանվում են 0.5-0.6 սմ/տարի:

Ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (1325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3598 մ): Բարձր լեռներ են Սպիտակասարը (3555 մ), Վարդենիսը (3522 մ), Գեղասարը (3446 մ): Ամենաերկար գետերն են Արգիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ), առկա են նաև խառնարանային լճեր՝ Աժդահակ և Արմաղան (մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ):

Գոգավորության հյուսիսային մասով ձգվում են Արեգունու, հյուսիս-արևելյան մասով Սևանի լեռնաշղթաները, իսկ արևելյան մասով Արևելյան Սևանի լեռնաշղթան, որը օղակ է Սևանի ու Վարդենիսի լեռնաշղթաների միջև: Եթե Արեգունու և Սևանի լեռնաշղթաների Գեղարքունիքի մարզի սահմաններում գտնվող

լանջերը զառիթափ են ու կտրտված, ապա Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների դեպի Սևանա լիճ նայող լանջերը համեմատաբար մեղմաթեք են, որտեղ այդ լեռների բազմաթիվ հրաբխային կոներից դուրս ժայթքած լավան հրաբխային լեռնալանջերից բացի առաջացրել է նաև սարավանդներ, քարակարկառներ: Մարզի հենց այս հատվածներում էլ՝ Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածություններ կան, որոնք շատ հարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկ, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է: Այդ հարթ տարածությունները ծովի մակերևույթից ունեն 1900-2200մ բարձրություն: Այն կազմում է շուրջ 10000 հեկտար՝ մարզի վարելահողերի մոտ 12.3%:

Սևանա լճի հարավային և արևմտյան առափնյա հարթ տարածությունները բնութագրվում են լեռնատափաստանային բերրի սևահողերով, իսկ համեմատաբար բարձրադիր մասերը՝ լեռնամարգագետնային հողերով:

1.3. Բնակլիմայական պայմանները

1.3.1. Կլիմա

Գեղարքունիքի մարզը յուրահատուկ է իր առողջարար կլիմայով: Կլիման բարեխառն լեռնային է. ձմեռները ցուրտ են, առաջանում է կայուն ձնածածկույթ: Հունվարյան միջին ջերմաստիճանը -5˚-10˚ է: Ամառները տաք են, արևոտ, գերիշխում են քիչ ամպամած եղանակները:

Միջին ջերմաստիճանն հասնում է +18˚+20˚: Տեղումները շատ չեն՝ 400-450 մմ, իսկ բարձրադիր շրջաններում մինչև 1000 մմ: Գրեթե մշտական և ուժեղ քամիների ազդեցության տակ են Սոթքի, Սեմյոնովկայի, Վարդենյաց լեռնանցքները, մարզի լեռնային և հարթավայրային գոտիները:

Գեղարքունիքի մարզը բնութագրվում է շատ առատ արևափայլով, արևային օրերի քանակը կազմում է 300 օր: Տարեկան արևափայլի միջին տևողությունը հասնում է ավելի քան 2700-2800 ժամ/տարի:

Սևանա լիճը նկատելիորեն մեղմացնում է ափամերձ գոտու ձմռան սառնամանիքը և ամռան շոգը:

1.3.2. Մարզի բնական պայմանները և հարստությունները

Գեղարքունիքի մարզը հիմնականում զբաղեցնում է Սևանա լճի ջրհավաք ավազանը: Գեղամա և Վարդենիսի լեռներում բազմած են տասնյակ

հրաբխային կոներ: Հատկապես ուշագրավ են Աժդահակ և Արմաղան հրաբուխները, որոնց ձագարձև խառնարաններում գոյացել են գեղեցիկ լճակներ:

Գլխավոր լեռնաշղթաներն են՝ Գեղամա, Արեգունի, Սևանի, Արևելյան Սևանի, Վարդենիսի:



Վարդենիսի, Գեղամա, Փամբակի, Սևանի, Արեգունու և Արևելյան Սևանի բարձրաբերձ լեռնաշղթաների հսկայական թասի մեջ, ծովի մակարդակից 1900,47 մ բարձրության վրա է գտնվում աշխարհի ամենախոշոր քաղցրահամ լճերից մեկը՝ Սևանը, որի ծավալը 33,2 կմ^3 է, մակերեսը՝ 1238 կմ^2:

Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան (20.4 կմ^3), հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան (12.8 կմ^3): Լճի առավելագույն խորությունը 79.4 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.2 մ, ափի շրջագիծը մոտ 230 կմ: Այն համարվում է հայ ժողովրդի գլխավոր խորհրդանիշերից և ուխտավայրերից մեկը: Հսկայական է նաև Սևանի համաշխարհային ու համամարդկային նշանակությունը, քանի որ այն մի կողմից խմելու ջրի հսկայական պաշարներով հարուստ ջրամբար կարող է ծառայել Կովկասի ու Մերձավոր արևելքի երկրների համար, մյուս կողմից՝ հանդիսանում է բնական ու անկրկնելի առողջարան՝ իր անսպառ հնարավորություններով, զանազան գրավչություններով:

Սևանա լիճը սնում են 28 գետեր ու գետակներ, որոնցից 4–ը՝ Փոքր Սևան, 24–ը՝ Մեծ Սևան: Առավել ջրառատ գետեր են համարվում Արգիճին, Գավառագետը, Մասրիկը, Ձկնագետը, Մաքենիսը, Վարդենիսը: Սակայն 1981թ.-ից լիճը սնող հիմնական երակը 48 կմ երկարություն ունեցող Արփա-Սևան թունելային ջրատարն է, որով տարեկան լիճ է տեղափոխվում 250-270 միլիոն մ^3 ջուր: Լճից դուրս է գալիս մեկ գետ՝ Հրազդանը:

Գեղարքունիքի մարզը յուրահատուկ է իր լճափնյա հնագույն հուշարձաններով ու մշակույթի օջախներով, բուսական և կենդանական աշխարհի առանձնահատկություններով, բնական միջավայրի գեղեցկությամբ:

Մարզի տարածքում պահպանվել են բազմաթիվ միջնադարյան ճարտարապետական հուշարձաններ, բայց առանձնապես ուշագրավ են բնական հուշարձանները՝ խառնարանային լճերը, խարամային կոները,

ընդարձակ ‘քարային ծովերը’: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Սևանա լճից ազատված տարածքներում հայտնաբերված մինչև 5000-ամյա հնության դամբարանները:

Սևանի ավազանն արգավանդ հողերով հարուստ է, հատկապես կարևոր է Մասրիկի դաշտը՝ 1900-2200 մ բարձրություններում:

Մարզի 4 քաղաքները՝ Գավառը, Սևանը, Մարտունին, Վարդենիսը տեղակայված են ինտենսիվ յուրացված տարածագոտիներում և շրջապատված են արժեքավոր գյուղատնտեսական հողերով, իսկ Վարդենիս, Գավառ, Մարտունի քաղաքները տեղակայված են արտեզյան, խմելու, հանքային ջրերի ավազանների վրա:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով՝ Սևանա լիճը՝ Հայաստանի Հանրապետության քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարան է: Որպես ջրհավաք ավազան սահմանված է այն տարածքը, որի մակերևութային և ստորերկրյա ջրերը հոսում են դեպի Սևանա լիճ: Սևանա լճի ջրհավաք ավազանի մասն են կազմում նաև Կեչուտի և Սպանդարյանի ջրամբարները, Արփա և Որոտան գետերի ջրհավաք ավազանները՝ մինչև Կեչուտի ջրամբար: Օրենքով առանձնացված են կենտրոնական, անմիջական ազդեցության և ոչ անմիջական ազդեցության էկոլոգիական գոտիները: Կենտրոնական գոտին «Սևան» ազգային պարկի տարածքն է, որի տարանջատման նպատակն է վերականգնել և պահպանել Սևանա լճի էկոհամակարգի բնական վիճակը՝ ջրի որակը, լճի և ափամերձ ցամաքային տարածքների բնական և արհեստական լանդշաֆտները և կենսաբազմազանությունը:

1.3.3. Մարզի բնության հատուկ պահպանվող տարածքները: Սևան ազգային պարկ

Մարզի տարածքում է գտնվում «Սևան Ազգային պարկը» /կազմավորվել է 1978թ.-ին/: Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակի ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազար հա, որից 24.9 հազ. հա առափնյա ցամաքային տարածքներ են: Այն շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1600 և կենդանիների 330 տարատեսակներ:

Պարկը գտնվում է է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության իրավասության ներքո: Ստեղծվել է 1978 թ. մարտի 14-ին, ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի թիվ 125 որոշմամբ:

Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն

օգտագործման ապահովումը իրականացնում է «Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: Այն շահույթ չհետապնդող, իրավաբական անձի կարգավիճակ ունեցող բնապահպանական, գիտահետազոտական, գիտաճանաչողական կազմակերպություն է, որը գործում է ՀՀ Սահմանադրության, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների, ՊՈԱԿ-ի կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա:

«Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով (15-ը մայիսի 2001 թ.) ազգային պարկի տարածքը ամբողջությամբ մտել է Սևանի էկոհամակարգի Կենտրոնական գոտու մեջ, սահմանվելով որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ:

Սևան ազգային պարկի տարածքը բաժանվում է 4 տարածքագործառնական գոտիների՝ արգելոցներ, արգելավայրեր, ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում կան 4 արգելոցներ՝ «Նորաշենի», «Լիճք-Արգիչի», «Գիլլի» և «Արտանիշի», որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 7464 հա, որից ցամաքային տարածքը՝ 4289 հա, իսկ ջրայինը՝ 3175 հա, 2 արգելավայրեր՝ «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային», որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2652 հա, որից ցամաքային տարածքը՝ 2359 հա, իսկ ջրայինը՝ 293 հա, 4753 հա ընդհանուր մակերեսով ռեկրեացիոն և 11266 հա ընդհանուր մակերեսով տնտեսական գոտի:

Տարածքագործառնական գոտիները

Տարածքագործառնական գոտիների մեջ մտնում են արգելոցները, արգելավայրերը, ռեկրեացիոն գոտիները, տնտեսական գոտիները:

Արգելոցներ

Նորաշենի արգելոց



Գտնվում է ազգային պարկի հյուսիս-արևմտյան հատվածում և զբաղեցնում է 214 հա մակերես, որից՝ ցամաքային տարածքը կազմում է 36 հա, իսկ ջրայինը՝ 178 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 6.4 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 1.7 կմ երկարությամբ և 1.3 կմ լայնությամբ: Արգելոցի նպատակն է ապահովել թռչունների (մասնավորապես, հայկական որորի, քանի որ այստեղ բնադրող միակ էնդեմիկ թռչունն է) բնականոն ապրելակերպն ու վերարտադրությունը:

Սահմանի նկարագրությունը.

Արգելոցի ցամաքային սահմանն սկսվում է 2-րդ ռեկրեացիոն և 6-րդ տնտեսական գոտիների հատման կետից (տես՝ 4.4-րդ և 4.5-րդ կետերը)՝ Սևան-Մարտունի ավտոճանապարհի Նորաշեն գյուղ մտնող խաչմերուկից 600 մետր

դեպի Գավառ տանող ճանապարհի և 225 մետր դեպի լիճ՝ լճախորշի Ա1 կետից (X=502765, Y=4485974, H=1900.5 մ): Այստեղից սահմանը 110 մ անցնում է հարավ-արևելյան ուղղությամբ, այնուհետև շարունակվում է լճախորշին մոտ գտնվող լճակի ափագծով մինչև Ա1/1 (X=503426.46, Y=4486039.89, H=1900.5) կետը, որից հետո, սահմանակցելով «Նորաշենի» արգելավայրին, անցնում է գրունտային ճանապարհին զուգահեռ մոտ 680 մետր՝ մինչև Ա1/2 (X=503632.68, Y=4486593.70, H=1900.5) կետը: Ա1/2 կետից ջրային սահմանը 3.6 կմ շրջագծով անցնում է մինչև Ա1 կետը:

Տեղանքի նկարագրությունը.

Արգելոցի տարածքի ռելիեֆը գրեթե հարթ է և ընկած է լճի ափից մինչև 1908 մետր բարձրությունը: Ափերը կտրտված են: Արգելոցի տարածքում առանձնացվում են երկու կղզյակներ՝ 3.2 հա և 1.6 հա տարածքներով: Արգելոցի ցամաքային տարածքն անտառազուրկ է, հանդիպում են չիչխանի թփեր: Կղզիները քարապատ են:

Ենթակառուցվածքները.

Արգելոցի ցամաքային տարածքը սահմանակից է «Նորաշենի» արգելավայրի տարածքի հետ, գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը 2.8 կմ է:»

Լիճք-Արգիչի արգելոց



Գտնվում է ազգային պարկի հարավ-արևմտյան հատվածում՝ Ծակքար, Լիճք և Արգիճի գետերի գետաբերանային հատվածներում, և զբաղեցնում է 1175 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 482 հա, իսկ ջրայինը՝ 693 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 13.3 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 3.8 կմ երկարությամբ և 3.7 կմ լայնությամբ:

Արգելոցի նպատակն է ապահովել Լիճքի հանքային աղբյուրների, Արգիճի և Լիճք գետերի գետաբերանային հատվածում մնացորդային լճակների ջրաճահճային և ջրային բուսականության, թռչունների բնադրավայրի պահպանությունը, ինչպես նաև արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների[a] Սևանի իշխանի, Սևանի կողակ և Սևանի բեղլուի ձվադրումն ու զարգացումը:

Սահմանի նկարագրությունը.

Արգելոցի ցամաքային սահմանը սկսվում է Ծակքար գետի գետաբերանից 430 մ հոսանքն ի վար և 50 մ դեպի հյուսիս Ա1 կետից (X=520489, Y=4450708, H= 1903 մ): Ա1 կետից սահմանը Ծակքար գետին զուգահեռ, 50 մ հեռավորությունից, անցնում է հոսանքն ի վեր ուղղությամբ և 50 մ չհասած գազամուղին թեքվում է հարավ-արևելք: Գազամուղից 50 մ հեռավորությամբ, դրան զուգահեռ, 50 մ կտրում անցնում է Արգիչի գետը և թեքվում է հյուսիս-արևելք[a] հասնում Բ1 կետին (X=524125, Y=4448936, H= 1901 մ): Ա1-Բ1 հատվածի երկարությունը 5.3 կմ է: Ա1-Բ1 հատվածում սահմանակցում է 11-րդ տնտեսական գոտուն: Բ1 կետից սահմանը 330 մ շարունակվելով հյուսիս-արևելյան ուղղությամբ[a] հասնում է լճափ՝ Գ1 կետին

(X=524328, Y=4449157, H= 1898 մ): Բ1-Գ1 հատվածում սահմանակցում է 5-րդ ռեկրեացիոն գոտուն: Գ1 կետից՝ ափից, ցամաքային սահմանը անցնում է լճի ափագծով մինչև Դ1 կետը (X=520869, Y=4450821, H= 1898 մ): Գ1-Դ1 հատվածում սահմանը ջրային տարածքով անցնում է մոտ 2.0 կմ խորությամբ և 6.9 կմ շրջագծով: Դ1 կետից՝ ափից, սահմանը անցնում է 400 մետր հարավ-արևմտյան ուղղությամբ հասնում Ա1 կետին: Բ1-Ա1 հատվածում սահմանակցում է 4-րդ ռեկրեացիոն գոտուն:

Տեղանքի նկարագրությունը.

Արգելոցի տարածքի ռելիեֆը հարթ է: Ընկած է լճի ափից մինչև 1908 մետր բարձրության սահմաններում: Արգելոցի տարածքն ընդգրկում է Արգիճի, Լիճք, Բախտակ և Ծակքար գետերի գետաբերանային հատվածները, որտեղ լճի ջրի մակարդակի իջեցման և գետերի էրոզիայի բազիսի իջեցման պատճառով գետերը ստեղծել են 10-6 մետր խորությամբ ձորակներ: Լիճք գետի հատվածում դուրս են գալիս Լիճքի հանքային աղբյուրները և կան 3 փոքր լճակներ՝ 9.8, 3.1 և 1.3 հա մակերեսներով:

Տարածքը գրեթե ամբողջությամբ պատված է անտառային տնկարկներով, որոնք հիմնականում կազմված են սոճու, բարդու, թխկու և ուռենու ծառուտներից:

Ենթակառուցվածքները. Արգելոցի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 15.6 կմ:

Գիլլի արգելոց

Գտնվում է ազգային պարկի հարավ-արևելյան հատվածում՝ Գիլլի ջրանցքի, Մասրիկ և Գեղամասար գետերի գետաբերանային հատվածներում և զբաղեցնում է 1810 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 1325 հա, իսկ ջրայինը՝ 485 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 23.3 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 10.4 կմ երկարությամբ և 1.8 կմ լայնությամբ:



Արգելոցի նպատակն է ապահովել Մասրիկ և Գեղամասար գետերի գետաբերանային հատվածների պահպանությունը՝ արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների ձվադրման և զարգացման համար, ինչպես նաև հարակից ճահճուտների պահպանությունը, որպես թռչունների բնադրավայր:

Սահմանի նկարագրությունը.

Արգելոցի ցամաքային սահմանը սկսվում է Ծովակ-Վարդենիս ավտոճանապարհից դեպի Գիլլի ջրանցք 600 մ հեռավորությունից՝ Ա1 կետից (X=555244, Y=4451749, H= 1919 մ): Ա1 կետից անցնում է Ազգային պարկի սահմանով (Ծովակ-Նորակերտ ավտոճանապարհով) հյուսիսային ուղղությամբ, կտրում անցնում է Գեղամասար գետը 550 մ և հասնում է Բ1 կետին (X=524024, Y=4462238, H= 1919 մ): Բ1 կետից սահմանը թեքվում է դեպի հարավ-արևմուտք անցնելով 950 մետր հասնում է լճափ Գ1 կետին (X=553328, Y=4461635, H= 1898 մ): Բ1-Գ1 հատվածում սահմանակցում է 8-րդ ռեկրեացիոն գոտուն: Գ1 կետից արգելոցի ցամաքային սահմանը անցնում է ափագծով մինչև Դ1 կետը (X=553717, Y=4452415, H= 1903 մ), իսկ

ջրային տարածքով անցնում է մոտ 9.7 կմ շրջագծով, 500 մետր լայնությամբ և 9.3 կմ երկարությամբ: Դ1 կետից սահմանը 1.7 կմ անցնում է հարավ-արևելյան ուղղությամբ և հասնում Ա1 կետին: Այս հատվածում արգելոցը սահմանակից է 12-րդ տնտեսական գոտուն:

Տեղանքի նկարագրությունը.

Արգելոցի տարածքի ռելիեֆը հարթ է: Ամբողջությամբ ընկած է լճի նախկին ջրի մակարդակի (1916 մետր) սահմաններում: Արգելոցի տարածքն ընդգրկում է Գեղամասար և Մասրիկ գետերի ու վերջինիցս դուրս եկող ջրանցքի գետաբերանային հատվածները:

Արգելոցի ցամաքային տարածքն ամբողջությամբ պատված է անտառային տնկարկներով, որոնք հիմնականում կազմված են սոճու, բարդու և ուռենու ծառուտներից:

Ենթակառուցվածքները. Արգելոցի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 31 կմ, իսկ 1.6 կմ՝ Գիլլի ջրանցքը:։

Արտանիշի արգելոց



Գտնվում է ազգային պարկի արևելյան մասում՝ ընդգրկում է Արտանիշ թերակղզին (բացառությամբ ձախակողմյան հատվածի՝ Շորժա համայնքային հողերը) և Արտանիշի լճախորշի թերակղզուն հարող մասը: Տարածքը զբաղեցնում է 3640 հա մակերես, որից 2142 հա ցամաքային տարածք, իսկ 1498 հա՝ ջրային: Սահմանի ընդհանուր երկարությունը 25.9 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 11.7 կմ երկարությամբ և 7.8 կմ լայնությամբ:

Արգելոցի նպատակն է ապահովել Արտանիշ թերակղզու մինչսառցային ժամանակաշրջանի բազմազան ռելիկտային բուսականության, գիհու նոսրանտառների և տափաստանների, ինչպես նաև որպես հազվագյուտ կենդանիների (գորշ արջ, այծյամ, վարազ, բեզոարյան այծ, ազնվացեղ եղջերու և այլն) միգրացիայի միջանցքի պահպանությունը:

Սահմանի նկարագրությունը.

Արտանիշի արգելոցի ցամաքային սահմանը սկսվում է Ա1 կետից (X=528625, Y=4483303), 900 մ անցնում հարավ-արևելյան ուղղությամբ և հասնում է լճախորշի ափին՝ Բ1 կետին (X=529282, Y=4482722, H= 1908 մ): Ա1-Բ1 հատվածում սահմանակցում է 8-րդ ռեկրեացիոն գոտուն: Բ1 կետից ցամաքային սահմանն անցնում է ափագծով մինչև Գ1 կետը (X=526445, Y=4480861, H= 1898 մ), իսկ ջրային սահմանն անցնում է ափագծին զուգահեռ 1.5 կմ հեռավորությունից: Գ1 կետից սահմանն անցնում է հյուսիսային ուղղությամբ 350 մ, որից հետո թեքվում է դեպի արևմուտք[a] անցնելով 950 մ հասնում է Դ1 կետին (X=525492, Y=4481375, H= 1917 մ): Գ1-Դ1 հատվածում սահմանակցում է 1-ին ռեկրեացիոն գոտուն: Դ1 կետից սահմանը անցնում է Շորժա համայնքային հողերի սահմանով, շրջանցելով

Արտանիշ թերակղզու լեռների հյուսիսային լանջերը, անցնում մոտ 9.2 կմ, որից 1.3 կմ սահմանակից է Արտանիշի համայնքային հողերին, և հասնում է Ա1 կետին:

Տեղանքի նկարագրությունը.

Արտանիշի արգելոցի տարածքն ընդգրկում է Արտանիշ թերակղզին (բացառությամբ արևմտյան մասի՝ Շորժա համայնքային հողերը) և Արտանիշի լճախորշի մի մասը: Արտանիշի լճախորշից հյուսիս ընկած ցամաքային հատվածը հարթ է, գտնվում է 1906 -1915 մ բարձրությունների միջև, իսկ թերակղզու կենտրոնական և արևելյան հատվածները պատված են լեռնազանգվածով, որի առավելագույն բարձրությունը Ադաթափա լեռն է՝ 2460.8 մ բարձրությամբ (գտնվում է թերակղզու կենտրոնական մասում): Արտանիշի թերակղզու կենտրոնական մասից լեռնաբազուկները ձգվում են ճառագայթաձև: Արգելոցի ցամաքային տարածքում մշտական հոսող գետեր չկան, միայն ժամանակավոր հոսող գետակներ են: Արգելոցի տարածքը գրեթե անտառազուրկ է: Միայն թերակղզու կենտրոնական լեռնազանգվածի հյուսիսային մասում փոքր հատվածներով հանդես են գալիս անտառային տարածքներ՝ գիհու գերակշռությամբ և լճի ափի երկայնքով մոտ 200 մ լայնությամբ ձգվում են թեղու և չիչխանի տնկարկներ:

Ենթակառուցվածքները. Արգելոցի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 51 կմ: Այստեղ կան նաև լքված և ավերված շինություններ:

Արգելավայրեր

Գավառագետի արգելավայր

Գտնվում է ազգային պարկի Նորատուս թերակղզու ափամերձ և Գավառագետի գետաբերանային հատվածում, զբաղեցնում է 845 հա մակերես, որից ցամաքային տարածքը կազմում է 552 հա, իսկ ջրայինը՝ 293 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 26.4 կմ է: Արգելավայրի տարածքը ձգվում է մոտ 7.5 կմ երկարությամբ և 0.5-3.5 կմ լայնությամբ:

Արգելավայրի նպատակն է ապահովել Գավառագետի գետաբերանային հատվածում մնացորդային լճակների պահպանությունը և Նորատուս թերակղզու ափամերձ հատվածի թռչունների բնադրավայրերը, ինչպես նաև արժեքավոր և հազվագյուտ ձկնատեսակների ձվադրումն ու զարգացումը:

Սահմանի նկարագրությունը.

Արգելավայրի սահմանը սկսվում է Նորատուս-Մարտունի ավտոճանապարհից[a] լճափից 2.0 կմ դեպի արևելք՝ Ա1 կետից (X=511213, Y=4476644, H= 1898 մ): Ա1 կետից սահմանը անցնում է նախ հարավային, ապա հարավ-արևելյան ուղղությամբ, շրջանցում է Նարատուս թերակղզու Ռադիոլոկացիոն կայանը և հասնում Բ1 կետին (X=518191, Y=4475080, H= 1902 մ): Ա1-Բ1 հատվածում սահմանակից է 11-րդ տնտեսական գոտուն: Բ1 կետից սահմանը անցնում է 300 մ արևելյան ուղղությամբ, հասնում Գ1 կետին (X=518185, Y=4475094, H= 1898 մ): Բ1-Գ1 հատվածում սահմանակից է 4-րդ ռեկրեացիոն գոտուն: Գ1-Ա1 հատվածում ցամաքային սահմանը անցնում է ափագծով, իսկ ջրայինը՝ 300 մետր լայնությամբ:

Տեղանքի նկարագրությունը.

Արգելավայրի տարածքի ռելիեֆը հարթ է: Ամենաբարձր նիշը հասնում է մինչև 1915 մ բարձրությունը, հիմնական տարածքը ընկած է մինչև 1910 մ բարձրությունը: Արգելավայրի ցամաքային տարածքը Գավառագետի գետաբերանային և Նորատուս թերակղզու ափամերձ հատվածներն են: Այստեղ Գավառագետը, մինչև լիճ թափվելը, ունի մեծ գալարայնություն (ռելիեֆի հարթության պատճառով), որի պատճառով էլ այս տարածքում առաջացել են մի քանի հնահունային փոքր լճակներ: Արգելավայրի ցամաքային տարածքը գրեթե ամբողջովին անտառապատ է: Անտառային տնկարկներից հանդես են գալիս հիմնականում բարդու, ուռենու և սոճու ծառուտները:

Ենթակառուցվածքները. Արգելավայրի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 25 կմ: Արգելավայրի տարածքով անցնում են 1.4 կմ երկարությամբ բարձրավոլտ հոսանքի գծեր:

Գիհի-կաղնուտային ռելիկտային արգելավայրը

Գտնվում է ազգային պարկի արևելյան մասում և տարածվում է Դարանակ գյուղից մինչև Ջիլ գյուղ՝ մոտ 18 կմ երկարությամբ և 1.5-3.8 կմ լայնությամբ: Արգելավայրը զբաղեցնում է 1807 հա մակերես: Տարածքը կտրտված է, հանդես են գալիս տարբեր չափերի 5 հատվածներ, որոնց սահմանների ընդհանուր երկարությունը կազմում է 55.0 կմ:



Արգելավայրի նպատակն է ապահովել Սևանա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերի վրա տարածվող գիհու և կաղնու ռելիկտային բնական նոսր անտառների պահպանությունը:

Սահմանի նկարագրությունը.

- Առաջին հատվածը ձգվում է Դարանակ գյուղի վերջից՝ գետի աջ և ձախ ափերով դեպի հյուսիս-արևելք 1.3 կմ լայնությամբ և դեպի հյուսիս-արևմուտք 2.8-4.0 կմ երկարությամբ:
- Երկրորդ հատվածը սկսում է 2.4 կմ չհասած Դարանակ գետ և ձգվում է երկաթգծի երկայնքով մոտ 1.7 կմ երկարությամբ և մոտ 800 մ դեպի հյուսիս՝ լանջն ի վեր:
- Երրորդ հատվածն ընկած է Փամբակ գյուղից 800 մետր դեպի հյուսիս և ձգվում է Փամբակ գետի ձախ ափից 370 մ լայնությամբ և լանջն ի վեր 700 մետր երկարությամբ:
- Չորրորդ հատվածի սահմանը սկսում է 2.0 կմ չհասած Շամպիր գետ, ձգվում է երկաթգծից դեպի լանջն ի վեր մոտ 4.7 կմ երկարությամբ: Շամպիր գետի գետաբերանից մոտ 2.1 կմ հեռավորությունից ձգվում է գետի երկու ափերով մոտ 1.0-1.6 կմ լայնությամբ:
- Հինգերորդ հատվածն ընկած է Ծափաթաղ և Ջիլ գյուղերի մինչև: Սահմանը սկսվում է Ջիլ գետից 1.5 կմ ներքևից, ձգվում հյուսիս-արևմուտքից

հարավ-արևելք ուղղությամբ 5.2 կմ լայնությամբ մինչև Ծափաթաղ գետ և երկաթգծից դեպի լանջն ի վեր[a] հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ 3.2 կմ երկարությամբ:

Տեղանքի նկարագրությունը.

Գիհի կաղնուտային ռելիկտային արգելոցը ընկած է Սևանա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լանջերին: Տարածքն իրենից ներկայացնում է ուժեղ կտրտված լեռնային լանդշաֆտ[a] թեք ժայռոտ լանջերով, տարբեր խորության և լայնության ձորերով ու ձորակներով: Ամենախորը ձորերով հոսում են մշտական գետերը[a] Դարանակ, Փամբակ, Շամպիր, Ծափաթաղ և Ջիլ: Արգելավայրի տարածքը սկսվում է մոտ 1950 մ բարձրությունից և տեղ-տեղ հասնում մինչև 2500 մ բարձրությունները:

Ենթակառուցվածքները. Արգելավայրի տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 25 կմ: Արգելավայրի տարածքով անցնում է 7.2 կմ բարձրավոլտ հոսանքի գծեր:

Գետիկի արգելավայր, բնության հատուկ պահպանվող տարածք, Հայաստանի Հանրապետության 26 արգելավայրերից մեկը: Կազմավորվել է 1971 թ., ունի 5728 հա տարածք: Գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ Գետիկ գետի ավազանում, Միափորի լեռների հարավային լանջերին, ծովի մակարդակից 1500-2700 մ բարձրություններում: Ստեղծվել է՝ անտառային կենդանիների պահպանության նպատակով:

«Գիհու նոսրանտառային» արգելավայրը հիմնադրվել է 1958 թ., զբաղեցնում է 3312 հա տարածք, գտնվում է Գեղարքունիքի մարզում, Արեգունի և Սևանի լեռնաշղթաների լանջերին, ծովի մակարդակից 1950-2500 մ բարձրության վրա:

«Նորաշենի» արգելավայր.

Գտնվում է ազգային պարկի հյուսիս-արևմտյան հատվածում և զբաղեցնում է 625 հա մակերես, որից՝ ցամաքային տարածքը կազմում է 146 հա, իսկ ջրայինը՝ 479 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 10.3 կմ է: Արգելոցի տարածքը ձգվում է մոտ 3.1 կմ երկարությամբ և 2.1 կմ լայնությամբ: Արգելավայրի նպատակն է ապահովել չուի ընթացքում պարբերաբար հանդիպող և չվահյուր թռչունների հանգստի և ապրելակերպի բնական պայմանները և պահպանությունը:

Սահմանների նկարագրությունը.

Արգելավայրի ցամաքային սահմանն սկսվում է Ա1/2 (X=503632.68, Y=4486593.70, H=1900.5) կետից, սահմանակցելով «Նորաշենի» արգելոցին, անցնում է գրունտային ճանապարհին զուգահեռ մոտ 680 մետր՝ մինչև Ա1/1 (X=503426.46, Y=4486039.89, H=1900.5) կետը: Այստեղից սահմանն անցնում է լճախորշին մոտ գտնվող լճակի ափագծով մինչև Ա1/3 (X=503144.67, Y=4485514.78, H=1900.5) կետը, որտեղից ուղիղ գծով անցնում է դեպի հարավ 188 մետր, այնուհետև Սևան-Մարտունի ավտոճանապարհին զուգահեռ հարավ-արևելյան ուղղությամբ հասնում է Ծովազարդ գյուղ մտնող գրունտային ճանապարհի խաչմերուկից 100 մետր դեպի լճափ Բ1 կետին (X=504225, Y=4483907, H=1903 մ): Ա1/3-Բ1 սահմանակցում է 6-րդ տնտեսական գոտուն: Բ1 կետից սահմանը թեքվում է դեպի արևելք, հյուսիս և հյուսիս-արևելք ուղղությամբ, անցնում 500 մ և հասնում է Գ1 կետին (X=504610, Y=4484131, H=1900.5 մ): Բ1-Գ1 սահմանակցում է 3-րդ ռեկրեացիոն գոտուն: Գ1 կետից ջրային սահմանը 6.0 կմ շրջագծով անցնում է մինչև Ա1/1 կետը:

Տեղանքի նկարագրությունը.

Արգելավայրի տարածքի ռելիեֆը գրեթե հարթ է և ընկած է լճի ափից մինչև 1916 մետր բարձրությունը: Ափերը կտրտված են: Անտառային տնկարկներից հիմնականում հանդես են գալիս չիչխանի, թեղու և սոճու ծառուտները:

Ենթակառուցվածքները.

Արգելավայրի ցամաքային տարածքին հարող Սևան-Մարտունի ավտոճանապարհի երկարությունը կազմում է 1.9 կմ, իսկ գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը 5.8 կմ է:»,

«Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտիների սահմանների և տեղանքների նկարագրությունները

ՙՍևան՚ ազգային պարկի առաջակվող ռեկրեացիոն գոտիների ընդհանուր տարածքը կազմում է 4753 հա, որոնք առանձին հատվածներով տարածվում են լճի ափամերձ երկայնքով (Քարտեզ 4):

Առաջին ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 1501 հա, սահմանի ընդհանուր երկարությունը[a] 119.8 կմ:

Սահմանի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Սևան-Գավառ ավտոճանապահի Լճաշեն գյուղ մտնող ճանապահի խաչմերուկից դեպի արևելք լճի ափից՝ Ա2 կետից (X=495906, Y=4487597, H= 1898 մ): Ա2 կետից սահմանը ձգվում է 600 մետր մինչև Լճաշեն գյուղ մտնող ճանապահի խաչմերուկ՝ Բ2 կետը (X=495511, Y=4487916, H= 1904 մ): Ա2-Բ2 հատվածում սահմանակից է 4-րդ տնտեսական գոտուն: Որից հետո անցնում է հյուսիս-արևելյան ուղղությամբ 1.3 կմ մինչև Սևան-Դիլիջան ավտոմայրուղու հատումը (Սևան քաղաք մտնող խաչմերուկից 1.0 կմ ավտոմայրուղով դեպի Դիլիջանի կողմը)՝ Գ2 կետը (X=495528, Y=4489063, H= 1919 մ): Այստեղից սահմանը անցնում է Սևան-Դիլիջան ավտոմայրուղով 10.9 կմ մինչև (չհասած 1.2 կմ Ծավագյուղ թեքվող ճանապարհի խաչմերուկ) Դ2 կետը (X=496779, Y=4496236, H= 1915 մ): Այս հատվածում ռեկրացիոն գոտին ամբողջությամբ իր մեջ ներառում է Սևան թերակղզին: Դ2 կետից սահմանը թեքվում է դեպի հյուսիս-արևելք անցնում 3.5 կմ դուրս գալիս Ծովագյուղ-Շորժա ավտոճանապարհ՝ Ե2 կետը (X=497549, Y=4498965, H= 1916 մ): Գ2-Ե2 հատվածում սահմանակից է 1-ին և 2-րդ տնտեսական գոտիներին: Մինչև Շորժա գյուղ սահմանը անցնում է Ծովագյուղ-Շորժա ավտոճանապարհով (այս հատվածում սահմանակից է 13-րդ տնտեսական գոտուն): Այստեղից ռեկրացիոն գոտու սահմանը մինչև վերջ անցնում է Շորժա գյուղի համայնքային սահմանով: Շորժա գյուղի ճանապարհի խաչմերուկից սահմանը անցնում է 650 մետր թեքվում դեպի հարավ մտնում է Արտանիշ թերակղզի, անցնում գրունտային ճանապարհով 3.7 կմ: Որից հետո անցնում է 2.1 կմ գրունտային ճանապարհով արևելյան ուղղությամբ և հասնում է Արտանիշի արգելոցի Դ1 սահմանակետին: Այստեղից արգելոցի սահմանով իջնում է լճափ հասնում Արտանիշի արգելոցի Գ 1 սահմանակետին:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու հիմնական տարածքի ռելիեֆը (բացի Սևանա թերակղզուց) հարթ է և ընկած է լճի ափից մինչև 1910 մետր բարձրությունը: Սևանա թերակղզու արևելյան մասը մի ժայռապատ բարձունք է, որի ամենաբարձր կետը հասնում է 1982.3 մետր բարձրության: Ռեկրեացիոն գոտու

հյուսիս-արևմտյան ափերը քիչ են կտրտված, մեղմաթեք են, որը հարմար է լողափերի համար, իսկ արևելյան ափերը (Արեգունու լեռնաշղթայի) կտրուկ խորանում են և լողափերի համար այնքան էլ հարմար չեն: Այստեղով անցնում է նաև տեկտոնական խզվածքային գոտին:

Տարածքը հիմնականում պատված է անտառային տնկարկներով, որոնցում գերակշռում են սոճու, բարդու, թեղու և չիչխանի ծառուտները:

Ռեկրեացիոն գոտին ընդգրկում է Ձկնագետ, Դրախտիկ, Գեղամաբակ և Աղբերք գետերի գետաբերանային հատվածները:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում ասֆալտապատ ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 9.4 կմ, իսկ գրունտայինը՝ 57 կմ: Տարածքով անցնում է 7.7 կմ երկարությամբ բարձրավոլտ հոսանքի գծեր: Արեգունու ափամերձ հատվածում՝ Դրախտիկ-Շորժա, անցնում է գազատարի 12.8 կմ հատվածը:

Սևանա թերակղզու բարձրունքում է գտնվում X-XI դարի Սևանի վանքը, ինչպես նաև ՀՀ Նախագահի, Գրողների միության, Կապույտաչյա Սևան, Արևիկ և այլ հանգստյան տները: Գոտու տարածքում շատ են սպասարկման ոլորտի օբյեկտներ՝ հյուրանոցներ-7, ռեստորաններ և սրճարաններ՝ 200-ից ավելի, առևտրի խանութներ և կրպակներ՝ 250-ից ավելի և այլն: Գոտու Արտանիշ թերակղզու տարածքում է գտնվում Նկարիչների միության հանգստյան տունը:

Երկրորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 144 հա: Սահմանի երկարությունը 18.4 կմ է:

Սահմանի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Սևան-Գավառ ավտոճանապարհի Լճաշեն գյուղ մտնող ճանապարհի խաչմերուկից դեպի Գավառ ավտոճանապարհի 1.9 կմ-ից՝ Լճաշենի Ա2 կետից (X=496359, Y=4486589, H= 1898 մ): Անցնում է 150 մետր հարավային ուղղությամբ դուրս գալիս Սևան-Գավառ ավտոճանապարհ: Այստեղից սկզբում ավտոճանապարհով անցում է 4.5 կմ, հետո ազգային պարկի սահմանով 1.2 կմ մինչև Բ2 կետը (X=501470, Y=4486591, H= 1913 մ): Բ2 կետից սահմանը անցնում է հարավ-արևելյան ուղղությանբ 750 մետր հասնում Գ2 կետին (X=502139, Y=4486282): Գ2 կետից անցնում է ազգային պարկի սահմանով հարավ-արևելյան ուղղությանբ հասնում Դ2 կետին (X=502671, Y=4485889, H= 1912 մ): Այստեղից սահմանը թեքվում է դեպի լճի ափ ձգվում 120 մետր հասնում Նորաշենի արգելոցի Ա1 սահմանակետը: Ռեկրեացիոն գոտին սահմանակից է 4-րդ և 5-րդ տնտեսական գոտիներին:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հիմնականում ալիքավոր է և ընկած է լճի ափից մինչև 1916 մ բարձրությունը: Ռեկրեացիոն գոտու ափերը կտրտված են: Տարածքի զգալի մասը քարաժայռերով են պատված: Անտառային տնկարկներ քիչ կան, հիմնականում հանդես է գալիս չիչխանը:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 5.9 կմ:

Երրորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 147 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 24.3 կմ է:

Սահմանի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Սևան-Գավառ ավտոճանապարհի Ծովազարդ գյուղ մտնող ճանապարհի խաչմերուկից դեպի Գավառ ավտոճանապարհի Ա2 կետից (X=504127, Y=4483868, H= 1906 մ): Այստեղից անցնում է 3.3 կմ ազգային պարկի սահմանով մինչև Բ2 կետը (X=505342, Y=4482203, H= 1915 մ): Բ2 կետից սահմանը անցնում է, լճափին զուգահեռ 200-250 մետր հեռավորությունից, 2.4 կմ հասնում Գ2 կետին (X=506872, Y=4480921, H= 1913 մ): Բ2-Գ2 հատվածում սահմանակցում է 7-րդ տնտեսական գոտուն: Գ2 կետից անցնում է ազգային պարկի սահմանով մինչև Դ2 կետը (X=507303, Y=4480992, H= 1915 մ): Դ2 կետից Ե2 կետ (X=509367, Y=4479167, H= 1916 մ) 3.4 կմ հիմնականում անցնում է Սևան-Գավառ ավտոճանապարհով (սահմանը մոտենալով Ե2 կետին ճանապարհից հեռանում է դեպի լճափ 100 մետր): Դ2 -Ե2 հատվածում սահմանակցում է 8-րդ և 9-րդ տնտեսական գոտիներին: Ե2 կետից անցնում է ազգային պարկի սահմանով մինչև Զ2 կետը (X=509355, Y=4478362, H= 1904 մ):

Զ2 կետից 450 մետր անցնում է հարավ-արևմտյան ուղղությամբ լճափին զուգահեռ և հասնում Է2 կետը (X=509173, Y=4477996, H= 1916 մ): Զ2-Է2 հատվածում սահմանակցում է 10-րդ տնտեսական գոտուն: Է կետից անցնում է ազգային պարկի սահմանով մինչև Ը2 կետը (X=509263, Y=4477608, H= 1906 մ): Ը2 կետից սահմանը անցնում է սկզբում 110 մետր հարավային ուղղությամբ հետո թեքվում դեպի արևելք անցնում 240 մետր և հասնում է լճափ Թ2 կետին (X=509291, Y=4477574, H= 1898 մ): Ը2-Թ2 հատվածում սահմանակցում է 11-րդ տնտեսական գոտուն:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հիմնականում ալիքավոր է և ընկած է 1916 մետր բարձրությունից ցածր: Առկա են ռելիեֆի մեծ թեքություններ և քարաժայռեր: Ռեկրեացիոն գոտու ափերը շատ չեն կտրտված: Անտառային տնկարկները քիչ են, հիմնականում հանդես են գալիս չիչխանի, ուռենու և թեղու ծառուտներ:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհները քիչ են[a] ընդհանուր երկարությունը կազմում է 1.2 կմ:

Չորրորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 624 հա, սահմանի ընդհանուր երկարությունը[a] 52.0 կմ:

Սահմանի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Գավառագետի արգելավայրի Գ1 սահմանակետից և հասնում արգելավայրի Բ1 սահմանակետը: Այստեղից շարունակում է հարավային ուղղությամբ, լճափին զուգանեռ 100-400 մետր հեռավորությամբ, իջնում մինչև գոտու Ա2 կետը (X=518422, Y=4465664, H= 1907 մ): Ա2 կետից սահմանը անցնում է Գավառ -Մարտունի ավտոճանապարհով 3.4 կմ հասնում Բ2 կետին (X=518641, Y=4462469, H= 1906 մ): Բ2 կետից շարունակելով հարավային ուղղությամբ, լճափին զուգանեռ 100-400 մետր հեռավորությամբ, իջնում է մինչև ՙԼիճք-Արգիճի՚ արգելոցի Ա1 սահմանակետը, որից հետո շարունակում է սահմանով հասնում արգելոցի Դ1 սահմանակետին: Ռեկրեացիոն գոտին արևմուտքից սահմանակցում է 11-րդ տնտեսական գոտուն:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հիմնականում հարթ է: Միայն Կարմիր ամառանոցների մոտ բարձր է և ժայռապատ, որտեղ առկա են ռելիեֆի մեծ թեքություն և քարաժայռեր: Ռեկրեացիոն գոտու ափերը քիչ են կտրտված:

Տարածքը պատված է անտառային տնկարկներով, հիմնականում հանդես են գալիս չիչխանի, ուռենու և բարդու ծառատեսակները: Ռեկրեացիոն գոտու մեջ է Երանոս, Ձորագյուղ և այլ փոքր գետերի գետաբերանային հատվածները:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 4.2 կմ:

Հինգերորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 680 հա, սահմանի ընդհանուր երկարությունը[a] 44.3 կմ:

Սահմանի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու սահմանը սկսում է Արգիճի գետի գետաբերանային հատվածից՝ ՙԼիճք-Արգիճի՚ արգելոցի Գ1 սահմանակետից, այստեղից շարունակում է մինչև արգելոցի Բ1 սահմանակետը: Բ1 կետից սահմանը անցնում է լճափին զուգահեռ մոտ 400-300 մետր հեռավորությունից 21 կմ և հասնում մինչև Արփա-Սևան ջրանցքի պահպանական գոտին՝ ռեկրեացիոն գոտու Ա2 կետը (X=542112, Y=4447622, H= 1902 մ): Ա2 կետից շարունակում է հյուսիսային ուղղությամբ 210 մետր մինչև լճափ՝ գոտու Բ2 կետը (X=542123, Y=4447821, H= 1898 մ): Ռեկրեացիոն գոտին սահմանակցում է 11-րդ տնտեսական գոտուն:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հիմնականում հարթ է: Ռեկրեացիոն գոտու ափերը քիչ են կտրտված: Տարածքը պատված է անտառային տնկարկներով[a] հիմնականում գիհու և բարդու ծառուտներով: Ռեկրեացիոն գոտու մեջ են Մարտունի, Աստղաձոր և Վարդենիկ գետերի գետաբերանային հատվածները:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 31.0 կմ:

Վեցերորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 163 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 12.2 կմ է:

Սահմանի նկարագրությունը.

Այս ռեկրեացիոն գոտին ընկած է Արփա-Սևան ջրանցքի և Կարճաղբյուր գյուղի միջև՝ լճահայաց մասում: Սահմանը սկսում է Արփա-Սևան ջրանցքի աջակողմյան մասի լճափի Ա2 կետից (X=542302, Y=4447742, H= 1898 մ): Այստեղից ջրանցքին զուգահեռ հոսանքն ի վեր բարձրանում է 270 մետր, դուրս է գալիս Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհ և հասնում Բ2 կետին (X=542344, Y=4447480, H= 1904 մ): Բ2 կետից անցնում է Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհով 5.7 կմ մինչև Գ2 կետը (X=547592, Y=4449297, H= 1904 մ): Գ2 կետից շարունակում է հյուսիսային ուղղությամբ 100 մետր մինչև լճափ՝ գոտու Դ2 կետը (X=547562, Y=4449403, H= 1898 մ): Ռեկրեացիոն գոտին սահմանակցում է 11-րդ և 12-րդ տնտեսական գոտիներին:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հարթ է: Ափերը ուղիղ են և մեղմաթեք: Տարածքը պատված է անտառային տնկարկներով՝ հիմնականում սոճու և բարդու ծառուտներով:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 2.7 կմ:

Յոթերորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 52.7 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 3.8 կմ է:

Սահմանի նկարագրությունը.

Այս ռեկրեացիոն գոտին ընկած է Ծովակ գյուղի լճահայաց մասում: Սահմանը սկսում է լճափի Ա2 կետից (X=551301, Y=4450227, H= 1898 մ): Ա2 կետից սահմանը անցնում է հարավային ուղղությամբ 260 մետր և դուրս գալիս Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհ՝ Բ2 կետը (X=551433, Y=4450003, H= 1901 մ): Այստեղից սահմանը անցնում է Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհով 1.3 կմ և հասնում Գ2 կետը (X=552799, Y=4450794, H= 1902 մ):

Գ2 կետից՝ Ծովակ գյուղի մոտ, թեքվում դեպի հյուսիս, անցնում 330 մետր և դուրս է գալիս լճափ՝ Դ2 կետ (X=552673, Y=4451097, H= 1898 մ): Ռեկրեացիոն գոտին սահմանակցում է 12-րդ տնտեսական գոտուն:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը հարթ է: Ափերը ուղիղ են և մեղմաթեք: Տարածքը պատված է անտառային տնկարկներով՝ հիմնականում սոճու և բարդու ծառուտներով:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 1.7 կմ:

Ութերորդ ռեկրեացիոն գոտի

Տարածքը կազմում է 1442 հա: Սահմանի ընդհանուր երկարությունը 72.8 կմ է:

Սահմանի նկարագրությունը.

Այս ռեկրեացիոն գոտին ընկած է Գեղամասար գետի և Արտանիշ գյուղի միջև: Սահմանը սկսում է Գիլլի արգելոցի Բ1-Գ1 սահմանային հատվածից ձգվում 35 կմ Ծովակ-Արտանիշ ավտոճանապարհով և հասնում է Արտանիշի արգելոցի Ա1-Բ1 սահմանային հատվածը:

Տեղանքի նկարագրությունը.

Ռեկրեացիոն գոտու տարածքի ռելիեֆը գրեթե հարթ է: Տարածքը հիմնականում ընկած է մինչև 1915 մետր բարձրությունը: Ռեկրեացիոն գոտու ափերը ուղիղ են և մեղմաթեք: Տարածքը պատված է անտառային տնկարկներով՝ հիմնականում սոճու, չիչխանի և թեղու ծառուտներով:

Ենթակառուցվածքները. Ռեկրեացիոն գոտու տարածքում գրունտային ճանապարհների ընդհանուր երկարությունը կազմում է 12.4 կմ**:**

1.3.4. Բնության հուշարձաններ

Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ

Երկրաբանական հուշարձաններ

NN ը/կ	Անվանումը (նկարագիրը)	Տեղադիրքը
1.	«Սևկատար» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ

22.	**«Աժդահակ» հրաբուխ**	**Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ**
23.	**«Անանուն» ծալքավորում**	**Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա**
24.	**«Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)**	**Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք**
25.	**«Անանուն» հրաբխային արտահայտված շերտավորություն**	**Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ**
26.	**«Արմաղան» հրաբուխ**	**Գեղարքունիքի մարզ, Մադինա գյուղից 3.5 կմ արմ**
27.	**«Հայրավանք» բրածո ֆաունա**	**Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ**

Ջրաերկրաբանական հուշարձաններ

5.	**«Սարանց» աղբյուր**	**Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 մ բարձրության վրա**
6.	**«Խաչերի» աղբյուր**	**Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում**
7.	**«Արցունք քար» աղբյուր**	**Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 մ բարձրության վրա**
8.	**«Անանուն» աղբյուր**	**Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 մ բարձրության վրա**
9.	**«Անանուն» աղբյուր**	**Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա**
10.	**«Վանքի աղբյուր» աղբյուրների խումբ**	**Գեղարքունիքի մարզ, Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 մ բարձրության վրա**

Ջրագրական հուշարձաններ

3.	**«Ակնա» լիճ**	**Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին**

Կենսաբանական հուշարձաններ

4.	**«Ենթալպյան մարգագետին»**	**Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ**

1.3.4. Օգտակար հանածոներ

Օգտակար հանածոներից մեծ արժեք են ներկայացնում ոսկու (Սոթք), քրոմիտի (Շորժա), բնական շինանյութերի, հանքային ջրերի (Լիճք) և այլ պաշարները: Գեղարքունիքի մարզում է գտնվում Սոթքի ոսկու խոշոր հանքավայրերը:

Տեղեկատվություն

01.11.2019 թ. դրությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզում օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված ընդերքօգտագործման իրավունքների մասին

հ/հ	Իրավաբանական անձի անվանումը	Գործունեության իրականացման վայրի հասցեն	Թույլտվության համարը, տրման ա.ա.տ.	Գործողության ժամկետի ավարտը	Պայմանագրի համարը, տրման ա.ա.տ.	Լեռնահատկացման ակտի համարը, տրման ա.ա.տ.
1	2	3	4	5	6	7
1	<ՎԱՐԴԵՆԻՍ Ի ՔԱՐՀԱՆՔ> ԲԲԸ	Սուբաթանի տուֆ	ՇԱԹՎ-29/016 27.07.12թ	08.03.2020թ.	ՊՎ-016 27.07.12թ	ԼՎ-016 27.07.12թ
2	<ԵՐՅՈՒՆԱ> ՍՊԸ	Գավառի գիպսաքարեր	ՇԱԹՎ-29/081 20.10.12թ	23.12.2036թ	ՊՎ-081 20.10.12թ	ԼՎ-081 20.10.12թ
3	«ԳՈԳ-ԱՐՍ» ՍՊԸ	Լճաշենի հրաբխային խարամ /Հյուսիսային տեղ./	ՇԱԹՎ-29/100 20.10.12թ	06.06.2033թ.	ՊՎ-100 20.10.12թ	ԼՎ-100 20.10.12թ
4	<ԲԱՐՈՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ> ՍՊԸ	Սևոյիձորի բազալտ	ՇԱԹՎ-29/143 20.10.12թ	16.08.2036թ.	ՊՎ-143 20.10.12թ	ԼՎ-143 20.10.12թ
5	<ԳԵԳԱՄԵՏՊ ԼՅՈՒՍ> ՓԲԸ	Շորժայի դունիտների և մագնեզիալ-սիլիկատային ապարներ	ՇԱԹՎ-29/159 20.10.12թ	16.11.2034թ.	ՊՎ-159 20.10.12թ	ԼՎ-159 20.10.12թ
6	<ԳԵՈՊՐՈ ՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ> ՍՊԸ	Սոթքի ոսկի	ՇԱԹՎ-29/189 20.10.12թ	10.09.2028թ.	ՊՎ-189 20.10.12թ	ԼՎ-189 20.10.12թ
7	<ԿԱՊԱՎՈՐ> ՍՊԸ	Ծովակի ավազ և մանրագլաքարակոպիճ	ՇԱԹՎ-29/207 31.10.12թ	16.07.2032թ.	ՊՎ-207 31.10.12թ	ԼՎ-207 31.10.12թ
8	<ԿԱՊԱՎՈՐ> ՍՊԸ	Գեղամասարի ԱԿԽ /1 և 2 տեղ/	ՇԱԹՎ-29/208 31.10.12թ	19.08.2020թ.	ՊՎ-208 31.10.12թ	ԼՎ-208 31.10.12թ
9	<ՊԵՐԼԱՐՈ	Սիրունձորի	ՇԱԹՎ-	16.07.20	ՊՎ-226	ԼՎ-226

	ԼՈԿԱԼ ԻՆՎԵՍԹՄԵՆԹՍ> ՍՊԸ	գաբբրոներ	29/226 18.01.13թ	32թ.	18.01.13թ	18.01.13թ
10	<ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ > ՍՊԸ	Գեղհովիտի բազալտ /Քարալանջի տեղ./	ՇԱԹ -29/236 28.12.12թ	28.12.2062թ	Պ-236 28.12.12թ	Լ-236 28.12.12թ
11	<ԱԳՐՈՍՊԱՍԱՐ ԿՈՒՄ > ԱՄ-Ի ՎԱՐԴԵՆԻՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ > ԲԲԸ	Ծովակի պեմզային ավազներ /հյուսիսային տեղ/	ՇԱԹՎ-29/255 23.11.12թ	30.11.2035թ.	ՊՎ-255 23.11.12թ	ԼՎ-255 23.11.12թ
12	<ՏՈՒՖ ԳՐԱՆԻՏ> ՍՊԸ	Լճաշենի բազալտ	ՇԱԹՎ-29/283 06.11.12թ	19.10.2026թ.	ՊՎ-283 06.11.12թ	ԼՎ-2830 6.11.12թ
13	<ԳԱՎԱՌԻ ՃՇՇ> ԲԲԸ	Կարմիր գյուղի բազալտ	ՇԱԹՎ-29/328 22.11.12թ	25.03.2036թ.	ՊՎ-328 22.11.12թ	ԼՎ-3282 2.11.12թ
14	<ՄԵՐԻ և ՀԱՅԿ> ԱԿ	Նորատուսի ԱԿԽ	ՇԱԹՎ-29/333 05.12.12թ	04.05.2024թ.	ՊՎ-333 05.12.12թ	ԼՎ-333 05.12.12թ
15	<ՆՈՐ-ՀԵՆԴ> ՍՊԸ	Ճամբարակի անդեզիտա տրախիտ	ՇԱԹՎ-29/375 08.12.12թ	17.07.2033թ.	ՊՎ-375 08.12.12թ	ԼՎ-375 08.12.12թ
16	<ՎԱՐԴԵՆԻՍԻ ՏՈՐՖ> ԲԲԸ	Մասրիկի տորֆ /Գիլի-1 տեղ. /	ՇԱԹՎ – 29/404 11.02.13թ	29.08.2021թ.	ՊՎ-404 11.02.13թ	ԼՎ-404 11.02.13թ
17	«ՀՐԱԶԴԱՆ ՑԵՄԵՆՏ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ» ՍՊԸ	Արտանիշի մերգելային կրաքար	ՇԱԹ-29/483 16.10.13թ	16.10.2028թ	Պ-483 16.10.13թ	Լ-483 16.10.13թ
18	«ՄԵՐՈՒԺԱՆ-ԳՐԻԳՈՐ» ՍՊԸ	Լճաշենի հրաբխային խարամի հանքավայրի «Հյուսիսային» տեղ.	ՇԱԹ-29/505 23.05.2014թ	23.05.2052թ	Պ-505 07.07.14թ.	Լ- 505 23.05.14թ.
19	«ԼԱ-ՄԱՐ» ՍՊԸ	Ճամբարակի դացիտային տուֆերի հանքավայր	ՇԱԹ-29/517 06.12.2014թ.	06.12.2064թ.	Պ-517 13.12.14թ.	Լ-517 06.12.14թ.
20	«ԳԵԳԱՄԵՏ	Շորժայի	ՇԱԹ-29/525	13.04.20	Պ-525	Լ-525

	ՊԼՅՈՒՍ» ՓԲԸ	տրակտոլիտ-պերիդոտիտային ապարների հանքավայր	13.04.2015թ.	52թ.	13.04.15թ.	13.04.15թ.
21	«Մ.Մ.Պ» ՍՊԸ	Լանջաղբյուրի հրաբխային ավազի հանքավայր	ՇԱԹ -29/537 15.08.2017թ.	15.08.2047թ.	Պ-537 29.09.2017թ.	L-537 15.08.2017թ.
22	«ՔԱԼՈՅԱՆ» ՍՊԸ	Ձորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազի հանքավայրի 2-րդ տեղամաս	ՇԱԹ-29/598 25.02.2019թ	28,28 տարի ժամկետով	Պ-598 25.02.2019թ	L-598 25.02.2019թ
23	«ՇՈՂԱԳԱ» ՍՊԸ	Ձորագյուղի (Ծակքարի) պեռլիտային ավազի հանքավայրի 2-րդ տեղամաս	ՇԱԹ-29/600 03.05.2019թ.	03.05.2045թ.	Պ-600 03.05.2019թ.	L-600 03.05.2019թ.
24	<ՆԱԻՐԻ> ՍՊԸ	Լիճքի ածխաթթվային հանքային ջրի հանքավայր, թիվ 5Ր և 6Ր հորատանցքեր: Ածխաթթու գազի կորզում:	ՇԱԹՎ-29/359 18.12.12թ	15.04.2069թ.	ՊՎ-359 18.12.12թ	
25	<ՎԻԳԵՆ> ՍՊԸ	Լիճքի ածխաթթվային հանքային ջրի հանքավայր, թիվ 8Ր հորատանցք: Ածխաթթու գազի կորզում:	ՇԱԹՎ-29/365 18.12.12թ	25.12.2020թ.	ՊՎ-365 18.12.12թ	
26	«ՎՀՀ» ՍՊԸ	Դարանակի քաղցրահամ ջրի հանքավայրի թիվ 1, 2, 3 աղբյուրներ: Քաղցրահամ ջուր:	ՇԱԹ-29/500 23.08.14թ.	23.08.2064թ.	Պ-500 01.09.14թ	
27	< ՏԵԽՆՈՄԱՆ> ՍՊԸ	Լիճքի ածխաթթվային հանքային ջրի հանքավայր թիվ 8Ր	ՇԱԹ-29/506 26.06.14թ	26.06.2064թ.	Պ-506 01.07.14թ	

		հորատանցք: Ածխաթթու գազի կորզում				
28	«ՍԵՎԱՆ» ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ» ՍՊԸ	Սևան ածխաթթվայի ն հանքային ջրի հանքավայրի թիվ 3Р հորատանցք: Արդյու նաբերա կան նպատակով /շշալցում	ՇԱԹ-29/507 25.09.14թ.	25.09.2064թ.	Պ-507 03.10.14թ	/

1.3.5. Բուսական աշխարհ

Դիտարկվող տարածաշրջանի ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1619 տեսակ: Ֆլորան ներկայացված է 28 ծառատեսակներով, 42 թփերի տեսակներով, 866 բազմամյա խոտաբույսերով և 209 միամյա ու երկամյա բուսատեսակներով:

Հանդիպում է Հայաստանի համար 23 էնդեմիկ բուսատեսակ, որոնցից 13-ը Սևանի ֆլորիստիկ շրջանի էնդեմիկներ են: Միայն ազգային պարկի տարածքում աճում են Հայաստանի 3 էնդեմիկ և Սևանա լճի ավազանի 5 էնդեմիկ տեսակներ: 17 տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (պահպանական գոտում դրանք 48-ն են): Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի:

Հայտնի են նաև 267 տեսակի, ենթատեսակի և ձևերի մակրոմիցետներ (պարկի տարածքում՝ 121 տեսակ, պահպանական գոտում՝ 228 տեսակ), որոնցից 180-ը պատկանում են ագարիկալ սնկերին, 55-ը՝ աֆիլոֆորայիններին, իսկ 32-ը՝ գաստերոմիցետներին: Ընդ որում սնկերը հիմնականում հանդիպում են քայքայված բնափայտի, կոճղերի, գոմաղբի և ավազուտների վրա, այսինքն՝ պատկանում են քսիլոտրոֆ և պսամոտրոֆ էկոլոգիական խմբերին, իսկ պահպանական գոտու սնկերը ավելի բազմազան սուբստրատների վրա են զարգանում: Նշված մակրոսկոպիկ սնկերից շուրջ 100 տեսակը ուտելի են, որոնցից առավելապես տարածված են և վաճառվում են շուկաներում հետևյալները՝ ականջասունկ սովորական կամ կախասունկ (Pleurotus ostreatus), յուղասունկ հատիկավոր (Suillus granulatus), շեկլիկ (Lactarius deliciosus), աղվեսասունկ (Cantharellus cibarius), կոճղասունկ մարգագետնային (Marasmius oreades), շամպինիոն սովորական (Agaricus

campestris), շամպինիոն դաշտային (Agaricus arvensis), գոմաղբասունկ սպիտակ, փրչոտ (Coprinus comatus), շարքասնկերից (Tricholomataceae)՝ կոճղասունկ աշնանային (Armillaria mellea), լեպիստա մանուշակագույն ոտիկով (Lepista personata), շարքասունկ հողամոխրագույն (Tricholoma terreum): Բացի այդ, հանդիպում են նաև 58 տեսակի մակրոսկոպիկ 14 սնկեր, որոնք ունեն բուժիչ հատկություններ: Դրանք են՝ ագարիկոմիցետներից 28 տեսակներ, աֆիլոֆորոմիցետներից 17 տեսակներ և գաստերոմիցետներից 8 տեսակներ: Բնակչությունը չի օգտագործում այդ սնկերը, քանի որ տեղեկացված չեն դրանց օգտագործման ձևերին և բուժիչ հատկություններին: 24 տեսակի սնկեր թունավոր են: Դրանցից են՝ խոզուկասունկ (Paxillus involutus), կեղծ կոճղասունկ (Hypholoma fasciculare), ճանճասպան հովազային (Amanita pantherina), շամպինիոն դեղնամաշկ (Agaricus xanthodermus), գոմաղբասունկ թեփուկավոր (Coprinus picaceus), սարդոստայնասնկեր (Cortinarius), թելիկասնկեր (Inocybe), շարքասնկեր (Tricholoma) ցեղերի որոշ տեսակներ և այլն: Տեղացի բնակիչները այդ տեսակները կոչում են գարշասնկեր (պոգանկա), խուսափում են հավաքել և թունավորման դեպքերը հազվադեպ են: Սևանա լիճը շրջապատող լեռների և դրանց լանջերի տարբեր դիրքադրությունների, հողերի տիպերի, ռելիեֆային առանձնահատկությունների և այլ հանգամանքների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ, լավ է արտահայտված նաև ուղղահայաց գոտիականությունը:

Գեղամա և Վարդենիսի լեռների լանջերին ներկայացված են լեռնային տափաստանային համակեցությունները (ծովի մակարդակից 1900-2200 մ), որոնցում գերիշխում են շյուղախոտ վալեսյան (Festuca valesiaca), բարակոտնուկ սանրաձև (Koeleria cristata), փետրախոտ տխուր (Stipa tirsa) և այլ հացազգիները: Դրանցում զգալի են տրագականտային աստրագալների և ուրցի բազմաթիվ տեսակների մասնակցությունը: Բարձրության հետ տափաստանները փոխարինվում են լեռնային մարգագետնատափաստաններով, որտեղ համակեցություններում գերիշխում են շյուղախոտ վալեսյան (Festuca valesiaca), շյուղախոտ ոչխարային (Festuca ovina), բոշխ ցածր (Carex humilis), դաշտավլուկ մարգագետնային (Poa pratensis) և այլ տեսակները:

Ծովի մակարդակից 2300 մ-ից բարձր բուսականության բնույթն աստիճանաբար փոխվում է դեպի մերձալպյան մարգագետինները, որոնց առավել տիպիկ ներկայացուցիչներից են բարակոտնուկ սանրաձև (Koeleria cristata), դաշտավլուկ ալպյան (Poa alpina), գարի մանուշակագույն (Hordeum violaceum), բրոմոպսիս խայտաբղետ (Bromopsis variegata), քոսքոսիկ կովկասյան (Scabiosa caucasica), ոզնախոտ կծկավոր (Dactylis glomerata), զանգակ խմբված (Campanula glomerata), թթվիճ խոշորածաղիկ (Betonica macrantha), երեքնուկի (Trifolium) տարբեր տեսակներ և այլն: 2700-3200 մ

բարձրությունները զբաղեցնում են ալպյան ցածրախոտ մարգագետինները և ալպյան գորգերը, ուր հաճախ հանդիպում են զանգակ եռատամ (Campanula tridentata), խատուտիկ Ստևենի (Taraxacum stevenii), բերենիկե բոգային (Veronica gentianoides), շյուղախոտ ոչխարային (Festuca ovina), բոշխ տխուր (Carex tristis) և մի շարք այլ տեսակներ:

Լեռնային լանջերի որոշ ձորերում հանդիպում են թփուտներ՝ կազմված հիմնականում մասրենու (Rosa spinosissima, R.canina) և ասպիրակի (Spiraea crenata) տեսակներից: Թփուտները լավ են արտահայտված լճի հյուսիս-արևելյան ափին, Սևանի և Արեգունու լեռնաշղթաների լանջերին և Արտանիշ թերակղզում: Այդպիսիք են՝ արոսենու (արոսենի Կուզնեցովի (Sorbus kuznetsovii), արոսենի, ծտախնձոր (S.aucuparia), արոսենի Հայաստանի (S.hajastana), արոսենի հունական, ասպաբ (S.graeca)), մասրենու (Rosa spinosissima, R.canina), ասպիրակի (Spiraea crenata), 15 ալոճենու (Crataegus orientalis), ուռենու (Salix caprea) և մի շարք այլ թփատեսակների համակեցությունները: Արեգունու լեռնաշղթայի լանջերին, ինչպես նաև լճի հյուսիսային մասում (Սևանի լեռնաշղթա) ստորին գոտին կազմում են տրագականտային աստրագալների թփուտները՝ գազ ոսկեգույն (Astragalus aureus), գազ մանրագլուխ (A.microcephalus), գազ գյունեյի (A.gjunaicus) և այլն:

Ավելի բարձր, 2000-2100 մ-ից վերև, մարգագետնատափաստանային բուսականության հետ մեկտեղ տարածված են արևելյան կաղնու (Quercus macranthera) մնացորդային կաղնուտները և չորասեր թփերի ու տափաստանային խոտաբույսերի մասնակցությամբ գիհու նոսրանտառները: Վերջիններս բավականին ընդարձակ տարածքներ են զբաղեցնում Ջիլ, Դարանակ, Բաբաջան և Արտանիշ գյուղերի մոտ: Գերակայող տեսակներն են գիհի բազմապտուղը (Juniperus polycarpos) և գիհի երկարավունը (J.oblonga), որոնք կազմում են ինչպես մոնոդոմինանտ այնպես էլ խառը ասոցիացիաներ: Առանձին տարածքներում գիհիներին միանում են այլ թփատեսակներ՝ ասպիրակի (Spirea crenata, S.hypericifolia), արոսենի Հայաստանի (Sorbus hajastana), արոսենի հունական, ասպաբ (S.graeca) և այլն: Գիհի սաբինան (J. Sabina) և գիհի փռվողը (J. depressa) որոշ տարածություններ են գրավում նաև մերձալպյան գոտում, երբեմն նույնիսկ տափաստանային գոտում: Սևանա լճի ավազանում բավականին տարածված են նաև բուսականության այնպիսի էքստրազոնալ տիպեր, ինչպիսիք են փլուզուտային, քարացրոնային և ժայռային բուսականությունը: Դրանք առանձին հատվածներով հանդիպում են բոլոր բարձունքային գոտիներում:

Ինչ վերաբերում է ջրային բուսականությանը, ապա անմիջապես Սևանա լճում, ըստ ջրի խորության և պարզության, այն կազմում է երկու արտահայտված գոտի՝ մակրոֆիտների (հիմնականում ծաղկավոր բույսեր) և խարային ջրիմուռների ու ջրային մամուռների: Ծովինար, Նորատուս, Չոլաքար, Մարտունի, Լիճք գյուղերի մերձափնյա տարածքներում կան ոչ մեծ

ճահիճներ, ուր աճում են բոշխ կարճամազ (Carex hirta), դուն երկար (Cyperus longus), դուն թուխ (C.fuscus), ճլախոտ թաբերնեմոնթանի (Schoenoplectus tabernaemontani) և շատ այլ տեսակներ: «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու ֆլորայի Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են 48 տեսակներ, որոնցից հազվագյուտ են և արժանի են ուշադրության միայն 13-ը ընդ որում՝ 6-ը համարվում են անհետացած տեսակներ: «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպող 23 էնդեմիկ տեսակներից առավել ուշադրության են արժանի 18-ը: «Սևան» ազգային պարկի տարածքում հայտնաբերված մակրոմիցետներից 10-ը հազվագյուտ են և ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքի թեկնածու սնկերի ցանկում:

1.3.6. Կենդանական աշխարհը

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվարկվում են Փափկամարմինների (Mollusca) 43 տեսակներ, որոնք պատկանում են խխունջներին և լորձնամոլյուսկներին, և Հոդվածոտանիների 639 տեսակներ, որոնք պատկանում են միջատներին (անողնաշարավոր կենդանիների): Դրանցից 6-ը Հայաստանի էնդեմներ են: Կապտաթիթեռը (Maculinea nausithous Bergs), որը հայտնի է պարկի պահպանական գոտուց, գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում: Երկարաչանչ խեցգետինը (Pontastacus leptodactilus) Սևանա լճում հայտնաբերվել է 70-ական թվականների վերջին՝ պատահական ներմուծման շնորհիվ: Լիճ լցվող գետերում խեցգետին չի հանդիպել, սակայն խեցգետինը բավականին շատ է Սևանից սկիզբ առնող Հրազդան գետում: Երկարաչանչ խեցգետինը, ի տարբերություն այլ տեսակների, չի ձմեռում:

Սևանա լճի ձկները ներկայացված են սաղմոնազգի-Salmonidae, սիգազգի Coregonidae և ծածանազգի-Cyprinidae ընտանիքներով: Սաղմոնազգիներին են պատկանում Սևանի իշխանը (Sevan Trout-Salmo ischchan Kessler 1877) իր 4 էկոլոգիական ենթատեսակներով՝ Ամառային բախտակ (S. ischchan aestivalis), Ձմեռային բախտակ (S. ischchan ischchan), Գեղարքունի (S. ischchan gegarkuni), Բոջակ (S. ischchan danilewskii): Սիգազգիների ընտանիքի ներկայացուցիչը 1920-30-ական թվականներին լճում կլիմայավարժեցված սիգն է (Whitefish-Coregonus lavaretus): Ծածանազգի ձկնատեսակներին են պատկանում լճի երկու էնդեմիկները՝ Սևանի կողակը (Khrami carp-Varicorhinus capoeta sevangi) և Սևանի բեղլուն (Sevan 17 barble-Barbus goktschaicus): 1980-ական թվականների սկզբից լճում սկսել է հանդիպել նաև արծաթափայլ լճածածանը (Crucian carp-Carassius auratus gibelio), որը պատահաբար լիճ է ներթափանցել Արարատյան դաշտի ջրային համակարգերից: 1987 թվականից Սևանա լճի երկու էնդեմիկ տեսակ՝ Սևանի իշխանը և Սևանի բեղլուն, ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Հանդիպում են երկկենցաղների հետևյալ 4 տեսակները, որոնք պատկանում

են Ցատկողներ (Salientia) կարգին՝ լճագորտ (Rana ridibunda), փոքրասիական գորտ (Rana macrocnemis), կանաչ դոդոշ (Bufo viridis), Շելկովնիկովի ծառագորտ (H.a.shelkovnikovi):

Հանդիպում են սողունների 16 տեսակներ, որոնցից 11 տեսակներ պատկանում են մողեսներ (Lacertilia) կարգին, իսկ 5 տեսակ՝ օձեր (Serpentes) կարգին: Դրանցից Հայաստանի Կարմիր գրքում գրանցված են խայտաբղետ մողեսիկը (E.a.transcaucasica) և փոքրասիական մողեսը (Lacerta parva):

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպում են թռչունների 267 տեսակներ, որոնք պատկանում են հետևյալ կարգաբանական խմբերին՝ սուզակներ (Podicipediformes) - 7 տեսակ, ձկնկուլ (Pelecaniformes) - 4 տեսակ, արագիլ, տառեղ, ջրցուլ (Ciconiiformes) -11 տեսակ, ֆլամինգո (Phoenicopteriformes) - 1 տեսակ, գիշատիչներ (Falconiformes) - 30 տեսակ, սագեր, բադեր, կարապներ (Anseriformes) - 28 տեսակ, հավազգիներ (Galliformes) - 3 տեսակ, կռունկ, փարփար (Gruiformes) - 9 տեսակ, որոր, կտցար, քարադր (Charadriiformes) - 49 տեսակ, աղավնազգիներ (Columbiformes) - 4 տեսակ, կկուներ (Cuculiformes) - 1 տեսակ, բու (Strigiformes) - 3 տեսակ, այծկիթ (Caprimulgiformes) - 1 տեսակ, մանգաղաթևեր, ծիծեռնակներ (Apodiformes) - 5 տեսակ, մեղվակեր, հոպոպ, ալկիոն (Coraciiformes) - 5 տեսակ, փայտփոր, վիզգցուկ (Piciformes) - 4 տեսակ և ճնճղուկանմաններ (Passeriformes) - 102 տեսակ: Թռչնատեսակներից 39-ը ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Դրանցից մեկը՝ Հայկական որորը (Laurus armenicus) էնդեմիկ տեսակ է: Ազգային պարկի տարածքում կան 26 տնտեսապես կարևոր նշանակություն ունեցող թռչնատեսակներ: Դրանցից կռնչան բադը, կարմրագլուխ սուզաբադը, քարակաքավը, լորը, սովորական տատրակը, թխակապույտ աղավնին, անտառային աղավնին և այլն հետաքրքրություն են ներկայացնում որսի տեսանկյունից:

Դիտարկվող տարածաշրջանում հանդիպում են կաթնասունների 44 տեսակներ, որոնք պատկանում են հետևյալ կարգերին՝ միջատակերներ (Insectivora) - 7 տեսակ, կրծողներ (Rodentia) - 15 տեսակ, նապաստակներ (Logomorpha) - 1 տեսակ, չղջիկներ (Chiroptera) - 7 տեսակ, գիշատիչներ (Carnivora) - 11 տեսակ և սմբակավոր/կճղակավոր կաթնասուններ (Artiodactyla) - 3 տեսակ:

Վերը նշված կենդանիների կարգաբանական խմբերից շատ տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, այդ թվում, կաթնասուններից՝ ջրասամույրը, գորշ արջը, անտառային կատուն, բեզոարյան այծը, սողուններից՝ խայտաբղետ մողեսիկը (E.a.transcaucasia) և փոքրասիական

մողեսը (Lacerta parva), իսկ թռչուններից՝ ձկնկուլը, սովորական ֆլամինգոն, Հայկական որորը (Laurus armenicus), որը համարվում է էնդեմիկ տեսակ: Սևանա լճի երկու էնդեմիկ ձկնատեսակներ՝ Սևանի իշխանը և Սևանի բեղլուն նույնպես ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում: Դիտարկվողտարածքին բնորոշ են և ամենուրեք հանդիպում են՝ խայտակզաքիսը, ջրասամույրը (գետերի և գետակների հուների երկայնքով): Չնայած դրան, պարկն ունի իրեն բնորոշ կենդանական կազմը, որոնք հաճախ հանդիպում են մեծ պոպուլյացիաներով, ինչպես օրինակ՝ մեծ քնամուկը (Glis glis), պարսկական սկյուռը (Sciurus persicus), անտառային մուկը (Apodemus sylvaticus), այծյամը (Capreolus capreolus), լայնականջ ոզնին (Tadarida teniotis) և այլն:

1.3.7. Զբոսաշրջություն

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջությունն իր զարգացման տեմպերով և արդյունքներով երկրի առավել դինամիկ զարգացող ճյուղերից է: Զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության նպատակները սահմանված են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և 2008 թվականի փետրվարի 13-ին ՀՀ կառավարության հավանությանն արժանացած Զբոսաշրջության զարգացման հայեցակարգով:

Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության նպատակն է մեծացնել զբոսաշրջության ներդրումը ազգային եկամտի ավելացման, համաչափ տարածքային զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման և աղքատության նվազեցման գործընթացում՝ պայմանավորված.

1) զբոսաշրջային այցելությունների քանակի աճով,

2) զբոսաշրջությունից ստացված եկամտի ավելացմամբ,

3) աշխատատեղերի ստեղծմամբ:

Զբոսաշրջությունն ինչպես կառավարության, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ճանաչված է որպես տարածաշրջանի տնտեսական զարգացման հիմնական առանցքային ոլորտ:

Մարզի զբոսաշրջությունը հիմնականում կենտրոնացած է Սևանա լճի շրջակայքում և, որպես կանոն, կրում է խիստ արտահայտված սեզոնային բնույթ:

Բնակլիմայական պայմանները, կենդանական ու բուսական աշխարհը, Սևանա լճի անկրկնելի ֆլորան և տարածքի կենտրոնական դիրքը այս հատվածը դարձնում են ամառվա ամենաշատ հաճախումներ ունեցող վայրերից մեկը։

Շնորհիվ աշխարհագրական դիրքի՝ տարածաշրջանը մշտական տրանսպորտային կապի մեջ է ՀՀ գրեթե բոլոր մարզերի հետ։ Այն գտնում է մի շարք ռազմավարարական նշանակություն ունեցող մայրուղիների վրա, որը հեշտացնում է տեղափոխումը։ Հասանելի է ինչպես միջհամայնքային հանրային տրանսպորտը, այնպես էլ տաքսի ծառայությունները։ Գործում է Երևան – Սևան մարդատար երկաթուղին։

Ջրոսաշրջությունը հանդիսանում է մարզի բնակչության զբաղվածության հիմնական աղբյուրներից մեկը։ Ջրոսաշրջությունն ունի մեծ ներուժ և համապատասխան ենթակառուցվածքներ զբոսաշրջության ոլորտում որակյալ ծառայությունների մատուցման և սպասարկման համար, մասնավորապես՝ առողջական, էկո, էքստրիմ և ջրային զբոսաշրջության ենթաոլորտներում։ Տարածաշրջանում զբոսաշրջության զարգացման նախադրյալներից մեկը առկա բարենպաստ և մեղմ ամառային կլիման է։ Մինչ ամառվա ընթացքում Արարատյան դաշտը և Հայաստանի Հանրապետության հարավային շրջանները տառապում են չափազանց բարձր ջերմաստիճանի հետևանքով (մինչև 40° C), Սևանում օդի ջերմաստիճանը տատանվում է 23-ից 28 աստիճանի միջակայքում (երեկոյան ժամերին ջերմաստիճանը 22-25 ^{0} C է)։

Սևան ազգային պարկի պաշտպանական գոտում գրանցված է 1489 պատմական և մշակութային հուշարձան։ Այսօր այս հնագիտական և պատմական հուշարձանները ևս մեծապես նպաստում են շրջանում մշակութային, կրթական և գիտական (հնագիտական, երկրաբանական), էկոլոգիական, էթնոգրաֆիկ և այլ զբոսաշրջության տեսակների զարգացմանը։

Միևնույն ժամանակ, տարածաշրջանը հետաքրքիր է ոչ միայն իր պատմության և մշակութային վայրերով. այն Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության առավել զարգացած վայրերից մեկն է։ Այստեղ են գտնվում բազմաթիվ հյուրանոցներ, տարաբնույթ հանգստի կենտրոններ։ Տարածաշրջանը համարվում է ջրային սպորտի և զբոսաշրջության զարգացման լավագույն վայրերից մեկը։

Մարզի տարածքում գործում են 57 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ՝ հյուրանոցային համալիրներ, հյուրանոցային քոթեջներ, քարե և փայտե տնակներ, հյուրընկալության ընտանիքներ և այլն:

Սակայն տարածաշրջանի տնտեսական ներուժը բազմազան է: Արագ զարգացող զբոսաշրջությանը զուգահեռ առկա է զարգացած առևտրի ու ծառայությունների ոլորտ:

Առևտրի ոլորտը տարածաշրջանի տնտեսության երկրորդ խոշորագույն ոլորտն է: Աշխարհագրական կենտրոնական դիրքը և ճանաչված տուրիստական վայր լինելը մեծապես նպաստում են այս ոլորտի զարգացմանը: Առևտրի մեջ ներգրավված փոքր ընկերությունները տեղակայված են տարածաշրջանի բոլոր մասերում, ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերում, ճանապարհային և ափամերձ գոտիներում:

Տարածաշրջանի մրցակցային առավելությունները զբոսաշրջության

- Սևանա լիճ,
- «Սևան» ազգային պարկը և պարկի պահպանման տարածքում գտնվող 1 489 պատմական, մշակութային և բնական հուշարձանները (12 – 20 –րդ դարեր),
- բարենպաստ կլիմա, միջավայր,
- արևափայլի տևողությունը 23%-ով բարձր է Հայաստանի միջին ցուցանիշից (2700 ժամ/տարի),
- աշխարհագրական կենտրոնական դիրք, տրանսպորտային խաչմերուկ (Երևան – Սևան – Թբիլիսի, Թբիլիսի – Սևան – Իրան, Երևան – Սևան - Արցախի Հանրապետություն),
- զբոսաշրջության ենթակառուցվածքների առկայություն, զբոսաշրջության կազմակերպման մեծ փորձ,
- նորմածության մեծ հակվածություն տեղական ՓՄՁ-ների կողմից:

ոլորտում

Զբոսաշրջության արժեշղթայի հիմնական օղակները



Գնումներ և ժամանց

Այս երկու ոլորտները դեռևս թույլ են զարգացած՝ չնայած տուրիզմի զարգացման գործում դրանց հիմնաքարային նշանակությանը: Գնումներից հիմնականում հասանելի են սննդի խանութները, որոնք տեղակայված են ինչպես ափամերձ համայնքներում, այնպես էլ ճանապարհամերձ հատվածներում: Հիմնական տեսարժան վայրերի մոտակայքում գործում են փոքր տաղավարներ, որտեղից հնարավոր է գնել փոքր հուշանվերներ: Գնումների ոլորտը կանոնակարգված չէ: Թե՛ գնային, թե՛ որակական և տեսականու առումով հուշանվերների վաճառքը մրցունակ չէ և հիմնականում իրականացվում է ստվերային տարբերակով: Հուշանվերների և զբոսաշրջիկների պահանջներից բխող այլ ապրանքների վաճառքի ցանցի զարգացումը կարող է բավականին բարձրացնել զբոսաշրջության ոլորտի

արդյունավետությունը՝ զուգահեռ ապահովելով նաև ժամանցի մասնակի կազմակերպումը տարածաշրջանում։

Սևանի տարածաշրջանը, հանդիսանալով նախևառաջ ափամերձ տարածք, առաջարկում է ծովափնյա հանգստի բազմաթիվ տարբերակներ։ Բոլոր տարբերակները հիմնականում վերաբերում են պասիվ հանգստին՝ ավազապատ ափամերձ գոտիներ, բացօթյա տաղավարներ և այլն։ Զարգացման մեծ պոտենցիալ ունի ջրային սպորտը՝ այս պահին տարածաշրջանում հասանելի են սպորտային մոտորանավակների վարձույթը և մոտորանավակներով շրջագայությունը լճի վրա։ Ժամանցի հաջորդ հիմնական հնարավորությունը այցելություններ են դեպի տարածաշրջանի տեսարժան վայրեր։ Այցելությունները կազմակերպվում են ինչպես զբոսաշրջիկների կողմից՝ ինքնուրույն տարբերակով, այնպես էլ մասնագիտացված տուրեր կազմակերպող կազմակերպությունների կողմից։ Տեսարժան վայրերի, հնավայրերի և բնական հուշարձանների հնարավորությունները օգտագործվում են շատ փոքր քանակությամբ՝ միայն Սևանի ազգային պարկում գրանցված 1489 նման վայրերից այցելության համար օգտագործվում են մոտ երկու տասնյակը։

Հիմնական բացահայտումներն ու առաջարկությունները գնումների և ժամանցի ոլորտում

1. մասնագիտացված վաճառքի տաղավարների և խանութների հիմնում,
2. ջրային սպորտաձևերի զարգացում,
3. քայլարշավների, ճանաչողական և արկածային տուրերի ստեղծում և մատուցում,
4. երեկոյան հանգստի պայմանների ստեղծում՝ ներկայացումներ, համերգներ և այլն։

Զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումներն ու դրա նշանակությունը մարզի համար

Մարզում զբոսաշրջությունը բնութագրվում է խիստ արտահայտված սեզոնայնությամբ։ Ներգնա զբոսաշրջիկների գերակշռող մեծամասնությունը, մասնավորապես հանգստի նպատակով մարզ այցելողները՝ հատկապես Սևանա լիճ են ժամանում հունիս-սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում, իսկ տարվա մնացած հատվածում զբոսաշրջիկների թիվը խիստ պակասում է։

Որպեսզի մարզում տարվա բոլոր եղանակներին զբոսաշրջությունը զարգանա, անհրաժեշտ է ներդնել այլընտրանքային զբոսաշրջություն՝ ձմեռային սպորտաձևեր, որսորդություն, ձկնորսություն, նավագնացություն, առագաստանավային սպորտ, ալպինիզմ, որոնց համար կան բոլոր նպաստավոր պայմանները: Սևանում հնարավոր է զարգացնել սպորտային և էքստրեմալ զբոսաշրջությունը, ներառյալ ջրային և ոչ ջրային սպորտաձևերը: Ջրային սպորտաձևերից կարելի է առանձնացնել առագաստային սպորտը, թիավարությունը և դայվինգը: Ոչ ջրային սպորտաձևերի ընտրությունն ավելի մեծ է՝ վազքից և հեծանվավազքից մինչև պարագլայդինգ, ալպինիզմ և ձիասպորտ: Հաշվի առնելով Սևանա լճի շրջակայքի ռելիեֆը և եղանակային պայմանները, տարածաշրջանում հնարավոր է զարգացնել դահուկային սպորտը (լեռնային և դահուկավազք): Ձմեռային հանգիստն առավել հրապուրիչ դարձնելու համար կարելի է կազմակերպել սիրողական բիատլոնի մրցումներ, որը կհրապուրի ոչ միայն դահուկավազքի, այլև հրաձգության սիրահարներին: Սպորտային տուրիզմի զարգացման համար անհրաժեշտ կլինի ստեղծել համապատասխան ենթակառուցվածքներ՝ սպորտային բազաներ, դահուկային վազուղիներ, ճոպանուղի և այլն:

Զբոսաշրջությունը տարբեր միջոցներով կարող է նպաստել համայնքների զարգացմանը: Զբոսաշրջության աճը կմեծացնի բնամթերքի նկատմամբ պահանջարկը, ինչն էլ, իր հերթին, կխթանի գյուղատնտեսությունը: Խիստ քաղաքաշինական նորմերի պահպանումն ու ենթակառուցվածքների զարգացումը կբերի զբոսաշրջության աճին: Բնապահպանական միջոցառումները (Սևանա լճի ջրի, օդի և ափամերձ տարածքի պահպանում) կմեծացնեն տարածաշրջանի գրավչությունը զբոսաշրջիկների համար և այլն:

- Զբոսաշրջիկների համար համայնքային բնակիչների կողմից կազմակերպած միջոցառումները կամ տոները, նրանց նկատմամբ ցուցաբերած հյուրասիրությունը նպաստում են համայնքի սոցիալական ակտիվությանը, իսկ զբոսաշրջության որոլտում ստեղծած աշխատատեղերը և դրանց արդյունքում ստացվող եկամուտները խթան կհանդիսանանտեղի բնակչության կողմից գյուղական համայնքները չլքելուն:
- Զբոսաշրջությունը նպաստում է հանրային ծառայությունների զարգացմանը, և կարող է բարձրացնել բնակչության կենսամակարդակը գյուղական բնակավայրերում: Այն ներառում է բարելավված ճանապարհային և հաղորդակման ենթակառուցվածքները, առողջապահության և տրանսպորտի ոլորտների բարելավումը, նոր սպորտային և հանգստի համար նախատեսված զանազան համալիրները, հանգստի, սպասարկման, զվարճանքի և հասարակության համար նախատեսված այլ վայրեր:
- Զբոսաշրջությունը կարող է մեծապես ազդել մշակութային և պատմական ավանդույթների վերականգմանը, պահպանմանն ու

փոխանցմանը, ինչը հաճախ իր հերթին նպաստում է բնական ռեսուրսների պահպանմանն ու ռացիոնալ օգտագործմանը, ազգային ժառանգության պահպանմանը, մշակույթի, արվեստի և արհեստագործության զարգացմանը:

- Զբոսաշրջությունը նպաստում է բնակչության մոտ բնական և մշակութային ռեսուրսների թե՛ ֆինանսական նշանակության գիտակցության և թե՛ դրանց նկատմամբ հպարտության զգացման բարձրացմանը՝ մեծացնելով դրանք պահպանելու ձգտումը:
- Զբոսաշրջությունից ստացված եկամուտները կարող են ուղղվել ինչպես ենթակառուցվածքների զարգացմանը, այնպես էլ շրջակա միջավայրի պահպանության բարձրացմանը: Զբոսաշրջությունը նպաստում է բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը, շրջակա միջավայրի պահպանությանը և կենսաբազմազանության վերականգմանը, շրջակա միջավայրի պահպանության, հասարակության գիտակցության բարձրացմանը:
- Երկրի և մարզի նկարագրի ձևավորումը նպաստում է վերջինիս միջազգային ճանաչմանը, միջազգային հարաբերությունների ձևավորմանն ու ամրապնդմանը, օտարերկրյա ներդրումների և արտահանման խթանմանը:

1.3.8. Մարզի բնակչությունը

ՀՀ Գեղարքունիքի մարզն իրենից ներկայացնում է Հայաստանի ոչ խիտ բնակեցված մարզերից մեկը, գյուղական բնակչությունը տեղաբաշխված է անհամամասնորեն: Մարզի գյուղական համայնքներում մեծ տեսակարար կշիռ են կազմում խոշոր գյուղական բնակավայրերը, որտեղ բնակվում են մարզի գյուղական բնակչության՝ 67.7%, խոշոր բնակավայրերի թիվը 21 կամ բնակավայրերի՝ 23.4%, իսկ փոքր գյուղական համայնքներում բնակվում են գյուղական բնակչության մոտ՝ 13%, փոքր բնակավայրերի թիվը՝ 47 կամ գյուղական բնակավայրերի՝ 53.5%:

Բնակչության խտությունը կազմում է 43 մարդ/1կմ^2: Ընդ որում մարզի մշտական բնակչության մեծամասնությունը կուտակված է Սևանի, Մարտունու և Գավառի տարածաշրջանում /բնակչության խտությունը մեկ քառակուսի կիլոմետրի վրա 76-101 մարդ/, այստեղ են բնակվում մարզի բնակչության շուրջ 77.8%, իսկ ամենացածր խտությունը՝ Ճամբարակի և



Վարդենիսի տարածաշրջանում է՝ մեկ քառակուսի կիլոմետրի վրա 19-33 մարդ, որտեղ բնակվում են մարզի 22.2% բնակչությունը:

Ստորև աղյուսակում տրված `է միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի ներկա և հեռանկարային բնակչության թվաքանակը.

Դարերի ընթացքում մեծ փոփոխություններ է կրել մարզի բնակչության թե՛ թվաքանակը, թե՛ ազգային կազմը: Ուշ միջնադարում մարզի տարածք են թափանցել թուրքալեզու խաշնարած ցեղերը, որոնք այստեղ գերազանց արոտավայրեր են գտել: Տեղաբնիկների՝ հայերի թիվը պակասել է: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո մարզի տարածքում

վերաբնակեցվել են զգալի թվով հայեր Արևմտյան Հայաստանից, ինչպես նաև՝ ռուս աղանդավորներ: Ներկայումս Գեղարքունիքի բնակչության ազգային կազմը միատարր է:

Ներկայումս Գեղարքունիքի մարզի բնակչությունը հիմնականում հայեր են, որոնք կազմում է ընդհանուր բնակչության 99.7%-ը: Կան նաև ռուսներ, հույներ, եզդիներ և այլ ազգեր: Ազգային փոքրամասնությունները հիմնականում ունեն ամուսնական կապեր հայերի հետ և տեղի է ունեցել ազգային առանձնահատկությունների միաձուլում հայկական ազգային ավանդույթների հետ:

Բնակչության թվաքանակը համայնքի բնակավայրերում տատանվում է նվազագույնը 150-ից մինչև 4600: Փոքր բնակավայրերի թիվը 5-ն է: Բնակչության հեռանկարային թվաքանակի հաշվարկման նախկին մեթոդների անիրատեսական լինելու կապակցությամբ հաշվարկի հիմքում դրվել են նախկին տարիների բնական աճի, միգրացիայի ցուցացնիշների համադրումը: այնուհանդերձ, տվյալ ցուցանիշները ևս ենթակա են փոփոխության:

1.3.9. Բնակելի ֆոնդ

Տնային տնտեսությունների ապահովվածությունը բնակմակերեսով գյուղական համայնքներում գտնվում է բավականին ցածր մակարդակի վրա, իսկ քաղաքային համայնքներում մոտ է հարակից մարզերի ցուցանիշներին և շուրջ 25% գերազանցում է միջին հանրապետական ցուցանիշը:

Բացի այդ, բնակելի ֆոնդը ըստ տեխնիկական վիճակի գտնվում է խարխուլից մինչև գերազանց վիճակում գտնվող նորակառույց առանձնատների վիճակում:

Բազմաբնակարան շենքերում առկա է 12277 բնակարան, որից՝ 11679-ը՝ քաղաքներում: Բազմաբնակարանային բնակելի ֆոնդը կազմում է 1 մլն 157 605 հազ. քմ.: Մարզում բազմաբնակարան շենքերի թիվը քաղաքային համայնքներում կազմում է 488, որից՝ ք. Գավառ՝ 73, ք. Սևան՝ 224, ք. Մարտունի՝ 35, ք. Ճամբարակ՝ 24, ք. Վարդենիս՝ 43:

218 բազմաբնակարան շենքեր ընդգրկված են 6 համատիրությունների մեջ:

Մարզի մի քանի բնակավայրերում առկա են ևս 54 բազմաբնակարանային շենքեր (2-4 բնակարաններով):

1.3.10. Տնտեսություն

1.3.10.1. Գյուղատնտեսություն

ՀՀ Գեղարքունիքի մարզն ունի առավելապես գյուղատնտեսական ուղղվածություն:

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի

16.9%-ը:

Մարզում գյուղատնտեսությունում աշխատում է շուրջ 66 000 մարդ: Տարածաշրջանում լայն տարածում է գտել անասնաբուծությունը, մեղվաբուծությունը, ձկնարդյունաբերությունը (հիմնական հենքը Սևանա լիճն է), և բուսաբուծությունը՝ հատկապես կարտոֆիլի ու հացահատիկի մշակությունը: Մարզի գյուղատնտեսությունը կարևոր նշանակություն ունի հանրապետության համար: Մարզում արտադրվում Է հանրապետությունում արտադրվող հացահատիկի 20.3%-ը և կարտոֆիլի շուրջ 50%: Անասնաբուծության հիմնական ուղղվածությունը կաթի և մսամթերքի արտադրությունն է:

Զարգանում և տարածվում է այգեգործությունը: Մրգատու ծառերի ներկրված ցրտադիմացկուն տեսակներն ապահովում են բավականին բարձր արդյունավետություն:

Մարզի տարածքում գործում են մոտ 40 հազար գյուղացիական փոքր,

միջին կամ խոշոր տնտեսություններ:

Արտադրություն

Գեղարքունիքի մարզում գործում են 27 արտադրական ձեռնարկություններ: Խոշոր արտադրական ձեռնարկությունների մեջ տեսակարար կշիռ ունեն ԳեոՊրոՄայնինգ, Աքվատիկ, Սևանի հացի գործարան, Հրանդ Կարապետյան, Ակունքի Էկոկաթ, Գավառի Սևան, Լճաշենի Արա-Արեգ և մի շարք այլ արտադրական ձեռնարկություններ:

Մարզում գործում են 529 առևտրային ձեռնարկություններ, այդ թվում՝ 2 սպառողական ապրանքների և 2 գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ:

1.3.10.2. Արդյունաբերություն

Արդյունաբերության հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Օգտակար հանածոներից մեծ արժեք են ներկայացնում ոսկու (Սոթք), քրոմիտի (Շորժա), տորֆի, բազալտի, բնական շինանյութերի, հանքային ջրերի (Գավառ, Լիճք) և այլ պաշարները:

Հանքարդյունաբերության ոլորտում շահագործվում է 28 հանքավայրեր, որից՝ մեկ մետաղական (Սոթքի ոսկի), մեկ հանքային ջուր («ՍԵՎԱՆ» հանքային ջրերի գործարան), երկու ածխաթթվային հանքային ջրի (կորզվում է ածխաթթու գազ, մեկ քաղցրահամ ջուր, մեկ մերգելային կրաքար («Հրազդան ցեմենտ», 12 քարի, 6 ավազ, ավազակոպիչներ, մեկ գիպսաքար, երկու հրաբխային խարամ և մեկ տորֆ՝ Մասրիկի տորֆ),

Մարզում է գործում հանքահումքային արդյունաբերության մեջ մեծ կշիռ ունեցող «ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ-ն, որը մասնագիտացված է թանկարժեք մետաղների հանքարդյունահանմամբ, վերամշակմամբ և հանդիսանում է հանրապետության խոշոր կազմակերպություններից մեկը

Արդյունահանվում է նաև որոշակի քանկաությամբ շինանյութ՝ բազալտ, ավազ, կրաքար: Տորֆի առատ պաշարներ կան Վարդենիսի տարածքում: Տարիներ շարունակ հանրապետության տարբեր շրջաններ (հատկապես ջերմոցային տնտեսություններ ունեցողները) օգտագործել և օգտագործում են ՀՀ Գեղարքունիքի մարզի Տորֆավան համայնքում գտնվող հանքավայրի տորֆը՝ որպես բնական անփոխարինելի պարարտանյութ:

Ձկնաբուծություն

Սևանա լիճն իր եզակի ու հարուստ ֆլորայով և ֆաունայով կարևոր տեղ ունի հանրապետության կենսաբազմազանության համակարգում, իսկ կենսապաշարները՝ մասնավորապես ձկնային պաշարները, կարևոր տեղ են գրավում մարզի և հանրապետության բնակչության սննդաբաժնում: Սևանա լճի ավազանում ձկնաբուծության և ձկնարդյունաբերության զարգացումը կարող է ունենալ շատ կարևոր ռազմավարական նշանակություն ավազանի բնակավայրերի համար, որտեղ այն կարող է դառնալ հազվագյուտ եկամտաբեր ճյուղերից մեկը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է ապահովել ոլորտի նորարարական զարգացումը՝ հիմնված ջրային, հողային և կենսաբանական ռեսուրսների պահպանության, վերարտադրության և բանական օգտագործման վրա, ինչպես նաև ապահովել հայրենական ձկնարդյունաբերության միջազգային մրցունակությունը:

Սևանա լճում սկզբնավորվել է ցանցավանդակային ձկնաբուծությունը: 2017թ. դրությամբ լճում տեղադրված է 12 օղակաձև ցանցավանդակներ՝ 25 մ տրամագծով, որտեղ բուծվում է շուրջ 50 տոննա Գեղարքունի և Ամառային իշխանի արդյունագործական պաշար, ինչի արդյունքում տարեկան կարտադրվի 50 հազար տոննա ձուկ:

Կարճաղբյուր համայնքում արդեն կառուցվել և գործում է գերժամանակակից սարքավորումներով հագեցած ձկնաբուծարան: Իր արտադրողականությամբ գործարանը մի քանի անգամ գերազանցում է ԽՍՀՄ

տարիներին Սևանա լճի ավազանում գործող չորս մանրաձկան գործարանների արտադրողականությունը:

Սևանա լճի ավազանի հարակից տարածքներում գյուղատնտեսության և անասնապահության արդյունքում պարարտանյութերի և գոմաղբի միջոցով ազոտային և ֆոսֆորային արտանետումները զգալիորեն ճնշում են լճի ջրային ռեսուրսները:

Սևանի հարակից բնակավայրերի կենցաղային կեղտաջրերն առանց մաքրվելու լցվում են լիճ՝ վնասելով ջուրը, ավազանի բուսական ու կենդանական աշխարհը: Ջրի մաքրման կայաններ կան Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում. մյուս բնակավայրերը չունեն կոյուղիների հեռացման համակարգ: Բացասական ազդեցություն ունեն նաև Սոթքի հանքի ցրված ջրերը, որոնք պարունակում են մեծ քանակությամբ ծանր մետաղներ՝ հատկապես վնասելով Սոթք ու Մասրիկ գետերի ավազանները: Այս տարածքում լրացուցիչ մաքրման կայանների ստեղծումն ու կիրառումն անհրաժեշտություն է լիճ մուտք գործող ջրերը հնարավորինս ֆիլտրելու համար: Բացի դա, հարկավոր է աղբահանության այնպիսի համակարգ ստեղծել, որ բնակիչներն իրենց համայնքներով հոսող գետերը չդիտարկեն իբրև աղբը մեկուսացնող միջոց:

Սևանա լճի ջրավազանի ջրօգտագործման ավելի քան 40%-ը կազմում է ձկնաբուծությունը: Այն ևս բացասաբար է անդրադառնում ավազանի վրա, եթե կանոնակարգված ու գրագետ չի իրականացվում:

Սևանա լճի պահպանման հարցում լճի մակարդակի բարձրացումը չափազանց կարևոր է, իսկ այդ գործընթացը պետք է մշտապես իրականացնել: Միաժամանակ կարևոր է կառավարելի դարձնել ջրի մակարդակի բարձրացումը և կատարել համապատասխան նախապատրաստական



աշխատանքներ՝ ազատել, ծառահատել և մաքրել ջրի տակ մնացող տարածքները:

1.3.11. Կրթություն, մշակույթ, սպորտ, առողջապահություն

Գեղարքունիքի մարզում գործում է մեկ պետական համալսարան, միձնակարգ մասնագիտական ութ հաստատություն, 125 հանրակրթական դպրոց, 39 առողջապահական ձեռնարկություն՝ 3 բժշկական կենտրոն, 2 պոլիկլինիկա, 1 ստոմատոլոգիական պոլիկլինիկա, 1 հիվանդանոց, 1 ծննդատուն, 1 առողջության կենտրոն, 30 բուժամբուլատորիա և առողջության առաջնային պահպանման կենտրոն, մեկ պետթատրոն, 3 թանգարան, Հայաստանի պետական պատկերասրահի 2 մասնաճյուղ, 1 մարզային, 5 քաղաքային, 63 գյուղական գրադարաններ, 8 երաժշտական, 1 դուդուկի, 6 արվեստի, 3 գեղարվեստի դպրոցներ, 3 մանկական ստեղծագործական

կենտրոն, 1 գեղագիտական կենտրոն, 1 երաժշտական քոլեջ, 9 մարզադպրոց, 73 մշակույթի տներ և ակումբներ, չորս տասնյակիվ ավելի մանկապարտեզներ և նախակրթարաններ:

Թատերական հարուստ ավանդներ ունեցող Գավառ քաղաքում գործում է Լ. Քալանթարի անվան պետթատրոնը, որի նորակառույց շենքն ունի գերժամանակակից պայմաններ:

1.3.12. Տրանսպորտ

ՀՀ Գեղարքունիքի մարզով են անցնում Մ4 Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման, Սևան-Մարտունի-Գետափ, Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման և Մ4-Ծորժա-Վարդենիս միջպետական նշանակության ավտոճանապարհները:

Մարզային նշանակության ճանապարհների երկարությունը կազմում է 460.3 կմ, որից միջպետական նշանակության՝ 282.6 կմ, հանրապետական նշանակության՝ 103.8 կմ և մարզային (տեղական) նշանակության 419.9 կմ:

Միջպետական, հանրապետական և մարզային (տեղական) նշանակության ճանապարհների զգալի մասը անցնում է ձմեռային կլիմայական պայմաններ ունեցող լեռնային և բարձր լեռնային գոտիներով, ձմեռը հաճախակի դառնում են դժվարանցանելի, երթևեկության տևողությունը էապես ավելանում է:

Երևան-Սևան-Իջևան-Ադրբեջանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի երթևեկությունը ինտենսիվ է, ծանրաբեռնված է աշխատում հատկապես հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին, կապված Սևանա լճի հանգստյան գոտիների հետ:

*«**Գեղարքունիք-4**» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

ՀՀ Գեղարքունիքի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների վիճակի գնահատման				
²íïá×³Ý³å³ñÑÇ ³Ýí³ÝáõÙÁ ¨ ÏÇÉáÙ»ïñ»ñÁ	²íïá×³Ý³å³ñÑÇ ï»ËÝÇÏ³Ï³Ý Ï³ñ·Á	ä³Ñå³ÝíáÕ Ñ³íí³ÍÝ»ñÇ »ñÏ³ñáõÃÛáõÝÁ Áëï ·Ý³Ñ³ïÙ³Ý /ÏÙ/		Ö³Ý³å³ñÑ³Ñ³íí³ÍÝ»ñÇ íÇ×³ÏÇ Í³ÍÏ³·ÇñÁ
1	2	3		4
Ø³ñïáõÝáõ ï³ñ³Í³ßñç³Ý				
Ø-10 ê¨³Ý-Ø³ñïáõÝÇ-¶ »ï³÷ ÏÙ 49,0-ÏÙ91.8	ØÇçå»ï³Ï³Ý II-IV	57.0-64.5	7.5	°ñ³ßËÇù Ø°(0)
		49,0-5.0 66.0-91.8	26.8	´³í. Ø´(II)
Ø-11 Ø³ñïáõÝÇ-ì³ñ¹»ÝÇë-²¹ñµ.ë³ÑÙ³Ý ÏÙ0-ÏÙ20,7	ØÇçå»ï³Ï³Ý II-IV	6.0-10.85	4.85	°ñ³ßËÇù Ø°(0)
		0-6.0 10.85-20,7	15.85	´³í. Ø´(II)
ÀÝ¹³Ù»ÝÁ			55.0	

ՀՀ Գեղարքունիքի մարզում բեռնափոխադրումներն ու ուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտով:

Մարզի տնտեսության զարգացումն ամբողջապես կախված է ճանապարհային և երկաթուղային փոխադրումներից:

Մարզի տարածքում գործում են 15 միջմարզային երթուղիներ, որոնք մարզի բնակավայրերից ուղևորափոխադրումներ են իրականացնում դեպի Երևան, Վանաձոր, Վեդի քաղաքներ և մարզի այլ բնակավայրեր: Գործում են նաև 25 ներմարզային երթուղիներ, որոնք մարզի համայնքները կապում են նախկին շրջկենտրոնների հետ: Մարզի 73 համայնքներ ապահովված են միջմարզային, ներմարզային կամ ներհամայնքային ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով, իսկ 19 համայնքներ, որոնք ընդհանուր ունեն 15336 բնակիչ կամ մարզի բնակչության՝ 6.6%-ը ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտից չի օգտվում:

Ավտոտրանսպորտային միջոցների ինտենսիվության միջին օրական տվյալները								
No	Ճան կոդ	Ճանապարհի անվանումը	կմ	մարդատար	բեռնատար,ավտոբուս	բեռնատար կցորդով	ընդամենը	Չափման տարեթիվ
1	Մ-4	Երևան-Սևան-Իջևան-Ադր. Հանրապետու	57	13558	425	193	14176	2021թ
2			73	8961	407	204	9572	
3			80	5352	235	178	5765	

		թյան սահման						
4	Մ-10	Սևան-Մարտունի - Գետափ – /Մ-2	3	7018	276	18	7312	2021թ
5			32	6423	259	17	6699	
6			64	7235	283	17	7535	
7	Մ-11	Մարտունի – Վարդենիս – Արցախի Հանրապետության սահման	36	5172	216	4	5392	2021թ
8	Մ-14	/Մ-4/ - Շորժա – Վարդենիս	77	643	36	2	681	2021թ
9			96	1521	38	2	1561	
10	Հ-29	Սևան - Ծաղկունք – Զովաբեր	1	3045	26	2	3073	2021թ

Երկաթուղի

Մարզի տարածքով է անցնում Սոթք տանող երկաթգիծը, որի Ծաղկունք-Սոթք վազքուղու երկարությունը կազմում է 141 կմ: Մարզում գործում են Սևանի, Շորժայի, Վարդենիսի և Սոթքի երկաթուղային կայարանները, որոնք մարզի տնտեսության ակտիվացման ժամանակ կարող են մեծ խթան հանդիսանալ շահավետ բեռնափոխադրումների իրականացման համար: Երկաթուղային կայարանները ներկայումս օգտագործվում են իրենց հնարավորությունների շուրջ 50%-ը: Սևան-ՇորժաՎարդենիս ուղղությամբ ներկայումս գործում է երկու գնացք՝ որոնցով հիմնականում իրականացվում են բեռնափոխադրումներ, իսկ ամռան ընթացքում նաև ուղևորափոխադրումներ:

Օդային տրանսպորտ

Մարզում առկա է Գավառի օդանավակայանը, որը սակայն ներկայումս չի գործում: Գավառի օդանավակայանում կան շենքային պայմաններ, սակայն թռիչքուղին գրունտային է:

1.3.13. Քաղաքային զարգացում

Մարզկենտրոն ***Գավառը*** (2019թ. տարեսկզբին՝ 18.4 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 92 կմ հեռավորության վրա: Քաղաքը նախկինում հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էապես կրճատվել է: Այժմ տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է:

Սևան քաղաքը (2019թ. տարեսկզբին՝ 19.0 հազ. բնակիչ, Երևանից 66 կմ հեռավորությամբ) գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին:

Տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը զբոսաշրջությունն է:

Մարտունի քաղաքը (2019թ. տարեսկզբին՝11.5 հազ. բնակիչ) գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին (Երևանից 130 կմ հեռավորության վրա): Տնտեսության գլխավոր ճյուղն արդյունաբերությունն է, թեև վերջին տարիներին արձանագրվել է թողարկվող արտադրանքի ծավալների զգալի կրճատում:

Վարդենիս քաղաքի (2019թ. տարեսկզբին՝12.5 հազ. բնակիչ, Երևանից 168 կմ հեռավորության վրա) առաջատար ճյուղն արդյունաբերությունն է: Ընդլայնման մեծ հեռանկարներ կան հատկապես հանքավայրերի շահագործման և գյուղատնտեսական մթերքի վերամշակման ուղղություններում: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

Ճամբարակ քաղաքի (2019թ. տարեսկզբին՝ 5.6 հազ. բնակիչ) տնտեսության առաջատար ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է (Երևանից 119 կմ հեռավորության վրա): Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած: Կրասնոսելսկի տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90%-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

Մարզի միայն Ճամբարակ քաղաքն է գտնվում թույլ յուրացված գոտում, ունի տարածքային զարգացման հնարավորություններ իր համայնքի սահմաններում:

ՀՀ Գեղարքունիքի մարզի ինտենսիվ յուրացված գոտու քաղաքների համար (Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս) առանձնահատուկ նշանակություն ունի քաղաքների տարածքային զարգացման նպատակային սահմանափակումների ամրագրումը, որի կարևորագույն չափանիշը շրջակա միջավայրի պահպանման խնդիրն է:

Քաղաքների հետագա զարգացումը հիմնականում նախատեսվում է ներքին ռեզերվների և տարածքների քաղաքաշինական յուրացման ինտենսիվության մակարդակի բարձրացման հաշվին, քանի որ քաղաքների տարածքների 30-35%-ը դեռևս շատ էքստենսիվ է օգտագործվում:

Քաղաքային բնակավայրերի զարգացումը պայմանավորված է նաև Գավառի օդանավակայանի վերագործարկմամբ, նախատեսված երկաթուղու կառուցման աշխատանքները ավարտին հասցնելը, սննդի ու տեքստիլ արդյունաբերական կազմակերպությունների աշխատանքը:

«Գեղարքունիք-4» միկրոռեգիոնի բնակավայրերի առկա վիճակի վերլուծություն

Գեղարքունիք-4 միկրոռեգիոնն ընդգրկում է թվով 15 բնակավայր՝

- Ծովինար,
- Արծվանիստ,
- Ախպրաձոր,
- Ակունք,
- Գեղաքար,
- Լճավան,
- Լուսակունք,
- Խաչաղբյուր,
- Ծովակ,
- Կարճաղբյուր,
- Մաքենիս,
- Մեծ Մասրիկ,
- Նորակերտ,
- Վանևան,
- Տորֆավան

1.3.14. Ծովինար,

վարչատարածքային միավոր Գեղարքունիքի մարզում: Ծովինարի գյուղատարածքը ձգվում է Սևանա լճի հարավային ափամերձ գոտում, լճից մոտավորապես 2 կմ հեռավորության վրա, Վարդենիս տանող ճանապարհի մոտ, Երևանից՝ 145 կմ, Մարտունուց՝ 15 կմ հարավ-արևելք: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 2000 մ : Վարչական տարածքը՝ 6341.13 հա:

Օդի ջերմաստիճանը հունվարին՝ -12-ից ^{0}C, հուլիսին՝ +18 ^{0}C: Միջին տարեկան տեղումների քանակը՝ 430 մմ:

Ծովինարը հիմնադրվել է 1830թ-ի մայիսին:

Ծովինարի տարածքը հին ժամանակներում մտնում էր Մեծ Հայքի Սյունիք նահանգի Գեղարքունիք գավառի մեջ: Պատմական տարբեր շրջաններում այն Մարտունու տարածքի կազմում մտած է եղել Այրարատ նահանգի մեջ: Նախկինում ունեցել է Քեոլաղրան անվանումը: 1828 թ.-ին Ռուսաստանի և Պարսկաստանի միջև կնքված Թուրքմենչայի հայտնի պայմանագրով Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո Ծովինարը Գեղարքունիք գավառի կազմով մտել է Երևանի նահանգի մեջ: Ծովինարը կապված է եղել Կոթ /նախկինում Սևանի ավազանի կենտրոն, ներկայիս Ներքին Գետաշենի տարածք/ գյուղի հետ, և ընկած լինելով Կոթ-Վարդենիս առևտրական ճանապարհի վրա, մասնակից է եղել ժամանակի սոցիալ-տնտեսական անցուդարձին, ապրել ժամանակի չափանիշներով առաջխաղացում, ընդարձակվել, ընդգրկել մեծ քանակի բնակչություն:

Սկզբնական շրջանում Արևմտյան Հայաստանի տարածքից ներգաղթել են 23 ընտանիքներ, շուրջ 151 մարդ:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 4655 բնակիչ:

Գյուղը գլխավոր հատակագիծ չի ունեցել:

Տնային տնտեսությունների թիվը՝ 1746:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, բուժ-ամբուլատորիա, մշակույթի տուն:

Տարրական դպրոց է հաճախում 104 աշակերտ, հանրակրթական դպրոց՝ 506 աշակերտ:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը՝ 135 հազ., $մ^2$, բաղկացած 950 անհատական բնակելի տներից:

Գյուղի բնակչության հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ և այգեգործությամբ:

Գյուղում կա 1680 գյուղացիական տնտեսություն: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 1727 գլուխ, մանր եղջերավոր անասունների քանակը՝ 1115, խոզերի գլխաքանակը՝ 483:

Գյուղն գրեթե ամբողջովին գազաֆիկացված է, ունի թվով 3 գերեզմանատուն՝ 6.25 հա ընդհանուր մակերեսով: Առկա է աղբավայր:

Գյուղի տարածքում չեն պահպանվել ավելի վաղ շրջանի հնագույն մարդկանց բնակատեղի հետքեր, բացառությամբ Ռուսա I-ի կառուցած Թեյշեբա՝ աստծո քաղաք (VIII դար մ.թ.ա) բերդ-ամրոցի ավերակների, բայց կան որոշակի տվյալներ, որոնք հաստատում են Ծովինարի տարածքի հնագույն բնակատեղի լինելու փաստը: Գրավոր հին հիշատակությունը Ծովինարի՝ որպես պատմական բնակատեղի մասին, տալիս է Հայկական Արարատյան թագավորության գահակալ Ռուսա I-ի մ.թ.ա.VIII դարում թողած արձանագրությունը:

Ծովինարի՝ Թեյշեբինի կամ Օձաբերդի կիկլոպյան ամրոց-կառուցված է մի ժայռոտ բլրի վրա, որը հյուսիսից նայում է Սևանա լճին, տեղադրված է ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղից մոտ 1,5 կմ արևմուտք, Արծվանիստ գյուղի արևելյան մատույցներում: Առավել մատչելի է Ծովինար գյուղի միջով դեպի Արծվանիստ տանող հին ճանապարհով: Ամրոցի բլրի հարավ-արևմտյան մասում, Ծովինար-Արծվանիստ ճանապարհից անմիջապես ձախ՝ քարաժայռի ճակատին գտնվում է Վանի թագավորության տիրակալ Ռուսա I-ի (Ք.ա. 735-713 թթ.) արձանագրությունը:

Համաձայն արձանագրության՝ Ռուսա I-ը նվաճել է այստեղ գոյություն ունեցած ամրոցը, նույն տեղում վերակառուցել է այն և անվանել Թեյշեբաինի ամրոց: Այստեղի ամրաշինական համակարգը կազմող որոշ էլեմենտներ (աշտարակներ, պարսպապատեր, պատեր) վերակառուցված են, կամ էլ հավելված են չթրծված աղյուսով շարված կոնստրուկցիաներով: Ամրոցի և հատկապես միջնաբերդի գլխավոր պարիսպները և քարաբուրգերը նույնպես վերակառուցված են, նրանց արտաքին երեսները շարված են տաշված և ողորկ կողմերը դեպի դուրս ուղղված քարերով:

Թեյշեբաինին Սևանի ավազանում Վանի թագավորության շրջանին պատկանող ամրոցներից այսօր ամենալավ պահպանվածն է, որը հանդիսացել է լճի հարավային ափի ամենահուսալի ուրարտական հենակետը, ինչպես Ուելիքուխի երկրի «Խալդի քաղաքը» կամ Գավառի Բերդի գլուխ ամրոցը Գավառագետի ավազանի համար:

Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 91 հուշարձան (21 միավոր):

1.3.15. Արծվանիստ,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հարավ-արևելյան ափամերձ հարթավայրում, Վարդենիսի լեռնաշղթայի ստորոտում, Կոթիկ գետի շրջանում: Մարզկենտրոն Գավառից գտնվում է 51 կմ հարավ–արևելք, մայրաքաղաքից՝ 150 կմ հեռավորության վրա: : Տեղակայված է ծովի մակերևույթից 1950 մետր հեռավորության վրա:

Սահմանակից է Ծովինար և Կարճաղբյուր բնակավայրերին: Վարչական տարածքը՝ 7656.77 հա:

Նախկինում Ներքին Ալաչալու անվամբ մտել է Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի կազմում:

Կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը՝ զով: Բնակչությունը հաճախ է տուժում երաշտից ու ցրտահարությունից: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -25^{0}C, հուլիսին՝ +30^{0}C:

Ներկայիս բնակչության նախնիները 1829-1830 թթ. գաղթել են Ալաշկերտից:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 3204 բնակիչ:

Գյուղը գլխավոր հատակագիծ չի ունեցել:

Տնային տնտեսությունների թիվը՝ 1025:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ /չի գործում/, բուժ-ամբուլատորիա, մշակույթի տուն, 2 գրադարան:

Տարրական դպրոց է հաճախում 40 աշակերտ, հանրակրթական դպրոց՝ 493 աշակերտ:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը՝ 67.101 հազ., մ^2, բաղկացած 780 անհատական բնակելի տներից:

Գյուղի բնակչության հիմնական մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ և այգեգործությամբ:

Գյուղում կա 1040 գյուղացիական տնտեսություն: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 1532 գլուխ, մանր եղջերավոր անասունների քանակը՝ 2122, խոզերի գլխաքանակը՝ 105:

Գյուղն գրեթե ամբողջովին գազաֆիկացված է, ունի թվով 2 գերեզմանատուն՝ 2.5 հա ընդհանուր մակերեսով: Առկա է աղբավայր՝ 0.5 հա տարածքով:

Արծվանիստի հարավ-արևելյան ծայրամասում կանգուն է Վանեվան վանքը (10դ.), որի համալիրի մեջ է մտնում սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին (903 թ.): Վանքը հիմնադրվել է վաղ միջնադարում: Ըստ շինարարական արձանագրության, համալիրի գլխավոր Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին կառուցվել է 903 թ հայոց սպարապետ Շապուհ Բագրատունու կողմից, իր քրոջ՝ Սյունյաց իշխանուհի Մարիամի տեսչությամբ: Գլխավոր եկեղեցին կառուցված է կոպտատաշ բազալտից, իսկ կամարները և գմբեթը՝ տուֆից: Ունի ներքուստ քառախորան, արևելքում զույգ ավանդատներով հորինվածք: Պատին փորագրված արձանագրության տեղեկությամբ վանքում հաստատված վանական միաբանությանը սպարապետը չորս գյուղ ու ջրաղացներ է նվիրվել:

914 թվականին Վանեվանում է թաղվել արաբական արշավանքի արդյունքում զոհված հայոց թագավոր Սմբատ Ա Բագրատունին:

980-ական թվականներին վանքը նորոգել և գավիթ է կառուցել Աշոտ Գ Ողորմածի որդին՝ ապագա Գագիկ Ա Բագրատունի թագավորը:

Վանևանը 13-ից 14-րդ դարերում բազմաթիվ նվիրատվություններ է ստացել: 16-րդ դարում թուրքական ցեղերի արշավանքների այդյունքում գյուղը դատարկվում է, գյուղի հետ միասին լքվում է նաև վանքային համալիրը:

Վանքային համալրը կրկին սկսել է գործել 19-րդ դարի երկրորդ կեսին: 1871-1880 թթ. վանքի շինությունները նորոգվում են վանահայր Թեոդորոս Շիրակացու կողմից:

Գյուղից 3 կմ հարավ կա ավերակ գյուղատեղի, ուր գտնվում են Հնեվանքը և Քոլատակի սբ. Աստվածածին եկեղեցին:

Արծվանիստ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 144 հուշարձան (16 միավոր):

1.3.16. Ախպրաձոր,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, մայրաքաղաքից 171 կմ, մարզկենտրոնից՝ 72 կմ հեռավորության վրա, բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2380 մ : Սահմանակից է Մաքենիս և Գեղաքար բնակավայրերին: Մինչև 1978 թվականը կոչվել է Վերին Զաղալու: Վարչական տարածքը՝ 4646.02 հա:

Կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը՝ զով: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -20^{0}C, հուլիսին՝ +22^{0}C:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 366 բնակիչ:

Տնային տնտեսությունների թիվը՝ 112:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 6200 մ^{2}՝ բաղկացած 90 անհատական բնակելի տներից:

Գյուղում կա մեկ դպրոց՝ 12–ամյա ուսուցմամբ: Դպրոցի հովանավորը շահույթ չհետապնդող the Hidden Road Initiative կազմակերպությունն է, որը մի շարք ամառային ծրագրր է կազմակերպում, ապահովում է համացանցով և համակարգիչներով:

Գյուղացիների մեծ մասը կարտոֆիլ է աճեցնում և վաճառում: Զբաղվում են նաև անասնապահությամբ: խոշոր եղջերավոր անասունների քանակը 874 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 995 գլուխ: Գյուղացիները մշտապես վաճառում են նաև պանիր և կարագ: Գյուղը նաև հայտնի է իր մեղրով:

Գյուղը գազաֆիկացված չէ, ունի գերեզմանատուն, աղբավայր չունի:

Գյուղ տանող գլխավոր ճանապարհը շատ սահմանափակ է և դժվարանցանելի: Ձմեռվա ընթացքում ձյան պատճառով երթևեկությունը ավելի է բարդանում, իսկ երբեմն ընդհանրապես անանցանելի է դառնում:

Գյուղը մի շարք ճարտարապետական և պատմական հուշարձանների բնօրրանն է: Այնտեղ կան հնամյա շինություններ և նախկին թուրք բնակիչների դամբարաններ:

Գեղարքունիքի մարզի Ախպրաձոր գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 17 հուշարձան (2 միավոր):

1.3.17. Ակունք

գյուղը գտնվում է Հայաստանի Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հարավ-արևելյան ափին, Վարդենիսի տարածաշրջանում, Վարդենիս քաղաքից 2 կմ դեպի հարավ, մարզկենտրոնից 72 կմ, մայրաքաղաքից 171 կմ, միջպետական մայրուղուց՝ 4 կմ հեռավորությամբ, ծովի մակարդակից 1991 մետր բարձրության վրա: Վարչական տարածքը՝ 9867.0 հա: Սահմանակից է Այրք, Խաչաղբյուր, Վարդենիս, Գեղաքար բնակավայրերին:

Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -6^{0}C, հուլիսին՝ +16-20^{0}C:

Նախկինում Կարաբուլաղ անվանումով ընդգրկված է եղել Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառում:

1828-1830թթ.. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Էրզրումի նահանգի Հին Բայազետի գավառի Ղարաքենդ գյուղից գաղթվածները եկել և 1830թ.-ին Արցունք-քար կոչվող հորդառատ աղբյուրի ակունքի մոտ՝ լեռան փեշին, հիմնել են նոր բնակատեղի և գյուղը կոչել Ղըրխբուլաղ (թարգանաբար

նշանակում է քառասուն ակունք) շնորհիվ գյուղի շրջակայքում բխող բազմաթիվ աղբյուրների: 1935թ.-ին գյուղը վերանվանվել է Ակունք:

Գյուղն ունի գլխավոր հատակագիծ:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 4056 բնակիչ:

Ունի դպրոց, մանկապարտեզ, 2 գրադարան, մարզադպրոց:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 85.650 հազ. մ^{2}՝ բաղկացած 714 անհատական բնակելի տներից:

Բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Խոշոր եղջերավոր անասունների քանակը 2630 գլուխ, մանր եղջերավորներինը՝3360 գլուխ, խոզերինը՝ 100:

Գյուղը գազաֆիկացված է, ունի գերեզմանատուն և աղբավայր:

Ակունք գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 137 հուշարձան (16 միավոր)

1.3.18. Գեղաքար

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոն Գավառից՝ 80 կմ հարավ-արևելք, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 179 կմ, միջպետական մայրուղուց՝ 11 կմ: Գտնվում է ծովի մակերևույթից 2150 մ բարձրության վրա, հեռավորությունը Սևանա լճի արևելյան ափից՝ 14 կիլոմետր: Վարչական տարածքը՝ 1708.77 հա: Սահմանակից է Խաչաղբյուր բնակավայրին:

Գյուղը նախկինում անվանել են Սուբաթան: Գեղաքար է վերանվանվել 1991 թվականի ապրիլի 1-ին: Օդի ջերմաստիճանը հունվարին՝ -20-ից -25^{0}C, հուլիսին՝ +20-ից +25^{0}C:

Գյուղի մոտ կան կարմիր տուֆի հանքեր:

Բնակչությունը գաղթել է Բաքվից և Սումգայիթից:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 155 բնակիչ:

Գյուղն ունի 1 հանրակրթական դպրոց: Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 3265 մ^{2}՝ բաղկացած 32 անհատական բնակելի տներից:

Գյուղի ամբողջ վարչական տարածքը գտնվում է թեք ռելեֆի վրա, հիմնականում՝ վարելահողեր են:

Բնակչությունը զբաղվում է խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ և դաշտավարությամբ: Խոշոր եղջերավոր անասունների թիվը կազմում է 273 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 519:

Գյուղը գազաֆիկացված չէ, ունի գերեզմանատուն, աղբավայր չունի:

Գեղաքարի արևելյան մասում գտնվում է քանդակազարդ խաչքարերով ու արձանագիր տապանաքարերով հայկական գերեզմանոց (15-17-րդ դդ.):

Գեղարքունիքի մարզի Գեղաքար գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 8 հուշարձան (3 միավոր):

1.3.19. Լճավան,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, Կարճաղբյուր գետի աջափնյակում, մարզկենտրոն Գավառից 65 կմ հարավ-արևելք: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 164 կմ, միջպետական մայրուղուց՝ 6 կմ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2040 մ բարձրության վրա: Վարչական տարածքը՝ 1728.14 հա: Սահմանակից է Ծովակ, Մաքենիս բնակավայրերին:

Բնակավայրը հանդիսանալով բարձրլեռնային գյուղ առանձնանում է իր ցրտաշունչ ձմեռներով և զով ամառներով: Օդի ջերմաստիճանը հունվարին՝ -10-ից +5^{0}C, հուլիսին՝ +20-ից +25^{0}C: Մթնոլորտային տեղումների քանակը՝ 500-800 մմ:

Բնակչության մի մասի նախնիները 1828-1829 թթ. գաղթել են Պարսկահայաստանի գավառներից, Կարսի մարզից և Մուշի ու Բուլանըխի գյուղերից՝ 1918-1920 թթ.:

Գյուղը գլխավոր հատակագիծ չի ունեցել:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 568 բնակիչ:

Տնային տնտեսությունների թիվը՝ 121:

Գյուղն ունի մեկ հանրակրթական դպրոց:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը՝ 9975 մ^{2}՝ բաղկացած 105 անհատական բնակելի տներից:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային մշակաբույսերի, ծխախոտի մշակությամբ և պտղաբուծությամբ:

Գյուղում կա 118 գյուղացիական տնտեսություն: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 1059 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 409:

Գյուղն ամբողջովին գազաֆիկացված է, ունի գերեզմանատուն և աղբավայր:

Գյուղից 1 կմ հարավ-արևմուտք գտնվում է Գթաշեն գյուղատեղին (15-17-րդ դդ.), հարավում կան սրբավայրեր՝ Մայր Աստվածածին և սբ. Սարգիս Ատենահաս: Գյուղի շրջակայքում է գտնվում մեկ ավերված եկեղեցի (13-14-րդ դդ.), միջնադարյան խաչքարեր ու գերեզմաններ, 3 կմ հարավ՝ “Սարի Սուրբ” մատուռ (15-17-րդ դդ.):

Գեղարքունիքի մարզի Լճավան գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 36 հուշարձան (6 միավոր):

1.3.20. Լուսակունք ,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոն Գավառից 65 կմ հարավ- արևելք, ծովի մակերևույթից 2003 մ բարձրության վրա: Սևանա լճի արևելյան ափից գտնվում է 4 կմ հեռավորության վրա, մայրաքաղաքից՝ 164 կմ, միջպետական մայրուղուց՝ 2 կմ: Վարչական տարածքը՝ 1246.12 հա:

Օդի ջերմաստիճանը հունվարին՝ -15-ից -25 ^{0}C, հուլիսին՝ +20-ից +25 ^{0}C: Միջին տարեկան տեղումների քանակը՝ 350-450 մմ:

Ներկայիս բնակչության մի մասի նախնիները 1829-1830 թթ. գաղթել են Մուշի գավառից, ինչպես նաև Պարսկաստանից, և բնակություն են հաստատել Վարդենիսի շրջանի Բասարգեչար, Նարիմանլու գյուղում, որից հետո 1830թ. տեղափոխվել և հիմք են դրել նոր գյուղի կազմավորմանը և այն անվանակոչել Թուսկուլու /այժմ՝ Լուսակունք/:

Գյուղը գլխավոր հատակագիծ չի ունեցել:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 1546 բնակիչ:

Տնային տնտեսությունների թիվը՝ 421:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, բուժ-կետ, մշակույթի տուն:

Տարրական դպրոց է հաճախում 89 աշակերտ, հանրակրթական դպրոց՝ 298 աշակերտ, մանկապարտեզ է հաճախում 38 երեխա:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը՝ 46.3 հազ. մ^2:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային մշակաբույսերի և ծխախոտի մշակությամբ:

Գյուղում կա 496 գյուղացիական տնտեսություն: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 1153 գլուխ, մանր եղջերավոր անասունների քանակը՝ 1075, խոզերի գլխաքանակը՝ 152:

Գյուղն ամբողջովին գազաֆիկացված է, ունի թվով 2 գերեզմանատուն՝ 2.0 հա ընդհանուր մակերեսով: Աղբավայր առկա չէ:

Գյուղի հարավային մասում են գտնվում սբ. Աստվածածին եկեղեցին (17-18դդ.), 10-20դդ. գերեզմանոց, 10-20դդ. և 12-13դդ. խաչքարեր:

Գեղարքունիքի մարզի Լուսակունք գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 11 հուշարձան (3 միավոր):

1.3.21. Խաչաղբյուր,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, մարզկենտրոն Գավառից 66 կմ հարավ-արևելք, մայրաքաղաքից՝ 165 կմ, միջպետական մայրուղուց՝ 2 կմ հեռավորությամբ: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: Վարչական տարածքը՝ 4717.38 հա: Սահմանակից է Լուսակունք, Ակունք, Գեղաքար բնակավայրերին:

Նախկինում ունեցել է Սովետակերտ, Չախըրլու անվանումները, 1991 թ. ապրիլի 3-ին վերանվանվել է Խաչաղբյուր:

Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախ են չորային, երաշտի տարիները, ինչի հետևանքով զգալիորեն տուժում է գյուղատնտեսությունը: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -20 աստիճան է, հուլիսին՝ +25: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը՝ 400 մմ:

Բնակչության մի մասի նախնիները 1915-1918 թթ. գաղթել են Արևմտյան Հայաստանի Մուշի, Վանի, Բասենի գյուղերից:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 1224 բնակիչ:

Տնային տնտեսությունների թիվը՝ 420

Գյուղը գլխավոր հատակագիծ չունի:

Ունի 1 հանրակրթական դպրոց, գրադարան: Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 24.220 հազ. մ^{2}՝ բաղկացած 296 անհատական բնակելի տներից:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, դաշտավարությամբ և ծխախոտի մշակությամբ: Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 850 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 1050 գլուխ, խոզերինը՝ 70 գլուխ:

Գյուղը գազաֆիկացված է, ունի գերեզմանատուն և աղբավայր:

Մոտակայքում են գտնվում Քռեր բնակատեղին (մ.թ.ա. 1-ին հզմ.-10-18դդ.) և Մուրադ խաչ ամրոցը (մ.թ.ա. 4-րդ-մ.թ. 5 դդ.) իսկ հարավային մասում՝ սբ. Բեթղեհեմ եկեղեցին (վերականգնված՝ 9դ.):

Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 19 հուշարձան (6 միավոր):

1.3.22. Ծովակ,

գյուղ Գեղարքունիքի մարզում, ծովի մակերևույթից 1920 մետր բարձրության վրա: Գյուղը գտնվում է Սևանի լճափնյա հարթավայրում, Մարտունի-Վարդենիս ավտոճանապարհի վրա, մարզկենտրոնից 60 կմ հարավ-արևելք: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 159 կմ, միջպետական մայրուղուց՝ 1 կմ: Վարչական տարածքը՝ 2638.54 հա: Սահմանակից է Լճավան, Վանևան բնակավայրերին:

Ունեցել է ներքին Չաղալու անվանումը, ստուգաբանվում է՝ Չաղա՝ նշանակում է հեր-քարայր, որոնցից մի քանիսը ստորգետնյա անցումներով կապված են եղել իրար հետ:

Գյուղը գտնվում է բարեխառն գոտում՝ ցամաքային կլիմային բնորոշ հատկանիշերով:

Ձմեռները տևական են, ցուրտ, ձնածածկույթով: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան միջին ջերմաստիճանը +4.6 ˚C է: Առավելագույն բարձր ջերմաստիճանը +32 ˚C, նվազագույնը՝ -35-36 ˚ C : Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -15 ◦ C , հուլիսին՝ +25 ◦ C: Տարեկան տեղումների քանակը 400-500 մմ (առավելագույնը՝ մայիսին):

1920-ական թվականներից այն հայտնի է եղել իր նավահանգստով որտեղից կապ է հաստատվել Սևան բնակավայրի հետ: Նավագնացությունը եղել է հիմնական տրանսպորտային միջոցը: Լճին հարող ցամաքը անտառապատ գոտի է: Հին գյուղի ավերակների և բնակիչների մասին վկայություններ կան ներկայիս գյուղի տարածքի արևմտյան բարձրադիր մասում: Ծովակը հետագայում կառուցվել է լճի արհեստական ցամաքեցման հետևանքով չորացված հողերի վրա:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 2718 բնակիչ:

Տնային տնտեսությունների թիվը՝ 780:

Գյուղն ունի 1 հանրակրթական դպրոց, մանկապրտեզ, 2 գրադարան:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 75 հազ. մ^{2}՝ բաղկացած 475 անհատական բնակելի տներից:

Բնակչությունը զբաղվում է ծխախոտագործությամբ, ձկնորսությամբ, կարտոֆիլի և հացահատիկի, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների մշակությամբ: Գյուղացիները զբաղվում են հիմնականում մանր և խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ, թռչնաբուծությամբ: Խոշոր եղջերավոր անասունների թիվը կազմում է 2285 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 4300 գլուխ, խոզերինը՝ 185 գլուխ:

Գյուղում պահպանվել են 19-րդ դարի սուրբ Աստվածածին եկեղեցին, 11-րդ և հետագա դարերում բազմաթիվ խաչքարեր, որոնցից 7-ը մի շարքի վրա են և կոչվում են «Յոթ եղբայր» (1013թ.): Գյուղից 1,5 կմ հյուսիս-արևելք կա «Ավերք» գյուղատեղի (մջնդ.), արևմտյան մասում՝ «Թուխ Մանուկ» մատուռ և գերեզմանոց: Շրջակայքում կան կիկլոպյան ամրոց-բնակավայր (մ.թ.ա. 1-ին հզմ.), Սարդուր II-ի սեպագիր արձանագրությունը (մ.թ.ա. 8-րդ դ.)։

Գեղարքունիքի մարզի Ծովակ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից։ Ցանկում ներառված է ընդամենը 26 հուշարձան (5 միավոր)։

1.3.23. **Կարճաղբյուր**,

գյուղ Սևանա լճի հարավ-արևելյան ափին, Վարդենիս-Երևան խճուղու մոտ, մարզկենտրոնից 55 կմ հարավ–արևմուտք, մայրաքաղաքից՝ 154 կմ

հեռավորությամբ, միջպետական մայրուղուց՝ 0-1 կմ հեռավորության վրա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2000 մ: Սահմանակից է Ծովակ, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր և Արծվանիստ բնակավայրերին: Սահման ունի նաև Արցախի Հանրապետության Քարվաճառի շրջանի հետ: Վարչական տարածքը՝ 5876.25 հա;

Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -15՝ C, հուլիսին՝ +22 ՝C: Միջին տարեկան տեղումների քանակը՝ 454 մմ:

Գյուղը հիմնադրվել է 1828թ. Արևմտյան Հայաստանի Մշո գավառից գաղթած 13 ընտանիքների կոմից և ավելացել է 1 դար հետո՝ Վանից գաղթած բնակիչներով:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 2327 բնակիչ:

Գյուղը գլխավոր հատակագիծ չի ունեցել:

Տնային տնտեսությունների թիվը՝ 739:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, մանկապարտեզ, բուժ-ամբուլատորիա, մշակույթի տուն:

Հանրակրթական դպրոց է հաճախում 710 աշակերտ, մանկապարտեզ՝ 90 երեխա:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը՝ 36 հազ., $մ^2$, բաղկացած 470 անհատական բնակելի տներից:

Գյուղում արտադրության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն է, բնակիչները հիմնականում զբաղվում են դաշտավարությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ:

Գյուղում կա 849 գյուղացիական տնտեսություն: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 1487 գլուխ, մանր եղջերավոր անասունների քանակը՝ 1329, խոզերի գլխաքանակը՝ 173:

Գործում է «Սևանի իշխան» ձկնարդյունաբերական ՓԲԸ-ը:

Գյուղն գրեթե ամբողջովին գազաֆիկացված է, ունի թվով 3 գերեզմանատուն՝ 3.14 հա ընդհանուր մակերեսով: Առկա է աղբավայր:

Կարճաղբյուրի շրջակայքում կան բազմաթիվ հնագիտական հուշարձաններ, որոնցից հնագույնները համանուն գետի ձորակում սփռված ժայռապատկերներն են: Գյուղից հարավ-արևելք գտնվում է «Բերդի դոշ» կոչվող կիկլոպյան ամրոցը (գրավում է 5 հեկտար տարածություն):

Սարահարթի բարձրադիր մասում ընկած է միջնաբերդը՝ շրջապատված 4 մետր լայնությամբ պարսպով, ունի լայն մուտք, որի մոտ պահպանվել են երկու հզոր բուրգերի հետքեր: Այս տարածքից հավաքած նյութերը հիմք են տալիս ենթադրելու, որ ամրոցն ու միջնաբերդը բնակեցված են եղել բրոնզի դարաշրջանից մինչև միջնադար: Ամրոցից հարավ և հարավ-արևելք պահպանված են երկու դոլմեն:

Հարավային մասում կան նաև կենցաղային պատկերներով միջնադարյան դամբարանադաշտ և խոշոր ժայռաբեկորներից ու

խաչքարերից կառուցված մատուռներ (անվանում են «Քարե դուռ»)։ Գյուղից 2 կմ արևմուտք, կոլտնտեսության արտերում, սփռված են մ.թ.ա. 3–րդ հազարամյակից մինչև 3–1–րդ դարերի դամբարանների խմբեր և մոտ 4 հեկտար տարածքով անտիկ ժամանակաշրջանի բնակավայր, որը կառուցված է եղել բավական կանոնավոր հատակագծով։

Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուր գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից։ Ցանկում ներառված է ընդամենը 71 հուշարձան (18 միավոր)։

1.3.24. Մաքենիս,

Գյուղը տեղակայված է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենսի քաղաքից 18 կմ հարավ-արևմուտք, հյուսիսից սահմանակից է Լճավան, հարավ-արվելքից՝ Ախպրաձոր, արևմուտքից՝ Կարճաղբյուր բնակավայրերին: Մարզկենտրոնից գտնվում է 68 կմ, մայրաքաղաքից՝ 167 կմ, հանրապետական նշանակության ավտոմայրուղուց՝ 7 կմ հեռավորության վրա: Ծովի մակերևույթից բարձր է 2200 մ-ով: Վարչական տարածքը՝ 4004.64 հա:

Բարձրադիրության և լեռնային գոտի լինելու հետևանքով կլիման ձմռանը ցրտաշունչ է, իսկ ամռանը չորային: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -20° C, հուլիսին՝ +17°C:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 486 բնակիչ:

Տնային տնտեսությունների թիվը՝ 152:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 7200 մ^2՝ բաղկացած 77 անհատական բնակելի տներից:

Բնակավայրի գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ: Աճեցնում են հիմնականում կարտոֆիլ, կաղամբ, աշնանացան ցորեն, գարի, և խոտ: Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 957 գլուխ, մանր եղջերավորներինը է 838, խոզերինը՝ 38 գլուխ:

Գյուղի ճանապարհները ասֆալտապատված չեն, ինչը մեծ դժվարություններ է առաջացնում և խոչնդոտում է գյուղի զարգացմանը:

Գյուղի գործող միակ կրթօջախը միջնակարգ հանրակրթական դպրոցն է, որն ունի անհատական ձեռուցման համակարգ: Գյուղում կա մանկապարտեզի շենք, որը սակայն չի գործում: Անմխիթար վիճակում գտնվող մշակույթի տունը ևս չի գործում:

Ունի գործող բուժկետ:

Բնայկավայրը գազաֆիկացված է, ունի գերեզմանատուն և աղբավայր:

Մաքենիս գյուղը հայտնի է Մաքենյաց վանքով, որը 9-10-րդ դդ. եղել է Մեծ Հայքի Գեղարքունիք գավառի ամենանշանավոր կրոնական-մշակութային

կենտրոնը: Պահպանվել են նաև 10-13 դարերում կառուցված եկեղեցին, 10-17 դարերի գերեզմանոց խաչքարերով:

Գեղարքունիքի մարզի Մաքենիս գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 48 հուշարձան (9 միավոր):

1.3.25. Մեծ Մասրիկ

գյուղը գտնվում է ՀՀ հյուսիս-արևելյան մասում, Սևանա լճի արևելյան ափից 15կմ հեռավորության և ծովի մակերևույթից 1960մ բարձրության վրա: Հեռավորությունը մայրզաքաղաքից՝ 173 կմ, մարզկենտրոնից՝ 74 կմ, միջպետականաս մայրուղուն հարակից: Գյուղի ամբողջ վարչական տարածքը գտնվում է հարթ ռելեֆի վրա, հիմնականում վարելահողեր են: Սահմանակից է Նորակերտ, Վարդենիս և Գեղամասար բնակավայրերին: Վարչական տարածքը՝ 3537.09 հա:

Նախկինում ունեցել է Մեծ Մազրա անվանումը, Մեծ Մասրիկ է վերանվանվել 1992թ.:

Գյուղի կլիման բարեխառն է և անկանխատեսելի տեղումների քանակը 450-600մմ, որը տեղում է մայիս և հունիս ամիսներին, ամառը երաշտ է, ձմեռը ցուրտ: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -20 աստիճան է, հուլիսին՝ +30:

Գյուղի միջով հոսում է Մասրիկ գետը, որը Սևան թափվող ամենաերկար գետն է: Գյուղը վերաբնակեցվել է 1920թ-ին Արևմտահայաստանից գաղթած հայերով 50%-ով և 1989թ-ին Ադրբեջանից բռնագաղթած հայերով: Ներկայումս գյուղի շուրջ 99% բնակեցված է հայերով:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 2699 բնակիչ:

Տնային տնտեսությունների թիվը՝ 750:

Գյուղը չունի գլխավոր հատակագիծ:

Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց, մեկ տարրական դպրոց, մեկ մանկապարտեզ, նախակրթարան: Գյուղում գործում է Մեծ Մասրիկի պոլիկլինիկան, որը սպասարկում է նաև հարևան բնակավայրերին:

Բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ:

Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 1143 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 1676 գլուխ, խոզերինըէ 106 գլուխ:

Գյուղը գազաֆիկացված է, ունի աղբավայր:

Գյուղն ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն: Կառուցվել է նոր եկեղեցի, գյուղում է գտնվում 8-րդ դարի հանրաճանաչ խաչքարը, 10-12-րդ դարերի եկեղեցու ավերակները, գերեզմանատներ, Մելիք Շահնազարյանների տոհմային գերեզմանատունը, հեթանոսական շրջանի դամբարանադաշտեր, նոր ժամանակների հուշարձաններ և այլն:

Մեծ Մասրիկ գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 65 հուշարձան (12 միավոր):

1.3.26. Նորակերտ

գյուղը գտնվում է ՀՀ հյուսիսարևելյան մասում, Սևանա լճի արևելյան ափից 5 կմ հեռավորության և ծովի մակերևույթից 1950 մ բարձրության վրա: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 181 կմ, մարզկենտրոնից՝ 82, միջպետական մայրուղուց՝ 1 կմ: Սահմանակից է Փոքր Մասրիկ, Գեղամասար, Ավազան, Արփունք, Վարդենիս և Ծովակ բնակավայրերին: Վարչական տարածքը՝ 2739.12 հա:

Գյուղի կլիման բարեխառն է և անկանխատեսելի, տեղումների քանակը 450-600մմ, որը տեղում է մայիս և հունիս ամիսներին, ամառը երաշտ է, ձմեռը՝ ցուրտ: Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -25 C, հուլիսին՝ +30 ˚C:

Գյուղը կառուցվել է 1927 թ-ին և բնակեցվել է Արևմտյան Հայաստանից գաղթած հայերով: Ներկայումս գյուղի շուրջ 98 % -ը բնակեցված է հայերով: Գյուղում ապրում են նաև ազգությամբ քուրդ երկու ընտանիք:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 868 բնակիչ:

Գյուղն ունի գլխավոր հատակագիծ:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը կազմում է 13640 մ^{2}՝ բաղկացած 167 անհատական բնակելի տներից:

Գյուղն ունի մեկ դպրոց, մեկ մանկապարտեզ: Գազաֆիկացված չէ, ունի գերեզմանոց, աղբավայր:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ:

Գյուղն ունի 260 գյուղացիական տնտեսություն: Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմում է 894 գլուխ, մանր եղջերավորներինը՝ 3300 գլուխ, խոզերինը՝132 գլուխ:

Գյուղը գազաֆիկացված չէ, ունի գերեզմանատուն և աղբավայր:

1.3.27. Վանևան

Գյուղ ՀՀ Գեղարքունիքի մարզում (Վարդենիսի տարածաշրջան): Գյուղը գտնվում է Սևանա լճից 4 կմ հեռավորության վրա, հյուսիս-արևելյան ուղղությամբ: Հեռավորությունը մայրաքաղաքից՝ 163 կմ, մարզկենտրոնից՝ 64 կմ, միջպետական մայրուղուց՝ 0.5 կմ: Սահմանակից է Տորֆավան և Ծովակ բնակավայրերին: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1964 մ: Վարչական տարածքը՝ 798.83 հա:

Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -18 ˚C, հուլիսին՝ +25 ˚C: Տեղումների միջին տարեկան քանակը՝ 50 մմ:

Գյուղը հիմնադրվել է 1930թ.: Գյուղում նախկինում բնակվել են Ազերիներ, 1988թ. վերաբնակեցվել է Ադրբեջանից, հիմնականում Բաքու քաղաքից եկած փախստականներով:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 344 բնակիչ:

Տնային տնտեսությունների թիվը՝ 98:

Գյուղը գլխանոր հատակագիծ չունի:

Գյուղն ունի միջնակարգ դպրոց, բուժ-կետ:

Հանրակրթական դպրոց է հաճախում 63 աշակերտ:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը՝ 10.3 հազ. մ^2:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ և դաշտավարությամբ:

Գյուղում կա 96 գյուղացիական տնտեսություն: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 224 գլուխ, մանր եղջերավոր անասունների քանակը՝ 285, խոզերի գլխաքանակը՝ 14:

Գյուղը գազաֆիկացված չէ, ունի գերեզմանատուն՝ 1 հա մակերեսով: Աղբավայր առկա չէ:

Վանևան գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 4 հուշարձան (4 միավոր):

1.3.28. Տորֆավան,

գյուղ Հայաստանի Գեղարքունիքի մարզում, ծովի մակերևույթից գտնվում է 1950 մետր բարձրության վրա, մայրաքաղաքից՝ 163 կմ, մարզկենտրոնից՝ 64 կմ, միջպետական մայրուղուց՝ 1 կմ հեռավորությամբ: Վարչական տարածքը՝ 710.37 հա:

1988-1989 թթ համայնքը վերաբնակեցվեց փախստականներով, որոնք գաղթել են Ադրբեջանից: Տորֆավան համայնքում գյուղապետարանը ստեղծվել է 1991 թվականին:

Օդի միջին ջերմաստիճանը հունվարին՝ -15˚ C, հուլիսին՝ +15 ˚C: Միջին տարեկան տեղումների քանակը՝ 60 մմ:

Գյուղը հիմնադրվել է 1828թ. Արևմտյան Հայաստանի Մշո գավառից գաղթած 13 ընտանիքների կողմից և ավելացել է 1 դար հետո՝ Վանից գաղթած բնակիչներով:

Ըստ ՀՀ վիճակագրական Կոմիտեի տվյալների 2019թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղն ունի 468 բնակիչ:

Գյուղը գլխավոր հատակագիծ չի ունեցել:

Տնային տնտեսությունների թիվը՝ 128:

Գյուղը չունի դպրոց, դպրոցահասակ երեխաները հաճախում են Վանևանի և մասամբ Լուսակունքի միջնակարգ դպրոցները:

Գյուղն ունի բուժ-կետ, մշակույթի տուն /չի գործում/:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը՝ 3.006 հազ., մ^2, բաղկացած անհատական բնակելի տներից:

Գյուղում արտադրության հիմնական ճյուղը գյուղատնտեսությունն է, բնակիչները հիմնականում զբաղվում են դաշտավարությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ և անասնապահությամբ:

Գյուղում կա 128 գյուղացիական տնտեսություն: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 227 գլուխ, մանր եղջերավոր անասունների քանակը՝ 815, խոզերի գլխաքանակը՝ 37:

Արդյունաբերական ձեռնարկություններ չկան:

Գյուղը գազաֆիկացված չէ, ունի թվով 3 գերեզմանատուն: Աղբավայր չունի:

Գեղարքունիքի մարզի Տորֆավան գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 20 հուշարձան (5 միավոր):

ԳԼՈՒԽ 2

ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

2.1.Հեռանկարային բնակչություն

Բնակչության հեռանկարային քանակի հաշվարկների նախկին կանխատեսումային և աշխատանքային հաշվեկշռի մեթոդներով տարբերակներն այլևս կիրառելի չեն:

Այնուհանդերձ, քաղաքային բնակավայրի համար բնակչության հաշվարկի համար առաջարկվում է հետևյալ մեթոդաբանությունը՝

Մարտունի բնակչության հեռանկարային աճը (բնակչության առավելագույն չափը) որոշված է ըստ ՙՀՀ տարաբնակեցման գլխավոր նախագծի՚ հիմնադրույթների՝ ելնելով հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից (քաղաքապատկան տարածքի դեմոգրաֆիական տարողունակության որոշման մեթոդով): Ըստ այդ հաշվարկի հեռանկարային բնակչությունը կազմում է 10.0 հազար մարդ (գոյություն ունեցողը՝ 5.602 հազ. մարդ): Քաղաքի բնակչության առավելագույն չափի ապահովման համար ժամկետներ չեն նախատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր զարգացման տեմպերից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:

Մոտակա հեռանկարի՝ գլխավոր հատակագծի գործողության ժամկետի շրջանակում քաղաքի և գյուղական բնակավայրերի հեռանկարային հաշվարկները կատարվել են՝ հաշվի առնելով առկա միտումները (բնական աճի և միգրացիայի): Ստորև աղյուսակում ներկայացված են բնակավայրերի առկա և հեռանակարային բնակչության թվքանակը և դրանց հիման վրա հաշվարկվել սոցիալական հաստատությունների պահանջարկը:

Միկրոռեգիոնի ներկա և հեռանկարային բնակչության թվաքանակը տրված է ստորև աղյուսակում.

* /աղբյուրը՝ https://www.armstat.am/am/

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ			
հ/հ	Բնակավայրը	2019թ.* հունվարի 1-ի դրությամբ	Հեռանկարային
Գեղարքունիք-4			
1	Ծովինար	4655	5120
2	Արծվանիստ	3204	3524
3	Ախպրաձոր	366	403
4	Ակունք	4056	4462
5	Գեղաքար	155	170
6	Լճավան	568	625
7	Լուսակունք	1546	1701
8	Խաչաղբյուր	1224	1346
9	Ծովակ	2718	2990
10	Կարճաղբյուր	2327	2560
11	Մաքենիս	486	535
12	Մեծ Մասրիկ	2699	2969
13	Նորակերտ	868	955
14	Վանևան	344	378
15	Տորֆավան	468	515

2.2. Հասարակական սպասարկման ոլորտ

1. Հաշվարկված ժամանակահատվածում բնակելի նոր բնակելի շենքերի կառուցման ծավալը կկազմի բնակչության հեռանկարային զարգացման քանակի հաշվով գյուղական բնակավայրերում բնակելի ֆոնդի անհրաժեշտ պահանջը բավարարելու պայմանից ելնելով:
2. Կառուցապատման գերակշիռ մասը կիրականացվի անհատական բնակելի կառուցապատման հաշվին՝ հիմնականում սեփականատերերի միջոցներով՝ տնամերձ հողամասերով մեկից երեք (երկու լիարժեք և մեկ մանսարդ) հարկանի առանձնատների միջոցով: Որոշակի հատվածը կառաջարկվի ցածր հարկայնության միջին խտության բազմաբնակարանների (թաունհաուսների) տեսքով՝ տանը կից փոքրաչափ հողամասերի հետ: Եվ որոշակի հատված կնախատեսվի սոցիալական բնակարանաշինության շրջանակում՝ այն

բնակավայրերում, որտեղ առկա է ոչ գյուղատնտեսական ոլորտի արտադրական հզորություններ՝ բնակչության որոշակի հատվածի համար բազմաբնակարան բնակելի ֆոնդում բնակության և բնակավայրի կամ համայնքի սահմաններում պատշաճ աշխատանքի ապահովման համար։

3. Վերոնշյալ բնակարանային շինարարության ծավալների և հարկայնության հարաբերակցության համար առաջարկվում է հետևյալ նախընտրելի տարբերակը.
   - ✓ միջին հարկայնության բնակելի շենքեր (4-5 հարկ)՝ մոտ 4 %;
   - ✓ սակավահարկ բնակելի շենքեր (մինչև 4 հարկ)՝ մոտ 6-10 %;
   - ✓ Տնամերձ հողամասերով անհատական բնակելի շենքեր՝ հողամասերով՝ մոտ 86-90 %:
4. Բնակարանային նոր շինարարություն տեղավորելու համար կպահանջվի.
   - ✓ միջին բարձրության բնակելի շենքեր (4-5 հարկ)՝ բնակչության հեռանկարային քանակը նվազագույն բնակելի մակերեսով ապահովելու և հարակից հատվածում առաջնային սպասարկման հաստատությունների տեղակայան պահանջից։
   - ✓ սակավահարկ բնակելի շենքեր (մինչև 4 հարկ)՝ բնակչության հեռանկարային քանակը նվազագույն բնակելի մակերեսով ապահովելու, բնակարաններին կից փոքրաչափ հողամաս-պարտեզի կազմակերպման և հարակից հատվածում առաջնային սպասարկման հաստատությունների տեղակայան պահանջից։
   - ✓ Տնամերձ հողամասերով անհատական բնակելի շենքեր՝ տվյալ բնակավայրի մեկ հողամասի չափաբաժնից և անբաժանելի հողամասի չափից ելնելով (հաշվի առնելով հեռանկարային բնակչության քանակը)։

2.1. **Սոցիալական ձեռնարկատիրություն**,

Հիմնական դրույթներ

վենչուրային բիզնեսի մեթոդների օգտագործում սոցիալական, մշակութային կամ էկոլոգիական խնդիրների նորարարական որոշումների ներդրման, ֆինանսավորման, վերամշակման համար։ Այս դեպքում սոցիալական ձեռնարկատիրությունը մոտենում է կամավոր (ոչ կոմերցիոն, կամավորական) սեկտորին։ Սոցիալական ձեռնարկատիրության հայեցակարգը կարող է գործածական լինել կազմակերպությունների լայն շրջանակի համար, որոնք տարբեր են իրենց չափերով, հետապնդվող նպատակներով։

Եթե սովորական ձեռնարկատերերը, որպես կանոն, գնահատում են իրենց գործունեության հաջողությունը՝ կողմնորոշվելով դեպի շահույթը, եկամուտը (վաճառքների ծավալ) կամ բաժնետոմսերի արժեքը, ապա սոցիալական ձեռնարկատիրոջ համար հաջողության գլխավոր չափանիշը դառնում է «սոցիալական նվիրումը»։ Շահույթը կարող է ուշադրության տակ առնվել,

սակայն ոչ թե որպես ինքնանպատակ, այլ ավելի շուտ որպես հետագա առաջխաղացման միջոց կազմակերպության մշակութային կամ սոցիալական նպատակներին հասնելու համար։

Ժամանակակից հասարակությունում սոցիալական ձեռնարկատիրությունը ենթադրում է բիզնեսի վարման ալտրուիստական ձև, որը կենտրոնացած է հասարակական շահերի վրա։ Ավելի պարզ ասած՝ ձեռնարկատիրությունը դառնում է սոցիալական, երբ այն փոխում է սոցիալական կապիտալն այնպես, որ այն սկսում է դրական ազդեցություն ունենալ հասարակության վրա։ Այդ ազդեցությունը սոցիալական ձեռնարկատիրոջ կողմից դիտարկվում է որպես շահի ձեռքբերում, քանի որ սոցիալական ձեռնարկատիրոջ հաջողությունը կախված է մի շարք գործոններից, որոնք կապված են սոցիական փոխազդեցության հետ։ Սոցիալական ձեռնարկատերերը ձգտում են վերափոխել հասարակությունն ամբողջապես, այլ ոչ թե քաղել նրանից առավելագույն շահույթ, ինչպես դասական ձեռնարկատերերը։

Հասարակության վերափոխման գործընթացում սոցիալական ձեռնարկատերերը, որպես կանոն, գործ են ունենում անմիջականորեն սուր սոցիալական խնդիրների հետ, բացի այդ՝ ձգտում են դիտարկել դրանք լայն ենթատեքստում, գիտելիքների, տեսությունների, հայեցակարգերի տարբեր ոլորտների զուգակցման կետում։ Նման մոտեցումը ավելի լավ հասկացողություն է տալիս հասարակական խնդիրների արմատների մասին, թույլ է տալիս մշակել նորարարական որոշումներ և մոբիլիզացնել գոյություն ունեցող և ձեռքի տակ գտնվող ռեսուրսները հասարակության վրա առավել մեծ ազդեցության համար համաշխարհային մասշտաբով։ Ինչպես մասնավոր, այնպես էլ պետական գործակալությունները ողջ աշխարհում աջակցություն են ցուցաբերում կարիքավոր խմբերին և անձանց, ընդհանուր առմամբ՝ տարեկան միլիարդներ դոլարների չափով։ Նման աջակցությունը կարող է նպաստել նորարարական գաղափարների ձևավորմանն ու լայն տարածմանը

Հաշվի առնելով միջազգային փորձը սոցիալական ձեռնարկատիրության զարգացման հարցում, ինչպես նաև անցկացնելով մի շարք հանդիպումներ Հայաստանում սոցիալական ձեռնարկատիրությամբ զբաղվող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ի հայտ է բերվել ոլորտում առկա խնդիրների հաղթահարման հետևյալ փաթեթը.

1. սահմանել ձեռնարկատիրությունը որպես սոցիալական ձեռնարկատիրություն, եթե այն համապատասխանում է ստորև բերված բոլոր կետերին.

1) հիմքում ընկած է որևէ սոցիալական խնդրի լուծում և կիրառվում է «սոցիալական խնդիր – բիզնես մոդել – բիզնես լուծում – սոցիալական դրական տրանսֆորմացիա» մոտեցումը՝ չխախտելով կանաչ մտածողության սկզբունքը, և/կամ ստեղծվել է բացառապես սոցիալապես խոցելի խավի աշխատանքային ինտեգրումն ապահովելու նպատակով, կամ աշխատողների առնվազն 40%-ը, բայց 4 հոգուց ոչ պակաս, հաշմանդամություն ունեցող մարդիկ են,

2) ստացված նվիրատվությունների և դրամաշնորհների հատկացումները չեն գերազանցում շրջանառության 30%-ը,

3) շահույթի առնվազն 50%-ը ներ է դրվում կազմակերպության զարգացումը խթանելու նպատակով և/կամ ուղղվում է կանոնադրությամբ (բացառությամբ ԱՁ-ի, ով ցանկացած այլ եղանակով նախապես հայտարարում է իր հետաքրքրության դաշտում գտնվող սոցիալական ազդեցության ուղղությունը) սահմանված սոցիալական ազդեցության ապահովմանը.

- սոցիալական ազդեցության գնահատումը ներառում է, բայց և չի սահմանափակվում հետևյալ ոլորտներով.

• մարդկանց կենսակերպը – ինչպես են ապրում, աշխատում, հանգստանում և հաղորդակցվում միմյանց հետ,

• մարդկանց մշակույթը – համոզմունքները, սովորույթները, արժեքները և լեզուն,

• համայնքը – կայունությունը, ծառայությունները և ենթակառուցվածքները,

• որոշումների կայացում – որքանով են մարդիկ իրավունակ մասնակցելու այն որոշումների կայացման հարցում, որոնք ազդում են իրենց կյանքի վրա,

• շրջակա միջավայր – օդի և ջրի որակ, սննդի հասանելիություն և որակ, վտանգների և աղետների ռիսկի մակարդակ, սանիտարական վիճակի համապատասխանություն, ֆիզիկական անվտանգություն, ռեսուրսների հասանելիություն և դրանց նկատմամբ վերահսկողություն,

• առողջություն և բարեկեցություն – առողջությունը ներկայացվում է որպես համալիր ֆիզիկական, մտավոր, սոցիալական և հոգևոր բարեկեցություն և ընկալվում է ոչ միայն, որպես հիվանդությունների բացակայություն,

• սոցիալական ազդեցության վերաբերյալ տեղեկատվությունը և հաշվետվությունը պետք է լինեն հրապարակային,

4) չի գործում սահմանված այն ոլորտներում, որոնց շրջանակներում ՍՁ-ները գործել չեն կարող, օրինակ, ծխախոտի ու ալկոհոլի արտադրություն, որսորդություն, հանքարդյունաբերություն, և այլն,

5) որդեգրել է կառավարման բարեխիղճ հիմունքներ՝ թափանցիկություն, բացություն, մասնակցային կառավարում կամ ներառական որոշումների կայացում:

2.2. Աճի բևեռներ

Ընդհանուր դրույթներ.

Աճի բևեռն ունի երեք հիմնական բաղադրիչ.

1) առաջատար ոլորտ՝ արդյունաբերություն, շարժիչ ոլորտ՝ աճի մեծ ներուժով և նորարարելու բարձր ունակությամբ,

այլ կերպ ասած ՝ մեծ բազմապատկման (մուլտիպլիկացիոն) էֆեկտ ունեցող արդյունաբերություն (այդպիսի արդյունաբերությունները երբեմն անվանում են շարժիչ).

2) տեղական նշանակության ոլորտների (արդյունաբերության) խումբ, որի հետ կապված է «մուտքային-ելքային» տիպի հարաբերությունների համակարգի միջոցով: Այս հարաբերությունները ծառայում են որպես առաջատար արդյունաբերության ազդեցությունը ողջ տնտեսության վրա տեղափոխելու միջոց;

3) արտադրության տարածական ագլոմերացիա (համախմբում)՝ որը ձեռնարկություններին ապահովում է «արտաքին տնտեսությամբ»: Առաջանում են փոխկապակցված ազդեցությունների շարք, որոնք բարենպաստ պայմաններում կարող են մեծապես փոխել մարզերի տնտեսական միջավայրը: «Աճի բևեռը» նորարարությունների ինքնատիպ գեներացնող է (նոր համադրություններ), բայց միայն դրանց տարաբաշխումն է ապահովում զգալի տնտեսական էֆեկտ: Ուստի համակարգի ներդրման կարևորությունը ոչ միայն նորամուծությունն է, այլև դրա տարածումը ուղեկցող, թեկուզ աննշան բարելավումների, փոքր նորարարությունների մեջ:

«Աճի բևեռներ» և «ուղիներ» ստեղծելու և «ազդեցությունների ընդլայնման» տարածման համար հարցում որոշիչ դերը պատկանում է պետությանը, որը պետք է ներդաշնակեցնի զարգացումը, նվազեցնի կամ հասցնի ընդունելի մասշտաբով տարասեռությունը կամ անհավասարությունը տնտեսության, արդյունաբերության և շրջանների միջև: Աճի բևեռի ներդրումն անհրաժեշտ է վարել ներդաշնակ աճի քաղաքականություն որը, հիմնվելով ինդիկատիվ պլանավորման վրա, ապահովում է մակրո միավորների, տարբեր մարզերի և սոցիալական խմբերի շահերի համադրումը:

«Աճի բեւեռների»՝ տարածաշրջանային տեսության աճի հետագա զարգացումն ու կոնկրետացումը նկատառում է, որ արտադրության աճը միատեսակ չի կատարվում տնտեսության բոլոր ճյուղերում. Միշտ հնարավոր է առանձնացնել դինամիկ, այսպես կոչված, շարժիչ արդյունաբերությունը: Դրանք խթանում են ամբողջ տնտեսության զարգացումը՝ ներկայացնելով «զարգացման բևեռները»: «Մուտքային-ելքային» տիպի հարաբերությունների համակարգի միջոցով նորարարության ազդեցությունը փոխանցվում է ամբողջ տնտեսությանը: Արտադրության կենտրոնացման գործընթացը կենտրոնացնում է արդյունաբերությունը որոշակի կետում (տարածաշրջանում) ՝ «աճի կենտրոնում» (բևեռ):

Առաջարկվում է առանձնացնել «աճի բևեռների» հետևյալ տեսակները.

- Փոքր և «դասական» քաղաքներ, որոնք մասնագիտացված են և սպասարկում են հարակից գյուղերը.
- միջին ազդեցության արդյունաբերական քաղաքներ՝ տնտեսության դիվերսիֆիկացված կառուցվածքով, որոնք զարգանում են ի հաշիվ արտաքին ազդեցությունների.
- քաղաքային խոշոր ագրոմերացիաներ, ներառյալ՝ շարժիչ արդյունաբերությունները, որոնք որոշում են աճի ինքնավարությունը, ինտեգրման բևեռները, ընդգրկելով մի քանի քաղաքային համակարգեր և կանխորոշելով տարածական կառուցվածքների ամբողջ էվոլյուցիան: Ինքնավար աճը բնորոշ է միայն կենտրոնական տեղերի վերին հիերարխիկ մակարդակներին, մինչդեռ ստորին տարածքային կառույցների աճը որոշվում է նորարարությունների տարածման մեխանիզմներով:

«Աճի բևեռների» զարգացման հետագա տարածական տեղաբաշխումն իրականացվում է զարգացման առանցքների շուրջ: Աճի բևեռների և տրանսպորտային կապեր ապահովող տարածքները լրացուցիչ աճի ազդակներ ստանան բեռնափոխադրումների ավելացման, նորարարության տարածման և ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ: Ուստի դրանք վերածվում են զարգացման առանցքների (միջանցքների), որոնք «աճի բևեռների» հետ միասին որոշում են մեծ տարածաշրջանի կամ երկրի տնտեսական աճի տարածական շրջանակը:

Տնտեսական աճի բևեռների զարգացման գործընթացում առկա են հետևյալ առանձնահատկությունները.

1) աճի բևեռ կարող է լինել ձեռնարկությունների տարածաշրջանային համալիրը, որը կապված է տարածաշրջանի արտահանման հետ (ոչ միայն առաջատար արդյունաբերության հետ):

2) բևեռների համակարգը և դրանցից յուրաքանչյուրն անհատապես աճում են՝ տարածաշրջանի արտահանման ոլորտի միջոցով փոխանցվող համապետական պահանջարկի ազդակների հաշվին.

3) աճի ազդակը փոխանցվում է երկրորդական արդյունաբերություն ձեռնարկությունների, ինչպես նաև աշխարհագրական ծայրամասերի միջև շուկայական հարաբերությունների միջոցով:

«Նորարարության տարածում» մոդելը զարգանում է չորս փուլերով.

<u>Առաջին,</u> կամ նախնական փուլը բնութագրվում է դիֆուզիոն (տարածման) գործընթացի սկիզբով և կենտրոնների, նորարարության

տարածման աղբյուրների և ծայրամասային տարածքների միջև սուր հակադրությամբ:

<u>Երկրորդում</u> սկսվում է իրական դիֆուզիան, և գործում են հզոր կենտրոնախույս ուժեր: Դա հանգեցնում է հեռավոր շրջաններում արագ զարգացող նոր կենտրոնների ձևավորմանը և առաջին փուլին բնորոշ կտրուկ տարածաշրջանային հակադրությունների կրճատմանը:

<u>Երրորդ</u> - (խտացման փուլում) նույն ընդլայնումը տեղի է ունենում բոլոր երեք մակարդակներում:

<u>Չորրորդում</u> (հագեցվածության փուլում) կա ընդհանուր, բայց դանդաղ վերելք դեպի առավելագույն զարգացում:

«Տարածական տեղաբաշխման» շատ դեպքերում փոփոխությունները չեն լինում միաժամանակ բոլոր կետերում, սովորաբար դրանք սկսվում են փոքր քանակի վայրերից, որտեղից դրանք տարածվում են այլ վայրեր՝ կապի ուղիների երկայնքով, հանգույցների միջոցով, իջնելով հիերարխիկ մակարդակներով:

Աճի բևեռների ձևավորման գործընթացում հնարավոր է նաև «հրաբուխ» մոդելի իրականացումը՝ քաղաքային խոշոր բնակավայրն իր զարգացած արդյունաբերությամբ և հզոր գիտական բազայով ունի մեկ շնչի հաշվով եկամտի ամենաբարձր մակարդակը, որն ապահովվում է նորարարության պարբերական ազդակներով: Նորարարությունների լավայի ժայթքումը նման «աճի բևեռում» աստիճանաբար տարածվում է ծայրամասերում և ուղեկցվում է հետամնաց շրջանների բարեկեցության մակարդակի աստիճանական բարձրացմամբ: Միևնույն ժամանակ, առկա է նորարարությունների ազդակների պարբերականություն, ըստ որի վաղ թե ուշ դրանք մարում են ցանկացած կենտրոնում: Նորարարական միջավայրի վերացումը տեղի է ունենում քաղաքային ագլոմերացիաներին բնորոշ բացասական գործոնների ազդեցության ներքո և հանգեցնում է «հրաբխի մարմանը» և երբեմնի առաջադեմ կենտրոնի վերածմանը հետընթաց ապրող հին արդյունաբերական տարածքի: Միևնույն ժամանակ, տնտեսական պայմանների մեծ ցիկլերի ավարտից հետո, նորարարության նոր կենտրոններ կարող են առաջանալ:

Աճի բևեռների ներդրման հիմնական գաղափարն այն է, որ տարածական- տնտեսական զարգացումը կամ աճը միասնական չէ ողջ տարածաշրջանի համար, այլ փոխարենը ձևավորվում է հատուկ բևեռի (կամ կլաստերի) շուրջ: Նշված բևեռը բնութագրվում է տնտեսական խթանների՝ հիմնական (առանցքային)՝ արտադրությունների առկայությամբ, որոնց շուրջ զարգանում են հարակից արտադրությունները՝ հիմնական ուղղակի և անուղղակի ազդեցությունների միջոցով: Հիմնական արտադրությունը կարող է ներառել ոլորտների լայն տեսականի՝ ավտոմոբիլային, օդագնացություն, ագրոբիզնես, էլեկտրոնիկա, պողպատի, թեթև, սննդի, վերամշակման և այլն:

Ուղղակի հետևանքները նկատառում են.

- հիմնական արդյունաբերություն՝ իր մատակարարներից (հարակից մտակարար արտադրություններ) ապրանքներ և ծառայություններ գնելու կամ իր հաճախորդներին ապրանքներ և ծառայություններ տրամադրելու գործընթացը:

Անուղղակի հետևանքները կարող են ներառել.

- հիմնական և հարակից արդյունաբերության ոլորտներում աշխատող մարդկանց կողմից ապրանքների և ծառայությունների պահանջարկը (մանրածախ վաճառքը), որոնք խթանում են տնտեսական գործունեության զարգացումը և ընդլայնումը:

Աճի բևեռն ունի աշխարհագրական և տարածաշրջանային նշանակություն, քանի որ բնորոշվում է որպես քաղաքային տարածքում տեղակայված և զարգացող արտադրությունների համախումբ, որը նկատառում է տնտեսական գործունեության հետագա զարգացում իր ազդեցության ողջ գոտում: Տարածքը, որտեղ տեղակայված են «ընդլայնվող» կամ «շարժիչ» կամ «գերակայող» արտադրությունները, դառնում է տարածաշրջանի աճի բևեռը և խթանում ագլոմերացիայի միտումները:

Աճի բևեռների ձևավորման գործընթացում հարկ է առանձնացնել բևեռացման 4 հիմնական տեսակ.

- տեխնոլոգիական և տեխնիկական - հիմնված աճի բևեռում նոր տեխնոլոգիաների կենտրոնացման վրա,
- Եկամուտի վրա հիմնված. Աճի բևեռը նպաստում է կենտրոնացմանը և եկամտի աճին՝ ծառայությունների ընդլայնման և պահանջարկի ու շահույթի փոխկախվածության միջոցով,
- հոգեբանական, որը հիմնված է շարժվող տարածաշրջանում ապագա պահանջարկի լավատեսական ակնկալիքի վրա,
- աշխարհագրական, հիմնված աշխարհագրականորեն ընտրված տարածքում տնտեսական գործունեության կենտրոնացման վրա:

Այնուհանդերձ, միջազգային փորձը ոլորտում ցույց է տալիս, որ ակնկալվող արդյունքի հարցում կանխատեսումներն իրատեսական չեն:

Գյուղն աստիճանաբար կորցնում է իր գրավչությունը ՝ որպես ապրելու և աշխատելու տեղ ՝ գործազրկության բարձր մակարդակի և ցածր եկամուտների պատճառով: Չնայած պետության աջակցությանը, գյուղի հիմնախնդիրները դեռ լիովին լուծված չեն: գյուղական բնակավայրերում զարգացել են տնտեսական, սոցիալական և, որպես արդյունք, ժողովրդագրական բնույթի խնդիրներ: Բոլոր մակարդակների տարածքների կառավարման արդյունավետության վրա բացասաբար է անդրադառնում ինտեգրված մոտեցման բացակայությունը, որը օբյեկտիվորեն պետք է բնութագրի գյուղական տարածքների զարգացման առանձնահատկությունները՝ կապելով դրանք գյուղական վայրերում տնտեսական, կազմակերպչական, կարգավորող և իրավական հարաբերությունների ռացիոնալացման հետ: Այս առումով անհրաժեշտ է որոշել մրցունակ տարածքի գերակա հատկանիշները, մշակել և գործնականում ներդնել գյուղական տարածքների համայնքային կառավարում՝ մրցակցային դիրքերը գնահատելու և ղեկավարելու նոր մոտեցումներով, որոնք ապահովում են գյուղական տարածքի ներդրումային և ռեսուրսային ներուժի զարգացման հիմքերը: Հետևաբար, ժամանակակից գյուղական զարգացման ծրագրերը պետք է համալրված լինեն համալիր մոտեցմամբ նախագծերով, որոնք ընդգրկում են ոչ միայն գյուղատնտեսական արտադրական ոլորտը, այլև սոցիալ-կենցաղային ենթակառուցվածքը, զբոսաշրջությունը և գործողունեության այլ տեսակներ, որոնք նպաստում են գյուղական տնտեսության արդյունավետության բարձրացմանը և գյուղական բնակավայրերում կյանքի որակի բարելավմանը:

Գեղարքունիք 4-ի բնակավայրերի շրջանակում որպես պոտենցիալ աճի բևեռներ (զբոսաշրջային) հանդես գալու նախադրյալներով օժտված են Արծվանիստ և Ծովակ բնակավայրերը: Բնակավայրերն ունեն ափամերձ հատվածներ, օժտված են պատմության և մշակույթի հուշարձաններով (վանական համալիր, քարայրների շարք):

Արդյունաբերական և զբոսաշրջային աճի բևեռի նախադրյալներ առկա են Կարճաղբյուր բնակավայրում՝ հանձինս շրջակայքի հնագիտական հուշարձանների (ժայռապատկերներ) տեղաբաշխման և «Սևանի իշխան» ձկնարդյունաբերական ՓԲԸ տեղակայման:

Նշված աճի բևեռների շուրջ իրենց զարգացման հիմնակմախքը կստեղծեն նաև հարակից բնակավայրերը՝ ձևավորելով տարբեր նշանակության կլաստերներ միմյանց հետ ֆունկցիոնալ հատակագծային և աշխատանքային կապերով փոխկապակցված միավորումների տեսքով: Նշված կապերը կխթանեն մրցակցային գործընթացը բնակավայրերի միջև՝ փոխլրացնելով և ավելի բարձր մակարդակի հասցնելով յուրաքանչյուրի զարգացման գործընթացը:

Այդ նպատակով աճի յուրաքանչյուր բևեռում (կլաստերի միջուկում) նախատեսվում է իրականացնել որոշակի լրացուցիչ ենթակառուցվածք՝ սպասարկելու բնակավայրին նոր վերագրվող գործառույթը: Դրանք ներառում են.

- Զբոսաշրջային կացարաններ (հյուրանոց, հյուրատուն, հացուկաց, վրանային ճամբարներ),
- հանրային սննդի հաստատություններ,
- ժամանցային հաստատություններ,
- տեղեկատվական կենտրոններ,
- մարզասրահներ, մերսման սրահներ,
- թանգարաններ,
- հուշանվերների վաճառքի և արտադրության սրահներ,
- կազմակերպված լողափեր՝ ամառ-ձմեռ սեզոնների համար (ծածկած լողավազաններով և այլն):

«Սևանի իշխան» ձկնարդյունաբերական ՓԲԸ համալիրն իր մեջ արդեն իսկ ներառում է գործընթացի արդյունավետ գործարկումն ապահովող համապարփակ ենթակառուցվածքները:

Համալրելու համար կարող են լրացվել արտադրության դիտարկման համար լրացուցիչ սրահներ, ցուցահանդես վաճառքի կազմակերպման, փորձի փոխանակման համար այցելությունների կազմակերպման ցուցադահլիճներ, փորձագետների բնակության և լճի էկոհամակարգերի քննարկմանը նվիրված գիտաժողովների կազակերպման դապլիճներ և այլն:

Աճի բևեռի հիմնական գործառույթը վերոնշյալ շղթայում կլաստերում ներառված յուրաքանչյուր բնակավայրի առավել հատկանշական

ուղղվածության հենքի հիման վրա իրեն հատուկ դերակատարումը գտնելն է, որպես մեկ միասնական շղթային անփոխարինելի օղակ ձևավորելը և ողջ համակարգը գործի գցելը: Հետագա զարգացումները կկանխորոշեն ընտրված գործիքակազմի ճշմարիտությունը կամ անճշտությունների առկայության դեպքում հնարավորություն կընձեռնվի որոշակի շտկումներ մտցնելու հաշվին դարձյալ վերագործարկել ածի բևեռը՝ առավել բարձր մակարդակում և տևական արդյունքների հասնելու նպատակով: Ընդ որում, շտկումների գործընթացում հնարավոր է բացահայտվեն նոր հնարավորություններ և կատարվի ածի բևեռի ֆիզիկական տեղաշարժ՝ մեկ բնակավայրից դեպի մեկ այլ բնակավայր, միևնույն ժամանակ կատարելով նաև ածի բևեռի գործառույթի փոփոխություն: Գործընթացի նկարագրված դինամիկան կշարունակի «լողացող կլաստերի» կարգավիճակի այնքան փոփոխությունների շրջանակում, մինչև ավտոնոմ կերպով՝ առանց լրացուցիչ ճնշման ինքնաբերաբար կանխորոշվի առավել կենսունակ տարբերակը:

2.3. Սահմանամերձ գոտի

Համաձայն «Հայաստանի Հանրապետության պետական սահմանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության՝ պետական սահմանագծից Հայաստանի Հանրապետության տարածքի խորքը մինչև 5 կմ լայնությամբ ծավալվող տարածքը կոչվում է սահմանային գոտի: Իսկ սահմանային գոտու մի մասը, որը հարում է պետական սահմանին՝ մինչև 1 կմ լայնությամբ, կոչվում է սահմանային շերտ:

ՀՀ կառավարության 1998 թվականի նոյեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների ցանկը հաստատելու մասին» թիվ 713 որոշմամբ սահմանամերձ համայնքների (բնակավայրերի) ցանկերը հաստատելիս հիմք են ընդունվել հետևյալ չափանիշները՝

ա) Ադրբեջանի Հանրապետության հետ պետական սահմանի սահմանային գոտում գտնվելը.

բ) Հայաստանի Հանրապետության սահմանային շերտում գտնվելը.

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 1993-1995 թվականների որոշումներով հաստատված ցանկերում ընդգրկված լինելը:

Նշված չափանիշներին համապատասխան՝ սահմանամերձ տարածաշրջան ունեն Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերը:

Հավելված N 1
ՀՀ կառավարության 1998 թվականի
նոյեմբերի 17-ի N 713 որոշման

Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերն են.

Ց Ա Ն Կ

Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների

Մարզը	Համայնքը	Բնակավայրը
1	2	3
Գեղարքունիք	Արծվաշեն	գ. Արծվաշեն
	Վահան	գ. Վահան
	Թթուջուր	գ. Թթուջուր
	Արտանիշ	գ. Արտանիշ
	Ջիլ	գ. Ջիլ
	Ճամբարակ	քաղ. Ճամբարակ
	Կուտական	գ. Կուտական
	Սոթք	գ. Սոթք
	Վերին Շորժա	գ. Վերին Շորժա
	Ներքին Շորժա	գ. Ներքին Շորժա
	Ծափաթաղ	գ. Ծափաթա
	Փամբակ	գ. Փամբակ
	Դարանակ	գ. Դարանակ
	Գեղամասար	գ. Գեղամասար
	Ավազան	գ. Ավազան
	Արփունք	գ. Արփունք
	Վարդենիս	քաղ. Վարդենիս
	Նորաբակ	գ. Նորաբակ
	Կութ	գ. Կութ
	Արեգունի	գ. Արեգունի
	Կախակն	գ. Կախակն
	Տրետուք	գ. Տրետուք
	Շատվան	գ. Շատվան

Հայաստանի Հանրապետության կառավարություն 2014 թվականի n 1444-ն որոշման մեջ հետևյալ փոփոփխությունը կատարելու՝ հայաստանի հանրապետության սահմանամերձ համայնքների բնակավայրերին սոցիալական աջակցության տրամադրման նպատակով փոխհատուցման կարգը, ժամկետները, չափորոշիչները և աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկը հաստատելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 21-ի N 271-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին որոշման հավելվածի ցանկում ներկայացված են սոցիալական աջակցություն ստացող համայնքները։

(վերնագիրը փոփ. 15.12.16 N 1266-Ն, խմբ. 12.02.21 N 184-Ն)

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման

Ց Ա Ն Կ

Սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի

(վերնագիրը խմբ. 12.02.21 N 184-Ն)

ՀՀ Գեղարքունիքի մարզ	Ճամբարակ	ք. Ճամբարակ
		գ. Վահան
	Վարդենիս	գ. Ներքին Շորժա
		գ. Վերին Շորժա
	Գեղամասար	գ. Սոթք
		գ. Ազատ
		գ. Կութ
		գ. Նորաբակ

Սահմանամերձ տարածաշրջանների ներկա վիճակը և հիմնախնդիրները

Սահմանամերձ տարածաշրջանների հիմնախնդիրներն են՝

- տնտեսական ներուժի անկումը,
- հողային ֆոնդի անարդյունավետ օգտագործումը,
- օգտագործվող ցանքատարածությունների ու բազմամյա տնկարկների կրճատումը,
- ֆինանսական միջոցների բացակայությունը կամ սակավությունը,
- մարտական գործողությունների և տարերային աղետների հետևանքով շարքից դուրս եկած կամ խիստ վնասված ենթակառուցվածքները (բնակարանային ֆոնդ, շինություններ, ճանապարհներ, խմելու ջրագծեր, առողջապահական, կրթական, կուլտուր-կենցաղային օջախներ, ոռոգման ցանցեր և կոյուղագծեր),
- ականապատման և կյանքի անվտանգության երաշխիքների բացակայության պատճառով սահմանամերձ տարածքների օգտագործվող հողատեսքերի կրճատումը,
- տարիներով չնորոգված դպրոցական շենքերը, բուժկետերի, մշակույթի օջախների բացակայությունը կամ քայքայված վիճակը,
- բնակչության թվի զգալի նվազումը,
- երիտասարդության արտահոսքն ու ծնելիության մակարդակի անկումը և այլն,
- մարդատար-բեռնատար տրանսպորտային և հեռախոսային կապի անմխիթար վիճակը,
- բեռնափոխադրումների հեռահարությունը, բարձր սակագները,
- մշտական աշխատատեղերի բացակայությունը և ցածր աշխատավարձը,
- վերամշակող ձեռնարկությունների գրեթե անգործությունը,

- մատակարար-գնորդ ենթակառուցվածքների բացակայությունը և այլն:

Սահմանամերձ տարածաշրջանների համայնքների (բնակավայրերի) զարգացման հիմնախնդիրների լուծման ուղիներն ըստ առաջնահերթության

Նշված խնդիրների լուծման ուղիներն են՝

ա) տնտեսական և ֆինանսական պայմանների բարելավումը, նոր աշխատատեղերի ստեղծումը: Այդ նպատակով՝

- հարկային արտոնությունների տրամադրում, համայնքներին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրավճարների հատկացում,

- ազատ ձեռներեցությամբ զբաղվելու համար համայնքի անդամներին ու վերաբնակիչներին արտոնյալ պայմաններով վարկերի հատկացում, միջազգային տարբեր ծրագրերով ստացված ֆինանսական միջոցներից որոշակի մասի նպատակաուղղում արտադրության կազմակերպմանը,

- բնակավայրերի տարածքային զարգացման և կառուցապատման հիմնական ուղղություններն ամրագրելու նպատակով սահմանամերձ բնակավայրերի համար քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակում՝ ընդգրկելով սոցիալական, ռեկրեացիոն, արտադրական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքները,

- մատակարար-գնորդ-սպառող ենթակառուցվածքների ձևավորում, եղածների գործունեության բարելավում,

- օժանդակություն համայնքներին՝ գյուղատնտեսական, արդյունաբերական, վառելիքաէներգետիկ համակարգի, սննդի և վերամշակող ձեռնարկությունների վերագործարկման, նոր աշխատատեղերի ստեղծման գործում,

- կապի և գազամատակարարման խնդիրների լուծում՝ տնտեսավարող սուբյեկտների գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու միջոցով,

- բեռնատար և մարդատար տրանսպորտի աշխատանքների բարելավում.

բ) <u>Գյուղատնտեսություն</u>

- խախտված հողերի գույքագրում և դրանց վերականգնման նախագծերի մշակում,

- գյուղատնտեսական շրջանառությունից դուրս մնացած և տարբեր պատճառներով չմշակվող վարելահողերի և մյուս հողատեսքերի արտադրության մեջ ներգրավում,

- պետական պահուստային ֆոնդի հողերի օգտագործման սխեմաների և դրանց ներդրման մեխանիզմների մշակում,

- հեռագնա ամառային և ձմեռային արոտավայրերի արդյունավետ օգտագործման, դրանց բարելավման, վերաբաշխման և օգտագործման սխեմաների ներդրման մեխանիզմների մշակում,

- վնասված պտղատու և խաղողի այգիների վերականգնում, նորերի հիմնում,

- մելիորատիվ անբավարար վիճակում գտնվող գյուղատնտեսական հողատեսքերի վերականգնում,
- գյուղատնտեսության կոոպերացիայի զարգացմանը, գյուղացիական միությունների, ընկերությունների, կոոպերատիվների ձևավորմանը պետական աջակցության ապահովում,
- մելիորացիայի զարգացման ճանապարհով ներքին ջրօգտագործման խնդիրների լուծումը,
- մարդասիրական օգնության աղբյուրներով ստացվող և գյուղատնտեսության մեջ օգտագործվող ռեսուրսների առաջնահերթ բաշխումը (առանց աճուրդի) Ադրբեջանին սահմանակից տարածաշրջաններում, այնուհետև՝ ըստ սահմանամերձ բնակավայրերի, դասակարգման մյուս խմբերի,
- մատչելի տոկոսադրույքներով և պայմաններով վարկային ռեսուրսների տրամադրում և այլն.

գ) բնակավայրերի գլխավոր հատակագծերի մշակում՝ ներառելով սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքների վերականգնումը՝

- խմելու ջրի հիմնախնդրի լուծում,
- դպրոցական շենքերի վերականգնում կամ նորերի հիմնում,
- բուժկետերի վերականգնում կամ հիմնում,
- ոռոգման ցանցի վերակառուցում,
- ճանապարհների, հաղորդակցուղիների վերականգնում կամ հիմնում,
- գազամատակարարման վերականգնման ու առանձին բնակավայրերի գազիֆիկացման աշխատանքների իրականացում,
- հեռախոսակապի ապահովում,
- էլեկտրամատակարարման ապահովում,
- հեռուստակապի ապահովում:

Այս ոլորտների ֆինանսավորման աղբյուր կարող են ծառայել ոչ միայն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցները, այլև միջազգային կազմակերպությունների և դոնորների տրամադրած վարկերն ու դրամաշնորհները, այդ թվում՝ Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի (ՀՍՆՀ) միջոցները.

դ) մարտական գործողություններից և տարերային աղետներից ավերված ու վնասված բնակարանների վերականգնումը, բնակչության արտահոսքի կանխարգելումը, լքված ու սակավ բնակեցված բնակավայրերի վերաբնակեցումը, հեռացած բնակիչների վերադարձի կազմակերպումը: Այդ նպատակով՝

- միջազգային ծրագրերի միջոցով անտոկոս երկարաժամկետ վարկերի տրամադրում՝ ավերածությունների հետևանքները վերացնելու, վերաբնակիչների համար նոր բնակարաններ կառուցելու նպատակով,
- սահմանված չափով տնամերձ հողամասերի անհատույց հատկացում,
- Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների վարչական տարածքներում գտնվող՝ պետական սեփականություն համարվող

պահուստային ֆոնդի հողերի անհատույց սեփականաշնորհում և սեփականության իրավունքի վկայականների անհատույց տրամադրում,

- պետպատվերի շրջանակներում գյուղացիական տնտեսություններից գյուղմթերքների գնում:

ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ, ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ) ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Նշված հիմնական սկզբունքներն են՝

ա) համալիր ծրագրով նախատեսվող միջոցառումների կենսագործման և արտոնությունների տրամադրման նկատմամբ տարբերակված մոտեցումը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության մարզերի ու կոնկրետ համայնքների (բնակավայրերի) ռազմավարական նշանակությունը.

բ) սահմանամերձ համայնքների (բնակավայրերի)՝ արտակարգ իրավիճակներում պաշտպանության ապահովման, տնտեսական, սոցիալական, քաղաքաշինական և բնապահպանական խնդիրների լուծման նկատմամբ համակարգված մոտեցումը: Այդ նպատակով՝

- սակավաբնակ բնակավայրերի ամրապնդում,

- սահմանային գոտու թույլ զարգացած տարածքներում քաղաքաշինական-տնտեսական առաջնահերթ զարգացման ռեժիմի սահմանում,

- տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքների կրկնակված ցանցի, տեղական նշանակության ճանապարհների ցանցի տեղաբաշխում,

- սահմանամերձ գոտու արտադրական ներուժի պահպանման նպատակով ռեսուրսաօգտագործման հատուկ ռեժիմի սահմանում,

- սահմանային գոտում գտնվող՝ ռազմավարական նշանակության աղբյուրների և արտեզյան ջրերի պահպանության ապահովում:

2.4. Հողերի ռեկուլտիվացիա

Միկրոռեգիոնի տարածքում շահագործվում են Ծովակի ավազ և մանրագլաքարակոպիճի, Ծովակի պեմզային ավազների, /հյուսիսային տեղ/, Մասրիկի տորֆի /Գիլի-1 տեղ. / հանքավայրերը: Վերջիններիս շահագործումից և պաշարների սպառումից հետո հողատարածքների դեգրադացված տեղամասը կանխելու նպատակով անհրաժշտ է իրականացնել շահագործված հանքավայրերի՝ նախագծային փաստաթղթերով նախատեսված ռեկուլտիվացման աշխատանքներ՝ տարածքներին նոր գործառույթներ վերագրելու միջոցով դրանք վերադարձնելու նոր տնտեսական յուրացման մեջ (ռեկրեացիոն գոտիներ՝ կանաչապատ ծառատնկումներով, այգեպուրակներ, խաղահրապարակներ, արևային էլեկտրակայաններ և այլն):

Դեգրադացված են համարվում այն հողերը, որոնք մարդու ուղղակի կամ անուղղակի ազդեցությամբ կորցրել են իրենց սկզբնական տնտեսական արժեքը և բացասական աղբյուր են հանդիսանում շրջակա միջավայրի համար: Անթրոպոգեն լանդշաֆտներում մարդու ագրեսիվ ճնշման

հետևանքով ոչնչացվել է բուսականությունը, փոփոխվել են մակերևույթային շերտի հիդրոլոգիական ռեժիմները և տեղանքի ռելիեֆը, ոչնչացվել կամ աղտոտվել է հողային ծածկոցը: Հողերի ռացիոնալ օգտագործումն ու պահպանումը պետք է իրականացնեն բոլոր շահառուները՝հողօգտագործողները, հողատերերը, վարձակալները: Ռեկուլտիվացիայի (վերականգնում) տեսակները՝ Գյուղատնտեսական: Իրականացվում է աշխատանքների այնպիսի համալիր, որպեսզի հողերը հնարավոր լինի օգտագործել գյուղատնտեսական նպատակով: Անտառային: Քայքայված հողերի օգտագործում անտառների տնկման և էրոզիայի դեմ պայքարելու նպատակով: Ձկնատնտեսային: Վերականգնված հողային տարածքներում ջրամբարների կառուցում ձկների բուծման նպատակով

Ջրատեսային: Վերականգնված հողային տարածքների վրա տարբեր նպատակներով ջրամբարների ստեղծում: Ռեկրեացիոն: Ռեկուլտիվացված հողերի վրա հանգստյան և զբոսաշրջային վայրերի ստեղծում: Շինարարական: Խախտված և քայքայված հողերի վերականգնում մինչև այն աստիճան ,որ հնարավոր լինի դրանք օգտագործել շինարարական նպատակներով: Հողերի ռեկուլտիվացիան իրականցվում է հատուկ սահմանված կարգով՝ հողային աշխատանքների հետ միասին կամ ոչ ուշ, քան հողային աշխատանքների ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում:

Հողերի ռեկուլտիվացիան կատարվում է 2 փուլով՝

2. Տեխնիկական — նախատեսվում է պլանավորում, ակոսների ձևավորում, բերրի հողաշերտի հանում և տեղափոխում, հիդրոտեխնիկական և մելիորատիվ կառույցների կառուցում, թունավոր նյութերի խորը թաղում, ինչպես նաև այլ աշխատանքների իրականացում՝ հետագայում ռեկուլտիվացված հողերի նպատակային օգտագործման համար:
3. Կենսաբանական—ներառում է ագրոտեխնիկական և ֆիտոմելիորատիվ միջոցառումների համալիր, որոնք ուղղված են ագրոֆիզիկական, կենսաբանաքիմիական և հողի այլ հատկությունների բարելավմանը:

Հողերի բերրի շերտի հանված մասն օգտագործվում է խախտված հողերի ռեկուլտիվացիայի կամ ցածր բերրիություն ունեցող հանդակների բարելավման համար: Բերրի հողաշերտի այլ նպատակով օգտագործումը, որը կապված չէ գյուղական և անտառային տնտեսության հետ, թույլատրվում է միայն բացառիկ դեպքերում, երբ տնտեսապես նպատակահարմար չէ կամ բացակայում է գյուղատնտեսական նշանակության և անտառային ֆոնդի հողերի բարելավման նպատակով օգտագործման հնարավորությունը:

Դեգրադացված հողերի ռեկուլտիվացիայի մեթոդները և նպատակները.

Հողերի ռեկուլտիվացիայի նպատակն է վերականգնել առաջնային նշանակության հողատարածքները, որոնք դուրս են մնացել գյուղատնտեսության բնագավառում օգտագործումից: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ճիշտ կազմակերպման համար պետք է անցկացնել հողի որակական գնահատում՝ սահմանված բալերով, որոնք արտահայտում են հողի բերրիության մակարդակը տվյալ տնտեսության համար, որը հնարավորություն է տալիս ռացիոնալ օգտագործել երկրի հողային ֆոնդը և պլանավորված կերպով բարձրացնել հողի բերրիությունը: ՀՀ հողային ծածկույթի յուրօրինակությունը, տարբեր հողատիպերի առկայությունը և խոնավացման տարբեր աստիճանները պահանջում են ռեկուլտիվացիոն միջոցառումների տեխնոլոգիաների տարբերակում:

- Բույսերի նորմալ կենսագործունեության համար հողի ներքին հատկությունների փոփոխում՝ստեղծելով
- բարենպաստ ջրաօդային ռեժիմ մելիորատիվ գործունեության միջոցով,
- հողերի թթվայնության օպտիմալ վիճակ՝ կրայնացմամբ,
- հողում հումուսի բավարար պաշարի և սնուցման համար անհրաժեշտ տարրերի օպտիմալ քանակության ապահովություն հանքային և օրգանական պարարտանյութերի ներմուծման ճանապարհով

2. Հողատարածքների վիճակների բարելավում
3. Միջոցառումներ, որոնք կնպաստեն հողի բերրիության բարձրացմանը Հողերի բերրիության բարձրացման մեթոդներն են՝

- կենսաբանական — հողում օրգանական նյութերի առաջացման և քայքայման գործընթացների կարգավորում, մշակաբույսերի ճիշտ ընտրություն, ցանքաշրջանառության ճիշտ կազմակերպում,
- քիմիական — հանքային պարարտանյութերի, կրային և կավային հողերի օգտագործում, որոնք ապահովում են հողի բերրիություն
- ֆիզիկական — հողի ագրոֆիզիկական հատկությունների կառուցվածք, խտություն, ծակոտկենության և հերկվող շերտի կառուցվածքային վիճակի փոփոխություն: Ռեկուլտիվացիայի ավելի արդյունավետ արդյունքներ են ստացվում նշված երեք մեթոդների զուգակցումից:

2.5. *Բնակավայրերի հեռանկարային զարգացման ցուցանիշներ*

Առաջարկվել է ժամանակի ընթացքում ֆիզիկական և բարոյական մաշվածության, ներկայում նոր տեխնոլոգիաների և սպառման շուկաների վերափոխման արդյունքում գործարկումից դուրս եկած արդյունաբերական տարածքների գործառնական նշանակությունների աստիճանական վերափոխում՝ տարածքներն օգտագործելով որպես ներքին պահուստներ՝ տարբեր ֆունկցիոնալ գոտիների կազմավորման համար (հաշվի առնելով ներքին պահուստների սակավությունը)։

Տարածքների մակերեսները հնարավորություն են ստեղծում նոր՝ բնակավայրի նորաստեղծ ընտանիքների համար 3-4 հարկանի բազմաբնակարան ինքնաբավ թաղամասերի (ենթակենտրոնով՝ մշակութային կենցաղային, հասարակական, վարչական և առևտրական սպասարկումներով)։

Բնակավայրերի տարածքների կառուցապատումը ներկայացված է գլխավորապես բնակելի կառուցապատմամբ, հասարակական սպասարկման օբյեկտների ինչպես կենտրոնացած, այնպես էլ դիսպերս տեղակայմամբ։

Գյուղերի կենտրոնական հատվածում որոշակիորեն ձևավորված է հասարակական կենտրոն՝ կից տեղակայված է մշակույթի տան շենքը։ Համայնքի կենտրոնական հատվածում՝ ձևավորված փոքրաչափ հասարակական միջուկում առկա են լինում նաև հանրային տարածքներ՝ մանկական կազմակերպված խաղահրապարակներով, սահարաններով, տարածքի ընդհանուր բարեկարգմամբ, կանաչապատմամբ։

Բնակավայրերի տարածքներում զգալի պահուստային տարածքները բացակայում են։ Հեռանկարային հատակագծային կառուցվածքով առաջարկվել է նախ ի հայտ բերել ներքին պահուստներ՝ առավել արդյունավետ և կոմպակտ կազմակերպելու բնակավայրերի հիմնակմախքը։

Առանձին բնակավայրերի առաջարկների շրջանակում ներառված են առավել կոնկրետ առաջարկներ՝ բնակավայրերի զարգացման պահուստային տարածքների առավել արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական արտադրական տարածքների, ենթակառուցվածքների, զբոսաշրջային յուրացման տարածքների բարեկարգման ուղղությամբ։

Գյուղական բնակավայրերի համար առաջարկվել է որոշակիորեն ձևավորված հանրային կենտրոնների՝ հավաքատեղիների բարեկարգում, հանրային և սպորտային տարածքների համակարգի, դրանց միջև բարեկարգ ճանապարհների ցանցի ձևավորում։ Նախատեսվում են զբոսաշրջային ոլորտի զարգացման ն ուղղված օբյեկտների կառուցումը գյուղական բնակավայրերում (հյուրատներ, հանրային սննդի և ժամանցային հաստատություններ և այլն)՝ նշված պահանջարկի համար ևս պայմաններ ստեղծելու նպատակով։

Բնակավայրերի հեռանկարային զարգացումն ապահովելուն միտված հողամասերի նպատակային և գործառնական փոփոխությունների ապահովումը նախագծում իրականացված է հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունների գծագրում՝ համապատասխան աղյուսակներում և փոփոխման ենթակա հողամասի հանգուցային կետերի կոորդինատային նշահարմամբ:

Միկրոռեգիոնի բնակավայրերի տարածքներում բարենպաստ և ենթակառուցվածքներով ու հանրային տարածքներով հագեցած կենսամիջավայրի ձևավորմանն ուղղված կատարվել են հողատեսքերի մի շարք նպատակային և գործառնական փոփոխություններ, որոնք արտացոլված են ստորև ներկայացվող նպատակային նշանակությունների փոփոխությունների աղյուսակներում: Փոփոխությունները ներկայացված են ըստ գերակայությունների՝ առաջնահերթ, միջնաժամկետ և հեռանկարային: Դրանց համապատսխան կատարվել են նաև փոփոխություններ հողատեսքերի հաշվետվություններում, ինչն արտացոլված է տեխնիկատնտեսական ցուցանիշների աղյուսակներում:

Ակունք

Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները				
Հողամասի N գծագրի վրա	**Առկա նպատակային և գործառնական նշանակությունը**	**Մակերեսը (հա)**	**Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը**	**Մակերեսը (հա)**
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				
	Բնակավայրերի հողերից՝			
			Բնակավայրերի	
ԲԲ-1	*Բնակելի կառուցապատման*	0.38	*հասարակական կառուցապատման*	0.38
ԲԲ-2	*Բնակելի կառուցապատման*	0.02	*հասարակական կառուցապատման*	0.02
Ընդհանուր		**0.4**		
ԲԲ-3	*այլ հողեր*	0.02	*հասարակական կառուցապատման*	0.02
ԲԲ-4	*այլ հողեր*	0.014	*հասարակական կառուցապատման*	0.014
Ընդհանուր		**0.034**		
ԲԲ-5	*այլ հողեր*	0.01	*ընդհանուր օգտ. հողեր /փողոցներ/*	0.01
Ընդհանուր		**0.01**		
			Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր	
ԲԱ-1	*այլ հողեր*	0.40	գյուղատնտեսական	0.40

			արտադրական	
Ընդհանուր		**0.40**		
	Հատուկ պահպանվող հողերից՝			
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ՀԷ-1	պատմության և մշակույթի	2.26	կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/	2.26
ՀԷ-2	պատմության և մշակույթի	0.22	կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/	0.22
ՀԷ-3	պատմության և մշակույթի	2.55	կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/	2.55
ՀԷ-4	պատմության և մշակույթի	0.14	կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/	0.14
Ընդհանուր		**5.17**		
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Հատուկ պահպանվող հողեր	
ԳՀ-1	*արոտ*	2.74	պատմության և մշակույթի	2.74
ԳՀ-2	*արոտ*	2.87	պատմության և մշակույթի	2.87
ԳՀ-3	*արոտ*	10.6	պատմության և մշակույթի	10.6
Ընդհանուր		**16.21**		
	Բնակավայրերի հողերից՝			
ԲՀ-1	*այլ հողեր*	0.45	պատմության և մշակույթի	0.45
Ընդհանուր		**0.45**		
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	
ԳԷ-1	*արոտ*	2.0	կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/	2.0

*«**Գեղարքունիք-4**» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

Ընդհանուր		**2.0**		
	Հատուկ պահպանվող հողերից՝			
			Բնակավայրերի	
ՀԲ-1	*պատմության և մշակույթի*	0.10	*Բնակելի կառուցապատման*	0.10
Ընդհանուր		**0.10**		

	Տեխնիկատնտեսական ցուցանիշներ				
	Ցուցանիշը	**Չափման միավորը**	**Փաստացի**	**Առաջնահերթ**	**Հեռանկարային**
	1	2	3	4	5
	Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	**հա**	**9867.0**	**9867.0**	**9867.0**
	Բնակավայրերի հողեր, որից՝	**հա**	**424.91**	**424.06**	**424.16**
	բնակելի կառուցապատման	հա	349.25	348.85	348.95
	հասարակական կառուցապատման	հա	1.89	2.324	2.32
	խառը կառուցապատման	հա			0.00
	ընդհանուր օգտագործման,	հա	*58.57*	58.58	58.58
	Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	հա			0.00
	այլ տարածքներ	հա			0.00
	այլ հողեր	հա	15.2	14.307	14.31
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝	**հա**	**35.57**	**35.97**	**35.97**
	արդյունաբերական օբյեկտների	հա		0	0
	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	35.57	35.97	35.97
	պահեստարանների	հա		0	0
	ընդերքի օգտագործման	հա		0	0
	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	հա	**2.44**	**7.61**	**9.61**
	էներգետիկայի	հա	0.73	0.73	0.73

	կապի	հա		0	
	տրանսպորտի	հա		0	
	կոմունալ ենթակառուցվածքների	հա	1.71	6.88	8.88
	Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	**հա**	**36.77**	**48.26**	**48.16**
	բնապահպանական	հա		0	0
	հանգստի համար նախատեսված	հա		0	0
	պատմական և մշակութային	հա	36.77	48.26	48.16
	Հատուկ նշանակության հողեր	**հա**			
	Գյուղատնտեսական նշանակության հողեր,	հա	**9332.79**	**9316.58**	**9314.58**
	վարելահող	հա	1722.11	1722.11	1722.11
	բազմամյա տնկարկներ	հա			0
	խոտհարքներ	հա	221.3	221.3	221.3
	արոտավայր	հա	6434.11	6417.9	6415.9
	այլ հողատեսքեր	հա	955.27	955.27	955.27
	Անտառային հողեր	հա	**14.0**	**14.0**	**14.0**
	Ջրային հողեր	հա	**20.52**	**20.52**	**20.52**
	գետեր	հա	12.03	12.03	12.03
	ջրամբարներ	հա		0	0
	լճեր	հա	3.82	3.82	3.82
	ջրանցքներ	հա	4.67	4.67	4.67
	հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա		0	0

Արծվանիստ

Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները				
Հողամասի N գծագրի վրա	**Առկա նպատակային և գործառնական նշանակությունը**	**Մակերեսը (հա)**	**Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը**	**Մակերեսը (հա)**
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Բնակավայրերի	
ԳԲ-1	*վարելահող*	3.28	բնակելի կառուցապատում	3.28
ԳԲ-2	*վարելահող*	1.06	բնակելի կառուցապատում	1.06
ԳԲ-3	*վարելահող*	3.84	բնակելի	3.84

			կառուցապատում	
ԳԲ-4	*վարելահող*	1.76	բնակելի կառուցապատում	1.76
ԳԲ-5	*վարելահող*	1.64	բնակելի կառուցապատում	1.64
ԳԲ-6	*վարելահող*	4	բնակելի կառուցապատում	4
Ընդհանուր		*15.58*		
ԳԲ-7	*այլ հողատեսքեր*	0.76	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.76
ԳԲ-8	*այլ հողատեսքեր*	0.13	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.13
ԳԲ-9	*այլ հողատեսքեր*	0.17	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.17
ԳԲ-10	*այլ հողատեսքեր*	0.1	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.1
ԳԲ-11	*այլ հողատեսքեր*	0.1	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.1
ԳԲ-12	*այլ հողատեսքեր*	0.129	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.129
ԳԲ-13	*այլ հողատեսքեր*	0.16	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.16
ԳԲ-14	*այլ հողատեսքեր*	0.1	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.1
Ընդհանուր		*1.649*		
			Հատուկ պահպանվող հողեր՝	
ԳՀ-1	*այլ հողատեսքեր*	12.21	պատմության և մշակույթի	12.21
ԳՀ-2	*այլ հողատեսքեր*	5	պատմության և մշակույթի	5
ԳՀ-3	*այլ հողատեսքեր*	3.3	պատմության և մշակույթի	3.3
ԳՀ-4	*այլ հողատեսքեր*	0.03	պատմության և մշակույթի	0.03
Ընդհանուր		*20.54*		
ԳՀ-5	*արոտավայր*	0.01	պատմության և	0.01

			մշակույթի	
ԳՀ-6	*արոտավայր*	7.5	պատմության և մշակույթի	7.5
ԳՀ-7	*արոտավայր*	2.2	պատմության և մշակույթի	2.2
Ընդհանուր			*9.71*	
	Բնակավայրերի հողերից՝			
ԲՀ-1	*այլ հողեր*	0.01	պատմության և մշակույթի	0.01
Ընդհանուր			*0.01*	
	Հատուկ պահպանվող հողերից՝			
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ՀԷ-1	պատմության և մշակույթի	1.77	կոմունալ ենթակառուցվածքների / գերեզմանոց/	1.77
ՀԷ-2	պատմության և մշակույթի	1.91	կոմունալ ենթակառուցվածքների / գերեզմանոց/	1.91
Ընդհանուր			***3.68***	
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Բնակավայրերի	
ԳԲ-15	*վարելահող*	1.49	բնակելի կառուցապատում	1.49
ԳԲ-16	*վարելահող*	3.58	բնակելի կառուցապատում	3.58
ԳԲ-17	*վարելահող*	1.07	բնակելի կառուցապատում	1.07
ԳԲ-18	*վարելահող*	3.96	բնակելի կառուցապատում	3.96
Ընդհանուր			**10.1**	
ԳԲ-19	*այլ հողատեսքեր*	0.82	բնակելի կառուցապատում	0.82
ԳԲ-20	*այլ հողատեսքեր*	0.17	բնակելի կառուցապատում	0.17
ԳԲ-21	*այլ հողատեսքեր*	0.11	բնակելի	0.11

			կառուցապատում	
Ընդհանուր		**1.1**		
ԳԲ-22	*այլ հողատեսքեր*	0.17	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.17
ԳԲ-23	*այլ հողատեսքեր*	0.07	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.07
ԳԲ-24	*այլ հողատեսքեր*	0.06	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.06
ԳԲ-25	*այլ հողատեսքեր*	0.19	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.19
Ընդհանուր		***0.49***		
Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Բնակավայրերի	
ԳԲ-26	*վարելահող*	3.34	բնակելի կառուցապատում	3.34
ԳԲ-27	*վարելահող*	9.74	բնակելի կառուցապատում	9.74
ԳԲ-28	*վարելահող*	0.94	բնակելի կառուցապատում	0.94
ԳԲ-29	*վարելահող*	3.93	բնակելի կառուցապատում	3.93
Ընդհանուր		**17.95**		
ԳԲ-30	*այլ հողատեսքեր*	0.87	բնակելի կառուցապատում	0.87
Ընդհանուր			**0.87**	
ԳԲ-31	*այլ հողատեսքեր*	0.21	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.21
ԳԲ-32	*այլ հողատեսքեր*	0.05	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.05
ԳԲ-33	*այլ հողատեսքեր*	0.23	ընդհանուր օգտագործման	0.23

			հողեր /փողոցներ/	
Ընդհանուր		***0.49***		

Տեխնիկատնտեսական ցուցանիշներ				
Ցուցանիշը	**Չափման միավորը**	**Փաստացի**	**Առաջնահերթ**	**Հեռանկարային**
1	2	3	4	5
Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	**հա**	**7656.77**	**7656.77**	**7656.77**
Բնակավայրերի հողեր, որից՝	**հա**	**298.5**	**315.719**	**346.72**
բնակելի կառուցապատման	հա	225.01	240.6	270.61
հասարակական կառուցապատման	հա	4.26	4.26	4.26
խառը կառուցապատման	հա			
ընդհանուր օգտագործման,	հա	*26.42*	28.07	29.05
Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	հա			
այլ տարածքներ	հա			
այլ հողեր	հա	42.81	42.80	42.80
Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝	**հա**	**102.77**	**102.77**	**102.77**
արդյունաբերական օբյեկտների	հա			
գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	11.76	11.76	11.76
պահեստարանների	հա			
ընդերքի օգտագործման	հա	91.01	91.01	91.01
Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	հա	**1.09**	**4.77**	**4.77**
էներգետիկայի	հա	0.02	0.02	0.02
կապի	հա	0.02	0.02	0.02
տրանսպորտի	հա	1.03	1.03	1.03
կոմունալ ենթակառուցվածքների	հա	0.02	3.70	3.70
Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	**հա**	**344.37**	**370.95**	**370.95**
բնապահպանական	հա	254.22	254.22	254.22

հանգստի համար նախատեսված	հա			
պատմական և մշակութային	հա	90.15	116.73	116.73
Հատուկ նշանակության հողեր	**հա**			
Գյուղատնտեսական նշանակության հողեր,	հա	**6899.26**	**6851.781**	**6820.78**
վարելահող	հա	1521.17	1505.6	1477.5
բազմամյա տնկարկներ	հա			
խոտհարքներ	հա	405.35	405.35	405.35
արոտավայր	հա	3213.95	3204.24	3204.24
այլ հողատեսքեր	հա	1758.79	1736.60	1733.65
Անտառային հողեր	**հա**			
Ջրային հողեր	հա	**10.78**	**10.78**	**10.78**
գետեր	հա	6.21	6.21	6.21
ջրամբարներ	հա			
լճեր		0.2	0.2	0.2
ջրանցքներ	հա	4.24	4.24	4.24
հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա	0.13	0.13	0.13

Ծովակ

Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները				
Հողամասի N գծագրի վրա	**Առկա նպատակային և գործառնական նշանակությունը**	**Մակերեսը (հա)**	**Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը**	**Մակերեսը (հա)**
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				
	Արդյունաբերական, ընդերքօգտ. և այլ արտ. նշ. հողերից՝			
			Բնակավայրերի	
ԱԲ-1	*գյուղ. արտադրական*	2.29	բնակելի կառուցապատում	2.29
ԱԲ-2	*գյուղ. արտադրական*	1.21	բնակելի կառուցապատում	1.21
ԱԲ-3	*գյուղ. արտադրական*	1.94	բնակելի կառուցապատում	1.94
ԱԲ-4	*գյուղ. արտադրական*	0.1	բնակելի կառուցապատում	0.1
ԱԲ-5	*գյուղ. արտադրական*	0.23	բնակելի կառուցապատում	0.23
ԱԲ-6	*գյուղ. արտադրական*	1.54	բնակելի կառուցապատում	1.54
ԱԲ-7	*գյուղ. արտադրական*	1.57	բնակելի կառուցապատում	1.57

ԱԲ-8	*գյուղ. արտադրական*	1.11	բնակելի կառուցապատում	1.11
Ընդհանուր		**9.99**		
ԱԲ-9	*գյուղ. արտադրական*	0.29	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.29
Ընդհանուր		**0.29**		
ԱԲ-10	*գյուղ. արտադրական*	0.07	հասարակական կառուցապատում	0.07
ԱԲ-11	*գյուղ. արտադրական*	0.62	հասարակական կառուցապատում	0.62
ԱԲ-12	*գյուղ. արտադրական*	0.04	հասարակական կառուցապատում	0.04
ԱԲ-13	*գյուղ. արտադրական*	0.34	հասարակական կառուցապատում	0.34
Ընդհանուր		**1.07**		
	Հատուկ պահպանվող հողերից՝			
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ՀԷ-1	պատմության և մշակույթի	2.93	կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/	2.93
Ընդհանուր		**2.93**		
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
ԳԷ-1	այլ հողատեսքեր	7.10	կոմունալ ենթակառուցվածքների /գերեզմանոց/	7.10
Ընդհանուր		**7.10**		
ԳԷ-2	այլ հողատեսքեր	20.00	Էներգետիկայի /արևային կայան/	20.00
ԳԷ-3	այլ հողատեսքեր	20.00	Էներգետիկայի /արևային կայան/	20.00
Ընդհանուր		**40.00**		
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Բնակավայրերի հողերից՝			
			Բնակավայրերի	
ԲԲ-1	այլ հողեր	0.73	հասարակական	0.73

			կառուցապատում	
ԲԲ-2	այլ հողեր	0.1	հասարակական կառուցապատում	0.10
ԲԲ-3	այլ հողեր	0.05	հասարակական կառուցապատում	0.05
ԲԲ-4	այլ հողեր	0.21	հասարակական կառուցապատում	0.21
ԲԲ-5	այլ հողեր	0.22	հասարակական կառուցապատում	0.22
ԲԲ-6	այլ հողեր	0.02	հասարակական կառուցապատում	0.02
ԲԲ-7	այլ հողեր	0.01	հասարակական կառուցապատում	0.01
ԲԲ-8	այլ հողեր	0.002	հասարակական կառուցապատում	0.002
ԲԲ-9	այլ հողեր	0.015	հասարակական կառուցապատում	0.015
ԲԲ-10	այլ հողեր	0.11	հասարակական կառուցապատում	0.11
ԲԲ-11	այլ հողեր	0.03	հասարակական կառուցապատում	0.03
ԲԲ-12	այլ հողեր	0.004	հասարակական կառուցապատում	0.004
Ընդհանուր		**1.501**		
ԲԲ-13	բնակելի կառուցապատում	0.23	հասարակական կառուցապատում	0.23
Ընդհանուր		**0.23**		
ԲԲ-14	հասարակական կառուցապատում	0.15	բնակելի կառուցապատում	0.15
Ընդհանուր		**0.15**		
ԲԲ-15	այլ հողեր	2.29	բնակելի կառուցապատում	2.29
ԲԲ-16	այլ հողեր	1.78	բնակելի կառուցապատում	1.78
ԲԲ-17	այլ հողեր	1.37	բնակելի կառուցապատում	1.37
ԲԲ-18	այլ հողեր	2.0	բնակելի կառուցապատում	2.00
ԲԲ-19	այլ հողեր	1.39	բնակելի կառուցապատում	1.39
ԲԲ-20	այլ հողեր	0.91	բնակելի կառուցապատում	0.91
ԲԲ-21	այլ հողեր	0.31	բնակելի կառուցապատում	0.31
Ընդհանուր		**10.05**		
ԲԲ-22	այլ հողեր	0.08	ընդհանուր օգտագործման	0.08

			հողեր /փողոցներ/	
ԲԲ-23	այլ հողեր	0.12	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.12
ԲԲ-24	այլ հողեր	0.19	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.19
ԲԲ-25	այլ հողեր	0.23	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.23
ԲԲ-26	այլ հողեր	0.87	ընդհանուր օգտագործման հողեր /փողոցներ/	0.87
Ընդհանուր		**1.49**		
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
ԳԲ-1	այլ հողատեսքեր	0.42	հասարակական կառուցապատում	0.42
Ընդհանուր		**0.42**		
ԳԲ-2	վարելահող	0.1	հասարակական կառուցապատում	0.10
Ընդհանուր		**0.10**		
ԳԲ-3	այլ հողատեսքեր	0.05	բնակելի կառուցապատում	0.05
Ընդհանուր		**0.05**		
	Արդյունաբերական, ընդերք. և այլ արտ. նշ. հողերից՝			
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ԱԷ-1	*ընդերքօգտագործման*	5.00	կոմունալ ենթակառուցվածքների /աղբավայր/	5.00
ԱԷ-2	*ընդերքօգտագործման*	26.90	Էներգետիկայի	26.90
Ընդհանուր		**31.90**		
			Հատուկ պահպանվող հողեր	
ԱԲ-14	*ընդերքօգտագործման*	42.80	հանգստի համար նախատեսված	42.80
Ընդհանուր		**42.80**		
Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			

			Գյուղատնտեսական նշանակության հողեր	
ԳԳ-1	այլ հողատեսքեր	108.0	վարելահող	108.00
ԳԳ-2	այլ հողատեսքեր	9.1	վարելահող	9.10
ԳԳ-3	այլ հողատեսքեր	138.65	վարելահող	138.65
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ՀԷ-1	պատմական և մշակութային	1,18	կոմունալ ենթակառուցվածքների / գերեզմանոց/	1,18
ՀԷ-2	պատմական և մշակութային	0,43	կոմունալ ենթակառուցվածքների / գերեզմանոց/	0,43
Ընդհանուր		**1,61**		
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ԳԷ-1	այլ հողատեսք	0,30	կոմունալ ենթակառուցվածքների / աղբավայր/	0,30
Ընդհանուր		**0,30**		

	Տեխնիկատնտեսական ցուցանիշներ

*«**Գեղարքունիք-4**» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

	Ցուցանիշը	Չափման միավորը	Փաստացի	Առաջնահերթ	Հեռանկարային
	1	2	3	4	5
	Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	**հա**	**710.37**	**710.37**	**710.37**
	Բնակավայրերի հողեր, որից՝	**հա**	**64.13**	**64.13**	**64.13**
	բնակելի կառուցապատման	հա	55.75	55.55	55.55
	հասարակական կառուցապատման	հա	0.05	0.25	0.25
	խառը կառուցապատման	հա		0.00	0.00
	ընդհանուր օգտագործման,	հա	6.21	6.21	6.21
	Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	հա			
	այլ տարածքներ	հա			
	այլ հողեր	հա	2.12	2.12	2.12
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝	**հա**	**25.05**	**25.05**	**25.05**
	արդյունաբերական օբյեկտների	հա			
	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	1.42	1.42	1.42
	պահեստարանների	հա			
	ընդերքի օգտագործման	հա	23.63	23.63	23.63
	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	**հա**	**0.66**	**2.27**	**2.57**
	էներգետիկայի	հա	0.02	0.02	0.02
	կապի	հա			
	տրանսպորտի	հա	0.64	0.64	0.64
	կոմունալ ենթակառուցվածքների	հա		1.61	1.91
	Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	**հա**	**1.86**	**0.25**	**0.25**
	բնապահպանական	հա			
	հանգստի համար նախատեսված	հա			
	պատմական և մշակութային	հա	1.86	0.25	0.25
	Հատուկ նշանակության հողեր	**հա**			**0**
	Գյուղատնտեսական նշանակության հողեր,	հա	**618.37**	**618.37**	**618.07**
	վարելահող	հա	362.04	362.04	362.04

	բազմամյա տնկարկներ	հա			
	խոտհարքներ	հա	14.77	14.77	14.77
	արոտավայր	հա	9.2	9.2	9.2
	այլ հողատեսքեր	հա	232.36	232.36	232.06
	Անտառային հողեր	հա			
	Ջրային հողեր	հա	**0.3**	**0.3**	**0.3**
	գետեր	հա			
	ջրամբարներ	հա			
	լճեր	հա			
	ջրանցքներ	հա	0.3	0.3	0.3
	հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա		0	0

Վանեվան

Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները				
Հողամասի N գծագրի վրա	**Առկա նպատակային և գործառնական նշանակությունը**	**Մակերեսը (հա)**	**Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը**	**Մակերեսը (հա)**
Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի)				
	Բնակավայրերի հողերից՝			
			Բնակավայրերի	
ԲԲ-1	*այլ հողեր*	1,00	հասարակական կառուցապատման	1,00
ԲԲ-2	*այլ հողեր*	0,13	հասարակական կառուցապատման	0,13
Ընդհանուր		**1,13**		
ԲԲ-3	*այլ հողեր*	0,02	ընդհանուր օգտ. հողեր/փողոցներ/	0,02
ԲԲ-4	*այլ հողեր*	0,06	ընդհանուր օգտ. հողեր/փողոցներ/	0,06
Ընդհանուր		**0,08**		
	Արդյունաբերության, ընդերքօգտ.և այլ արտադրական նշանակության հողերից՝			
ԱԲ-1	*գյուղ. արտադրություն*	0,89	հասարակական կառուցապատման	0,89
Ընդհանուր		**0,89**		

ԱԲ-2	*գյուղ. արտադրություն*	0,57	բնակելի կառուցապատում	0,57
ԱԲ-3	*գյուղ. արտադրություն*	0,94	բնակելի կառուցապատում	0,94
Ընդհանուր		**1,51**		
ԱԲ-4	*գյուղ. արտադրություն*	0,11	ընդհանուր օգտ. հողեր/փողոցներ/	0,11
Ընդհանուր		**0,11**		
	Հատուկ պահպանվող տարածքների հողերից՝			
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ՀԷ-1	պատմական և մշակութային	0,24	կոմունալ ենթակառուցվածքների / գերեզմանոց/	0,24
ՀԷ-2	պատմական և մշակութային	0,38	կոմունալ ենթակառուցվածքների / գերեզմանոց/	0,38
Ընդհանուր		**0,62**		
Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			Բնակավայրերի	
ԳԲ-1	*վարելահող*	0,64	հասարակական կառուցապատման	0,64
ԳԲ-2	*վարելահող*	0,70	հասարակական կառուցապատման	0,70
Ընդհանուր		**1,34**		
ԳԲ-3	*այլ հողատեսք*	0,56	հասարակական կառուցապատման	0,56
Ընդհանուր		**0,56**		
			Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ԳԷ-1	այլ հողատեսք	0,20	կոմունալ ենթակառուցվածքներ	0,20

			ի / մաքրման կայան/	
ԳԷ-2	այլ հողատեսք	1,00	կոմունալ ենթակառուցվածքներ ի / աղբավայր/	1,00
Ընդհանուր		**1,20**		
Հեռանկարային միջոցառումներ (10-15 տարի)				
	Գյուղատնտեսական նշանակության հողերից՝			
			էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր	
ԳԷ-3	արոտ	11,65	էներգետիկայի	11,65
Ընդհանուր		**11,65**		
			Բնակավայրերի	
ԳԲ-4	*այլ հողատեսք*	1,13	բնակելի կառուցապատում	1,13
ԳԲ-5	*այլ հողատեսք*	1,51	բնակելի կառուցապատում	1,51
ԳԲ-6	*այլ հողատեսք*	0,68	բնակելի կառուցապատում	0,68
ԳԲ-7	*այլ հողատեսք*	0,09	բնակելի կառուցապատում	0,09
Ընդհանուր		**3,41**		
ԳԲ-8	*այլ հողատեսք*	0,49	ընդհանուր օգտ. հողեր/փողոցներ/	0,49
ԳԲ-9	*այլ հողատեսք*	0,04	ընդհանուր օգտ. հողեր/փողոցներ/	0,04
ԳԲ-10	*այլ հողատեսք*	0,11	ընդհանուր օգտ. հողեր/փողոցներ/	0,11
ԳԲ-11	*այլ հողատեսք*	0,24	ընդհանուր օգտ. հողեր/փողոցներ/	0,24
Ընդհանուր		**0,88**		
	Բնակավայրերի հողերից՝			
ԲԲ-5	*այլ հողեր*	0,02	ընդհանուր օգտ. հողեր/փողոցներ/	0,02

ԲԲ-6	*այլ հողեր*	0,01	ընդհանուր օգտ. հողեր/փողոցներ/	0,01
Ընդհանուր		**0,03**		

	Տեխնիկատնտեսական ցուցանիշներ				
	Ցուցանիշը	**Չափման միավորը**	**Փաստացի**	**Առաջնահերթ**	**Հեռանկարային**
	1	2	3	4	5
	Համայնքի, համակցված փաստաթղթի դեպքում նախագծվող համայնքների վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը՝ ընդամենը	**հա**	**798.83**	**798.83**	**798.83**
	Բնակավայրերի հողեր, որից՝	**հա**	**44.55**	**47.06**	**53.25**
	բնակելի կառուցապատման	հա	32.26	33.77	37.18
	հասարակական կառուցապատման	հա	0.98	3.00	4.90
	խառը կառուցապատման	հա			
	ընդհանուր օգտագործման,	հա	3.18	3.37	4.28
	Ընդհանուր օգտագործման կանաչապատ տարածքներ	հա			
	այլ տարածքներ	հա			
	այլ հողեր	հա	8.13	6.92	6.89
	Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր, որից՝	**հա**	**2.73**	**0.22**	**0.22**
	արդյունաբերական օբյեկտների	հա			
	գյուղատնտեսական արտադրական օբյեկտների	հա	2.73	0.22	0.22
	պահեստարանների	հա			
	ընդերքի օգտագործման	հա			
	Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր, որից՝	**հա**	**2.71**	**3.33**	**16.18**
	էներգետիկայի	հա	0.02	0.02	11.67
	կապի	հա			
	տրանսպորտի	հա	2.69	2.69	2.69
	կոմունալ ենթակառուցվածքների	հա		0.62	1.82

	Հատուկ պահպանվող տարածքների հողեր, որից՝	**հա**	**0.62**	**0**	**0**
	բնապահպանական	հա			
	հանգստի համար նախատեսված	հա			
	պատմական և մշակութային	հա	0.62	0.00	0
	Հատուկ նշանակության հողեր	**հա**	**5.38**	**5.38**	**5.38**
	Գյուղատնտեսական նշանակության հողեր,	հա	**742.84**	**742.84**	**723.8**
	վարելահող	հա	521.57	521.57	520.23
	բազմամյա տնկարկներ	հա		0	0
	խոտհարքներ	հա		0	0
	արոտավայր	հա	146.53	146.53	134.88
	այլ հողատեսքեր	հա	74.74	74.74	68.69
	Անտառային հողեր	հա			
	Ջրային հողեր	հա	**0**	**0**	**0**
	գետեր	հա			
	ջրամբարներ	հա			
	լճեր	հա			
	ջրանցքներ	հա		0	0
	հիդրոտեխ. և ջրտնտ. այլ օբ.	հա		0	0

2.6. ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

2.6.1. Ջրամատակարարում

Դիտարկվող տարածաշրջանում ներառված գյուղական բնակավայրերը սնվում են լոկալ աղբյուրներից: Այդ բնակավայրերի ջրամատակարարման ցանցերը հանդիսանում են համայնքային սեփականություն և գտնվում են ոչ բարվոք վիճակում, ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում բնակչությանը ստանդարտներին համապատասխան որակյալ ջրամատակարարման հարցում:

Ջրամատակարարումն համակարգերի շահագործումն իրականցվում է համայնքների կողմից: Ըստ վերջիններիս կողմից ներկայացված տեղեկատվության՝ դիտարկվող տարածաշրջանի բնակավայրերին սպասարկող աղբյուրներն ունեն բավականաչափ հզորություններ: Թեև բնակավայրերի զգալի հատվածում իրականացվել են ջրագծերի փոխարինման աշխատանքներ, սակայն ոչ բոլոր սպառողներն են ապահովված շուրջօրյա ջրամատակարարմամբ:

Սպառողների մոտ ջրաչափեր տեղադրված չեն, ջրի հաշվառում չի իրականացվում:

Գոյություն ունեցող վիճակի վերլուծության ամփոփում

Առկա վիճակի վերլուծության արդյունքում արձանագրվել են խմելու ջրամատակարարման ոլորտին առնչվող հետևյալ խնդիրները.

- ջրատարների և ջրամատակարարման բաշխիչ ցանցերի մաշվածություն (կորուստների բարձր տոկոս) կամ բացակայություն,
- խմելու ջրի հաշվառման բացակայություն, ոչ արդյունավետ օգտագործում,
- անհրաժեշտ քանակով ջրապաշար ամբարելու համար համապատասխան ծավալով, պահանջվող նիշերի վրա տեղակայված ջրամբարների բացակայություն,
- ջրամատակարարման կառավարման ոչ բավարար իմացություն:

Ջրամատակարարման նորմերը և հաշվարկային ջրապահանջը

Բնակավայրերի համար խմելու ջրամատակարարման համակարգը նախատեսվում է՝

- բնակչության խմելու-տնտեսական նպատակով,
- արտադրական այն օբյեկտների համար, որոնց արտադրական կարիքների համար անհրաժեշտ է խմելու որակի ջուր,
- բնակավայրի հակահրդեհային կարիքների բավարարման համար:

Բնակչության խմելու-տնտեսական կարիքների նպատակով պահանջվող ջրաքանակը որոշելու համար որպես ելակետային տվյալ ընդունվել է 200 լ/օր/մարդ, որն ընդգրկում է բնակչության խմելու-կենցաղային ջրապահանջը, ինչպես նաև ընտանի կենդանիների ջրման պահանջարկը՝ բերված մեկ բնակչի հաշվարկով:

Արտադրական կարիքների համար պահանջվող խմելու որակի ջրաքանակն ընդունվում է բնակչության ջրապահանջի 15%-ի չափով:

Հակահրդեհային կարիքների (արտաքին և ներքին հրդեհներ) համար պահանջվող ջրաքանակը հաշվարկվում է համաձայն գործող նորմերի պահանջների (ՇՆևԿ 2.04.02.84):

Ստորև աղյուսակում տրված է Գեղարքունիք-4-ում ներառված բնակավայրերի խմելու-տնտեսական, արտադրական և հակահրդեհային կարիքների համար պահանջվող հաշվարկային ջրապահանջը (ներառյալ նաև հոսակորուստները).

Հաշվարկային ջրապահանջն՝ ըստ բնակավայրերի

N	Բնակավայրի անվանումը	Հեռանկա-րային բնակչութ-յան քանակը	Ջրա-սպառման նորմը	Ջրապահանջը				
				Խմելու-տնտե-սական	Արտա-դրա-կան (15 %)	Հակահր-դեհային կարիք-ներ	Հոսակո-րուստ-ներ (30 %)	Ընդա-մենը
		մարդ	լ/օր	$մ^3$/օր				
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*

1	Ծովինար	5120	200	1024.1	153.6	216	307.2	1700.9
2	Արծվանիստ	3524	-//-	704.9	105.7	162	211.5	1184.1
3	Ախպրաձոր	403	-//-	80.5	12.1	81	24.1	197.7
4	Ակունք	4462	-//-	892.3	133.8	162	267.7	1455.9
5	Գեղաքար	170	-//-	34.1	5.1	81	10.2	130.4
6	Լճավան	625	-//-	125.0	18.7	81	37.5	262.2
7	Լուսակունք	1701	-//-	340.1	51.0	162	102.0	655.2
8	Խաչաղբյուր	1346	-//-	269.3	40.4	162	80.8	552.4
9	Ծովակ	2990	-//-	598.0	89.7	162	179.4	1029.0
10	Կարճաղբյուր	2560	-//-	511.9	76.8	162	153.6	904.3
11	Մաքենիս	535	-//-	106.9	16.0	81	32.1	236.0
12	Մեծ Մասրիկ	2969	-//-	593.8	89.1	162	178.1	1023.0
13	Նորակերտ	955	-//-	191.0	28.6	81	57.3	357.9
14	Վանևան	378	-//-	75.7	11.3	81	22.7	190.7
15	Տորֆավան	515	-//-	103.0	15.4	81	30.9	230.3

Ջրամատակարարման նախատեսվող համակարգերը և գոտիները

Ջրամատակարարման համակարգերը նախատեսվում են կենտրոնացված. բնակչության խմելու-կենցաղային, արտադրական և հակահրդեհային ջրապահանջներն իրականացվում են մեկ ջրատարով:

Ջրմուղի ցանցում անհրաժեշտ թույլատրելի ճնշում և պահանջվող ջրաքանակ ապահովելու համար բնակավայրերի ջրամատակարարումը նպատակահարմար է իրականացնել գոտիներով՝ անհրաժեշտության դեպքում առանձին թաղամասերի համար նախատեսելով նոր ՕԿՋ-ներ, որտեղից խմելու ջուրը բնակչությանը կտրվի ինքնահոս եղանակով :

Ջրամատակարարման գլխավոր փողոցային ցանցերն անհրաժեշտ է նախատեսել օղակային՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով: Փակուղային կարող են լինել 200 մ-ից պակաս երկարություն և 100 մմ-ից պակաս տրամագիծ ունեցող ջրագծերը:

Խողովակաշարերի թեքություններն ընդունել ոչ պակաս 0.001, հարթ ռելիեֆի պայմաններում՝ 0.0005:

Խմելու որակի ջուր տեղափոխող խողովակների տեղադրման խորությունը պետք է նախատեսել.

- 0.5 մ-ով ավելի, քան գրունտ ներթափանցող զրոյական ջերմաստիճանի հաշվարկային խորությունն է,
- կոյուղու խողովակաշարերից ուղղաձիգ ուղղությամբ 0.4 մ-ով բարձր:

Հաշվի առնելով, որ ջրամատակարարման համակարգը կենտրոնացված է, օղակային խողովակաշարերի տրամագծերը պետք է նախատեսել 100 մմ-ից ոչ պակաս:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ջրամատակարարման համակարգերի համայնքային կառավարումն արդյունավետ կազմակերպելու նպատակով անհրաժեշտ է ստեղծել այդ համակարգերի պատշաճ շահագործման և պահպանման կազմակերպություն (ՇևՊ), որը կունենա համապատասխան վերապատրաստում անցած աշխատակիցներ:
- Ջրամատակարարման համակարգերի կայուն աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերջիններիս արդիականացում և վերակառուցում:
- Բնակչությանն անհրաժեշտ քանակի խմելու ջրով բավարարելու նպատակով առաջարկվում է բնակավայրերի տարածքում պահանջվող ծավալով օրվա կարգավորիչ ջրամբարների նախատեսում.
- Բոլոր բնակավայրերում խմելու ջրամատակարարման օղակային բաշխիչ ցանցի նախատեսում՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով:
- Ջրամատակարարաման բոլոր համակարգերում (գլխամասային կառույցներ, ՕԿՋ-ներ) հերմետիկության ապահովում և սանիտարական 1-ին (30-50 մ շառավղով) գոտու սահմանում:
- Խմելու ջրի վարակազերծման նպատակով ջրամատակարարման գլխամասային կառույցներում քլորակայանների նախատեսում:
- Խմելու ջրի պարբերաբար լաբորատոր հսկողություն:
- Ջրի սպառման նկատմամբ վերահսկողության սահմանում, ջրաչափերի տեղադրում բոլոր սպառողների մոտ:
- Հոսակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված անընդհատ աշխատանքների իրականացում:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ✓ Ջրային ռեսուրսների պահպանություն, տնտեսում և կայուն օգտագործում:
- ✓ Ջրամատակարարման համակարգի հուսալիություն:
- ✓ Հոսակորուստների կրճատում:
- ✓ Ջրի սպառման արդյունավետության բարձրացում:
- ✓ Բնակչության ջրամատակարարման տևողության ավելացում:
- ✓ Խմելու ջրի հաշվառում, ինչը կբերի ջրօգտագործման կուլտուրայի բարելավման, ինչպես նաև կխթանի բնակիչների ջրօգտագործման ռեժիմի փոփոխությանը:
- ✓ Խմելու ջրի բարձր որակի ապահովում և աղտոտման վտանգի նվազում:

2.6.2. Ջրահեռացում

2.6.2.1. Կենցաղային և արտադրական կոյուղի

Ինժեներական ենթակառուցվածքներով (հիմնականում կոյուղացման) ցածր մակարդակները ստեղծում են ստորերկրյա և Սևանա լճի ջրերի ռազմավարական նշանակության պաշարների աղտոտման վտանգ:

Մինչև 2011 թվականը մարզի քաղաքային համայնքների կեղտաջրերն անարգել լցվում էին Սևանա լիճ: Այդ խնդիրը կարգավորելու նպատակով 2011

թվականից մարզի Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքներում կառուցվեցին կեղտաջրերի մաքրման կայաններ, որի շնորհիվ մասամբ /իրականացվում է միայն մեխանիկական մաքրում/ լուծվեց կեղտաջրերի մաքրման խնդիրը՝ Գավառ քաղաքում 36%-ով, Մարտունի քաղաքում 47%-ով, Վարդենիս քաղաքում 41%-ով: Եվրոպական ներդրումային բանկի միջոցներով Սևան քաղաքում ևս նախատեսվում է կառուցել կեղտաջրերի մաքրման նոր կայան:

Մարզի քաղաքների և առանձին գյուղական բնակավայրերի համար հիմնախնդիր է դարձել կոյուղու ցանցի քայքայված վիճակը, որը հղի է մեծ վտանգներով՝ շրջակա միջավայրի աղտոտվածության և մարդկանց առողջության համար:

Մարզի բնակչության շուրջ 40%-ը չի օգտվում կեղտաջրերի մաքրման կայաններից և կեղտաջրերը լցվում են հատուկ այդ նպատակով փորված կեղտաջրերի հորատանցքեր՝ առանց մաքրման և վարակազերծման՝ մեծ վտանգ ներկայացնելով վարակիչ հիվանդությունների տարածման տեսանկյունից:

Դիտարկվող տարածաշրջանի գյուղական բնակավայրերը չունեն կոյուղու հոսքաջրերի հեռացման համակարգ : Կրթական, վարչական, առողջապահական հիմնարկների կոյուղու հոսքաջրերի հեռացման համար հիմնականում նախատեսած են լոկալ սեպտիկ հորեր : Բնակչությունն օգտվում է բակային հորատիպ զուգարաններից :

Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով սույն նախագծի շրջանակներում նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր բնակավայրերը՝ կառուցելով կենսաբնական մաքրման կայաններ: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով:

Ինքնահոս ջրահեռացման խողովակների տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս.

- փողոցային ցանցի համար՝ 200 մմ, թեքությունը՝ 0.007,
- ներթաղամասային կենցաղային և արտադրական կոյուղու ցանցի համար՝ 150 մմ, թեքությունը՝ 0.008:

Կոյուղու հեռացման ենթակա հոսքաջրերը նախատեսվում է մաքրման ենթարկելուց հետո միայն ուղղել բաց ջրահոսքեր:

Այն արտադրական օբյեկտներում, որոնց հեռացման ենթակա հոսքաջրերը կարող են պարունակել կոյուղու համակարգը վնասող կամ դրա աշխատանքը խոչընդոտող նյութեր, նախատեսվում է (նախքան կոյուղու միասնական համակարգին միանալը) իրականացնել կեղտաջրերի նախնական մաքրում:

Ստորև աղյուսակում տրված է Գեղարքունիք-4 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի կոյուղու (կոմունալ-կենցաղային և արտադրական) հեռացման ենթակա հոսքաջրերի հաշվարկային ելքերը:

Կոյուղու հաշվարկային ելքերն ու մաքրման կայանների հզորություններն՝ ըստ բնակավայրերի

N	Բնակավայրի անվանումը	Հեռանակա-րային բնակչության քանակը (մարդ)	Հեռացման ենթակա հոսքաջրերի քանակը մ³/օր		
			Կոմունալ-կենցաղայի ն	Արտադր ա-կան	Ընդամե նը
1	*2*	*3*	*5*	*7*	*9*
1	Ծովինար	5120	1024.1	921.7	1945.8
2	Արծվանիստ	3524	704.9	634.4	1339.3
3	Ախպրաձոր	403	80.5	72.5	153.0
4	Ակունք	4462	892.3	803.1	1695.4
5	Գեղաքար	170	34.1	30.7	64.8
6	Լճավան	625	125.0	112.5	237.4
7	Լուսակունք	1701	340.1	306.1	646.2
8	Խաչաղբյուր	1346	269.3	242.3	511.6
9	Ծովակ	2990	598.0	538.2	1136.1
10	Կարճաղբյուր	2560	511.9	460.7	972.7
11	Մաքենիս	535	106.9	96.2	203.1
12	Մեծ Մասրիկ	2969	593.8	534.4	1128.2
13	Նորակերտ	955	191.0	171.9	362.8
14	Վանևան	378	75.7	68.1	143.8
15	Տորֆավան	515	103.0	92.7	195.6

2.6.2.2. Հեղեղատար կոյուղի

Հեղեղատար կոյուղու նպատակը համայնքի տարածքից անձրևաջրերի և հալոցքից առաջացած ջրերի կազմակերպված հեռացումն է, ինչը հնարավորություն կստեղծի համայնքում բարեկարգ վիճակ և սանիտարահիգիենիկ պատշաճ մակարդակ ապահովելու համար:

Սույն նախագծով կենցաղային կոյուղուն զուգահեռ նախատեսվում է նաև հեղեղատար կոյուղի, ինչը հնարավորություն կտա անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս հավաքել և, նախքան բաց ջրահոսքեր ուղղելը, ենթարկել մաքրման:

Հեղեղատար ցանցերը՝ կախված թաղամասերի նշանակությունից և ճարտարապետական որոշումներից, կարող են լինել բաց առվակների կամ փակ խողովակաշարերի ձևով: Հեղեղատար կոյուղու համար կարող են

օգտագործվել կերամիկական, ե/բետոնե, թուջե խողովակներ և ե/բ կիսախողովակներ:

Անձրևաջրերի հեռացման փակ համակարգի դեպքում խողովակաշարերի տրամագծերը նախատեսվում է ընդունել ոչ պակաս՝ 250 մմ փողոցային ցանցի համար, 200 մմ՝ ներթաղամասային ցանցի համար:

Անձրևաջրերի հեռացման բաց համակարգի դեպքում երթևեկելի ասֆալտապատ ճանապարհերի ճամփեզրերի, առանձին խրամառուների (կյուվետ) և ջրահեռացման առվակների թեքությունները համապատասխանաբար ընդունել ոչ պակաս 0.003, 0.005 և 0.003:

Սեղանաձև հատվածքով կյուվետների և ջրահեռացման առվակների նվազագույն չափերն անհրաժեշտ է ընդունել՝

- հատակի լայնությունը՝ 0.3 մ,
- խորությունը՝ 0.4 մ:

Այն համայնքներում, որտեղ սույն նախագծի շրջանակներում նախատեսված են կոյուղու մաքրման սարքավորումներ, անձրևաջրերի և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս կարող է ենթարկվել մաքրման: Անձրևաջրերի մաքրումը կարող է իրականացվել ինչպես առանձին մաքրման սարքավորումներով, այնպես էլ կենցաղային և արտադրական կոյուղու հոսքաջրերի հետ համատեղ՝ նախատեսելով կարգավորող ջրավազաններ՝ որոնք հնարավորություն կստեղծեն մակերեսային հոսքաջրերը կուտակել և միայն կենցաղային կոյուղու ամենաքիչ հոսքի ժամերին մղել կոյուղու համակարգ՝ դրանք մաքրման կայանում լրիվ մաքրման ենթարկելու համար:

Նախագծային առաջարկություններ

- Բնակավայրերի լրիվ կոյուղացում, կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի նախատեսում:
- Կենցաղային կոյուղուն զուգահեռ հեղեղատար կոյուղու նախատեսում:
- Կոյուղու կեղտաջրերի լրիվ մաքրում և վարակազերծում՝ հաշվի առնելով մակերևութային ջրերն աղտոտումից պաշտպանելու պահանջները: Ըստ ՇՆևԿ 2.04.02-85-ի 6.1 կետի պահանջների՝ կեղտաջրերը պետք է անցնեն լրիվ կենսաբանական մաքրում և ունենան հետևյալ ցուցանիշը՝ ԹԿՊլրիվ=6 մգ/լ:
- Գյուղական բնակավայրերում առաջարկվում է տեղադրել լոկալ, ժամանակակից տեխնոլոգիաներով, ռուսական «Ялма» մակնիշի գործարանային արտադրության կոյուղու կենսաբանական մաքրման սարքավորումներ՝ հզորությունները համաձայն համապատասխան հաշվարկների:

Վերոնշյալ սարքավորումները բաղկացած են շղթայաբար իրար միացված տեխնոլոգիական տարրաների ցանցից, որոնցում իրականացվում

են կոյուղու հոսքաջրերի փուլային մաքրման գործընթացներ: Կոյուղու հոսքաջրերը հաջորդաբար մուտք գործելով բազմաշերտ պոլիմերային ծածկույթով մետաղից, պոլիէթիլենից կամ պոլիպրոպիլենից պատրաստված տարրաների մեջ, ենթարկվում են կենսաբանական մաքրման (98 %), որից հետո կարող են բաց թողնվել գրունտի մակերես /բաց ջրահոսքեր/ կամ ուղղել ոռոգման համակարգեր՝ խթանելով կրկնակի ջրօգտագործումը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածաշրջանի ոռոգման, բնապահպանական խնդիրները և նախատեսվող միջոցառումները

Բաժինը մշակելիս որպես ելակետային նյութ ընդունվել է.

1. ՀՀ ջրի ազգային ծրագրի մասին ՀՕ-232 օրենքի հիման վրա կազմված «ՀՀ ջրամբարաշինարարության հեռանկարային ծրագրի հայեցակարգը»;
2. «Սևանի մասին ՀՀ օրենքը» - 2001թ. 15 մայիսի;
3. «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին» 2001թ. դեկտեմբերի 14 –ի ՀՀ օրենքը;
4. Տարածաշրջանում մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման նորմաներն ու ռեժիմները;
5. Գեղարքունիքի մարզի տարածաշրջանի համար ոռոգման աղբյուր հանդիսացող գետերի և սելավատարների հիդրոլոգիական դիտարկումների տվյալները;
6. Ծրագրի մշակման գործընթացում Գեղարքունիքի մարզում կատարված ուսումնասիրությունների ընթացքում հավաքագրված տվյալները:

Մարզի բնակլիմայական պայմանները

Գեղարքունիքի մարզի ընդհանուր տարածքը կազմում է 5348կմ^2, այդ թվում Սևանա լճի մակերեսը 1260 կմ^2 :

Տարածաշրջանի ջրային ռեսուրսներ են հանդիսանում Սևանա լիճը 33.2 կմ^2 և նրա մեջ թափվող 28 գետերը 26.8 մ^3/վրկ միջին տարեկան հոսքով :

Սևանա լճից ազատված հողերը ավազային են հումուսի աննշան պարունակությամբ: Գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը, իսկ Արտանիշ թերակղզու Բլրապատ և Լեռնոտ հատվածներում տարածված են լեռնատափաստանային հողեր:

Մարզի վարելահողերը կազմում են շուրջ 85.7 հազ.հա, այդ թվում ոռոգելի հողատարածքները կազմում է շուրջ փաստացի 12 հազ.հա:

Ոռոգման նպատակով մարզում կառուցված է 7 ջրամբար գումարային 4.28 մլն.խմ ծավալով:

Ոռոգման և ջրամատակարարման նպատակով մարզում գործում է ոչ մեծ հզորության 23 պոմպակայան, խորքային հորերից ջուրը արտամղելու նպատակով:

Մարզում բացի վարելահողերից առկա են նաև խոտհարքներ շուրջ 35 հազ.հա և արոտավայրեր շուրջ 181 հազ.հա:

Մարզի առավել խոշոր ջրանցքներն են Մասրիկի, Ծովակի և Վարդենիսի ՀԷԿ-ի ջրանցքները:

Սևանա լիճ

Սևանա լիճը իր կեսաբանական ցուցանիշներով դասվում է խմելու ջրաղբյուրների դասին և նրա ջրի պաշարները հանրապետության համար ունեն ռազմավարական խոշոր նշանակություն:

Սևանա լճի ռելիեֆային բարձր դիրքից ելնելով նրա ջրային 58.4 կմ^3 նախնական ռեսուրսները 1930 թվականից հանրապետությունում օգտագործվել են գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգման, էլեկտրաէներգիայի արտադրման և ջրամատակարարման նպատակով:

Լճի ջրային ռեսուրսների գումարային շուրջ 25.2 կմ^3 ծավալի օգտագործումը բերեց՝

Լճի ծավալի փոքրացմանը -43%

Լճի մակարդակի իջեցմանը -20 մետրով

Լճի մակերեսի պակասեցմանը – 900 կմ^2

Լճի թափանցելիության նվազեցմանը 2.5-3 անգամ

Նվազեց լճի ձկնատվությունը շուրջ 15 անգամ

Ելնելով ստեղծված իրավիճակից 1982 թվականից որոշվեց լճի ջրային ռեսուրսներն օգտագործել միայն ոռոգման նպատակով, տարեկան ոչ ավել 170 մլն.խմ և դոտացիայի նպատակով կառուցվեց Կեչուտի ջրամբարը իրեն մոտեցնող Արփա-Սևան թունելով, հաշվարկային 22 խմ/վրկ ելքով:

Լճի ջրային ռեսուրսները տարեկան կազմավորվում են ի հաշիվ լճի ջրավազանի 28 գետերի միջին տարեկան 770 մլն.մ^3 հոսքի, մթնոլորտային տեղումների տարեկան շուրջ 545 մլն.մ^3, Արփա-Սևան թունելով տարեկան շուրջ 250 մլն.մ^3 /ներկայումս տեղափոխվում է 120-150 մլն.մ^3/: Երկրաբանական լճա նստվածքային կառուցվածքից առաջացած հոսքերը տարեկան շուրջ 94 մլն.մ^3:

<u>Սևանա լճի և ջրաղբյուրների ներկա վիճակը</u> – լճի առափնյա տարածքում գործող շուրջ 2400 հանգստի և սննդի օբյեկտներից /որոնցից 300 մշտական գործող/ առաջացած կենցաղային և կոյուղու ջրերն առանց կենսաբանական մաքրման թափվելու, լճի իրացված տարածքներում անտառահատումներից մնացած կոճղ-արմատների, իրացված շենք շինությունների մնացորդների ազդեցության հետևանքով լճի ջրավազանում անբարենպաստ կլիմայական պայմանների դեպքում առաջանում է լճի ջրի կանաչապատում /ծաղկում/՝ լճի որակի վրա բացասական ազդեցություններով:

Լճի ջրի որակի վրա բացասական ազդեցություն է թողնում Գավառում, Մարտունիում և Վարդենիսում կառուցված կոյուղու մաքրման կայանների անարդյունավետ գործունեությունը, որոնցից կոյուղու ցանցի բացակայության

և վթարի պատճառով կեղտաջրերը լիճ են թափվում առանց կենսաբանական մաքրման /աղ. N1/:

Աղ. N1

հ/հ	Բնակավայրի անվանումը	Չափման միավորը	Կոյուղու ցանցի երկարությունը	Որից շահագործվում է
1	Սևան քաղաքի	կմ	100	67
2	Գավառ --"--	-"-	34	14
3	Մարտունի -- " --	-"-	19	8
4	Վարդենիս -- " --	-"-	35	26
5	87գյուղական համայնք	-"-	-	-

Ջրավազանում կենցաղային կոյուղու ջրերի քանակությունը կախված բնակչության թվից/միջին հաշվով 250 հազ. մարդ/ գնահատվում է շուրջ 12մլն.մ^3 տարեկան:

Լճի ջրավազանում գործում է 173 խորքային հոր 5-30 լ/վրկ արտադրողականությամբ, բացի այդ կան խորքային հորեր 1-5 լ/վրկ արտադրողականությամբ, որոնք հաշվառման մեջ չեն ընդգրկված:

Սևանա լճում ձկնարդյունաբերության ընդլայման նպատակով տեղադրված են ցանցավանդակներ, որոնք ըստ նախնական տվյալների նույնպես ջրի որակի վրա թողնում են բացասական ազդեցություն:

Ջրավազանի տարածքում առկա են 20-ից ավելի շինանյութի /ավազի, խճակոպճի, քարի/ հանքավայրեր, որոնց թափոնների անկազմակերպ տեղակայման և չօգտագործվող հանքերի չկոնսերվացման հետևանքով, շրջակա միջավայրի և լճի ջրի վրա թողնում են բացասական ազդեցություն:

Ջրավազանի գետերը և նրանց ջրաֆիզիկական և ջրաքիմիական Բնութագիրը

Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակներ, որոնցից 4-ը փոքր Սևան, իսկ 24-ը մեծ Սևան: Գետերի միջին տարեկան հոսքը կազմում է 26.8 խմ/վրկ, իսկ միջին ծավալը 770 մլն.մ^3:

Լճից դուրս է գալիս միայն Հրազդան գետը բնականը՝ 110 մլն.մ^3, ջրթողումներով մինչև 170 մլն.մ^3 հոսքով:

Ջրավազանի առավել ջրատար, ձվադրման վայր հանդիսացող գետերի միջին և առավելագույն ելքերը տված է N2 աղյուսակում:

աղ. N2

հ/հ	Գետի անվանումը	Ավազանի մակերեսը, կմ^2	Միջին տարեկան ելքը, մ^3/վրկ	Առավելագույն ելքը,մ^3/վրկ	Նվազագույն ելքը, մ^3/վրկ
1	Գավառագետ	467	3.5	72.5	2.17

2	Վարդենիս	110	1.67	30.6	0.12
3	Արգիչի	366	5.50	265.0	1.35
4	Արծվանիստ	80	0.33	15.3	-
5	Մարտունի	85	1.74	26.7	0.17
6	Բախտակ	144	0.65	31.5	0.05
7	Շողվակ	59	0.44	18.2	-

Սևանա լճի մակարդակի իջեցմանը զուգահեռ ջրահավաք ավազանի տնտեսության տարբեր ճյուղերից գետերի հոսքերով լիճ են թափվում և թունաքիմիկատներով հարուստ ջրեր:

Ջրավազանի ջրառատ գետերում, կառուցված են ՓՀԷկ-ր որոնց ուսումնասիրության ընթացքում գրանցվել է, որ գլխամասային ջրառ կառուցվածքներում նախատեսված բնապահպանական թողքերի հանգուցները գտնվում են տեխնիկապես անբավարար վիճակում, կամ գետի նվազագույն հոսքերը լրիվ ուղորդվում են ՓՀԷկ-ի ագրեգատները:

Գիլի լճի վերականգնման էկոլոգիական անհրաժեշտությունը

Գիլի լիճը մինչև 1950 թվականը ունեցել է 3.5-4.0 կմ. տրամագիծ, առավելագույն խորությունը 2մ և իր հիդրոքիմիական ռեժիմով տարբերվել է Սևանա լճից:

Լիճը կարևոր նշանակություն ուներ ջրաճահճային թռչունների բնադրման, ինչպես նաև Սևանի ձկների՝ Կողակի, Բեղլուի ձվադրման համար:

Լիճը սնվել է Մասրիկ գետի և մասամբ Սևանա լճի ջրերով: Հաշվի առնելով Գիլի լճի հատակի և Սևանա լճի փաստացի մակարդակի տարբերությունը /շուրջ 10 մետր/, լիճը "կծաղկի" ջրիմուռներով, որոնք հոսքային ջրերով կտեղափոխվեն Սևանա լիճ և կավելացնեն լճի օրգանական աղտոտվածությունը:

Ելնելով վերոհիշյալից մասնագիտացված Գ.Հ. ինստիտուտի կողմից առաջարկվել է լրացուցիչ ուսումնասիրություններ կատարել Գիլի լճի վերականգնման խնդրի շուրջ:

Սևանա լճի էկոհամակարգի բարելավմանն ուղղված բնապահպանական միջոցառումները

Սևանա լճի, նրա ջրավազանի և նրան սնող ջրաղբյուրների էկոհամակարգի փաստացի վիճակը բարելավելու բնապահպանական նորմերով պահանջվող իրավիճակը վերականգնելու նպատակով նախատեսված է՝

Ապահովել Սևանա լճի հորիզոնի բարձրացումը մինչև 1903.5մ նիշը համաձայն N3 աղյուսակում բերված ժամանակացույցի և N1 գրաֆիկի:

աղ. N3

Տարեթիվը	Լճի մակար-	Լճի մակարդակ	Լճի ակտիվ	Արփա –	Ընդամենը	Ոռոգման ջրի

*«**Գեղարքունիք-4**» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

	դակը, մ	ի բարձրացման ջրի քանակը, մլն.մ^3	ջրատվություն-ը, մլն.մ^3	Սևանով ջրի ծավալը, մլն.մ^3	մուտք գործող ջրի քանակը, մլն.մ^3	պահանջարկը, մլն.մ^3
2020	1900.40	300	220	250	470	170
2021	1900.50	-"-	-"-	-"-	-"-	-"-
2022	1900.75	-"-	-"-	-"-	-"-	-"-
2023	1901.00	-"-	-"-	-"-	-"-	-"-
2024	1901.25	-"-	-"-	-"-	-"-	-"-
2025	1901.50	-"-	-"-	-"-	-"-	-"-
2026	1901.75	-"-	-"-	-"-	-"-	-"-
2027	1902.00	-"-	-"-	-"-	-"-	-"-
2028	1902.25	-"-	-"-	-"-	-"-	-"-
2029	1902.50	-"-	-"-	-"-	-"-	-"-
2030	1902.75	-"-	-"-	-"-	-"-	-"-
2031	1903.00	-"-	-"-	-"-	-"-	-"-
2032	1903.25	-"-	-"-	-"-	-"-	-"-
2033	1903.50	-"-	-"-	-"-	-"-	-"-
Ընդամենը		***4200***	***3080****	***3500***	***6580***	***2380***

**լճի ակտիվ ջրատվությունը ենթակա է փոփոխման կախված նրա*



ջրատվությունից

- Ավարտել Արփա-Սևան թունելի վերականգնման աշխատանքները և ապահովել միջին տարեկան 250 մլն.մ^3 հոսքը Սևանա լիճ;
- Իրականացնել ինչպես Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների /նաև հարակից համայնքների/ մաքրման կայաններին

միացող կոյուղու ցանցերը, այնպես էլ համայնքների տարածքում կոյուղու ցանցերը՝ ապահովելու հոսքաջրերի լրիվ կենսաբանական մաքրում, անհրաժեշտության դեպքում տեղադրելով բիոմաքրման մոդուլներ;

- Իրականացնել Սևանա լճի ջրավազանում գործող հանգստի և սննդի օբյեկտներում լոկալ կենսաբանական մաքրման կայանների տեղադրումը;
- Ապահովել շուրջ 500 հա տարածքում մնացորդային կոճղարմատների և իրացված շենք շինությունների թափոնների մաքրումը;
- Իրականացնել գործող ոռոգման պոմպակայանների փոխարեն 4 ջրամբարների շինարարությունը շուրջ 150 մլն.մ^3 ծավալով;
- Ապահովել բնակավայրերին հարակից տարածքներում գետերի հուների մաքրում կենցաղային աղբից և բարեկարգել լճի հետ լծորդվող հատվածները;
- Ապահովել ՓՀԷԿ-ի գլխամասային կառուցվածքներում բնապահպանական թողքերը;
- Բարեկարգել ջրավազանի տարածքում գոյություն ունեցող շուրջ 20 շինույթերի հանքավայրերի և նրանց թափոնների տարածքները;
- Բնապահպանական միջոցառումների պահանջներին համապատասխան բարեկարգել չգործող աղբավայրերը:

Արփա-Սևան թունելը

Սևանա լճի ջրային ռեսուրսները վերականգնելու և Արփա գետի ջրային ռեսուրսները արդյունավետ օգտագործելու նպատակով, Արփա գետի վրա Կեչուտի ջրամբարում ջրերը կարգավորելուց հետո 1982 թվականին շահագործման հանձնվեց Արփա-Սևան թունելը հետևյալ ցուցանիշներով՝

աղ. N4

հ/հ	Թունելի չափանիշները	Չափման միավորը	Չափանիշների արժեքները
1	Թունելի կտրվածքի մակերեսը	մ^2	7.6 - 9.6
2	Ջրթողունակությունը նորոգման ընթացքում	մ^3/վրկ	14.0
3	Ջրթողունակությունը նորոգումից հետո	մ^3/վրկ	20.0
4	Թունելի երկարությունը	կմ	42.0
5	Թունելի ելքի հատակի նիշը	մ	1902.6
6	Տեղափոխվող ջրի միջին ծավալը	մլն.մ^3	200 – 250

Հաշվի առնելով, որ Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման համար /լճի մակերեսի հաշվարկային նիշը պետք է լինի 1903.5 մ, իսկ Արփա-Սևան թունելի ելքի նիշը փաստացի 1902.6մ է/ առաջարկվում է առաջացող շուրջ 0.9 դիմհարի ժամանակ թունելի շահագործման համար նորմատիվ պայմաններ ստեղծելու նպատակով, թունելի վերջնամասում կառուցել երկկողմանի վաքեր

բետոնյա բլոկներից 0.9 – 0.2 մետր բարձրությամբ, 1.1 մետր լայնությամբ, որը կծառայի որպես մայթ շահագործվող անձնակազմի և ուղորդող գիծ տրանսպորտային միջոցների համար:

Գրաֆիկ N2



h – Թունելի և ջրի խորության նիշերը, ելքի մոտ
L - Թունելում դիմահարի առավելագույն երկարությունը

Արփա-Սևան թունելի հիդրավլիկական չափանիշներ ելքի հատվածում

Q, մ³/վրկ	b մ	h մ	P մ	β	ω մ²	R	c	i	V մ/վրկ
(Q=14.0 մ3/վրկ)									
Դիմահարի բացակայության դեպքում									
14.3	3.7	2.05	7.80	1.80	7,59	0.97	67	0.00081	1.88
Դիմահարի առկայության դեպքում									
14.3	3.7	2.74	9.18	1.35	10.1	1.10	69	0.00038	1.41
(Q=20.0 մ3/վրկ)									
Դիմահարի բացակայության դեպքում									
20.2	3.7	2.6	8.9	1.42	9.62	1.08	69	0.00081	2.04
Դիմահարի առկայության դեպքում									
20.2	3.7	3.30	10.3	1.12	12.2	1.18	70	0.00048	1.67

Ջրամբարաշինարարության խնդիրները

Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսական հողատեսքերի ոռոգման նպատակով կառուցված են 7 ջրամբար գումարային 4.28 մլն.մ^3 ծավալով, 5.38 մլն.մ^3 ջրատվությամբ, այդ թվում՝

աղ.N5

h/h	Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ծավալը, մլն.մ^3	Ջրատվությունը, մլն.մ^3
1	Լանջաղբյուր -1	0.21	0.26
2	Լանջաղբյուր -2	0.35	0.42
3	Գեղարքունիքի -1	0.07	0.09
4	Հովտի	0.29	0.36
5	Ջիլլի լճի	0.65	0.81
6	Խազիգյուլի	0.21	0.26
7	Արծվաշենի	2.5	3.10
Ընդամենը		4.28	5.38

Գեղարքունիքի մարզում տարածքի ջրային ռեսուրսները կարգավորելու և ներկայումս մեխանիկական եղանակով ոռոգվող գյուղատնտեսական

հողատեսքերը ոռոգելու նպատակով մարզում ուսումնասիրվել է ևս 16 ջրամբարների շինարարության հնարավորությունները /աղյուսակ N6/՝ գումարային 39.41 մլն.մ^3 ծավալով:

աղ. N6

/h	Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ծավալը, մլն.մ^3
1	Ախպրաձորի	1.50
2	Նորաբակի	1.55
3	Մասրիկի	5.33
4	Սոթքի	1.68
5	Կարճաղբյուրի	3.50
6	Գեղհովտի	4.00
7	Վարդենիկի	4.60
8	Արծվանիստի	1.00
9	Ծակքարի	1.35
10	Ծաղկաշենի	2.83
11	Գրիձորի	2.40
12	Գեղարքունիքի	2.82
13	Լանջաղբյուրի	1.75
14	Ծաղկունքի	1.80
15	Յայջիի	1.50
16	Գեյսուի	1.50
Ընդամենը		***39.41***

Առաջին հերթում նախատեսվում է կառուցել.

<u>Արգիճիի ջրամբար</u> – նախատեսվում է Գեղարքունիքի մարզում, Արգիճի գետի 2260 մ նիշ ունեցող գետահատվածում: Ջրամբարը նախատեսվում է 6.5 մլն.մ^3 ծավալով տարածքի 10 համայնքների 3390 հա գյուղատնտեսական հողատեսքերը, այդ թվում 824 հա մեխանիկական եղանակով ոռոգվող հողատեսքերն ինքնահոս եղանակով ոռոգելու համար:

Ջրամբարի տեխնիկատնտեսական ցուցանիշները բերված են N7 աղյուսակում:

աղ. N7

ՀՀ ը/կ	Տեղնիկատնտեսական ցուցանիշները	Չափման միավորը	Արժեքները
1	Ոռոգելի տարածքը	հա	3390
2	Ջրամբարի ծավալը	մլն.մ^3	6.5
3	Պատվարի բարձրությունը/բետոնյա/	մ	16.5
4	Տնտեսված էլեկտրաէներգիան	մլն.դրամ	132.0
5	Ջրամբարի շինարարության նախնական արժեքը	մլն. ԱՄՆ $	4.21
6	1մ^3 ջրի արժեքը	ԱՄՆ $	0.77
7	1հա ինքնահոս ոռոգման արժեքը	ԱՄՆ $	1240
8	Ընդհանուր զուտ եկամուտը	մլրդ. դրամ	2225

Արգիճիի ջրամբարի շինարարությունը կնպաստի նաև՝

- Սևանա լճի կենդանական աշխարհին սպառնացող վտանգի վերացմանը /պոմպակայանների չաշխատեցման արդյունքում/;
- կապահովվի "Լիճք-Արգիճի" արգելոցի ֆունկցիոնալ գործընթացները /ջրային բուսականության, թռչունների, հազվագյուտ ձկնատեսակների, հանքային աղբյուրների պաշտպանությունը/;
- բույսերի մեխանիկական եղանակով ոռոգումը կփոխարինվի ինքնահոս եղանակով;
- Արգիճի գետի ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը և ջրավազանում ճահճակալման երևույթների վերացմանը;
- կնվազի 1 հա ոռոգման համար պահանջվող ջրի արժեքը:

Ջրամբարի համար մշակված է տեխնիկատնտեսական հիմնավորումներ:

<u>Աստղաձորի ջրամբար</u> – նախատեսվում է Գեղարքունիքի մարզում, Աստղաձոր գետի 2120 մ նիշ ունեցող գետահատվածում:

Ջրամբարը նախատեսված է 1.25մլն.մ^3 ծավալով տարածքի 4 համայնքների 1440 հա գյուղատնտեսական հողատեսքերը, այդ թվում 320 հա մեխանիկական եղանակով ոռոգվող հողատեսքերը ինքնահոս եղանակով ոռոգելու համար:

Ջրամբարի պատվարը քարահողային է 32մ բարձրությամբ:

Ջրամբարի տեխնիկատնտեսական ցուցանիշները բերված են N 8 աղյուսակում:

աղ. N 8

ՀՀ ը/կ	Տեխնիկատնտեսական ցուցանիշները	Չափման միավորը	Արժեքները
1	Ոռոգելի տարածքը	հա	1440
2	Ջրամբարի ծավալը	մլն.մ^3	1.25
3	Պատվարի բարձրությունը /քարահողային/	մ	32
4	Տնտեսված էլեկտրաէներգիան	մլն.դրամ	91.3
5	Ջրամբարի շինարարության նախնական արժեքը	մլն ԱՄՆ $	2.0
6	1 մ^3 ջրի արժեքը	ԱՄՆ $	1.6
7	1 հա ինքնահոս ոռոգման արժեքը	ԱՄՆ $	1390
8	Ընդհանուր զուտ եկամուտը	մլրդ. դրամ	1420

Աստղաձորի ջրամբարի շինարարությունը կնպաստի նաև՝

- պոմպակայանների չաշխատեցման արդյունքում կվերանա Սևանա լճի կենդանական աշխարհին սպառնացող վտանգը;
- կնվազի 1 հա ոռոգման համար պահանջվող ջրի արժեքը;
- առավել արդյունավետ կօգտագործվի Աստղաձոր գետի ջրային ռեսուրսները;
- կվերանա Աստղաձոր գետի ջրավազանի կենցաղային աղբով աղտոտման հնարավորությունները;
- գյուղատնտեսական մշակաբույսերի մեխանիկական եղանակով ոռոգումը կփոխարինվի ինքնահոս եղանակով և կապահովվի կայուն բերքատվությունը;

Ջրամբարի համար մշակված է տեխնիկատնտեսական հիմնավորումներ:

Կառուցման ենթակա ջրամբարների ոռոգելի տարածքները.

հ/հ	Ջրամբարի անվանումը	Ոռոգելի տարածքը հա
1	Լանջաղբյուր -1	3.3
2	Լանջաղբյուր -2	5.3
3	Գեղարքունիքի -1	1.1
4	Հովտի	4.6
5	Ջիլլի լճի	10.0
6	Խազիգյոլի	3.3
7	Արծվաշենի	39.0
Ընդամենը		66.6

Բնապահպանական միջոցառումներ

Համաձայն ՀՀ օրենքով և իրավական այլ փաստաթղթերով Սևանա լճի առափնյա տարածքի կառուցվածքը, ըստ կենտրոնական գոտու հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայի դասակարգվում է՝

Ա. Հատուկ պահպանվող տարածքներ հանգստի համար – 30.4 հա, այդ թվում՝

- կանաչապատված և սպասարկման համար – 9.8 հա
- լողափնյա տարածք – 14.1 հա
- ներքին ճանապարհներ, ավտոկանգառներ – 6.5 հա

Բ. Պատմության ու մշակույթի և բնական լանդշաֆտի պահպանման տարածքներ-39.2հա

Կենտրոնական էկոլոգիական գոտին ընդգրկում է Շորժա – Սևան թերակղզի – Հայրիվանք տիրույթի տարածքները և հանդիսանալով որպես հատուկ պահպանվող տարածք նախատեսված է օգտագործել միայն բնապահպանական, առողջարարական, պատմամշակույթային, բնակչության հանգստի համար:

Հաշվի առնելով, որ լճի մակարդակի բարձրացումը մինչև հաշվային 1903.5 մ նիշը կնպաստի նրա էկոլոգիական հավասարակշռության վերականգնմանը նախատեսված է՝

- ապամոնտաժել 1908մ նիշից ցածր գտնվող կառույցները և տարածքը մաքրել շինարարական և այլ աղբից;
- հանգստի համար ակտիվ օգտագործման նպատակով նախատեսված է կառուցապատման ենթակա տարածքների միջև ստեղծել "բուֆերային" շերտեր, բնական լանդշաֆտը պահպանելու համար;
- կենտրոնական գոտու ամբողջ երկարությամբ 1903.5մ նիշից բարձր 100մ լայնությամբ տարածքը ամրագրված է որպես լանդշաֆտի պահպանման շերտ և ենթակա չէ կառուցապատման;
- առաջնահերթ կառուցապատման ենթակա տարածքներում գոտիների միջև նախատեսվում է.

- 5-10մ լայնությամբ կանաչապատման շերտեր;
- ինժեներական և կոմունալ կահավորման հարթակներ, մեկ հանգստացողին 6մ^2 հաշվարկով;
- աղբակուտակման տարողություններ կոշտ թափոնների և կեղտաջրերի կուտակիչ ջրաթափանց հորեր, կենտրոնական գոտու սահմաններից դուրս;
- ավտոկայանները տեղադրել ավտոմայրուղու ճանապարհամերձ գոտիներում և կահավորել պարբերաբար դատարկվող յուղակուտակիչ սարքերով:

2.6.2.3. Տեխնիկական այլ առաջարկություններ

Ոլորտում առկա խնդիրների լուծման համար հատկապես

կարևոր է ոռոգման արդյունավետ եղանակների ներդրումը, ինչը կնպաստի ոռոգման ջրի նպատակային օգտագործմանը:

Ոռոգման համակարգերը պետք է բաղկացած լինեն ջրամբարներից (գլխամասային հանգույց), ջրանցքների համակարգից (մայրուղային ջրանցք, առանձին ճյուղավորումներով բաշխիչ ցանց), որոնց միջոցով հնարավոր կլինի կանոնավոր ոռոգում իրականացնել տարբեր եղանակներով (մակերեսային՝ ակոսներով, շերտերով, խողովակաշարերի միջոցով, անձրևացման, կաթիլային):

ԱՌԱՋԱՐԿ – 1

Ոռոգման փակ համակարգ

Նախկինում և այժմ նույնությամբ գործող ոռոգման ջրի բաց տիպի համակարգերի (մետաղական կամ ասբեստե կիսախողովակներ, բետոնե կամ հողային հունով առուներ) գործարկումը դարձել է անարդյունավետ, քանի որ դրանցով տեղափոխվող ջրի 25-30 տոկոսը կորուստներն են կազմում:

Իրավիճակի լիցքաթափման, այն է՝ կանոնավոր ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև համակարգի վերահսկման և ոռոգման ջրի կորուստների դեմն առնելու նպատակով նախատեսվում է ոռոգման «ԲԱՑ» համակարգից անցում կատարել ոռոգման «ՓԱԿ», ջրաչափերով կահավորված ջրամատակարարման համակարգին, ինչը հնարավորություն կտա ապահովել ջրի արդյունավետ օգտագործումն ու հավասարաչափ բաշխումը:

Հաշվի առնելով ոռոգման կանոնավոր բաշխիչ ցանցերի բացակայությունը գրեթե բոլոր համայնքներում, ոռոգման ջրի անհարկի կորուստներից խուսափելու, ինչպես նաև տնամերձ հողատարածքների արդյունավետ ոռոգում ապահովելու նպատակով նպատակահարմար է բնակավայրերի տարածքում նախատեսել փակ խողովակաշարերով ոռոգման ներտնտեսային բաշխիչ ցանց, որոնք կանցնեն փողոցներին զուգահեռ՝ յուրաքանչյուր հողակտորի համար ունենալով մեկ ջրթող կառուցվածք:

ԱՌԱՋԱՐԿ – 2

Կաթիլային ոռոգման համակարգ

Մի շարք երկրներում ոռոգելի երկրագործության մեջ լայնորեն կիրառվող կաթիլային ոռոգումը հիմնված է բույսի արմատային համակարգին ջրի անմիջական մատուցման սկզբունքի վրա, ինչը բացառում է ջրի անհարկի վատնումը:

Կաթիլային ոռոգումը հորինվել է որպես բերքի ավելացման հիմնական միջոց՝ ջրի ոչ մեծ ծախսերի դեպքում: Ոռոգման այս տիպն իդեալական է ցանկացած

տիպի բույսերի համար և կիրառվում է ինչպես մասնավոր ֆերմերային տնտեսություններում, այնպես էլ արդյունաբերական մասշտաբներում:

Կաթիլային ոռոգման համակարգի հիմնական տարրը հանդիսանում է



կաթիլային խողովակը, որն իրենից ներկայացնում է բացվածքներով խողովակ:

Կաթիլային ոռոգման խողովակներն, ի տարբերություն սովորական խողովակների, տնտեսող են, ջուրն անմիջապես հասնում է արմատներին, ինչն ապահովում է որակյալ ոռոգում: Ջրի ծախսերը 3-4 անգամ քիչ են, կորուստները՝ երեք անգամ քիչ, իսկ դրա յուրացման արդյունավետությունը՝ կրկնակի անգամ ավելի:

Խողովակները կարող են լինել տարբեր, բայց էությունը մեկն է. Կայունացված պոլիէթիլենից խողովակն ընկած է հողի վրա ակոսների երկայնությամբ, և մատակարարում է ջուր կաթոցիկի միջոցով: Փոքր ճնշման դեպքում՝ կաթիլային, մեծի դեպքում՝ միկրոշիթերով:

Կաթիլային ոռոգումը զգալիորեն խթանում է գյուղատնտեսական արտադրության ծավալների մեծացումը: Կաթիլային ոռոգման համակարգը կարող է օգտագործվել.

- Բոլոր տեսակի մրգատու այգիների համար (խաղող, սեխ, ձմերուկ և այլն):
- Բոլոր տեսակի բույսերի (բամբակ, արևածաղիկ, և այլն) և ծաղիկների աճեցման համար:
- Բոլոր տեսակի բանջարեղենների աճեցման համար (վարունգ, սմբուկ, լոբի, կարտոֆիլ, պղպեղ, և այլն):
- Հատկապես ջերմոցներում, որտեղ կաթիլային համակարգը թույլ կտա իրագործել կայուն, տարիների ընթացքում խնդիր չհարուցող ոռոգում:

<u>Կաթիլային ոռոգման առավելությունները</u>.

- ***Հողի օդափոխություն (քամահարում)***

  Կաթիլային համակարգի միջոցով հնարավոր է հողի խոնավությունը պահել օպտիմալ սահմաններում, ինչը արմատների աճի ողջ շրջանում դրանց համար կապահովի ինտենսիվ շնչելու հնարավորություն՝ անգամ անմիջապես ոռոգումից հետո: Հողում եղած թթվածինը հնարավորություն է տալիս արմատային համակարգին ակտիվորեն գործելու:

- ***Արմատային համակարգ***

  Արմատային համակարգը զարգանում է զգալիորեն ավելի լավ, քան ցանկացած այլ ոռոգման դեպքում՝ կենտրոնանալով կաթոցիկների

շրջանում և վերածվելով ակտիվ արմատային թելիկներց բաղկացած առատ զանգվածի:

- ***Մնուցում***

  Լուծված պարարտանյութերը ոռոգման հետ տրվում են անմիջապես արմատային համակարգին, ինչի արդյունքում տեղի է ունենում սնուցող նյութերի ինտենսիվ յուրացում: Սա շոգ տարածաշրջաններում պարարտացման ամենաարդյունավետ եղանակն է:

- ***Բույսերի պահպանություն***

  Բույսերի տերևները չեն խոնավանում ինչպես անձևացման ժամանակ: Փոքրանում է հիվանդությունների տարածման հնարավորությունը, քանի որ մանրեասպան միջատները չեն լվացվում տերևներից:

- ***Ագրոտեխնոլոգիա***

Կաթիլային ոռոգումը թույլ է տալիս հողի մշակում, սրսկում և բերքահավաք իրականացնել ցանկացած ժամանակ՝ անկախ ոռոգումից, քանի որ շարքերի միջև ընկած հողատարածքները սեզոնի ողջ ընթացքում չոր են մնում:

Որոշ երկրներ հաջողությամբ անցում են կատարել կաթիլային ոռոգման համակարգին, որը թեև զգալիորեն տնտեսում է ջրային ռեսուրսները, սակայն դեռևս բավականին ծախսատար միջոց է:

Հաշվի առնելով, որ երկրի պարենային անվտանգության երաշխավորը՝ գյուղատնտեսությունն է, ուստի ոռոգման համակարգը կարգավորելը պետության կայացման լուրջ նախադրյալ է, հետևաբար և կաթիլային ոռոգման համակարգի նախատեսումը ևս արդարացված է:

2.6.3. Էներգամատակարարում

2.6.3.1. Էլեկտրամատակարարում

Մարզի տարածքի էլեկտրամատակարարման համակարգի շահագործումն իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի «Գեղամա» մասնաճյուղի կողմից, որը հիմնականում ապահովում է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում:

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին:

Ստորև աղյուսակում տրված է տեղեկատվություն ՀՀ Գեղարքունիքի մարզով անցնող «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ տնօրինության բարձր լարման էլեկտրահաղորդման գծերի վերաբերյալ.

Հ/Հ	Գծի կարգավարական անվանումը	Լարումը /կվ/	Երկարությունը /կմ/	Համայնքը, մարզը
1	«Նորատուս»	220	42.42	Գեղարքունիք
2	«Լիճք»	220	29.34	Գեղարքունիք
3	«Վարդենիս»	220	25.01	Գեղարքունիք
4	«Սևան»	110	20.9	Գեղարքունիք
5	«Գագարին»	110	12.4	Գեղարքունիք

Բնակավայրերի էլեկտրամատակարարումն իրականացվում է 10/0.4 կՎ լարման տրանսֆորմատորային էլեկտրական ենթակայանների միջոցով:

Էլեկտրահաղորդման օդային գծերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար:

Միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի գլխավոր փողոցներն ունեն արտաքին լուսավորություն: Բնակավայրերի որոշ հատվածներում հին փայտե հենասյուները փոխարինվել են նոր բետոնե սյուներով:

Միկրոռեգիոնում ներառված բնակավայրերիԷլեկտրամատակարարման առկա համակարգերի տեխնիկական բնութագրերն ու էլեկտրաէներգիայի օգտագործման վերաբերյալ քանակական ցուցանիշներ

Բնակավայր	Գլխավոր սնուցող ենթակայաններ				10/0.4 ենթակայան			Էլ.էներգիայի տարեկան գումարային ծախսը, այդ թվում		1 մարդու փաստացի տարեկան սպառումը
	Անվանումը	Լարումը կՎ	Հզորությունը կՎԱ	Տեղակայման վայրը	Առկա տրանսֆ-ի քանակը	Հզորությունը կՎԱ	Տեղակայման վայրը	Կոմունալ կենցաղային	Արտադրական	
Ախպրաձոր	Լճավան	35	2*2500	գ.Լճավան	1	100	գ.Ախպրաձոր	134424	3576	1792
Ակունք	Վարդենիս	110	1*20,000 1*16,000	ք.Վարդենիս	1	63	գ.Ակունք	1828692	91308	2249
					7	100	գ.Ակունք			
					3	250	գ.Ակունք			
					1	400	գ.Ակունք			
Գեղաքար	Վարդենիս	110	1*20,000 1*16,000	ք.Վարդենիս	1	63	գ.Գեղաքար	18240	960	467
					1	250	գ.Գեղաքար			
Լճավան	Լճավան	35	2*2500	գ.Լճավան	1	160	գ.Լճավան	276660	8940	2112
					1	400	գ.Լճավան			
Լուսակունք	Վարդենիս	110	1*20,000 1*16,000	ք.Վարդենիս	2	160	գ.Լուսակունք	768456	52344	2640
					4	250	գ.Լուսակունք			
Խաչաղբյուր	Վարդենիս	110	1*20,000 1*16,000	ք.Վարդենիս	2	40	գ.Խաչաղբյուր	534216	89784	1829
					1	63	գ.Խաչաղբյուր			
					2	100	գ.Խաչաղբյուր			
					1	160	գ.Խաչաղբյու			

							ր			
					1	250	գ.Խաչաղբյուր			
					1	400	գ.Խաչաղբյուր			
Ծովակ	Լճավան	35	2*2500	գ.Լճավան	5	250	գ.Ծովակ	1252560	62640	2246
					1	100	գ.Ծովակ			
Կարճաղբյուր	Լճավան	35	2*2500	գ.Լճավան	3	160	գ.Կարճաղբյուր	1087080	85320	2223
					3	250	գ.Կարճաղբյուր			
Մաքենիս	Լճավան	35	2*250	գ.Լճավան	2	400	գ.Մաքենիս	145392	2208	1615
					1	180	գ.Մաքենիս			
Մեծ Մասրիկ	Վարդենիս	110	1*20,000 1*16,000	ք.Վարդենիս	1	100	գ.Մ.Մասրիկ	2025264	170736	3256
					2	100	գ.Մ.Մասրիկ			
					1	250	գ.Մ.Մասրիկ			
					2	400	գ.Մ.Մասրիկ			
Նորակերտ	Գեղամասար	110	1*10,00	գ.Գեղամասար	1	100	գ.Նորակերտ	523860	40140	3081
					1	160	գ.Նորակերտ			
					2	250	գ.Նորակերտ			
Վանևան	Վարդենիս	110	1*20,000 1*16,000	ք.Վարդենիս	1	160	գ.Վանևան	254028	21972	2822
					1	100	գ.Վանևան			
Տորֆավան	Վարդենիս	110	1*20,000 1*16,000	ք.Վարդենիս	1	100	գ.Տորֆավան	232800	19200	1804
					1	400	գ.Տորֆավան			
գ.Ծովինար	Ծովինար	110	6300	գ.Ծովինար	1	160	գ.Ծովինար	295000	0	2063
					1	400	գ.Ծովինար	464000	0	2592
					1	250	գ.Ծովինար	550000	0	2165
					1	400	գ.Ծովինար	454000	0	1983

գ.Արծվանիստ	Ծովինար	110	6300		1	160	գ.Ծովինար	146000	0	2212
					1	250	գ.Ծովինար	0	12000	12000
					1	100	գ.Ծովինար	0	29000	29000
					1	25	գ.Ծովինար	0	25000	25000
					1	160	գ.Ծովինար	49000	0	1531
					1	25	գ.Ծովինար	0	26000	26000
					1	40	գ.Ծովինար	62000	0	2696
					1	400	գ.Ծովինար	0	528000	528000
					1	400	գ.Ծովինար	0	35000	35000
				գ.Ծովինար	1	250	գ.Արծվանիստ	175000	0	1822
				գ.Ծովինար	1	100	գ.Արծվանիստ	109000	0	1946
				գ.Ծովինար	1	250	գ.Արծվանիստ	164000	0	1656
				գ.Ծովինար	1	250	գ.Արծվանիստ	223000	0	1798
				գ.Ծովինար	1	160	գ.Արծվանիստ	143000	0	2042
				գ.Ծովինար	1	160	գ.Արծվանիստ	228000	0	2561
				գ.Ծովինար	1	160	գ.Արծվանիստ	174000	0	1757
				գ.Ծովինար	1	40	գ.Արծվանիստ	49000	0	4083
				գ.Ծովինար	1	25	գ.Արծվանիստ	0	24000	24000
				գ.Ծովինար	1	25	գ.Արծվանիստ	0	29000	29000
				գ.Ծովինար	1	160	գ.Արծվանիստ	0	4500	4500
				գ.Ծովինար	1	630	գ.Արծվանիստ	0	148000	148000

				գ.Ծովինար	1	25	գ.Արծվանիստ	0	24000	24000

Էլեկտրական բեռնվածքների հաշվարկը

Հաշվարկային առավելագույն հզորությունը հաշված է որպես հզորությունների գումար՝

- կոմունալ-կենցաղային պահանջներ, հասարակական, կուլտուր-կենցաղային շինություններ, հանգստի օբյեկտներ, արտաքին լուսավորություն,
- արտադրական օբյեկտների բեռնվածություններ:

Առավելագույն հզորությունների քանակի որոշման համար հաշվարկները կատարվել են ըստ հեռանկարային բնակչության քանակի:

Համաձայն ՇՆևԿ 2.07.01-89-ի՝ գյուղական բնակչության համար մեկ մարդու էլեկտրաէներգիայի սպառման տարեկան խոշորացված ցուցանիշը 950 կվտ.ժամ է, տարվա օգտագործվող ժամերի քանակը՝ 4100 ժամ:

Ստորև աղյուսակում տրված է բնակավայրերի էլեկտրամատակարարման հեռանկարային կարիքները բավարարելու համար պահանջվող առավելագույն հզորությունների, ինչպես նաև այդ համայնքներում ներկայումս առկա տրանսֆորմատորային հզորությունների ցուցանիշները.

Բնակավայրերի հեռանկարային պահանջվող առավելագույն հզորություններն ու առկա տրանսֆորմատորային հզորությունների ցուցանիշները.

Ա/հ	Բնակավայրերի անվանումները	Հեռանկարային բնակչության թիվը (կվ	Մեկ մարդու հաշվով էլ. էներգիայի գումարային ծախսը (հազ. Կվտ.ժամ/տարի)			Տարվա օգտագործվող ժամերի քանակը	Պահանջվող տրանսֆորմատորային հզորությունը (կՎԱ)	Առկա տրանսֆորմատորային հզորությունները (կՎԱ)
			Բ	Ա	Կորուստ 13 %			

		ան քանակը (տ. ժամ/տարի)					ի քանակը (դ100	ոութ-յունը (կՎ	հաանուրհզո
1	Ծովինար	5120	950	4864.5	729.7	1459.3	-//-	1720.4	2770
2	Արծվանիստ	3524	-//-	3348.2	502.2	1004.4	-//-	1184.1	2235
3	Ախպրաձոր	403	-//-	382.5	57.4	114.7	-//-	135.3	100
4	Ակունք	4462	-//-	4238.5	635.8	1271.5	-//-	1499.0	1913
5	Գեղաքար	170	-//-	162.0	24.3	48.6	-//-	57.3	313
6	Լճավան	625	-//-	593.6	89.0	178.1	-//-	209.9	560
7	Լուսակունք	1701	-//-	1615.6	242.3	484.7	-/	571.4	1640

							/ -		
8	Խաչաղբյուր	1346	-//-	1279.1	191.9	383.7	- / / -	452.3	1073
9	Ծովակ	2990	-//-	2840.3	426.0	852.1	- / / -	1004.5	1350
10	Կարճաղբյուր	2560	-//-	2431.7	364.7	729.5	- / / -	860.0	1230
11	Մաքենիս	535	-//-	507.9	76.2	152.4	- / / -	179.6	890
12	Մեծ Մասրիկ	2969	-//-	2820.4	423.1	846.1	- / / -	997.5	1350
13	Նորակերտ	955	-//-	907.1	136.0	272.1	- / / -	320.8	760
14	Վանևան	378	-//-	359.5	53.9	107.8	- / / -	127.1	260
15	Տորֆավան	515	-//-	489.1	73.3	146.7	- / / -	173.0	500

Տրանսֆորմատորների առկա և պահանջվող հզորությունների համեմատությունը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր բնակվայրերում ներկայում առկա տրանսֆորմատորային ենթակայանները հիմնականում ունեն բավարար պահուստային հզորություններ՝ բնակավայրերի էլեկտրաէներգիայի հեռանկարային պահանջարկը բավարարելու համար: Տրանսֆորմատորային հզորության պակաս կզգացվի միայն Ախպրաձոր համայնքում, որտեղ ներկայումս գործում է մեկ ենթակայան՝ 100 ԿՎԱ հզորությամբ:

Շահագործվող ՀԷԿ-երը

Հիդրոէներգետիկան համարվում է վերականգնվող էներգետիկայի կարևորագույն ճյուղ, և այն ողջ աշխարհում համարվում է այլընտրանքային, էկոլոգիապես մաքուր ու բնապահպանական առումով քիչ ռիսկային:

ՀՀ կառավարության 2014 թ. հուլիսի 31-ի 836-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության էներգետիկական անվտանգության ապահովման հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովող 2014-2020 թթ. միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը»:

Վերոգրյալ հայեցակարգով Հայաստանի համար հրամայական է համարվել էներգիայի վերականգնվող աղբյուրների լայնածավալ օգտագործումն ու լիակատար ներառումը երկրի վառելիքաէներգետիկ հաշվեկշռի մեջ, որի ապահովման համար վերոգրյալ ծրագիր-ժամանակացույցով նախատեսվել են նաև հիդրոէլեկտրակայանների (ՀԷԿ) կառուցման միջոցառումներ: ՀՀ տարածքում արդեն գործում է 169 փոքր ՀԷԿ (ՓՀԷԿ), իսկ շուրջ 60-ը գտնվում են կառուցման փուլում: Ներկայում ՓՀԷԿ-երն արտադրում են ՀՀ-ում արտադրվող էլեկտրաէներգիայի պահանջարկի շուրջ 10 %-ը, ինչը գալիք տասնամյակի ընթացքում աճելու միտում է ունենալու:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիաների համաձայն ներկայումս մարզում էլեկտրաէներգիա են արտադրում 14 փոքր ՀԷԿ-եր: Ստորև աղյուսակում տրված են դրանց տվյալները.

Գեղարքունիքի մարզում գործող ՀԷԿ-երը

N	Անվանումը	Դրվածքային հզորությունը	Հաշ. ճնշումը
1	«Անի» փոքր ՀԷԿ	1x60=60	22.0
2	«Ձորագյուղ-1» փոքր ՀԷԿ	2x200=400	545.4
3	«Ձոևագյուղ-3» փոքր ՀԷԿ	2x315=630	300.7
4	«Էրիկ» փոքր ՀԷԿ	2x1000+1x500=2500	96.0
5	«Այրք ՀԷԿ-1» փոքր ՀԷԿ	1x300=300	110.0
6	«Այրք ՓՀԷԿ-1» փոքր ՀԷԿ	1x630=630	126.9
7	«Մարտունի» փոքր ՀԷԿ	3x800=2400	174.4

8	«Այրք ՓՀԷԿ-2» փոքր ՀԷԿ	2x315=630	95.0
9	«Գետիկ-1» փոքր ՀԷԿ	2x2000+1x1600=5600	152.0
10	«Արգիչի» փոքր ՀԷԿ	3x1600+1x2000+1x3150=9950	274.8
11	«Ծովակ» փոքր ՀԷԿ	2x120=240	72.0
12	«Վահան» փոքր ՀԷԿ	1x800+1x500=1300	450.0
13	«Վարդենիկ» փոքր ՀԷԿ	2x3240=6480	163.3
14	«Դարանակ» փոքր ՀԷԿ	1x300+1x200=500	148.7/163.4
Ընդամենը		31.620 Մվտ	

Սակայն ՀՀ ՓՀԷԿ-երի գործունեության արդյունքում արդեն իսկ ի հայտ են եկել մի շարք խնդիրներ և խոչընդոտներ, որոնք մեծացնում են ՓՀԷԿ-երի ռիսկայնությունը բնապահպանական տեսանկյունից: ՓՀԷԿ-եր կառուցելիս գետերի էկոլոգիային հսկայական վնաս է հասցվում, քանի որ դրանք խախտում են գետերի ջրային և ջերմային ռեժիմները, խոչընդոտում են ձկների բազմացմանը, նպաստում են գետերի ծանծաղացմանը:

- Գործադիրը նոր կանոններ է սահմանում ՓՀԷԿ-երի կառուցման համար: Նոր ՓՀԷԿ-ի կառուցման համար ՋԹ չի տրամադրվի, եթե այն նախատեսվում է կառուցել այն գետերի վրա՝ որոնցում առկա են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր,
- որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է,
- որոնց վրա կան ջրաչափական դիտակետեր և նախատեսվող ջրառի և ջրահեռացման նիշերը շրջանցում են ջրաչափական դիտակետերը:

Կարգելվի ՓՀԷԿ-երի կառուցումը Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում,բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներում, բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում, ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներում, գետերի հոսքի ձևավորման տարածքներում, գետահատվածներում, որտեղ առկա են սողանքային տարածքներ, անտառային տարածքներում, որոնք հատվելու են շինարարական տարածքին մոտեցող ճանապարհներ

կառուցելիս, բացառությամբ պետական անտառային հողերում աշխատանքների իրականացման համաձայնության առկայության դեպքերի:

«Մշակվել է նաև «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար արգելված՝ Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր հանդիսացող կամ դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի ծանրաբեռնված գետերի ցանկը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծ, որով կսահմանվի փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար արգելված գետերի ցանկը»:

Որպես օրինագծի հիմնավորում նշված է. «Վերջին տարիներին փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացմանը զուգընթաց փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման ընթացքում առաջացել են էկոլոգիական ու սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրներ, որոնք հրատապ լուծում են պահանջում: Փոքր հիդրոէլեկտրակայանների շինարարությունը էական վնաս է հասցնում բնությանը, իսկ փոքր հիդրոէլեկտրակայանների զարգացմանը զուգընթաց նկատվում է կենսաբազմազանության կորուստ, վտանգվում են Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակները, գետերը ծանրաբեռնվում են դերիվացիոն խողովակներով և հայտնվում ճգնաժամային վիճակում»:

2.6.4. Գազամատակարարում

ՀՀ Գեղարքունիքի մարզը համարվում է հանրապետությունում ամենագազաֆիկացված մարզերից մեկը: Մարզի 92 համայնքներից գազաֆիկացված են 61-ը կամ մարզի համայնքների՝ 66.3%-ը: Մարզի բնակչության շուրջ 77.6%-ը բնակվում են գազաֆիկացված բնակավայրերում:

Ըստ “Գազպրոմարմենիա” ՓԲԸ-ի 26.11.2019թ. N03-29/5308 գրությամբ տրամադրված տեղեկատվության՝ մարզի տարածքով անցնում են Ղազախ-Երևան Dպ=700 մմ, Մարտունի-Վարդենիս Dպ=500 մմ, Սևան-Գավառ Dպ=500 մմ,Ղազախ-Երևան Dպ=500 մմ, Վարդենիս-Ջերմուկ Dպ=300 մմ և Գավառ-Մարտունի Dպ=500 մմ մայրուղային գազատարներն իրենց միջակապերով, կողմնատար-գազատարներով և նրանց վրա տեղադրված կառույցներով:

Ըստ “Գազպրոմարմենիա” ՓԲԸ-ի տրամադրած տեղեկատվության դիտարկվող տարածաշրջանի բնակավայրերից գազաֆիկացված չեն Ախպրաձոր, Նորակերտ, Վանեվան և Տորֆավան համայնքները: Մնացած բոլոր բնակավայրերը գրեթե 70-80 տոկոսով գազաֆիկացված են:

Ստորև աղյուսակում տրված է Գեղարքունիք-4 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի վերաբերյալ տեխնիկական տվյալներ և գազասպառման վերաբերյալ քանակական ցուցանիշներ.

Բնակավայրերի գազափոխադրման և գազաբաշխման համակարգերի վերաբերյալ տեխնիկական տվյալներ և գազասպառման վերաբերյալ քանակական ցուցանիշներ

	Բնակավայրի անվանումը	Սնուցման աղբյուր հանդիսացող գազատարի				ԳԲԿ-ի տեղակայման վայրը	Գազաֆիկացման աստիճանը %	Բաժանորդների քանակը	ԳԿԿԳՎ-ների քանակը	Գազասպառման տարեկան քանակը 2019թ. դրությամբ Կոմունալ կենցաղային և արտադրական մ³
		Տրամագիծը	Ստորգետնյա կմ	Վերգետնյա կմ	Ճնշումը					
1	Ծովինար	108	0.480	0.020	մ/ճ		81	795	4	2372250
2	Արծվանիստ	500	Մարտունի-Վարդենիս	0	բ/ճ	Մարտունու ԳԲԿ	76	510	2	414143
		25-219	18.770	2.630	մ/ճ					
3	Ախպրաձոր	0	0	0	-					0
4	Ակունք	500	Մարտունի-Վարդենիս	0	բ/ճ	Վարդենիսի	78	674	2	620792

				տունի-Վարդենիս		ԳԲԿ				
		մ/ճ	1.890	0.700	76-108					
5	Գեղաքար	0	0	0	0		0	0	0	0
6	Լճավան	բ/ճ	0	Վարդենիի-Մարտունի	500					66736
		մ/ճ	-	0.470	108		76	92	1	
7	Լուսակունք	մ/ճ	-	1.590	57-63		73	257	1	236213
8	Խաչաղբյուր	բ/ճ	0	Մարտունի	500		77	213	1	

		ի-Վարդենիս							
		մ/ճ	1.840	-	159				162413
9	Ծովակ	Մարտունի-Վարդենիս							
		բ/ճ	0		500				
		մ/ճ	-	1.510	110-159	72	446	2	379378
10	Կարճաղբյուր	Մարտունի-Վարդենիս							
		բ/ճ	0		500				
		մ	1	5	7	71	44	3	33067

		/ճ	1.108	.756	6-315		2		2
11	Մաքենիս	մ/ճ	-	6.300	159	78	62	1	44491
12	Մեծ Մասրիկ	մ/ճ	0.260	3.110	89-133	79	508	3	478998
13	Նորակերտ	մ/ճ	0	0	0	0	0	0	0
14	Վանեվան	մ/ճ	0	0	0	0	0	0	0
15	Տորֆավան	մ/ճ	0	0	0	0	0	0	0

Բնակավայրերի տարածքում գազամատակարարումն իրականացվում է երկաստիճան համակարգով՝ միջին և ցածր:

2.6.4.1. Ջերմամատակարարում

Հայաստանում կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերը տարբեր պատճառներով դադարել են գոյություն ունենալ դեռևս վաղ 2000-ականներին: Վերջին ժամանակահատվածում ավելի փոքր համակարգեր են սկսել կառուցվել առանձին կամ խումբ նորակառույց բազմաբնակարան շենքերի ջեռուցման և տաք ջրի պահանջարկն ապահովելու համար, սակայն դրանք որևէ էական կշիռ ընդհանուր պահանջարկի կառուցվածքի մեջ չունեն:

Դիտարկվող տարածաշրջանի որոշ դպրոցներում և նախադպրոցական հաստատություններում գործում են կենտրոնացված ջեռուցման համակարգեր:

Բնակչության ջեռուցման և տաք ջրի ստացումն իրականացվում է հիմնականում անհատական ջեռուցման կաթսաների կամ վառարանների միջոցով՝ բնական գազով, որը միկրոռեգիոնի գազիֆիկացման բարձր աստիճանի արդյունք է:

2.6.4.2. Գազի հեռանկարային ծախսը

Գազի ընդհանուր պահանջարկի նախնական հաշվարկները կատարելիս հաշվի է առնված բնական գազով ապահովել.

- Բոլոր բնակելի և հասարակական նշանակության շենքերի (կրթական, առողջապահական, մշակութային, վարչական) ջեռուցման համար անհրաժեշտ կարիքների բավարարումը:
- Բնակչության տաք ջրամատակարարման և սննդի պատրաստման համար անհրաժեշտ պահանջարկը:
- Արտադրական ձեռնարկությունների ջեռուցման, օդափոխության և տեխնոլոգիական կարիքների համար պահանջարկը:

Ստորև աղյուսակում տրված է բնակավայրերի գազի հեռանկարային տարեկան պահանջարկի խոշորացված հաշվարկների (ըստ ՇՆՁ IV-12.101-04) ցուցանիշները.

Գազի հեռանկարային տարեկան պահանջարկի խոշորացված ցուցանիշներն ըստ բնակավայրերի[2]

N	Բնակավայրերը	Հեռանկարային բնակչությունը	Գազի հեռանկարային տարեկան պահանջարկը հազ. մ^3
1	Ծովինար	5120	1126.5
2	Արծվանիստ	3524	775.4
3	Ախպրաձոր	403	88.6

[2] *Միջինացված ցուցանիշներում ներառված են կոմունալ-կենցաղային, հասարակական և այլ կազմակերպությունների, արտադրական ձեռնարկությունների գազասպառման պահանջը*

4	Ակունք	4462	981.5
5	Գեղաքար	170	37.5
6	Լճավան	625	137.4
7	Լուսակունք	1701	374.1
8	Խաչաղբյուր	1346	296.2
9	Ծովակ	2990	657.7
10	Կարճաղբյուր	2560	563.1
11	Մաքենիս	535	117.6
12	Մեծ Մասրիկ	2969	653.1
13	Նորակերտ	955	210.0
14	Վանևան	378	83.2
15	Տորֆավան	515	113.2
Ընդամենը			6215.5

Ըստ կատարված մոտավոր հաշվարկների, Գեղարքունիք-4 միկրոռեգիոնում ներառված բնակավայրերի գազի հեռանկարային տարեկան ընդհանուր պահանջարկը կկազմի մոտ 6 մլն մ^3:

Նախագծային առաջարկություններ

- Էլեկտրական համակարգի արդիականացում, վերազինում ժամանակակից պահանջներին համապատասխան:
- Էլեկտրաէներգիայի անխափան մատակարարում ապահովելու համար անցում երկտրանսֆորմատորային ենթակայանների:
- Ախպրաձոր համայնքում 100 կՎԱ հզորությամբ ենթակայանի նախատեսում:
- Համակարգերի համապատասխանեցում անվտանգության տեխնիկայի պահանջներին:
- Հին փայտյա հենասյուների փոխարինում նոր, բետոնե սյուներով:
- Արտաքին լուսավորության նախատեսում բոլոր փողոցներում:
- Բնակավայրերի տարածքով անցնող բարձր լարման հոսանքալարերի անվտանգության գոտիների առանձնացում, դրանց օգտագործման սահմանափակումների, ռեժիմների սահմանում:
- Վարչական, հասարակական, կրթական, առողջապահական հաստատությունների, ինչպես նաև արտադրական օբյեկտների, անհատական տների ջեռուցումը կիրականացվի ապակենտրոնացված ջերմամատակարարման համակարգերով՝ հիմնականում փոքր հզորության անհատական գազի կաթսաներով կամ վառարաններով: Տաք ջրի ստացումը՝ գազային ջրատաքացուցիչների, սննդի պատրաստումը՝ գազօջախների միջոցով:
- Գազի արդյունավետ և անվտանգ շահագործման նպատակով անհրաժեշտ է գազամատակարարման ներտնային ցանցի տեխնիկական վիճակի ապահովում:

➢ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակարաններում բնական գազ ունենալը մշտապես մարտահրավեր է հանդիսանալու մարդկանց կյանքի և գույքի անվտանգության ապահովման տեսանկյունից, ջերմամատակարարման և տաք ջրի արտադրության առումով անհատական ջեռուցման կաթսաներին այլընտրանք կարող են հանդիսանալ արևային ջրատաքացուցիչները և էներգիայի սեփական կարիքների արտադրության համար վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատական այլ համակարգերը:

2.6.4.3. Այլընտրանքային էներգետիկայի առաջարկ

➢ 21-րդ դարի սկզբին ողջ աշխարհը գնում է հանքային ռեսուրսների խիստ տնտեսման և միաժամանակ այլընտրանքային էներգիայի աղբյուրների հայտնաբերման ուղղությամբ: Ընդ որում որոշ զարգացած երկրներ վաղուց են անցել այլընտրանքային էներգետիկ աղբյուրների օգտագործման պրակտիկային ոչ միայն տնտեսական, այլև՝ բնապահպանական դրդապատճառներով:

Հայաստանի Հանրապետությում արտադրվող էլեկտրաէներգիայի հիմնական աղբյուրներ համարվում են ատոմակայանը և ջերմային էլեկտրակայանները: Եթե հաշվի առնենք, որ ջերմակայանները աշխատում են գազով, ինչը ներկրվող էներգետիկ ռեսուրս է և կախվածություն է առաջացնում արտաքին աշխարհից, ապա Էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական աղբյուրի՝ ատոմակայանի, աշխատանքի դադարեցման արդյունքում ողջ հանրապետությունը կարող է կանգնել էներգետիկ սովի առջև:

Հաշվի առնելով տարածաշրջանի մարզի կլիմայական պայմանները /արևափայլի տևողությունը՝ 2700-2800 ժամ/ որպես այլընտրանքային էներգիայի աղբյուր կարելի է դիտարկել արևային էներգիան:

Արևային ճառագայթմամբ աշխատող համակարգերի անվնաս ու անաղմուկ տեխնոլոգիայի հուսալիությունը, բաղադրամասերի երկարակեցությունը հաստատվել են տարիների ընթացքում և սկզբնական մեծ ներդրումները, որոնք պահանջվում են արևային համակարգերի գործարկման համար, արդարացնում են իրենց, ինչով էլ հենց հիմնավորվում է դրանց կիրառման նպատակահարմարությունը:

Որպես առավելություն հարկ է նշել նաև, որ արևային կոլեկտորների կիրառման համար առանձին տարածքներ հարկավոր չէ զբաղեցնել, քանի որ դրանք կարելի է տեղադրել անմիջապես շենքերի տանիքներին:

Հաշվի առնելով, որ ածխաջրածնային վառելիքը տարեցտարի թանկանում է, ուստի այլընտրանքային էներգետիկայի զարգացումն ավելի ձեռնտու է:

Արեգակնային էներգիան անսպառ և հուսալի աղբյուր է, որը տալիս է էներգետիկ անկախություն և չի աղտոտում շրջակա միջավայրը:

Վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող անհատական այլ համակարգերի տեղակայման նպատակով արդեն իսկ իրականացվում են որոշ ծրագրեր, մասնավորապես՝ «Վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի» մասնակցությամբ Հայաստանի

չգազաֆիկացված համայնքներում իրականացվում է «Էներգաարդյունավետ» վարկային ծրագիրը: Ծրագրի շրջանակներում 2019 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ տարբեր համայնքներում արդեն իսկ տեղադրվել են թվով 2896 ջրատաքացուցիչներ:

Հայաստանի կառավարությունը նախատեսում է աստիճանականորեն ընդլայնել այսպիսի ծրագրերի իրականացումը, խրախուսելով որ յուրաքանչյուր շինություն ունենա ջեռուցման և տաք ջրի արտադրության իր անհատական համակարգը՝ հիմնված վերականգնող էներգետիկ ռեսուրսների վրա:

Արևային օրերի երկար տևողությունը և մշտական քամիների առկայությունը նպաստավոր են մարզում այլընտրանքային էներգետիկայի արտադրության կազմակերպման համար:

Ըստ ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040թ.) նախատեսվում է վերականգնվող էներգետիկայի ներուժի առավելագույն օգտագործում, որը, հաշվի առնելով դրանց՝ նվազագույն ծախսումներով էլեկտրաէներգիայի արտադրական հզորությունների զարգացման պլանի մաս կազմելու հանգամանքը, հանդիսանում է էներգետիկայի բնագավառի զարգացման հիմնական առաջնահերթություններից մեկը: Արևային կայանների կառուցումը, հանդիսանալով տնտեսապես ամենաշահավետը Հայաստանի պարագայում, հաշվի առնելով առկա ռեսուրսները և այս տեխնոլոգիայի զարգացման միտումները ողջ աշխարհում, կլինի գերակա մնացած տեսակների նկատմամբ՝ հաշվի առնելով համակարգի հուսալիության ու անվտանգության ցուցանիշներով պայմանավորված սահմանափակումները:

Սույն թվականի նոյեմբերի մեկի դրությամբ ցանցին է միացված մինչև 500 կՎտ հզորության 1640 արևային ինքնավար կայաններ՝ ընդհանուր 25.9 ՄՎտ դրվածքային հզորությամբ: Ներկա զարգացման տեմպերը թույլ են տալիս կանխատեսելու, որ մինչև 2023 թվականը օրենքով սահմանված սահմանափակումների ուժի մեջ մտնելը դրանց ընդհանուր դրվածքային հզորությունը կհասնի 100 ՄՎտ-ի:

ՀՀ կառավարությունը նպատակ ունի մինչև 2026 թվականները արևային էներգիայի արտադրության մասնաբաժինը ընդհանուրի մեջ հասցնել 10%-ի, ինչը նշանակում է, որ կունենանք 1.2 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիայի արտադրանք արևային կայաններց, ինչի համար անհրաժեշտ է ունենալ ընդհանուր 700 ՄՎտ արևային կայանների դրվածքային հզորություններ՝ ներառյալ ինքնավար կայանները:

Հեռահաղորդակցություն

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապն ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ Տելեկոմ Արմենիա (Beeline ապրանքանիշ), Վիվա սելլ /ՄՏՍ ապրանքանիշ/ և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ): Տելեկոմ Արմենիա (Beeline ապրանքանիշ) ՀՀ Գեղարքունիքի մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների

միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Նշված օպերատորների բջջային կայանների վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է Հավելվածներ փաթեթի Հավելված 6-ում:

Հայաստանի Հանրապետության փոստային կապի «Հայփոստթրաստ» ԲԲԸ ՀՀ Գեղարքունիքի մարզի հինգ փոստային մասնաճյուղերը սպասարկում են մարզի 92 համայնքներին:

ՀՀ Գեղարքունիքի եթերային հեռուստահաղորդումները հեռարձակվում են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ Գեղարքունիքի տարածքային բաժնի կողմից սպասարկվող թվային կայանների միջոցով: Մարզի տարածքում հեռարձակվում են «Հ1», «Հ2», «RTR-PLANETA», «Արմենիա», «Կենտրոն», «Շանթ», «Երկիր Մեդիա», «Շողակաթ» և մարզի տարածքում տեղակայված՝ «ՔյավառTV», «ՉանգակTV» և «STV1» հեռուստաընկերությունների ծրագրերը: Մարզի ամբողջ տարածքը ընդգրկված է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Մարզի բնակավայրերը գրեթե ամբողջությամբ ապահովված են ինտերնետ ծածկույթով և կաբելային հեռուստատեսությամբ:

2.6.4.4. Կոշտ թափոններ

Մարզի 34 համայնքներում, որոնցում բնակվում են մարզի բնակչության 60%-ը, աղբահանությունն իրականացվում է մասնագիտացված կազմակերպությունների կողմից: Բոլոր 5 քաղաքներն ունեն աղբահանության համար նախատեսված մասնագիտացված մեքենաներ, որոնցով սպասարկում են մարզի բնակչության՝ 29.8%-ը: Աղբահանություն կազմակերպող համայնքներում հավաքված աղբը տեղափոխվում է բաց աղբավայրեր: ՀՀ Գեղարքունիքի մարզի 5 քաղաքները՝ Գավառ, Մարտունի, Սևան, Վարդենիս, Ճամբարակ, ընդգրկվել են «ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ թափոնների կառավարման ծրագրում», որը ֆինանսավորվում է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի (ՎԶԵԲ), Եվրոպական Միության հարևանության ներդրումային գործիք (EUNIF) կազմակերպության և Արևելյան Եվրոպայի էներգիայի արդյունավետության և բնապահպանության գործընկերության կողմից (E5P):

2011 թվականի հունիսի 10-ի N 22 Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրային որոշմամբ հավանություն է տրվել Սևանա լճի ավազանում աղբավայրերի տեղաբաշխման գլխավոր ուրվագծին

Սևանի ավազանի աղբավայրերի տեղաբաշխման հնարավոր տարբերակների մշակմանը ներկայացվող պահանջները իրենց մեջ ներառել են նաև տարածքի քաղաքաշինական-տնտեսական կազմակերպման, բնական և մշակութային լանդշաֆտների պահպանության, արդյունավետ կառավարման, ռեկրեացիոն հարուստ ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, ջրային ռեսուրսների մաքրության պահպանման, տարածքների էկոլոգիական հավասարակշռության պահպանման խնդիրները: Այդ նպատակով

աղբավայրերի տեղաբաշխման խնդիրները (գոյություն ունեցող վիճակ, վերլուծություն, համալիր գնահատական, հեռանկարային ուրվագիծ) մշակվել են «Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծմանե նախագծով մշակված համապատասխան գծագրերի վրա՝ լրացնելով և լրամշակելով աղբավայրերի տեղադրման համար տարածքներին ներկայացվող պահանջները:

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՎԻՃԱԿԸ

Մարզի 92 համայնքներից միայն 27 համայնք ունի աղբավայր, որոնցից 5-ը գտնվում է Սևանի, 5-ը Գավառի, 12-ը Մարտունու, 2-ը՝ Վարդենիսի, 3-ը՝ Ճամբարակի տարածաշրջանում:

Վարդենիսի տարածաշրջան

1) Վարդենիսի քաղաքային համայնքի աղբավայրը գտնվում է բնակավայրից 2.0-2.5 կմ արևելք, դեպի Սոթքի համայնք տանող ճանապարհին հարող հատվածում, հատկացված է ՀՀ կառավարության 13.02.2003թ. N 144-Ն որոշումով, ինչպես նաև ամրագրվել է ՀՀ կառավարության կողմից հաստատված «Վարդենիսի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծիե հիմնադրույթներով:

Աղբավայրը զբաղեցնում է 4.0հա տարածք, ստեղծված է 8-10մ-ոց փոսորակ, աղբը հողածածկվում է, տոփանվում: Տարածքը հարմար է աղբավայրի վերակառուցման համար:

Կարճաղբյուրի գյուղական համայնքի աղբավայրը տեղադրված է բնակավայրից հարավ արևելք 2.0-2.5կմ հեռավորության վրա: Աղբավայրը շրջապատված է սեփականաշնորված հողերով: Բացարձակ բարձրությունները տատանվում են 2150-2250մ: Ձմեռային ծանր պայմանների հետևանքով չի շահագործվում:

Ճամբարակի տարածաշրջան

1) Ճամբարակի քաղաքային համայնքի աղբավայրը գտնվում է բնակավայրից դեպի Վահանի գյուղական համայնք տանող ճանապարհի միջև: Չկա աղբավայրի սահմանազատում և ցանկապատ: Տարածքը շատ փոքր է, մոտ 1.0հա, շահագործվում է 30 տարի, աղբավայրում այլևս տոփանման աշխատանքներ իրականացնել հնարավոր չէ, այն սպառել է իր հնարավորությունները: 1-2 տարուց հետո աղբավայրը շահագործել չի լինի: Աղբավայրը ենթակա է լիկվիդացման: Նոր աղբավայրի տեղի ընտրությունը խիստ դժվարանում է տարածքային դեֆիցիտի, ձմեռային սեզոնի և ռելիեֆային բարդ պայմանների պատճառով:

Բացի գոյություն ունեցող աղբավայրերից մարզի տարածքում կան բազմաթիվ տարերայնորեն ձևավորված աղբավայրեր:

Սևանի ավազանի տարածքում ավտոճանապարհների եզրերին և դրա հարակից տարածքներում առկա են աղբի (սննդամթերքի, շինարարական, բուսական և այլն) կուտակումներ: Նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին կուտակված

աղբավայրերից առավել թեթև աղբը (պոլիէթիլենային տոպրակներ, թուղթ և այլն) տարածվել է՝ ընդգրկելով ավելի մեծ տարածքներ:

Ըստ տարածքների ապօրինի աղբաթափման վայրերն են.

- Երանոս - աղբաթափման համար նախատեսված տարածքը մաքրելուց հետո նորից լցվել է: Շինանյութի խանութի և հանդիպակած տարածքներում առկա է տարածված աղբ:

- Ձորագյուղ - համայնքի մուտքի մոտ (ՃՇՇ և Ազգային պարկ) առկա է աղբի կուտակում:

- Ծակքար - կամրջի մոտ առկա է աղբի կուտակում, քամու տարածած աղբ:

- Լիճք - առկա է շինարարական և քամու տարածած աղբ:

- Ն. Գետաշեն - համայնքի մուտքի մոտ, շուկայի և հարակից տարածքներում էլ. ենթակայանի մոտ, բենզալցակայանի աջ մասում առկա են աղբի կուտակումներ:

- ք. Մարտունի - քաղաքի մուտքի աջակողմյան մասում առկա է աղբի կուտակում:

- Վաղաշեն - սղոցարանի շրջակա տարածքը աղբաշատ է:

- Ձոլաքար - համայնքի մուտքի մոտ և հարակից տարածքներում՝ առկա են աղբի կուտակումներ և քամու տարածած աղբ:

- Վարդենիկ - Ձոլաքար համայնքի համար նախատեսված աղբանոցից դեպի Վարդենիկ համայնք առկա է քամու տարծած աղբ՝ դաշտի երկայնքով:

- Ծովինար - ճանապարհի աջ և ձախ կողմերում առկա են աղբի կուտակումներ:

- Արծվանիստ - ձկնավաճառների տարածքում (ցայտաղբյուրի շրջակայք), ձկնորսների լիճ մտնելու տարածքում և ՃՃՇ մայրուղու հատվածում առկա են աղբի կուտակումներ:

- Կարճաղբյուր- ճանապարհամերձ տարածքում, սննդի օբյեկտի տարածքում, լիճք թափվող գետի ափին առկա են աղբի կուտակումներ:

III	Մարտունու տարածաշրջան					
1	Մարտունու քաղաքային համայնք	4.5	Ավագանու որոշմամբ (գլխավոր հատակագծով)	1995	15.73	Սպասարկում է Մարտունի քաղաքին
2	Ձորագյուղի գյուղական համայնք	1.6	ՀՀ կառ. 2002 N706-Ն		5.72	Չի գործում
3	Լիճքի գյուղական համայնք	0.8-1.0	ՀՀ կառ. 2002 N870-Ն	1995	6.5	3 հատ, մոտ են կառուցապատմանը, չեն գործում
4	Ծակքարի գյուղական համայնք	0.7	ՀՀ կառ. 2002 N707	2002	3.12	Չի գործում, ձմռանը անբարենպաստ է
5	Վաղաշենի	3.0	ՀՀ կառ.	200	4.68	Չի գործում, աղբը թափում

	գյուղական համայնք		2002 N856-Ն	2		են մայրուղու հարևանությամբ
6	Վարդաձորի գյուղական համայնք	1.0	ՀՀ կառ. 2002 N1029	2002	3.77	Չի գործում
7	Վարդենիկի գյուղական համայնք	1.5	ՀՀ կառ. 2002 N1345-Ն	2005	11.44	Գործում է
8	Ծովինարի գյուղական համայնք	0.2	Ավագանու որոշում	2008	5.85	Մայրուղուն մոտ է, լիկվիդացման ենթակա է
9	Գեղահովիտի գյուղական համայնք	1.0	Ավագանու որոշում	2007	7.41	Գործում է
10	Երանոսի գյուղական համայնք	1.4	ՀՀ կառ. 2002 N1218-Ն	2002	6.89	Գործում է
11	Վ.Գետաշենի գյուղական համայնք	1.5	ՀՀ կառ. 2002 N1054-Ն		6.5	Չի գործում
12	Զոլաքարի գյուղական համայնք	0.5	Ավագանու որոշում		8.06	Գործում է
	Ընդամենը				85.67	
IV	Վարդենիսի տարածաշրջան					
1	Վարդենիսի քաղաքային համայնք	5.0	ՀՀ կառ. 2003 N144-Ն	1992	16.51	Գործում է
2	Կարճաղբյուրի գյուղական համայնք	1.3	ՀՀ կառ. 2002 N1076-Ն	2002	2.99	Չի գործում
	Ընդամենը				19.5	
V	Կրասնոսելսկի տարածաշրջան					
1	Ճամբարակի քաղաքային համայնք	2.0	Ավագանու որոշում	9.62	9.62	
2	Շորժայի գյուղական համայնք	1.0	ՀՀ կառ. 2004 N 172-Ն	2007	0.78	
3	Արտանիշի գյուղական համայնք	2.0	Ավագանու որոշում	1989	0.91	
	Ընդամենը				11.31	
	Մարզում				226.4	

				2	

*) մ^3/տարի - ըստ աղբավայրերի նախագծման և շահագործման ձեռնարկի մեկ մարդու համար աղբակուտակման նորմը ընդունված է մինչև 1.3մ^3/տարի: Գեղարքունիքի մարզի բնակչության (առ 01.01.2010թ.) աղբակուտակման հաշվարկային քանակները (աղբակուտակման նորմը մեկ մարդու համար 1.3մ^3/տարի) տրված է ըստ «Աղբավայրերի նախագծում և շահագործում» ձեռնարկի:

Ստորև բերված աղյուսակում տրվում է աղբավայրերի հեռանկարային կարգավիճակը:

Աղյուսակ N 3

	Համայնքի աղբավ.	Աղբավայրի կարգավիճակը
I	Սևանի տարածաշրջան	
1	Չկալովկայի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
2	Լճաշենի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
3	Ծովագյուղի գյուղական համայնք	Ենթակա է պահպանման՝ համապատասխանեցնելով գործող սանիտարական նորմերին: Աղբամշակման գործարանի կառուցումից հետո ենթակա է լիկվիդացման:
4	Վարսերի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
5	Զովաբերի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
II	Գավառի տարածաշրջան	
1	Գանձակի գյուղական համայնք	Ենթակա է պահպանման՝ համապատասխանեցնելով գործող սանիտարական նորմերին: Աղբամշակման գործարանի կառուցումից հետո ենթակա է լիկվիդացման:
2	Նորատուսի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
3	Սարուխանի գյուղական համայնք	Աղբը տեղափոխվում է Կարմիրգյուղ
4	Կարմիրգյուղի գյուղական համայնք	Ենթակա է պահպանման՝ համապատասխանեցնելով գործող սանիտարական նորմերին: Աղբամշակման գործարանի կառուցումից հետո ենթակա է լիկվիդացման:
5	Ծովազարդի գյուղական համայնք	Ենթակա է վերակառուցման
III	Մարտունու տարածաշրջան	
1	Մարտունու քաղաքային	Ենթակա է վերակառուցման

*«**Գեղարքունիք-4**» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

	համայնք	
2	Ձորագյուղի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
3	Լիճքի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
4	Ծակքարի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
5	Վաղաշենի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
6	Վարդաձորի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
7	Վարդենիկի գյուղական համայնք	Ենթակա է պահպանման՝ համապատասխանեցնելով գործող սանիտարական նորմերին: Աղբամշակման գործարանի կառուցումից հետո ենթակա է լիկվիդացման:
8	Ծովինարի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
9	Գեղահովիտի գյուղական համայնք	Ենթակա է պահպանման՝ համապատասխանեցնելով գործող սանիտարական նորմերին: Աղբամշակման գործարանի կառուցումից հետո ենթակա է լիկվիդացման:
10	Երանոսի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
11	Վ.Գետաշենի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
12	Ձոլաքարի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
IV	Վարդենիսի տարածաշրջան	
1	Վարդենիսի քաղաքային համայնք	Ենթակա է վերակառուցման
2	Կարճաղբյուրի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման
V	Կրասնոսելսկի տարածաշրջան	
1	Ճամբարակի քաղաքային համայնք	Ենթակա է լիկվիդացման
2	Շորժայի գյուղական	Ենթակա է վերակառուցման

	համայնք	
3	Արտանիշի գյուղական համայնք	Ենթակա է լիկվիդացման

ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԱՎԱԶԱՆԻ ԱՂԲԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՈՒՐՎԱԳԻԾ

Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքի համընդհանուր զարգացմանը նպաստող քաղաքաշինական ռացիոնալ պայմանների ստեղծումը պետք է ուղեկցվի շրջակա միջավայրի պահպանմանը ուղղված միջոցառումների հետևողական իրականացմամբ, որոնց թվում կարևոր նշանակություն ունի նաև աղբահեռացման և աղբի վնասազերծման խնդիրները:

Մարզի տարբեր տարածաշրջանների տարածքային հնարավորությունների բացահայտման համար տարածքի բնական և ուրբանիզացված միջավայրի քաղաքաշինական, էկոլոգիական կապերի ընդհանրության հաշվառումով կատարվել է վերլուծություն և տրվել է համալիր գնահատական:

Համալիր գնահատականը տրվել է բնական և հատակագծային բոլոր գործոնների հաշվառումով՝ հատուկ ուշադրություն դարձնելով

- Հողերի ռացիոնալ օգտագործման խնդիրներին,
- Սանիտարական պահպանման նորմերի ապահովման հնարավորությանը,
- Աղբահեռացման համար անհրաժեշտ տրանսպորտային մատչելիության հնարավոր ապահովումը,
- Անհավասարակշռված տարաբնակեցման պայմաններում (Մարտունու, Գավառի, Սևանի տարածաշրջաններում բնակչության և բնակավայրերի խտության էկոլոգիական չափանիշները գերազանցող ցուցանիշները) աղբավայրերից օգտվող բնակչության հնարավոր թվի հավասարաչափ ապահովումը:

Համալիր գնահատական է տրվել բոլոր 27 աղբավայրերին և ընտրվել է ամենաօպտիմալ տարբերակը՝ առանձնացնելով 5 աղբավայր, որոնք ըստ համալիր գնահատման բարենպաստ են շահագործման համար (բացի դրանից 5 վերաբեռնման կայանները):

Ընտրված աղբավայրերը նախատեսվում են որպես վերաբեռնման կայաններ՝ բացառելով աղբի թաղումը Սևանի ավազանում, տեղափոխումով և մշակումով Գագարինում նախատեսվող աղբամշակման գործարանում:

Վերաբեռնման աղբավայրերի վերակառուցումը ներառում է հիմնականում հատակի կոշտ ծածկի ապահովում (բետոնապատում կամ բետոնե սալիկների տեղադրում), ջրամեկուսացում, մակերևութային ջրերի հեռացման առվակների կառուցում, ցանկապատում, ցանկապատի երկարությամբ ծառապատում, օժանդակ շինությունների կառուցում, ինժեներական անհրաժեշտ

կոմունիկացիաների անցկացում, պակետավորող մամալիչների տեղադրում և այլն:

Վերաբեռնման կայանների սանիտարական պահպանման գոտին 100մ է:

2019 թվականին շրջանառության է դրվել ՀՀ «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարմանե ծրագիրը, համաձայն որի Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել ԵՄ չափանիշներին համապատասխան սանիտարական աղբավայր Հրազդան համայնքում, աղբի երկու վերաբեռնման կայան Ակունք և Մարտունի համայնքներում, ինչպես նաև երկու մարզերի բոլոր բնակավայրերում ներդնել ԵՄ չափանիշներին համապատասխան աղբահանության արդյունավետ համակարգ: Աղբավայրը նախատեսվում է կառուցել ԵՄ չափանիշներին ու ստանդարտներին համապատասխան՝ իր բոլոր ենթակառուցվածքներով՝ այդ թվում հողի, ստորգետնյա ջրերի և օդի աղտոտվածության բացառման համար նախատեսված ենթակառուցվածքներով, ինչպես նաև ադմինիստրատիվ շենքերով ու ճանապարհային ուղիներով: Երկու մարզի բնակավայրերում կներդրվի աղբահանության արդյունավետ համակարգ, Գեղարքունիքի մարզի Մարտունի և Կոտայքի մարզի Ակունք համայնքներում կկառուցվեն աղբի փոխաբեռնման կայաններ:

Ծրագրի ընդհանուր բյուջեն 11,0 մլն եվրո է, որից 5,5 մլն եվրոն՝ հանդիսանում է վարկային միջոց, 5,5 մլն եվրոն՝ դրամաշնորհ:

Նախագիծը կօգնի Գեղարքունիքի և Կոտայքի և մարզերի համայնքներին ներդնել կոշտ թափոնների համալիր կառավարման համակարգ և բարելավել թափոնների հավաքման, այդ թվում՝ տեսակավորման, վերամշակման համակարգը և նոր հնարավորություններ ընձեռել տեղական բիզնեսներին:

Աղբավայրը զբաղեցնելու է 20 հեկտար տարածք: Աղբավայրի համար առաջարկվող տեղանքը նախկինում եղել է քարհանք և օգտագործվել է տեղի ցեմենտի գործարանի համար կավի ստացման նպատակով: Քարհանքի մի մասն օգտագործվել է Հրազդանի քաղաքապետարանի կողմից որպես աղբավայր 20 տարի շարունակ:

Նոր աղբավայրը կհանդիսանա Հրազդանի, Ծաղկաձորի, Չարենցավանի, Եղվարդի, Նոր Հաճնի, Բյուրեղավանի, Աբովյանի և Սևանի քաղաքապետարանների սեփականությունը և կկառավարվի նրանց կողմից: Ութ քաղաքապետարանները կհիմնեն «Աղբավայրի կառավարման համատեղ բաժնետիրական ընկերությունե (ԱԿԸ), որտեղ քաղաքապետարանները կհանդիսանան բաժնետերեր:

Ըստ հայտի՝ մարզային նոր աղբավայրի շահագործումը թույլ կտա փակել առկա ութ աղբավայրերը: Առաջարկվում է ծածկել առկա բոլոր աղբավայրերը հողային շերտով, որի վերին շերտը կլինի խոտածածկ:

Հաշվարկվել է, որ աղբավայրում աղբի հեռացման նվազագույն ծավալը կլինի առնվազն 1,200,000 մ3 20 տարի աշխատելու դեպքում: Եթե Հրազդանի

աղբավայրը աղբ ընդունի Կոտայքի և Գեղարքունիքի մարզերից, ապա 20-ամյա նախատեսվող ժամանակահատվածում այն կլցվի 200,000 մ^3 լրացուցիչ ծավալով:

«Աղբանոցների փակումից հետո Կոտայքի մարզում առկա տեղանքներից CO2 տարեկան արտանետումների ընդհանուր քանակը կարելի է նվազեցնել տարեկան 3,500-5,000 տոննա CO_2 –ից մինչև տարեկան 1,750-2,500 տ CO_2ե, - նշված է հայտում:

Հայտում նաև նշված է, որ շահագործումից 2 տարի անց պետք է քննարկել աղբի տեսակավորման վայրի հարցը: Նշենք, որ հայտը չի անդրադառնում վտանգավոր թափոնների կառավարմանը:

Հրազդանի աղբավայրի ընդհանուր ակնկալվող շահագործման ժամկետը 23 տարի է:

ԳԼՈՒԽ 3

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՀՀ Գեղարքունիքիի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի՝ Գեղարքունիք-4 համակցված տարածքի ինժեներա-երկրաբանական նախապատրաստումը, տարերային և տեխնածին վտանգավոր երևույթներից պաշտպանությունը (այդ թվում՝ երկրաշարժից), ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ինժեներա-տեխնիկական միջոցառումների կազմակերպումն ու իրականացումը, սեյսմիկ ռիսկի նվազեցման անհրաժեշտ միջոցառումների իրականացումը կարգավորվում են համապատասխան իրավական ակտերով, համայնքային և մարզային մակարդակներում մշակված արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության պլաններով և այլ նորմատիվա-իրավական ակտերով, որոնք նպատակաուղղված են բնակավայրի տարածքում անվտանգ, բարենպաստ, կայուն կենսամիջավայրի ձևավորմանը:

1) Գեղարքունիք-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված և հարակից տարածքներում /պալեոերկրաշարժերի, արխեոերկրաշարժերի, պատմական և գործիքային/ ուժեղ երկրաշարժերի հիմնական պարամետրերի՝ ուժի (մագնիտուդ), ժամանակի և տեղի (էպիկենտրոնի կոորդինատների) մասին.

Պարամետրերը տրված են ըստ Համաշխարհային բանկի Կոնսորցիումի կողմից ստեղծված՝ Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) և հարակից տարածքների սեյսմիկ վտանգի գնահատման տվյալների բազայի, 2018թ.:

- **Արխեոսյունիքի Ք.ա. 5400թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.08°N, λ=45.69°E, մագնիտուդը՝ M=7.4
- **Արխեոսյունիքի Ք.ա. 1800թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.11°N, λ=45.67°E, մագնիտուդը՝ M=7.3
- **Արխեոսյունիքի Ք.ա. 900թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.09°N, λ=45.68°E, մագնիտուդը՝ M=7.5
- **Սևանի 995թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.59°N, λ=45.95°E, մագնիտուդը՝ Ms=6.0

- **Գետիկի 1187թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.66°N, λ=45.00°E, մագնիտուդը՝ Ms=6.1
- **Ծովագյուղի 18.01.1853թ. երկրաշարժ՝** էպիկենտրոնի կոորդինատները՝ φ=40.60°N, λ=44.90°E, մագնիտուդը՝ Ms=6.1

Գեղարքունիք-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքներում ներկայումս էլ հնարավոր առավելագույն սեյսմիկ վտանգը կապված է Արխեոսյունիքի վերոնշյալ երկրաշարժերի օջախի հետ:

2) Գեղարքունիք-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված և հարակից տարածքներում ակտիվ խզվածքների սեյսմիկ պոտենցիալի (առավելագույն ներուժի) մասին.

Պարամետրերը տրված են ըստ Համաշխարհային բանկի Կոնսորցիումի կողմից ստեղծված՝ ՀՀ և հարակից տարածքների սեյսմիկ վտանգի գնահատման տվյալների բազայի, 2018թ.:

- **Փամբակ-Սևան-Սյունիքի ակտիվ խզվածքի (PSSF) PSSF3 սեգմենտ՝** սեյսմիկ պոտենցիալը՝ Mw_{max}=7.3 */ըստ պալեոսեյսմաբանական տվյալների/*, $Mw_{միջ}$=7.3: Պալեոմեղրուտի (Պալեոգուգարք) Ք.ա. 19750թ. երկրաշարժը /φ=40.11°N, λ=45.67°E, Mw=7.3/ տեղի է ունեցել նշված սեգմենտի գոտում:
- **Փամբակ-Սևան-Սյունիքի ակտիվ խզվածքի (PSSF) PSSF4 սեգմենտ՝** $Mw_{միջ}$=7.1:
- **Փամբակ-Սևան-Սյունիքի ակտիվ խզվածքի (PSSF) PSSF5 սեգմենտ՝** սեյսմիկ պոտենցիալը՝ սեյսմիկ պոտենցիալը՝ M_{max}=7.5 */ըստ հնասեյսմաբանական (տեղաշարժ, հայտնաբերված պեղումներով) տվյալների/*, $Mw_{միջ}$=7.6:
- **Փամբակ-Սևան-Սյունիքի ակտիվ խզվածքի (PSSF) PSSF7 սեգմենտ՝** սեյսմիկ պոտենցիալը՝ **$Mw_{միջ}$=7.2:** Սևանի 995թ. և Ծովագյուղի 18.01.1853թ. երկրաշարժերը տեղի են ունեցել նշված սեգմենտի գոտում:
- **Փամբակ-Սևան-Սյունիքի ակտիվ խզվածքի (PSSF) PSSF8 սեգմենտ՝** սեյսմիկ պոտենցիալը՝ M_{max}=7.5 */ըստ հնասեյսմաբանական տվյալների/,* $Mw_{միջ}$=7.3: Սույն տեղեկատվության 1-ին կետի 1-ին ենթակետում բերված արխեոերկրաշարժերը տեղի են ունեցել նշված սեգմենտի գոտում:

Նշենք, որ Գեղարքունիք-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքների համար առավել վտանգավոր է Փամբակ-Սևան-Սյունիքի ակտիվ խզվածքի PSSF8 ($Mw_{միջ}$=7.3) սեգմենտը, որը նախապատմական ժամանակահատվածում հարուցել է սույն տեղեկատվության 1-ին կետի 1-ին ենթակետում նշված 7.3-7.5 մագնիտուդի արխեոերկրաշարժերը:

Ստորև, տրված է 2018թ. ՀՀ տարածքի 1:500000 մասշտաբի սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) քարտեզը (նկար 1), ըստ որի Գեղարքունիք-4 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքները գտնվում են α_{max} = 0.4g (0.4g-ն մոտավորապես համապատասխանում է 9 բալի՝ ըստ MSK–64 սեյսմիկ ինտենսիվության 12-բալանոց սանդղակի) առավելագույն հորիզոնական արագացման արժեքով սեյսմիկ գոտում, բացառությամբ Ծովինար բնակավայրի *(պարամետրերը տրված են ըստ Համաշխարհային բանկի Կոնսորցիումի կողմից ստեղծված՝ ՀՀ և հարակից տարածքների սեյսմիկ վտանգի գնահատման տվյալների բազայի, 2018թ.)*.

*«**Գեղարքունիք-4**» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*



ՀՀՇՆ 20.04._ 85

Հավելված 2

ՑԱՆԿ

3.1. Հայաստանի Հանրապետության համայնքներն ու բնակավայրերն ըստ սեյսմիկ գոտիների

Գեղարքունիքի մարզ

№

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1 Գավառ (Կամո)	Գավառ (Կամո) քաղաք 1
2 Ճամբարակ	Ճամբարակ քաղաք 2
3 Այգուտ գյուղ 2	
4 Անտառամեջ գյուղ 2	

5 Արծվաշեն գյուղ (ժամանակավորապես գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ) 1

6 Բարեպատ գյուղ 2

7 Գետիկ գյուղ 2

8 Դպրաբակ գյուղ 2

9 Թթուջուր գյուղ 2

10 Կալավան գյուղ 2

11 Ձորավանք գյուղ 1

12 Ճապկուտ գյուղ 2

13 Մարտունի գյուղ 2

14 Վահան գյուղ 2

15 Մարտունի Մարտունի քաղաք 1

16 Սևան Սևան քաղաք 2

17 Գագարին գյուղ 2

18 Վարդենիս Վարդենիս քաղաք 2

19 Այրք գյուղ 2

20 Ներքին Շորժա գյուղ 2

21 Վերին Շորժա գյուղ 2

22 Ախպրաձոր Ախպրաձոր գյուղ 2

23 Ակունք Ակունք գյուղ 2

24 Աստղաձոր Աստղաձոր գյուղ 1

25 Արծվանիստ Արծվանիստ գյուղ 2

26 Բերդկունք Բերդկունք գյուղ 2

27 Գանձակ Գանձակ գյուղ 2

28 Գեղամասար Սոթք գյուղ 2

29 Ազատ գյուղ 2

30 Ավազան գյուղ 1

31 Արեգունի գյուղ 2

32 Արփունք գյուղ 2

33 Գեղամաբակ գյուղ 2

34 Գեղամասար գյուղ 2

35 Դարանակ գյուղ 2

36 Ձառիվեր գյուղ 2

37 Կախակն գյուղ 2

38 Կութ գյուղ 2

39 Կուտական գյուղ 2

40 Նորաբակ գյուղ 2

41 Շատջրեք գյուղ 2

42 Շատվան գյուղ 2

43 Ջաղացաձոր գյուղ 2

44 Տրետուք գյուղ 2

45 Փամբակ գյուղ 2

46 Փոքր Մասրիկ գյուղ 2

47 Գեղամավան Գեղամավան գյուղ 2

48 Գեղարքունիք Գեղարքունիք գյուղ 2

49 Գեղաքար Գեղաքար գյուղ 1

50 Գեղհովիտ Գեղհովիտ գյուղ 1

51 Լեռնակերտ գյուղ 1

52 Նշխարք գյուղ 1

53 Դդմաշեն Դդմաշեն գյուղ 2

54 Երանոս Երանոս գյուղ 1

55 Ձոլաքար Ձոլաքար գյուղ 1

56 Ձովաբեր Ձովաբեր գյուղ 2

57 Ծովասար Ծովասար գյուղ 1

58 Լանջաղբյուր Լանջաղբյուր գյուղ 1

59 Լիճք Լիճք գյուղ 1

60 Լճաշեն Լճաշեն գյուղ 2

61 Լճավան Լճավան գյուղ 2

62 Լճափ Լճափ գյուղ 2

66 Լուսակունք Լուսակունք գյուղ 2

67 Խաչաղբյուր Խաչաղբյուր գյուղ 2

68 Ծակքար Ծակքար գյուղ 1

69 Ծաղկաշեն Ծաղկաշեն գյուղ 1

70 Ծաղկունք Ծաղկունք գյուղ 2

71 Ծովագյուղ Ծովագյուղ 2

72 Ծովազարդ Ծովազարդ գյուղ 2

73 Ծովակ Ծովակ գյուղ 2

74 Ծովինար Ծովինար գյուղ 1

75 Կարճաղբյուր Կարճաղբյուր գյուղ 2

76 Կարմիրգյուղ Կարմիրգյուղ գյուղ 1

77 Հայրավանք Հայրավանք գյուղ 2

78 Ձորագյուղ Ձորագյուղ գյուղ 2

79 Մադինա Մադինա գյուղ 1

80 Մաքենիս Մաքենիս գյուղ 2

81 Մեծ Մասրիկ Մեծ Մասրիկ գյուղ 2

82 Ներքին Գետաշեն Ներքին Գետաշեն գյուղ 1

83 Նորակերտ Նորակերտ գյուղ 2

84 Նորաշեն Նորաշեն գյուղ 2

85 Նորատուս Նորատուս գյուղ 2

86 Շողակաթ Շողակաթ գյուղ 2

87 Արտանիշ գյուղ 2

88 Աղբերք գյուղ 2

89 Դրախտիկ գյուղ 2

90 Ծափաթաղ գյուղ 2

91 Ջիլ գյուղ 2

92 Չկալովկա Չկալովկա գյուղ 2

93 Սարուխան Սարուխան գյուղ 1

94 Սեմյոնովկա Սեմյոնովկա գյուղ 2

95 Վաղաշեն Վաղաշեն գյուղ 1

96 Վանևան Վանևան գյուղ 2

97 Վարդաձոր Վարդաձոր գյուղ 1

98 Վարդենիկ Վարդենիկ գյուղ 1

99 Վարսեր Վարսեր գյուղ 2

100 Վերին Գետաշեն Վերին Գետաշեն գյուղ 1

101 Տորֆավան Տորֆավան գյուղ 2

«Գեղարքունիք-4» միկրոռեգիոնալ մակարդակի համայնքներում բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությունը իրականացնելու նպատակով առկա հեղեղավտանգ և սելավավտանգ տարածքներում անհրաժեշտ է՝ Արծվանիստ համայնքում մաքրել սելավատարը և ամրացնել ափերը, մաքրել Կարճաղբյուր և Մ. Մասրիկ համայնքներով հոսող գետերի հունը և ամրացնել ափերը:

Համայնքներում կարկուտներից և կայծակներից պաշտպանվելու նպատակով անհրաժեշտ է տեղադրել հակակարկտային կայաններ և շանթարգելներ:



Նկար 1. Գեղարքունիքի մարզի և հարակից տարածքների սեյսմատեկտոնական սխեմատիկ քարտեզը:

Հարկ է նշել, որ սեյսմամիկրոշրջանացման աշխատանքներն իրականացվում են սեյսմաշրջանացման տվյալները հստակեցնելու նպատակով՝ կախված տեղային գրունտային, տեկտոնական, գեոմորֆոլոգիական պայմաններից:

3. Գեղարքունիքի (Գեղարքունիքի-4) մարզերի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքներին սպառնացող բնածին վտանգների վերաբերյալ

*«**Գեղարքունիք-4**» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծ*

N	Բնակավայրեր	Ոժեղ կարկուտ	Ոժեղ քամի	Հեղեղ	Սելավ	Հողդառաստ անձրև	Ցրտահարություն	Կայծակ	Քարաթափում	Սողանք
Գեղարքունիք-4										
1.	Ծովինար			V		V	V			
2.	Արծվանիստ	V		V	V					
3.	Ախպրաձոր	V				V				
4.	Ակունք	V	V		V	V				
5.	Գեղաքար			V						
6.	Լճավան	V	V							
7.	Լուսակունք	V	V	V		V				
8.	Խաչաղբյուր	V	V	V		V				
9.	Ծովակ		V	V					V	
10.	Կարճաղբյուր	V	V			V				
11.	Մաքենիս									
12.	Մեծ Մասրիկ	V	V							
13.	Նորակերտ	V		V						
14.	Վանևան									
15.	Տորֆավան									

Կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ

«Գեղարքունիք-4» միկրոռեգիոնալ մակարդակի համայնքներում բնական և տեխնածին վտանգավոր երևույթներից տարածքի պաշտպանությունը իրականացնելու նպատակով առկա հեղեղավտանգ և սելավավտանգ տարածքներում անհրաժեշտ է՝ Արծվանիստ համայնքում մաքրել սելավատարը և ամրացնել ափերը, մաքրել Կարճաղբյուր և Մ. Մասրիկ համայնքներով հոսող գետերի հունը և ամրացնել ափերը:

Գ. Ծովակ «Ձորի թաղ 1» և «Ձորի թաղ 2», Կարճաղբյուր համայնքի «Գետի երկայնք» և «Ներքին թաղ» հնարավոր քարաթափումների տեղամասերում իրականացնել ուսումնասիրություն:

Համայնքներում կարկուտներից և կայծակներից պաշտպանվելու նպատակով անհրաժեշտ է տեղադրել հակակարկտային կայաններ և շանթարգելներ:

4. Գեղարքունիքի մարզի (Գեղարքունիքի-4) միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածքների բնակավայրերին սպառնացող տեխնածին վտանգների և պայթյունավտանգ, հրդեհապայթյունավտանգ օբյեկտների վերաբերյալ

Ծովինար, Լուսակունք, Ծովակ, Մեծ Մասրիկ, Ճամբարակ համայնքներում առկա են թվով 6 պայթունավտանգ օբյեկտներ՝ 6 գազալցակայան:

5. Քաղաքացիական պաշտպանության նախատեսվող կառույցների և միջոցառումների վերաբերյալ տվյալներ

- Գեղաքար – 167,0 ք.մ. մակերեսով թվով 6 արագ կառուցվող թաքստոց.
- Մեծ Մասրիք – 2187,0 ք.մ. մակերեսով թվով 72 արագ կառուցվող թաքստոց.
- Նորակերտ – 332,0 ք.մ. մակերեսով թվով 11 արագ կառուցվող թաքստոց.
- Տորֆավան – 25,0 ք.մ. մակերեսով թվով 1 արագ կառուցվող թաքստոց.
- Վանևան – 76,0 ք.մ. մակերեսով թվով 2 արագ կառուցվող թաքստոց.

Աշխատանքային ժամերին ամբողջ բնակչության պատսպարումն ապահովելու համար արագ կառուցվող թաքստոցների կառուցումը նախատեսված է հետևյալ բնակավայրերում՝

- Տորֆավան – 18,0 ք.մ. մակերեսով թվով 1 արագ կառուցվող թաքստոց:

Վերը նշված բնակավայրերում արագ կառուցվող թաքստոցների կառուցման նպատակով պետք է նախատեսվեն հողատարածքներ, որոնց ընտրությունը կատարվում է տեղական ինքնակառավարման մարմնի կողմից:

Հողերի պահպանություն

ՀՀ-ում հողի պահպանությունյան գլխավոր ուղղությունը էրոզիայի դեմ պայքարն է, որի նպատակն է պաշտպանել հողի վերին բերրի շերտը դեգրադացումից և հողատարումից: Հողի պահպանության միջոցառումներից ամենակարևորը հողբարելավումն է (մոտ 30 տեսակ՝ հատկապես ագրոանտառամելիորացիան, երբ ստեղծվում են դաշտապաշտպան անտառաշերտեր, կատարվում է զառիթափ լանջերի, ձորակներ և ավազուտների անտառապատում: Ագրոանտառամելիորացիան լավ արդյունք տալիս հատկապես տափաստանային և անտառատափաստանային զոնաներում:), տարածված եղանակներից՝ հողածածկումը, ոռոգումը, աղակալած հողերի քիմական լվացումը և այլն:

Հողի ինտեսնսիվ էրոզիայի պատճառներից է արոտավայրերի գերարածեցումը, երբ խախտվում է հավասարակշռությունը արածեցման արագության և բուսականության վերաճի միջև: Ի վերջո, ամբողջովին ոչնչանում է բուսածածկը և հսկայական հողատարածքներ վերածվում են անապատների: Հակաէրոզիոն և բարելավման միջոցառումների շարքում առանձնանում են հետևյալ առավել կարևորները.

- Առաջավոր ագրոտեխնիկան
- Հողաբարելավումը
- Հողերի վերականգնումը
- Պայքարը հողերի աղտոտման դեմ

Ագրարային ոլորտում ուղենշային փաստաթղթերից են Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագիրը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը, որում նախանշվում են ագրարային

քաղաքականության հիմնական ուղղությունները և դրանց իրականացումն ապահովող միջոցառումները: Միաժամանակ ռազմավարությամբ սահմանվում են գյուղատնտեսության ոլորտի գերակայությունները:

Գյուղատնտեսական հողերը խնայողական օգտագործելու նպատակով հարկ է կայուն գյուղատնտեսության կիրառում, որը ներառում է շահեկան արտադրական տարածքները, էկոլոգիական միջավայրը, տեղական և ընդհանուր տնտեսական շահերը, նախորոք մտածելով ապագա սերնդի լիակատար անվտանգության մասին: Կայուն գյուղատնտեսության ապահովման համար անհրաժեշտ է վերահսկել հողի որակը նրա ֆիզիկական, քիմիական և կենսաբանական հատկությունները մշտադիտարկումների միջոցով:

Գյուղատնտեսական արտադրության բարելավմանն ու խրախուսմանը նպատակաուղղված համակարգ է նաև օրգանական գյուղատնտեսությունը, որը հողի բարելավումը դիտարկում է որպես հիմնական առանցք՝ որակյալ, էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրության գործում: Օրգանական գյուղատնտեսությունը այնպիսի համակարգ է, որտեղ չեն կիրառվում տոքսիկ նյութեր, կայուն պեստիցիդներ, քիմիական պարարտանյութեր, դրա փոխարեն օգտագործվում են օրգանական պարարտանյութեր (հիմնականում՝ գոմաղբ) և վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարն իրականացվում է միայն բուսական պատրաստուկներով, իսկ օրգանական սննդամթերքի արտադրության մեջ չեն կիրառվում արհեստական նյութեր և ճառագայթում: Օրգանական սննդամթերքում սննդարար նյութերի քանակը մինչև 3 անգամ ավելի շատ է, քան ավանդական գյուղատնտեսության՝ թունանյութերի և հանքային պարարտանյութերի կիրառմամբ աճեցված բերքի մեջ: Օրգանական սննդամթերքի ամենամեծ արժեքն այն է, որ այն անվտանգ է առողջության համար, ավելի շատ վիտամիններ, հանքային աղեր և այլ սննդարար տարրեր է պարունակում, զերծ է վնասակար քիմիկատներից, որոնք վերամշակված սննդամթերքում օգտագործվում են որպես սննդային, համային հավելումներ և կոնսերվանտներ, բացի դա այն ապահովում է մարմնի նորմալ քաշ, բարենպաստ ազդեցություն ունի մարդու ընդհանուր առողջության վրա, զերծ լինելով քիմիական նյութերից և հավելումներից օգտակար է հատկապես երեխաների համար: Օրգանական սննդամթերք օգտագործելիս ավելի քիչ է վտանգավոր հիվանդություններով վարակվելու հավանականությունը, քանի որ այս սննդամթերքում ավելի քիչ կարելի է հանդիպել վնասակար միկրոօրգանիզմներ: Օրգանական գյուղատնտեսության զարգացումը մեծ կարևորություն ունի էկոլոգիապես մաքուր սննդամթերքի արտադրության համար, որին նպաստում է նաև պահանջարկի աճը:

Հողի հարատևությունը պայմանավորված է գյուղատնտեսական արտադրության մեջ նրա անվնաս օգտագործման գործընթացներով՝ դեգրադացիայի բացառում և բերրիության պահպանում և լավացում, ջրերի մաքրության, մարդկանց և կենդանիների առողջության աշտպանություն: Այս կերպ, հողը եկող սերունդներին «կփոխանցվի», որանք էլ այն կօգտագործեն այն նույն պայմաններում, ինչպիսին էր իրենց նախնիների կողմից օգտագործման ժամանակ, և իրենք էլ իրենց հերթին հաջորդ սերունդներին կհանձնեն այն, նույն լավ վիճակով: Կայուն գյուղատնտեսությունը բնութագրվում է բազմաոլորտ արտադրական գործունեությամբ, բուսաբուծությունը ուղղակի կապի մեջ է կենդանաբուծության հետ: Գյուղատնտեսության այս համակարգում ինտենսիվ, արդյունավետ և մրցունակ արտադրական արդյունքներով գործունեություն ծավալելու համար պարտադիր պետք է կատարվեն շատ պայմաններ, այն է՝

- մշակաբույսերի մեծ բազմազանությունը: Բազմամյա մշակաբույսերը օգտագործվում են անասունների համար, բայց նաև հողի կառուցվածքի բարելավվման և պահպանման համար: Լոբազգի մշակաբույսերը,

նպաստում են հողում ազոտի հավասարակշռմանը: Միջանկյալ մշակաբույսեր (տնկվում են հիմնական բերքը հավաքելուց հետո), որոնք հողը պաշտպանում են մակերեսային ֆիզիկական դեգրադացիայից և մարդածին գործոններից,

- կենդանական ծագման օրգանական պարարտանյութերի օգտագործումը, նախընտրելի է գոմաղբը, հանքային պարարտանյութերի հետ համատեղ, հողի բերրիությունը պահպահովելու և նրան ու մշակաբույսերին սննդատարրերով հավասարակշռված սնուցելու նպատակով: Կիրառվող պարարտանյութերի չափաբաժինները որոշվում են հողում սննդատարրերի հավասարակշռությունը ապահովվելուն ուղղված հաշվարկների հիման վրա, որոնք կատարվում են հողի ագրոքիմիական վերլուծության միջոցով: Այս գործունեությունը պարտադիր է գերչափաբաժիններից խուսափելու (հատկապես, ազոտի) համար, արտադրական ծախսերը նվազեցնելու և շրջակա միջավայրը աղտոտումից պաշտպանելու համար,
- բույսերի կենսաբանական պաշտպանությունը և պրոֆիլակտիկ միջոցների լայնածավալ օգտագործումը, քիմիական նյութերի օգտագործման հնարավոր սահմանափակումը շատ կարևոր են գյուղատնտեսական մշակաբույսերը մոլախոտից զերծ պահելու և դրանց տարածումը կանխելու համար, ինչպես նաև բարձրացնում են այդ նպատակով արվող մեխանիկական աշխատանքների որակը,
- հողի մշակման բոլոր աշխատանքները օպտիմալ ժամանակահատվածում կատարելու (հողում ջրի պարունակության կախվածությունը իրականացվող աշխատանքների խորությունից), բերքահավաքի և տեղափոխման համար, պետք է հաշվի առնվեն հողի վիճակի այն պայմանները, որոնք հարմար են այդ աշխատանքները կատարելու համար (ծանրաբեռնվածությունը մեխանիզմի առջևի առանցքի վրա, անվադողերում ճնշման մեծությունը, դրանց քանակը), որպեսզի հողը պաշտպանվի ֆիզիկական քայքայումից,
- արոտավայրերի վերահսկվող համակարգի հասնելու միջոցով ռացիոնալ շահագործման և բնական խոտածածկի ու մարգագետինների և տարածքների էրոզիայի ենթակա տեղամասերի պահպանությունը պետք է համահունչ լինի արտադրողականության բարձրացման ձգտման հետ: Անասնապահության թափոնները պետք է այնպես վերամշակվեն, որ աղտոտումը հասցվի նվազագույնի: Կենդանիների թիվն պետք է փոխհամատեղելի լինի հողի այն մակերեսի հետ, որը հնարավոր կլինի մշակել օրգանական պարարտանյութերով, այնպես, որ դրանցում ազոտի չափաբաժինը չգերազանցի 170 կգ N / հա՝ ֆերմաները տեղաբախշելիս հարկավոր է հաշվի առնել էկոհամակարգերի պաշտպանության և պահպանության, կենսաբազմազանության պահպանման, ինչպես նաև այդ տարածքի սոցիալական և տնտեսական ասպեկտներին առնչվող հարցերը: Կայուն գյուղատնտեսությունը գյուղական շրջանների համար լավագույն տարբերակ է լուծելու համար իրենց տնտեսական, սոցիալական և բնապահպանական խնդիրները:

Գյուղատնտեսության հանդեպ ակտիվ քաղաքականության համատեքստում ակտիվորեն քարոզվում է հատկապես հողերի խոշորացման ու կոոպերացիայի զարգացման գործընթացը, մշակվել են այս գործընթացի իրագործման օրենսդրական ու նորմատիվային հիմքերը: 2011թ. տարբեր մարզերում արդեն ստեղծվել են գյուղատնտեսական կոոպերատիվներ, սակայն դեռևս վաղ է դրանց արդյունավետության մասին խոսելը, քանի որ վերջնական կայացման ու զարգացման համար պահանջվում է տևական ժամանակ: Գործընթացի ուսումնասիրությունը, սակայն, ցույց է տալիս, որ այն միայն տնտեսական հիմքեր չէ, որ ունի: Գյուղացիությունը բավականին բարդ, շարժունակ, ներքին բազմազանություն ունեցող համակարգ է, հետևաբար

արմատական փոփոխությունների հաջողությունը հնարավոր է ապահովել միայն համալիր, այդ թվում՝ սոցիալ-մշակութային գործոնների հաշվառմամբ:

Հողերի խոշորացումն ու կոոպերացիայի զարգացումը կարող են դառնալ կարևոր քայլ ճգնաժամի հաղթահարման ու գյուղատնտեսության զարգացման ճանապարհին:

Իշխանությունները, ըստ էության, հայտարարել են գյուղատնտեսական քաղաքականության նոր գերակայությունների մասին՝ հողերի խոշորացման ու գյուղատնտեսական կոոպերացիայի խթանում, գյուղատնտեսական գործունեության արդյունավետության աճ, մթերումների հիմնախնդիրների լուծում, գյուղացիական տնտեսություններին մատչելի գներով սերմացուի, պարարտանյութերի, վառելիքի մատակարարում և այլն:

ԳԼՈՒԽ 4

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գոտևորման նախագծի կապը գլխավոր հատակագծի հետ

Գոտևորման նախագիծը բնակավայրի գլխավոր հատակագծի իրագործման հիմնական ծրագրային քաղաքաշինական փաստաթուղթն է: Այն անմիջականորեն կապված և համաձայնեցված է բնակավայրի գլխավոր հատակագծում նախանշված գաղափարների, զարգացման ուղղությունների, կառուցապատման ինտեսիվության և բնակչության տեղաբաշխման իրականացման գործընթացի հետ:

Գոտևորման համակարգի կառուցվածքը

պահանջներին համապատասխանող բնութագրերի համակարգը, որոնցով կանոնակարգվում է տարածքի իրացման ինտենսիվությունը, կառուցապատման խտությունը, կառույցների հարկայնությունը, գեղագիտական պահանջները: Կարգավորիչների հարաչափերը հիմնվում են օրենսդրական և պետական նորմատիվ փաստաթղթերի վրա, տեղայնացվում են՝ ելնելով յուրաքանչյուր գոտուն յուրահատուկ պահանջներից և փոփոխվում են գոտուց գոտի:

Հակահրդեհային պահանջներ՝ շենքերը, կառույցները հրդեհներից պաշտպանելու համար կառուցման և այլ միջոցառումների նորմերով հաստատված պարտադիր կարգ:

Համայնքային նշանակության փողոցներ՝ տրանսպորտային և հետիոտն կապ բնակելի թաղամասերի, գյուղարտադրական ձեռնարկությունների, ինչպես նաև հասարակական կենտրոնների միջև, ելքեր դեպի արտաքին ավտոմայրուղիներ կամ դաշտամիջյան ճանապարհներ:

Տեղական նշանակության փողոցներ՝ տրանսպորտային և հետիոտն կապ բնակելի տարածքներում, ելքեր դեպի համայնքային նշանակության փողոցներ կամ դաշտամիջյան ճանապարհներ:

Երթևեկության անցուդարձ՝ միավոր ժամանակահատվածում ճանապարհի որևէ կտրվածքով հանդիպակաց ուղղություններով անցնող ավտոմոբիլների քանակը:

Ճանապարհի բեռնվածության մակարդակ՝ երթևեկության անցուդարձի հարաբերությունը ճանապարհի թողունակությանը:

Երթևեկային մաս՝ ճանապարհի մակերևույթի շերտ, որի սահմաններում կատարվում է ավտոմոբիլների երթևեկությունը:

Կարմիր գիծ՝ շենքերն ու շինությունները փողոցներից անջատող սահմանը, որով սահմանվում է նաև գլխավոր և երկրորդական փողոցների, ներառյալ մայթերի լայնությունը:

Մայթի բանուկ մաս՝ փողոցի մայթերի՝ հետիոտնի շարժման համար հատկացված շերտ:

Հողամաս՝ հողի վերգետնյա և ստորգետնյա տարածքի մասն է, որն ունի ամրագրված սահմաններ, տարածք (մակերես, ծածկագիր), գտնվելու վայր, իրավական կարգավիճակ՝ օրենքներով նախատեսված սահմանափակումներով հանդերձ, որոնք գրանցված և արտացոլված են անշարժ գույքի պետական միասնական կադաստրում:

Հողամասի անջրանցիկ տարածք՝ հողամասի այն հատվածը, որի բուսական բնաշերտը ծածկված է արհեստական կառույցներով (շենք, մայթ, սալարկ):

Հողամասի ճակատը՝ հողամասի կարմիր գծին հարող կողմը։

Ձեղնահարկ՝ լանջավոր տանիքի ներքին տարածությունը։

Նորմ՝ նախագծման՝ շինարարության համար սահմանված պարտադիր կարգ։

Շենքի բարձրություն՝ մայթի մակերևույթից մինչև քիվի վերին եզրն ընկած ուղղաձիգ հեռավորությունը։

Ոչ հիմնական շինություն՝ կրպակներ, տաղավարներ ճարտարապետական փոքր ձևեր։

Սանիտարահիգիենիկ պահանջներ՝ բնակվելու տարածությունների՝ շրջակա միջավայրի սահմանային թույլատրելի վիճակներին համապատասխանության պահանջներ։

Հավելված 1 Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցուցակ

Հավելված
ՀՀ կառավարության 2003 թվականի
հունվարի 9-ի N 80-Ն որոշման

Պ Ե Տ Ա Կ Ա Ն Ց Ո Ւ Ց Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ

4. ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ*

արձանի համարը	Հուշարձանի ենթահամարը (ենթահամարը)			Հուշարձանախումբը, հուշարձանը	ժամանակը	Տեղը բնակավայրի նկատմամբ, հասցեն	Նշանակությունը հանրապետական, տեղական	Ծանոթագրություն
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.

4.89. Տորֆավան գյուղ

1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.
1.				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	12-17-րդ դդ.	ամ մասում	S	գյուղի ամ եզրին
2.				ԳԵՐԵԶՄԱՆՈՑ	15-20-րդ դդ.	գ. մ.	S	գյուղի պատմական գերեզմանոցն է
	2.1.			խաչքար	15-րդ դ.		Հ	աե կողմում, ընկած գետնին
	2.2.			խաչքար՝ Ատիսի	15-16-րդ		Հ	հվ-ամ կողմում, պատվանդանին,

				դդ.			թեքությամբ
	2.3.			Խաչքար՝ Մարկոսի	1550 թ.	Հ	հվ կողմում, խրված հողի մեջ, թեքությամբ
	2.4.			Խաչքար՝ Աղաբեկի	16-րդ դ.	Հ	կնտ.-ում, վերին աջ եզրը՝ և վարդյակը վնասված
	2.5.			Խաչքար	16-րդ դ.	Հ	աե կողմում պատվիրատու՝ Ազարէ քահանա
	2.6.			տապանաքար՝ Աղաբեկի, Բեկջանի	1537 թ.	S	ամ կողմում
	2.7.			տապանաքար	1550 թ.	S	աե կողմում
	2.8.			տապանաքար՝ Մելքոնի	1550 թ.	S	աե կողմում
	2.9.			տապանաքար՝ Ազիզբեկի	1564 թ.	S	հս-ամ կողմում
	2.10.			տապանաքար	16-րդ դ.	S	հվ-ամ կողմում
	2.11.			տապանաքար	16-17-րդ դդ.	S	հս-ամ կողմում, արձանագիր
	2.12.			տապանաքար	16-17-րդ դդ.	S	
	2.13.			տապանաքար	17-րդ դ.	S	աե կողի անկյունը՝ կոտրված
	2.14.			տապանաքար՝ Հովսեփի	1655 թ.	S	կնտ.-ում
	2.15.			տապանաքար՝ Էվազի	1691 թ.	S	հս-ամ կողմում
3.				ԽԱՉՔԱՐ	13-րդ դ.	ամ մասում	Հ	ընկած Վանևան-Տորֆավան ճանապարհին
4.				ԽԱՉՔԱՐ՝ ՓԻՐՀԱՄՁԻ	15-րդ դ.	գ. մ.	Հ	Թամարա Բեջանյանի տնամերձ հողամասում
5.				ԽԱՉՔԱՐ ԱՎԱԳԻ	1526 թ.	գ. մ.	Հ	Թամարա Բեջանյանի տնամերձ հողամասում

Օգտագործված գրականության ցանկ

1. Руководство по составлению раздела «Охрана природы и улучшение окружающей среды градостроительными средствами» в проектах планировки и застройки городов, поселков и сельских населенных пунктов. М., 1982г.
2. Рекомендации по охране окружающей среды в районной планировке. М 1986г.
3. Строительная климотология. Ереван, 1996г.
4. Рекомендзции по учету природно-климатических факторов в планировке и застройке городов и групповех систем населенных мест, М. ЦХИИП, Градостроительство, 1980г.

5. Руководство по разработке раздела ''Охрана окружающей среды'' к проекту планировки (реконструкции) жилого районас. М. Москомархитектуры, 1997 г.
6. Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գիրք, 2012թ.
7. Հայաստանի Հանրապետության ատլաս, 2009թ.
8. Հայաստանի Հանրապետության կենդանիների կարմիր գիրք, 2012թ.
9. Предложения по разработке отраслевой классификации источников выбросоа вредных веществ в атмосфере. Гидрометеоиздат, 1982г.
10. Сборник законодательных нормативных и методичецких документов дла экспертизы воздухоохранных мероприятий, Л., Гидрометеоиздат. 1986г.
11. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными проиводствами. Л., Гидрометеоиздат, 1986г.
12. Методические указания по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ автомобильным траспостом. М., Гидрометеоиздат, 1983г.
13. ՀՀ կառավարության որոշում՝ 25 հունվարի 2005 թվականի N-91-Ն. Տնտեսական գործնեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին:
14. Методические рекомендации обработки данных, характеризующих санитарное состояние водных обьектов, с целью определения гигиенической эффективности водоохранных мероприятий, М. Минздрав РСФСР, 1983г.
15. Оценка гигиенической эффективности водоохранных мероприятий, М. Минздрав РСФСР, 1989г.
16. СНиП II-12-77. Защита от шума. М., 1978г.
17. Г.Л.Осипов и др. «Градостроительные меры борьбы с шумом», Стройиздат 1975г.
18. ՀՀ ՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից»
19. ՀՀ բնապահպանության նախարարություն. «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն»: Մթնոլորտն աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված շատ բնակավայրերի ազգաբնակչության:
20. Методические рекомендации. Унифицированные методы сбора данных, анализа и оценки заболеваемости населения с учетом комплексного действия факторов окружающей среды. Госкомитетсан.-эпиднадзора, РФ. Москва. 1996 г.
21. Методические указания по санитарному надзору в районной планировке. М. Минздрав СССР. 1990 г.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2026 թվականի №5-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՋՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆԻ ԱՌԱՓՆՅԱ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի №1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի պահանջը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի №1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի սեպտեմբերի 29-ի №1 եզրակացությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սևանա լճի ջրհավաք ավազանի առափնյա հատվածների քաղաքաշինական գոտևորման նախագծի մշակման տեխնիկական առաջադրանքը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀԱՅԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026 թ. հունվարի 16
ք. Մարտունի

Հավելված
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Մարտունի համայնքի ավագանու 2026 թվականի
հունվարի 16-ի №5-Ն որոշման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

ՀՀ Սևանա լճի ջրհավաք ավազանի առափնյա հատվածների քաղաքաշինական գոտևորման նախագծի մշակման

Բովանդակություն

Ներածություն 2

Իրավիճակի նկարագրություն 2

Ընդհանուր խնդիրներ 3

Փաստացի իրավիճակի նկարագրություն 3

Ընդհանուր պահանջներ 4

Նախագծի մշակման նպատակը 5

Նախագծի կառուցվածքը 6

Նախագծի կազմը. 8

Կողմնորոշիչ չափորոշիչներ 10

Օրենսդրական դաշտ 14

Միջազգային փաստաթղթեր 15

Լրացուցիչ պահանջներ (փաստաթղթերի մշակման կազմին և բովանդակությանը ներկայացվող) 15

Ելակետային նյութեր 15

Նախագծի մշակման փուլերը 16

Ներածություն

«Սևան» ազգային պարկը (այսուհետ՝ ազգային պարկ) ստեղծվել է ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1978 թվականի մարտի 14-ի «Սևան» ազգային պարկը ստեղծելու մասին» N 125 որոշմամբ:

Ազգային պարկի տարածքը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N 205-Ն որոշմամբ հաստատված «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի, բաժանվում է հետևյալ տարածքագործառնական գոտիների՝

1) արգելոցային՝ ընդգրկում է «Արտանիշի», «Նորաշենի», «Լիճք-Արգիչի» և «Գիլլի» արգելոցները.

2) արգելավայրային՝ ընդգրկում է «Գավառագետի», Գիհի-կաղնուտային ռելիկտային և «Նորաշենի արգելավայրերը.

3) ռեկրեացիոն.

4) տնտեսական:

Ռեկրեացիոն գոտու ստեղծման նպատակներն են՝

1) բնական լանդշաֆտների, բուսական ծածկույթի, Սևանա լճի ափամերձ հատվածի բնական և մշակութային ժառանգության բնապատմական և գեղագիտական արժեքների պահպանության ապահովումը՝ քաղաքացիների հանգստի կազմակերպման համար.

2) ազգային պարկի տարածքի զբոսաշրջային կարողությունների բացահայտումն ու պահպանումը և զբոսաշրջության տարբեր ձևերի, այդ թվում՝ ճանաչողական զբոսաշրջության զարգացմանը նպաստելը.

3) ռեկրեացիոն գոտու տարածքների նպատակային օգտագործման ապահովումը.

4) ռեակցիոն գոտում առկա պատմամշակութային հուշարձանների և դրանց պահպանման գոտիների պահպանության ապահովումը.

5) ռեկրեացիոն գոտու էկոհամակարգերի բնականոն զարգացման վրա մարդածին բացասական ազդեցության կանխարգելումը:

Իրավիճակի նկարագրություն

Ազգային պարկի տարածքում իրականացվող գործունեության բոլոր տեսակները պետք է համապատասխանեն մի շարք հստակ սահմանված չափանիշների՝ առկա էկոհամակարգերի հավասարակշռությունը չխախտելու և պահպանվող տարածքի պատմամշակութային կամ բնական ժառանգությունը չվտանգելու նպատակով:

1905 նիշի շրջանակներում. «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տարածքում են գտնվում հետևյալ պոմպակայանները (շենք-շինությունները)՝

1. Երանոսի պոմպակայան-1902 մ
2. Լիճքի պոմպակայան-1912 մ
3. Մարտունու պոմպակայան-1904 մ

4. Վաղաշենի պոմպակայան-1902 մ
5. Աստղաձորի պոմպակայան-1902 մ
6. Ձոլաքարի պոմպակայան-1904 մ
7. Արծվանիստի պոմպակայան (համայնքային)-1902մ

Ընդհանուր խնդիրներ

Հաշվի առնելով բնակչության կարիքները ափամերձ հանգստի նկատմամբ և տարեցտարի աճող մարդկանց թիվը՝ ովքեր ձգտում են բավարարել իրենց հանգստի կարիքները ուրբանիզացված միջավայրի սահմաններից դուրս, ինչպես նաև վերոնշյալ կարիքների արդյունքում ափամերձ տարածքների ինտենսիվ յուրացումն ու տեխնածին ազդեցության ենթարկվելը (ինչը նպաստում է շրջակա միջավայրի ռեկրեացիոն դիգրեսիայի և բնական համալիրների դեգրադացիայի աստիճանի բարձրացմանը), անհրաժեշտություն է առաջացել կանոնակարգելու առափնյա տարածքների ռեկրեացիոն յուրացումը: Սևանա լճի առափնյա տարածքները ինչպես ներքին, այնպես էլ արտերկրյա այցելուների համար գրավիչ կազմակերպելու միտումով՝ նման տարածքներին ներկայացվող արդի պահանջների բավարարմամբ և միջազգային առաջավոր փորձի ներդրմամբ, անհրաժեշտություն է առաջացել մշակել այդ տարածքների էկոլոգիապես մաքուր ռեկրեացիոն զարգացման համակարգ, ստեղծելով բարենպաստ պայմաններ հանգստի համար և բարելավելու, պահպանելու և արդյունավետ օգտագործելու բնական համալիրի ռեկրեացիոն ներուժը:

2001 թ. դեկտեմբերի 14-ին ընդունված Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին ՀՀ օրենքի 5.1. կետով նախատեսված՝ Օրենքի համալիր ծրագրով նախատեսված է 30 տարվա ընթացքում Սևանի ջրի ծավալը կավելանա շուրջ 8,8 մլրդ մ^3, որը հավասարազոր է լճի մակարդակի 6.5 մ բարձրացմանը: Էկոլոգիական հավասարակշռության տեսանկյունից լճի մակարդակի անհրաժեշտ 6 մ-ով բարձրացումից հետո Սևանա լճում կառաջանա ջրի հավելյալ պաշար, որը էներգետիկ ու տնտեսական այլ ճյուղերի համար շատ կարևոր և ռազմավարական նշանակություն ունեցող բնական պաշար կհամարվի, և ազատորեն կարելի է օգտագործել այդ նպատակներով, այդ թվում՝ տարածաշրջանային պահանջների բավարարման համար:

Փաստացի իրավիճակի նկարագրություն

Սևանա լճի կառուցապատման համար նախատեսված ափամերձ տարածքները, ունենալով ռեկրեացիայի, առողջարանային և զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ նախադրյալները, լի են անկանոն, ցածրարժեք գեղագիտական որակ ունեցող և բացահայտորեն ոչ ներդաշնակ կառույցներով, այդ թվում՝ ինքնակամ և նորմերի խախտումներով կառուցված շենքերով և շինություններով:

Ներկայիս տնտեսական և քաղաքաշինական զարգացումները ևս նոր պահանջներ են առաջադրել ափամերձ տարածքների որոշ հատվածների գործառույթների նկատմամբ, ինչը նկատառում է միասնական տարածական պլանավորման փաստաթղթի շրջանակում խնդիրների համապարփակ դիտարկում և փոխկապակցված լուծումների առաջադրում:

Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում ռեկրեացիոն, լանդշաֆտային, առողջարանային համակարգերի տեղաբաշխման և տարածքային կազմակերպման կոնսոլիդացված նախագծի մշակումը, ինչպես նաև «Սևան» ազգային պարկի քաղաքաշինական կանոնադրության, քաղաքաշինական և լանդշաֆտային տարածական միջավայրի փոխկապակցված բարելավման, կանոնակարգված զարգացման նախագծի մշակումը հետապնդում է Սևան լճի առափնյա հատվածների քաղաքաշիանական կազմակերպման համաչափ, հավասարակշռված և կայուն սկզբունքներով իրականացման նպատակ՝ հաշվի առնելով նաև շրջակա միջավայրի խնայողական օգտագործման և կլիմայի փոփոխությամբ պայմանավորված պահանջները: Փաստաթղթերի մշակման հայեցակարգի հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել նպաստավոր ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

Ընդհանուր պահանջներ

Հայաստանի Հանրապետության համար կարևորագույն ռազմավարական նշանակություն ունեցող և եզակի խոշոր ջրային ավազանի՝ Սևանա լճի առափնյա տարածքների ռեկրեացիոն նպատակներով օգտագործման ընթացքում պետք է ապահովել ափամերձ տարածքների էկոլոգիապես մաքուր օգտագործումը, կատարել առավելագույն թույլատրելի ռեկրեացիոն բեռնվածության հաշվարկ, ափամերձ տարածքների լանդշաֆտային ցուցանիշների վերլուծություն՝ դրանց ֆունկցիոնալ ռեկրեացիոն գոտիավորման իրականացմամբ և տարածքում կառուցապատման նկատմամբ դասակարգիչների հստակ սահմանմամբ:

Ափամերձ տարածքների արդյունավետ օգտագործումն ապահովելու համար անհրաժեշտ է բացահայտել դրանց ռեկրեացիոն կառուցվածքի սկզբունքները՝ մակերեսներն ու պլանավորման լուծումները: Վերլուծության արդյունքում նախատեսվում է առանձնացնել մի շարք գործոններ, որոնք ազդում են Սևանա լճի ափամերձ տարածքների կառուցվածքում ռեկրեացիոն ֆունկցիոնալ գոտիների կազմակերպման վրա, ինչը թույլ կտա բացահայտել խնդիրները և վերափոխման հիմնական ուղղությունները՝ բացահայտելով դրա ներուժը:

Առողջ կենսամիջավայրի կազմակերպման և Սևանա լճի էկոհամակարգի պահպանման միջոցառումների շրջանակում նախաձեռնել կոյուղու լոկալ մարքրման կայանների տեղադրում:

Նախագիծը մշակելիս անհրաժեշտ է ապահովել «Էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիների չափերը և դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» 1998 թվականի մայիսի 26-ի № 313 կառավարության որոշման պահանջները, այն է՝ էներգետիկայի բնագավառի օբյեկտներից մինչև տարբեր նշանակության օբյեկտները, շինությունները, կառույցները և հողօգտագործողների կողմից օգտագործվող հողերը պետք է լինի առնվազն 6 մետր հեռավորություն:

Նախագծի մշակման նպատակը

Նախագծի նպատակն է ստեղծել Սևանա լճի ափամերձ տարածքների կառուցապատման և կայուն զարգացման նախադրյալներ՝ տարածքների զարգացման գործընթացում ապահովելով հասարակական և անձնական շահերի միջև ներդաշնակություն՝ հետևյալ դրույթների միջոցով.

- տարածքների հավասարակշռված զարգացում և էկոլոգիական վերակառուցում, քաղաքաշինական գործունեության իրականացման համար բարենպաստ պայմանների ստեղծում՝ օրենսդրության և տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան, տարածական կազմակերպման կառավարման գործընթացների նկատմամբ «խելացի» սկզբունքների կիրառում,
- էկոլոգիապես անվտանգ արդյունաբերական, տրանսպորտային և ինժեներա-տեխնիկական ենթակառուցվածքների ստեղծում,
- պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանում, ամրակայում, վերականգնում, նորոգում, բնության հուշարձանների պահպանություն՝ ի շահ ներկա և գալիք սերունդների,
- տարածքների քաղաքաշինական կանոնակարգման միասնական համակարգի ձևավորում՝ խթանելու ներդրումային գրավչությունը,
- էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում, էներգիայի վերականգնվող աղբյուրների օգտագործում,
- աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների համալիրի իրականացում (հեղեղապաշտպան և կանխարգելիչ համալիր միջոցառումների միջոցով՝ հենապատեր, հեղեղամարիչներ, բարաժներ, ջրաբերուկների որսիչ ցանցեր և այլն),
- բնակչության անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը,
- քաղաքաշինական և ճարտարապետական միասնական և համահունչ սկզբունքների կիրառումը և կառուցապատման գործունեության իրականացումն առողջ և գրավիչ կենսամիջավայրի ձևավորման համար (շեշտադրումը կատարվում է միասնական և ներդաշնակ էսթետիկական մոտեցման մշակման վրա, որն ուղղված կլինի առողջ և բնապահպանական պահանջները հաշվի առնող զարգացման ապահովմանը),

- պետական-մասնավոր գործընկերության շրջանակներում զարգացման տարածքային անհամաչափությունների բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում:

Նախագծի կառուցվածքը

Վերոնշյալ խնդիրների լուծումը կտրվի միասնական գոտևորման նախագծի և քաղաքաշինական կանոնադրության մշակմամբ:

Գոտևորման նախագիծը տարածական պլանավորման նախանշումների իրականացման հիմնական քաղաքաշինական փաստաթուղթն է: Այն անմիջականորեն կապված է բնակավայրի և ազգային պարկի համար նախանշված գաղափարների, զարգացման ուղղությունների, կառուցապատման ինտեսիվության և բնակչության/այցելուների տեղաբաշխման իրականացման գործընթացի հետ:

Ծավալատարածական գոտևորումը կարգավորող գործիք է, որի միջոցով ստեղծվում է առկա հիմնական (բազային) գոտիների կառուցապատման սկզբունքների մանրամասնեցումը՝ գործող նորմատիվ իրավական փաստաթղթերի պահանջներին և միասնական գեղագիտական անվտանգ միջավայրի ձևավորման նպատակով: Ծավալատարածական գոտևորման տարածքին տրվում են կարգավորումներ կամ խրախուսման միջոցներ՝ հատուկ տարածքում առանձին ռեսուրսները պահպանելու կամ կառուցապատման աշխատանքները կանոնակարգելու նպատակով:

Գոտևորման նորմերով պետք է սահմանվեն գոտիների.

- մակերեսին,
- համամասնություններին,
- ետնահանջներին,
- օգտագործման ձևերին,
- կառուցապատվող և բաց տարածքներին,
- հետիոտների հասանելիությանը,
- կառուցապատման խտությանը և այլ բնութագրերին

ներկայացվող պահանջները:

Նախագծի շրջանակում ռեկրեացիոն գոտիների լանդշաֆտային-էկոլոգիական գնահատում կատարելիս անհրաժեշտ է.

- հաշվի առնել «Սևան» ազգային պարկի կառավարման պլանավորման փաստաթղթերում ազգային պարկի ռեկրեացիոն գոտու հետ կապված միջոցառումները և նպատակները՝ նախագծի մշակման նախանշումների հետ համապատասխանեցնելու նպատակով:
- բացահայտել ափամերձ տարածքների կառուցվածքում ռեկրեացիոն գործառույթների կայունության ապահովմանն ուղղված մեթոդներ:
- կատարել այդ տարածքների գնահատման համալիր (համապարփակ) վերլուծություն, որը թույլ կտա բացահայտել հանգստի կազմակերպման վրա ազդող խնդիրներն ու գործոնները:

- որոշել այս բնական համալիրների ներուժը զբոսաշրջային և ռեկրեացիոն կլաստեր ստեղծելու համար:

Ուսումնասիրվող տարածքների բազմաֆունկցիոնալ օգտագործման համար անհրաժեշտ է գտնել ափամերձ գոտիների պահպանման հիմնախնդրի լուծման բոլորովին նոր մոտեցում՝ դրանց էկոլոգիական տարողականության (այցելուների այն առավելագույն քանակը, որը կարող է սպասարկվել տվյալ էկոհամակարգի շրջանակում՝ առանց շրջակա միջավայրի վրա անդառնալի ազդեցություն գործելու), ռեկրեացիոն ներուժի և կայունության բարձրացմամբ:

Սևանա լճի առափնյա տարածքներում՝ «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտում զբոսաշրջային գոտիների ձևավորման համար նախատեսված տարածքում և դրա անմիջական հարևանությամբ գտնվում են բնական, արգելոցային՝ գիտական, մշակութային և գեղագիտական առումներով յուրահատուկ ու արժեքավոր տարածքներ: Նման օբյեկտների առկայությունը ձևավորում է գրավչություն ոչ միայն ազգային պարկի հարակից բնակավայրերում ապրող բնակչության համար, այլև զբոսաշրջիկների: Ուստի՝ գրավչության գործոնն օգտագործելու և ավելի շատ հանգստացողներ ներգրավելու համար անհրաժեշտ է ծրագրել «Միասնական Սևան» զբոսաշրջային և հանգստի կլաստերի ստեղծումը՝ «մեծ» ու «փոքր» Սևանների ռեկրեացիոն գոտիների առանձին հարաչափերի համադրությամբ: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է.

- առաջարկել ափամերձ գոտում հանգստի կազմակերպման համար դիտարկել հետագա պահպանման ենթակա տարածքները,
- գրավչության ապահովման և ակտիվ քաղաքաշինական յուրացման գոտիները՝ հաշվի առնելով լանդշաֆտի, կլիմայի առանձնահատկությունները, կենտրոնանալով մարդածին բեռնվածության նկատմամբ սեզոնային դիմադրության ապահովման վրա:

Միաժամանակ հանգստի ափամերձ տարածքների օգտագործումը (կազմակերպված երթուղիներ, առանձնացված ֆունկցիոնալ գոտիներ և այլն) պետք է դիտարկել լանդշաֆտի բեռնվածության սահմանաչափերի կանոնակարգման ամրագրմամբ այն հաշվով, որպեսզի ռեկրեացիոն յուրացման արդյունքում չհանգեցվի շրջակա միջավայրի վրա բացասական հետևանքների և դեգրադացման, այն է.

- հողի վերին շերտի խախտում,
- տնկարկների ոչնչացում,
- լճի աղտոտում:

Հետևաբար, անհրաժեշտ է ուսումնասիրություններ կատարել ափամերձ տարածքների սահմաններում համապատասխան գոտիների առանձնացման և դրանց միջև ֆունկցիոնալ-հատակագծային կապերի կազմակերպման վրա՝ սահմանելով մարդկային հոսքերի քանակը, ջրանցիկ-անջրանցիկ մակերեսների (այդ թվում՝ արահետների) հարաբերակցությունը, տարածքների ծառապատման և կանաչապատման միջոցառումների համալիր, ինչպես առափնյա, այնպես էլ

հարակից տարածքների գեղագիտական, սանիտարահիգիենիկ, բացասական ազդեցության մեղմման, ճարտարապետական և մշակութային, նպաստավոր միկրոկլիմայի ստեղծման[1] և դեկորատիվ որակների բարձրացմամբ:

Նախագծի կազմը.

Առափնյա տարածքների համար անհրաժեշտ է կատարել բազմագործոն վերլուծություններ, այն է.

- ***լանդշաֆտային-էկոլոգիական*** որը համարվում է տարածքի բնական-էկոլոգիական ներուժի ուսումնասիրության կարևորագույն մեթոդ, ներառյալ.
  - կլիմայական բնութագրերը,
  - մակերևութային ջրային ռեսուրսների գնահատումը,
  - ռելիեֆը,
  - հիդրոերկրաբանական պայմանները,
  - տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանները:
  - Լանդշաֆտի կառուցվածքը՝ տարբեր էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների (օրինակ՝ անտառային և ջրային տարածքներ, գյուղատնտեսական հողեր և այլն) տարածական բաշխվածության վերլուծություն,
  - Էկոլոգիական կոռելյացիոն գնահատում՝ լանդշաֆտի տարբեր տարրերի էկոլոգիական հարաբերակցությունների ուսումնասիրություն:
- ***Քաղաքաշինական իրավիճակ*** որը ներառում է.
  - բնակավայրերի/ռեկրեացիոն գոտիների տնտեսական բազայի գնահատում իր բնակչությամբ, մշակութային և հասարակական ծառայություններով, տրանսպորտային ենթակառուցվածքներով և կանաչ ֆոնդով:
  - Տարածքի մանրամասն ուսումնասիրության համար կիրառվում է բազմագործոն գնահատման մեթոդ՝ հիմնված բնական և պատմական միջավայրի առանձին բաղադրիչների (բազմագործոն վերլուծություն) գնահատման վրա, որը լծակ է շրջակա միջավայրի որակի կառավարման և պահպանության գործում:
- ***Վիզուալ,*** որի շրջանակում.
  - տեսողական և համեմատական եզրակացությունների հիման վրա պետք է սահմանվի տարածքի գեղագիտական գնահատումը՝ լանդշաֆտի գեղագիտական առավել բարձր հատկանիշներով հատվածների առանձնացմամբ և դրանց՝ տարբեր դիտակետերից ընկալման դիտադաշտերի բացահայտման և լավագույն ընկալման առաջարկներով: (Ռեկրեացիոն գործունեությունը դիտարկում է բնական լանդշաֆտի արժեքավոր հատվածների այցելություններ,

[1] https://www.thirdnature.am/docs/Methodological%20Manual.pdf

դժվար հասանելի հատվածների տեսողական ընկալման համար՝ դիտահարթակների նախատեսում, զբոսաշրջային բնույթի օբյեկտների համար լանդշաֆտի արժեքավոր կետերում տեղադրելու առաջարկներ և այլն):

- ***<u>Ռեկրեացիոն բեռնվածության.</u>*** Ափամերձ տարածքի էկոլոգիապես մաքուր օգտագործումն (առանց խաթարելու առափնյա բնական լանդշաֆտների բնական ամբողջականությունն ու հատկանիշները), ապահովելու համար անհրաժեշտ է կատարել տարածքների առավելագույն թույլատրելի ռեկրեացիոն բեռնվածության հաշվարկ (միավորը՝ մարդ-օր):
- Ափամերձ տարածքների կառուցվածքում ռեկրեացիոն գոտիների լանդշաֆտային կազմակերպման սկզբունքներն ու մեթոդները պետք է հիմնված լինեն պահանջարկի վրա՝ հաշվի առնեն շրջակա միջավայրի որակը՝ գնահատելով ռեկրեացիոն կարողությունները:
- ***<u>Ռեկրեացիոն ռեսուրսներ</u>***. Անհրաժեշտ է կիրառել ափամերձ տարածքների գրավչության որակական գնահատման մեթոդները և ռեկրեացիոն ռեսուրսների քանակական (ափամերձ հատվածի լողափի կազմակերպման պոտենցիալ մակերես, ռեկրեացիոն օբյեկտների տեղակայման համապատասխան մակերես, կանաչապատված կամ կանաչապատման ենթակա մակերեսների առկայություն, պատմության և մշակույթի կամ բնության հուշարձանների առկայություն/ բարենպաստ մատչելիություն և այլն) գնահատման մեթոդները:

Ափամերձ ավազոտ լողափերի համար առավելագույն թույլատրելի ռեկրեացիոն բեռնվածության նորմն օրվա ընթացքում միաժամանակյա հանգստացողների համար՝ ըստ առողջավայրերի վերաբերյալ հետազոտությունների տվյալների վրա հիմնված գործող նորմերի պահանջների: Հստակ պայմանների համար՝ հաշվի առնելով հոգեբանական հարմարավետության (психологический комфорт-լողափերի օգտագործման այնպիսի պայմաններ, երբ յուրաքանչյուր հանգստացողն ապահովված է (ունի հնարավորություն օգտվել) այնպիսի մակերեսով տարածքից, որը կբավարարի իր անձնական տարածքի պահանջին և չի խախտի այլ հանգստացողների անձնական տարածքները՝ իրենց հանգստի ֆունկցիան իրականացնելիս) մակարդակը և սանիտարական չափանիշները, ռեկրեացիոն բեռնվածության չափանիշը կարող է նվազեցվել՝ կանխելու համար լողափի գոտուն հարող լանդշաֆտային տարրերի դեգրադացիան: Ապահովել՝

- առաջին բուժօգնության,
- ազդարարման համակարգի,
- հասարակական կարգի պահպանման պայմանները:

Բարեկարգված ափամերձ տարածքի այցելությունների վերոնշյալ հաշվարկի հիման վրա անհրաժեշտ է կատարել մոտավոր խոշորացված ֆինանսական հաշվարկ՝ կազմակեպվող գոտիների տնտեսական ազդեցությունը հարակից բնակավայրերի և մարզի համար գնահատելու համար:

Առաջարկվում է.

- իրականացնել ֆունկցիոնալ գոտիավորում՝ հաշվի առնելով կատարված հետազոտությունները
- յուրաքանչյուր հատվածում սահմանել ափամերձ հանգստի գոտու առաջարկվող լայնությունը ջրի եզրից:
- Սևանա լճի ռեկրեացիոն գոտիներում նախատեսել խմելու ջրի և հասարակական զուգարանների ապահովվածության պարտադիր պահանջ:

Կողմնորոշիչ չափորոշիչներ

Յուրաքանչյուր կլաստերի սահմաններում անհրաժեշտ է կատարել տարաբաժանում ենթագոտիների՝ առանձնացնելով,

- լողափնյա հանգստի ենթագոտի[2] (հիմնական գոտու մոտ 50-70%, միջինը 55%):
- ծառայության ենթագոտի (հիմնական գոտու մոտ 10-18%):
- մանկական հանգստի ենթագոտի (հիմնական գոտու մոտ 7-12%):

«Լողափնյա հանգստի ենթագոտին» ամենաշատ այցելվող տարածքն է և բաց տարածություն է, որի վրա կարող են տեղակայվել հանդերձարաններ և արևային լոգանք ընդունելու համար անհրաժեշտ պարագաներ:

Այնուհետև, ափին զուգահեռ, ***«ակտիվ հանգստի գոտի»***, որի լայնությունը կարող է տատանվել 10 մ-ից մինչև 30 մ՝ ըստ հանգստի գերակշիռ ձևի հաշվի առնելով նաև շրջակա միջավայրի բնական տարրերի վրա բացասական ազդեցության նվազեցման անհրաժեշտությունը:

Լողափի բարեկարգման շրջանակում 1 հազար այցելուի հաշվով նախատեսվում են հետևյալ կողմնորոշիչ ցուցանիշները,

- տեղադրել 80 մ^2 ստվերային հովանոցներ,
- 1 կոնտեյներ,
- 5 աղբաման,
- 3-4 վաճառքի տաղավարներ:

Ավտոկայանատեղեր. Անհրաժեշտ պայման է նաև ավտոկայանատեղերի տեղադրումը, որոնց հեռավորությունն ընդունված է քաղաքաշինական նորմերով սահմանված չափանիշներին համապատասխան: Լողափի 100 մեկանգամյա այցելուի համար խորհուրդ է տրվում տրամադրել առնվազն 15-20 կայանատեղ:

Կանաչապատում. Ափամերձ տարածքները, որոնք կարող են օգտագործվել ջրի մոտ բնակչության հանգստի համար, պահանջում են լրացուցիչ կանաչապատում: Սա մի կողմից կբարձրացնի հանգստի հարմարավետությունը, մյուս կողմից՝ այդ

[2] Ռեկրեացիոն (հանգստի, սպորտի (մարզական) և լողի) նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակը պետք է համապատասխանի ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի ապրիլի 5-ի թիվ 09-Ն հրամանի պահանջներին

տարածքները դեգրադացիայի չի հասցնի՝ դրանց բարելավման պատճառով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների նվազման պատճառով:

Գնահատման արդյունքների հիման վրա առաջադրել ծառատեսակների շարքի համալրում՝ ափամերձ լանդշաֆտները դիվերսիֆիկացնելու և լանդշաֆտների կառուցմանը բազմակողմանիություն հաղորդելու համար: Ուստի կանաչապատման մեջ անհրաժեշտ է օգտագործել տարբեր տեսակի տնկարկներ:

Ափամերձ տարածքի կանաչապատումը կարող է կազմել ընդհանուր տարածքի 20-40%-ը, 3-5%-ը հատկացվում է հետիոտնային արահետների և կահավորված հանգստի գոտիների համար:

Կանաչապատումը այն մեթոդներից է, որն օգնում է բարելավել ափամերձ տարածքների որակը, գեղագիտական և դեկորատիվ հատկությունները: Ուստի անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել ծառերի, թփերի և խոտաբույսերի տեսականու ընտրությանը՝ հետևյալ չափանիշների հիման վրա.

- կլիմայական գործոններին հարմարվելու ունակություն (ջրհեղեղ);
- բարձր դեկորատիվ հատկություններ:

<u>Կանոնադրություն.</u> Նախատեսվում է նաև, որ «Սևան» ազգային պարկի քաղաքաշինական կանոնադրությունը կսահմանի որոշակի գեղագիտական սկզբունքներ և կանոններ, որոնք ուղեցույց կհանդիսանան քաղաքաշինական գործունեություն ծավալող սուբյեկտների համար:

Հաշվի առնելով, որ Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման հետևանքով շուրջ կիսով չափ կրճատվում է «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտին, վերջինիս տարածքային զարգացման և արդյունավետ օգտագործման նպատակով անհրաժեշտ է իրականացնել «Սևան» ազգային պարկի սահմանից դուրս՝ դեպի ցամաք, կառուցապատման համար նպաստավոր գոտիներում, քաղաքաշինական խնդիրների կանոնակարգմանն ուղղված միջոցառումներ:

Միևնույն ժամանակ «Սևան» ազգային պարկի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև համապատասխան չափորոշիչների սահմանումը հետագայում կարող են ծառայել նաև որպես ուղեցույց՝ Ազգային պարկի տարածքներ ներառող համայնքներում քաղաքաշինական ծրագրերի իրականացման համար:

Քաղաքաշինական կանոնադրությունը պետք է սահմանի ռեկրեացիոն, առողջարանային և լանդշաֆտային համակարգերի ձևավորման, դրանց փոխկապակցվածության և տարածական զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև քաղաքաշինական, ճարտարապետական և լանդշաֆտային չափորոշիչների՝ «Սևան» ազգային պարկին հարող համայնքներին համապատասխան առանձնացված յուրաքանչյուր տարածքային հատվածի համար, այդ թվում՝

- կառուցապատման հորնվածքային (ճարտարապետական միջավայրի ձևավորման) և ճարտարապետահատակագծային սկզբունքները,
- ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներին ու դրանց որակական կազմին ներկայացվող պահանջները,

- միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին հարող գոտիներում սպասարկման օբյեկտների, վերգետնյա կամ ստորգետնյա անցումների տեղաբաշխմանը, ինչպես նաև ավտոկայանատեղերի կազմակերպմանը ներկայացվող պահանջները,
- նախընտրելի զբոսաշրջային երթուղիներն ու հանգրվանների տեղաբաշխման ուրվագծերը,

Ռեկրեացիոն գոտում գտնվող հողակտորների վերաբերյալ.

- ըստ չափերի /առանձին միավորների կամ լոտերի/՝ այդ թվում անբաժանելի (ամբողջական գործառույթի ծառայելու համար ինքնաբավության սկզբունքով),
- տեղագրական նկարագրի,
- մոտեցման մատչելիության և առկա հարմարությունների,
- հողամասերի զբոսաշրջային ներուժի համալիր գնահատման արդյունքները,
- տարածքի բնական առանձնահատկություններն ու գրավչությունները,
- առանձնացված ամբողջական լոտի շրջանակում զբոսաշրջային զարգացման քաղաքաշինական թիրախային հատվածները՝ բնապահպանական շահերի և արժեքավոր դիտադաշտերի պահպանմամբ,
- առաջարկություններ և չափորոշիչներ շենքերի ընդհանուր արտաքին հարդարման համար՝ ապահովելով ճարտարապետության ներդաշնակությունը բնական միջավայրին,
- տարածքի լանդշաֆտի գեղագիտական գրավչության պահպանման և բարելավմանն ուղղված նախագծային առաջարկներ:
- կառույցների առանձին տարրերի (պատեր, տանիքներ, պատուհաններ, դռներ և այլն) համար սահմանված չափանիշները՝ թույլատրելի գունային լուծումների (պալիտրայի) և շինարարական նյութերի ցանկով,
- փոքր ճարտարապետական ձևերի (ցանկապատեր, նստարաններ, լուսամփոփներ, շատրվաններ, ջրավազաններ, լողափերի կահավորանք, բաց և փակ առևտրի կետեր և այլն) համար սահմանված չափանիշները՝ համապատասխան մոդելային օրինակներով (գծագրերով, եռաչափ պատկերներով),
- ինժեներական գծերի և սարքավորումների տեղադրման կանոնները,
- ճանապարհների, անցումների, մայթերի արահետների ծածկույթներին և կահավորանքին ներկայացվող պահանջները, լուսավորության համակարգի տեղադրման կանոնները,
- բնական լանդշաֆտների պահպանման և պլանավորման հիմնական սկզբունքները,

- բարեկարգման և կանաչապատման կանոնները՝ թույլատրելի բուսատեսակների ցանկով և տեղադրման սկզբունքներով (ուղղաձիգ կանաչապատում, ճամփեզրեր, ցանկապատում՝ քամու, արևի այլ գործոնների հաշվառմամբ),
- այլ անհրաժեշտ կանոններ և չափորոշիչներ:

Առանձին հավելվածով պետք է ներկայացվեն նորմերի խախտումներով կառուցված և միջավայրին բացահայտորեն անհարիր կառույցների տեղադիրքերը և դրանց վերաբերյալ տվյալները:

Առանձին տեքստային հավելվածով պետք է ներկայացվեն.

- առաջադրված ծրագրերի իրագործելիությունը,
- կայուն զբոսաշրջության հավաստագրման տարբեր սխեմաներ,
- կայուն զբոսաշրջային ներուժի, այցելուների հոսքերի և շուկայի միտումների հետ կապված գնահատումներ և վերլուծություններ,
- բնական լանդշաֆտների վրա գերբեռնման կանխմանն ուղղված սահմանափակումներ,
- առափնյա հանգստի կազմակերպման համար հարմարավետ պայմանների ապահովման ստանդարտներ/չափորոշիչներ (մարդակն-կառույցների քանակ և այլն),
- փոփոխվող շուկայի դինամիկային հարմարվելու կարողություն,
- ձեռնարկատիրական մոտեցման առաջարկ՝ բացահայտելու կայուն զբոսաշրջության զարգացման հնարավորությունները և տեղական բիզնեսների հետ համագործակցությունը:
- Ազգային պարկի բնական կամ պահպանվող տարածքների համար կայուն և խնայողական զբոսաշրջության ռազմավարության առաջարկ (հիմնված միջազգային փորձի վրա),
- զբոսաշրջային ենթակառուցվածքների, այցելուների պահանջարկի և շուկայի միտումների գնահատման ոլորտներում հիմնավորված փորձի ներդրում/տեղայնացում,
- տարածքի եզակի գրավչության կետերի բացահայտման և զբոսաշրջիկների ներգրավման ռազմավարության մշակում՝ միևնույն ժամանակ բացահայտված ներուժով տարածքների համար պահպանելով բնապահպանական արժեքը,
- ռեկրեացիոն գոտու և վերջինիս շրջակայքի կայուն զբոսաշրջային ներուժի գնահատում զբոսաշրջային ենթակառուցվածքի առկա վիճակի վերլուծության հիման վրա,
- այցելուների պահանջարկը և շուկայի միտումները:

Նախագծի մշակման ընթացքում ուսումնասիրել և հաշվի առնել, որ «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի խորհրդի 2022 թվականի մայիսի 4-ի № 4.1 որոշմամբ հաստատվել է հանրային լողափի բարեկարգման, կահավորման և սպասարկման տրամադրման կարգը, որով սահմանվել է նաև լողափի բարեկարգման, կահավորման և սպասարման տեխնիկական բնութագիրը:

Օրենսդրական դաշտ

Նախագծի մշակման համար հիմք են հանդիսանում նախագծման օբյեկտի հետ առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերը, հաստատված տարածական պլանավորման (քաղաքաշինական ծրագրային) և նորմատիվատեխնիկական փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերը, այդ թվում՝

- «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը,
- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը,
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը,
- «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան և համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքը,
- «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքը,
- Հայաստանի հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին N 1563-Ն որոշումը,
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին N 205 որոշումը,
- ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի «ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N 927-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 772-Ն որոշումը («Սևան» ազգային պարկի կանոնադրությունը),
- ՀՀ միջազգային պայմանագրերը, մասնավորապես՝ Լանդշաֆտի եվրոպական Կոնվենցիան,
- Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման գլխավոր նախագիծը,
- Սևանա լճի ջրհավաք ավազանի տարածքային հատակագծման նախագիծը,
- Սևանա լճի առափնյա տարածքների գոտևորման նախագիծը,
- Գեղարքունիքի մարզի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը,
- Տարածական պլանավորման այլ փաստաթղթերի՝ տարածքային հատակագծման, գլխավոր հատակագծի, գոտևորման նախագծի վերաբերյալ օրենսդրական ակտերը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերը:

Կապալառուն պարտավոր է հետևել նախագծման աշխատանքների իրականացման ընթացքում տեղի ունեցող օրենսդրական փոփոխություններին, որոնք սահմանված կարգով հաստատված կլինեն մինչ նախագծի փորձաքննությունների անցկացման փուլը և հաշվի առնել դրանք:

Միջազգային փաստաթղթեր

Նախագիծը մշակելիս անհրաժեշտ է առաջնորդվել նաև Եվրոպայի Խորհրդի անդամ պետությունների «Ափամերձ տարածքների մասին» մոդելային օրենսգրքով, «Եվրոպայի մայրցամաքի տարածքային կայուն զարգացման հիմնարար սկզբունքները» փաստաթղթով ամրագրված դրույթներով: Վերջիններիս հայերեն կամ անգլերեն տեքստերը կտրամադրվեն պատվիրատուի կողմից:

Լրացուցիչ պահանջներ (փաստաթղթերի մշակման կազմին և բովանդակությանը ներկայացվող)

Նախագիծը մշակվում է՝ առաջնորդվելով տարածական պլանավորման վերոնշյալ փաստաթղթերի (տարածքային հատակագծման, գլխավոր հատակագծի, գոտևորման նախագծի) համար ՀՀ իրավական ակտերով սահմանված կազմի և բովանդակության պահանջներով (Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N208-Ն ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված պահանջների համաձայն): Այն կարող է ներառել նաև պատվիրատուի հետ փոխհամաձայնեցված մասշտաբների գծագրական նյութեր՝ կախված լուսաբանվող խնդրի առանձնահատկությունից:

Ելակետային նյութեր

Նախագծի մշակման համար անհրաժեշտ ելակետային նյութերի հավաքումը, ինչպես նաև նախագծային փաստաթղթերի վերաբերյալ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձագիտական եզրակացությունների ստացումն իրականացնելու է նախագծային փաստաթղթեր մշակող կապալառուն: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման շրջանակներում կապալառուն, պատվիրատուի առաջարկությամբ ներկայացնում է համապատասխան նախագծային նյութեր (անհրաժեշտության դեպքում նաև մագնիսական կրիչով)՝ հասարակության ներկայացուցիչների և շահագրգիռ մարմինների հետ միջանկյալ քննարկումներ

կազմակերպելու, ինչպես նաև ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու համար:

Նախագծի մշակման փուլերը

Նախագիծը պատվիրատուին է ներկայացվում սույն բնութագրով և պայմանագրով նախատեսված հետևյալ փուլերով.

I փուլ – ելակետային նյութերի հավաքում, վերլուծություն, համակարգում:

Նախագծվող տարածքային հատվածի փաստացի օգտագործման (հենակետային հատակագծեր) և համալիր գնահատման հատակագծերի մշակում և վերլուծություն: Ճանապարհատրանսպորտային, ռեկրեացիոն, լանդշաֆտային և առողջարանային համակարգերի զարգացման, տեղաբաշխման և տարածքային կազմակերպման ուրվագծերի (հայեցակարգային հիմնադրույթներ), տարածքների գործառնական գոտևորման և տարածքների կազմակերպման քաղաքաշինական մանրամասն գոտևորման գծագրերի, ինչպես նաև սույն բնութագրի այլ պահանջների վերաբերյալ առաջարկությունների մշակում:

II փուլ – նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների ավարտում՝ կառուցապատման էսքիզների մշակմամբ:

II փուլի աշխատանքները պատվիրատուին են հանձնվում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և քաղաքաշինական համալիր փորձագիտական դրական եզրակացությամբ՝ հասարակայնության իրազեկումով:

III փուլ –շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցում: Քննարկումների և համաձայնությունների արդյունքում, նախագծային փաստաթղթերի վերջնամշակում: Նախագծային փաստաթղթերի պայմանագրով սահմանված քանակությամբ օրինակների տպագրություն:

Վերջնական փուլի աշխատանքները պատվիրատուին են հանձնվում թղթային և լազերային կրիչների վրա (համակարգչային ծրագրի տեսակն առաջարկվում է պատվիրատուի կողմից) յուրաքանչյուրը 4 օրինակից:

Նախագծային աշխատանքները մշակել համակարգչային ծրագրերի կիրառման միջոցով:

Սույն բնութագրի շրջանակներում կազմված նախագծային առաջադրանքը կտրամադրվի մրցույթի արդյունքերում ընտրված նախագծային կապալառու կազմակերպություններին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2026 թվականի №6-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ 05-003-0781-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշումը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի 05-003-0781-0001 կադաստրային ծածկագրով համայնքային նշանակության փողոցին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Մյասնիկյան փողոց, 10-րդ նրբանցք հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀԱՅԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026 թ. հունվարի 16
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2026 թվականի №7-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՍՏՂԱՁՈՐԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Աստղաձոր բնակավայրի 6-րդ փողոց, թիվ 30,52 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 05-013-0242-0059 կադաստրային ծածկագրով 0.7075 հա մակերեսով հողամասն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի «Աստղաձորի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու նպատակով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀԱՅԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026 թ. հունվարի 16
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 հունվարի 2026 թվականի №8-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈԼԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԳԱՐԻԿ ԱՂԱԲԵԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ՀԱՐԿԻ ԳՇՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրի բնակիչ Կարեն Աղաբեկի Վարդանյանի 12.01.2026 թվականի դիմումը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Արտոնություն սահմանել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Զոլաքար բնակավայրի բնակիչ Գարիկ Աղաբեկի Վարդանյանի անվամբ սեփականության իրավունքով հաշվառված BMW X-5 մակնիշի ավտոմեքենայի (հաշվառման համարանիշը՝ 36PL206, թողարկման տարեթիվը՝ 2003 թ., հզորությունը՝ 320 ձիաուժ) գույքահարկի 2019-2020 թվականներին կուտակված 178750 (հարյուր յոթանասունութ հազար հարյուր հիսուն) դրամ ապառքի և 52878 (հիսուներկու հազար ութ հարյուր յոթանասունութ) դրամ տույժի նկատմամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀՈՎԵՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԴԱՎԹՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԱՐՇԱԿՅԱՆ ՏԱՐՈՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿՈՐՅՈՒՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԳՈՀԱՐ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ԱՐՄԵՆ

ԴԱՎԹՅԱՆ ՕԼԳԱ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՊԱՊ

ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ՀԱՅԿ

ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026 թ. հունվարի 16
ք. Մարտունի